Պ ԴՈՒՐՅԱՆ

ԵՐԿԵՐ

1852


1872

Պ. ԴՈՒՐՅԱՆ

Ֆրանսուա
1947թ. 18/V
Երևան

ԵՐԿԵՐ

Ա 11/27410

Կազմեց և տեքստը խմբագրեց
ՀՍՍՌ Գիտ. Ակադ. իսկական անդամ Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

1947

Կազմը, Ֆորզացը, ակվանտրները և
ամուցիտուլները

Ա.Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

ПЕТРОС ДУРЯН
СОЧИНЕНИЯ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1947

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԻՇՏՔ ՀԱՅՈՒՆ

Փոխանակ քաղցր օրորներու, հայրենի՛ք,
Որոնիս քով մայրիկն ըզքեզ միշտ ողբաց,
Համբուրին հետ շիթ մ՚ըզգացի արտասվաց,
Աչերս տեսան արցունքներու լոկ երկինք։
Ամերակաց ծաղկանցըդ սոսկ այցելու
Ջեփյուռն չ՚եկավ նժդեհ ճակատս շոյելու,
Փառաց դարեր ծընող՝ ընկնող հայրենի՛ք,
Մամռոտ ավերք և դամբարան զորավիգ։

Արարատյան հսկայից
Ուր ծոր ճակատով վիրալից
Հեծե ոգին Հայկական...։
Բայց իզո՞ւր, ողբ, վայ, կական
Նվ արտասուք ու հառաչ
Քեզ սփոփել չեն կարող,
Այլ վեհ ճակատ քրտնաշող
Վ արյունարուղխ կող ու լանջ։

Մոխիր հագած, արյուն ծրծած սև հողեր,
Ուր կոիրեն սոսկում, տրխուր հիշատակք,
Ալ թռեր են ծոցեդ հուսո քաղցր հրեշտակք,
Նվ արյունոտ դաշնի մ՚անգամ չեն թողեր...
Սև շղթաներ եղան ինծի խանձարուր,
Մըթության մեջ սըրտիս վըրա հսկեց սուր,
Միթե հա՞յ եմ, մինչդեռ չես իմս, Հայաստա՛ն,
Թվ հոյակապ, վեհ կոթողներդ պատվանդան.

Օտարաց գահդ՝ հիշատակ,
Ի պլուխ կրես դու պըսակ
Արդ փըշահյուս սև նոճի...
Ալ չկա՞ վառ թագդ առջի,

Որուն ականց տեղ անգին՝
Դառնաթախիծ մըտածմանց
Քըրտունքներ սառ՝ քար կտրած՝
Կնճռոտ ճակատդ պճնեցին։
Երբոր տեսավ արյունլըվա վարդին ծոց՝
Վարդատարփիկ բուլբուլն դողով Թուչեցավ,
Սուգին փափկիկ Թևքն արցունքով Թրջեցավ՝
Սիրազեղ լանջք կուսից տեսավ երբ ի խոց...
Լըռեցին քնար, համբուրը, գեղգեղ և մրմունջ,
Հրաժեշտ տիրեց... և սիրակաթ շուրթեր մունջ
Համբուրեցին սև հողեր, ժայռ և ալիք,
Թուլլ Թուլլ՝ բյուր բյուր ոգիք Թըռան տրտմալիք.
Մասյաց մուտայք դողահար՝
Թողին պատկ և քընար.
Դաշտեր, ձորեր և սարեր,
Ալիք, ժայռեր և սառեր,
Հեգ Հայրենիք Հայաստա՛ն,
Ըզքե՛ղ ըզքե՛ղ ողբացին,
Որ ուրացողք քեզ բացին
Բյուր բյուր՝ սև սև գերեզման։
Հայն էր որ Թագըդ գլորեց փայլարձակ,
Եվ ալեւոր ճակտիդ բարդեց սև ամպեր,
Հետո վայեց՝ երբ գերեզման կըշտապեր,
Այլ շնչասպառ էր՝ չուներ ձեռքը կայծակ՝
Որ այն ամպերն փոթորկաբեր փարատեր,
Եվ Հայրենիքն շղթաներե ազատեր.
Նոճյաց խորքը մահվան շունչը սոսափեց,
Սոսկմամբ ցնորած Հայն իր երկրեն խուսափեց.
Թողուց ավեր և արյուն,
Թաղեց Հոն փառք և ավյուն.
Արդ կըտեսնեն բոթաբեր
Ներկայն՝ ճիգ մը չը Թափեր,
Հայաստա՛ն, քեզ փրկելու,
Անզգա դարձած դարեն դար՝
Զը հիշեր քեզ, չը փութար
Քեզ անձկանոք գըրկելու։

1868

ԵՐԳ
ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Արի՛ք, արդի՛ք Արարատյան,
Նըսեմ ճակատք ցայտե՛ն թող շանթ,
Դողդոջ ձեռաց մեջ սուր ցոլան,
Արդար վրիժուց ժամն հասավ արդ,
Փշրի՛ Պարսկին անպուլ կացին,
Հայք բավ լացին.
Մեռնի՛նք Մասյաց շուքերուն տակ,
Հավերժ կանդնեն հաղթանակ.
Օ՜ն, ազա՜տ լլլանք
Եվ Հայաստան մեր,
Թող տա՜ն արձագանք
Մասիսք անվիհեր.
Մեռնի՛նք յ'Արտազ՝ Տգմուտի մոտ՝
Ուստի ծագի մեզ առավոտ,
Մեր սուսերց փայլեն
Սասանին Սասանք,
Մեր ամեն քայլեն
Ծագի հաղթանակ։

1869

Ի ԴԻՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Ամեն· Հայրիկին

Ո՞վ է որ գա մեզ՝ ճեղքած օդն, ալին,
Ճակատն գոհարք, աստեղք կը փայլին.
Թագավո՞ր մ'է հայ, որ ցատկեց շիրմեն,—
Ո՛չ, դեմքը վառողք արցունք ըսպի են.
Նա կարհամարհե ծիրանի, փառքեր,
Նա սև է հագեր։

Նա մեր հայ եղբարց արցունքն է քավեր,
Ցույց կուտա մեզի արյուն ու ավեր,
Դյուցա՛զն մ'է, որ դո՛ւրս թըռավ դամբանեն,
Ո՛չ, թուր չէ ձե՛ռքն, այլ խաչ բռներ արդեն,
Չը ցայտեր աչքեն շանթեր, այլ սե՛ր, գո՛ւթ.
Դողա անկե Քուրդ։

Նա կուգա Հայոց մարդերեն կարմիր,
Աղատեց Քրդեն Հայը վըշտակիր,
Խաչափայտով մը պանծացավ հաղթող,
Հընչեցուց ի Հայս ազատության փող,
Տեսե՛ք, քուրձ հագեր, կարծես ենք դրակ,
Բայց սիրտն է կըրակ։

Գա Մասյաց սարեն, նա ձախն ու աջը
Մովսեսի քընարն, Դևոնդի խաչը,
Աստղն մը նայվածք, քընարի մը ձայն,
Աղյաց խորերեն կը սիրե նա Հայն,
Դեռ չը ճանչցա՞ք զայն, ճակա՞տը վըշտակոծ,
Հրեշտակն է Հայոց։

Ահա կը հնչե նորա հեշտ սըրինգ,
Արձագանք կուտան Հայոց դաշտք, լերինք,
Երթանք իր շուրջը, Հայե՜ր արտալած,
Ջը խաբեր, մատներ նա մեզ օտարաց,
Ջը սիրեր ոսկի, փառք ու վատ մարդիկ,
Հայուն է Հայրիկ։

Գլխիկը դըրած սըգավոր սըքեմ,
Ջը թափիր ճակտեն դեռ ալիք վըսեմ,
Բայց դեմքին վրա կանուխ են փըթթած
Անցքի ու վշտի խորշոմներ միշտ թաց.
Միակ վարձ մ'ունի՝ այն է կուշել զինք,

«ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ»։

1869

ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ

Փութա՛, հովվապե՛տ, սիրող Հար ազատ՝
Հարազատ,
Փարատի՛ սև ամպ, փայլի՛ արդ արև
Արդարև,
Փոշփոշի՛ն դաշտեր, ազատ առնե՛նք քայլ
Առ նենդ գայլ,
Յրցո՛ւր ցուպդ, Հայերն կանչե՛ յարատ մի՝
Հար հոտ մի։
Ճանկեր արյունոտ կուրծ մեր թափ առինք,
Թափառի՛նք,
Եկո՛, հովվի՛ մեզ, սիրածդ, ազգասե՛ր,
Ազդ ա՛ս էր։
Դու դըխոտ նըման երկնի հայրիկին՝
Յ՚այր՝ ի կին։
Յ՚որոց և յալիս սիրեւ լույս և սեր,
Լույս ևիս, է՛ր
Յավի, չը զարթնու հըրճված յ՚այգուն յ՚այն,
Յա՛յ, քուն հայն։
Սոխակ մ՚էիր մերթ ի նոճս վ՚երգերդ՝
Վերքերըդ
Առած բյուրավոր՝ դեռ դու կանչեցիր,
Կա՞ն, չէ՛ ցիր.
Երգերդ միշտ մեր սիրտ, սիրո, հոգվո ճայն,
Յ՚ոգվոց հա՛յն
Հանեց, վառեցավ ճայնեդ, իմացավ
Հիմա ցավ-
Քեզ խնդրե Հայն արդ, ամբոխ ամբոխ չէ՛
Ամբողջ է.

Արդ ըսե՛ Հայուն, ըրէ՛ ազգ անոր
Աստանոր.
Ես կարուտ եմ վառ սրտից, ձեռքերիս,
Ջեր գերիս,
Եղբարքն ազատե՛լ, լո՛ւծ տալ ի Մասիս,
Ի մաս չ'իս
Առնել իմ նախնյաց արյուն սրտաւքեն,
Արդ սուգին
Երնեն Հայք՝ օրհնեն սիրով Հավիտ իս
Յ'ավիտիս.
Յանկամ, որ Հայք ինձ ըսեն ա՜հ, չամայր՝
«Ահա՛ մայր».
Այս իմ վերջին տենչ, միշտ ձեռք Հայկա կա՜ն
Հայկական:

1869

Ի ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ամեն Հայրիկին

Այն սգալի սև սև նոճյաց եւևեն
Արշալույսին շողք մեզի «Լույս» կավետեն,
Խուսեց խավարն, փողփողե լույս արևուն
Հայոց կարմիր մարգաց սառուստ սարերուն,
Փրլատակաց մըթին խորքեն կուգա ձայն՝
Հայե՛ր, հայե՛ր, դեռ Հայաստան չէ՛ կործան...
Զայն տըվողը չէ ըստվեր,
Հուր ներշնչողք չեն աստղեր,
Եղբայրության է հուր ձայն,
Հայը սիրող Հայն է այն։

Նա դիշերվան հետ ազդ խոկաց ու լացավ,
Եվ արևուն սըլաքաց հետ կրակ դարձավ,
Հողմոց թևով միշտ սըլացավ հայկարան,
Տիգրիսի հետ թըրջեց ավերք տխրական.
Հայաստանի, եղբայրության սիրահար,
«Հայ» կոչելով շուրթերն եղան դալկահար։
Ալարայրի նա վարդին
Սոխակն եղավ տրտմագին,
«Վարդա՛ն» գոչեց նա, անդեն
Վաստակն ելավ դամբանեն։

Նա իրավունք, ազատությո՞ւն գոչեց հար,
Փոշոտ ու խոնջ ոտքերն նետեց, ուր հայ կար.
Ուր որ հայ կար, ջերմ համբուրեց նա այն հողն.

Ուր Հայն շնչեց՝ հառաչ և հուր ղրկեց հոն,
Բոցաթըռիչ Հայի առ Հայ նա թըռավ,
Հարված, ցավ, դավ՝ սերն խեղդելու չեղան բնավ։
Այս հայկազնը չ'ուներ սուր,
Այլ կուրծն ուներ հայ, խաչ, հուր.
Կը հագներ սև ու դըրգյակ,
Նա գութ ուներ, ո՛չ քըսակ։

Ագա՛ս սիրեց, ազա՛ս գոչեց, չը թովեց,
Հայն զայն ատեց, հայ մը ձեռքը չը թոթվեց.
Բանտ, կախաղան, աքսոր, Սիպիր և սուսեր
Չը կրցին ձայնն մարել, խեղդել իր հույսեր,
Միշտ «Հա՛յ» կանչեց, բարձն էր գլխուն Մասյաց
սար,
Նա սիրտն ըրավ հայրենահուշ գոռ քընար։
Արդ հայրենյաց մեր շնչիկ՝
Հով մը կուգա անուշիկ՝
Վառ ճակատուց այցելու,
Հայուն աչերն սրբելու։

Բա՛ց են թևեր, բա՛ց են սըրտեր, բա՛ց ճակատ,
Եկո՛ օգնել տըկար հայուն ապաբախտ,
Հո՛ւր հայրենյաց, եղբայրության դու հագա՛գ,
Քընարահար հայու մը իղձ քեզ հրեշտակ.
Վես Վասիորին ալիք ըղքեզ բարևեն,
Ցրվե՛, սև ձեռք, սև ամպ, Հայոց արևեն։
Արտոսր ու քիրտ թող փալփլին՝
Ջերթ աստղեր հայ երկնքին,
Եվ սորվեցուր Հայուն դու
Սիրե՛լ, օգնե՛լ, իրարու։

Արտասվաթոր քեզ կը նային հայ աչեր,
Սև շըղթաներ քեզ ցույց կուտան գոռ քաջեր,
Մըշտ կըտրիճք՝ աղչիկք ի քեզ ապաստան
Հայն ու դամբանն, տաճարն, հյուղակին՝
Հայաստան.

Թո՛ղ փլատակաց մոխրեն հառնեն հիշատակք,
Մութ մենաստանք վերափայլե՛ն նախնի փառք...
Լո՛ւյս, լո՛ւյս տեղան ամեն տեղ,
Գիտութի՛ւն, լո՛ւյսն հայ աստեղ,
Լո՛ւյս հյուպակին, լո՛ւյս վըհին,
Լո՛ւյս հայ փառաց շեջ ջահին։

Ահա սրանա մեզ ապագա բոցագեա,
Մեր հայրենի ավերակաց տալ լույս վեա.
Հարկ չեն մեզի նիզակ և սուր ու վառոդ.
Իրավունքի, սիրո, լուսո ենք կարոտ.
Եղբայրութի՛ւն Հայն կը հենու, ո՛չ թագի,
Բոնե ձեռքեն որ շունչ առնի և հոգի.
Եվ ալ մոռնա Հայկազն հեզ
Հին հարվածնեին ու խոր վերք.
Եվ սիրաք ի տրուի որոտան
—Կյա՛ց միշտ ՀԱՅՐԻԿ ԽՐԻՄՅԱՆ»։

1869

Իղձք Աւ Հայաստան

Երբոր ցողին փաղփուն շիթեր գիշերվան
Խոտի, թերթի, ծաղկի վրրա կը տեղան,
Եվ երբ երկինք աստղեր շողան մթավար,
Ցայտեն արցունք, կայծ իմ աչերըս խավար.
Ի՞նչ, Հայաստա՛ն, քեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, այլ սև նոճի մ՚ըլլալ, քեզ շո՛ւք տալ։

Ձիս աստղազարդ երկին սփռփել չէ կարող,
Մասյաց սարին արտասվալից է նա քող,
Ձեր հիշատակն ինծի համար հեշտագին՝
Նըման կուսին սիրո առջի արցունքին.
Դամբա՛նք, ավե՛րք, ձեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, այլ ուղիս մ՚արցունք ըլլալ, ձեզ ցո՛ղ
տալ։

Երկաթ, շղթա, բանտ և անդունդք ու վըհեր,
Ամպրոպ ու շանթ, մահվան զանգակ ու ջահեր,
Չէ՛, չե՛ն կարող պահ մը ձեր վառ հիշատակ
Ծածկել սևի ու սոսկումի վեմի տակ.
Ազա՛տ օրեր, ձեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, այլ հուր մ՚ըլլալ, և ձեզ Հայո՛ւն տալ։

Ձվարթ բնության այն կամարներն ծաղկահյուս,
Բույր, կայծ ու գեղ, նայվածք, ժըպիտ
սիրուհվույս,
Անուշ հովեր, արծաթ ալիք վըտակին
Ձեր հուրն սըրտես պահ մը առնել չը կրցին.
Փառա՛ց օրեր, ձեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, այլ ձեզ պատըրուդ մ՚ըլլալ, ու լո՛ւյս
տալ։

Ա 24410

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Արշալույսին տժգույն աստղեր երբ փալփլին,
Գողտրըր գեղգեղ վարդակարոտ բուլբուլին,
Բնության դաշնակք, ո՜հ, չեն կըրնար նուագեր
Ըզձեզ հառաչք, յոր մըռընչեն նոճիներ.
Սև՛ սև՛ օրեր, ձեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, արյուն մ'ըլլալ, և ձեզ կարմի՛ր տալ։

Թերևս ժըպտին Հայոց մըթին սարերը,
Կամ շունչ ծխեն Սիպիրիո սառերը,
Բայց սև հոգիք ու սև ճանկեր անողոք
Խեղդել կուգան ազատ հոգվույս իմ բողոք,
Արդարությո՜ւն, քեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, այլ սուր մ'ըլլալ, սըրտեր քեզ մուտ
տալ։

Մինչ ցե՛րբ գոչեմ, ձայնըս մեկը չըլսեր,
Հայն իր ժանգոտ շղթան երբե՛ք չը սարսեր...
Բընավ ինձ հետ իրավունք ոչ թոթովեց,
«Հայ չես» ծաղրեց, և ձայնը զիս չը թովեց.
Հա՜յ ու շղթա, ձեզ մոռնա՛լ,
Երբե՛ք, այլ շունչ մ'ըլլալ, ու ձեզ ոգի տալ։

Հարուստն ու կղեր թե ազգ ըզգան և վաուին,
Թե Լույս և Սեր հայ սըրտերուն մեջ թաուին,
Թե հայություն երկնե Ազատ զավակներ,
Թ' եղբայրության սիրո վաուին կըրակներ,
Քնա՛րդ իմ, զքեզ մոռնա՛լ,
Ո՛չ, յետ շիրմիս քեզ ձայն ըլլալ, ու հայ լալ։

1869

Նոր Սեվ Օրեր

Մինչ բնութեան՝ ընկա՞ն արյան դարերը,
Աշխարհ մը կա արցո՛ւնք թափող սարերը,
Արյամբ պղտոր դեռ գետերուն ափունքը,
Ջը դադրեցավ դեռ այս երկրին սև սուգը.
Ավերակույտն այս ահարկու,
Աշխարհ մոխրոց ու նոճերուս

Հայ դյուցազանց՝ որ հոն ընկան ի վաղուց,
Ոսկերոտիքն՝ արմատներն այն վըրիժուց,
Ա՜հ, դեռ բողբոջ մը չարձրկած հո՞ղ դարձան...
Ուրեմն հիմա ազիք չունի Հայաստան...
Ա՜յ, դալկահար դու հայրենիք...
— Եվ դեռ Քրդի՞ն ալ խոնարհինք:

Մառախուղ են հագեր՝ դաշտն ու լերինքը,
Ջը գեղգեղեր Հայ հովվուհվույն սըրինգը,
Հայուն համար չը փալփըլեր աստղիկը,
Արցունքներով թոռմեր հոգվույն ծաղիկը.
Դադրեր անմեղ խինդ, թինդ ու պար,
Շողա՞ ազատ Քրդին տապար:

Դողդոջ մտնե առագաստը գիրգ հարսը,
Արտասվաթոր՝ դեմքին ծածկած հույլ վարսը,
Որ չըլլա թե հանկարծ սիրտ մըրմունջը
Խափանե վատ Քրդին տուփուռ մըռունչը.
Սերը փեսին արյամբ կարմրի,
Հարսը Քըրդին կերթա գերի...

Միշտ կըցանե Հայն, չը հնձեր... անոթի՜...
Իր գալկահար դեմքեն երկու շիթ կաթի,
Արտոսր ու քիրտ միանգամայն... ո՜վ Աստված,
Նա ճաշակե տրտմած սրտով ցավ ու հաց.
Այս տարաբախտ ազգն է Հա՛յը,
Մեր արյունը, մեր եղբա՜յրը։

Ա՜հ, ոտնակոխ հայուն սիրտը և տաճար,
Հրացանն չ'ուզա սա կոշտ Քրդին անդադար,
Նվ մեր ներսը չե՞ռար կարմիր մեկ ալին
Կամ մեկ վիրփուրն հայրենյաց սուրբ կրակին,
Որ սառույցի զերթ որդիներ՝
Մեր աղիքները չենք թոթվեր,

Ի՞նչ սիրտ է այս, որ հոս գամեր է Աստված,
Մինչ չը սիրեր նա հայրենիքը ցաված...
Ջունի ներսը Հայն իր նախնյաց տըրուփը,
Լըքեր է զինք ճակատագրին Սերոբը,
Երես դարձուց Հայն սուսերեն,
Սև ժառանգեց լոկ պապերեն։

Սառե աչեր, քարե լեզու, ա՜յս մընաց
Բյուր փառքերեն մեր գոռ ու պերճ հայրենյաց,
Սևագլուխ խումբ մը ագռա՜վ մընաց լոկ՝
Կամ խումբ մը կույր խըլուրդ՝ սորուկ փառքի
սոսկ,
Ա՜հ, այն արծիվ ժողովրդեն,
Որ հարվածվի արդ կոշտ Քրդեն։

Ի՞նչ սև ձեռքեր հըպին վըճիտ ճակատին,
Հայ կուսիկին նըվիրական լաչակին,
Դըժոխք մը տարի Թոշնեն վարդը կուսության,
Կարծես ծաղիկ կը կոխկռտեն—զայս կըզգան,
Եվ երբոր Հայ մը մորթեն,
Կարծես թե հավ մը մորթեն։

Է՜հ, մի՛ վախեք ասեղ մ՚անգամ պետք չէ մեզ,
Այլ հայրենի սոսկ ըզգացում մ՚ադեկեզ՝
Ժանգոտ սուր մը, պատռած դրոշ մը թե
չունինք,
Կուրծերնուս տակ տըրոփող սի՞րտ մ՚ալ
չունինք։
Օ՛ն, ուռքերնիս զարնե՛նք գետին,
Հայտնե՛նք մեր ցավը ահագին։

Մեր քերց վարդերն և արևներն մեր եղբարց,
Մեր տաճարաց խաչերն, պատիվն հայրենյաց,
Մենք պահանջենք բարօրութիւն մեր ազգին.
Զա՛յս պահանջենք՝ զա՛յս Սուլթանեն սրտագին,
Մեր պատիվն ու Քուրդը կուզենք,
Եվ կամ նորա զենքին դեմ զենք։

1871

Մանուկն Աւր Խաչ

Ո՛վ խաչափայտ
Դու քառաթև,
Որո ճակատ՝
Սիրո արև՝
Գամված Հիսուս,
Փըչեց խոնարհ
Հոգի և լույս,
Սեր ընդ աշխարհ։
Ընդունե՛ իմ հոգիս հեզիկ, փառաճաճանչ
Թևերուդ տակ, և սորվեցուր ինծի հավատ,
Սեր, հույս, որով միշտ բաբախե իմ փափուկ
լանջ,
Եվ փարատե՛ լուսովդ խավարն սրտես վըհատ։
Սորվիմ աղոթք
Դառնալ քեզի,
Երբ խութից ոտք
Իմ հանդիպի,
Սև սատանին՝
Որ ճգնի միշտ
Դյուրել զհոգին
Ի մութ, ի վիշտ։

1871

Ի՞ՎԹԵ

Ո՜հ, ի՞նչ ես դու, սե՛ր, երկնի հո՞ւր կամ
ժըպի՞տ...
Ջունի երկին աչացդ կայծերն ու կապուտ,
Վարդը չունի քու լանջդ անբիծ, լուսափթիթ...
Ջունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ։

Գիշերն երկնի կայծից, լուսնույն սիրադեմ,
Ցերեկն ալյաց, ծաղկանց ժպտիս...մեկո՜ւն գեթ...
Իսկ քեզ համար ես արցունքով կաղոթեմ,
Դու չես շնորհեր նայվածք մ'ինձ հուր
աչերեդ։

Արդյոք է՞կ մ'ես, թե՞ երկնի զվարթուն,
Կը նախանձին փայլիդ վրա վարդ, լուսնակ,
Ջայնիկդ ապշած լսելով քաղցր ու թրթռուն՝
Նոճերու մեջ սգա լըռիկ լուսինյակ։

Ծնեի իցի՜վ թիհւացող հով մ'անուշիկ
Եվ դիվելով երազք ճակտիդ այդ անսուգ,
Տայի շունչըս շուրթերուդ մեջ ես հուշիկ,
Վոկ սրբելով թե շողար աչքդ արտասուք։

Պարտեզդ իցի՜վ թե փթթեի վարդ լացող,
Եվ երբ գայիր այգուն շաղին ժպտով պերճ՝
Գունովս ներկել այտերդ, թափել գոգդ իմ ցող,
Վերջին շնչիկս ի գիրկդ առներ ելևէջ։

Բղխեի ես իցի՛վ թ՝առու մը վրճիտ,
Եվ երբ հուշիկ գայիր մոտ իմ եզերքին,
Ցոլանար իմ հայելվույն մեջ քու ժըպիտդ,
Պղտորելով կապույտ ալիքս ցամքեին։

Ա՛հ, իցի՛վ թե լինեի ես ճառագայթ,
Շողշողայի դեմքիդ վրա վայրիկ մի,
Խաբեի քեզ թ՝ ես ավելի գեղազարդ,
Վ. անուշաբույր մազերուդ մեջ մարեի։

Այլ ո՛չ, ա՛նգութ, եթե տըվիր մեկուն սեր,
Իցի՛վ թ՝անոր գերեզմանին քարն լինիմ,
Եվ դու թողնած գաս շնչիլ շուրջս... արտասվել...
Քեզ հըպելու համար հարկ լոկ գոլ շիրիմ...։

1867

Մանուշակ

Ո՜վ մանիշա՛կ, մանիշա՛կ,
Ինչո՞ւ այդպես գլխիկդ
Նայիս հողին սըգավոր...
Ո՜հ, ինչի՞ այդ նըշանակ։

Միթե դու կո՞ւյս մը տեսար,
Որուն աչաց քով կապուտ՝
Ըզքեզ գըտար այնչափ մութ,
Որ կը սըգաս սևահար։

Եթե դու ալ վարդին պես
Ունենայիր դուլզն բոսոր,
Կը շիկնեիր, ինչպես որ
Շիկնեցավ այն վարդը վես,

Երբ տեսավ օր մը ներա
Վարդերն անբիծ այտերուն։
Շուշանին պես դալկություն
Եթե ըլլար քու վըրա,

Դժգունեիր որպես նա,
Ինչպես որ օր մը շուշան
Դըժգունեցավ աննըշան՝
Տեսավ ձեռներն երբ ներա։

Եվ դեռ ըսե՞մ... օր մ'երկին
Ամպոտեցավ... էր արդյոք...
Երբոր կըներ նե աղոթք,
Վերն հառած աչքն ու հոգին։

1871

Սիրեցի քեզ

Շաղի, շողի ժամք էին,
Վարդից հրդեհ կար յերկին[1])
Փոխան ամպոց հուր հյուսքի[2]),
Տեղար մարդրիտ և ոսկի։

Թավուտքի մը խոր ծաղկոտ
Ընկողմանած նվաղկոտ՝
Կը հևայիր դու ժժգույն,
Ամրան սյուքի մը հանգույն։

Աչերդ սիրո Ատրուշան...
Նվ մատներուվդ զերթ շուշան՝
Կը փետտեիր ծաղիկ մի,
Հառած շողից[3]) աչքդ երկնի։

Հիանայի, թե ի՞նչպես
Փետտել թերթեր վարդին վես
Եվ թափթփել ի քո գիրկ՝
Ջորեին մատունքդդ գիրգ։

Նվ նըվաղկոտ այդ աչեր
Նըշուլեին նոր եթեր,
Եթեր մ՝ աստեղց, ուր փոխան[4])
Հրաշեկ սլաքք կը շողան։

---

1) Երկնքում։
2) Ամպերի հուր հյուսքի փոխարեն։
3) Շողերին։
4) Ուր աստղերի փոխարեն։

Ըրիր աշացդ մեկ կայծին
Եվ մեկ վանկիդ զիս գերին,
Ընդհայեցիր զիս, ա՛նգութ,
Նշուլներովն վեհ հոգվույդ։

Թո՛ղ սրրաս, ինձմե գնա հեռի,
Ջուզեմ հոգվույս թագուհի
Քեզ՝ որո կուրծն վարդի թերթ,
Այլ կրանիտ[1]) սիրտն է գեթ։

Դու որ գիտես լոկ բուրել,
Գիրդ սրտերու վերք փորել,
Եվ կը սիրես, երբ կարի՞[2])
Քեզ պաշտող սիրտն արյունի։

Թավուտքի մը շուք նըստեմ,
Երբոր մենիկ արտասվեմ,
Հոն ես դու, կը գտնես զիս,
Տերևներեն կը խոսիս։

Երբ առվակին մեջ փաղփուն՝
Կուզեմ մոռնալ դեմքդ, դուն
Դարձյալ հոն կը գտնես զիս,
Ալիներեն կը ժըպտիս։

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Ջախջախել սիրտս և քընար,
Հովին մեջեն միշտ մընչես՝
Թե բնավ զիս սիրած չես։

Գրկեմ սրտովս արդ ցուրտ հող,
Ով ալ չը դիպիմ քլ·զի թող,
Կույս մ՚է նաև գերեզման...
Կա՞ խորունկ սիրտ մ՚անոր նման...

1869

---

1) Գրանիտ։
2) Շատ։

Սիրել

Բույլ մը նայվածք, փունջ մը ժըպիտ,
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ։

Ես ուզեցի լուռ մենանալ,
Սիրել փըթիթք, խորշեր թավուտ,
Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առտըվան շաղն, իրիկվան բալ,
Ճակատագրիս սև դիծ կարդալ,
Խոկալ, սուզիլ, ըզմայլիլ սուտ։

Ո՜հ, խուրձ մը վարս, եղեմ մը շունչ,
Շրջազգեստ մը շրշեց իմ շուրջ։

Ես ուզեցի լոկ ու մինակ
Սրտակցիլ ջինջ վըտակին հետ,
Հիշատակի չունի նա հետ,
Սիրտ մ'որո մինչ սուզիմ հատակ,
Գտնեմ զիս հոն դժգույն հստակ,
Գաղտնիք մ'ունի—այն՝ անթիվ վետ։

Եթեր մը տրոփ սրտի լսեցի,
Հծծեց.—«Կուզե՞ս սիրտ, ե՛կ ինծի»։

Ես ուզեցի սիրել զեփյուռ,
Որ երկնքեն թըռչի բեկբեկ,
Նա չը՛ սիրեր խոցել երբեք,
Հոգի մ'որո գաղտնիքն է բույր,
Գիտե շոյել երազներ բյուր,
Երկնի բույրն հուշ կածե առ հեք։

Ո՜հ, փունջ մը բոց փըսփըսաց ինձ.
—«Կուզե՞ս պաշտել հոգի մ՝անբիծ»։

Ես ուզեցի քընարով մի
Վոկ սիրել հոս, հոս դալկահար,
Պաշտել, գրկել միայն քընար,
Սիրող էակ ճանչել զանի,
Ըստ իմ քըմաց լարել աղի,
Եվ սրտակցիլ սիրողաբար։

Նե մոտեցավ հուշիկ՝ ըսավ
—«Քնարդ է ցուրտ սիրտ, և սերըդ՝ ցավ»։

Թոթվեց թևերն հոգիս մոլար,
Ճանչեց ըզնե՝ գեղ ու կըրակ,
Սիրտն անապակ ինչպես վտակ,
Անմեղ՝ ինչպես այուք դալկահար,
Հավատարիմ՝ ինչպես քընար,
Հրաժեշտ տըվավ կյանքի մենակ։

Բույլ մը նայվածք, փունջ մը ժըպիտ,
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ։
1871

Լ Ձ Ա Կ

Ինչո՞ւ ապշած ես, լըճա՛կ,
Ու չեն խայտար քու ալյակք,
Միթե հայլվույդ մեջ անձկավ[1])
Գեղուհի՞ մը նայեցավ։

Եվ կամ միթե կզմայլի՞ն
Ալյակդ երկնի կապույտին,
Եվ այն ամպոց լուսափթիթ,
Որք նըմանին փրփուրիդ։

Մելամաղձոտ լըճա՛կ իմ,
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Սիրեմ քեզի պես ես ալ
Գրավիլ[2]), լռել ու խոկալ։

Որքան ունիս դու ալի,
Ձակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր,
Սիրտս այնքան խոց ունի բյուր։

Այլ եթե գոգդ ալ թափին
Բույլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չե՛ս կրնար դուն
Հոգվույս՝ որ է բոց անհո՛ւն։

Հոդ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկներն հոդ չե՛ն թոռմիր,

---

1) Անձկանոք, կարոտով։
2) Գրավվել։

Ամպերը չեն թրջեր հոդ,
Երբ խաղաղ եք դու և օդ։

Լըճա՛կ, դու ես թագուհիս,
Չի թ'հովե մ'ալ խորշոմիս,
Դարձյալ խորքիդ մեջ խըռով
Ձիս կը պահես դողդողալով։

Շատերը դիս մերժեցին,
«Քնար մ'ունի սոսկ»—ըսին.
Մին՝ «դողդոջ է, գույն չունի»—
Մյուսն ալ ըսավ.—«կը մեռնի՜»։

Ոչ ոք ըսավ.—«Հեք տղա,
Արդյոք ինչո՞ւ կը մըխա՝
Թերևս ըլլա գեղանի,
Թե որ սիրեմ, չը մեռնի»։

Ոչ ոք ըսավ՝—«Սա տըղին
Պատռենք սիրտը տըրտմագին.
Նայինք ինչե՛ր գրված կան...»
—Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան։

Հոն կա մոխիր... հիշատակ...
Ալյակք հուզի՞ն Թող[1]), Լըճա՛կ,
Չի քու խորքիդ մեջ անձկավ,
Հուսահատ մը նայեցավ...

1871

1) Թող հուզվեն

ՊԵՏՔ Է ՄԵՌՆԻ՛Լ

Դժգույն գիշեր մ՛էր քաղցրաբույր աշնային,
Երկինքն աստղեր զերթ սիրո վերմ ցոլային,
Դեղնած ու չոր թերթից[1]) լուսինն իր բեկբեկ
Շողքը ցողեր[2]) ամրան վարսից աղեբեկ[3]).
Շամբերուն մեջ կը սողոսկեր ուղխ մ՛անհետ,
Կայծեր, աստղեր կը խաղային ալյաց հետ,
Սյուքը խաղաղ տերևներուն հետ թեթև
Կը շոյեր գլուխս՝ այրած ճակատս վառե թեև,
Նա իր շնչովն իս[4]) գոհ ընել կը կարծեր,
Բայց կարծարծեր, ո՜հ, իմ սիրույն բյուր կայծեր...
Ոգի մ՛անցավ սրտես, թողուց հոն ըստվեր,
Աստեղց բույլ մը... միայն գիտեն զայս աստղեր...
Համբույրի մը հիշատակն էր սյուքին շունչ,
Իր դողդոջ ձայնն՝ տերևներուն սա շըշունչ,
Գունատ ճակտին տխրիկ պատկերն այս լուսին...
Ո՜հ կյանք պետք է տալ՝ սիրտ տրվի թե կուսին,
Կը սիրե նե, նայվածքին մեջ կը թոռմի.
Ո՜հ, ի՞նչ է նե.—ձյունով շաղված մի անդրի.
Վսեմ ճակտին վրա զույգ մը աստղեր վառ՝
Եթե սիրե՝ հավի, թ՛ատե—կտրի սառ...
Ախ հուր աչեր, ժըպիտ, արցունք տեսի նախ.
Կուրծս ուռուցիկ լանջ մը ըզգաց սիրաբախ,
Սիրո մրմունջ, հառաչ լսեցի, բեկբեկ խոսք,
Դողդոջ ու գիրգ՝ պաղ ձեռք մ՛ըզգաց ձեռքը սոսկ,
Թևերուս մեջ լույս մը, հով մը մարեցավ.

---

1) Թերթերին, թերթերի վրա։
2) Ցողում էր։
3) Ամառվա ալեխառն մազերի վրա։
4) Ձիս, ինձ։

Էակ չէր նե, այլ սեր, հուր, շունչ, ժըպիտ, ցավ.
Գոհար աչեր, վարդ այտ, այլ ինքն էր թախիծ.
Այն գիսավոր աստղեն էար մը մընաց ինձ...
Հիշատակ մը, գերեզման մը... սուրբ սափոր,
Ուր հեկեկով սիրտըս կընե միշտ թափոր...:
Երանի՜ թե ըլլամ ես շիթ մ'արտասուք
Եվ անհետիմ դամբանիդ քով սիրասուգ.
Իցի՜վ թե խոտ մ'ըլլամ ու ես ցամքիմ հոդ[1]),
Ծաղիկ կըլլամ, բայց առանց քեզ չունիմ հոտ.
Լույս թե մութ, քուն, շուքըդ պիտի չանհետի,
Հառաչելով ուշ պիտ ըլլամ ոսկր ու դի,
Շիրմիդ վարդը չը թոռմած՝ քեզ գրկեմ ես...
«Կյանք կուտաս, սիրտ թե տաս, ըսեն ետևես»:

1869

---

[1]) Այդ-աեղ:

Ա՛ր Մայիս

Ծաղիկներու մայրի՛կ դու կույս,
Ո՛վ իմ Մայիս ծաղկահանդերձ,
Սա երիներանգ ծաղկոթդ հանդերձ
Է՞ր չը բերիր Ծաղիկն հոգվույս։

Ո՛հ, միթե կա՞ այլ զվարթուն
Մայիս հոգվո Ծաղիկներու.
—Նա փողփողե վերև գլխու—
Մի դալկահար Մայիս անհուն։

1871

ԹՐՔՈՒՀԻՆ

Երեկո է, բոցավառ է հորիզոն,
Կառք մը կանցնի դագաղի պես համրընթաց,
Գեղուհի մը ընկողմանած տրուխն հոն,
Վերջալույսի աղջի՛կ մ'է սա, ո՜վ Աստված,
Երբ նայի,
Կըսես.—«Հի՛մա կը մարի»։

Մեղրամոմե անդրիանդի մ'է հանգույն.
Ի՜նչ դալկահար... կարծես հաջաղը վառե
Պատան մ'է նուրբ ներա վարդիկը տժգույն[1]).
Աստված ըզնե զույգ մ'աչերովն կը վառե։
Երբ ժըպտի,
Կըսես.—«Ո՜հ, հի՛մա կանցնի»։

Նայիլ կուզե, բայց ավելի կը նըվաղի,
Սիրտը խոնկի պես կը մխա սիրավառ,
Նե շողերու, բույրերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրե ծաղկե թառ.
Երբ շարժի,
Կըսես.—«Հի՛մա կը թըռչի»։

Լանջն է հուզյալ Օվկեանի մը նըման։
Կուզե սիրել... համբույրի մ'հետ նվաղիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամել սիրո կրակե բաժկին հուսկ կաթիլ.

---

1) Նրա դժգույն վարդերին (այսինքն՝ այտերին)։

Եթե շիկնի,
Կըսես.— «Հի՛մա կը բոբնկի»։

Սըրտի մեղո՛ւ, ինչպես կոչեց Լամարթին,
Որուն ծըծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սեր,
Ես կոչեմ զնե կույս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրո, որ հորիզոն չունի գնա.
Եթե խոսի,
Կըսես.—«Հի՛մա կը հատնի»։

Նե կը վառի, միշտ կը վառի, չը հատնիր
Տըննանկ կրնոջ տաճարն վառած եըագին պես,
Աստղերու նման գիշեր սիրե փողփողիլ,
Կրակ մ'է փրթած կողեն սիրո բոցագես...
Իսկ թե մեռնի,
Կըսես.—«Հի՛մա կը ծնի»։

1871

Ն ե

Վարդը գարնանի
Թե կույսին տիպար
Այտերուն չըլլար[1]),
Ո՞վ հարգեր զանի։

Թե չը նըմաներ
Կապույտն եթերաց
Կույսին աչերաց[2]),
Երկինք ո՞վ նայեր։

Թե կույսը չըլլար
Սիրուն ու անբիծ,
ԶԱստվածն այն երկնից
Մարդ ո՞ւր կը կարդար։

1871

---

1) Եթե գարնանային վարդը կույսի այտերին նման չլիներ։
2) Եթե եթերի կապույտը կույսի աչերին նման չլիներ։

Սիրեցեք Զմիմյանս

Վարդակարմիր Գողգոթային վհՀ գագաթ
Միշտ փալփլող, սիրո անշե՛ջ ճառագայթ,
Դեռ կսպասե՞ս թափել սըրտից քու սըլաք.
Ջո՞վ կը հսկես, վհՀ և անդո՞ւնդ, թե կըմախք,
Ո՞ր սև ժայռից մեջ մարեցավ այն բեկբեկ
Բարբառն վըսեմ թե «Զմիմյանս սիրեցեք»։

Ծածկե ամպով կարմիր կողերդ, Գողգոթա՛,
Եվ թող խայտան ցավոտ ոսկերք սև Հուդա...։
Ժանգոտ ու գուլ թուրերն առին կարմիր փայլ,
Նոր կըրոնին հետ արյան ուղխք առին քայլ...
Թնդանոթին առջի բոմբյունն խեղդեց սեգ
Ձքաղցր հագագ, թե «ըզմիմյանս սիրեցեք»։

Մարդաշոհով Վատիկանի մըխացին
Ծխնելույզքը, կամարքը «ւիա՞ռք» գոռացին,
Փոխ—Քրիստոսք խաչն ըրին դաստակ կացինի՝
Սև դըրոշ մը առելության արյունի,
Դարուց մոխրեն կամ ամպերեն հուսա հեք
Ձրկյալն լըսել, թե «Զմիմյանս սիրեցե՞ք»։

Տնանկին դամբանը կանհետի ոտնակոխ,
Տնակին մեջ մարի առկայծ կանթեղն հողդ,
Այն մութին մեջ նոթի տըղեկք կը՝հեծեն,
Դըղյակն խրախ մինչև լույս ջահք կը հյուծեն,
Հարուստին կառք ժըխորով կանցնի սրարշավ,
Հեքին դագաղն իր գերեզմանն լուռ իջավ...

Գեթսեմանին իջնող հրեշտակն գալկահար՝
Որ գեղ, ծաղիկ, արցունք ու փառք չը ճանչնար,
Նորա ցուրտ գոգն աղքատը սոսկ կըսփոփի,
Ճոխն ու տրնանկ պատանքին մեջ կըլլան մի.
Կայծակնաթև քե մըռընչեն մրրրիկներ
Բե «Սիրեցեք զիրար», հևքն հոս չեն սիրեր։

1869

Ա՛Ր ԿՈՒՅՍՆ

Ո՜հ, մինչ ցե՛րբ, ըսե, ո՛ կույս, հոգիս ըլլա դեղույդ գերի,
Եվ մինչև ցե՛րբ թրթռան աղիք ցաված սրտիս և քնարի,
Լոկ համբուրիկ մ՚ուզեցի քաղել այտեդ մեկ թարմ վարդ,
Ճառագայթ մը խընդրեցի աչերեդ երկնազըվարթ.
Չլացար դու, անգո՛ւթ, վարդ մը ժժգույն ճակտիս,
Եվ ճառագայթ մ՚այն անդունդին խոր սրտիս.
Ո՛չ, ես չե՛մ կրնար ապրիլ զուրկ գրկեդ,
Միծառնիկն ապրի դուրս բույնեն դեթ.
Տրտմալար քնարըս զարնեմ ջախջախ,
Գոցեմ սիրտըս սիրաբախ....
Մնայք բարով, կույս և քնար.
Կուաին տեղ լաց, քա՛ր,
Ճակատըս նըսեմ
Հանգչեցընեմ,
Մաշող
Հող։

ՆԵՐԱ ՀԵՏ

Համբույր մ'առի ներանե,
Համբույր մ'անհուն դորովի,
Որը կարմիր շողք մարեին
Հորիզոնին վերևի։

Ջեռքըս տարավ կուրծին՝ հոն
Սիրո երկին մ'որոտար,
Թոշնեցա գիրկն ես իբրև
Համբույր մ'անհուն դալկահար։

Նե զիս իր քով նըստեցուց
Գորգի վըրա դալարյա,
Հուսկ ճաճանչ մը պլպլար
Ներա դիմացը վըրա։

Թոթովեցի... դողացի...
Առի համբույր անհամար,
«Խոսինք» ըսավ—ո՜հ, խոսի՛լ,
Հատնիլ է լոկ ինձ համար։

Աչերու բոցն երբ մարի,
Դադրի տրոփն երբ սրտին,
Լոկ այն ատեն հարկ է որ
Անզոր շուրթերն խոսինն։

Հուր հորիզոնն մարեցավ,
Երկինքն աստղեր փթթեցան,
Համբույր մ'առի դարձյալ ես
Հանուն աստեղց գիշերվան։

Նե թողուց որ վարսքն ազատ
Սյուքը դեպ յիս[1]) բերելով
Միշտ հովահրե բըռընկած
Ճակատըս զով բույրերով։

Ո՜հ, այն ժամը ոսկեզօծ
Անշուշտ սահած, թըռած է
Ճակատագրին անողորմ
Սև ձեռքերեն երկաթե։

Մեր համբույրներն պահեցին
Տերևները խարշափմամբ,
Եվ շողերու տըվին շուք՝
Աստղերն երկնից այն անամպ։

Ձեռք վերցուցինք աստղերուն,
Սեր ուխտեցինք իրարու,
Դողդըղացին աստղերն ալ
Մեր երդումեն ահարկու։

Լըսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրսկեց ի գորով,
Բընությունն եղավ պսակիչ,
Մեզ պսակեց աստղերով...։

1871

1) Դեպի ինձ։

Կույսն Լքյալ

Հալեց սառեր գարնան արև,
Ոսկի մատամբք[1]) ծաղիկ, տերև
Յանեց, ցըրվեց ամպ ու բալ փույթ,
Պարզեց աստեղց կամարն կապույտ։
Ո՜հ, ինչո՞ւ կուսին
Նայվածքն է մըթին։

Ոսկի սըփռեց լերանցն[2]) արփի,
Ծիծաղեցավ լուսինն յալի[3]),
Կայծ ու ծիծաղ, ծաղիկն համբուն.
Թերթեր՝ ուր սեր կարդա զվարթուն։
Ո՜հ, ինչո՞ւ գունատ
է կուսին ճակատ։

Բուլբուլն թառեր թավուտ թըփին՝
Գեղգեղե գե՞լ աղյոք սըրտին[4]).
Թըռչունք մըթին անտառաց խոր
Ջայնակցին, հեշտ սիրո ժըխոր...
Ո՜հ, ինչո՞ւ լինի
Լուռ՝ կույս լեզվանի։

Ալիք սիրո ցույց տան ձայն, նետ,
Մրմունջ նայվածք տանելով հետ,

---

1) Մատներով.
2) Լեռներին, լեռների վրա։
3) Ալիքին։
4) Սրտի գալարված թելերով.

Ջըրել կերթան ծաղկոտ մարմանդ,
Թոթվե խոտեն հովն ադամանդ։
Ո՜հ, ինչո՞ւ արտասուք
Թափե կույսն ի սուգ։

Ի դրանց ոսկի արևելքին՝
Թրուչըտալով սյուքեր հեշտին[1])՝
Ծաղկանց, ալյաց, թերթից համբույր
Տալով սահին թողլով համ, բույր.
Ո՜հ, ինչո՞ւ հառաչ
Հանե կուսին լանջ։

Ո՜, կույս, ինչո՞ւ այսպես տըրտում.
Սամույր հոպոպդ արտասվաթուրմ
Դեմքըդ սիրուն ծածկեն, վերցո՛ւր
Ճակատդ, շընչե սեր, լույս ու բույր.
Անկողինդ՝ ծաղկունք,
Աստղեր՝ քեզի շուք։

— Սիրեի ես աստղերն երկնի,
Ալին[2]) ղիս ցույց տար գեղանի,
Վայլեր ծաղիկ ճակտիս անսուտ,
Ջեփյուռն ուներ հեշտ փըսփըսուք.
Մատնելու ըզկուսիկ.
Հրապո՜ւյրք խաբուսիկ։

1870

---

1) Ա Իջնեը զեփյուռ ցողիկ հեշտին։
2) Ալիքը։

Նայվածք Մը

Ամրան տապին ես խոնջած՝
Թավուտքի մը բյուր բյուր կայծ
Տերևներուն շուքն ինկած՝
Ո՜րշափ սիրեմ շունչն հովտաց՝
Մեղմիկ
Հողմիկ։

Արշալույսին կանուխկեկ՝
Ո՜րշափ սիրեմ՝ ոտքս մերկ
Կոխելով մարգ ծաղկաներկ՝
Լըվացվելու գտնել մեկ
Հըստակ
Վըտակ։

Երբ միայնակ ես գամ մանն,
Ո՜րշափ սիրեմ՝ կրակներս մերկ
Ներշընչելու սերս անձայն՝
Հոտոտելու կուսի նըման
Քաղցրիկ
Ծաղիկ։

Երբ հովանի աստղազարդ՝
Ըլլա երկնից գմբեթարդ,
Ո՜րշափ սիրեմ՝ ի սաղարթս[1]),
Երբ կհյուսե երգ ի վարդ
Թրթռակ
Սոխակ։

1) Տերևներէ մեջ։

Բայց զասոնք չեմ փոխեր բնավ
Մեկ նայվածքին հետ անբավ՝
Թե հուշարկե ինձ հեշտյալ[1])
Իր աչերեն վառ ու սյալ[2])
Լուսիկ
Կուսիկ։

1871

---

1) Հեշտանքով։
2) Սև։

ԴՐԺԵԼ

Փունջ մը կընճիռ, բուլլ մը կայծակ[1]),
Դըժոխք մ'անհնձք խոցեց հոգյակս։

Ես ուզեցի պաշտել ըզնե,
Սիրել ժըպիտքն՝ փըթիթք անհուն,
Սիրել աստղերն սև աչերուն,
Եվ այն խոկումն, որ մըթագնե
Պայծառ ճակատն՝ այն ամպն է
Որ կը շպարե դեմքը լուսնույն։

Գիշեր մը սուգ,՝ անդունդ մ'հառաչ
Հուզեց նրա հոգին ու լանջ։

Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,
Մրտիկ ընել թընդյուն սրտին,
Շնչել, խմել ներա հոգին,
Եվ շոշափել լոկ ձյունափայլ
Ծոծրակին վըրա ծալ ծալ
Թափող վարսից ալյակք ծըփին[2])։

Օվկեան մը տըրտունջ լսեցի.
«Ջիս կը նեղես» հըծծեց ինծի։

Ես ուզեցի քընար՝ մ'ըլլալ
Ներա ձեռքին տակ հևացող,
Ներա հոգվույն խորն հիացող

1) Ա. Խումբ մը կընճիռ, բուռ մը կայծակ։
2) Ծոծրակի վրա ծալ ծալ թափվող վարսերի ծփուն ալյակները։

Թեթև պատկեր մ՚ըլլալ շարժյալ,
Մոռնալ զիս, լոկ ըզնե խոկալ,
Կվառե երազ մ՚որուն՝ մեկ շոշ[1]։

Ամպրոպ մը սաստ ցընցեց հոգիս,
Գոչեց.—«Սիրել չե՛ս կրնար զիս»։

Ի զո՞ւր սիրտըս մըխաց առջին՝
Խընկարկելու սիրտն անապատ,
Ցուցի[2]) իրեն ճակատս գունատ,
Կուրծըս գոգած, մատն իմ աչքին[3]),
Ի զո՞ւր շուրթերս դողդոջեցին,
Ջինքը սիրելս հըծծեցին հայտ[4])։

Նե հեռացավ ինձնե, ըսավ.
—«Բա՛վ սիրեցի քեզ, մնաս բարյա՛վ»։

Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներս յիս[5]),
Ճակատագիրս խնծղաց ի վեր.
Խորշ մը կար, որ զիս չը ծաղրեր[6]),
Այն՝ լուռ փոսն էր գերեզմանիս...։

Փունջ մը կընճիռ, բույլ մը կայծակ,
Դժոխք մ՚անեծք խոցեց հոգյակս։
1871

---

1) Որի մի շոշը մի երազ է ասուում։
2) Ցույց տվի։
3) Ա Մարն։
4) Հայտնի կերպով։
5) Իմ մեջ։
6) Ա Կը ծաղրեր։

Զնե Պաշտեմ

Ճառագայթի ու վարդի
Փըթթումներով վհհապանծ
Ես չը սիրեմ սա դեմքը՝
Սիրո ժպտով մը օծած։

Ես չը սիրեմ, երբ կուսի
Մ'աչերը զիս բուրվառեն,
Ջերթ հուր ամպոց զույգ մը հյուսա
Հոնիցը[1]) տակ մնչմորեն։

Գիսաստղի պես հերարձակ՝
Ես չը սիրեմ սա վըճիտ
Կույսն, ոյր դեմքենի[2]) կը փըթթին
Լուսնի դալուկն ու ժըպիտ։

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Երբ կուսի մը հեզանազ,
Որ եդեմ մը կը բուրե,
Վառե երկինք մը երազ։

Ես չը սիրեմ սա կապույտ
Զույգ մ'երկիններն[3]) դինովցած,
Ոյր մեկուն մեջ[4]) պաշտի նա,
Եվ մյուսին մեջ ալ Աստված։

---

1) Ունքերիս
2) Որի դեմքից
3) Այսինքն աչքերը
4) Որոնցից մեկի մեջ

Ես չը սիրեմ սա օտար
Ժըպիտները հուսաշող՝
Որք ծաղիկներ են սուտ սոսկ
Սըրտի անդունդը ծածկող։

Ես կը պաշտեմ զիմ Պ...[1])
Ինձ կը բավե իր սըրտին
Մեկ ճառագայթը միայն
Եվ մեկ վարդն իր ժպտին։

Թեև սև աչքն հեղհեղեն
Անթիվ աստեղց միշտ բույլեր՝
Իր սև հոնից[2]) շուքին տակ՝
Ջորս ութ օր է Նե[3]) գըծեր։

Էուսինը ո՛չ ներա վարան[4]),
Եվ ոչ ալ վարդը ունի.
Ճառագայթումը ներա՝
Ճառագայթո՞ւմ սիրողիւ։

Ես դողդողամ իր վըրա,
Նե իմ վըրա գորովի,
Իսկ թե մոռնա՞ զիս օր մը...
Ա՜հ, այն օրը քա՞ր կըտրի...։

1871

---

1) Ա Պիստոս. (Դուրյանի սիրուհու անունն է. հեղինակը միայն նախատառն է գրել. հրատարակիչները գործածել են Պիստոս. դժբախտաբար հանգիպ չի եղել թե ստույգ է այս լրացումը. հաստատ է միայն այն, որ այդ անունը երկվանկ է, բայց կան և ուրիշ երկվանկ լսական անուններ. խնչ. Պայծառ)

2) Ունքերիւ։

3) Ա նաե

4) Ա վարքնե

Սե՛վ, Սե՛վ

Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եվ թիթեռնի մ՝ ուներ թևեր.
Վերջալուսի նման ամպոց
Երազնե՛ր, հո՛ւր ճակատս վառեր[1]։

Արդ սառույցներ դառն արտոսրի
Կը քարանան կուրծիս ներքև,
Եվ բարդք ամպոց սևաթորմի
Կուզեն խեղդել սիրտս ու արև։

Հազիվ քանի մ՝օրերն կյանքիս
Ոսկեզօծեց իմ բախտը վատ,
Որոնք եղան լոկ Օվասիս
Մեղմող՝ կյանքիս դառն անապատ[2]։

Մենանալի օրեր ցըվերջ.
Երբեմն՝ հովտի, ծաղկանց՝ վ երկնի
Ջյունափրթիթ ամպերուն մեջ
Կյանքիս մըրուրն ես թաւիեի։

Ծըծեի սե՛ր, ծըծեի կյա՛նք,
Մինչ վերջալույսն կը հրահրեր՝
«Մնաս բարովի» սա կարմրորակ
Տըխուր կրակ՝վ երկնի բոցեր[3]։

---

1) Հո՛ւր ճակատս վառում էր վերջալույսի ամպերի նման երազները։

2) Որոնք իմ կյանքի դառն անապատը մեղմացնող օվասիսներ եղան մխայն։

3) Վերջալույսը արևի հրաժեշտի ախուր կրակը և երկնային բոցն է։

Ունեի ես երբեմն առատ
վարդեր, առատ աստղեր նույնպես[1]),
Ճակատագիրս սև տեսավ շա՜տ,
Բրցուց[2]), քաղեց զանոնք սըրտես։

Ունեի ես իմ սիրուհին,
Որո թեպետ աչքն էին սև,
Սակայն սըգալ չը գիտեին...
Հրեշտա՜կ մ՝էր նե, հրեշտակ անթև։

Սև երազ մը օր մը դողդոջ
Մըղեց զիս սև փոսի մ՝առջին,
Ուր քար կըտրած՝ սիրտ ի թնդոջ՝
Դագաղի մ՝աչքս հառած էին։

Ավա՜ղ, ներա վարդքն ու աստղերն
Լուռ՝ պիտի տար կուլ այն սև փոս.
Յուրտ համբույր մը առի ճակտեն.
Ներա վերջին ձոնն էր, ափսո՜ս։

Եվ լըսեցի հայնժամ՝ թի թի,
Սև սև հողեր կոշտ թընդեցին
Տըխուր քողքին վըրա փայտի...[3])
Դըժոխք մ՝անե՜ծք այն սև օրին։

Այն ցուրտ հողերն յիմ դատարկ սիրտ[4])
Ձըցուցին՝ փոսն գոցելնուն հետ,
Եվ այս աշխարհն ալ անժըպիտ
Գոցեցին իմ առջև հավետ...

1) Կաը ժամանակ որ ես էլ ունեի առատ վարդեր, նույնպես և առատ աստղեր։
2) Այսինքն փրցուց, պոկեց։
3) Փայտի տուփը դագաղի կափարիչն է։
4) Իմ դատարկ սրտի մեջ

Կռոն Ծաղիկք Կուսին[1])

Լուսափրթիթ ՚վ անարև[2])
Զույգ մ՚աշխարհներ ես տեսի
Ճառագայթից, բույրերու
Եվ փափկության ու լույսի։

Ո՜հ, չէ նոցա պես անբիծ
Իտալական վեհ երկին,
Եթե չունին աստեղց բույլ,
Ամպ ու կայծակ ալ չունին։

Ո՜հ, հավիտյան միշտ կռոն
Կարծես զույգ մը ծաղիկ են,
Բայց նըման կույս սըրտերու՝
Կարի քաղցըր կը բուրեն։

Ձեռք կարկառել ս՚ աշխարհաց[3])
Ակնախըրտիղ ու անտես՝
Հանդուգն ըլլալ է լոկ քան
Զաշխարհական Արտաշես։

Ի՞նչպես արդյոք կերտեց Նա[4])
Լուսագունդներս այս դողդոջ,

---

1) *Կռոն-ծաղիկ, ավելի հետո «լուսափթիթ և անարև զույգ մ՚աշխարհներ» կամ «լուսագունտեր»՝ ասելով Դուրյանը ակնարկում է կանացի սիրնքներըւ*

2) *Ա Անարատ։*

3) *Այս (կամ սա) աշխարհներին։*

4) *Բնագրում իրրև բացատրություն ավելացրած է «այսինքն աստվածն։*

Նա աշխարհի քան ըզկերտ
Մտածեց ոգի տալն կընոջ։

Կը դողդողան իմ շուրթեր
Հըպիլ սիրո այդ խըռով
Կոկոն-ծաղկանց՝ խամրելու,
Արատելու երկյուղով։

Այլ ո՛ր շուրթըն հանդըգնի
Հըպիլ հրաշից այդ լուսե,
Կերդնում յաշխարհն աստեղաց[1])
Թե նա դար մը կը ծրծե։

1871

---

1) երդվում եմ աստղերի աշխարհի վրա, այսինքն ձերդվում եմ երկինքով։

Ի ԳԵՐԱԶԱՆՑ
ԱՄԵՆԱՍԻՐԵԼՎՈ ՎԱՐԴԱՆ ԼՈՒԹՓՅԱՆԻ

ՀԵՏԵՄՈՒՆՔ

Ո՜հ, երկընքի ժապավէններ՝
Ճառագայթնե՜ր՝ միացուցած
Էին սըրտերը մեր միմյանց՝
Մեր սըրտերը սիրանըվեր։

Նոքա միմյանցս համար քանի՜
Էին անհո՜ւն բաց մաւյաններ,
Հոն ամեն բառ խորք մը ուներ
Իր ներքևը սիրո, ցավի։

Ո՜հ, կը հիշե՞ս, Զամլըճայի[1])
Սարը նըստած լուռ մըխայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սև հովանոցք վըշտահարի։

Ըսթամպոլի կապույտ գոտվույն[2])
Վոսփորի ծուփը դիտեինք,
Ուակից և մերթ զանազան երկինք.
Ո՜, ախորժնե՜ր լուռ մեր հոգվույն։

Այն հյուսկեններըն երկընքին՝
Այն ամպերը ճյունաթորմի՝
Մինչ երեկո, ո՜հ, մի առ մի
Մեր նայվածքը գըրավեին։

---

1) Պոլսի ասիական ափի վրա՝ գեղատեսիլ ծավահայաց մի սար է։
2) Վոսփորի նեղուցը կոչում է Պոլսի կապույտ գոտին։

Չէինք խոսեր, խոսքն մեր հոգվոց
Անհունությունը կը պըղծեր.
Մենք զերթ երկու տըժգույն բոցեր
Իրարու մեջ կայրեինք սոսկ։

Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տըրտում,
Սև ծըծեինք, սո՜ւպ անհատնում,
Նայեինք միշտ երկրես հեռու։

Անհուսությո՜ւն, դերեզմանի
Այդ սև կաթը շատ ըմպեցինք,
Քեզ հափրեցուց[1]) այդ ըմպելիք,
Նզար երկնից տըժգույն որդի։

Քու դալուկըդ զիս ցավցուց շատ,
Եվ նայվածքըդ վերջին նըվաղ՝
Ջոր ուղղեցիր ինծի, ավա՜ղ,
Բևեռեցուց յիս[2]) հիշատակդ։

Երջանի՞կ ես հոդ, թե թըշվառ,
Ձվարթնո թևով լուր մ'ինձ ղըրկե.
Ա՜հ, այս աշխարհս միշտ տաղտուկ է...
Ցավերու մեծ մայր մ'է աշխարհ։

Ո՜հ, եթե հոդ ծառի մը շուք
Կա, և նորա քով մեկ վըտակ,
Եթե կա հոդ սեր անապակ,
Կան աղատ օդ, ազատությո՜ւնք,

Ո՜հ, կը թոթվեմ ես այս աղտոտ
Ջորձն հոգվույս[3]), կյանքս՝ մինչ իսկ այսօր,
Հող կը հագնիմ, հո՜ղ սղավոր...
— Ա՜հ, ուղածներս, վա՛ըդան, կա՜ն հոդ...

1871

---

1) Ա. Աբրեցուց։
2 Իմ մեջ։
3) Հոգու աղտոտ ձորձը (կամ կեղտոտ շորը) մարմինն է։

ՀՄԾՅՈՒՆՔ

Երբոր վարդի փունջը հայեցի
Ծըլան տըժգույն ճակտիդ վերև,
Խոնարհեցիր աչերդ արև,
Քեզ այն օրեն ես սիրեցի։

Թերթեր հուզող սյուքի մը պես
Թըռար՝ սրտիս ծալքերն թոթվել,
Քընարի մը կըրակե թել՝
Քեզ ձըգեցիր դու աղիքես։

Արդ կը փախչիս ինձմե սյուքի
Պես, շուքըդ տաս լոկ քնարիս,
Գիսաստղի պես հեռուն[1]) նազիս՝
Հովին տըված մազերդ ոսկի։

Երբ աստղալույց գիշեր է զով,
Շրջադայիս Պաղլար-Պաշի[2]),
Գիտե՞ս թե սիրտս ո՞րչափ մաշի՝
Շրջազգեստիդ լոկ շրշյունով[3])։

Գա սյուքն ազատ[4]) քեզ այցելու,
Նային քեզի աստղերն ազատ,
Ըսուվերին մեջ մինակ ու զատ՝
Ես կը դողամ քեզ մոտելու։

---

1) A Բաց. (պետք է կարդալ չորս վանկով՝ հե-ռուն-կ՝ա-զիս, հրատարակիչները անհարմար գտնելով այս՝ հետուն բառի տեղ դրել են դրաբար բաց և կարդացել՝ բաց կը նազիս)։

2) Զբոսավայր է Ծուսկյուտար թաղում, A չնշելով այս բառը՝ դրել են «Ո՞ր սիրելի»։

3) A Քո հմայող հայեցվածով։

4) A Զով։

Ո՜հ, Ցող երթա այսքն իր ծաղկոց,
Նային աստեղք Ցող յՕվկեան[1]),
Եվ Ցող մեկ մ'ես ալ դալկանամ
Քու նայվածքիդ մեջ կրակուբոց[2]):

Մահիկն երբոր շառագունած
Իջնե լեռնեն ի հորիզոն,
Ալ կանհետիս, չե՛ս շրջիր հոն՝
Կաղին[3]), հովին, աստղին դիմաց:

Գերեզմանոցին ցուրտ ծառեր[4])
Կը փըսփըսան մեռելոց հետ,
Շրջազգեստիդ շրշյունին դեմ[5])
Ինձ[6]) արձագանք՝ մահահրավեր:

Նըվաղած են լույս ու ժըխոր,
Դադրած շրշյունք կանանց անմռունչ[7]),
Արդ կը թաղվին համբույր, մրմունջ՝
Աստեղազարդ անդունդին խոր[8]):

Շրջազգեստիդ[9]) խշրտունքն հար
Կը փըսփըսա[10]) դեռ ականջիս,
Հեծկըլտալով իջնե հոգիս
Արտոսրալից անդունդ մ'ի վար[11])...:

1871

---

1) Դեպի օվկիանը:
2) Ա Մեջ նայվածքիդ կրակ ու բոց:
3) Լուսավորության գաղե ճրագը:
4) Ա շիրմաց մեջի ցուրտ ցուրտ ծառեր (այսպես են որբագրել՝ խուսափելու համար գերեզմանոցին բառը կիսելու անպատեհությունից, բայց չեն մտածել, որ շիրիմը գերեզմանատուն չէ, այլ գերեզմանի քարը, որի մեջ ծառ չի բուսանում):
5) Ա Սրտիս թևերն իմ դառնագեաւ:
6) Ա Տանն:
7) Ա Դադրած շրշյունք, սրտերս մունջ:
8) Աստեղազարդ անդունդը երկինքն է, որի խորքում թաղվում են համբույրները ու սիրո մրմունջները:
9) Ա Քո քայլերուդ:
10) Ա կմրմնջե:
11) Մի անդունդից ցած:

Զոնիկք

Մինակ էր.
վարդ մ՝ ըզգոն
Մատուցի
Ներա ձոն։

Շիկնեցավ
Նե ըլվարթ՝
Կընդուներ
Երբ իմ վարդ։

Ներա քով
Վարդն ո՛րչափ
Էր անշուք,
Գունաթափ։

Նույնպես ձոնս
Համբույրին՝
Զոր տըվավ,
Չէր բնավ գին։

1871

ՆՎԵՐ ՀԻՇԱՏԱԻԿ
ՍՈՒ Պ. Հ. ՃԱՆՖԵՍՃՅԱՆ

ՀՈՒՇՔ

Սա կապույտ[1]) մայր-օվկեանին,
Ուր փողփողեն ալազք ոսկի,
Մեր երազոց վառարանին
Տղրեն՝ վարդից մեջ աճյունի[2])
Երբ արևը շողշողե,
Դու իմ սերը միշտ հիշե։

Թավուտքե մը կանաչ ու մորչ՝
Որոց շուքը սիրեինք միշտ,
Նստիլ, խոսիլ շրթամբք դողդոջ,
Դրծել անհագ իրարու սիրտ,
Երբ տերև մը խարշափե,
Դու իմ մրմունջքը հիշե։

Առավոտներն գարնանային,
Ո՜հ, հորիզոնն ալ վարդավառ,
Յայց[3]) ելնելուց ծաղկած մարդին,
Ուր կը դըտնես մորչ, չոր մայառ,
Երբ թըռչնիկ մը ճըռվողե,
Դու իմ իղձերը հիշե։

---

1) Ա *Նագար։*

2) *Կապույտ մայր-օվկեանը երկինքն է, որ մեր երազներու վառարանն է. ոսկի ալազներն աստղերն են. վարդերու աճյունը ամպերն են ամբողջը լինում է «երբ արևը շողշողե ամպերի մեջ՝ երկնքի երեսին»*

3) *Այցել, այցելութեան։*

Պաղլարպաշի ելած առեն,
Եվ կամ սարը Չամլըճային,
Սիրուն վայրեր, ուր միշտ արդեն
Ճեմել հոգիք մեր սիրեին,
Երբոր զեփյուռ մը փըչե,
Դու իմ հոգին միշտ հիշե։

Եվ առօրյա աշխատանքե
Վաստակաբեկ վերադարձիդ,
Եվ կամ սիրո արշավանքե,
Դարձած առեն տրուի ի սիրտ,
Երբ հորիզոնն հրդեհե,
Դու իմ կրակները հիշե։

Ամրան գիշեր մը երբ գոնես
Աստղերն առատ գլխուդ վրրա,
Եվ լուսինը լապտեր ընես՝
Դողդոջ քայլից դեպ ի Մոտա,
Երբ շրջազգեստ մը շրշե,
Իմ մաշած սիրտը հիշե։

Տըրտում նստած դու պատուհան,
Հառած երկնից այն սև երես,
Սև մտածմանց լոկ վառարան՝
Տըժգույն ճակատդ և աչերդ վես,
Տըխուր կոչնակ մ'երբ հնչե,
Մտերմիդ մա՞հը հիշե։

1871

ՏՐՏՈՒՆՋՔ

Է՜, մընաք բարով, Աստված և արև,
Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև...
Աստղ մ'ալ ես կերթամ հավելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթե ոչ անբիծ
Եվ թըշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որք թըռին այրել Ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծույն՝ շանթերու արմատ՝
Հավելուն զենքերն ու զարդերն հըրատ...
Այլ, ո՜հ, ի՞նչ կըսեմ... շանթահարե՛ զիս,
Աստվա՛ծ, խոկն հակա փշրե հյուլեիս՝
Որ ժպրհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխքն անալի....
Ողջո՜ւյն քեզ, Աստվա՛ծ դողդոջ էակին,
Շողին, փըթիթին, ալվույն ու վանկին[1]),
Դու որ Ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խըլեցիր Թրթռումս շրթանց, թռիչն հոգվույս,
Ամպ տըվիր աչացս, հևք[2]) տըվիր սըրտիս,
Ըսիր մահվան դուռն ինձ պիտի ժըպտիս,
Անշուշտ ինձ կյանք մը պահած ես ետքի,
Կյանք մ'անհուն շողի, բույրի, աղոթքի.
Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մեջ համր անշշունջ,
Այժմեն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պըլլվիմ անվանդ, մըռընչեմ անդադար,
Թո՛ղ անեծք մ'ըլլամ ու կողդդ խըրիմ,

---

1) Ողջո՜ւյն քեզ, ո՜վ դողդոջ էակի (մարդու), շողի (լույսի), փթիթիկ (ծաղիկներուն), ալիքի (ծովերուն) և վանկի (երգի) Աստվածո.

2) A Թևք։

Թող հորջորջեմ քեզ. «Աստվա՛ծ ոխերիմ»։
Ո՜հ, կը դողդոջե՞մ, ժժգույն եմ, ժժգույն,
Փըրփըրի ներսըս դըժոխքի մ'հանգույն...։
Հառաչ մ'եմ հեծող նոճերու մեջ սև,
Թափելու մոտ չոր աշնան մեկ տերև...։
Ո՜հ, կայծ տըվեք ինձ, կա՛յծ տըվեք, ապրի՛մ...
Ի՜նչ, երազն վերջ գըրկել ցուրտ շիրի՞մ...
Այս ճակատագիրն ի՜նչ սև է, Աստվա՛ծ,
Արդյոք դամբանի մրուրո՞վ է գըծված...
Ո՜հ, տըվե՛ք հոգվույս կրակի մի կաթիլ,
Սիրե՞լ կուզեմ դեռ 'վ ապրիլ ու ապրի՛լ.
Երկնքի աստղե՜ր, հոգվույս մեջ ընկե՛ք,
Կա՛յծ տըվեք, կյանք՝ ձեր սիրահարին հեք։
Գարունն ո՛չ մեկ վարդ ճակտիս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չե՛ն տար.
Գիշերն միշտ դագաղս, աստղերը ջահեր,
Լուսինն հար[1]) կուլա, խուզարկե վըհեր.
Կըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար նա դըրավ այդ լուսին.
Եվ մահամերձն ալ կուզե երկու բան.
Նախ կյա՜նքը, վերջը լացող մ'իր վրան։
Ի ո՞ւր գրեցին աստղերն ինձի սե՜ր,
Եվ ի ո՞ւր ուսույց բուլբուլն ինձ սիրել,
Ի ո՞ւր սյուքեր սեր ինձ ներշնչեցին,
Եվ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի ո՞ւր թավուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերևք չառին երբեք շունչ,
Որ չը խոովեն երազըս վսեմ,
Թույլ տըվին որ միշտ ըզնե երազեմ,
Եվ ի ո՞ւր ծաղկունք՝ փըթիթներ գարնան,
Միշտ խնկարկեցին խոկմանցըս խորան...
Ո՜հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Աստուծո ծաղրն է աշխարհ ալ արդեն...
1871

---

1) Միշտ։

ՁՂՋՈՒՄ

(Օր մը վերջը)

Երեկ երբ պաղ քրտնաց մեջ
Սև[1]) մըրափ մը կառնեի,
Եվ թոշնած զույգ մը վարդեր[2])
Այտերուս վրրա կայրեին[3]),
Անշուշտ ճակտիս վրա մահու[4])
Դալկություն մը կը պըլպլար,
Եվ մահու թռիչք մ'ունեի[5]),
Լսեցի մորս հեծեծում...[6])
Բացի աչերըս խոնջած,
Մորըս արտոսրըն տեսի՜...
Ո՜հ ճշմարիտ գորով[7])
Մարգարիտներ լույծ ու կեղծ...[8])
Մայրըս անհուն ցավ մ'ուներ,
Այն սև ցավը ե՛ս էի...
Ա՜հ, գլուխըս փոթորկեց,
Այս սև հեղեղն դուրս տըվի.
Ո՜հ, ներե ինձ, Աստվա՜ծ իմ,
Մորըս արտոսրը տեսի...:
1871

---

1) A ցուրտ
2) A զույգ մը վարդից և ջ.
3) A կայրեին
4) A վերա ճակտիս իմ մահու
5) A վերա հոգվույս սիր ունեի
6) A անկամ չունէի մորս որ կուլար
7) A համբույրն յերեսս հանգչաց
8) A սուրբ հիշատակ մի վերջի

Իմ Մաշը

Եթե ժժգույն մահու հրեշտակ
Անհոմն ժպտով մ'իջնէ իմ դէմ,
Շոգիանան ցավքս ու հոգիս,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե սընարըս իմ տիպար[1])
Մոմ մը վըտիտ ու մահադեմ,
Ո՜հ, նըշուլէ ցուրտ ճառագայթ,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե ճակտովս արտասրազօծ
Ջիս պանտանքի մեջ ցուրտ զերդ վեմ
Փաթթեն, դընեն սև դագաղը,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե հընչէ տխուր կոչնակ,
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնե իր համր[2]) քայլ,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե մարդիկն այն մահերգակ,
Որք սև ունին ու խոժոռ դեմ,
Համասըփռեն խունկ ու աղոթք,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

---

1) Ինձ նման։
2) Դանդաղ։

Եթե հարդարեն իմ հողակույտ,
Նվ հեծեծմամբ ու սրգալեն
Իմ սիրելիքը բաժնըվին,
Գիտցե՛ք որ մի՞շտ կենդանի եմ։

Իսկ աննշան եթե մնա
Երկրի մեկ խորշն հողակույտն իմ,
Նվ հիշատակս ալ թառամի,
Ա՜հ, այնատեն ես կը մեռնիմ։

1871

Ի՞ՆՉ ԿԸՍԵՆ

Ինծի կըսեն.—«Ինչո՞ւ լուռ ես».—
«Ո՜հ, միթե բառ կամ խոսք ունի՞
Արշալույսը, որ կը բռնկի,
Զի անհոմն է այն ալ ինձ պես»։

Ինծի կըսեն.—«Միշտ տխուր ես».—
Ի՞նչպես չըլլամ, մեկիկ մեկիկ
Թոթափեցան գլխուս աստղիկք...
Արշալույս մը չանցավ սըրտես։

Ինծի կըսեն.—«Կրակոտ չես,
Լըճակի մը պես ես մեռած,
Դալկահար՝ դեմքդ ու հայեցվածք»։—
«Ո՜հ, հատակն են իմ փրփուրներ»։

Ես ինձ կըսեմ.—«Ժամդ է հասեր,
Քու երկրորդ սև մորդ գընա՛ գոգ,
Գերեզմա՛ն, հոն գտնես դու գոգ,
Վարդեր, թրթռում, թռիչ ու աստղեր...»

1871

Իմ հանգիստը

Երբ մութի հողակույտիս,
Թուխ մոխրագույն վիշ աչեր ներա,
Թե ջուխտ մարգրիտ թափեն իմ վրա,
Ջը ցավագնիր ոսկերոտիս։

Ա՛յս իմ հանգիստ՝
Իմ լրանիստ,
Ա՛յս օթևան
Խաղաղության։

1871

Իմ ցավը

Սուրբ տեսիլներով լոկ ծարաված՝
Ցամաք գըտնել աղբերքն համայր,
Ցամքիլ ծաղիկ հասակի մեջ.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար։

Ջերմ համբույրով մը դեռ չայրած՝
Սա ցուրտ ճակատըս դալկահար՝
Հանգչեցունել հողե բարձին.
Ո՜հ, չէ այնչափ ցավ ինձ համար։

Դեռ չը գըրկած էակ փունջ մը
Ժըպտե, գեղե, հուրե շաղյալ,
Գըրկել սա ցուրտ հողակույտը.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար։

Քաղցր երազով մ'հըղի մըրափ մը
Ջանդորրած գլուխս մըրկահար,
Ննջել հողե վերմակի տակ.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար։

Հագնիլ հյուղին մուր—անունը,
Ծծել նորա մրուր-օդն հար[1]),
Միշտ ցավիլը միանգամայն.
Ո՜հ, չէ այնչափ ցավ ինձ համար։

Հեք մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թշվառ.
Ջօգնած անոր մեռնի՜լ աննշան.
Ո՜հ, ա՛յս է սոսկ ցավ ինձ համար։

1871

1) Միշտ։

***

Աշնան տըժգույն գիշեր մըն էր ձմրահուպ,
Կը ցոլային երկինքն աստղեր բյուր՝ ասուպ,
Ջոր թերթերուն խորերն լուսինն իր բեկ բեկ,
Շաղն կը ցողեր՝ ամրան վարսիցն ադերեկ.
Շամբին մեջ թարմ կը թավալեր վըտակը,
Փաղփուն աստղեր կը շողային հատակը,
Ու անոր ալյացն հեշտիկ մրմունջը միայն
Սիրտ քնարին վերջին լարին էր ողբ՝ ձայն...
Սյուքը կսուլեր տերևներուն մեջ թեթև,
Դեմքիս վըրա կը սահեցներ շղարշն թև,
Նա իր շնչովն զիս դոհ ընել կը կարծեր,
Բայց կարծարծեր սրտիս սիրույն վառ կայծեր
Ոգի մ'անցավ սըրտես չթողուց հոն ըստվերն՝
Հիշատակ մը... միայն դիտեն այս աստղերն...
Համբուրից տխուր հիշատակ մ'էր սյուքին շունչն
Իր դողդոջ ձայն տերևներուն այս շշունչն.
Անուշ ժըպիտն ու վեհ նայվածքն այս ալին,
Մետաքս վարսերն սև հողին տակ կը հալին...
Տըժգույն ճակտին տըխուր պատկերն այս լուսին
Ո՜հ, կյանք պետք է տալ՝ սիրտ տրուիլ թե կուսին...
Կը սիրե նա նայվածքիդ մեջ կը թոշնի...
Ոխի մեջ՝ քար, սիրտ մեջ՝ վարդ սիրտ մ'ունի...
Անուշ աչեր՝ ժըպիտ՝ արցունք՝ տեսա լոկ,
Կուրծըս վարսեր լանջ մը զգաց սիրատրուփ.
Սիրտ մրմունջ՝ հառաչ լսեցի բեկբեկ խոսք,
Դողդոջ ու գիրգ պաղ ձեռք մ'ըզգաց ձեռքըս սոսկ,
Թևերուս մեջ լույս մը՝ հով մը մարեցավ...
Էակ չէր նա, այլ սեր՝ հուր՝ շունչ՝ ժըպիտ՝ ցավ...
Ըստվեր մ'էր նա՝ որ սահեցավ զերթ թախիծ,

Բայց կանգ առավ՝ փոս մը՝ քար մը՝ ցըցուց ինձ՝
Հիշատակ մը՝ գերեզման մը՝ սուրբ սափոր...
Ուր կը հածի հեկեկով սիրաս ցողաթոր...:
Սրանի թե ըլլամ ես շիթ մ'արտասուք՝
Ու անհետանամ դամբանիդ քով սիրասուգ,
Սվ կամ թե խոտ մ'ըլլամ ու հոն ես ցամքիմ...
Ո՜հ, կյանք պետք է տալ՝ սիրտ տըրուի թե կուսին.
Դարեր անցնին շուքըդ պիտի չը մեռնի,
Արցունքներով կյանքըս պիտի ուշ թոռմի,
Շիրմիդ վարդերն դեռ չը թոշնած գըրկեմ քեզ,
«Կյանք կուտաս սիրտ թե տաս» ըսին եւևես...

***

Ահա սրանա օրն երջանիկ՝
Ի հիշատակ ոսկեղենիկ,
Յորում լըցան հեք հոգվույս իղձք,
Ետուն տեղի սրտես թախիծք,
Թարմացան հույլ վարդք ոսկեփունջ
Կենացս պատյաց բուրում զիմ շուրջ,
Եվ կարե ոչ սրտիկն իմ վառ՝
Գոլ գոհ, հադիլ լոկ ի կիթառ,
Ջհոգիդ ըզ սիրտ և ըզ բարիս,
Դու որ յարտոսր զհիքոք փարիս,
Փրկչին մերո արձան տիպար՝
Փույթ թշվառաց ի մխիթար,
Դու որ սիրես զդամբանոք վարդ,
Տաս ցույց զերկին յակնարկ զըվարթ,
Երգես սոխակ ի դիշերի,
Ո ի գեղգեղդ սոսկումըն ցրեմ
Գերեզմանաց խոլ արհավիրք,
Պարզես զբարյաց զհավերժ երկինք,
Քև, քև շնչեմ ես յայս աշխարհ,
Եվ քույդ ի շունչ մխիթարար
Սիրելյացս խոր փակեցան խոսք,
Աստեղք յերև գան լուսահոսք,
Ցորչափ են թիվ՝ կյաց առ հապա
Աստեղաց վառ՝ ցորչափ նոքա,
Ով ի յալիսըդ ձյունափառ
Ըսփոփես զհեքս հոգեբարբառ,
Ով ի դամբանս եկ առ ի գութ՝
Ըզփըրկության մնչել զաղոթ։

Մնաս Բարեվ[1])

Առտու մը դեռ մթնշաղ՝
Կը ծավալեր շող ու շաղ,
Ծաղկանց մեջ քեզ տեսա ես,
Կը ժըպտեիր լուսնո պես։

Աչերդ սիրո Աստուշան,
Մատներդ էին գիրգ շուշան,
Այտերդ վարդի նոր թերթեր,
Նայվածքեդ ծներ նոր եթեր։

Սիրտըս թըռավ ոտքիդ տակ,
Սիրեցի քեզ, իմս հրեշտակ...
Սիրով եղան ձյուն մազեր,
Ըսին՝ կյանքը երազ էր։

Մինչդեռ դու չես սիրեր զիս,
Մ'իշխեր գոնե տկար սրտիս.
Ուր որ երթամ դեմդդ ինձ հետ՝
Նայվածք չէ այդ... մահո՜ւ նետ։

Երբ անտառի խորն նըսեմ
Կերթամ լալ՝ լուռ մենաճեմ,
Դարձյալ հոն կը գտնես զիս,
Տերևներեն կը խոսիս։

Երբ առավոտն եղերքը՝
Նըստիմ սփոփել իմ վերքը՝
Դարձյալ դու կը գտնես զիս,
Ալյաց մեջեն կը ժպտիս։

---

1) Սույն ոտանավորն ես սրբագրած է քերթողն հետո, և փոխված է վերնագիրն, որ է «Սիրեցի քեզ»։ (Տես էջ 27).

Երբ լեռները կը փախչիմ,
Որ չը տեսնեմ քեզ՝ հանդչիմ,
Հողմուկն մեջեն կը խոսիս,
Թե՝ դու բնավ չես սիրեր զիս։

Լուսնի լույսով գիշերը
Երբ ցողեն իմ աչերը,
Դարձյալ դու կը գտնես զիս,
Աստղերուն մեջ կը ժըպտիս։

Իսկ գերեզման երբ մտնեմ,
Քեզ հոն պիտի չը գտնեմ...
Մնաս բարյա՜վ... հայուհիս,
Անգո՜ւթ, արցունք մ'ալ չունիս։

***

Փոխանակ քաղցր օրորներու...
Օրորոցիս քով մայրիկս զքեզ միշտ ողբաց
Երբ համբուրեց զիս՝ յուր այտերն էին թաց,
Թշվառ մ'էի, աչերս արցունք նախ տեսան.
Սիրուն գրկեդ հեռու աչերս ես բացի
Այլ բնազդմամբ ես քեզ համար նախ լացի, իմ անուշ
Նոճեազարդ տխուր դամբան այդ անհուշ՝

. . . . . .
. . . . . .

1868

Կը Սիրեմ Զքեզ[1])

Ո՜հ, ո՞վ ես դու, սե՛ր, երկնային շո՞ւնչ կամ հո՞ւր,
Քու սև անո՜ւշ աչերդ չունի դիշեր,
Վարդը չունի քու լանջդ անբիծ ճյունաթույր,
Լուսին չունի քու վարդադույն այտերը։

Ցայգն՝ աստղերուն փաղփուն՝ լուսնույն սիրադեմ,
Ցերեկն ալյաց, ծաղկանց ժըպտիս, մեկուն... գեթ,
Իսկ քեզ համար ես արցունքով կաղօթեմ,
Դու չես շնորհեր նայվածք մ'ինձ սև աչերդ։

Արդյոք է՞կ մ'ես թե երկնից զվարթուն.
Կը նախանձին գեղույդ վրա վարդ, լուսնակ,
Ջայնիկդ ապշած լսելով քաղցր ու թրթռուն՝
Նոճյաց խորերն կը սգա լռին լուսինյակ։

Այլ ի՞նչ քաղցր է երբ ըլլամ ես ղեփյուռ,
Եվ գըգվելով մազերդ խարտյաշ ու անոսր,
Տամ շունչս հուշիկ այտերուդ վրա վարդասփյուռ,
Սըրբեմ երբ կա աչքերուդ մեջ արտոսր։

Պարտեզիդ մեջ իցիվ թե վարդ մը ըլլամ ես,
Եվ երբ դու գաս առավոտուն ժըպտով պերճ,
Որ քու այտերդ կարմիր դունովըս ներկես,
Թոռմիմ... փափկիկ ձեռքիդ մեջ տամ կյանքիս վերջ։

---

[1]) Սույն ոտանավորը սրբագրած է նույն ինք Պետրոս Դուրյան. սրբագրված օրինակ, տես էջ 24, Իցիվ բե։

Երանի՜ քե վրտակ մ'ըլլամ ես վրճիտ,
Եվ երբ հուշիկ նըստած մոտ իմ եզերքին՝
Պատկերանա հայելույս մեջ քու ժըպիտ,
Պըղտորելով կապույտ ալիքըս ցամքին։

Այլ ոչ, անգո՛ւթ, եթե ունիս սիրահար,
Իցի՜վ քե անոր գերեզմանին վեմն ըլլամ,
Եվ հոն թափած դառն արցունքներդ ծըծեմ հար,
Ըզգամ դեմքդ... այլ ոչ, թեպետ վեմն, այլ կուլամ։

Ո՜հ, դու սիրե, գըգվե, ժպտե հայ աղջիկ,
Քեզի համար պիտի մեռնիմ, թող պլպլուն
Արցունք մ'հեղու դագաղիս վրա սև աշիկդ,
Տըխուր շիրմիս վերև երգե թող պլպուլն։

ՀԱՅՈՒՀԻՆ

Աշնան մեջ էր, երեկո մը
Վերադարձիս յուսկյուտար,
Օդը պարզ էր, հողմը մեղմիկ,
Ծովուն ջուրերն ալ հանդարտիկ։

Շոգենավին սարավանդը
Նըստած անկյուն մ'առանձնակի՝
Ուշադրութեամբ ես նույն օրվան
Լըրագիրները կարդայի։

Մեկ մ'ալ հանկարծ սանդուխեն
Վեր ելնելու ոտնաձայն մը
Շըփոթեց զիս և աչերս
Դարձուցի դեպ յայն կողմը։

Հայուհի մ'էր վեր ելնողն,
Բարձրահասակ և գեղադեմ
Անցավ մոտես նա սիգաճեմ,
Նստավ անկյուն մ'ինձ դեմ առ դեմ։

Ո՜հ, կարծես թե նա երկնային
Զըվարթուն մ'էր վար իջած՝
Լույս սփռելու, սեր բուրելու,
Խըռովելու սրտերն այրած։

Այլ չըգիտեմ թե ինչո՞ւ
Կրկին աչերըս հառած՝
Իմ թերթիկիս վըրա միշտ՝
Սիրտս էր ամբողջ խըռոված։

Մինչև մեկ մ'ալ նավաստին
Խոպոտ ձայնով մը գալով մոտ
Ըսավ. Հասանք յՅուսկուտար,
Ալ ի՞նչ նստեր ես դու հոդ։

Վեր վերցուցի աչերըս,
Ոչ ոք տեսի մեջ նավին.
Մինակ էինք երկուքնիս,
Մեկ մ'ես, մեկ մ'ալ... նավաստին։

Ա

Երեկոյան բալն կը սողար բարդիլ խավ,
Այն լուսաղարդ անդունդն հյուսել լուռ ու սյավ,
Տըխուր ըստվեր՝ զոր կը ձըգեր իր եռև
Լուսափթիթ օրն սիրայնոց կարճատև։
Կը նշմարվեր հազիվ երկնի կապուտակ
Գմբեթին խոր փալփլող՝ վ ալվուչն ջինջ հատակ
Անդրադարձող՝ գիշերվան լույսն անդրանիկ,
Զոր գրկեցին շուտ վոսփորյան խոնջ ալիք։
Մարը մտնող արփվույն մարեր հուսկ շառայլ
Սառնամանուտ բլրոց վըրա քայլ առ քայլ,
Ինչպես հյուծյալ կույսի մ՝ակնարկ առ դամբան՝
Ուր պարեն ցուրտ ծիծաղք սիրո դառնության,
Ինչպես և իմ դյությալ ակնարկս առ արոտ՝
Զոր մըթագնեց մառախուղ մի նախանձոտ,
Վ ալ չկըրցի ընդնշմարել էակն ան՝
Զոր գըգվեին ճաճանչ, զեփյուռ իրիկվան,
Հողմածածան իր շրջազգեստն ու հոպոպք,
Դեղձան վարսից գիրգ ուլան շուրջ ոսկի ծոպք.
Կարծես ծաղիկ մ՝էր երազի հիասքանչ,
Կը կոխկռտեր այն ծաղկալից մարգաց լանջ.
Թողեք կոխել զի կը փթըթի ավելի,
Երբոր հովիկըն այտեն գույն գեղանի
Եվ իր անբիծ լանջեն առած քիչ մը հոտ՝
Տանի սիրե անապատներն ավաղոտ՝
Վ ահա փթթեն ծաղիկներ բյուր առավել.
Անոր համար ի՞նչ է ծաղիկը ծաղկել,
Մինչդեռ սիրո կես դիակներ կը հառնեն՝
Երբ սև աչքեն սլաք մ՝ուղղե բոցեղեն։

Լուսինն արդեն կը փողարկեր՝ պճներ զինք
Նուրբ ամպիկով՝ ուսկից ուսան Բրքուհիք
Ծածկել իրենց դեմքն հաջաղով նրբաթել,
Անոր նման տժգույն ըլլալ ու դյութել։
Լուսի՛ն, գըտի՛ր լույս ցողելու ցածուն հյուղ,
Ուր գեթ ցամքած է կանթեղին առկայծ յուղ,
Մի՛, մի՛ սորվիր գաղջ արևին ձըմեռվան՝
Մոռնալ հյուղն, ուր ամայի է վառարանն,
Եվ լոկ սրտերն հոն կը մըխան հուսահա՜տ...
Ծագե՛ հյուղին այն՝ բանաստեղծն ուր աղքատ
Ինք լույս, կրակ, ո՛չ մեկն ունի գըրելու.
Սարն իր աստեղց թո՛ղ՝ դղյակն ալ ջահերու,
Գընա՛ ցողել լույս տնակին այն ցածուկ՝
Ուր մայր մը գիրկն առած կայտառ մի մանուկ՝
Ցույց տալ կուզե քեզ Աստուծո զերթ պատկեր,
Դու, որ միայն սիրահարաց ես լապտեր։

Տերևներուն մեջեն արծաթ լի լուսինն
Կը դիտեի, ինչպես որ դեմքն հարս կուսին,
Երբ կը ծածկե քողքն հիմենյան ոսկեթել.
Բայց սա վարդի փոխան գիտե լույս փթթել։
Ալ աստղն աղոտ և կարծես թե ավելի
Երկնքի լուրջ խորը սուզած կը փալփլի,
Եվ վերջալույսն ալ կը մարի, որ դեռ հոն
Հրդեհի պես բոցավառեր զհորիզոն։
Եվ դուք, կրա՞կք սիրո, մարիք շուտ և դուք,
Տեվեք՝ ինչպես վերջալույսն այս բոցաշուք...։
Արդյոք արևն այսօր ո՛րքան սիրաբույր
Կուսից լույս դեմքն այրեց՝ ուսկից մեղմ համբույր
Քաղել դողաս, կը վախնաս թե կը թոշնի
Իր այտերուն վառ վառ վարդեր գեղանի։
Թավուտք այսօր շուքերնուն մեջ առանձին՝
Խորհրդավոր ի՛նչ փսփրսուք լըսեցին,
Ի՜նչ խոստումներ, ի՜նչ մրմունջներ սրտմաշուք,
Իսկ դուք, մացա՛ռք հովանոցակք, ա՜հ, իսկ դուք,
Ո՞վ հովանիք, թավուտք, խորշեր անմարդի՝

Ուր դայլայլիկ թռչնոց, խոշյուն սաղարթի.
Եվ երբ լռսվի շրջագեստի մը շրշյուն,
Զոր տերևոց վըրա սփռե մերկ աշուն,
Երբ շուքին տակ կուլա մ՝ առանձին ընե ման,
Ես տերևոց հետ դողամ անոնց նման,
Որ չըլլա թե դիպիմ աչքին բոցերեն,
(Պե՞տք է դողա մինչև տերևն արևեն)։
Երբ ծիծառնուկն ինձ հետ հեծե աղեկեզ,
Ո՜րչափ ատեմ քաղքին ժըխորն, սիրեմ Զեզ։

Հիվանդութեանս պատճառով ընդհատված)

ԴՐԱՄԱ

Անկումն Արշակունի Հարստութեան

Թատերգություն երգախառն ի վեց արարս, յերիս պատկերս և ի մի վերջաբան.

ԿՆՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐ
(Թապլո Վիվան)

Ա Ն Ջ Ի Ն Ք

ԱՐՏԱՇԻՐ, արքա հայոց
ՎՌԱՄ, արքա պարսից
ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ, հայրապետ
ՀՐԱՉՅԱ, արքայորդի
ՀԵՐԱՆՈՒՇ, թագուհի հայոց
ՋԱՐՄՈՒՀԻ, մայր թագուհի
ՓԱՌՆԵՐՍԵՀ, իշխան Սյունյաց
ՎԱՉԵ, իշխան Արծրունյաց
ՀՄԱՅԱԿ, իշխան Աշոտա
ՍՄԲԱՏ, մեծիմ Արտաշրի
ՇԱՎԱՐՇ, մանկլավիկ թագուհվույն
ՍՈՒՐԵՆ ՊԱՀԼԱՎ, հազարապետ պարսից
ՍՊԱՆԴԱՐԱՏ, զորագլուխ թիկնապահացն Արտաշրի
ՍՈՒՐՄԱԿ, երեց
ԲԱԲԵԼ, ծեր զինվոր
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ, դուստր Բաբելի
ԲԱՆՏԱՊԵՏ ՄԸ

Ս. Ր Ս. Ր Վ. Ս. Ծ Ը.

Հին տնակ մը.— խորը դուռ մը, ուսկից դաշտ մը կերևի. մեկ կողմը խաչելության պատկեր մը. ցիրուցան և հին կարասիք. պատեն կախված զրահ և զենքեր.—վարագույրը բացված ատեն Շահանդուխտ պատկերին առջև կաղոթե:

Տեսիլ Ա.

ԲԱԲԵԼ և ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ԲԱԲԵԼ.— Աղոթե, աղոթե, աղջիկս... տխուր հիշատակներ նկարված են այդ սիրուն դեմքին վրա... սակայն իր կողքեն հոսող արյան կայլակներն սպեղանի են սրտի խոցերուն:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ետ գիրկը գալով) Ճշմարիտ է, հայր իմ... այս պատկերը միշտ մորս դադաղը կհիշեցնեն ինծի, այս խաչին շուքը՝ իր գերեզմանը և այս տխրանուշ դեմքը՝ իր սերն ու բարի սիրտը... այս փուշ պսակն ալ իմ խանձարուրս կնմանի, ուր մայրս զիս երկնեց:

ԲԱԲԵԼ.— Ի՞նչ... թշվա՞ռ ես, աղջիկս... բայց դուն կուլաս... ի՞նչ ունիս:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ոչինչ... հայր իմ, այն աղջիկը որ մայր չունի կուլա միշտ, ինչվան որ մայր...

ԲԱԲԵԼ.— Չեմ հասկնար միտքդ, աղջիկս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ըսել կուզեմ թե, հայր իմ, մայրս չմեռներ:

ԲԱԲԵԼ.— Բայց մեռավ... եթե առջի երիտասարդ դինվորն ալ ըլլայի, դարձյալ չէի կրնար ջնջել իմ սրտիս այն աստվածային դատակնիքը:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն որբ աղջիկը չի լա՞... հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Ճշմարիտ է, աղջիկս... ալևոր հոր մը գիրկն ունիս միայն, այն ալ գերեզմանի քարի մը պես պաղ է արդեն...

հայրդ իր մեկ ոտքը գերեզմանին ևս սեմին վրա դրած՝ ո՛չ վշտեն անցնիլ կուզե և ո՛չ ալ աղջիկեն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Բայց, հայր իմ...*

ԲԱԲԵԼ.— *Աղջիկս... դուն գաղտնիք մ՚ունիս, որ ինձնե կծածկես... ժամանակ մը ի վեր է, որ միայնությունը և մթությունը հորդ շուքեն ավելի կսիրես, և հորդ համբույրեն ավելի հառաչանքեդ կախորժիս... միշտ ձեռքդ ձեռքիս մեջ դողդոջ, ճակատդ դալկահար, սիրտդ միշտ բեկբեկ... դուն առաջները վարդե ավելի զվարթ էիր, թիթեռնիկե ավելի աշխույժ և շունչե ավելի թեթև, իսկ հիմա մանիշակի պես կորագլուխ, ձմեռվան աստղի պես տխուր, շուքի պես փախուստիկ կտեսնեմ զքեզ... աղջիկս, բա՛ց սիրտդ, ինչպես կբանա վարդն իր թերթերը առտվան գուրգուրացող ցողին... խոսե՛... ի՞նչ ունիս։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Զքեզ, հայր իմ։*

ԲԱԲԵԼ.— *Բայց սրտիդ մեջ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Զքեզ, հայր իմ,*

ԲԱԲԵԼ.— *Աղջիկս* (կգրկե)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Միշտ զքեզ, հայր իմ։*

ԲԱԲԵԼ.— *Շահանդուխտ, կխաբես զիս։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Տե՛ս, երկինքը ինչպես գեղեցիկ է, հայր իմ։*

ԲԱԲԵԼ.— *Դուն երկինքեն ավելի գեղեցիկ ես։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Բայց դու զիս կծաղրես, հայր իմ... ես գեղեցի՞կ... երբ անցյալ օր խաչելության պատկերը զարդարելու համար ծաղիկ կժողովեի առվակին քով, ինքզինքս անդրադարձած տեսա անոր մեջ, հիշատակ մը սիրտս շարժեց, արցունք մը կաթեց հոն աչքես և կաթիլ մը կրցավ պատկերս խանգարել. ա՜հ, որչափ վշտացա, հայր իմ, երբ կարծեցի թե ալ չպիտի սիրվեի։*

ԲԱԲԵԼ.— *Ուակի՞ց, Շահանդուխտ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Քեզնե, հայր իմ... վասն զի դու գեղեցիկը շատ կսիրես։*

ԲԱԲԵԼ.— *Գեղեցիկեն ավելի բարին։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Ճշմարիտ է, հայր իմ... եթե իմ առջիս խաչ մը և թագ մը դնեն, ուրախությամբ խաչը կգրկեմ... եթե պատան մը և ծիրանի մը դնեն, պատանը կընդունիմ,*

կսիրեմ ա՛յն՝ որ արցունք և տխուր է, կսիրեմ ա՛յն՝ որ երկինք կտանի... կսիրեմ այն՝ որ գեղեցիկ ու բարի է հրեշտակի նման, ճաճանչի նման, շուքի նման, շունչի նման. կսիրեմ այդ ալևոր մազերդ, որ գեղեցիկ և բարի են... վերջապես կսիրեմ զքեզ, հայր, վասն զի դերեզմանես ես։

ԲԱԲԵԼ.— *Ի՞նչ կըսես, Շահանդուխտ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Այո՛, հայր իմ, չեմ սխալիր. դու իմ դերեզմանես ես։*

ԲԱԲԵԼ.— *Բայց չեմ հասկնար, աղջիկս։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Այդ սպիտակ վարսերը ամպերու նման կենացդ հորիզոնը կծածկեն, զիս մինակ կուզես թողուլ... (մեկուսի) բայց Հրաչյա՜ն...*

ԲԱԲԵԼ.— *Աղջիկս, կմոռնա՞ս մորդ այս պահապան հիշատակը... բայց դարձյալ ես չի պիտի մեռնիմ... մորթ, ոսկր և շունչ պիտի ըլլամ...պիտի լամ, պիտի զարնեմ, պիտի հեծեմ, պիտի անիծեմ... պիտի պաշտպանեմ աղջիկս ինչվան...*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Մա՜հս, հայր իմ։*

ԲԱԲԵԼ.— *Ո՛չ... սակայն դու հանդարտ եղիր, աղջիկս... մնաս բարով։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Ո՞ւր կերթաս, հայր իմ։*

ԲԱԲԵԼ.— *Քեզի ըսի արդեն որ ղինվորական թոշակս առնելու պիտի երթամ... մի՛ վախնար, եթե մինակ ըլլաս։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Քաջասիրտ ղինվորի մը աղջիկը կվայլե՞ վախնալ, հայր իմ։*

ԲԱԲԵԼ.— *Հիրավի այնպես է, աղջիկս։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Ե՞րբ պիտի դառնաս, հայր իմ։*

ԲԱԲԵԼ.— *Արևը մտնելու առեն դուքս... մնաս բարով։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Երթաս բարով, հայր իմ, (կմեկնի)։*

Տեսիլ Բ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ (առանձին)

Գնա՛, հայր... այլ մի՛ դատապարտեր աղջիկդ... ի՞նչ ընեմ, բնությունը սիրտ մը տվավ սիրելու համար, մի՞թե չը՞ սիրվիր երկինքը, չը՞ սիրվիր այն՝ որ հուր աչեր, բարի

սիրտ, գութ, գորով և անմեղություն ունի... երանի թե բոլոր օրերը դիշեր ըլլային և ես երկնքի փալփլուն աստղերուն հետ միշտ լայի. կսիրեմ, այլ կարտասվեմ, երջանիկ եմ, սակայն կուլամ. կուրծիս տակ բոց մը կա, որ անուշ խունկի մը նման սիրտս կվառե և անոր բույրին մեջեն կսահին ոսկեթել երազներ, միշտ ամպերու նման կսահին և արցունք կսրսկեն... ո՜հ, Հրաչյա, քու առաջին նայվածքդ կենացս արշալույսն էր, ես անկե առաջ նոճիի ստվեր մը, թշվառի ժպիտ մը, առկայծյալ ջահ մը և անզգա պաճուճապատանք մ'էի հորս դիրկը. դու դիացիր ինծի, շունչ տվիր ինծի, երբ «կսիրեմ զքեզ» ըսին շրթներդ և աչերդ, երբ ձեռքս քո դողդոջ ձեռացդ մեջ դողաց... հայրս բան մը չդիտեն, գնաց հանդարտ սրտով... (պատուհանը երթալով) ահա բլրակին գագաթը հասեր է, կարծես թե կեցեր և դեռ հոս կնայի... կքալե... աներևութացավ բլրակին ետև... դեռ Հրաչյա չանցնիր... բայց ո՞վ են այս երկու անձերը, որ ճամբուն վրա կեցած իրարու կփափաքան և մերթ ընդ մերթ հոս կնային... երկուքեն և ոչ մեկը Հրաչյան է... (տեսարանը գալով) բայց անշուշտ որսեն դարձած ատենը հոս կհանդիպի. նա չխաբերպիս... հրեշտակի պես անմեղ է... Հրաչյա... անունն ալ ի՞նչ դեղեցիկ... սակայն չեմ համարձակիր ինքը հրեշտակ կոչելու...

Տեսիլ Գ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ, ԱՐՏԱՇԻՐ և ՍՄԲԱՏ

ԱՐՏԱՇԻՐ.— Բարև, ազնիվ օրիորդ, կրնա՞ս ապաստան շնորհել երկու հոգնած ճամբորդներու։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Աղատ եք, տյարք իմ, եթե կհաճիք այսպիսի խեղճ տնակ մը ձեզի ապաստարան ընտրելու։

ՍՄԲԱՏ.— Շնորհակալ ենք, բարեսիրտ օրիորդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Կարծեմ կրնանք սա աթոռներուն վրա քիչ մը հանգչիլ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, տյարք իմ, թեպետ և հին են։

ՍՄԲԱՏ.— Հոգ չէ, բավական է, որ մեր հոգնությունը փարատեն (կնստին):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Մինակ դիտնալ պետք է, որ զինվորի մը տունը չը կրնար ասկե քիչ խելք վիճակ մը ունենալ:

ԱՐՏԱՇԻՐ.— Հայրդ զինվո՞ր է, օրիորդ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, տեր իմ, ծերունի զինվոր մը:

ԱՐՏԱՇԻՐ.— Հիմա հոս չէ՞ ինքը:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛չ, տեր իմ, դուրս ելավ:

ՍՄԲԱՏ.— (ցած առ թագավորն) Խիստ դեղեցիկ է, տե՛ր արքա... լսածնես ավելի:

ԱՐՏԱՇԻՐ.— Մանավանդ իր անուշ ձայնը սիրտս շատ գրավեց... կուզեմ քովը մոտենալ, Սմբատ:

ՍՄԲԱՏ.— Ազեկ չես ըներ, տեր իմ, կվախնամ որ հրեշտակային դեմքեդ շատ զարհուրի:

ԱՐՏԱՇԻՐ.— Այդչափ տգե՞ղ եմ, Շլմառական:

ՍՄԲԱՏ.— Ո՛չ, տեր իմ, դուն քեզ դեղեցիկ կնշմարես... անիծյալ ըլլան նախանձոտ աչքերը, որ տգեղությունդ երեսիդ կզարնեն:

ԱՐՏԱՇԻՐ.— Խեղկատակ... (շորս կողմը կսկսի զննել):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) Բայց այս մարդիկը ի՞նչ փափսացին, Աստվա՜ծ իմ... ի՞նչ կորոնեն շորս կողմերնին:

ՍՄԲԱՏ.— (նույնպես) Բայց ես հոս խաչեր և գենքեր կտեսնեմ, տե՛ր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Զենքե՞ր, մենք ալ ունինք... խաչերն ի՞նչ կրնան ընել մեզ, Սմբատ:

ՍՄԲԱՏ.— Մանավանդ քեզի, որ խաչակնքելե անգամ կսոսկաս՝ վախնալով որ աչքդ կկուրցնես:

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ես կըսեմ, թե ես այսչափ դեղեցիկ երբեք տեսած չեմ:

ՍՄԲԱՏ.— Նորերը միշտ նախամեծար կըլլան, տե՛ր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— (բարձր առ Շահանդուխտ) Ամուսնացյա՞լ ես, օրիորդ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (կարմրելով և աչերը խոնարհեցնելով) Ո՛չ, տեր իմ...

ԱՐՏԱՇԻՐ.— Ճշմարի՞տ կըսես, քեզի պես դեղեցիկ աղչիկ մը ամուսնացած չըլլա, զարմանալի բան:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ներս մտնելով) Տարօրինակ կխոսիս, տեր իմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Կհաճի՞ս հոս քովերնիս նստիլ, օրիորդ... որ ձեր քաղաքին վրա խոսինք։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (Իյ մը խստությամբ) Շնորհակալ եմ, տե՛ր իմ... մեր քաղաքին մեջ մոլի թագավորի մը պատմությունն ու չարիքներեն ուրիշ բան մը չկա։

ՍՄԲԱՏ.— (ցած առ արքան) Դողդոջան փուշ կինստանս, տեր արքա։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) Աստված իմ, ազատե՛ զիս այս պըժդալի նայվածքներեն։

ԱՐՏԱՇԻՐ.— (ցած առ Սմբատ) Ապո՛ւշ, կկարծես որ խաչին սաղրատը Հոմանի Մարիամներ չե՞ն գտնվիր։

ՍՄԲԱՏ.— (նույնպես) Բայց բախտը միշտ սուրբ Մարիամներու կհանդիպեցնե քեզ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— (նույնպես) Պալատը զայն աղեկ կմկրտե։

ՍՄԲԱՏ.— Ճշմարիտ է, Արտաշրի պալատն անմեղներու քավարան մ'է ի շնորհս պալատականներու. խեղճ եղնիկներ, հակա եղջյուրներով ասդին անդին կոտտանին ու կթափառին իրենց թագավորին համար ծաղիկ որսալու։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) Ո՞րչափ կսոսկամ, Աստվա՛ծ իմ։

ԱՐՏԱՇԻՐ.— (ցած) Է՜հ, ի՞նչ պիտի ընենք, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ծերունի զինվորին կվախնամ, տեր արքա, պետք է զայն կերպով մը բանտ նետել... հետագա պարագաներն ինծի թող։

ԱՐՏԱՇԻՐ.— Այդ դյուրին է... բայց շուտ գործադրելու է... վասն զի ես խիստ սիրեցի այս աղջիկը... գուցե ամենեն ավելի։

ՍՄԲԱՏ.— Է՜հ, ի՞նչ, սատանան դարձյալ փորդ մտավ... երթանք և դեռ կխորհինք, տեր արքա... բավական է որ աչքովնիս տեսանք գեղեցիկ ըլլալը։

ԱՐՏԱՇԻՐ.— Այո՛, երթանք, եթե դեռ հոս կենանք... կհասկնա*) (ոտքի կելլեն)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ուրախությունը ծածկել ուզելով) Կերթա՞ք, տյարք իմ։

ՍՄԲԱՏ.— Այո՛, օրիորդ, շատ շնորհակալ ենք, հոգնությունիս բավական փարատեցինք։

---

*) Տալած է կը հասկնաս.

ԱՐՏԱՇԻՐ.— Մնաս բարով, օրիորդ... (երթալու ատենը Շահանդուխտի վրա չարաշուք նայվածք մը կձգե):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սարսռելով) Ո՜հ, Աստված իմ... (կմեկնին):

Տեսիլ Դ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ, (ինքն) ՍՈՒՐՄԱԿ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (առանձին) Որչա՜փ սոսկացի, տե՛ր Աստված.... ասոնք մարդակերպ հրեշներ էին, աչքերնին դժոխոց բոցերուն պես կփայլփլեին, նախազգացում մը ինձ մրմռաց թե ասոնք դահիճներ էին... հայրս գնաց՝ այս մարդիկը եկան, ասոնք գացին, հայրս չի պիտի գա... (պատկերին առջև ծնրադրելով բազկատարած) Ո՜վ Խաչ, քու թևերուդ տակ պահպանե իմ ծերունի հայրիկս ալ:

ՍՈՒՐՄԱԿ.— (ներս մտնելով, մեկուսի) Կաղոթե...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ոտնաձայն առնելով և աչքը համբուրելու երթալով) Բարի եկար, տեր հայր:

ՍՈՒՐՄԱԿ.— Բարի տեսանք, աղջիկս... կաղոթեիր...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Գրեթե, տեր հայր... հայրս դուրս ելավ, իրեն համար կաղոթեի:

ՍՈՒՐՄԱԿ.— (նստելով) Տեսնենք այսօր ի՞նչ մեղք գործեցիր, Շահանդուխտ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ամչնալով) Պիտի ներե՞ս դարձյալ, բարեսիրտ հայր...

ՍՈՒՐՄԱԿ.— Անշուշտ, իմ պաշտոնս սիրել և ներել է... տես, այս Քրիստոսը խաչին վրայեն մարած ձայնով «սիրեցեք զմիմյանս» կգոչեր. ես ալ ահա այն երկնային ձայնին հետևելով կսիրեմ քեզի պես խելոք և մաստոդ աղջիկները, և ակամա մարդկային սխալանքի մեջ ընկղմելու համակամետ ըլլալուդ, ահա ամեն օր քու նորանոր մեղքերդ քավելու համար անընդհատ կայցելեմ զքեզ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Պահապան հրեշտակս ես, տե՛ր հայր, եթե դու չըլլայիր, արդյոք ի՞նչպես պիտի այրեի դժոխոց անշեջ հրույն մեջ:

ՍՈՒՐՄԱԿ.— Անշուշտ... տեսնենք, պատմե մեղքերդ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Նախ այսօր չի կրցա եկեղեցի երթալ, վասն զի...

ՍՈՒՐՄԱԿ.— եկեղեցի չի գացի՞ր... մե՞ղք... մե՞ծ մեղք...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (պաղատալից) Ո՜հ, հայր սուրբ...

ՍՈՒՐՄԱԿ.— Այո՛... և պատճա՞ռը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս զիս իրմեն չզատելու համար պատվիրեց որ չերթամ։

ՍՈՒՐՄԱԿ.— Անօրեն հայր, որ զքեզ դժոխոց լափյուրինթոսը կքաշկռտե*)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս կսիրեմ, տեր հայր, բայց զքեզ կպաշտեմ (մեկուսի). իսկ Հրաչյա՞ս։

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի). Որչափ ալ գեղեցիկ է... (բարձր) ուրեմն դեռ պատմե։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քիչ մ'առաջ երկու ճամբորդ հոգնությունն առնելու համար այս տնակը եկան, ես ալ սիրով ընդունեցի զիրենք... հետո դեշ անձեր երևցան, վասն զի սոսկալի նայվածք և կերպարանք ունեին. վերջապես մեկնեցան, բայց ես զայրույթ և սոսկում զգացի։

ՍՈՒՐՄԱԿ.— Այդ ճամբորդները երիտասա՞րդ էին։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Գրեթե, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Դարձյալ մեծ մեղքի մեջ թավալեր ես... գիտցիր որ երբեք մեկը չի պիտի ընդունիք տնակը, բացի խոստովանահայրեդ և հորմեդ... ցավդ և սիրտդ մի՛ բանար ուրիշի մը, եթե անոթի, ծարավ, խոնջյալ և օրհասական ալ ըլլա... այս պատկերին հետ միշտ առանձին պիտի մնաս. աղոթք և արցունք, ա՛յս է քու փրկությունդ, միանձնությունն, ա՛յս է քու կյանքդ... կհասկնա՞ս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն, հայր սուրբ, ի՞նչ պետք է որ ընեմ այսուհետև ա՛լ մեղաց խոր վիրապը չգահավիժելու համար։

ՍՈՒՐՄԱԿ.— եկու քովս նստե տեսնեմ... պիտի ըսեմ թե ի՞նչ պարտիս ընել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց ես արժանի չեմ քեզ աթոռակից ըլլալու, տեր հայր, ես ի ծունր կիջնեմ։

*) Տպված էր կը բաշկռնե.

ՍՈՒՐՄԱԿ.— Նախ միշտ իմ խոսքիս անսալով անմեղության փիլոնը պիտի զգենուս, աղջիկս... կլսե՞ս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.—(Ցավը նստելով) Խոսե, քեզի ունկնդիր եմ, հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Ո՜հ կը դողամ, չեմ կրնար դիմանալ (սույն միջոցին Հրաչյա կերևի խորը՝ զանոնք կտեսնե, կանգ կառնե և մտիկ կընե) Ա՛ղջիկս, քեզի ըսի թե քեզի պես բարեպաշտ և գեղեցիկ աղջիկները շատ կսիրեմ և ահա սիրելուս համար է որ քեզ անմեղության ապագա մը կշնորհեմ... մրմունջ մը, շունչ մը, զգացում մը, որ զքեզ պիտի վերածնի և գերազանցե... բայց պետք է որ մեկը ջիմանա, մինչև անգամ այս անզգա պատկերը. մոտեցիր որ ըսեմ... (իբրև թե աւնր ականջն ի վար խոսելու պատրվակով ճամբույր մը առնելու կըլլա այտեն)։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՀՐԱՉՅԱ

ՀՐԱՉՅԱ.—(ճառաջ գալով) Կեցի՛ր, մի՛ սրբապղծեր անմեղ աղջիկ մը։

ՍՈՒՐՄԱԿ.— (սարսափած) Ա՜հ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ապշած) Հրաչյա՜...

ՍՈՒՐՄԱԿ.— Ո՞վ ես դու, անօրեն, որ խոստովանության մը սրբազան կապը կխզես հանդուգն սպառնալյոք։

ՀՐԱՉՅԱ.— Ես քեզ հոն մտիկ կընեի, այդ խոստովանությունը...

ՍՈՒՐՄԱԿ.— Լռե՛...

ՀՐԱՉՅԱ.— Կտժգունի սև ճակատդ ալ, և լռության տակ ծածկել կուզես ամոթդ ու ոճիրդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Լռե՛, Հրաչյա... ներե՛ իրեն, հայր, խնայե՛ իրեն և ինծի, մի՛ պատուհասեր...

ՍՈՒՐՄԱԿ.— Շահանդուխտ, անիծյալ ես, մինչդեռ այս անօրենը կպաշտպանես և...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ, գթությո՜ւն, հա՛յր, թողությո՜ւն...

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ... այս սրբազան և սև փիլոնը իր սև սիրտը քեզնե կծածկե. այդ մարդը խաչին տակ դարանակալ սպասյել մ'էր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜հ, ասուված իմ...

ՍՈՒՐՄԱԿ.— Կհամարձակի՞ս...

ՀՐԱՉՅԱ.— Այս մարդը Քրիստոսի հոտին գայլն է... այս մարդը վատ մ'է։

ՍՈՒՐՄԱԿ.— Դողա՛...

ՀՐԱՉՅԱ.— Ո՞ւակից... քեզնե՞, որ մուրին մեջ խաչը տապար կընես. քեզնե՞, որ աղավնիները միայն ճանկերուդ մեջ կրնաս առնել և չես վախնար որ խաչն ալ, փայտի կտորն ալ հարված մ'ունի։ Դու որ մարդուն երակացը արյունը ծծելով զայն կամակատար դիակ մ'ընել կջանաս, դո՛ւ որ չես դողար աստուծմե, ե՞ս, ե՞ս դողամ քեզնե։

ՍՈՒՐՄԱԿ.— Դիա՛ իրեն, Աստվա՛ծ իմ, և քեզի դարձուր...

ՀՐԱՉՅԱ.— Ա՜հ, հարվածդ չհաջողիր, դիմակդ կդնես... ծածկել կուզես շառագունող ճակատդ... դու չես նեռվիր, չես Յուդա, տեսնելով որ ոսոխդ ազատ կթուչի արծվի մը նման և կրնա քու ապաստանած ժայռերուդ վրա գլուխըդ ջախջախել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր սուրբ, դու աղոթե իրեն համար... ներե՛ իրեն։

ՀՐԱՉՅԱ.— Բայց դու չես սթափիր, Շահանդուխտ, եթե ես վրա չհասնեի...

ՍՈՒՐՄԱԿ.— Պիտի լռե՞ս վերջապես... օ՛ն, դո՛ւրս ել այս տեղեն... ա՛լ բավական եղավ, հանդգնությանդ չափն անցուցիր։

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ, այս մարդը խաչը կկոխկոտե և ուրիշին պաշտել կուտա, այս մարդը սիրտ չունի և ուրիշներուն սիրտ կքարոզե, այս մարդը փիլոնին տակ դաշույն ունի և կոչնակին դանգյունին մեջ սպանելույն վերջին հեծեծանքը կխեղդե... բարեպաշտ և գեղեցիկ աղջիկները կսիրես, պարո՛ն երեց, խիստ լավ կընես, եթե այդչափ չսիրեսե։

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Ո՜վ կատաղությանս... (բարձր) Աստվա՛ծ իմ, այս մարդը դիվահար մ'է եղեր, ներե՛ եթե ակամա իրեն դեմ զայրացա։

ՀՐԱՉՅԱ.— Այնչափ ապահով եղիր թե ես հիմար չեմ, որչափ որ ապահով ես քու վատ մը ըլլալուդ. Շահանդուխտ, խորշե՛ այս փիլոնեն, որ դիակի պատանք, դագաղի ծածկոց և ոճիրները քողարկող վարագույր մ'է, այս մարդը եկեղեցին

գերեզմանի կկերպարանափոխե, կկեղծե, կխոնարհի, կըսպաննե միմիայն իշխելու համար... ապառաժ է այս մարդուն սիրտը, միթե կարելի՞ է ապառաժին վրա խաչ տընկել... նայվածքը դորովալի է, բայց թույն կթափե, սիրով կսեղմե ձեռքը, այլ նա կսառի... ինչպես օձն իր զոհը ա-անուշահոտության մեջ կթմրեցնե, նույնպես ասոր սիրած անուշահոտությունը աստվածային մրմունջներ են... եթե սիրելի մը ունի աշխարհի մեջ, այն է արյունարբու փառքը, եթե ատելի մը՝ այն է ժողովուրդը... ասիկա դժոխքեն փախած սև ուրվական մ'է... (Սուրմակ չարագույժ նայվածք մը կնգե աեոնց վրա):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սարսափած ճիչ մը կարձակե) Ա՜հ:

ՍՈՒՐՄԱԿ.— Ո՜վ հանդուգն, չե՞ս մտաբերեր, որ կղերն իր արդար բարկությանը մեջ կայծակ կամ անեծք ունի...կուզես որ տարածեմ թևերս:

ՀՐԱԶՅԱ.— Ապո՜ւշ կխաբես, ավելի օրհնենքեդ կվախնամ քան թե անեծքեդ:

ՍՈՒՐՄԱԿ.— Գիտցի՛ր, որ եթե այս խաչյալեն ներել և աղոթել սորված չըլլայի, հիմա զքեզ ափ մը մոխիր դարձուցած էի... շնորհակալ եղիր, քեզի համար դեռ պիտի աղոթեմ, դու որ ճշմարտության ճամբեն մոլորած՝ ուրիշներն ալ քեզի պես կուզես մոլորել... զգուշացիր այդ ճամբեն քայլ մ'ալ և ահա անդունդ մը ունիս... դու զիս հանգետս նախատեցիր, այլ ես քեզի կներեմ... վրեժը վատերուն կվայլե... բայց դարձյալ օր մը պիտի բողոքեմ քու անիրավ զրպարտությանդ դեմ. կցավիմ որ չես ճանչեր զիս և բարեգործություններս:

ՀՐԱԶՅԱ.— Կուզե՞ս որ տամ անունդ:

ՍՈՒՐՄԱԿ.— Սուրմակ երեց՝ Հիսուսի Քրիստոսի տրուպ ծառա:

ՀՐԱԶՅԱ.— Միտքդ բեր անցյալդ... քու անունդ Սուրմակ երեց չէ, այլ...

ՍՈՒՐՄԱԿ.— (սարսափած և սպառնալից) Զգուշացիր...

ՀՐԱԶՅԱ.— Սմբատ է... պալատական:

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Ո՜վ երկինք:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Պալատակա՜ն...

ՀՐԱԶՅԱ.— Դու պալատական մ'էիր:

ՍՈՒՐՄԱԿ.— Պիտի լռե՞ս...

ՀՐԱՉՅԱ.— Դեռ մտիկ ըրե... դու չարագործ էիր, թագուհույն սիրահարեցար և ուզեցիր զայն կրիցդ զոհել. թագավորն իմացավ, նա քեզ հեռացուց և քու դիտավորությունդ իր վրա փորձեց. հետո զքեզ պալատեն վռնդեց... դու երևանկյալ՝ քինախնդիր գացիր վանքը և քանի մը կեղծ արցունք թափելով խաբեությամբ երեց ձեռնադրվեցար. մեկը քեզի չհարցուց քու անցյալդ, խաչ մը տվին ձեռքդ՝ և դու զայն սուրի տեղ կգործածես, կտեսնես որ ամեն բան գիտեմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛վ երկինք։

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Բայց ո՞վ է այս անձը...

ՀՐԱՉՅԱ.— Ճանչեցի զքեզ... Սմբատ...

ՍՈՒՐՄԱԿ.— Թող որ քեզի համար աղոթեմ...

ՀՐԱՉՅԱ.— Քու ոճիրներուդ քավության համար աղոթե, անօրեն... ես զքեզ ճանչեցի, դու ալ դիս ճանչե (կուրծքը կբանա)։

ՍՈՒՐՄԱԿ.— Հրաչյա՛... արքայորդին։

ՀՐԱՉՅԱ.— Ես այն ատեն տղա էի, բայց ամեն բան լսեցի... օ՛ն, կորի՛ր այս սրբավայրեն և մեկ մ՛ալ ոտք չի պիտի կոխես հոս։

ՍՈՒՐՄԱԿ.— (ցած առ Հրաչյա) Զգուշացի՛ր ուրիշի լսելու թե ես Սմբատն եմ։

ՀՐԱՉՅԱ.— Վատաբա՛նդ։

ՍՈՒՐՄԱԿ.— (երթալով մեկուսի) Արքա և արքայորդի, դողացեք ինձնե։

Տեսիլ Ջ

ՀՐԱՉՅԱ ԵՎ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՛հ, մեզ անիծելու չերթա, Հրաչյա... ի՞նչ ըրիր։

ՀՐԱՉՅԱ.— Նախ անիծյալ ըլլա այդ անօրենը, որ քու միտքդ այդպես չղթայեր է. բա՛ց աչքդ, Շահանդուխտ, քահանա կարծածդ դիմակավոր սատանա մ՛է... դու կպաշտպանես այդ անձը, որ մեր անմեղ սերը պիտի սրբապղծեր, երկու լուսոց ճառագայթներու մեջտեղ սև ամպ մը և երկու նայվածքի մեջ խավար պիտի արձանանար, նա քու աչերդ

կապեր է և լուսո մեջ անգամ քեզ խարխափել կուտա. դուն կուլաս. Շահանդուխտ, նա կխնդա վրադ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Կհասկնամ... մեկդի՛ այս խոսքերը, Հրաչյա, մեր վրա խոսինք։*

ՀՐԱՉՅԱ.— *Բայց պիտի առնես այդ մարդը, ինչպես պետք է առնել մեր սիրո դահիճը։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Սակայն ի՞նչ հոգ, եթե բոլոր աշխարհ անիծե և նախատե զմեզ... ես քու գիրկդ, դու իմ գիրկս, ես քու նայվածքդ, դու իմ նայվածքս, ես քու շունչդ, դու իմ շունչս, սիրույս մեջ այնպիսի հեշտ կաթիլ մը կզգամ, զոր վարդը երբեք ունեցած չէ. այնպիսի ճաճանչ մը, զոր Արտաշեսի թագը չուներ, այնպիսի երազ մը, զոր քերթողը վերջալուսին հետին ճառագայթներուն մեջ չերևակայեր... սե՛ր, սե՛ր, չի կրնար գրվիլ երկնի բոցավառ աստղերուն նման. բայց ի՞նչ է սերը, եթե ոչ դուն...*

ՀՐԱՉՅԱ.— *Բայց ի՞նչ ունիս, Շահանդուխտ... կուլա՞ս...*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Միթե կարելի՞ է առանց արցունքի սիրել... միթե դու չե՞ս լար, Հրաչյա, ահա երկնագույն աչքերդ աքողված են... միթե չե՞ս ուզեր մեռնիլ...*

ՀՐԱՉՅԱ.— *Այո՛... մեր սրտերը մեկ արձագանք մը ունին... բայց եթե կոհակի մը մեջ նետվինք, մեր վրա ծավալող կոհակին վերջին ծալքը մրմունջ մը ունի. եթե դաշույնով մեռնինք, մեր կսկիծը արտոնջ մ՚ունի, մեր արյունը դարձյալ ձայն մ՚ունի... չգիտե՞ս որ ամեն ձայն ալ երկնի մեջ արձագանք մը ունի... միթե կարելի՞ է որ երկու հովերու պես մարինք առանց ձայնի և կորնչինք վլատակի մառախուղի և ամպերու մեջ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Եվ կկարծե՞ս, որ թողուն մեզ որ հանգիստ սիրենք զիրար... ի՞նչ է մեր ըրածը, սիրել, ապրիլ միմիայն իրարու նայվածքի մեջ... եթե զիրար առնելու ըլլայինք, այն առեն ամենքը մեզ կօգնեին և հարյուրավոր ձեռքեր սրով կնպաստեին, և մեր հայրերն իսկ մեր զինավարժը կըլլային. ի՞նչ կյանք... միթե սիրե՞լ է այս... վախնալ և հուսալ ձայնի մը, տրտիփ մը, տերևի մը, լույսի մը, մութի մը, շունչի մը, շուքի մը, վերջապես իրարմե... կանցնի աշխարհի վտառքերն ու վայելքները. մենք անոնց սովերին*

տակ երկու աննշան ծաղիկ էինք գիրկընդխառն փթթած, դեռ կոկոն էինք, բացվեցան մեր թերթերը, տեսանք զիրար, ժպտեցանք, պիտի թոռմինք... Հրաչյա, դեռ գրկե՛ զիս...

ՀՐԱՉՅԱ.— Բայց վայրկյան մը աչքերուս մեջ նայե... որչա՜փ գեղեցիկ ես... ո՜հ, չէ՛, չմեռնինք, Շահանդուխտ, դեռ ապրինք, երկուքնիս ալ նորատի ենք... դեռ բուրաստանը շմտած՝ միայն բուրումներ կզգանք, տեսնենք ծաղիկներն ալ, նախ անոնք մեր շուրթներուն վրա թոռմին, հետո մեր նայվածքները անոնց վրա... օր մը անշուշտ միատեղ պիտի մեռնինք... դու առաջ ամոթահար էիր, հիմա ալ վշտահար... դեռ չեմ տեսեր ժպիտդ, Շահանդուխտ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ես չեմ կրնար ժպտիլ, մինչդեռ կսիրեմ, Հրաչյա... ես մեռնելու համար կսիրեմ, կմեռնիմ սիրելու համար. սիրո մեջ կյանքը մահ է, իսկ մահը՝ անմահություն. մենք չունինք պալատ, ոսկի, ծառա, այլ հովեն տատանող խարխուլ տնակի մը մեջ կսիրենք. եթե սա բլրակին վրա, սա ծառին հովանիին տակ, լուսնի շաղին մեջ իրարու քով վախկոտ նստած տեսնեն մեզ աղնվականը, և երբ մեր շառագույն ճակատը մեզ մատնե թե զիրար կսիրենք, կխնդա մեր վրա այն անսիրտը... աղքատը սիրտ կունենա... ո՞վ շուքի մը շունչ և հիշատակ պիտի տա... Հրաչյա, եթե չըսեիր առաջին օրը թե պարզ զինվոր մ'էիր, եթե իմ հորս բախտակիցը չըլլայիր, չէի կրնար զքեզ սիրել... բայց ինչո՞ւ կարմրեցար...

ՀՐԱՉՅԱ.— Մեր վիճակին վրա կկարմրիմ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Իրավունք ունին խեղճ զինվորներն, իրենց արյամբը թագավորին և աղնվականաց երջանիկ ապագան կգնեն, բայց դարձյալ անոնցմե կնախատվին, վասն զի ձայն չունին, վասն զի ցնցոտին մարդը անարգության կդատապարտե... աղքատն իր տնակին մեջ չոր և նեխոտ հացով կգոհանա, իսկ հարուստին ապարանը նոր խորտիկներ կհնարվին... զինվորը պատերազմի փողին գոռումեն կասրսռի, վասն զի իր սիրելիեն պիտի բաժնվի, թագավորը անդին կույս աղջիկ մը կառևանգե մորը գըրկեն... ի՜նչ սոսկալի են ասոնք, ո՜հ, որչափ երջանիկ եմ

որ աղքատ ծնա, աղքատության մեջ սիրտը չկորսվիր... այս խաչյալն ալ աղքատ էր, բայց ո՛չ նվաստ... նա թեպետ Աստված՝ կոխկռտեց ոսկին ու ծիրանին և միայն սեր ու ցնցոտի հագավ... որչափ կսիրեմ այն Քրիստոսը, որ քեզ ալ ինծի տվավ։

ՀՐԱՉՅԱ.— Ո՜հ, այդ անունը ինծի համար խիստ քաղցր է, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ձիս շատ կսիրե՞ս, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Քու սիրտդ չմրմնջեր, թե ես քեզ որչա՜փ կսիրեմ, վասն զի սեր բառը գուցե իմ սերս չկրնար բացատրել... կհասկնամ, Շահանդուխտ, կինը սիրելե ավելի կուզե սիրվիլ... բայց ես գոհ կըլլամ միայն սիրելով, Աստուծմե ավելի պետք է սիրեմ զքեզ, վասն զի դու զիս Աստուծո կտանիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ի՞նչ ըսիր, Հրաչյա՜։

ՀՐԱՉՅԱ.— Բայց ինչո՞ւ սոսկացիր, դու իմ սիրուս չափը կուզես իմանալ... ո՜հ, ներում, Շահանդուխտ, եթե դու հրեղեն մ'ըլլայիր և եթե Աստուծմե գերագույն մեկն ալ եղած ըլլար, անկե ալ ավելի կսիրեի, Շահանդուխտ, ո՜հ, ո՜վ ես դու...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քու եղբայրդ... ներե... հանցավորը ես եմ...

ՀՐԱՉՅԱ.— Ա՜հ, որչափ գեղեցիկ է մարը մտնող արևուն ճառագայթը քու սիրահար ճակտիդ վրա... որչա՜փ փառազարդ է այս տնակը, ուր քու շրթունքդ եղբայր կկոչեն զիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Արևը մայրը կմտնե... ուրեմն պիտի բաժնվինք, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Անտանելի է այս, եթե կուզես, չենք բաժանվիր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս հիմա կդառնա... պետք է որ մեր սերը գաղտնիք մ'ըլլա։

ՀՐԱՉՅԱ.— Իսկ եթե իմանա։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Վրեժ կառնե... զմեզ չսպաններ, այլ կբաժնե։

ՀՐԱՉՅԱ.— Սոսկալի է այդ, եթե մեռնիլ ըլլար միատեղ կմեռնեինք։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սա արևուն վերջին կարմիր ճառագայթը զքեզ բնակարանդ կդարձնե։

ՀՐԱՉՅԱ.— Ուրեմն... մնաս բարյավ, Շահանդուխտ։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Երթաս բարյավ, Հրաչյա, անշուշտ չե՛ս մոռնար գիս։
ՀՐԱՉՅԱ.— Աչխարհ թող զմեզ մոռնա (կմեկնի)։

Տեսիլ Է

ԲԱԲԵԼ և ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ԲԱԲԵԼ.— (շփոթած ներս մտնելով) Շահանդուխտ, ո՞վ էր այն երիտասարդը, որ հիմա տնակեն դուրս ելավ, և գիս տեսնելուն շփոթեցավ... խոսե՛, ո՞վ էր այն... չե՞ս պատասխաներ։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (թոթովելով) Հայր իմ...
ԲԱԲԵԼ.— Կկարմրիս... ա՜հ, պատասխանե՛, ի՞նչ գործ ուներ այն երիտասարդն այստեղ. ինքն աղնվական մը կերևեր։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կսխալիս, հայր իմ, նա ալ քեզի պես զինվոր մ՚է։
ԲԱԲԵԼ.— Խաբեր է քեզ անիկա... ա՜հ, միակ աղջիկ մը ունիմ, այն ալ կուզեն ձեռքես կորզել... կայծակ մ՚ալ ճաղատ ճակտիս զարնել... բայց դարձյալ կկրկնեմ, ի՞նչ գործ ուներ նա հոս... ո՞վ էր։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր իմ, գթա՛ ինծի, դեռ աղջիկդ եմ...
ԲԱԲԵԼ.— Ուրեմն դեռ չե՞ս պատասխաներ... պետք է որ իրեն հարցնեմ (երթալու կըլլա)։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛ւր կերթաս, հա՛յր իմ։
ԲԱԲԵԼ.— Պիտի տեսնվիմ անոր հետ... գուցե սրով...
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜հ, զի՛ս սպաննե, հայր իմ, անոր տեղ... հանցավորը ես եմ։
ԲԱԲԵԼ.— Ուրեմն կսիրես զինքը, հորմեդ գաղտնի, աղնվական մը զոր ես կատեմ... ուրեմն դու ալ իմ աղջիկս չես, ես մինակ եմ, մինակ աշխարհիս վրա, և այսուհետև գերեզմանի քարերն են իմ կնճռոտ ճակտիս բարձ... ա՜հ, Շահանդուխտ, ի՞նչպես չդիացիր հորդ ալևոր մազերուն... կուզես որ արցո՞ւնք քալեն հորդ ցամքած աչերեն։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հանդարտե՛ հայր իմ, ինքը քու որդիդ է...
ԲԱԲԵԼ.— Երթամ տեսնել թե իրոք որդի՞ս է, թե որդեսպան մը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կեցի՛ր, հայր իմ... դեռ կեցիր... (ոտքը կիյնե, Բաբել գացած ատենը դատավորը և զինվորներ կդիմավորեն):

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ, ԲԱՆՏԱՊԵՏ ՄԸ ԵՎ ԶԻՆՎՈՐՔ

ԲԱԲԵԼ.— Բանտապե՞տ... կտեսնե՞ս, այն վառը ղրկեց ասոնք։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) Այն երկու անձինքը...
ԲԱՆՏԱՊԵՏ.— Դո՞ւ ես Բաբել զինվորը...
ԲԱԲԵԼ.— Այո՛, ես ինքն եմ։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՞ւր պիտի տանիք հայրս։
ԲԱՆՏԱՊԵՏ.— Մեղապարտից բանտը։
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛վ երկինք, սակայն հայրս անմեղ է...
ԲԱԲԵԼ.— Բայց ի՞նչ ըրի ես, ես իմ վիճակիս վրա կուլայի հիմա։
ԲԱՆՏԱՊԵՏ.— Դատավորին հրամանն այսպես է... զորականք, կապեցեք զինքը։
ԲԱԲԵԼ.— Սակայն դիս աղջիկես չի պիտի բաժնեք...
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Աշխարհիս վրա մինակ հայրս ունիմ... չե՞ք լսեր...
ԲԱՆՏԱՊԵՏ.— Զորականք, դատավորին հրամանը գործադրեցեք... (զորականները կպաշարեն զայն և կկապեն):
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր իմ, կբաժնեն զմեզ իրարմե։
ԲԱԲԵԼ.— Շահանդուխտ, հարգե հորդ պատիվը...
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սակայն անմեղ է ինքը, չե՞ք լսեր, անդութ մարդիկ։
ԲԱԲԵԼ.— Աղջիկս... ա՜հ, չկա արդարության պաշտպան մը (Խաչելության պատկերը կախված տեղեն կիյնե):
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սարսափած) Աստվա՜ծ իմ, պատկերը կործանեցավ։
ԲԱԲԵԼ.— (սուրը ձեռքին) Ուրեմն առ հորդ սուրը (վարագույրը կիջնե):

Ա. ՐԱՐՎԱՆ Ը

Աւտաշրի պալատը մեծ և փառավոր սրահ մը, զանազան շքեղ կարասիք, խորը մեծ և բաց դուռ մը և նեմելիք մը, ուսկի երկինք և լեռներ կերևին. գետ մը կիոսի պալատին առջևեն:

Տեսիլ Ա

ՇԱՎԱՐՇ և ՍՄԲԱՏ (ներս մտնելով)

ՍՄԲԱՏ.— *Ի՞նչ ըրիր, Շավարշ, օրհնած ջուրը թագուհվույն տըվի՞ր:*

ՇԱՎԱՐՇ.— *Այո՛, տեր իմ, բայց ի՞նչ կնշանակեր ատիկա:*

ՍՄԲԱՏ.— *Ի՞նչ պիտի նշանակե, ապո՞ւշ... այսօր Սահակ կաթուղիկոս սուրբ խաչի նորակառույց վանքն առաջին անգամ պատարագ մատույց և իր կողմանե պալատ ղրկեց մեծազոր խաչին օրհնած ջուրը:*

ՇԱՎԱՐՇ.— *Ո՜հ, շատ կցավիմ որ կաթիլ մը չխմեցի:*

ՍՄԲԱՏ.— *Գուցե խելքդ գլուխդ կուգար (մեկուսի) կիւնավորվեիր, ապո՞ւշ... հիմա ո՞ւր է թագուհին:*

ՇԱՎԱՐՇ.— *Աղոթարանն է, տեր իմ:*

ՍՄԲԱՏ.— *Կաղոթե անշուշտ (մեկուսի) դեռ ազդեցություն չըրավ թույնը:*

ՇԱՎԱՐՇ:— *Կհուսամ որ խաչին զորությունը կմխիթարե զինքը, վասն զի սրտամաշ վիճակի մը մեջ է. ժամանակ մ'իվեր միշտ աղոթարանը կառանձնանա:*

ՍՄԲԱՏ.— *Շիտակ խոսե, Շավարշ, քեզի բան մ'ըսած չունի՞:*

ՇԱՎԱՐՇ.— *Բնավ, տեր իմ... մինչև անգամ երեսս ալ նայած չունի:*

ՍՄԲԱՏ.— (մեկուսի) Կհավատամ, վասն զի կատարյալ ապուշ մ'է, (բարձր) Շավարշ, կհասկնամ որ թագուհին հիվանդ է և այսօր կամ վաղը Հայաստան իր թագուհին պիտի կորսնցունե... թագուհին կամ պիտի խենթենա կամ պիտի մեռնի, ինչպես որ մայր թագուհին ալ խենթենալուն համար թագավորը պալատեն վռնտեց զայն։

ՇԱՎԱՐՇ.— Բայց թագուհին խելացի և առողջ է, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Կվախնամ որ յուր խելքը պիտի կորսնցունե զինքը։

ՇԱՎԱՐՇ.— Այդպես անգթաբար մի՛ խոսիր, տեր իմ, եթե կհավատաս, ամեն վայրկյան իրեն համար կաղոթեմ, և կհուսամ որ Աստված լսե ինձ ալևոր մազերուս շնորհիվ... թագուհին շատ բարի է, այնպես չէ՞, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Դուցե (մեկուսի), բայց զիս կատե. (բարձր) թագուհին գաղտնիք մը ունի, որուն ես միևնակ թաւիանցած եմ, նա միշտ թագավորեն հեռու կբնակի... գրեթե կատե թագավորը, վասնզի զինքը կկաշկանդե սիրո մեջ... երբեք տեսա՞ծ ես անծանոթ մը թագուհույն հետ... շիտակ խոսե։

ՇԱՎԱՐՇ.— Բնավ, տեր իմ... անիրավ տեղը կդատապարտես զինքը։

ՍՄԲԱՏ.— Դուն կքնանաս, ապուշ, նա կսիրե...

ՇԱՎԱՐՇ.— Աստված իմ, չեմ հասկնար միտքդ։

ՍՄԲԱՏ.— Դու ծերունի ես, միայն երկինք նայելով մազերդ ճերմկցուցեր ես, դուն դիտե՞ր ես դժոխոց բոցավառ խորերը, պալատի մը կամ տնակի մը մեջ աշխարհ քեզի համար տանիքին վրայեն կանցնի, այնպես չէ՞։

ՇԱՎԱՐՇ.— Կաղաչեմ, տեր իմ, ատանկ դժվար հարցումներ մի՛ ըներ ինծի։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն քանի որ խելքդ չհասնիր, քեզի համար լռել պետք է աշխարհի վրա, լռել ինչ որ ալ պատահի... այն որ չհասկնար, հարկ է որ լռե. անշուշտ կիմանաս թե ի՛նչ է լռելը։

ՇԱՎԱՐՇ.— Այդ դյուրին է... և քանի որ կպահանջես...

ՍՄԲԱՏ.— Պիտի գործադրես, այնպես չէ՞, եթե ոչ կվռնտվիս պալատեն, կհասկնա՞ս, Շավարշ։

ՇԱՎԱՐՇ.— Ո՛հ, տեր իմ, կենացս հանգիստը չխանգարող ի՛նչ

բան որ ըսես՝ կկատարեմ... (մեկուսի) վասնզի անկե դյուրին բան չկա։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն իմ խոսելուս կարգն անցավ և քու լռելուդ կարգը եկավ, զգուշացի՛ր, Շավարշ... գիտես որ սիրտս և խոսքս բարի է։

ՇԱՎԱՐՇ.— Կհասկնամ, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն ի՛նչ պաշտոն որ ունիս, գնա սույն վայրկենիս գործադրե. քե՛զ տեսնեմ, Թագուհին աղեկ խնամես։

ՇԱՎԱՐՇ.— Շատ աղեկ, տեր իմ, (երթալու ատեն մեկուսի) սատանային պոչին վրա կերդնում որ բան մը չեմ հասկնար։

ՍՄԲԱՏ.— Շավարշ, արյունաթաթավ գլուխ մը կա... և դու մեկ խոսքով պիտի ձգես զայն, եթե սխալիս։

ՇԱՎԱՐՇ.— Ա՛հ, տեր իմ, կաղաչեմ, այդպիսի սոսկալի պաշտոններ մի հանձնեք ինձ, կտեսնեք որ հիմակվընե կսկսիմ դողալ։

ՍՄԲԱՏ.— Մի՛ սխալիր... լռե՛... թշնամիներ կան։

ՇԱՎԱՐՇ.— Բայց...

ՍՄԲԱՏ.— Դարձյալ կկրկնեմ... պիտի լռես։

ՇԱՎԱՐՇ.— Շատ լավ, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— (մեկուսի) Թագուհին հոս կուգա, կարծես թե ավելի գեղեցկացեր է (կմեկնին)։

Տեսիլ Ը

ՀԵՐԱՆՈՒՇ ԵՎ ՀՐԱԶՅԱ

ՀՐԱԶՅԱ.— Սա դաշտերուն վրա ակնարկ մը ձգե, մայր իմ, տես որչափ գեղեցիկ ու զվարթ է գարունը. վերը կապույտ և վարը կանաչ օթոց մը. տես սա ծաղիկները, տերևները, սա արծաթի առուները որ կսողան, մտիկ ըրե սա արնագաց ու թռչնոց բյուր երգերը ու գեղ-գեղը... հիրավի, մինե գեղեցիկ չե՞ն։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Տարվածուի մը համար... կհասկնամ։

ՀՐԱԶՅԱ.— Բայց, մայր իմ...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Իսկ ատելությունն ու վիշտը անոնց վրա սև վարագույր մը ձգած են, դագաղի ծածկոց մը, որուն վրա խաչ

մը, փուշ պսակ մը և կմախք մը միայն բանված են... այս պալատեն ավելի հեռու կերևի երկինքը. խղճալյաց ձայները այս պալատին սև ու հաստ պատերուն զարնելով՝ անթափանց կնվաղին և կթավալին հոն... եթե արձագանք մը ունենին դժոխային ծիծաղ մ'է... մինակ անսիրտներն ու անխիղճներն կրնան երջանիկ ապրիլ հոս։

ՀՐԱՉՅԱ.— Կհասկնամ, մայր իմ, հայրս անխիղճ է։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Անսիրտ ալ է, վասնզի իմ աչաց առջև ուրիշներ կսիրե, թեպետ չեմ ուզեր որ զիս սիրե, սակայն չեմ ուզեր նաև որ ուրիշները սիրե. խեղճ աղջիկներ, որոնք քանի մը օր թագավորին հետ կենակցելու համար կթողուն հավիտյան իրենց անմեղ և խաղաղ տնակը, կնետվին պալատին ցոփության մեջ, կխամրի իրենց կուսության ծաղիկը, որուն վրա կշողային երկնից անմեղ արցունքները, զանոնք կթափեն ոտքերու տակ՝ մարգարիտներ ստանալու համար... ա՜հ, երանի թե գեղջկուհի մը ըլլայի և սիրվեի և բոլորտիքս ալ ամենքը սիրեին զիրար։

ՀՐԱՉՅԱ.— Բայց մա՛յր իմ, մթե ես զքեզ չե՞մ սիրեր։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Գիտեմ, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Ուրեմն դեռ ո՜վ...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Հրաչյա, եթե թագավորը վատթար ըլլա, ժողովուրդը թագուհին ալ մեկտեղ կդատապարտե. չե՞ս տեսներ, որչափ լքյալ ու թշվառ է հայը քու հորդ թագավորության ժամանակ. օտարները միշտ Հայաստանը կփեռեկատեն և հայուն փառաց ջահն ու գահը թավալելու կտքնին... հայրդ մինակ հեշտության և որս կճանչե. ազգը թագին մեջ ամփոփած, հայուն սիրտը կճմլե ու կճնշե իր արյունոտ գահին ոտքերուն տակ. հորդ ծիրանին անմեղներու արյամբը կարմրեցավ, թագը արցունքներով կշողա, սուրն ու սաղավարտը ժանգոտեցան. Հայաստան անոր թագ մը տվավ գանձ մը ունենալու համար՝ նա փոխանակ գափնիի՝ շղթաներ կսփռե նախնյաց շիրիմներուն վրա, նա կկործանե Հայաստանը՝ անոր փլատակացն ու աճյունին մեջ իր հաճույքն ու հոգին մարելու համար... թագուհի եղա նախատվելու համար... շատ ուշ հասկցա թե ի՞նչ է պալատը, ի՞նչ է թագը։

ՀՐԱՉՅԱ.— Ճշմարիտ է, մայր իմ, սիրտ մեջ անակը պալատ կըլլա և ծաղկե պսակ մը՝ թագ. մինչե սիրելը տիրելեն շատ փառավոր չէ՞... կհավատա՞ս, մայր իմ, ես թագավոր չի պիտի ըլլամ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Վասնզի հորդ արյունոտ թագովը չես ուզեր անմեղ ճակատդ պճնել։

ՀՐԱՉՅԱ.— Եվ մինչե աշխարհի վրա կա՞ թագ մը, որ արյունոտ չըլլա, մայր իմ...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Հիրավի երանի անոնց, որոնց աչքերը գեղչկային որրանի մը մեջ կբացվին, երկինք, սեր և գերեզման միայն կճանչեն... կզգամ որ այս կյանքս շատ չի պիտի տևե, վասն զի կատեմ...

ՀՐԱՉՅԱ.— Մայր իմ, ի՞նչ կըսես... չե՞ս ուզեր ապրիլ գոնե ինծի համար. ե՛ս որ արքայորդի ու որբ եմ. չե՞ս գիտեր որ մայր մը թագավոր հորմե մը ավելի կընտրեմ... դու մեռնիս այդպես գեղեցիկ ու բարեսիրտ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Մի՛ ըսեր ինձ թե գեղեցիկ եմ, վասնզի ատելությանս կայծն ավելի կարծարծե այդ բառը... նախանձն ու վիշտը սրտիս զգացումները խեղդեցին. ես որ բարեսիրտ էի, ատելության պատկերն ըրին զիս... կատեմ ես աշխարհի ճաճանչները, որոնք սիրտ ժպիտներ են... ես ավելի կսիրեմ՝ երբ երկինք սև, աշխարհ փլատակ և բնությունը լուռ ու տխուր ըլլա։

ՀՐԱՉՅԱ.— Բայց, մայր իմ, չե՞ս խնայեր քու զավկիդ... այն արցունքները՝ զոր դու մենությանդ մեջ կթափես, իմ կուրծքիս վրա կկաթին ու կսառին... մխիթարվե՛, մայր իմ, շատ անգամ գերեզմանի մը քով ծաղկունք կփթթին... մնաս բարով, մայր իմ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ո՛ւր պիտի երթաս, Հրաչյա... կարծեմ կույս մը քեզի կսպասե ծառի մը հովանիին տակ, ուսկից գիրկընդխառն պիտի դիտեք վերջալուսնայն հետին կարմիր ճաճանչները, և հետո գիշերվան մութին մեջ պիտի համրեք երկնքեն թռչող աստղերը. այնպես չէ՞, Հրաչյա... ինչ գեղեցիկ է սիրելը և սիրվիլը...

ՀՐԱՉՅԱ.— Սակայն, մայր իմ...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Գնա՛, Հրաչյա... բայց մեկ մ՛ալ ե՞րբ պիտի տեսնվինք։

ՀՐԱՉՅԱ.— Անշուշտ վաղ առավոտ, մայր իմ (կմեկնի)։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Գուցե...

Տեսիլ Գ

ՀԵՐԱՆՈՒՇ (առանձին)

Որդվույս վրա անգամ կնախանձիմ... ա՜հ, թագս կուտայի սիրվելու համար... Հրաչյա աղեկ ըսավ, ի՞նչ է թագը... սիրո արցունքներով շողացող վարդե պսակ մը անկե գեղեցիկ է, սիրո ժպիտ մը տիեզերքն իր մեջ կամփոփե... այս մեծաշուք պալատին տեղ ծառի մը շուք բավ է սիրելու համար, և անոր տերևներուն մեջ սուլող զեփյուռը փառաց երգերե ավելի փառավոր է... ի՞նչ է թագը, թռչուն աստղ մը. ի՞նչ է ծիրանին, ժողովրդյան արյամբ կարմրած պատանքի կտոր մը՝ զոր դարձյալ ժողովուրդը կկարկտե. ի՞նչ է պալատը, վիրապ մը՝ ուր մարդիկ չղթա և տապար կկռեն իրենց նմանները հարվածելու. ի՞նչ է թագավորը, թագ կրող չոր գանդ մը, որ մուրին մեջ կհարվածե. Հայաստան կզգա այս հարվածը և կճչե. կանիծե զիս ալ՝ որ թագուհի եմ... այս պալատը ջահազարդ դագաղ մ՛է, շողշողուն կմախք մը, իսկ ժողովրդյան անեծքը փառաց արձագանքը... Արտաշի՛ր, դու թագ մը տվիր ինձ դագաղեն սոսկալու համար, ծիրանի մը՝ արյունաներկ պատանք մը ունենալու համար... խեղճ գեղջկուհին պալատ կերազե, ես ալ իր դաշտը. գուցե գեղջկուհին թագուհի ըլլա, բայց թագուհին գեղջկուհի չըլլար... որչափ երջանիկ է այն կինը՝ որ երեկոյին իր ամուսնույն քրտինքը կսրբե... ես չեմ կրնար ուրեմն սրբել... երանի թե ցնցոտի հագնեի, վիշտ կրեի, բայց սիրվեի (խոկուն ու տրտում կմեկնի)։

Տեսիլ Դ

ՍՄԲԱՏ և ԱՐՏԱՇԻՐ

ՍՄԲԱՏ.— (թագուհվույն եռևեն մեկուսի) *Մինչև ես զքեզ չէ՞ի սիրեր, անգութ, բայց ես հիմար եմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— (ներս մտնելով) Ի՞նչ ըրիր, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Շավարշ տվեր է, տեր արքա, և նա գոհությամբ ընդուներ է։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ դեռ...

ՍՄԲԱՏ.— Գուցե քիչ մը եաբը, տեր արքա...

ԱՐՏԱՇԻՐ.— Ապահո՞վ ես։

ՍՄԲԱՏ.— Ինչպես ապահով եմ զորականին աղջկան գեղեցկության վրա։

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, թշվառական, սիրույս բոցերը բորբոքել կուզես։

ՍՄԲԱՏ.— Բավական է որ քիչ մը ժամանակի համար ըլլան։

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչպես, Սմբատ, չեմ հասկնար։

ՍՄԲԱՏ.— Ըսել կուզեմ թե վաղ առավոտ այն աղջիկը քեզ անկողնեդ գուցե պիտի արթնցնե իր անուշ ձայնովը։

ԱՐՏԱՇԻՐ.— Թշվառական։

ՍՄԲԱՏ.— Բայց ասով չեմ ուզեր ըսել թե այս գիշեր քուն չքնանա։

ԱՐՏԱՇԻՐ.— Սատանա, եթե թագ չունենայի, գիս քու խաղալիքդ կընեիր։

ՍՄԲԱՏ.— (ակնածությամբ) Տեր արքա... ես ծառայելով գոհ կըլլամ։

ԱՐՏԱՇԻՐ.— Շատ աղեկ կճանչեմ զքեզ, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն, տեր արքա, քիչ առեննեն թագուհին դիակ մը է, որ ալ ձայն չունի, և թագավորը վաղն իր սիրույն մեջ պիտի վերածնի, և Սմբատ ալ իր հաղթական ճակատը երկու սիրահարի շառագույն դեմքերու մեջ պիտի փայլեցնե... այնպես չէ՞, տե՛ր իմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Խեղկատակ, միայն գործդ կպակսի։

ՍՄԲԱՏ.— Միտք ունեցողին համար գործն ի՞նչ է, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Աղեկ խորհո՞ր ես, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ինչպես որ աղեկ խորհեր եմ Արտաշրի մտերիմն ըլլալու համար։

ԱՐՏԱՇԻՐ.— Ե՞րբ պիտի ճամբա ելնես։

ՍՄԲԱՏ.— Գուցե հիմա։

ԱՐՏԱՇԻՐ.— Զորականին տնակը, այնպես չէ՞։

ՍՄԲԱՏ.— Անշուշտ... հիմա աղջիկը մինակ է տնակը, և զորականն ալ նույնպես բանտին մեջ մինակ... Միայն Սմբատ կպակսի։

ԱՐՏԱՇԻՐ.— Արտաշիր ալ թագավոր է, բայց միայն այն աղջիկը կպակսի։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն թագիդ մեկ ադամանդն ընդ կուզես զայն, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Անիրավ ես Սմբատ, ավելին... կենացս մեկ կայծն է նա։

ՍՄԲԱՏ.— Թագուհվույն գերեզմանին վրայեն վարդ պիտի քաղես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Այդ վարդը ցող ունի, այնպես չէ՞, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, բոցավառ արևուն ճառագայթները շուտով կցամքեցնեն զայն։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց բավական է, որ մեկ մը թևերուս մեջ տեսնեմ։

ՍՄԲԱՏ.— Այո՛, տեր արքա, կին մը պետք է որ թագը մուտեն տեսնե, այն ատեն ո՛չ միայն սերը, այլ կյանքն ալ կուտա։

ԱՐՏԱՇԻՐ.— Շատ խորագետ ես, Սմբատ, քեզ տեսնեմ, թագս չվաճա՛ կարենայի աշխարհ վայելել... ի՞նչ կընե ինծի ազգը, բայց թագը հրաշքներ կրնա գործել... Թող թագավորը և ժողովուրդը միայն ինքզինքնին մտածեն...Թող առնեն Հայաստանը և ինծի գեղանի հավերժահարսեր տան, ես ատով գոհ կըլլամ... թագավորի մը մական կըվայլե և ժողովրդի մը սուր, այն հնձե, ես վայելեմ... Սմբատ, երբ միտքս կուգա այն աղջկան գեղեցկությունը, վայրկյան մը թագս անգամ կմոռնամ։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, գեղանի աղջիկ մը քեզի համար վարդի մը կյանքն անգամ չունի... կտեսնենք։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց դեռ դու հոս ես, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Քայլ մը տեղ է, լեռ չի կա միջոցը, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Գիտե՞ս երբեմն ծաղիկ մը թույն կհուսացվի։

ՍՄԲԱՏ.— Ես հոտոտեր եմ, տեր արքա, դու ապահով և հան-

գիստ եղիր. երբ վերադառնամ, թագուհին մեռած պիտի ըլլա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ես իր գերեզմանին դռներեն ավելի լավ պիտի նշմարեմ աշխարհը։

Տեսիլ Ե

ԱՐՏԱՇԻՐ (ճեռո) ՇԱՎԱՐՇ

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՜նչ գեղեցիկ օր մը պիտի ծագի վաղը, արշալուսին ծագումեն առաջ գեղանի նայվածք մը պիտի բարևե զիս... (կանչելով) Շա՛վարշ։

ՇԱՎԱՐՇ.— Ահավասիկ եմ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Թագուհին ի՞նչ կընե։

ՇԱՎԱՐՇ.— Իր սենյակը առանձնացած է, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Ըսե թե կուզեմ իրեն հետ տեսնվիլ հիմա։

ՇԱՎԱՐՇ.— Գլխուս վրա, տեր արքա (խոնարհելով կմեկնի)։

Տեսիլ Զ

ԱՐՏԱՇԻՐ (առանձին)

Հիմա ինքը խոժոռ է. որչափ կնախանձի իմ սիրահարությանցս վրա... ի՜նչ ընեմ, կարծես թե կնոջ գեղեցկությունը շուտ կթոշնի իմ ջերմ համբույրներես... առջի օրը հրեշտակ մը կնշմարեմ և հետևյալ օրը գրեթե ուրվական մը կշոշափեմ... ես կուզեմ հով մ'ըլլալ և ամեն ծաղիկներուն հոտն առնել... շատ կօգնե ինձ թագը, այս շողշողուն իրը, որուն ադամանդները հազարավոր գեղեցիկ նայվածքներ կշլացնեն, բայց կտեսնեմ որ անխելք կրոնավոր մը կուզե թագիս վրա խաչ տնկել... «աղգ, աղգ» կգոչե միշտ ինքը, նույն ձայնը սրտիս խորը միակ արձագանք մ'ունի, որ է «թագ, թագ»... թագուհին շատ սխալեցավ...

Տեսիլ Է

ԱՐՏԱՇԻՐ և ՀԵՐԱՆՈՒՇ

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ձիս տեսնել ուզեր ես, Արտաշիր։

ԱՐՏԱՇԻՐ.— Այո՛, Հերանուշ... զարմանքի մեջ կտեսնեմ զքեզ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Կհասկանաս...

ԱՐՏԱՇԻՐ.— Եթե կհավատաս, բան մը չեմ հասկնար։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Շատ լավ... ուրեմն ինչո՞ւ ուզեր էիր գիս։

ԱՐՏԱՇԻՐ.— Ամբաստանություն մը կա վրադ... և դու չի պիտի կարենաս արդարացնել ինքզինքդ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ամբաստանությո՞ւն մը... և տեսնենք ո՛րն է այդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հերանուշ, անխելքություն չէ՞ միթե, պալատին դաղտնիքն օտարի մը հաղորդելու հանդգնիլը, անխելքություն չէ՞ թագուհվո մը ժողովրդյան արձագանքն ըլլալը։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Արտաշիր, անցելույն վարագույրը մի՛ բանար։

ԱՐՏԱՇԻՐ.— Ես ներկային վրա կխոսիմ, անցյալը ինծի համար շունչ և հիշատակ չունի։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ապահո՞վ ես թե ներկան խղճիդ վրա չծանրանար։

ԱՐՏԱՇԻՐ.— Այո՛, ներկայիս մեջ դու իմ կյանքիս թելեն կախյալ ես, ո՛չ զայն բռնելու կարողություն ունիս և ո՛չ կտրելու սուր։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Կտեսնեմ որ անմեղի մը դագաղին վրա տապար կդնես՝ զայն դահիճ հրատարակելու համար... Արտաշիր, բավական չեղա՞վ այսչափ ոճիր, այսչափ հարվածք.... դեռ անմեղ զոհերու արյունը բավական չողողեցի՞ն գահդ... դեռ այսչափ անեծք խղճիդ վրա չծանրացա՞ն, և դեռ չկրցա՞ր դժոխք ընել պալատդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ դու ալ չկրցար ասոնց հանդուրժել։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Գուցե... ա՜հ, ա՛լ բավական վիշտ կրեցի։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ կկարծես որ մատնությունդ կխնամե՞ց ալդ... կկարծես որ Սահակի խաչը իմ սրույս կդիմադրե՞... դուցե քիչ մը եռքը սոսկալի մաքառում մը պիտի սկսի մեր մեջ... շատ սխալեցար, Հերանուշ... և այդ սխալմունքը շատ սուղի պիտի նստի քեզ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Դեռ վրե՞ժ կդավես, Արտաշիր, բավական չէ՞, գեղեցիկ էի և ուրվական մը ըրիր զիս, թագ մը տվիր և դիակ մ'ըրիր զիս, և չես ուզեր որ հարվածիդ տակ հեծեմ... ատելություն կսերմանես և կըսես մի՛ ատեր... զիս չես սիրեր, կուզես որ զքեզ չատեմ... ա՜հ, Արտաշիր, շատ անգութ ես։

ԱՐՏԱՇԻՐ.— Ես անգութ եմ, թող ուրիշներն ալ ինծի պես անգութ ըլլան, բայց Հայաստան իմս է, ո՛վ կհամարձակի ինծի խոչընդոտ կանգնել։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Նախ քու հորդ ստվերը։

ԱՐՏԱՇԻՐ.— Հայրս հանգիստ է իր գերեզմանին մեջ, և եթե անխոհեմութեամբ դուրս նետուի, իրեն հետ ալ կմարտնչիմ... չեմ ուզեր որ մեկն ամբարտակ կանգնի դիմացս, չեմ ուզեր որ ձեռք մը զիս բռնե. եթե խավար ու մոլոր է ճամբաս, է՛հ, քայլամոլորի մը համար անդունդներ կան, թող անդունդները զիս պատժեն. Արտավազդ իր երիվարովը գլորեցավ, ես մինակ կգլորիմ հոն...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Բայց Հայաստան...

ԱՐՏԱՇԻՐ.— Նա ինձ հետ թող չգա։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ուրեմն հեռացիր գահեդ, թոթվե վրայեդ ծիրանիդ որ զքեզ Հայաստանի հետ կկապե։

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, այնչափ հիմա՞ր կկարծես զիս... ես չեմ ուզեր ապերախտ գտնվիլ, հայրս յուր ձեռքերը չսառած թագ մը կարկառեց ինծի, թագ մը՝ որ ինծի միայն կպատկաներ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Բայց այն թագին վրա հայրենիք և իրավունք գըրված էր։

ԱՐՏԱՇԻՐ.— Չեմ գիտեր. ես բան մը չկարդացի հոն, մինակ տեսա որ գեղեցիկ էր և գեղեցիկները հրապուրող, և անկե ավելի ի՞նչ պետք էր ունենալ ինծի համար աշխարհի վրա։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Արտաշիր, դեռ չե՞ս ամոթահարիր։

ԱՐՏԱՇԻՐ.— Կտեսնեմ որ շատ նախանձոտ ես գեղեցիկներու դեմ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Շատ... բայց ի՞նչ կզգամ, Աստված իմ... կարծես թե սիրտս կայրի։

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Թուլնը...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Արտաշիր, ի՞նչ կըլլամ... սիրտս կխոշտանգեն... բայց դու ինչո՞ւ երեսդ անդին կդարձնես... զիս մոռիկ ընել չես ուզեր... Արտաշի՛ր...

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ի՞նչ կըլլաս, Հերանուշ, խենդեցա՞ր։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Արտաշիր, չես գիտեր ի՛նչ սոսկալի ցաւ է այս...

ո՜հ, դիա ինծի, աղատե զիս այս ցաւեն... կաղաչեմ, կպաղատիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— *Բայց չեմ հասկնար։*

ՀԵՐԱՆՈՒՇ.— *Օ՛ն, կանչե պալատականները... օգնութի՜ւն...*

ԱՐՏԱՇԻՐ.— *Լռե՛...*

ՀԵՐԱՆՈՒՇ.— *Արտաշի՛ր... վրե՞ժ կառնես։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Դրեթե...*

ՇԱՎԱՐՇ.— *(կես մը երևալով մեկուսի) Կարծես թե օգնության ձայն մը եկավ։*

ՀԵՐԱՆՈՒՇ.— *Ա՜հ, անօրեն... կհասկնամ, քիչ մը առաջ Շավարշին հետ օրհնած ջուր ղրկեցիր, Թույն խառներ էիր դուն հոն։*

ՇԱՎԱՐՇ.— *(մեկուսի) Ի՛նչ կլսեմ, Աստվա՜ծ իմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Գե՛շ ըրի, Հերանուշ, կազատեմ զքեզ Արտաշիրեն, կազատեմ զքեզ այն կյանքեն, որ միայն ատելություն և վիշտ ունեցար։*

ՀԵՐԱՆՈՒՇ.— *Դողա... ուրվական մը ունիմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Բայց ես մեծ քար մը պիտի դնեմ գերեզմանիդ վրա, որ դու չկարենաս դլորել և դուրս նետվիլ։*

ՇԱՎԱՐՇ.— (մեկուսի) *Ի՛նչ կանցնի հոս, տեր աստվածո։*

ՀԵՐԱՆՈՒՇ.— *Բայց դեռ ողջ եմ, դեռ կշարժին շուրթերս, անեծք մ'ունիմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Վայրկենն մը հետդ պիտի տանիս։*

ՀԵՐԱՆՈՒՇ.— *Երկինք նայե անգամ մը։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Չեմ դողար։*

ՀԵՐԱՆՈՒՇ.— *Դժոխք նայե ուրեմն։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Չեմ տեսներ։*

ՀԵՐԱՆՈՒՇ.— *Մեկեն պիտի դողաս և մյուսը պիտի տեսնես. արյունս ճակատդ է, Արտաշիր, անիծյալ ես։*

ՇԱՎԱՐՇ.— *Ի՛նչ կտեսնեմ... թագուհին...*

ԱՐՏԱՇԻՐ.— *Մեռավ...*

(Պալատականք կուգան)

ԱՐՏԱՇԻՐ.— *Պալատականք, թագուհին մեռավ, սև սենյակը տարեք զինքը և քահանա մը կանչեցեք որ աղոթե ու հսկե իր վրա* (պալատականք դիակը կառնեն և խորի կողմնակաց սրահը կտեղափոխեն անկողնո մը վրա և կմեկնին)։

Ամեն բան լմնցավ, քիչ ատենեն արևը պիտի ծագե, ի՛նչ երջանիկ եղավ ինծի համար այս գիշերը... շատ քիչ անգամ զգացած էի կենացս մեջ այսպիսի սեր, զորականին աղջիկը հորը սրովը կարծես թե սիրտս խոցեց... ո՜հ, Սմբատի ամեն մեկ քայլը սրտիս բաբախմանցը հետ կտրուփեն... վաղը պիտի գա (կմեկնի, տեսարանը կմթնե):

Տեսիլ Ը

ՇԱՎԱՐՇ, (ետոտ) ՍՈՒՐՄԱԿ

ՇԱՎԱՐՇ.— *Խեղճ թագուհի... ակամա իր սպանիչը եղա... անօրեն թագավոր, դոնե ինծի ալ չմեղքցար... հիմա ի՞նչ պիտի ընեմ ես:*

ՍՈՒՐՄԱԿ.— (ներս մտնելով) *Ողջույն քեզ:*

ՇԱՎԱՐՇ.— (մեկուսի) *Քահանա մը.* (բարձր) *շուտ եկար, տեր հայր:*

ՍՈՒՐՄԱԿ.— *Պալատին առջևեն կանցնեի և զիս կանչեցին, ո՞ւր է հանգուցյալը:*

ՇԱՎԱՐՇ.— *Հոս է, տեր հայր* (դուռը կբանա և կցուցնե):

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) *Թագուհին...*

ՇԱՎԱՐՇ.— *Տեր հայր, գաղտնիք մը պիտի խոստովանիմ քեզի:*

ՍՈՒՐՄԱԿ.— *Խոսե:*

ՇԱՎԱՐՇ.— *Քիչ մը առաջ թագավորը օրհնած ջուր տվավ ինձ թագուհվույն տալու համար... բայց մեջը թույն կա եղեր:*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ուրեմն թագուհին թունավորված է, այնպես չէ՞, բայց աղեկ գիտե՞ս, ապահո՞վ ես...*

ՇԱՎԱՐՇ.— *Այո՛, տեր հայր... բայց մեղքս քավելու մի՛ մոռնար... հավատա որ ամենևին չգիտեի թե օրհնած ջուրին մեջ թույն կար և քիչ մնաց ես ալ պիտի խմեի:*

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) *Այս ապուշ է...* (բարձր) *այո՛, կնեռեմ... բայց ինձ պիտի հնազանդիս, ինչ որ ալ ըսեմ... պիտի լռես... առ այս քսակը, ահա քեզի ոսկի և քավություն:*

ՇԱՎԱՐՇ.— *Որչափ բարեսիրտ ես, տեր հայր:*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մոիկ ըրե, այս սենյակը ցած է, այնպես չէ՞:*

ՇԱՎԱՐՇ.— *Այո... բայց ի՞նչ պիտի ընես, տեր հայր:*

ՍՈՒՐՄԱԿ.— Լռե և հնազանդե։

ՇԱՎԱՐՇ.— Լավ, լավ...

ՍՈՒՐՄԱԿ.— Գիշերվան երրորդ պահուն այս սենյակին տակը պիտի գտնվիս, ես դիակը վար կիջեցնեմ և դու աչալուրջ պիտի հսկես անոր վրա ինչվան որ ես քովդ դառնամ... կլսե՞ս... եթե խոսիս կամ չհնազանդիս, գիտցիր, որ թե սոսկալի մեղքդ չեմ քավեր և թե հավիտենական անեծք կթափեմ գլխուդ։

ՇԱՎԱՐՇ.— Բայց կաղաչեմ, ի՞նչ կուզեք ընել, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Թագուհին պիտի վերակենդանացնեմ։

ՇԱՎԱՐՇ.— Ո՜հ, օրհնյալ ըլլաս, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Ուրեմն գիշերվան երրորդ պահուն... ինչվան այն ատեն խոսք մը չի պիտի ելնե բերնեդ... միայն պատվիրե, որ այս սենյակը չմտնեն... եթե ուրիշ խոսք մ'ընես, մեռած ես...

ՇԱՎԱՐՇ.— Ո՛չ, ո՛չ, տեր հայր, անհոգ եղիր (մեկուսի) և այնուհետև ի՞նչ պիտի ընե այս քահանան արդյոք (կմեկնի)։

ՍՈՒՐՄԱԿ.— Վրեժս պիտի առնեմ (սենյակը կմտնե.—պատկերը կփոխվի)։

ՊԱՏԿԵՐ Ա.

Ջորականիճ տնակը. գիշեր է գրեթե. ձեղունեն կախված կաճրեղ մը կպլպլա։

Տեսիլ Ը

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ և ՀՐԱՉՅԱ

ՀՐԱՉՅԱ.— (ներս մտնելով) Ջեմ կրնար քեզնե հեռու մնալ, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Գիտեմ, Հրաչյա, դու շատ բարեսիրտ ես։

ՀՐԱՉՅԱ.— Բայց ինչո՞ւ այդպես դեղներ ես, և գրեթե կդալկանաս... կերևի թե վիշտ մը ունիս, Շահանդուխտ... խոսե, ի՞նչ ունիս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ոչինչ, Հրաչյա, չգիտե՞ս, որ զքեզ ամեն անգամ տեսնելուս կշփոթիմ ու գրեթե կուլամ։

ՀՐԱՉՅԱ.— Բայց միանգամայն անմեղ ճակատդ վարդի գույն մը կստանար, իսկ հիմա դալկահար կտեսնեմ... մեր սիրույն համար ըլլա, Շահանդուխտ, խոսե, ի՞նչ պատահեցավ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց կվախնամ որ զքեզ ալ կտրտմեցնեմ։

ՀՐԱՉՅԱ.— Եվ միթե աշխարհի վրա տրտմություն և ուրախություն երկուքիս ալ բաժին չե՞ն. մեկտեղ մեռնիլ ուզողը պետք է որ մեկտեղ տրտմի... խոսե և ազատե զիս անհոգ ու դառն կասկածներե, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյա, երեկ իրիկուն քու մեկնելեդ ետքը...

ՀՐԱՉՅԱ.— Ե՛տքը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս բանտ տարին։

ՀՐԱՉՅԱ.— Ո՛վ երկինք, բայց ինչո՞ւ... պատճա՞ռ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Չեմ գիտեր... ո՛հ, որչափ տրտմեցա երեկ գիշեր առանձին հոս... հովերու մռնչյունեն ուրիշ բան չէի լսեր... ոչ քու և ոչ հորս ձայնը։

ՀՐԱՉՅԱ.— Բայց միթե հանցանք մը գործա՞ծ էր հայրդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Չեմ կարծեր, հայրս անմեղ էր։

ՀՐԱՉՅԱ.— Անմեղ էր և բանտ դրին... Շահանդուխտ, դուն հանդարտ եղիր, հայրդ պիտի ազատի։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Եվ ո՛վ պիտի ազատե զինքը, խեղճ և անօգ զորականմը։

ՀՐԱՉՅԱ.— Ես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Դո՞ւն, Հրաչյա, ա՛հ, ի զուր զիս խաբել կճգնիս։

ՀՐԱՉՅԱ.— Ես զքեզ խաբե՞մ... և միթե չե՞ս վստահիր իմ վրաս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, դու քաջ ես, Հրաչյա, բայց մեծ մեկը չես... մի՛ ձեռնարկեր զուր տեղը, կվնտեն։

ՀՐԱՉՅԱ.— Կսխալիս, Շահանդուխտ, չեն կրնար զիս վնտել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց չըլլա որ հայրս ազատեմ ըսելով...

ՀՐԱՉՅԱ.— Ապահով եղիր, զքեզ անօգ և անօգնական թողնելով չեմ ուզեր մեռնիլ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սակայն ի՞նչպես պիտի կրնաս ազատել զինքը։

ՀՐԱՉՅԱ.— Ես գիտեմ... դու հորդ համար աղոթե։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց դու ալ բան մը չե՞ս գուշակեր այս դեպքեն։

ՀՐԱՉՅԱ.— Հորմեդ ամեն բան կիմանանք... մնաս բարյավ, սիրելիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կերթա՞ս, Հրաչյա...

ՀՐԱՉՅԱ.— Դու ապահով և հանգիստ եղիր... քիչ մը ետքը ամեն բան տեղը կուգա։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց կաղաչեմ, շուտ դարձիր։

ՀՐԱՉՅԱ.— Կայծակեն շուտ (կմեկնի)։

Տեսիլ Ժ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ (միևնակ)

Հայրս պիտի ազատե... բայց ի՞նչպես... ո՜հ, չըլլա թե իրեն ալ վտանգ մը պատահի (դեպի խոռը երթալով) Հրաչյա, Հրաչյա՜... գացեր է... ես դարձյալ մենակ պիտի մնամ... բայց եթե նա ալ չդառնա, ա՜հ, ի՞նչ պիտի ընեմ ես հոս առանձին, ո՞վ պիտի լուր տա ինձ անոնց վրայոք... ո՞վ երկինք, ինչո՞ւ կատպալես անմեղ տնակ մը. ի՞նչ ըրի ես, ի՞նչ ըրավ հայրս... ինչո՞ւ պատուհասես զմեզ... մայր իմ, մայր իմ, եկու գոնե քու գրկացդ մեջ ապաստանիմ. եթե ուրվական ես, ո՜հ, կդողամ, կսոսկամ... բայց ինչո՞ւ կհուսահատիմ ես, մինչդեռ երկինքն Աստված մը կա, կրնա՞ անտարբեր ըլլալ անմեղին արցունքին... Աստված իմ, նեղն ինձի, եթե քու գթությունդ վայրկյան մը չմտաբերեցի... ո՞վ երկնից իմ սիրուն հայրիկ, գթա մեզի, գթա ալևորի մը և երկու մանուկներու... ե՞րբ պիտի դրկես գթությանդ հրեշտակը...

Տեսիլ ԺՍ

ՆՈՒՅՆ և ՍՄԲԱՏ

ՍՄԲԱՏ.— (ներս մտնելով) Բաբել զորականին տնակն ա՞յս է։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց ի՞նչ պիտի ընես... ո՞վ կղրկե քեզ։

ՍՄԲԱՏ.— Դու իրեն աղջի՞կն ես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՜... ի՞նչ պիտի ըսես։

ՍՄԲԱՏ.— Մտիկ ըրե, հայրդ բանտեն փախավ և իմ տունս

ապաստանեցավ, պետք է որ երթանք, հայրդ և դու գուցե հիմա ճամբա պիտի ելնեք դեպի Պարսկաստան։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց ինքը մինա՞կ է... արդյոք երիտասարդ մը չկա՞ հետը...

ՍՄԲԱՏ.— Երիտասարդ մ'ալ կա։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛հ, օրհնյալ ըլլաս, ո՛վ երկինք, այս բարի մարդն է եղեր քու գթութեանդ հրեշտակը... բայց ինչո՞ւ ինքը չեկավ քու տեղդ։

ՍՄԲԱՏ.— Ես չթողուցի, վախնալով որ կմատնվինք... բայց երթանք... վայրկյան մը հապաղումը գուցե կմատնե զմեզ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Երթանք... վարձքդ երկնքեն պիտի ընդունիս, բարի մարդ. մնաս բարով, իմ սիրելի անմեղ տնակս։

ՍՄԲԱՏ.— (մեկուսի) Հրեշտակ մը, որ դժոխք կտանի (կմեկնին, վարագույրը կիջնե)։

Ա. ՐԱՌՎԱԾ Գ

Թագավորին պալատը.— գիշեր—Ր. առաւվածին տեսարանը

Տեսիլ Ա.

ՍՄԲԱՏ եվ ՇԱՎԱՐՇ

ՍՄԲԱՏ.— Թագուհին ի՞նչ եղավ, Շավարշ... դո՞ւն ալ բան մը չտեսա՞ր։

ՇԱՎԱՐՇ.— Ինծի մի՛ հարցներ, տեր իմ, ո՛չ բան մը տեսա և ոչ բան մը գիտեմ։

ՍՄԲԱՏ.— Տե՛ր Աստված... բայց քահանան կեղծ ու ծպտյալ մեկն եղած չըլլա։

ՇԱՎԱՐՇ.— Ո՛չ, տեր իմ... շատ բարեպաշտ կերևեր։

ՍՄԲԱՏ.— Ըսել է թե տեսար զինքը։

ՇԱՎԱՐՇ.— (տատամսելով) Ո՛չ, ո՛չ... այս պալատեն ներս մտած ատենը տեսա։

ՍՄԲԱՏ.— Ե՞տքը։

ՇԱՎԱՐՇ.— Ետքը... ետքեն պատահածին բոլորովին անտեղյակ եմ։

ՍՄԲԱՏ.— Բայց ի՞նչպիսի մարդ էր քահանան։

ՇԱՎԱՐՇ.— Աստուծո մարդը, երկայն մորուք, խոժոռ դեմք, ստվար ձայն և քահանայական զգեստներ ուներ, վերջապես ճիշտ քահանա մ՝ էր։

ՍՄԲԱՏ.— Ուրիշ անգամ տեսա՞ծ էիր զինքը։

ՇԱՎԱՐՇ.— Չեմ հիշեր, տեր իմ, երազիս մեջ անգամ չէի տեսած։

ՍՄԲԱՏ.— Ես ալ անխոհեմությամբ եկեր ապուշ մը հարցափորձ կընեմ, որ հայելին նայած ատենը ինքզինքը կմոռնա։

ՇԱՎԱՐՇ.— Իրավունք ունիս, տեր իմ... անցյալ օր ավազանին քով շրջագայելու առենս ինքզինքս անոր մեջ տեսա և որչափ ձայն ունեի կպոռայի «ընկերնե՛ր, հասնեք ավազանը ընկեր եմ». անոնք ալ եկան ինս ավազանին եզրեն աստին առին և ազատեցա. հիմա ծերությունը ինս շատ ձգեց... երբ երիտասարդ էի, որսի ելած առենս եղնիկները հասնես և ես առջևեն կփախչեի. այն առեն որչափ աշխուժ և առույգ էի։

ՍՄԲԱՏ.— Լռե, շաղակրատ, ես քեզի երեկվան անցքը կհարցնեմ և դու երիտասարդությանդ հրաշքները կպատմես ինձ։

ՇԱՎԱՐՇ.— Ըսել կուզեմ թե այն առեն շատ աշխուժ էի։

ՍՄԲԱՏ.— Ինձ կբավեր, եթե օր մը միայն ապուշ չըլլայիր։

ՇԱՎԱՐՇ.— Բայց տեր իմ, դուն ի՞նչ կհարցնեիր հիմա ինծի։

ՍՄԲԱՏ.— Թշվառական, ուրեմն երբ ես քեզի բան մը հարցնեմ, դուն աչքդ բաց կքնանաս, այնպես չէ՞։

ՇԱՎԱՐՇ.— Բաց ի՞նչ կըսեիր որ...

ՍՄԲԱՏ.— Քեզի կհարցնեի, թե թագուհին մեռնելեն ետքն ի՞նչ եղավ։

ՇԱՎԱՐՇ.— Հա. ես հասկցա, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— (հետաքրքրությամբ) Խոսե...

ՇԱՎԱՐՇ.— Բայց մեկը չիմանա... աղեկ գյուտ մը մտաբերեցի. թագուհին ուրվական եղած ու փախած է դագաղեն։

ՍՄԲԱՏ.— Քու խելքդ փախած է գլխեդ, թշվառական, ես բան կհարցնեմ, դուն կատակ կընես ինծի հետ։

ՇԱՎԱՐՇ.— Ո՛չ, տեր իմ, ես մտածածս կըսեմ այս մասին։

ՍՄԲԱՏ.— Քու մտածածդ ինծի պետք չէ, տեսածդ ու լսածդ։

ՇԱՎԱՐՇ.— Եթե նույնպես է, ոչ բան մը տեսա և ոչ ալ լսեցի։

ՍՄԲԱՏ.— Բայց եթե գիտես ու կպահես։

ՇԱՎԱՐՇ.— Բնավ, տեր իմ, (մեկուսի) հարցափորձը երկարացուց, հիմա հոտը պիտի ելնե։

ՍՄԲԱՏ.— Եթե կխաբես, գիտցիր որ ձեռքես ազատելիք չունիս։

ՇԱՎԱՐՇ.— Բայց հավատա որ անկեղծ եմ, տեր իմ (մեկուսի) այն քահանան ալ ուսկից էր եկավ։

ՍՄԲԱՏ.— Շավարշ, ուրեմն բան մը չե՞ս գիտեր։

ՇԱՎԱՐՇ.— Նախ և առաջ անկեղծորեն խոստովանեցա ես այդ, տեր իմ, (մեկուսի) ազատեցա կարծեմ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն գնա, ես քեզ չհարցաքննեցի... կիմանա՞ս։

ՇԱՎԱՐՇ.— Շատ աղեկ, տեր իմ... (երթալով մեկուսի) սատանան վկա, որ դեռ բան մը չհասկցա։

Տեսիլ Ը

ՍՄԲԱՏ (առանձին)

Ի՞նչ եղած է արդյոք... չեմ հասկնար... թագուհույն դիակը աներևութացեր է պալատեն... այս գաղտնիքը դավ մ'ըլլալու է թագավորին դեմ... ուրեմն վայրկյան մը առաջ պետք է որ ես կորզեմ թագը. դյուրին է Արտաշիրը գահեն թավալել... աղմուկին մեջ դյուրին է դավադրել... փայլ մը, հրաշք մը ամեն բան կատապալե... ժողովուրդը կատե թագավորը...պետք է զարնել բազեն, աղավնիներու սիրտն ու աչերը որսալու համար. ժողովուրդն աղավնիի երամ մ'է... ամեն բան աչքիս թագ կերևի, ամեն բան ինձ թագ կկարկառե. թագուհին մեռավ և իմ թագավորությունս ազատ պիտի սկսի։ Արտաշիր աղջկան մը թևերուն մեջ շուտ կանշնչանա... երկու դիակ պետք է ինծի, թագավորը և թագաժառանգը... խեղճ Արտաշիր, խոնարհեցա առաջին փոս փորելու համար, կույս մը տվի իրեն՝ թագը մոռցնելու համար... դեռ կխոնարհեցնեմ դինքը գահավիժելու համար... հիմա ինքը սիրո բազկաց մեջ գուցե չերևակայեր թագը... (Արտաշիր Սպանդարատի հետ խոր կերևի, կանգ կառնե և մտիկ կրնե) *Արտաշիր, դու ալ ինծի խոնարհե թագդ գլուխս դնելու համար...*

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Ա՜հ... կդավե... Թշվառականը։

ՍՄԲԱՏ.— *Ա՜հ, մեկ մը թագավոր ըլլայի... Արտաշի՛ր, երջանիկ ես որ չի պիտի կրնաս թագդ Սմբատի գլուխը տեսնել... դու սիրե միշտ... թագիդ մեջ օձ մը գալարած պահվրտած է, գուցե քիչ մը ետքը վիզդ պիտի պլլվի և թագավորական արյունդ պիտի ծծե... Թող անմեղ գոհերուդ չոր ոսկրները միայն պճնեն դամբանդ, փոխանակ դափնյաց և ջահերու... քիչ մը ետքը Արտաշիր ուրվական մ'է, իսկ ես թագավոր։*

ԱՐՏԱՇԻՐ.— (ցած առ Սպանդարատ՝ Սմբատը ցուցնելով) Պետք է որ մեռնի, դեռ պալատեն դուրս չելած... կիմանա՞ս։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— (նույնպես) Հարված մը ըսել կուզես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— (նույնպես) Բավական է որ շուտ մեռնի։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— (նույնպես) Կհնազանդիմ, տեր արքա (կմեկնի)։

ՍՄԲԱՏ.— Գուցե վաղն արևը թագիս վրա պիտի ծագե։

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Գուցե գերեզմանիդ վրա, թշվառական։

Տեսիլ Գ

ՍՄԲԱՏ ԵՎ ԱՐՏԱՇԻՐ

ԱՐՏԱՇԻՐ.— (հառաչանալով) Ի՞նչ կմտածես, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Կմտածեմ, տեր արքա, թե ի՞նչ կնշանակե այս դեպքը։

ԱՐՏԱՇԻՐ.— Անհոգ եղիր, Սմբատ, կվախնաս որ թագս կամ կյանքս կկորսնցնե՞մ, է՛հ, դյուրին բան չէ կարծեմ կորսընցնելն ու ստանալը։

ՍՄԲԱՏ.— Եվ Սմբատ ալ իր թագավորը պաշտպանելու մասին բավական հաջողակ է կարծեմ, տեր արքա... ես շատ ապահով եմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Գիտեմ, Սմբատ, դու այնպես աչալուրջ կհսկես իմ թագիս վրա, որ կարծես թե քովդ է... և գրեթե քովդ։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, երջանիկն ի՞նչ աչքով կնայի այն աստեղազարդ երկնքին, որուն շուքին տակ ինքը կապրի։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց գոնե վայրկյան մ՚ալ երկինք թռչել չերևակայեցի՞ր միթե։

ՍՄԲԱՏ.— Ջիս կծաղրե՞ս, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Խեղճ Սմբատ, քու անկեղծ սիրտդ կվիրավորեմ... եթե լեզուս կսխալի, սիրտս կճանչե զքեզ... գիտեմ, արևուն ճառագայթն ալ թեպետ մաքուր է, բայց գեղեցիկ ու անբիծ ճակատ մը կրնա այրել ու սևցնել... սակայն դու անհոգ եղիր, Սմբատ, սիրտ մը դառնություններն է որ քու վրադ կթափեմ այս գիշեր։

ՍՄԲԱՏ.— Ի՞նչպես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Զորականին աղջկան վրա չկրցա իշխել։

ՍՄԲԱՏ.— Եվ դեռ...

ԱՐՏԱՇԻՐ.— Դեռ նոր կտեսնեմ թագն ատող մեկը, Սմբատ, մինչդեռ շատերը մահվան դառնցը մեջ թագը մի անգամ գրկել կերևակայեն, այս աղջիկը թե թագը և թե զիս կատե...

ՍՄԲԱՏ.— Բայց միթե թագավորի մը նայվածքը սրո հարվածեն մ'ավելի ազդու չէ՞, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ինքը գրեթե կմեռնի, զիս չսիրելու համար։ ամեն անգամուն արցունքներով կշողոքորթե զիս և պայմանաժամը կհապաղե. կամոթահարիմ ըսելու թե այս աղջիկը սիրտս իր վրա կշարժե։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, կտեսնեմ որ արցունքները սիրույդ կայծը մարելու չափ զորավոր են... այս բանը զիս կզարմացնե. գո՜ւթ... ի՞նչ ըսել կուզեն մարդիկ գութ ըսելով... թագավոր ըլլալ և աղջիկե մը հաղթվիլ, որ ոչ սուր ունի և ոչ հուր, այլ քանի մը աղի կաթիլ... կվախնա՞ս արցունքը կոխկռտելու, տեր իմ, կտեսնեմ որ հեռուեն կսիրես միայն։

ԱՐՏԱՇԻՐ.— Սմբատ, այնպիսի սրտառուչ ձայնով խոսք մ'արտասանեց, որ զիս սարսափեցուց ու սառեցուց։

ՍՄԲԱՏ.— Ի՞նչպես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Անգութ սիրտն ալ երբեմն փոքր բանե մը կհուզվի... վերջապես խոստացավ երեք օրեն սիրել զիս, խեղճ աղջիկ, գուցե կհուսա, որ երեք օրեն ձեռքես կազատի... բայց գուցե զինքն արձակեմ, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ի՞նչ կըսես, տեր արքա... մեկ մ'ալ չես կրնար գըտնել այնպիսի գեղեցիկ... կտեսնեմ որ չուրին մեջ ինկած անգին գոհար մը չես ուզեր առնել, վախնալով որ ձեռքդ կթրջի։

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Նենգավոր, կուզե սիրո բաղումնիրով կաշկանդել զիս... (բարձր) Սմբատ, ի՞նչ ընեմ ես այն գոհարը, մինչդեռ թագիս և կյանքիս կդավադրեն... թագուհվույն դիակը կանհետանա պալատեն... մեկը չտեսներ։

ՍՄԲԱՏ.— Բայց դու քիչ մը առաջ քաջասիրտ էիր, տեր արքա, է՛հ, ո՞վ պիտի արձանանա դեմդ. ժողովո՞ւրդը. ատոր ձայնը շուտ կխեղդվի արյան մեջ... դյուրի՞ն է միթե դահ մը տապալել, որո կհսկեն բանտ, աքսոր և սուր... ան-

հոգ եղիր, տեր արքա, գահդ հայեն զորավոր է. ժողովրդին բանտ, կղերներուն աքսոր և նախարարաց սուր... դարձյալ Արտաշիր թագավոր է և գուցե առաջինեն ավելի զորավոր... թշնամին ջախջախելու համար հարված և հանճար պետք է. հարվածը դու եղիր, հանճարը ես կըլլամ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հիրավի, Սմբատ, կտեսնեմ որ թագավոր մը ըլլալու չափ հանճար ունիս, պետք է որ թագավոր մ'ըլլայիր։

ՍՄԲԱՏ.— Ձիս շատ կծաղրես այսօր, տեր արքա... բայց նաև վստահ եմ, որ գոնե թագավորի մը կատարելապես ծառայելու չափ խելք ունիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Սակայն կխրատեմ նաև քեզ, որ խելքիդ վստահելով թագ մը կորզելու փորձ չիորձես երբեք, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, կտեսնեմ որ այսօր անսովոր կատակներ կգլորես (մեկուսի). ի՞նչ եղած է արդյոք, բայց ես դեռ մութին մեջ եմ...

ԱՐՏԱՇԻՐ.— Է՛հ, Սմբատ, կայծակը հարվածեն առաջ փայլակ մ'ունի... սև ամպը կմոտենա, բայց դարձյալ արևը ծիծաղկոտ է... գուցե փոթորիկ մը պիտի անցնի ճակտես. ի՞նչ ընեմ, պետք է որ խնդամ՝ շատ չվախնալու համար։

ՍՄԲԱՏ.— Մի՛ հուսահատիր, տեր արքա... փոթորիկը կանցնի և անուշաբույր անդորրություն մը կսփռե իր ետևեն։

ԱՐՏԱՇԻՐ.— Երբեմն ալ փլատակ... շանթը բարձր կգոռա ու կզարնե, այնպես չէ՞, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն պետք է խոնարհիլ երբեմն, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Երբե՛ք։

ՍՄԲԱՏ.— Գոնե սառնապատ սար մը ըլլալ, ուր շանթը կխրի ու կմարի...ուր ցասկոտ քայլերը կսահին։

ԱՐՏԱՇԻՐ.— Ճիշտ այդպես։

ՍՄԲԱՏ.— Լավ ուրեմն... կսիրեմ անգութը, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Ազեկ կընես։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն դեռ չխորհինք, տեր արքա... ձայնի մը հարված հասցնելու է, և նշանի մը հանճար։

ԱՐՏԱՇԻՐ.— Անհոգ եղիր, Սմբատ, շատ կսխալի այն, որ դեմս ելնե։

ՍՄԲԱՏ.— Հիմար մ'ըլլալու է այն, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ պիտի մեռնի։
ՍՄԲԱՏ.— Շանթի մը հարվածով։
ԱՐՏԱՇԻՐ.— Գրեթե։
ՍՄԲԱՏ.— Դեռ կխորհինք, տեր արքա։
ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ասկե առաջ դու կզարնեիր, Սմբատ, այս անգամ ես պիտի զարնեմ։
ՍՄԲԱՏ.— Դու գիտես, տեր արքա, (մեկուսի) ո՛չ, շատ կախալիս, չպիտի թողում որ խորհիս կյանքդ կամ թագդ ընտրելու, երկուքն ալ իմս են։

Տեսիլ Դ

ԱՐՏԱՇԻՐ (առանձին)

Թշվառակա՜ն... թակարդն ինկար... ի՞նչ ըրիր թագուհվույն դիակը... ուրեմն դու ալ դիակ մը եղիր... դեռ ինծի դավելու կերթաս... բայց զգուշացիր, թագի տեղ սուր մը գըլխուդ վրա կշողա... մութին մեջ գոնե ես պիտի թավալեի, բայց բախտին ջահը ինծի կօգնե... հանդարտե, սիրտ իմ, դես Հայաստան իմս է... դիակներով լեցուցի այն փոսը, զոր ինծի համար կպատրաստեին սև ձեռքեր... Սմբատ պալատեն դուրս չի պիտի ելնե... հոն է Սպանդարատ, Սմբատի ճամբուն վրա, սուրը կփայլատակե... զա՛րկ, զա՛րկ... թող թավալի իր սև գանգը փառահեղ երազներու մեջ... կարմիր կոհակ մը զայն գերեզման գլորե և իր հետին հառաչը ճակտիս սև ամպը ցրվե։
ՍՄԲԱՏ.— (դրսեն օրհասականի ձայնով) Տե՛ր արքա, տե՛ր արքա...
ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ... անոր ձայնն է... կմարի... Սպանդարատ զարկավ։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆ և ՍՊԱՆԴԱՐԱՏ

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ ըրիր, Սպանդարատ։
ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Ինչ որ հրամայեցիր, տեր արքա։
ԱՐՏԱՇԻՐ.— Զարկի՞ր։
ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Մեռավ։

ԱՐՏԱՇԻՐ.— *Առ այս քսակը։*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Շնորհակալ եմ, տեր արքա* (կառնե)։

ԱՐՏԱՇԻՐ.— *Աներևույթ ըրե իր դիակը։*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Կհնազանդիմ, տեր արքա* (երթալու կըլլա)։

ԱՐՏԱՇԻՐ.— *Կեցի՛ր... այսուհետև իմ զինակիրս ես... զգուշացիր, օր մ՚ալ քու գլուխդ ուրիշի մը ձգել կուտամ։*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Վատահե սրտիս և սրույս վրա, տեր արքա։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ջքեզ ալ կճանչեմ։*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Ուրիշ հրաման մը, տեր արքա։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Հսկե թագավորիդ...*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Գլուխս քուկդ է, տեր արքա։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Գնա՛, (Սպանդարատ կխոնարհի և կմեկնի) հաղթեցի... Շահանդուխտ, քու մեկ համբույրդ բավական է ճակատս վեհաշուք պսակելու... դահինին աշխարհակալին, ես վարդը կսիրեմ. արևը թշվառին, ես քու ժպիտը կխընդրեմ. քնարը փառավերին, ես քու սիրտդ կուզեմ. երկինք հիմարին, ես զքեզ կպաշտեմ (պատկերը կփոխվի)։*

ՊԱՏԿԵՐ Ը

Գիշեր է.—Փառնեռսենի պարտեզը.—Մեծ ու փառավոր սրահ մը.— Տեսարանը բացված ատենը բոլոր նախարարները շրեղ սեղանի մը բոլորտիք շրջապատած են և գինիի գավաթներ առած ձեռքերնին նետելը կերգեն.

Տեսիլ Ձ

ՓԱՌՆԵՐՍԵՆ, ՎԱՉԵ, ՀՄԱՅԱԿ, նախարարք և զորապետք

Ակոռիի հաղցր է գինին,
Որով հրճվի ավագանին,
Խմեն ապրին հայն, Հայաստան,
Մարտի օրեր տեղի բող տան։

Կեցցե՛ն հավերժ իշխանք հայոց,
Վառին փառաց ճաճանչ ու բոց,
Եվ Հայաստան մնա անսասան,
Ցիծխանության Առտահունյան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Հայաստանի կենացը։

ԱՄԵՆՔԸ.— Հայաստանի կենացը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Թագավորին բարուց ուղղությանը։

ԱՄԵՆՔԸ.— Թագավորին բարուց ուղղությանը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Աղջկանս կենացը։

ԱՄԵՆՔԸ.— Թագուհվույն կենացը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ամենուս ալ կենացը։

ԱՄԵՆՔԸ.— Այո՛, ամենուս ալ կենացը (կխմեն)։

ՎԱՉԵ.— Իշխանդ Սյունյաց, ես ալ առանձին գավաթով մը ծննդյանդ տարեդարձը և երկար կյանք կբարեմաղթեմ (կխմե)։

ՀՄԱՅԱԿ.— Ես ալ Արծրունյաց իշխանին համամիտ և համախոհ եմ (կխմե)։

ԱՄԵՆՔԸ.— Մենք ալ նույնպես (կխմեն)։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ես ալ իմ հանդեսս պատվող հանդիսականաց շնորհակալության և երկար կենաց գավաթ մը ահա կբամեմ։

ԱՄԵՆՔԸ.— Կեցցե իշխանն Սյունյաց։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Կեցցիք և դուք, իշխանք և զորապետք... այս հանդեսը թող մեր մեջ անմոռաց մնա, այս սեղանը որ խաղաղության և սիրո բագին մը կներկայացնե... մանավանդ զձեզ հոս հրավիրելուս պատճառն ուրիշ բան չէր, այլ գրեթե ազգին վիճակին վրա խոսելու և խորհելու, կտեսնեք որ Արշակունի հարստությունը կտատանի։

ՎԱՉԵ.— Իշխանդ Սյունյաց, ավելի աղեկ է որ ամեն իշխան իր տերությանը վրա խորհի, բոլոր ազգին համար խորհիլ թագավորին կպատկանի. մենք մեր վիճակը բարվոքել և փառավորել ջանանք... ի՞նչ կըսեք։

ՀՄԱՅԱԿ.— Ամեն բանի մեջ միշտ համակարծիք գտնված ենք, իշխանդ Արծրունյաց... կգովեմ քու գաղափարներդ, որոնք իրավացի են... մեզի ի՞նչ հոգ... ապագան թագավորը պիտի դատապարտե, որ հայուն թագը գրեթե կանանց ոտնակոխ ընել կուտա։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ճշմարիտ է... բայց իբրև հայ պե՞տք է որ թագավորին դեմ ձայն և ազգին դեմ ջանք չղլանանք. եթե թագավորությունը տապալի և թշնամիները Հայաստանը հաղթական

քայլերով չափեն... ի՞նչ պիտի ընենք մենք. թակարդն ինկած առյուծներու պես բերդերու մեջ ապաստանած պիտի մռնչենք.... վերջապես մեր բաժինը պիտի ըլլա կամ շղթա և կամ մահ... իսկ արծիվն ազատ պիտի սավառնի կարմիր դաշտերու, ավերակներու և դիակներու վրա։

ՎԱՉԵ.— Իշխանդ Սյունյաց, կտեսնեմ որ դինիին մեջ Հայաստանի արյունոտ անկումը կերևակայես... է՛հ, ուրեմն, կեցցե դինին, որ արյուն կներշնչե, շատ կսիրեմ ես զայն, վասնզի ցամքած երակներու մեջ արյուն կտեղափոխե։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Իշխա՛ն, կտեսնեմ, որ դու ալ գավաթ մը դինիի համար կաթիլ մը արյուն կուտաս և հայության թագին համար քրտինք մը դրեթե կզլանաս։

ՀՄԱՅԱԿ.— Բայց ներե, իշխանդ Սյունյաց, կարծեմ մենք հանդեսի և տոնախմբության համար հոս եկանք և ոչ թե դինին արյան հետ խառնելու, սեղանը գահին հետ կցելու և ապագայի մը ուրվականով մեր հանդեսը զարհուրելու համար... եթե ժամանակը գա, փոթորկին փայլակներուն հետ կմիավորենք մեր սուրերուն փայլը։

ՎԱՉԵ.— Շատ լավ խոսեցար, իշխան։

ՀՄԱՅԱԿ.— Եվ կարծեմ իրավացի։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այնպես է... ուրեմն դեռ խմենք, տյարք։

ՎԱՉԵ.— Այո՛ խմենք... կեցցե Նոյ Նահապետ, որ դինին հնարեց։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց դեռ որո՞ւ կենացը պիտի խմենք։

ՀՄԱՅԱԿ.— Ամենքնիս ալ փոփոխակի իրարու կենացը համար։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ուրեմն ամենուդ կենացը (կխմե)։

ԱՄԵՆՔԸ.— Սյունյաց իշխանին կենացը (կխմեն)։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Հիրավի եթե Սահակ կաթուղիկոս իմանա, որ մենք հոս դինիի և զվարճության մեջ կլողանք, մինչդեռ ինքը գիշերվան աստղերուն հետ հայության արցունքները կհամրե, գլուխն ու թևերը բացած մեզ համար պիտի աղոթե։

ՎԱՉԵ.— Ձգե՛ սա հայրենամոլ կրոնավորը, որ փայտե խաչով մը Հայաստանը փառավորել ու վերականգնել կերազե, և ահեղ սուրե մը գերազոր հաստատել կուզե խաչ մը, որ չնչին հարվածե մը կկորտակի և Պարսկական հուր մը զայն շուտով կրնա լափել։

ՀՄԱՅԱԿ.— *Ճշմարիտ է... իբրև հաղթության դրոշակ մը ըմբռնած է զայն։*

ՎԱՉԵ.— *Եվ ինքզինքն անզարդ թագավոր մը... Աստվածունի թագավոր։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Հիրավի նա գրեթե անարդ ժողովուրդը մեզնե ավելի կհարգե, մենք որ Հայաստանի փառաց և հաղթության դրոշակակիրներն ենք, նա ավելի կսիրե ցնցոտիի տակ գտնվող հոգի մը՝ քան թե ծիրանիի տակ ծածկվող սիրտ մը... արդեն սգազգեստ, կարծես թե Հայաստանի վրա հեծող տխուր նոճի մ'է, որ կշարժի ու կմռնչե միայն։*

ՎԱՉԵ.— *Սխալ... Հայաստանի հայրենանվեր հոտապետն է նա։*

ՀՄԱՅԱԿ.— *Եթե սև վարդ եղած ըլլար, վարդապետ պիտի դոչնի զինքը... իրավունք չունի՞մ, իշխան։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Կեցցես, խիստ սքանչելի գյուտ մ'ըրիր։*

ՎԱՉԵ.— *Հիրավի... տյարք, մոռցանք մեկուն կենացը խմելու։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Եվ ո՞վ է այդ։*

ՎԱՉԵ.— *Նույն իսկ գինին։*

ՀՄԱՅԱԿ.— *Ուրեմն խմենք (գավաթները լեցնելու կըլլան. դուրսեն հետևյալ երգը կլսվի)։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Բայց ի՞նչ ձայն է այս... մոխիկ ըրեք...*

Հայոց աշխարհ, հաջաց որոան,
Ինչո՞ւ այդպես սուգ ես առեր.
Ո՞ւր հու նախնի փառաց արև,
Պայծառ կամարդ սուգ է պատեր։

Չիմ սպայիցդ գունդ սուրճավ,
Եվ ոչ կամարդ հաղթանակացդ.
Փոխան նոցա գերեզմանմ այավ,
Ցրված ի սփյուռ յերեսս դաշտացդ։

ՀՄԱՅԱԿ.— *Գեղեցիկ ձայն...*

ՎԱՉԵ.— *Խենթ կին մ'ըլլալու է... գիշեր ատեն մինչդեռ ամեն մարդ և բնությունն իսկ կլռե... բարձրաձայն լալը խենթի գործ է։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Կամ գուցե մուրացկան մ'ըլլալու է։*

ՎԱՉԵ.— *Բայց դարձյալ անխելք։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այնպես չէ, իշխան, գիշերվան լռության մեջ կգոչե, որպեսզի երկինք իր ձայնը լսե։

ՀՄԱՅԱԿ.— Իրավունք ունի, իշխանը։

ՎԱՉԵ.— Խեղճը չդիտե որ երկինքը վառ, բայց անտարբեր աչեր ունի միայն... մենք ալ անտարբեր ականջ։

Տեսիլէ

ՆՈՒՅՆՔ և ՋԱՐՄՈՒՀԻ

ՋԱՐՄՈՒՀԻ.— Օրհասական Հայաստանն է ձայնողը, հայոց իշխաններ։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ո՞վ է այս կինը։

ՎԱՉԵ.— Սա մուրացկանն է անշուշտ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Որ հայրենասիրություն կմուրա։

ՎԱՉԵ.— Գավաթ մը գինի կա, գոհ կըլլա՛ս... եթե ոչ՝ գնա՛։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Կվախնաս արյուն տալու Հայաստանի երակացը։

ՎԱՉԵ.— Ջեզի չըսի՞ արդեն որ այս կինը խենթ ըլլալու է։

ՀՄԱՅԱԿ.— Աղեկ գուշակեր ես, իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Չեմ հասկնար, կին դու, ի՞նչ ըսել կուզես։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Արշակունյաց դափաղին համա՞ր կվառեք այս ջահերը... խենթ եմ ես, խենթ կոչելով կուզեք ճշմարտության ձայնն անարգել ու խեղդել. հայոց իշխաններ, ամենքնիդ մեկ մեկ ազգ եղած՝ հայ ազգը վերջապես պիտի տապալեք և ձեր շիրիմներուն վրա լքյալ ապագան կապարյա մատներով անեծք պիտի դրոշմե, և իր նայվածքին առջև ձեր մաշած ոսկորները պիտի դողդողան... կխնդաք... բայց ամպերը կդիզվին, քիչ ատենեն կայծակը պիտի որոտա։

ՎԱՉԵ.— Կզարմանամ որ խենթի մը պատգամներուն ունկնդիր ըլլալով կմոռնանք գինին ու խնդումը, իշխանդ Սյունյաց, օ՛ն, գինին մեզի կխոժոռի և իր կրակոտ նայվածքը կհանդիմանե զմեզ։

ՀՄԱՅԱԿ.— Իշխանն իրավունք ունի. արդեն գիշերը կտարաժամի և ապարանին ջահերը քիչ ատենեն կմարին, մեզի համար շատ սուղ է այս փառավոր գիշերը... իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ուրեմն թողեք որ երթա։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ո՞ւր...այն վլատաակներուն մեջ ուր շատ հեծեցի, այն նախնի դյուցազանց շիրիմներուն քով, որոնք շատ Թրջեցի... Հայոց իշխաններ, Հայաստանն է որ աղիքներուս մեջեն կհեծե... շատ կսխալիք. այն զոր մուրացկան և խենթ կկարծեք և վրան կխնդաք, երբեմն թագի մը տակ լացած է հայուն ու Հայաստանի վրա։ Ես զձեզ կճանչնամ և դրեթե ամենքնիդ ալ զիս կճանչնեք, բայց ցնցոտիի տակ ձայնը ու փառքը կմարի. հայոց իշխաններ, դուք գինի կխմեք, ջահեր կվառեք, Հայաստանի կյանքը կթունավորեք, փառքը կմարեք... դուք կխնդաք, հայությունը գերեզմանի մը շուրջը կդողդողա... երբ փոթորիկը պայթի, նախ աղբատին հյուղակը կտապալի, այնպես չէ՞... Ձեր ապարանները ոսկի սյուներ ունին բայց դողացեք այն յուրաքանչյուր սյունին եաևը մեկ մեկ սոսկալի ուրվականներ պահ-ված են, որ օր մը անշուշտ ձեր սիրտն ու խիղճը պիտի բզքտեն... դարձյալ կկրկնեմ, այն որ ձեր դիմացը կտեսնեք, մուրացկան չէ, այլ կին մը զոր կճանչեք դուք։

ՎԱՉԵ.— Այո թագուհի մը... մութի մեջ սավերներու թագուհի։

ՀՄԱՅԱԿ.— Խենթ մը ազատ է նաև Աստվածուհի մ'ալ ըլլալու, իշխան։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ա՜հ, ես միշտ խենթ... դուք միշտ անսիրտ. ուրեմն ի՞զուր կգոչեմ։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Պալատականք, դուրս հանեցեք այդ կինը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դու ալ զիս կվռնտես իբրև խենթ, ինչպես Արտաշիր պալատեն... դեռ ողջ եմ ես և կհեծեմ... Փառներսեհ, չճանչցա՞ր Զարմուհին, այնպես չէ՞ (բարկացած կմեկնի)։

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ ԲԱՅՑ ՋԱՐՄՈՒՀԻԷՆ

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— (զարմացած) Մայր թագուհի՞ն։

ՀՄԱՅԱԿ.— Ի՞նչ կըսես, իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այո՛, մուրացկան կամ խենթ չէ նա, այլ նույն ինքը Զարմուհին։

ՎԱՉԵ.— Բայց նա պալատեն արտաքսվելեն վերջը գրեթե անհետացավ և մեռած հրատարակվեցավ։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Եվ ահա այդ պատճառով է, որ գինքը չկրցա ճանչել։

ՀՄԱՅԱԿ.— Իսկ եթե ճանչնայիր, ի՞նչ պիտի ընեիր։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Գինքը չէի նախատեր այսպես։

ՎԱՉԵ.— Ըսել է որ թագավորը զրպարտությամբ գինքը խեղճ հրատարակեց։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Կհավատամ... վասնզի աղեկ կհասկնամ, որ խեղճ չէ։

ՀՄԱՅԱԿ.— Բայց ուսկից էր, որ այս գիշեր պաղ ուրվական մը մեր հանդեսին մեջ նետվեցավ։

ՎԱՉԵ.— Ճշմարիտ է... որչափ դժբախտ ենք եղեր, իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Օ՛ն, իշխանք և զորապետք, շարունակենք խրնդումնիս, չեմ ուզեր որ իմ ապարանիս մեջ ջահ մը մարի կամ սիրտ մը տխրի այս գիշեր, որ մեզ համար միության խանձարուր մ՛է, զվարճության համեստ թագուհի մը, խաւար մը, ուր կգլորի անցյալը իր կնճռոտ ճակտովը, ուրմեն խմենք ու խնդանք, մինչդեռ ողջ է Հայաստան, մինչդեռ սուրն ազատ կշարժի մեր մեջքը։

ՎԱՉԵ.— Հիրավի, իշխան, զվարճությունն ազատներու և իշխաններու համար է. մեր ձեռքը գինիի գավաթ կշողշողա և ժողովրդին ձեռքը՝ սուր. նա կզարնե, մենք կխմենք... նա գինին արյուն կկարծե, կպատկառի այն ծիրանիեն, որ իր կանգնած հաղթության դրոշն է։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Իշխանք և զորապետք, մինչև առավոտ սեղանակիցներս եք (խմելու կսկսին)։

Տեսիլ Թ.

ՆՈՒՅՆՔ և ՍՈՒՐՄԱԿ

ՍՈՒՐՄԱԿ.— (դռանը մեջ կերևի՝ պատաճիով դիակը կանգնեցուցած) Ի՞նչ է այս, ուրախության գավաթներու բաղխյուն, ծիծաղներ ու ջահեր։ Այսպես իշխանին ապարա՞նն է այս... Թագավորի պալատն ու այս ապարանը միավորող ճամբան ջահազարդ կվառի, մինչդեռ ուրվական մը կանգնի կապրդի անկե ծաղիկ ու ճրագ կոխկռտելով... գիշերվան մթության մեջ գերեզման մը կգոցվի և միայն երկնից

աստղերը կտեսնեն ու կուլան... միայն արդար մը այն պաղ քարին և հոր մը սրտին վրա կդնե իր ձեռքը... ի՞նչ է այս, մարեցեք այս ջահերը, տապալեցեք այս սեղանը... հիմարներու պես դերեզմանի մը վրա կծիծաղիք... չե՞ք հարցներ թե ո՞վ ես, ի՞նչու համար եկեր եմ հոս։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ասես, ո՞վ ես դու, և ի՞նչ ընելու եկար, երկնքե՞ն կուգաս թե դժոխքեն... ի՞նչ ես դու... պատասխանե։

ՍՈՒՐՄԱԿ.— Թող մարեն այս լույսերը և պիտի տեսնեք... թող մարեն այս լույսերը և վրեժխնդրության ահեղ ճրագը թող վառի քու սրտիդ մեջ, իշխանդ Սյունյաց (թող կուտա դիակը որ թավալգլոր կիյնա)։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ի՞նչ է այդ։

ՍՈՒՐՄԱԿ.— Տե՛ս և պիտի գիտնաս (Փառներսեհ կերթա ապարանքը կբանա, կդիտե և սարսափած ճիչ մը կարձակե) *ճանչցա՞ր դինքը։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Աղջիկս է...

ԱՄԵՆՔ.— Թագուհի՛ս։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ո՞վ սպաննեց դինքը. դո՛ւ, անօրեն...

ՍՈՒՐՄԱԿ.— Թույնը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Նվ թույն տվող ձե՞ռքը։

ՍՈՒՐՄԱԿ.— Արքայական մական մ՚ունի

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Թագավո՞րը։

ՍՈՒՐՄԱԿ.— Կդողա՞ս։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Սրբեք։

ՍՈՒՐՄԱԿ.— Ուրեմն։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Վրե՜ժ...

ՍՈՒՐՄԱԿ.— Քաշե սուրդ։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ո՞վ ես դու։

ՍՈՒՐՄԱԿ.— Պիտի գիտնաս։ (Վարագույրը կիջնե)։

Ա ՐԱՐՎԱԾ Դ

Թագավորին պալատը.— Գեղեցիկ սրահ մը.— Խորը բաց պատուհան մը, ուսկից ընդարձակ դաշտ մը և հորիզոնը կերևի.— Արևը դեռ նոր կծագի.— Խորը հոյակապ արձաններ.—Շահանդուխտ կողմնակի ննջասենյակեն դուրս կելնե:

Տեսիլ Ա

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ (միևնակ)

*Ահա արևը կծագի... բայց իր ճառագայթները չեն կրնար իմ սառած կուրծքիս թափանցել... ի՜նչ գեղեցիկ են առավոտյան մրմունջները... ավա՜ղ որ չեն կրնար զիս օրորել... սոխակին արցունքներն ալ բարդ մը սառ կավելցնեն կուրծքիս վրա... ա՜հ, որչափ երջանիկ է այն, որ ազատ կթռչի... մինչդեռ տերևի մը կամ բունի մը փետուրի տակ ազատ սիրտ ու ձայն կա, հոս անոք աղջիկ մը զորավորի մը երկաթե ձեռքերուն ներքև կաշկանդված ու ճնշված է. սոխակը կուլա դիշերը, բայց շուտ մը արևը կծագի և կտեսնե վարդը... ո՞րն է Թշվառին արևը, ե՞րբ պիտի տեսնեմ զքեզ, Հրաչյա՜... հայր իմ... երկու օր, երկու գիշեր է որ Թագավորի մը կամ դահճի մը ժժգալի դեմքը պաղած կարճանանա դիմացս, նա իր սիրտ մեջ կմոնչե, մինչդեռ ես կուզեմ լալ... հոս Թշվառին ձայնը կմարի... այս շենքին բնակիչ սա արձաններն ալ բռնության և անիծից կռթնած կքալեն... կքալեն դեպի դժոխս, անոնց ձեռքերն ալ արյունոտ են... որչափ կատրերին իրարմե հյուղակն ու պալատը... երկուքին մեջտեղ վիհ մը կա, որուն

մութին մեջեն ջահ մ ձեռին կարձանանա արդարությունը. հյուղակը հովեն կսարսի, իսկ պալատը՝ ոճիրներեն... ո՞վ պիտի ազատե զիս այս դժոխքեն... (կերբա պատուհանեն կնայի, հանկարծ ապշած ու խռոված տեսարան կուգա) ա՜հ, հոն... վարը, տեսա, հայրս էր կարծեմ... (նորեն կերբա նայելու) զիս տեսավ... բայց ինքը բանտն էր...

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆ և ԱՐՏԱՇԻՐ

ԱՐՏԱՇԻՐ.— Կանուխ արթնցեր ես, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ, (բարձր) գիտես որ չեմ կրնար քնանալ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հիրավի սա մոտակա անտառին առավոտյան մըրմունջները և հովիվներու սրնգաց ձայները կստիպեն որ ընդոստ ելնես անկողնեն, արշալույսին առաջին ճառագայթներուն հետ քու անուշ նայվածքդ խառնես և քու սիրավառ սրտիդ բաբախումը սոխակին գեղգեղին հետ հյուսես... հիրավի, միթե գեղեցիկ չե՞ն պալատն ու թագավորի մը աղերսը... կարծեմ շատ անգութ կվարվիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜վ թագավոր, սոխակը վանդակին մեջ չերգեր ու կը մեռնի. ավելի կընտրե թառիլ անտառին տերևներուն մեջ քան թե թրթռալ վանդակին ոսկի թելերուն մեջ. չեն փակեր սոխակը, գիտնալով որ կմեռնի. նա միայն տերևի մը ապաստանած է, իսկ ես սրտի մը, որ անշուշտ հիմա կուլա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ո՞վ է այդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՜յր մը... գթությո՞ւն, տեր արքա, կպաղատիմ... թո՛ղ զիս։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ես կսիրեմ զքեզ, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Եվ հորս դրկացը մեջ, տեր արքա, ես ալ զքեզ։

ԱՐՏԱՇԻՐ.— Պիտի սիրես... ուշ... բայց ես հիմա կմոռնչեմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ... կսոսկամ։

ԱՐՏԱՇԻՐ.— Ո՛չ այնչափ՝ որչափ մահվանե։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ի՞նչ ըսել կուզես։

ԱՐՏԱՇԻՐ.— Դու կըսեիր թե սոխակը վանդակին մեջ կմեռնի։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, կզգամ որ պիտի մեռնիմ չսիրելու համար։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց մինչև ե՞րբ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հավիտյան... տե՛ր արքա, եթե կուրծս պատռես սիրտս ձեռք ձգելու համար, պիտի տեսնես որ ափ մը արցունք պիտի կարի այն ձեռքերուդ մեջ, հոն թաւիե քու սիրույդ մոխիրները, և ահա ես եմ այն, ափ մը կավ, ուր մարած է կայծն ու գեղեցկությունը. կրնա՞ս վերաստեղծել զայն։

ԱՐՏԱՇԻՐ.— Ես Աստված մը չեմ... այլ թագավոր մը, որ կսիրե ու չսպաններ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն բա՛ց ինծի այս պալատին մարմարյա դռները։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, չե՞ս հասկնար... կսիրեմ զքեզ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Իսկ ես կմեռնիմ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց դու դեռ նորատի ու գեղանի ես... տես ոսկեհուռ ծունկերս քու առջիդ կչոքին, մինչդեռ վատ կհամարիմ ինքզինքս Աստուծո մը առջև խոնարհելու... եթե դիս չի պիտի սիրեիր, ուրեմն ինչո՞ւ համար այդչափ գեղեցիկ եղար... այդ սիրո կայծերդ սիրտս վառեցին... եթե քեզի նման գեղջուկի մը տված ես սիրտդ, թող նա ինծի տար իր բահը և ես իրեն կուտայի գահս, միմիայն քեզնե սիրվելու համար... խոսե՛, Շահանդուխտ, ի՞նչ պետք է որ ընեմ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բաժնվինք իրարմե, տեր արքա... առջի պես դարձյալ դուն թագավոր, ես գեղջկուհի... դուն քու պալատդ, ես իմ տնակս։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդո՞ւխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն ի՞նչ ընեմ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Հիրավի փշոտ վարդ մ'ես եղեր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, վարդին բացած վերքերը դեռ չբուժած՝ ինքը կթոռմի։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց եթե դուն փուշ և սուր, կայծակ և մահ ալ ըլլաս, դարձյալ պիտի սիրեմ զքեզ, քանի որ գեղեցկության մեջ սիրո ժպիտ մը եղար ու սիրտս գրավեցիր... եթե ես չեմ կրնար գեղջուկ մ'ըլլալ, գոնե դուն թագուհի եղիր և քու սիրո ժպիտովդ լույս տուր թագի տակ նսեմացած ճակտի մը, դիր ձեռքդ ծիրանիի տակ հեծող սրտի մը

վրա, Աստուծո տար հոգի մը, որ ադամանդներու մեջ դժոխոց բոցերը կերևակայես... Շահանդուխտ, գրկե զիս և եթե կուզես՝ դերեզման ալ տար... հոն առաջնորդե զիս, ուր քու սիրտդ կհոլաթևե ու կսավառնի։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, թևերս փետրազերծ են, և դու թռի՛ր կրսես ինծի։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, ահա քեզի ոսկեզարդ պալատ, փառք և ճոխութիւն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ես իմ տնակս կուզեմ... տեր արքա, ես կուլամ, դու մարգարիտ կխոստանաս, ես ինչ ընեմ գոհարները, մինչդեռ ալևոր հորս անդին արցունքները դիրկս թաթիլեն կզրկվիմ... հիմա թշվառ հայրս գերեզմանին եղրը դուցե կդողդողա՝ հառելով նայվածքն այն հորիզոնին, ուսկից զիս ձևակերպող աստղը նշմարեց.. .մինակ է նա, զիս և գերեզման մ'ունի միայն, բայց երկուքին մեջ փալփլող դեղեցիկ աստղ մը, որ իր վերջին դողդոջ քայլերուն պիտի առաջնորդեր, հիմա իրեն համար մարած է այն, մարած է ալեզարդ և կնճռոտ ճակտի մը ժպիտը։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, նախ զիս գրկե, որ հետո հայրդ ալ գրկես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ... ծերունիի մը թառամ ճակտին թառամ ծաղի՞կ կվայելեցնես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Է՜հ, ի՞նչ ընեմ, կսիրեմ զքեզ սրտիս խորեն... փըշրե ոտքերուդ տակ թագիս գոհարները և մի՛ մերժեր սիրս, բարձրացիր գահս և մեկ մը ժպտե ինծի... առանց քեզի, ես թագավոր չեմ կրնար ըլլալ, այլ շողշողուն դիակ մը, որ զուրկ է արևեն... դու արև, ես ալ վհին մեջ ինկած մարդ մը գրեթե, որուն կզլանաս ճառագայթդ. սոխակ մ'ես դու, որ թագի մը գոհարներն արհամարհելով՝ վարդին սուտ մարգարիտներուվը խաբվիլ կուզես... որ մթին անտառին խորերը կախորժիս թառիլ, բայց եթե սոխակն ալ քեզի պես գեղեցիկ ըլլար, սեի ու տերևի տակ չի պիտի թաքչեր, այլ սրտերը շարժելեն զատ պիտի թովեր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, այդ խոսքերով ավելի կզարհուրեցնես զիս... ավելի աղեկ կընես, երբ ինծի տգեղ ես ըսես և պալատեդ դուրս ընես. կտեսնես որ չեմ սիրեր զքեզ.

խնայէ ալևոր հորս, որուն մազերը բախտին շանթին անընդհատ գործած ավերակաց մոխրովը ճերմկցան... աշխարհիս վրա եթե ամենասիրելի մեկն ունիս, անոր սիրուն համար ըլլա... թո՛ղ զիս։

ԱՐՏԱՇԻՐ.— *Ամենասիրելիս դու ես, քու սիրո՞ւդ համար թողում զքեզ, մինչդեռ դու չես սիրեր զիս... եթե թողում զքեզ, պիտի մթագնի այս պալատը, եթե ջահեր ալ վառվի... սոսկալի կըլլա գիշերը, երբ լուսինը չը թագավորեր, լուսնի շաղովը ողողված գերեզմանին վրա անթիվ հուլսեր կթռչտին, իսկ մութին մեջ գերեզմանը դժոխոց դուռ կձևանա... առանց քեզի կզզվիմ ու կսոսկամ ես այս պալատեն, որուն մարմարյա կամարներուն մեջեն անմեղներուն արցունքները շիթ առ շիթ կկաթին և այս ծիրանիի վրա արյունոտ ոսկորներ կերևին աչերուս... մի՛ մերժեր զիս, թագավոր, մ'է որ քեզ կպաղատի, թագ մ'է, որ առջիդ կծռի... պիտի սիրե՞ս զիս... վերջին խոսք մը, Շահանդուխտ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Տեր արքա, մանկիկն ալ թիթեռնիկին սիրահարն է, բայց շատ անգամ զայն կմեռցնե։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Բայց դու իմ հոգիս պիտի ըլլաս։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Տեր արքա, տարփածուս չեղած, սպանիչս եղիր։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Շահանդուխտ, վերջապես դու իմս պիտի ըլլաս... կհասկնա՞ս։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Տեր արքա, եթե կաթիլ կաթիլ արյունս քամես, դարձյալ անմեղ պիտի մնամ։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Հայրդ բանտին երկաթներուն մեջ կամ ձեռացս մեջ է... կուզե՞ս վերջապես իր դիակը տեսնել։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Ա՜հ... ո՛չ, ո՛չ... հայրս թող ապրի։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ուրեմն ալ իմս ես։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Ո՜հ, Աստված իմ... Աստված իմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— (*մեկուսի*) *Ոտքի ձայն մը կա... ո՞վ է այն...*

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ՍՊԱՆԴԱՐԱՏ

ԱՐՏԱՇԻՐ.— *Ի՞նչ կա, Սպանդարատ։*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Տեր արքա...*

ԱՐՏԱՇԻՐ.— Խոսե՛։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Սահակ կաթուղիկոս...

ԱՐՏԱՇԻՐ.— Շարունակե՛ ուրեմն։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Եկած է և վեհափառությանդ հետ կուզե տեսակցիլ։

ԱՐՏԱՇԻՐ.— Անեծք... չե՞ս կրնար դինքը ճամբել։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Արդեն մեծ դահլիճը մտած է, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— (բարկացած) Սպանդարա՜տ...

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Պահնորդները քու հոս ըլլալդ արդեն կաթուղիկոսին իմացուցած էին, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Վռնտե՛ շուտ այդ անպիտան մարդիկը։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Գլխուս վրա, տեր արքա (երթալու կըլլա)։

ԱՐՏԱՇԻՐ.— Կեցիր... օրիորդը թագուհվույն սենյակը տար։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (արտասվալից) Տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Թագուհի պիտի ըլլաս (Սպանդարատ զայն կտաճի)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի սոսկմամբ) Ո՜հ, ո՛չ...

ԱՐՏԱՇԻՐ.— (առանձին) Խաչն ինծի միշտ խոչընդոտ է. կամ ես պիտի ջախջախիմ կամ զայն պիտի ջախջախեմ վերջապես... գիտեմ, դեռ զոհ պետք է գահիս անպարտությանը համար։

Տեսիլ Դ

ԱՐՏԱՇԻՐ և ՍԱՀԱԿ

ՍԱՀԱԿ.— Ա՛լ բավական է տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Բարի եկար, Սրբազան հայր... տեսնենք ի՞նչ լուր ունիս։

*ՍԱՀԱԿ.— Արյան մեջ վարդ կբուսնի՞, տեր արքա, փլատակը կժպտի՞ միթե... այնպես է, խավարին մեջ սև ամպը չընշմարվիր. վասն զի ինքն ալ խավարին մեկ մասը կկազմե... տեր արքա, դու արդյունք կտրսկես և կուզես մարգարիտ ժողվել... արդեն խորհրդավոր ձակատագիրն աչերուս կաթիլ և հոգվույս բարբառ տվավ հայությունը լալու ու ողբալու համար միայն. օրորոցիս մեջեն տեսա այն աստղին շողշողումը, որ գերեզմանիս սև կամարին վերև կմարի... Թանձրացան ամպերն ալևոր ճակտիս վրա, կայծակ

մը կարող է զիս հավիտենականության մեջ գլորելու, բայց Հայաստա՞նը... արդեն անոր դագաղը շրջապատեցին դյուցազանց ուրվականները... սոսկա՛, տեր արքա, հայրդ կանգնեց, դու կկործանես... Վռամշապուհ լուսո և հիշատակաց մեջ մնաց, իսկ Արտաշիր խավարի և փլատակաց մեջ պիտի իյնա։

ԱՐՏԱՇԻՐ.— Սրբազան հայր, կարծեմ յանիրավի կդատապարտես թագավոր մը, որուն հետ ո՛չ թե Հայաստանը, այլ նա Հայաստանի հետ կիյնա... ինծի ո՛չ թե Հայաստանը, այլ թագ մը տվիք, եթե Հայաստանը չինալու համար թագս կուզեք, առեք զայն։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, այն գահը՝ ուր ելար, տաճար մ'էր, իսկ այն գոր կթողուս, դագաղ մ'է... պալատեն ու անտառեն, **աերեն և սրտեն ուրիշ ի՞նչ տեսար ու գործեցիր**... միայն հայության գերեզմանը փորելու համար գործածեցիր սուրդ. նախնյացդ այս վեհավայրը անառակությամբ և արյամբ սրբապղծեցիր, թագիդ մեջ ամփոփեցիր ոճիրը և մոխիրը, գահիդ պատվանդանը ըրիր՝ արցունք և Աստված, հայրենիք և իրավունք. փետտեցիր Հայաստանի փառաց դափնիները և նախատանաց փուշեր բոլորեցիր, կործանեցիր կոթողը և նոճի կանգնեցիր, վերջապես թագ առիր, դա-

տոտոսի Նոեն

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ո՞վ այդչափ անխղճորեն կդատապարտե զիս, Սրբազան հայր, ո՞վ այդչափ մոխիր փառքիս և հիշատակիս վրա կուզե թափել, ուրեմն թագավոր եղա Հայաստանի դատապարտյալ գահիճը ըլլալու համար, ո՞վ է որ այս անիրավ զրպարտությանց կհանդգնի շուրթերը բանալ։

ՍԱՀԱԿ.— Քու արարքդ զքեզ կդատեն և կդատապարտեն, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ի՞նչ ըրած ունիմ ես։

ՍԱՀԱԿ.— Ո՞ւր է թագուհին։

ԱՐՏԱՇԻՐ.— Մեռավ։

ՍԱՀԱԿ.— Ո՛չ, սպաննվեցավ... այնպես չէ՞... հանգուցելույն վրա հսկող քահանան դիակը Փառներսեհի ապարանը կփախցնե և թույն տվող պալատականը իր ակամա ոճիրն անոր կխոստովանի։

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ ըսել կուզես։

ՍԱՀԱԿ.— Փառներսեհի վրեժխնդրությունը կասեցուր, երդվիր այսուհետև հարգել թագդ և հայրենիքդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, չեմ կրնար խոնարհիլ և գահին բարձրեն նախարարի մը ոտքն իյնալ։

ՍԱՀԱԿ.— Եթե ոչ՝ պիտի տապալի գահդ և Հայաստանը։

ԱՐՏԱՇԻՐ.— Դեռ ի՞նչ կուզես ինձնե։

ՍԱՀԱԿ.— Հորդ սկզբունքը և նախնի Հայաստանը։

ԱՐՏԱՇԻՐ.— Ուրեմն այս պալատ չէ, այլ բանտ, այս փառքերը իմ շղթաներս են, ես թագավոր չեմ, այլ հայուն սարսափը... առեք ուրեմն այս անիծյալ թագը և ազատ թողեք զիս։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, ազատ ես Հայաստանը վերականգնելու... դեռ թագավոր եղիր և հայուն ողջ տուր Հայաստանը... մի՛ թողուր որ ճաղատ ճակտիս վրա իյնա հոգեսպառ Հայաստանը, մի՛ թողուր որ գերեզմանիս խավարին մեջ թավալին ու մարին մեր հայրենյաց փառաց և հուսո աստղերը... և դու, ո՜վ երկինք, եթե Հայաստանի համար կայծակ մը պատրաստեր ես, զի՛ս զարկ, զի՛ս, որ անոր համար կշնչեմ, թող կորչնի Սահակ, միայն թե ապրի Հայաստան... տեր արքա, Հայկի նետը հայուն կուզես, Արտաշեսի սուրը կժանգոտես, Տիգրանի թագը կնսեմացնես, Վռամշապուհի ջահը կմարես... կուզես Հայաստանը ավերակ և մոխիր դարձնել, ուր բուն կողքա և հիշատակները կթաղվին... բայց մտածե, որ դու ալ այն գերեզմանը պիտի իջնես, ուր նախնիքդ իջան, և անոնք պիտի բզքտեն պատանքդ և ապագա սերնդյան արտասվաթոր զավակները պիտի գան գերեզմանիդ քով և գոչեն. «Թշվա՜ռ թագավոր, տո՛ւր մեր Հայաստանը». պիտի փշրեն իրենց սուրերը այն քարին վրա, որուն ներքև ապաստանած ես, դու չի պիտի լսես, բայց պիտի դողաս, դու չի պիտի զգաս, բայց պիտի լաս... ուրեմն, տեր արքա, թագավորե՞լ կուզես թե կործանել։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ի՞նչ է թագավորելը, եթե ոչ հրամայել և զրոսնուլ. թագավորը սուր կուտա և ժողովուրդը կզարնե կամ կզարնվի, դրոշակ կուտա և զինվորը կկանգնե կամ իրեն

պատանք կընեն, դեռ գործադրելու ի՞նչ պարտք ունի թագավոր մը։

ՍԱՀԱԿ.— Պալատն արյամբ ողողել և ժողովուրդը մտածել։

ԱՐՏԱՇԻՐ.— Պալատն իր շուրջն ստվար պատվարներ ունի և պետք չէ որ ներսը ոգեսպառ իյնողին ձայնը դուրսեն լսվի։ այս պալատը իմս է, հոս տեղի դիակը ժողովրդին մարմինը չէ, այլ գրեթե քար մը՝ պալատին և գերեզմանին միջտեղ։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, պալատը թափանցող ահեղ նայվածք մը կա։

ԱՐՏԱՇԻՐ.— Կայծակ մը գուցե՝ ուակից չդողալու համար խղճի անապատ մ'ունիմ։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, երկնի փոթորիկը զայն կալեկոծե։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց կխաղաղի՛ կործանում առթելե հուսահատած... քանի որ այս թագը գլուխս դրիք, պետք է որ մեռնիք, եթե հրամայեմ։

ՍԱՀԱԿ.— Ի՞նչ կընես, Արտաշիր, կատես Հայաստանը, և կնախատես զԱստված. քեզ պատժակից կուզես ընել հայն ու Հայաստանը... թագավորի մը համար հայրենիք մը կործանի, թագի մը զոհվի ազգ մը։

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ կուզես որ ընեմ. ահա ես կիջնեմ գահես. թող հայուն գահը և դամբանը իմ թագավորությանս առնեն չպղծի, այնպիսի արի մը թող գա իմ տեղս, որ Հայաստանի փառաց յուղաստպառ կանթեղը կարենա վառել, որ Հայաստանի ավերակ վայրերը կարենա ոսկեզօծել։

ՍԱՀԱԿ.— Պարսիկն է այն, որ ավելի կմարե ու կտապալե, գահիդ վրա կկանգնե իր սուրը և հուրը... տեր արքա, ավելի կմեղանչես, երբ գահդ թափուր թողուս, որուն վրա հառած են միշտ Պարսկաստանի արյունոռուշտ աչքերը, սուր հայկական սրտերու, հուր հայկական հիշատակարանաց. վերջապես Հայաստանի դամբանին վրա մութ ու փղշտա կանթեղ մը միայն պիտի պլպլա, որ կարծես թե կուզա քան թե լույս կուտա. այս ավերակները մութ գրերով իրենց վրա Արտաշիր անունը պիտի գրեն, թեպետև Արտաշիրի անունն ալ հավիտենականության դրանց վրա սև գրերով պիտի քանդակվի։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ դեռ ի՞նչ ընելու եմ ուրեմն։

ՍԱՀԱԿ.— Դարձուր ակնարկդ հորդ դամբանին և Հայաստանին վրա, առաջինը կսպառնա, երկրորդը կպաղատի։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ի՞նչ կրնան խնդրել ինձնե անոնք։

ՍԱՀԱԿ.— Խոնարհություն և հեզություն։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ գահի՞ս վրա։

ՍԱՀԱԿ.— Այո՛... ա՜հ, ես այդ խաղաղության բադինին վրա կզոհվեի հայուն և գահուն մեջտեղ, եթե ինձնե եաքը Հայաստանը չմտածեի, կուզեմ հայուն ճակատագրին վճիռը կարդալ, տեր արքա, կերդնո՞ւա վերջին անգամ գահդ սուրբ սրտով ընդդրկել։

ԱՐՏԱՇԻՐ.— Կերդնում... սրբազան հայր, քու դողդոջ ձայնովդ դիս կխրախուսես և կվախցնես... գնա, դեռ ողջ է Հայաստանը, կխոնարհիմ զայն վերցնելու համար։

ՍԱՀԱԿ.— Որչա՜փ դթասիրտ ես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ դեռ ուրիշ բան մը կխնդրե՞ս ինձնե։

ՍԱՀԱԿ.— Ոչինչ, միայն Հայաստանը... զայն պիտի շնորհես, այնպես չէ՞։

ԱՐՏԱՇԻՐ.— Ինչպես որ ձեռքս հանձնեցիք։

ՍԱՀԱԿ.— Վռամշապուհի ջահը*) պիտի վառես։

ԱՐՏԱՇԻՐ.— Անցելույն արյան կոհակներեն թոթափած՝ Հայաստանի և խաղաղության դիրկը կուզեմ նետվիլ։

ՍԱՀԱԿ.— Օրհնյալ ըլլաս, տեր արքա, երբ Հայաստանը փրկեի, այսչափ ուրախ չպիտի ըլլայի... մնասջիր խաղաղությամբ... տեր արքա (կմեկնի)։

Տեսիլ Ե

ԱՐՏԱՇԻՐ և ԲԱԲԵԼ

ԱՐՏԱՇԻՐ.— (մինակ) Գնա՛, անմիտ կրոնավոր, Արտաշիր թագ ու կամք ունի, կուզես որ սև փիլոնիդ և փայտե խաչիդ առջև խոնարհի՞մ. այո՛, կխոնարհիմ, ավելի դիմադրելու համար։

ԲԱԲԵԼ.— (դրսեն) Թագավորը, թագավորը, վայրկյան մը իրեն հետ պիտի տեսակցիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Ո՞վ է այս մարդը (խոռեն նայելով) ծերունի մը, զոր պալատականք կարգիլեն. թողեք այդ մարդը, որ գա,

*) Տպված է գահը։

պալատականք. հիմա կհասկնամ թե ի՛նչ կխնդրե այդ ծերունին։

ԲԱԲԵԼ.— (ներս մտնելով) Տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Ծերունի զորականը...

ԲԱԲԵԼ.— Չե՞ս պատասխաներ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Կզարմանամ թե զինվոր մը իր թագավորին պալատը մտնելով ի՞նչպես կհանդգնի, գրեթե սպառնալից անտեղի հարցում մը ընել իր տիրոջը դեմ, որ ձեռացը մեջ կյանք և մահ կբռնակալե։

ԲԱԲԵԼ.— Իմ տերս երկինքն է, տեր արքա, եթե դու հոս կհրամայես, շատ կսխալիս ու կխաբվիս, վասնզի դալուկ լռությյուն մը կրնա քեզ իր գիրկը բանտարկել. եթե բախտը քեզ թագավոր ընտրեց, միայն թագավորե, և հեք ու ծեր զինվորի մը աղջիկը մի՛ բռնակալեր պալատիդ արյունոտ պատերուն մեջ... ա՜հ, մի խնդար տեսնելով որ կնճռոտ ճակատս կդեղնի. եթե բիբերուս կրակն սպառած է, երկինից կայծակները փոխ կառնեմ, տեր արքա, տո՛ւր աղջիկս։

ԱՐՏԱՇԻՐ.— Ծերունի, Սահակ կաթուղիկոսի քղանցքին տակ գըննա, որ խելաբերիս։

ԲԱԲԵԼ.— Տեր արքա, թեպետ հոգիս բերանս է հասած, բայց խելքս գլուխս է, վատի մը ծիծաղը կնշմարեմ թոռմած դեմքիդ վրա... խնայե՛ աղջկանս, տեր արքա... անմեղ է... որչափ ալ գունատած էր։

ԱՐՏԱՇԻՐ.— Ըսի թե քու խոսքերդ երբեք բան մը չեմ հասկնար, կիմանա՞ս։

ԲԱԲԵԼ.— Եվ վերջապես պիտի տա՞ս աղջիկս։

ԱՐՏԱՇԻՐ.— (սպառնալից) Դուրս ել, ծերունի, ապա թե ոչ, ես կհանեմ։

ԲԱԲԵԼ.— Առանց աղջիկս ինծի դարձնելո՞ւ... անկարելի է այդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Կդիմադրե՞ս արքայական բարձր հրամանիս։

ԲԱԲԵԼ.— Տեր արքա, առ վիզս և տուր աղջիկս... արցունքս ցամքած է, որ ոտքերդ ծրջեին, արյունս ալ ցամքած, որով աղջիկս գնեի. տեր արքա, կմախք մըն եմ ես և իմ տիեզերքս աղջկանս նայվածքն է, եթե նա ողողի, ես ալ կխեղդվիմ... բայց դու երբեք ինծի մտիկ չես ըներ, երեսդ միշտ անդին կդարձնես... ա՜հ, Աստուծո ձեռքը քու աչե-

րուդ մեջ արցունք չէ՞ քամեր, սրտի տեղ քա՞ր է դրեր կուրծքիդ տակ... տեր արքա... տես, ալ չեմ սպառնար, այլ կպաղատիմ... ծունր կուգամ, փոխանակ սուր փայլատակելու, կարտասվեմ, փոխանակ շանթեր թոթափելու... իմ աղջիկս ինծի դարձնելու համար պաղատանք, արցունք և արյուն կթափեմ... ընտրե և վճռե վերջապես, ո՛վ թագավոր, կամ աղջիկս կամ անեծքս։

ԱՐՏԱՇԻՐ.— (խոռենն կանչելով) *Սպանդարատ։*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Պատրաստ եմ հրամանիդ, տեր արքա։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Հետս եկուր։*

ԲԱԲԵԼ.— *Տեր արքա... տեր արքա...*

ԱՐՏԱՇԻՐ.— (առ Բաբել) *Դահլիճին մեջ սպասե։*

ԲԱԲԵԼ.— *Պիտի դարձնե՞ս ինձ աղջիկս։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Քիչ մը եսքը։*

ԲԱԲԵԼ.— *Շահանդուխտս, այնպես չէ՞* (պատկերը կփոխվի)։

ՊԱՏԿԵՐ Դ.

Պալատին մեկ սրահը. խորը դուռ. կողմնական սենյակներ.

Տեսիլ Ջ

ՀՐԱՉՅԱ և ՇԱՎԱՐՇ

ՀՐԱՉՅԱ.— *Դուն աչքովդ տեսար, այնպես չէ՞, Շավարշ։*

ՇԱՎԱՐՇ.— *Գրեթե, տեր իմ... ո՛հ, շատ մի հարցաքններ դիս, բավական է ինձ համար այն ցավը որ այնպիսի բարի տիրուհիե մը զրկվեցա... ալ պիտի թողում ես այս պալատը, ուր միշտ թագուհվույն ուրվականը գրեթե ամեն առեն աչքիս առջև կանգնած կտեսնեմ։*

ՀՐԱՉՅԱ.— *Վերջապես անոք մնացի և գահի մը շուքին տակ կուլամ։*

ՇԱՎԱՐՇ.— *Եթե կհաճիս, ես քու քովդ կմնամ, տեր իմ և կծառայեմ։*

ՀՐԱՉՅԱ.— *Բարի ծերուկ, ալ գնա այս պալատեն, քու վերջին օրերդ անմեղ ընտանյացդ դիրկն անցնելու և ալևոր ճակատդ ձիթենիի մը զով սավերին մեջ հանգչեցնելու. հոն հեշտ հովը հավիտենականության երաշներով ողողյալ*

կանցնի ճակտիդ բարդերուն մեջեն և արևուն վերջին ճառագայթը դեղնած ժպիտ մը կթողու դեմքիդ վրա... քանի որ անմեղ ես, գնա ոճրագործ չըլլալու համար... գնա խղճահար չմնանելու համար։

ՇԱՎԱՐՇ.— *Այո՛, դեռ անմեղ եմ, տեր, թեպետ և սխալմամբ... կարծեմ... այո, անմեղ եմ և ալ կթողում պալատը... բայց տեր իմ, քեզ բան մը ըսել հարկ կտեսնեմ, քանի որ ես պիտի մեկնիմ։*

ՀՐԱՉՅԱ.— *Խոսե, Շավարշ, ի՞նչ կուզես։*

ՇԱՎԱՐՇ.— *Ուզել չէ, տեր իմ, ըսել։*

ՀՐԱՉՅԱ.— *Ըսե ուրեմն, բարի ծերունի։*

ՇԱՎԱՐՇ — *Բայց տեր իմ, քանի մ՛օրե ի վեր է հոս չէիր հաճախեր, նույն միջոցին աղջիկ մը բերին պալատը և իմ խնամատարությանս հանձնեցին. աղջիկը գիշերանց խաբելով հոս բերեր էին, խեղճը լալով կպաղատի, որ զինքն ազատեմ, մենակ ծերունի հայր մ՛ունի եղեր, թագավորը զինքը շատ բռնադատեց։*

ՀՐԱՉՅԱ.— *Վերջապե՞ս։*

ՇԱՎԱՐՇ.— *Եթե այսօր չազատի... թագավորը... այո...*

ՀՐԱՉՅԱ.—*Եվ ո՞ւր է այդ աղջիկը։*

ՇԱՎԱՐՇ.— *Առ այս բանալին, տեր իմ, թագուհվույն սենյակը պիտի գտնես զինքը։*

ՀՐԱՉՅԱ.— (*առնելով և կողմնակաւ դուռը ցուցնելով*) *Այս սենյակը, այնպես չէ՞։*

ՇԱՎԱՐՇ.— *Այո՛, տեր իմ... բարի ու անմեղ աղջիկ մը, գեղեցիկ՝ հրեշտակի նման, քու քույրդ գրեթե, ազատե զինքը հորդ ձեռքեն։*

ՀՐԱՉՅԱ.— *Դուն անհոգ եղիր, Շավարշ։*

ՇԱՎԱՐՇ.— *Մի՛ թողուր որ թագուհվույն սենյակը կրկին պղծվի, տեր իմ։*

ՀՐԱՉՅԱ.— *Բավական է որ այս բանալին ինձ տվիր։*

ՇԱՎԱՐՇ.— *Բայց մի՛ աճապարեր, տեր իմ, ինչվան որ ես պալատեն բավական հեռանամ, կվախնամ որ...*

ՀՐԱՉՅԱ.— *Ապահով եղիր, բարի ծերունի։*

ՇԱՎԱՐՇ.— *Ուրեմն հանգիստ սրտիվ կբաժնվիմ, տեր իմ... մնաս բարյավ (կմեկնի)։*

Տեսիլ Է

ՀՐԱՉՅԱ (միևնակ)

(Դեպի դուռը կուղղվի, ետոտ կանգ կառնե) Ջեմ համարձակիր... գեղեցիկ և անմեղ աղջիկ մը, Շահանդուխտիս նման, արդյոք կ'ընանա՞, կուլա՞, կերազե՞... Շահանդուխտիս սիրույն համար հարկ է որ ազատեմ զինքը... ի՛նչ անգութ սիրտ պետք է գողարիկ արարած մը լացընելու համար, արտասվաթոր սիրտ մը կոխկռտելու համար. ա՜հ, որչափ թշվառ է այն տղան, որ կստիպվի հայրն ատել... հարկ է որ ազատեմ շուտով այդ անմեղը բայց իմ Շահանդուխտս ի՞նչ եղավ, առանց անոր ուշս, ուժս և հույսս կսպառի... վայրկյան մը աչերս բոցավառ կբորբոքին, վայրկյան մը շանթահար դերեզմանին ժայռոտ եղրերը կթափառիմ... ի՞նչ եղավ Շահանդուխտս... հավիտենական լռություն ու մթություն կտիրե այն հյուղակը, որ իմ տիեզերքս էր... հոն վիշտ, հոս ոճիր, ո՞ւր երթամ, դերեզմա՜ն. բայց դեռ չապրեցա... (Իիչ մը մտազբաղ կենալեն վերջը) այլ հոն ալ անմեղ մը կուլա, գոնե զայն ազատեմ (դեպի դուռը կերթա և զայն բանալ կսկսի):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ներսեն) Դեռ ոչ, տեր արքա՛:

ՀՐԱՉՅԱ.— (մեկուսի զարմացած) Այս ձայնը...

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆ և ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սենյակեն դուրս ելնելով և դեմքը ձեռքերովը ծածկած ոտքը իյնալով) *Կաղաչեմ... դեռ ոչ:*

ՀՐԱՉՅԱ.— (մեկուսի ճապշտակված) *Շահանդո՞ւխտ...* (Շահանդուխտ գլուխը վեր առնելով Հրաչյա կտեսնի և ճիչ մը կարձակե):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Ի՞նչ կտեսնեմ:*

ՀՐԱՉՅԱ.— *Շահանդուխտ, Հրաչյան եմ ես:*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Հրաչյան ոսկի չհագնիր, Հրաչյան պալատը գործ չունի:*

ՀՐԱՉՅԱ.— *Ջե՞ս ճանչեր զիս, Շահանդուխտ:*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կցավիմ որ զիս խաբեցիր... բայց արդեն ժամանակն անցավ։

ՀՐԱՉՅԱ.— Ի՞նչ կըսես, Շահանդուխտ, կմոռնա՞ս, կմերժե՞ս զիս, ա՜հ, ներե ինձ եթե աւելի և ապառնի ծիրանի մը ցնցոտիով ծածկեցի քեզնե սիրվելու համար... կնետեմ ահա ես այս ոսկեհուռ զգեստները, կթողում պալատը, զոր մորս անբիծ արևը ողողեց. երթանք հյուղակը, այն սիրո բագինը, ուր առաջին անգամ մեր ճակատը կարմրեցավ և մեր սիրտը բաբախեց, ուր արևուն և սիրո ճառագայթները մեզ իրարու կապեցին, ուր ոչ ես գեղչկուհի տեսա և ոչ ալ դու արքայորդի... մինչդեռ մեր մեջտեղի երևակայական վիհը մեր սիրովը լեցուցինք, ի՞նչ բան կրնա արգիլել մեզ զիրար գրկելու, սիրելու և միատեղ մեռնելու... ո՜հ, որչափ դեղներ է գեղեցիկ ճակատդ... շատ վիշտ կրեցի՞ր, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կմեղքնա՞ս զիս դեռ, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ, ի՞նչ շուտ սառեցան սիրավառ շուրթերդ... ա՜հ, այդ արհամարհոտ ակնարկներդ թունավոր նետերե ավելի կխոցեն սիրտս... գթա ինձ, Շահանդուխտ, դեռ ես այն Հրաչյան եմ, զոր քու հյուղակդ ընդունեցիր... Շահանդուխտ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց արդեն ամեն բան լմնցավ։

ՀՐԱՉՅԱ.— Ա՜հ... միթե հայրս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տես ճակատս կկարմրի, Հրաչյա... և ահա չկարմրելու համար....

ՀՐԱՉՅԱ.— Վե՞րջը...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Պիտի մեռնիմ, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Ի՞նչ կըսես...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սրվակ մը ցուցնելով) Տես... թույն...

ՀՐԱՉՅԱ.— Խմեցի՞ր...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քեզ սիրելու համար։

ՀՐԱՉՅԱ.— (ձեռքեն կորզելով) Ես ալ մեռնիմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ետ չտալու ջանալով) Կեցիր, կեցիր։

ՀՐԱՉՅԱ.— (խմելով) Միթե չուխտեցի՞նք միատեղ մեռնիլ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Դեռ կսիրե՞ս զիս, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Կհարցնե՞ս... գերեզմանեն անդին ալ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ներե՛ ինծի, Հրաչյա, գրկվինք... պիտի մեռնինք. ըսի քեզ որ չպիտի թողուն մեզ հանգիստ սիրելու... ոտքերնուս տակ վարդը թոռմեցավ... գլուխնուս վերև աստղը մարեցավ... սերը երկրի վրա վիշտ և հավիտենականության մեջ նշույլ ունի... սերը՝ որ հոս կապարյա թևեր տավավ, հոն ոսկի թևեր պիտի տա... հոն ո՛չ թագ կա և ո՛չ սուր, որ մեր մեջ արձանանա... ա՜հ, սիրտս կայրի...

ՀՐԱՉՅԱ.— Սիրո ուժգին և վերջին բոցն է այն, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյա, հա՛յրս...

ՀՐԱՉՅԱ.— Ազատեցավ բանտեն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ազատեցիր... բայց ո՞ւր է հիմա։

ՀՐԱՉՅԱ.— Չեմ գիտեր... ալ մեր վրա խոսինք...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց վերջին անգամ չի՞ պիտի կրնամ տեսնել դինքը։

ՀՐԱՉՅԱ.— Ալ երկինքը, Շահանդուխտ... մոռնանք աշխարհը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյա, դժվար է մոռնալ աշխարհը, երբ հոն սիրելի մ'ունիս... հայր մը, որուն հոգին ես էիր։

ՀՐԱՉՅԱ.— Մորս սենյակը երթանք, Շահանդուխտ, այն արտասվաթորմ անկողնույն վրա, ուր դու նիրհեցիր և աչերնիս հավիտենականության գոցենք... կզգամ որ պիտի մեռնիմ... երթանք, այն սենյակը քաշվինք, որ մեր վերջին քունը չի վրդովի առելի մարդոց տրոփիններեն ու նայվածքներեն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հառենք աչքերնիս այն հորիզոնին վրա, ուր պիտի թռչինք. մայրս ինձ կսպասե, որչափ պիտի հրճվի, երբ զքեզ իմ գիրկս տեսնե... ես ալ հորս պիտի սպասեմ... ո՜հ, այն հուր աչերդ, որ իմ սիրտս վառեցին, վերջապես պիտի մարին, Հրաչյա...

ՀՐԱՉՅԱ.— Քու աչերուդ վրա... որ անմեղությանս եթեր մը սփռեցին։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կկթոտիմ, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Եվ ես, Շահանդուխտ... (դեպի սենյակը կվազեն դողդոջ) Տես հորիզոնը ի՞նչ գեղեցիկ է։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Թռչինք... (սենյակեն ներս կմտնեն և դուռը կգոցվի)։

Տեսիլ Թ

ԱՐՏԱՇԻՐ և ՍՊԱՆԴԱՐԱՏ (ետոտ) ԲԱԲԵԼ

ԱՐՏԱՇԻՐ.— *(դուռը բանալով) Ո՞վ երկինք... Հրաչյայի գիրկը։*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Մեռած են, տեր արքա։*

ԱՐՏԱՇԻՐ.— *(դիտելով) Մեռա՞ծ... (դեպի խորի դուռը երթալով և կանչելով) Մերուն, թույն խմեր են... ինչո՞ւ քիչ մը չաճապարեցի* (Բաբել ներս կմտնե. առ Բաբել), *առ ուրեմն աղչիկդ։*

ԲԱԲԵԼ.— *Օրհնյալ ըլլաս, ո՛վ թագավոր* (կերթա և կտեսնե...) *Ա՜հ, մեռա՞ծ կուտաս։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Քովն ալ իմ զավակս է։*

ԲԱԲԵԼ.— *Բայց ես միևնակ մնացի* (հուսահատ ծունր կիյնա.— վարագույրը կիջնե)։

Ա. ՐԱՐՎԱԾ Ե

Գիշեր.— Գերեզմանատուն մը.— Տեսարանին առջև փառավոր շիրիմ մը.— Քովը սոսիի ծառ մը.— Տեսարանը բացված ատեն Բաբել խորը շիրիմի մը վրա ընկողմացած է.—Երաժշտություն:

Տեսիլ Ա.

ԲԱԲԵԼ (առանձին)

Լսեցեք ինձ, աղջամուղջք և աստեղք բնության, հոս աղջիկս կնիրհե, այս քարին տակ, որ հավիտենականության անողոք ձեռքն է... որչա՜փ երջանիկ էի, մինչ երբեմն ա-րյունոտ ճակատս պատերազմի դաշտին վրա մահվան դեմ կխնդար... ծերությունը ցավերու և հուսահատության հասակ մ'է... ո՜հ, աղջիկս մեռավ, հայրենիքս կմեռնի, և դեռ ես կշնչեմ... և դու ինչո՞ւ կդեղնիս, Հայաստան, երբ Բաբելի մազերը ճերմկցան և ցավոց սեմին վրա դողդոջեց... ո՞ւր բանամ աչերս... Շահանդուխտ, կնճռոտ ճակատիս հովիկը, արթնցի՛ր, դու ինձ չես լսեր, և ես ալ քեզ չեմ լսեր, որ երկնքեն դիս կկանչես... դեռ կեցիր, վրեժ պիտի առնեմ... Վրե՜ժ, վրեժ որ հյուծյալ աչերուս կայծակներ ժայթքեց... ըսե քեզի շունչ տվող Աստծուն, որ դեռ կթոռ բազկացս զորություն ազդե... դեռ զինվորության պարտքը կճանչեմ, պիտի զարնեմ և պիտի մեռնիմ... ա՜հ, Շահանդուխտ, աղջիկս, մի՛ կթոռեր զիս. դու ա՛լ ուժ տուր ինձ, որ զարնեմ (գերեզմանին վրա կիյնա):

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆ, ՍՈՒՐՄԱԿ և ՓԱՌՆԵՐՍԵՀ

ՍՈՒՐՄԱԿ.— Մի՞թե այս սոսիին տակ ժամադիր չեղա՞նք, իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այո՛, աղջկանս գերեզմանին քով, ինչպես որ երեկ իրենց իմացուցինք... անշուշտ դեռ պիտի գան։

ՍՈՒՐՄԱԿ.— Կզարմանամ թե ի՞նչպես կհանդուրժեն սրտերն այսպիսի արդար վրեժ մը ժամ առաջ լուծելու... արդեն Հայաստանը մոլի թագավորի մը և ապիկար կաթողիկոսի մը ձեռքեն պիտի ազատենք, ինչպես որ դուք, հայոց իշխանքդ խոստացաք, զիս կաթողիկոսության անձնվեր աթոռը բարձրացնել... և ես ալ պիտի ջանամ Արտաշիրը և Սահակն իրենց անարժան գահերեն վար տապալելու հաջողիլ... ուր որ արդար հարված մը կա, հոն կա նաև Աստուծո մատը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ես կուզեմ Արտաշիրեն վրեժ առնել և ո՛չ թե հայեն, մի՞թե պիտի չտեսպվի՞նք Արշակունի թագավորությունը ծախել պարսկին՝ Արտաշիրեն վրեժ առնելու համար... ապագան արյուն պիտի ժայթքե մեր գերեզմանաց... երբ մանուկը հոր գիրկը եղած աեեն պարսիկ իշխող մը տեսնե, պիտի հարցնե իր հորը թե ինչո՞ւ օտարը կիշխե հայուն... հայրն անշուշտ անիծելով պիտի ընե պատմությունը... երբ պատանին հայրենիք և ազատություն թոթովե, պարսկին սուրը պիտի շողա կրակոտ ճակտին վրա... կխնդա՞ս։

ՍՈՒՐՄԱԿ.— Ի՞նչպես չխնդամ, քաջ իշխան... դու կմոռնաս աղջկանդ գերեզմանը, որ գիշերային լռության մեջ արյուն կհծծե, և արդար ու կարմիր վրեժխնդրությունն իբր ամոթ կնշմարես... դեռ թողո՞ւնք որ Հայաստանը վատթարանա, ես չեմ ուզեր որ թագավորին համազոր Սյունյաց իշխանը վրեժխնդրության առջև վատանա... խեղճ դիակ, ի՞նչ կըզգաս արդյոք, երբ հայրդ գերեզմանիդ քով կվարանի։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ա՜հ, կեցիր... դեռ ողջ եմ... հանդարտե գերեզմանիդ մեջ, Հերանուշ... Եթե հակառակորդեդ արյուն չառնեմ, իմ արյունս առ... երբ թագն իմնա, մեռած է նա... Նե՛րե, տեր հայր, եթե ապագային ձայները վայրկյան մը զիս

շփոթեցին... կզգամ որ մեր սուրն անբիծ է... երբ հիշենք նախնի Արշակունի դռռոզները, որոնք Հայաստանի ճակտին մեկ մեկ մշտադալար դափնիներ կապեցին, ավելի լավ է որ պատմությունը պարսկին անհարազատ իշխանությունը լա, քան թե Արշակունի ճեռի մը վատթարությունը... նախատինք է հայուն հայե մը նվաստանալը և պարսիկը փառա մը պիտի ըլլա պատմության մեջ այս նվաստության, ուրեմն դեռ հանդուրժե՞նք։

ՍՈՒՐՄԱԿ.— *Ո՛չ, պետք է որ թագը նախատինքին զոհենք։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Եվ դեռ ե՞րբ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Քիչ մը ետքը այս գերեզմանին վրա հավատարմության երդում պիտի ընենք և վաղը Վռամի գահին տակ պիտի ժողվվինք Արտաշիրը կործանելու։*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Բայց դեռ կուշանան... սակայն ի՞նչ ձայն է այս։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Անշուշտ անոնք են որ կուգան։*

ՔԱԲԵԼ.— (*որ մինչև այն ատեն գերեզմանին վրա ընկողմանած էր, կկանգնի, ապշած մտիկ կրնե*) *Մութն վրեժխնդրության ոգինե՞ր են ասոնք։*

(*Դուրսեն նախարարները հետևյալ երգը կերգեն*)

Երդնումմ յԱստված ի հայ երկին,
Կորա՝ ել գահ, իջնել ապաս.
Վրե՞ժ, անկումն խոնարհի բախս,
Խորտակենմ բագն ու բռնամին։

Խավմ պիտեի դարաւ մրին,
Եվ գերեզմանմ լոկ առձագանմ
Մեր խորհրդոց արյունագանգ.
Խորտակենմ բագն ու բռնամին։

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ. ՎԱՉԵ, ՀՄԱՅԱԿ և ՆԱԽԱՐԱՐՔ

ՎԱՉԵ.— (*իրենցներուն*) *Սուր ի պատյան, քաջ իշխանք... գերեզմաններեն վրեժ առնելու չենք։*

ՀՄԱՅԱԿ.— *Այլ լուսո մեջ պիտի կռվինք։*

ՓԱՌՆԵՐՄԵՀ.— Շնորհակալ եմ, քաջազուն ընկերք, որ ձեր խոստումը գործադրելու համար փութացիք այս վեհավայրը։

ՎԱՉՆ.— Խոստումեն ետքը երդում մ'ալ ունինք, իշխանդ Սյունյաց։

ՍՈՒՐՄԱԿ.— Ջոր հիմա այս գերեզմանին վրա պիտի ընենք։

ԲԱԲԵԼ.— (մեկուսի) Հոս կդավադրեն։

ՀՄԱՅԱԿ.— Այսպիսի հանդիսավոր երդում մը վատ Արտաշիրի հարգը կբարձրացնե։

ԲԱԲԵԼ.— (մեկուսի) Արտաշի՞ր։

ՍՈՒՐՄԱԿ.— Ճշմարիտ է, իշխան, բայց պետք է երդնունք, թեպետ և չեմ հուսար, որ արդար դավադրության մատնիչ մը գտնվի մեր մեջ... և ես անդրանիկն ըլլալ ուզելով այսպիսի նշանավոր ձեռնարկի մը (գերեզմանին մոտենալով) կերդնում այս ամբիծ գերեզմանին վրա, որ խաչը տապար և լեզուս թույն պիտի ընեմ, և ինչվան որ Արտաշիրեն վրեժ չառնեմ, երկինք չի պիտի նայիմ... իշխանդ Սյունյաց, կարգը քուկդ է։

ՓԱՌՆԵՐՄԵՀ.— (նույնպես) կերդնում աղջկանս անմեղ ոսկորներուն վրա, որ ինչվան որ Արտաշիրը գահեն չձգեմ, սուրս իր պատյանեն երբեք չի պիտի հանեմ։

ՍՈՒՐՄԱԿ.— Քաջազուն իշխանք, օ՛ն ուրեմն, կարգը ձեզի եկավ... դուք ալ ձեր երդումը կընե՞ք։

ԱՄԵՆՔԸ.— Կերդնունք մենք ալ մեր Աստծուն և սրուն վրա։

ԲԱԲԵԼ.— Դավաճանք Արտաշրի, ես ալ ձեր երդումը կետ առ կետ կկրկնեմ ահա Աստծույս, սրույս և աղջկանս գերեզմանին վրա։

ՓԱՌՆԵՐՄԵՀ.— Ո՞վ ես դու։

ԲԱԲԵԼ.— Ձեր վրեժխնդրության զինվորը, չե՞ք ընդունիր։

ՍՈՒՐՄԱԿ.— Ծերունի զորականը։

ՎԱՉՆ.— Ջենք ճանչեր զքեզ։

ՍՈՒՐՄԱԿ.— Ես կճանչեմ (Բաբելի). աղջիկդ մեռա՞վ։

ԲԱԲԵԼ.— Արտաշիր մեռած տվավ զայն ինծի։

ՍՈՒՐՄԱԿ.— Այն անմեղ աղջիկն առևանգե՞ց։

ԲԱԲԵԼ.— Ջեմ գիտեր... մեռավ... չե՞ք ուզեր սուրս... մի վախնաք, թեպետ և ծերունի եմ, բայց կրնամ զարնել։

ՍՈՒՐՄԱԿ.— Դու ալ մեղնե ես, ծերունի...վաղը ինչպես որ ըսի, վառամի դահույիցը տակ պիտի արձանանանք... (Երթալու կըլլան)։

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և ՍԱՀԱԿ

ՍԱՀԱԿ.— Կեցիք... ո՞ւր կդիմեք։

ՍՈՒՐՄԱԿ.— Մեկդի... խաղաղության գիրկը։

ՍԱՀԱԿ.— Դողա՜ այն խաչեն, որ գլխուդ կկրես... Պարսկին արյունռուշտ աչերեն խաղաղությո՞ւն կակնկալեք... ձեր մոլար քայլերուն խոչընդոտ հսկա Մասիսն անցաք, բայց դիս կոխկռտելով չի պիտի անցնիք։

ՍՈՒՐՄԱԿ.— Ի՞նչ ըսել կուզես ուրեմն։

ՍԱՀԱԿ.— Ահա կուրծքս և խաչս, կրնա՞ք կոխել ու անցնիլ։

ՍՈՒՐՄԱԿ.— Ես ալ վախ չունիմ, մի՞թե իմ խաչս ձախակողմյան ավազակի՞ն է... մեկդի որ անցնինք... տես այս գերեզմանը։

ՍԱՀԱԿ.— Ես ալ կսիրեմ այն բարեպաշտ ոգին, բայց Հայաստանն ավելի կսիրեմ... ես ալ կատեմ Արտաշիրը, բայց պարսիկն ավելի կատեմ... դու որ կղեր ես Քրիստոսի «ներեցեք միմյանց» վոխանակ պաշտպանելու՝ ազգադավ վրեժխնդրության մը դրո՞շը կծածանես... այո՛, Արտաշիր հանցավոր է, բայց թող Արշակունին չըլլա հանցավոր... թագավորը կզղջա իր պժգալի անցելույն վրա և խաղաղության գիրկը կնետվի. եթե նա հայ և դուք ալ հայ եք, ուրեմն ներեցեք իրարու։

ՍՈՒՐՄԱԿ.— Նա շատ անգամներ զղջաց և մենք մինչև ցե՞րբ ներենք։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Սրբազան հայր, մեռնողն իմ աղջիկս է և դու շատ դյուրավ կհորջորջես «ներեցեք» բառը։

ՍԱՀԱԿ.— Եթե այդպես է, դիս զարկեք և թող ապրի Հայաստանը։

ՎԱՋԵ.— Ո՛չ մեր քայլին խոչընդոտ ըլլալ հանդգնե և ոչ ալ զարնվի։

ՍԱՀԱԿ.— Ուրեմն, անգութներ, դեռ ի՞նչ ընեմ որ Հայաստան

ապրի. ես էի որ մինչև հիմա երկրե երկիր թափառեցա Հայաստանի ջահ տալու և դուք կմարեք զայն, ես վայրկյանի մը մեջ հազիվ խոնջյալ կյանքով մը Հայաստանի փոքր ինչ շունչ տվի, և դուք զայն բոլորովին կխաբեք, և որո՞ւ կառաջնորդեք. պարսկի՞ն, պարսկի՞ն, որ մեր տաճարները, պալատները, դամբանները և հիշատակարանները մոխրով և սրբապղծությամբ պիտի ծածկե, և այն առեն դարերու բարդ ի բարդ մոխրույն տակ ո՞վ պիտի կրնա նշմարել հայուն դամբանը, այն հայը, որ երբեմն ազատության առաջին ախոյանը հանդիսացավ. այն գահը, որու վրա տիեզերասաստ հսկաներ որոտացին ու անշնչացան, այն գահը դուք պարսկին կծախեք և ի՞նչ իրավամբ, դուք հայ չե՛ք, ազդ չունիք, դուք մարդ չե՛ք, ճիվաղ եք... ա՜հ, ի՞նչ իրավունք է այս. մեկ հայ մը անխոնջ աշխատի հայրենիքը լուսավորելու և շատ մը հայեր միաբանին զայն անդունդը ձգելու։

ՍՈՒՐՄԱԿ.— Հայաստանը ո՛չ թե անդունդը, այլ խաղաղության ձորը կձգենք, մեր մեջ մատնիչ չկա, այլ ազգության պատվույն վրեժխնդիր, վատ է այն, որ պատմության էջերուն մեջ կարձանագրե թե Սուրմակ մատնության սև դրոշը պարզեց։

ՍԱՀԱԿ.— Ե՛ս, ե՛ս պիտի արձանագրեմ, եթե հայրենյաց ցավոց փոսերուն մեջ շնչասպառ չինեմ ժամանակեն առաջ, և ազգերու առջև ո՛չ թե վատ, այլ արդարադատ պիտի ըլլամ... բայց մինե՜թ ետ չի՞ պիտի դառնաք։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Եթե այս աղջիկն իր գերեզմանին քարը թավալելով ետ դառնա, մենք ալ մեր վրեժխնդրության ամենի հորձանքը պատռելով ետ կդառնանք, և քանի որ չկա աղջիկս, թող հայուն գլուխը թագ չըլլա։

ՆԱԽԱՐԱՐՔ.— Կործանի՜ թագավորը։

ՍԱՀԱԿ.— Եվ ո՞վ պիտի կանգնի։

ՍՈՒՐՄԱԿ.— Մեր վրեժխնդրությունը։

ՍԱՀԱԿ.— Խնայեցեք, հայրենյաց իշխաններ, հոգ չէ որ նա առանց թագի ըլլա, այլ չըսեն թե հայն իր հայրենիքը օտարին մատնեց. չե՞ք մտածեր, գերի և հեգ հայեր կպատրաստեք ապագային համար, որոնք իրենց շղթաներուն մե-

չեն գերութիւն և օտարութիւն թոթովել և անիծել պիտի սովրին. ձեր գերեզմանները պիտի փնտռեն ավերակաց կույտերուն տակ, որ ձեր ոսկրները այրեն, այնատեն ապագա սերնդյան սորուկ հայերն օտարութեան սառնապատ խորերեն ի զուր «Հայաստան» պիտի գոչեն, և միայն կործանյալ հիշատակարաններ այն ձայնը խուլ մռնչմամբ մը իրենց մեջ պիտի խեղդեն և այն հայրենակարոտ հառաչները ձեր դժոխոց բոցերուն հետ պիտի խառնվին, և այն ատեն ի՞նչ պիտի ընեք, ի՞նչպես հայուն պիտի տաք Հայաստանը։

ՍՈՒՐՄԱԿ.— Մեր Սրբազան կաթողիկոսը Ս. Գրոց մարգարեութիւնները շատ կարդալով կշփոթի... օ՛ն, իշխանք, ա՛լ բավական մտիկ ըրինք, շաղակրատութիւնները Հայաստանը չեն ազատեր, հիմա չխոսինք, վասնզի վաղը շատ պիտի խոսինք։

ՍԱՀԱԿ.— Վերջապես հայրենյաց անկումը վճռեցի՞ք*)։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Արտաշիրի անկումը։

ՆԱԽԱՐԱՐՔ.— Կործանի թագավորը։

ՍԱՀԱԿ.— Ուրեմն վերջապես, գոռոզդ Մասիս, վեր առ ամպերուն մեջեն ժժգույն ճակատդ և բոլոր տիեզերաց առջև որոտագոչ ձայնե թե հայերն իրենց հայրենիքը կմատնեն։

ՍՈՒՐՄԱԿ.— Հայաստանը կխաղաղի։

ՍԱՀԱԿ.— Վերջապես կերթաք, մատնիչք հայրենյաց, դուք հայ եք և հայեն վրեժ կառնեք։

ՍՈՒՐՄԱԿ.— Հայաստանն ազատելու։

ՍԱՀԱԿ.— Ուրեմն Հայաստանեն առաջ ինձնե անիծյալ ըլլաք (ամենքը կերթան, բացի Բաբելեն)։

ԲԱԲԵԼ.— (Սաճակի մոտենալով) Ես հոս եմ, Սրբազան հայրդ ինձ մի՛ անիծեր։

ՍԱՀԱԿ.— Բայց անոնք գացին։

*) Տալած է վճռեցինք։

ԲԱԲԵԼ.— Աղջկանս վրեժը լուծելու համար հայրենիքս մատնել ուզեցի... երդում ըրի և հոս եմ... Թող մեկը երեսիս վառչդուշե (դաշույնը կուրծը կմխե):

ՍԱՀԱԿ.— Ի՞նչ ըրիր, ծերունի:

ԲԱԲԵԼ.— Աղոթե ինծի համար, Արբաղան հայր, որ աղջկանս հոն գտնեմ (կիյնա):

ՍԱՀԱԿ.— Ա՜հ, բոլորտիքս միշտ մահ և անկում (վարագույրը կիջնե):

Ա. ԲԱ. ԲՎԱԾ Զ

Վռամի պալատը.— Սյուճազարդ և փառավոր սրահ մը.— Աջ կողմը Վռամի գահը։

ՏԵՍԻԼ Ա.

ՎՌԱՄ և ՍՈՒՐԵՆ

ՎՌԱՄ.— Քաջդ Սուրեն, վերջապես Հայաստան վշտալից ճակատը ոտքերուս առջև խոնարհած գթություն կաղերսե ինձմե իր փրկության համար. մինչդեռ ես ավելի կուզեմ դինքը տապալել ու ջնջել... խե՜ղճ հայ, որ իր դասին ու բարեկամը դեռ չճանչեր, չզարներ իրեն զարնողին և կխոնարհի. չեմ գիտեր թե հայը խոնա՜րհ է թե վախկոտ... հա՜յ հա՜յ, եթե քու հանճարիդ հետ կրակ մը միավորես, տիեզերքը կգերազանցես ու կսարսես. դողացեք հայեն, տիեզերք, եթե հայերը միաբան ու համախումբ տեսնեք։

ՍՈՒՐԵՆ.— Բայց այդ ալ անկարելի է, արքա քաջ, գուցե առյուծը և վագրն իրարու հետ հաշտվին. բայց հայը հայուն հետ չհաշտվիր... Արտաշես առաջին բոլոր աշխարհ կխոնարհեցներ, եթե իր բանակին մեջ իր զորքերեն չսպաննվեր։

ՎՌԱՄ.— Եվ ի՞նչ եղավ Արշակունի հարստությունը... իր նախարարներեն մին Պարսկաստանի շահուն համար Արշակունիի ձեռքեն նախագահությունը հափշտակեց և հիմա անոր հաջորդներեն մեկն ալ իր գահը բոլորովին Պարսկաստանի կծախե... և ի՞նչ պիտի ընդունի անոր փոխարեն, եթե ոչ նախատինք և անկում... զարմանալի ազգ մ'է հայը... դու ալ հայ ես Սուրեն, ըսե, ի՞նչպիսի մարդ է հայը։

ՍՈՒՐԵՆ.— Հայը հայ ծնելուն միշտ կդժգոհի, տեր արքա, հայը հուսահատ ու դժգոհ ազգ մ'է. իր փառքը, զորությունը և ճոխությունը միշտ անկատար կերևին իր աչքին... եթե բոլոր տիեզերաց ալ տիրե, դարձյալ իր հաղթանակն իրեն համար անկատար կերևի. օտարին շատ կհարի և ասով ավելի օտարասեր, քան թե հայրենասեր ազգ մը կսեպվի: Ահա կտեսնես, որ ինքն իրեն փրկութենեն հուսահատած Պարսկաստանեն կակնկալե զայն... ինքը չատեր օտարը և կկարծե թե օտարն ալ զինքը չատեր... հայը բարեսիրտ՝ միշտ ուրիշեն բարեսրտություն կակնկալե և միշտ կխաբվի... դեռ զարմանալին կա, տեր արքա, մտածե մեկ մը. այսչափ ներքին խռովություն և ատելություն և միշտ ամեն կողմեն արտաքին հարված. դեռ հայը կանգուն է և ազգ մ'է... ես կըսեմ որ եթե բոլոր աշխարհ կործանի ու խառնակի, դարձյալ հայը հայ է:

ՎՌԱՄ.— Բայց եթե այսպես Վռամի ապաստանի, իր կրոնքն ու ազգությունը շուտ կթաղե իր կործանյալ հիշատակարանացը մոխրույն տակ... պիտի տեսնես որ վաղը Հայաստան չկա... վաղը հայը ստրուկ կամ պարսիկ է. վայ այն հարվածյալ ազգին, որ օտարին պատրիչ ու թունավոր լեզվեն կխարվի. վա՛յ այն անձին, որ յուր ազգը փառասիրության կամ մեծության կզոհե, վա՛յ քեզ, հա՛յ, եթե Պարսկաստանի գիրկը նետվիս (Կմեկնին):

Տեսիլ Ը

ՍԱՀԱԿ (միևնակ)

Վերջապես սպիտակ ալյացս տակ հայության աստղին անկո՞ղը պիտի տեսնեմ... մառախուղ մը կպատե Մասյաց ճակատը. հայության հետին հառաչա՞նքն է այն, որ այս սև կամարներուն տակ պիտի նվաղի... ա՜հ, հյուծյալ աչերս չունին շանթեր, որ հայության ոսոխները զարնեմ... ի՞նչ ընեմ, կսիրեմ հայը, կսիրեմ ազգս սրտիս խորեն... օրորոցիս մեջ աչերս հաղթության դափնյա կամարներուն մեջ բացի, և արդ մոխրի և մառախուղի մեջ գերեզմանս պիտի գոցվի... ո՜վ երկինք, այրե հոգիս դժոխոց

անծախ բոցերուն մեջ, բայց կայծ մը տուր Հայաստանի մարած սրտին... այլ ո՞վ կմարե հայուն փառաց ջահը, հայը, հայն իր անկումը կխնդրե և երկինք ի՞նչպես կանգնե... գոցվեցեք անհուսության անդունդներ... գոցվեցեք դերեզմանի ահարկու դռներ, ի՞նչպես պիտի ծածկեք թագն ու հայը ձեր համր մշուշին ներքև... և դո՛ւք, Արշակունի ուրվականներ, դեռ պիտի հանդուրժե՞ք ձեր դամբանաց մեջ։

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆ և ՍՈՒՐԵՆ

ՍՈՒՐԵՆ.— Ի՞նչ կմտածես, սրբազան հայր... կտեսնես որ անհնար է և վտանգավոր և անհավատար զենքով մաքառիլ... այնշափ Հայոց նախարարներ Արտաշիր կամբաստանեն և կուզեն դահեն վար ձգել... կընդդիմանաս և Շահին ահավոր նայվածքը կգրգռես... մինթե ահեղ փոթորիկներու կրնա՞ դիմադրել տկար ծառ մը։

ՍՍ.ՀԱԿ.— Իրավ է որ հայրենյացս ցավերը որդի պես թոքերս և աղիքներս կրծեցին և զիս կմախք մը ձևացուցին, բայց դեռ չցամքեցան սրտիս արյան ճապաղիքը և կրնամ դեռ արդարություն աղաղակել կամ աղերսել, մինչև որ անիրավ վճռո մը տակ ձայնս մարի... դու հայ էիր, ուրացար ազգդ... դու չես գիտեր, հայրենասիրությունն այնպիսի բուռն կրակ մ'է, որ մարդուս մոխիր կդարձնե... դու մարդ չես, պահվավ արյունդ հայրենասերի մը ծախե... հայրենիք քեզ համար բոժոժի մը ձայն է... Պարսկին գահին երկրպագելու համար թողուցիր և ուրացար հավիտյան հայրենիքդ, որուն զվարթ երկնքին տակ աչերդ լույս տեսան... ա՜հ, իցիվ թե ուրացողներուն մորը կաթը թունավոր եղած ըլլար կամ ժայռերու մեջ ծնեին նոքա։

ՍՈՒՐԵՆ.— Բայց վերջապես մեր ընելիքին վրա խոսինք, սրբազան հայր, քիչ մը եաթը Արտաշիրի դատաստանը պիտի սկսի, և ես կխրատեմ քեզ, որ նախարարաց համակարծիք գտնվիս... ի՞նչ է այս, որ մոլի թագավոր մը կպաշտպանես, որ բոլորովին ձեր կրոնքը ոտնակոխ ըրած և Արշակունյաց պալատը սրբապղծած է։

ՍԱՀԱԿ.— Այո՛, Արտաշիրը կպաշտպանեմ, բայց հայուն իշխանութիւնը պահելու համար... ա՜հ, չեմ կրնար հանդուրժել ապագային անիծախառն բողոքներուն... չեմ կրնար լսել թէ Սահակ ալ առանց արյունը թափելու՝ անտարբեր դիտեց Արշակունյաց գահին անկումը... ես կուզեմ մաշիլ, դեղնիլ, մարիլ և մեռնիլ հայրենյացս համար, աչերս բաց և կուրծս պատռած... բայց որո՞ւ կըսեմ... ոչ ոք իմ զգացմանս կպատասխանե, մեկը փառք կսիրե, մյուսը կին կսիրե, ուրիշը ոսկի կսիրե... Սահակն է միայն, որ հայը կսիրե։

ՍՈՒՐԵՆ.— Ալ կարե հույսդ հայեն, այսուհետև պարսկեն խաղաղութիւն պիտի գտնես։

ՍԱՀԱԿ.— Պարսիկն իր գահը Հայաստանի հողին վրա կանգնե՜... չե՞ք լսեր, Արշակունի գոռոզներ, այսչափ ստվա՞ր են ձեր վեմերը, որ այսպիսի ահարկու վէիռ մը չեք լսեր ու չեք մռնչեր... դուրս նետվեցեք ձեր բանտեն, ոսկերք Արտաշեսի, դուք վարժ եք հարվածի և կրնաք զոզոջ ձեռքերով սուր գործածել... ես խաչս կառնեմ, բայց ո՜վ սուր պիտի առնե ինծի հետ։

ՍՈՒՐԵՆ.— Պատերազմի դաշտը չե՛ք, սրբազան հայր, այլ այսօր Պարսկաստանի գահեն խաղաղութիւն պիտի բղխե... մի՛ համառիր, վասնզի պիտի Հաղթվիս և Շահին ատելության շանթերը քու ճակատդ պիտի պայթին։

ՍԱՀԱԿ.— Շնորհք մ'է այդ... պետք է որ տանջվիմ կամ մեռնիմ, քանի որ հայրենիքս չեմ կրնար ազատել։

ՍՈՒՐԵՆ.— Ուրեմն չի պիտի՞ ամբաստանես թագավորը։

ՍԱՀԱԿ.— Երբե՛ք... չես հասկնար... հանցավոր է նա, բայց հայ է, եղբայրս է. ա՜հ, հայրենիք պաշտպանելու համար հայ և ծեր ըլլալու չէի։

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ, ՎՌԱՄ և ԱՐՏԱՇԻՐ

ՎՌԱՄ.— (ներս մտնելով և գաճը ելնելով) Ուրեմն պաշտպանե ինքզինքդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Ինքզինքս պաշտպանելու համար պետք է, որ հանցավոր եղած ըլլամ։

ՎՌԱՄ.— Դու կուրանաս քու արարքդ, բայց պալատիդ կամարները և գերեզմանք չեն կրնար դանոնք ուրանալ, բայց են այն սրտերը, որոնց մեջ դու արյուն հոսեցուցիր և փոխանակ արիության արձաններուն՝ հեշտության արձաններով զարդարեցիր պալատդ։

ՍԱՀԱԿ.— Ի՞նչպես կրնաս զինքը իր ազատ կրոնքին մեջ դատապարտել, մինչդեռ ինքն ալ ձեր հեշտային կրոնքին հետևած է. իր քաղաքական հանցանքները կրնաս դատել, և ես իմ եղբորս մեղքերը կրնամ քավել։

ՎՌԱՄ.— Վերջապես հայն իր թագավորը չընդունիր։

ՍԱՀԱԿ.— Ես ալ հայ եմ։

ՎՌԱՄ.— Բայց չես կրնար նախարարաց չափ իրավունք ունենալ հայրենյացդ վրա՝ անոնք իրենց սուրերովը կպաշտպանեն զայն և դու միայն խաչ մ'ունիս։

ՍԱՀԱԿ.— Բայց բոլոր ժողովուրդը իմ և թագավորին հետ է։

ՎՌԱՄ.— Ես չեմ ընդունիր այն ժողովուրդն, որ կղերի մը մորուքեն կպատկառի և աստվածային երկյուղ մը զգացված՝ ակամա կհնազանդի յուր թագավորին։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, վերջապես կհայտնես, որ հայուն թագը և ազատությունը կմուրաս. կտեսնե՞ս, Արտաշիր, դու վատ մը եղար և բոլոր հայ ազգը նվաստացուցիր, այն պարսիկը, որ երբեմն հայու անունեն կդողար, հիմա խրոխտաբար գահին վրայեն հայության անկումը կվճռե, անդութնե՛ր, վատե՛ր, մատնիչնե՛ր և իմ սիրելի ազգիս ոսոխնե՛ր, ամենքդիդ ալ նզովյալ ըլլաք։

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, կեցիր, թող տան թագս, և ես սուրս փայլատակելով ու արյան հովերև թռչելով՝ ազատեմ հայը և Հայաստանը։

ՍԱՀԱԿ.— Ալ բան մը չմնաց, այլ միայն անհուսության վհեր։

ԱՐՏԱՇԻՐ.— Սահակ, օգնե ինծի, կսարսափիմ ես ապագային կոծերեն. մի՛ անիծեք զիս, հայե՛ր, այլ իմ գերեզմանիս վրա պարսկաց դիակներ փռեցեք։

ՎՌԱՄ.— Լսե, Արտաշիր, սորուկ մը այդչափ հանդգնի։

ԱՐՏԱՇԻՐ.— Օգնեցեք ինձ, հայեր, ձեր թագավորին շղթա կկապեն։

ՎՌԱՄ.— Ի՞նչ ընե հայը, երբ յուր թագավորը շղթա ընտրեց։
ՆԱԽԱՐԱՐՔ.— (դրսեն) Կործանի Արտաշիր, կեցցե Վռամ արքան։
ՎՌԱՄ.— Կլսե՞ք, հայ են ասոնք։
ԱՐՏԱՇԻՐ.— Հայրենիք զանոնք հայ չընդունիր։
ՆԱԽԱՐԱՐՔ.— (դրսեն) Կործանի Արտաշիր, կեցցե Վռամ արքան։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ, ՍՈՒՐՄԱԿ, ՎԱՉԵ, ՓԱՌՆԵՐՍԵՀ, ՀՄԱՅԱԿ և ՆԱԽԱՐԱՐՔ

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ի՞նչ վճռեցիր, արի արքադ արյաց։
ՎՌԱՄ.— Թող խաղաղի Հայաստան, Արտաշիր ալ հայոց թագավորը չէ, այլ Խուժաստանի ստրուկ աքսորյալը։
ՆԱԽԱՐԱՐՔ.— Կեցցե՛ Պարսկաստան։
ՍԱՀԱԿ.— Ա՛հ, չկա մեկը որ ինծի հետ «կեցցե՛ Հայաստան» գոչե։
ՍՈՒՐՄԱԿ.— Կտեսնե՞ս, արքադ վեհափառ, կաթողիկոսն ալ աքսորյալին մեղսակիցն ըլլալով՝ զայն կպաշտպանե, ինքը Պարսկաստանի ոխերիմ թշնամին է։
ՎՌԱՄ.— Քաջ գիտեմ, և արդեն անոր համար մշտնջենավոր բանտ վճռված է։
ՍԱՀԱԿ.— Ես ալ արդեն մենաստան մը կուզեի աղոթելու և հայրենիքս ողբալու համար... բայց երանի թե օր մը հայ հզբարցս ազատության ձայները լսեի և բանտիս երկաթե դռները խորտակվելով՝ վերականգնյալ Հայաստանիս գիրկն իյնայի։
ԱՐՏԱՇԻՐ.— (ճուսաճատաբար) Ո՜հ, իսկ ես։
ՍՈՒՐՄԱԿ.— Մի՛ զարմանար, արքա քաջ, կզառանցեն։
ՍԱՀԱԿ.— Երանի թե երազ մ՚ըլլային ասոնք։
ՍՈՒՐՄԱԿ.— (Արտաշրի մոտենալով՝ որ ճուսաճատաբար գլուխը կուրծին ճեցուցած է, կամաց) Կճանչե՞ս զիս։
ԱՐՏԱՇԻՐ.— Դու զիս մի՛ ճանչեր, ես ալ զքեզ չճանչեմ։
ՍՈՒՐՄԱԿ.— Քո՛ւ պալատականդ, Աշոտն եմ։
ԱՐՏԱՇԻՐ.— Աշո՜տ... Թշվառական։
ՍՈՒՐՄԱԿ.— Բայց ամեն բան լմնցավ։
ՎՌԱՄ.— Սուրմակ, զքեզ հայոց աշխարհին հայրապետ կկարգեմ,

քու հայրենի ծառայութեանդ փոխարէն (Սուրմակ կխոնարհի):

ՍԱՀԱԿ.— Երկի՜նք, կամ կայծակդ, կամ Հայաստանդ:

ՎՌԱՄ.— Չեղ տեսնեմ, հայե՛ր, այսուհետև հայրենիք և ազատութիւն բառերն ալ մի հիշեք (սուրը կխաշն.— Վարագույրը կիջնե):

ՎԵՐՋ

Ասպատակութիւնք Պարսկաց ի Հայս
Կամ
Ավերումն Անւոյ Մայրաքաղաքին Բագրատունեաց

Թատերգութիւն երգախառն
բաժանեալ չորկուս Թվականս, ի Հինգ Արարս, չորիս պատկերս
և ի Մի Վերջաբան

ԱՆՁԻՆՔ Ա. ԹՎԱԿԱՆԻՆ

ՈԳԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ
ՏՈՒՂՐԻԼ. թագավոր Պարսից
ԳԱԳԻԿ ԱԲԱՍՅԱՆ, թագավոր Կարուց
ԹԱԹՈՒԼ, իշխան Հայկազն
ԱԲԱՍ, զորապետ Պարսից
ՊԱՐՍԻԿ ՋՈՐԱԿԱՆ ՄԸ
ԾԵՐՈՒՆԻ ՔԱՀԱՆԱ ՄԸ

ԱՆՁԻՆՔ Բ. ԹՎԱԿԱՆԻՆ

ԱԼՓԱՍԼԱՆ, թագավոր Պարսից
ԲԱԳՐԱՏ, իշխան Անւոյ
ՈՐՏԵԼՄԵՋ, զորապետ Պարսից
ԱՂԿԱՆ. իշխան Պարսից
ՏԵՐ ՎԱՀՐԱՄ, ծեր քահանա
ՋԱՐՄՈՒՀԻ, Բագարատա աղջիկը
ԱՊՐՍԱՄ, հրամանատար զորաց Անւոյ
ԼԵՎՈՆ, հայ պատանի
ԳՈՒՐԳԵՆ, ԲԱԲԳԵՆ, } *իշխանք Հայոց*
ՎԻՐԱՎՈՐՅԱԼ ՄԸ
ԱՂՋԻԿ ՄԸ
ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ ՄԸ
ՊԱՀՆՈՐԴ ՄԸ

ՍՈՍԶԻՆ ԹՎՍՆՆ

ԱՐԱՐՎԱԾ Ա.

Տեսարանն է դաշտակ մը.—Աջ կողմը բլուր մը.—Խորը ավերակ մը.—Արեւը ճորիզոնեն նոր վեր կբարձրանա.

Տեսիլ Ա.

Գագիկ Աբասյան (ձիով), *Թաթուլ* (ետևեն որուն կհետևի բանակ մը, տեսարանին աջ կողմեն կմտնեն հետևյալ պատերազմական երգը երգելով)։

Երգ

Ժամ է արդ փառաց,
Որդիք հաջագանց
Արյամբ հաղեցեք
Դափնիս վարդագեղ։

Վառյալ ի գեն ճուր,
Ի սուր և յերկաթ,
Ըզվրեժ դյուցագանց,
Լուծեք օ՜ն հառաջ։

ԳԱԳԻԿ.— (ճիվաղդ և վիրավոր) *Ահա արևը կծագի, քաջ ընկերակիցք, դիտեցեք չորս կողմերնիդ և տեսեք թե մեր հայրենիքն ի՞նչ տխուր տեսարաններ կընծայե մեր աչացը. արյան աղետալի գոլորշի մ'է պատեր մեր բերրի դաշտերը և զվարթ քաղաքները. հարցնենք նախնյաց գերեզմաններուն թե այսպե՞ս էր առաջ Հայաստան. այնպիսի ժամանակի մը մեջ ենք, որ մայրերն իրենց զավակացը խաղալիքի տեղ դանակ կուտան, որպեսզի արյան ու պատերազմի վարժվին, և հայրն այն աւտեն կճանչե յուր զա-

վակը, երբ պարսկի մը և թշնամիի մը արյամբը ներկված սուր մը իրեն ներկայացնեն։

ԹԱԹՈՒԿ.— Արքա քաջ, ես ալ այդ ուխտը մորս սրբազան գրկացը մեջ ըրած եմ և հորմես ալ զենք շարժել սորված եմ... թշնամվույն դեմ անվեհեր զինվոր մը ըլլալու համար պետք է մորմե մը՝ առել սորվիլ, և հորմե մը՝ կռվիլ։

ԳԱԳԻԿ.— Եվ ի՞նչպես չառենք այն վատ ազգը, որ հայոց անշափ անձնվիրությանց և ձեռնատվությանց փոխարեն՝ Հայուն սրած սուրը Հայուն դեմ կդարձնե, երբ զայն անտերունջ գտնե, ահա կտեսնենք Տուղրիլ որ քանի մը տարիե ի վեր զորաց նորանոր դումարտակներ ղրկելով Հայաստանը կկողոպտեր կքանդեր, հիմա ալ ինք պարսկական բանակին գլուխն անցած կուգա բոլորովին կողոպտելու և ի հիմանց կործանելու. բայց ավա՞ղ, այնչափ սոսկալի չեն թշնամվույն հարձակումները, որչափ են վատ արանց քստմնելի մատնություննները. մատնությո՞ւն... ահա այս է հոգվույս վերքը որ զիս կտանջե, իսկ մարմնույս վրայի այս վերքը որ քանի մը օր առաջ պարսիկ զորականե մը ընդունեցա, պատվանշան մը կհամարիմ, որովհետև իմ ձեռքս իր սև հոգին սադայելին նվիրեցի, իսկ հայրենյաց մատնչի մը ոգին, որ նույնիսկ սադայելին անընդունելի է, որո՞ւն կրնանք հանձնել... քաջ ընկերք, խորշինք այս ոճիրեն. քիչ առենեն Տուղրիլի դեմ պիտի պատերազմինք, Հայաստանի սեմին վրա պիտի կռվինք ամեհաբար, եթե կան ձեր մեջ անանկներ, որոնց ծանր գա այս դիրքին մեջ պատերազմիլ, թող ձգեն սուրերնին. ես առանց զիրենք մեղադրելու՝ կընդունիմ իրենց հրաժարականը։

ԹԱԹՈՒԿ.— Արքա քաջ, Հայուն սրտին մեջ պարսկական ատելութենեն ուրիշ բան մի՛ փնտռեր, մինե՞ կա հայ մը, որ պարսկին հարվածը զգացած չըլլա, եթե իր հորը կամ եղբորը վերքը չորացած կամ անհետացած է, Հայաստանի ստացած վերքերը դեռ թաց են, կմխան և մեզ կդիտեն վրեժխնդիր և արյունոռշտ աչքերու պես... (զորաց) դիմացեք, եթե կրնաք, հայրենասեր սրտեր, այն ահեղ վերքերը տեսնելով։

ՋՈՐԱԿԱՆՔ.— Վրեժխնդրությո՞ւն։

ԴԱԳԻԿ.— Կատե՞ք ուրեմն Պարսիկը։

ՋՈՐԱԿԱՆՔ.— Միշտ։

ԴԱԳԻԿ.— Կերդնո՞ւք Հայաստանի վերքերուն վրա, որ երբեք չպիտի ընկրկիք։

ՋՈՐԱԿԱՆՔ.— Կերդնումք։

ԴԱԳԻԿ.— Լսե՛ Հայաստան ձեր ուխտը։

ԹԱԹՈՒԼ.— Ի՞նչ ձայն է այս (ամենքը մտիկ կընեն, ետոտնեն աղոթքի դողդոջ ձայն մը կլսվի)։

ԴԱԳԻԿ.— Ո՞ւրկից կուգա այս ձայնը։

ԹԱԹՈՒԼ.— (ձախ կողմը ցուցնելով) Սա կողմեն։

ԴԱԳԻԿ.— Այն կողմը ավերակներ են (ձայելով)։

ԹԱԹՈՒԼ.— Ավերակի մը վրա խաչ մը կերևի։

ԴԱԳԻԿ.— Ըսել է որ մատուռ մը կա հոն։

ԹԱԹՈՒԼ.— Եվ քահանա մը անշուշտ որ կաղոթե։

ԴԱԳԻԿ.— Մեզի համար... զարնող զինվորին հետ, երանի այն քահանային որ կաղոթե։

ԹԱԹՈՒԼ.— Ահա ծերունի մը կերևի։

ԴԱԳԻԿ.— Անշուշտ աղոթող քահանան է։

ԹԱԹՈՒԼ.— Քայլերը դեպի հոս կուղղե... մեր բանակին գալը տեսած ըլլալու է...

ԴԱԳԻԿ.— Եվ անոր համար կաղոթե։

ԹԱԹՈՒԼ.— Ի՞նչ վեհ կերպարանք. եթե ծերունի քահանա մը չըլլար, պիտի կարծեի թե պատերազմի դաշտն իջնող հսկա մ'է. ոտքերը կդողդղան, բայց սիրտը կբաբախե։

ԴԱԳԻԿ.— Խոնարհեցեք իրեն (զորքերը հարգանաց շարժում կընեն, մինչդեռ քահանան տեսարանը կմտնե)։

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ և ՔԱՀԱՆԱՆ

ՔԱՀԱՆԱՆ.— Ներեցե՛ք, արի՛ զինվորներ, եթե տկար ծերունի մը գտնվելով՝ փոխանակ հայրենիքս երկաթով պաշտպանելու ձեզի պես, որ զինվոր ու երիտասարդ եք, գոհ կըլլամ միմիայն աղոթելով... բայց դեռ ահեղ առյուծ մ'եմ այն մատուռին մեջ՝ անոր որ զայն սրբապղծելու կհանդգնի. հսկել և աղոթել, ահա ասոնք միայն բաժին մնացին ինձ իմ ան-

կյալ հայրենիքիս, հսկել՝ հսկայի մը պես, աղօթել քահանայի մը պես. թեև կզարնեի երբեմն ալ զինվորի մը պես, իսկ երբ ծերացա և տեսա որ այն ծանր երկաթը ձեռքես կիյնար, մտածեցի, որ դեռ կրնայի հայրենյացս ծառայել, աստուածս զինվոր ըլլալ և աղօթել...

ԳԱԳԻԿ.— Լսե քու ձայնդ երկինք, և քու հսկած միայնիկ մատուռիդ դուռը զարնե օր մը ազատութիւնը, զինվոր Աստուածս, աղօթե՛ մեզի համար. դու քո խաչդ առ, մենք ալ մեր սուրը կառնենք, դու աղօթե՝ մենք կզարնենք, դու սիրե Աստուածդ, մենք ատենք թշնամին։

ՔԱՀԱՆԱՆ.— Աստուածմե և հայրենիքեսետև կսիրեմ այն զինվորը, որ պատերազմի դաշտը կխոյանա, օրհնյալ ըլլաք, քաջե՛ր, որ կջանաք ձեր անկյալ հայրենիքը վերականգնել, դուք մի լաք Հայաստանի վրա, այլ զարկեք այն բազուկը, որ աղետք կտեղացնե անոր գլխուն. լալը ծերերուն թողուցեք, և այն մայրերուն, որոնք իրենց զավակաց գերեզմանները կորուսած են. ծերերուն և մայրերուն վրեժը առեք, քաջեր և քավեցեք թշնամվույն արյամբը մեր եկեղեցյաց, պալատներուն և գերեզմանաց եղած սրբապղծութիւնները։

ԹԱԹՈՒԼ.— Զինվորդ Աստուծո և հայրենյաց, եթե լավ ուշ դնենք, Հայաստանի բոլոր խորշերը վրեժ կմռնչեն. Հայաստանի մեջ չկա մեկը, որուն սիրտը չափե վրեժխնդրության բոցը. մենք մեր հայրենակցաց վրեժը պիտի առնենք, պիտի պատերազմինք անոնց տեղ, որք կարող չեն սուր շարժելու, նաև անոնց տեղ՝ որք կսոսկան պատերազմի դաշտեն։

ՔԱՀԱՆԱՆ.— Մի դանդաղիք ձեր սուրը պաշտոնը կատարելու, եղբարք իմ. հառաջ վարե բանակդ, արքա քաջ, և ես ութսունամյա հասակիս մեջ՝ այս հսկա և վրեժխնդիր բանակին հետ քանի մը դողդոջ քայլ առնելով հրճվիմ գոնե, քանի որ կթոտությանս մեջ անկարող եմ ձեր փառքին մասնակցիլ։

ԹԱԹՈՒԼ.— (ձախ կողմեն ճայելով) Արքա քաջ, պարսկական բանակ մը կերևի բլրին գագաթը... տես...

ԳԱԳԻԿ.— Տուղրիլի բանակն է այն։

ՔԱՀԱՆԱՆ.— Պարսիկնե՞ր (ակռաները կրճտելով)։

ԳԱԳԻԿ.— Պատրաստ եղիք, քաջ զինակիցք իմ. ահա այն թշնամին, որուն արյանը անհագ ծարավ մը կզգան մեր սուրերը, նա դեռ իր ժանտ սուրը մեր անմեղ հայրենակցաց արյամբը չներկած՝ դիմադրենք մեր կուրծերը ժայռերու պես. հայը այն է, որ երկու պարսիկ չսպաննած չմեռնիր:

ԹԱԹՈՒԼ.— Տասը պարսիկ իմս են... կերդնում սրույս վրա:

ՔԱՀԱՆԱՆ.— Եթե ես չեմ կրնար զարնել, գոնե դիակները կոխկռտեմ:

ԳԱԳԻԿ.— Պատրա՞ստ եք:

ԶՈՐԱԿԱՆՔ.— Վրե՜ժ...

ԳԱԳԻԿ.— Առ վրեժդ ուրեմն Հայաստան (զորքերը սուրերնին կմաշեն, և պատերազմական երգով կմեկնին ձախ կողմեն.—պատկերը կփոխվի):

ՊԱՏԿԵՐ Ա

Բլուր մը.— Սրճունի վրան

Տեսիլ Գ

ՏՈՒՂՐԻԼ, ԱԲԱՍ և ԶՈՐՔ

ՏՈՒՂՐԻԼ.— Ա՛հ, որչափ մեծ հաճույք է այս, զորապետ, երբ կմտածեմ թե այսօր իմ նախնյացս դարավոր վրեժները կլուծեմ՝ անտերունչ Հայաստանը ոտնակոխ ընելով և մերկացնելով զայն բոլոր իր փառքերեն, զենքերեն և դանձերեն:

ԱԲԱՍ.— Մեր մեծազոր Արեգական շնորհն է այդ, տեր արքա, որ քու հայրենյացդ վրեժխնդրության սուրը կընեն քեզ օգնական, այսպիսի փառքե զատ ոչինչ կրնար քու զորությանդ հետ կապվիլ:

ՏՈՒՂՐԻԼ.— Որչա՞փ կզվարճանա արդյոք մեծն Արեգակ, երբ զինքը չպաշտող անօրեն ժողովրդյան մը արյամբ ներկված դաշտերուն վրա կսփռե իր ճառագայթները, և մեր

զենքն ու զրահը ավելի ահեղապես կշողացնեն Թշնամյաց ահաբեկ նայվածքին... պատերազմի երեկոյին, կարծես թե Թշնամյաց արյամբը կշտացած և կարմրած՝ իր աստվածային բնակարանը կվերադառնար, որշա՞փ գոհացավ արդյոք, երբ Սմբատաբերդ և Արծն քաղաքներուն կործանումը և ջարդը տեսավ, և այն կոտորածները՝ որ Հայաստանի բոլոր գավառները սոսկումով լցուցին։

ԱՐԱՍ.— Բայց այն ատեն մեկ սասանյան գունդ մ'էր, որ Հայաստանն այնչափ տակնուվրա ըրավ, տեր արքա, և երբ այժմ դու անձամբ քաջաց բանակի մը գլուխն անցած Հայաստան կարշավես, անշուշտ այն սոսկումով լցված բոլոր բերդերը և քաղաքները իրենց դռները պիտի բանան, երբ լսեն թե դյուցազն Տուղրիլ՝ արյաց արքան ահեղ առյուծի մը պես իրենց կնայի և իրենց վրա կքալե, կարելի է որ քանի մը հայրենասիրությամբ վառված տկար բանակները հանդգնին մեզ դիմադրելու, բայց մեր քաջերուն և փիղերուն հարձակմանց չկրնալով դիմանալ՝ պիտի փշրին փոշիի պես և պիտի խառնվին իրենց հայրենյաց ավերակաց աճյունին։

ՏՈՒՂՐԻԼ.— Ես արյունախանձ սրտիս խորը գրած եմ բոլոր Հայաստան ավերակ դարձնել, Հայությունը ջնջել առանց ավերակաց մեջ հեծող հայկական շունչ մը թողելու և այնպես հաղթական, Պարսկաստան իմ շքեղապանծ գահս դառնալ, և անկե զվարթ նայվածքով իմ դրացի երկրիս փլատակները դիտել, որոց վրա կսավառնի պարսկական սոսկումը, ալ վախ չունենալ Հայաստանեն՝ որ միշտ կիյնա և կկանգնի և կանգնած ատենը իր դրացի ազգերուն գահերը կսարսե, զինքը խեղդելու համար պատեհ առիթ մ'է իր անտերունջ վիճակը... կուզեմ Հայությունը ջնջել երկրիս երեսեն. լսե երկնից բարձրերեն և դու Արև, և ծիծաղե քու աստվածությունդ արհամարհող ազգի մը դերեզմանին վրա... ավա՜ղ որ գրեթե ծեր եմ, եթե չկրնամ կարճ կյանքիս հետ Հայաստանը վերջացնել, թագիս հետ ժառանգություն պիտի ձգեմ Ալփասլան եղբորս, որ քաջերու մեջ քաջ է, հայկական ատելությունը, և հայության

ջնջումը, չմոռնալ՝ որ հայը չորրորդ անգամ հոգի առնե. հայը այնպիսի ազգ մ'է, որ իր վերքերեն քաջ կծնի։

ԱԲԱՍ.— Հայն ա՛լ հոգի առնելիք չունի, մինչդեռ Տուղրիլի հարվածը զգաց իր ներքին խոցերով պատած սրտին վրա։

ՏՈՒՂՐԻԼ.— Դեռ դերեզմանին մեջ ալ կուզե հևալ։

ԱԲԱՍ.— Պարսկական սոսկումը կհսկե անոր դիակին վրա ինկած անոպա ժայռի մը պես։

ՏՈՒՂՐԻԼ.— Եվ չի պիտի հառնե երբեք Տուղրիլի երկաթե ձեռքին տակ, երբ նախնի հայկազանց դամբանները կկոխկրտեմ գարշապարաց տակ, անոնք որ երբեմն սասանյան գահին դեմ խրոխտացին, երբ կկործանեմ եկեղեցիները՝ ուր խաչափայտի մը առջև կանթեղ կվառեն և կերկրպագեն. երբ կտեսնեմ հայը վիրավոր և անզոր ոտքերուս տակ, որ կաղերսե կամ կսպառնա ընդունայն, երբ կտեսնեմ արյան ծով մը, որուն մեջ կշողան հայկական խոցյալ գլուխներ, և անոնց վրա պարսկական արյուններանգ դրոշը կծածանի... անհագ զվարճություն մը կզգամ։

ԱԲԱՍ.— Եվ այս ամենը հայն ավերակի մը խորշը սոսկումով ջծկած կդիտե, երբ կտեսնե որ հաղթական արծիվը կարմիր դաշտերուն վրայեն կթևարկե (հանկարծ աղմուկ մը կլսվի խորեն)։

ՏՈՒՂՐԻԼ.— Ի՞նչ ձայներ են ասոնք։

ԱԲԱՍ.— Ի՞նչ կնշանակե այս։

ԶԱՅՆԵՐ.— Կեցցե՛ Հայաստան (խորեն)։

ՏՈՒՂՐԻԼ.— Ա՜հ, հայերն են։

ԱԲԱՍ.— Կզարնվին մեր բանակին հետ։

ԶԱՅՆԵՐ.— Մահ Սասանյանց (խորեն)։

ՏՈՒՂՐԻԼ.— Անօրեննե՛ր։

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և ԶՈՐԱԿԱՆ ՄԸ

ԶՈՐԱԿԱՆ.— Տե՛ր արքա, կարուց թագավորին բանակը մեր հառաջապահ գնդին վրա հարձակեցավ։

*ՏՈՒՂՐԻԼ.— Զորապե՛տ, շուտ բանակը ոտք հանե և այդ հանդուգնները խորտակե (Ռուեմմեզ պատերազմական փողը

կենչե և բոլոր զորքերը կժողովին. Տուղրիլ բերին գագաթը կելնեն և կդիտեն): *Ահա կզարնվին, մեղվի երամ մը արծվի երամի մը դեմ... Հայոց բանակը քիչվոր է, կրնաք պաշարել և ձեր ահեղ սուրերուն մեջ այդ հանդուգն բանակը խեղդել:*

ԱԲԱՍ.— (զորաց) *Հառա՜ջ:*

ԶՈՐՔ.— *Մա՜հ Հայկազանց* (սուսերամերկ կմեկնին):

Տեսիլ Ե

ՏՈՒՂՐԻԼ (առանձին բլուրեն վրայեն կդիտե)

Ո՞վ է այն իշխանը, որ մեր բանակին մեջ ինկած պարսկաց դիակներ կփռե, և չթողուր որ մեկը իրեն հարված մը տա... ահա կտեսնեմ Կարուց թագավորն ալ զորքերը կքաջալերե միշտ, բայց չպիտի հաջողի. Աբասի բանակը կհասնի, այն իշխանին հետ մեկը կզարնվի, Արսուրան ամիրային որդին է... կփախչի... իշխանը եռևեն կվազե... ա՜հ, օգնություն հասավ... զարկավ (վշտանալու շարժում մը կընե) *դեռ ասդին անդին կվազե, զոհ կինտռե կատաղի վագրի մը պես, երկու հայու հետ չորս պարսիկ կիյնա... բայց ահա հայոց բանակը պաշարվեցավ... Կարուց թագավորը կփախչի... չբռնվեցավ... և այն իշխանը դեռ կզարնե... պիտի բռնվի... ահա պաշարեցին զինքն ալ... դեռ կուզե զարնել... Պարսիկները կվախնան անկից. բայց վերջապես բռնվեցավ Արսուրան ամիրային որդին՝ այն քաջին զարնողը՝ որ այնչափ սիրելի է ինձ... բանակը փախստական հայոց զորքերը կհալածե* (դրսեն պարսից զորքերը «հաղթությո՜ւն, հաղթությո՜ւն» կաղաղակեն): *Ահա Աբաս այն իշխանը դերի բռնած հոս կբերե...* (բլուրեն վար կիջնե և արշունի վրանը կմտնե):

ԶՈՐԱԿԱՆՔ.— (դրսեն) *Կեցցե՜ Տուղրիլ, կեցցե՜ Պարսկաստան:*

ՏՈՒՂՐԻԼ.— *Ա՜հ, այս օրվան հաղթության դափնիին հետ նոճի խառնվեցավ, արդյոք մահացո՜ւ էր հայ իշխանին ամիրային որդվույն տված հարվածը:*

ՁԱՅՆԵՐ.— *Կեցցե՜ն արիք, մա՜հ անարյաց* (դրսեն):

Տեսիլ Զ

ՏՈՒՂՐԻԿ, ԱԲԱՍ, ԹԱԹՈՒԿ (շղթայակապ), գերիներ, զորք հայոց, զորք պարսից

ՏՈՒՂՐԻԿ.— Ի՞նչ եղավ Արտուրան ամիրային որդին, զորապետ։

ԱԲԱՍ.— Վիրավորված է, սեր արքա, գինքը վրանը բերինք խնամելու համար։

ՏՈՒՂՐԻԿ.— Ինչպե՞ս է վերքը։

ԱԲԱՍ.— Ուսին վրա է։

ՏՈՒՂՐԻԿ.— Այս հայ իշխանն է գինքը զարնողը, այնպես չէ՞։

ԱԲԱՍ.— Այո՛։

ՏՈՒՂՐԻԿ.— Ես այս բլրին գագաթեն կդիտեի։

ԹԱԹՈՒԿ.— Ես էի։

ՏՈՒՂՐԻԿ.— Քաջ իշխան, ես քու բոլոր քաջագործությանդ հանճարեսաես եղա, եթե Արտուրան ամիրային որդվույն տված վերքդ մահացու չէ, և եթե չմեռնի, չեմ սպաններ զքեզ, կազատեմ, իսկ եթե մեռնի, դու ալ իրեն զոհ պիտի ըլլաս։

ԹԱԹՈՒԿ.— Եթե հարվածն իմս է անկարելի է որ չմեռնի, իսկ եթե ուրիշի մը, այդ չեմ գիտեր, հիմակվընե զարկ գիս, կամ թող բոլորովին, որ գենքս առած դարձյալ անտերունջ հայրենիքս պաշտպանեմ, ծանր են ինձ այս շղթաներս, երբ հայրենիքս անդին կողբա և օգնություն կխնդրե, ավելի աղեկ է որ չը լսեմ իր աղեկեզ ձայնը։

ՏՈՒՂՐԻԿ.— Հայրենի՞քդ կուզես դեռ պաշտպանել։

ԹԱԹՈՒԿ.— Այո՛։

ՏՈՒՂՐԻԿ.— Որո՞ւ դեմ։

ԹԱԹՈՒԿ.— Քեզի։

ՏՈՒՂՐԻԿ.— Առանձի՞ն։

ԹԱԹՈՒԿ.— Սուր մը բավական է ինձ ընկեր։

ՏՈՒՂՐԻԿ.— Ո՛վ քաջ, կարե ալ հույսդ հայրենյացդ վերականգնումեն։

ԹԱԹՈՒԿ.— Ինչո՞ւ։

ՏՈՒՂՐԻԿ.— Մինե հայրենյաց անունը կրնա՞ կրել մոխրակույտ մը։

ԹԱԹՈՒԿ.— Զգուշացիր, ո՛վ թագավոր, գուցե այն աճյունին տակ դեռ կայծեր կան պահված... ինչպես գերիին սրտին մեջ

վրեժը. զարհուրելի պիտի ըլլա գուցե օր մը այն հայն, որ փլատակաց խորշերու մեջ կծկած՝ ատելությունն կանուցանե իր թշնամյաց դեմ։

ՏՈՒՂՐԻԿ.— Այն խորշը իր գերեզմանն է, և պարսիկն իր մահը։

ԹԱԹՈՒԿ.— Հայը չը մեռնիր երբեք երբ պարսիկը զարնե, գուցե Աստված զարնե։

Տեսիլ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՋՈՐԱԿԱՆ ՄԸ

ՋՈՐԱԿԱՆ.— Տեր արքա, Արսուրան ամիրային որդին մեռավ։

ՏՈՒՂՐԻԿ.— Վերջապես։

ԹԱԹՈՒԿ.— Ես չըսի՞, եթե իմ զարկածս է չապրիր։

ՏՈՒՂՐԻԿ.— Պատրաստ եղիր։

ԹԱԹՈՒԿ.— Ի՞նչ բանի։

ՏՈՒՂՐԻԿ.— Մեռնելու։

ԹԱԹՈՒԿ.— Գոհ եմ որ պարսկին սիրտը ցավ մը քանդակելով գոնե կմեռնիմ, բայց ավելի գոհ պիտի ըլլայի, եթե սուր ի ձեռին մեռնեի... ա՜հ Հայաստան, քաղցր հայրենիք, վերջապես քու ազատությանդ արշալույսը չտեսած՝ պիտի փակեմ աչերս. բայց Հայաստանի սրտին վրա նստած տեսա արյունոտուշտ պարսիկը... մեռնի՜լ... թողուլ Հայաստանը, մեռնիլ շղթայակապ այն մարդերեն, որ կատեմ և կուզեմ անխնա ջախջախել... ա՜հ, սո՛ւր իմ (կատաղաբար գինքը պատող զորաց կնայի). կատեմ զձեզ, տվեք սուրս և առանձին կռվիմ ձեզի հետ, ա՜հ, դուք վատ եք, կվախնաք...

ՏՈՒՂՐԻԿ.— Վերջապե՞ս։

ԹԱԹՈՒԿ.— Տուր հրամանդ։

ՏՈՒՂՐԻԿ.— Տարեք և զարկեք զինքը հոն, ուր ամիրային որդին սպաննվեցավ (զորք կտանին զայն)։

ԹԱԹՈՒԿ.— Մնաս բարյավ, Զարմուհի... Հայաստա՜ն (կմեկնի)։

ՏՈՒՂՐԻԿ.— (Որեղմեզի) Զորապետ, իր աջ թևը կտրելով Արսուրան ամիրային ղրկե մխիթարելու համար զինքը, որ որդին վատ բազկե մը մեռած չէ (վարագույրը կիջնե)։

(Վերջ Ա. արարվածին)

ԵՐՔՐՈՐԴ ԹՎԱԿԱՆ

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ք

Տեսարանն է Անի բաղաքին ներքնակողմը.—Բագարատ իշխանի պարարանը փառավոր սրահ մը.—խորը դուռ մը.—երկու կողմը պատուհան:

Տեսիլ Ա

ՋԱՐՄՈՒՀԻ (առանձին)

Ահա Անիի ալ զարկավ իր ճիրանը անգութ Ալփասլան. ի՞նչ սոսկում է այս, որ բոլոր Հայաստանը պարածածկեր է. մթութիւն մը կա բոլոր անմեղ ճակտի վրա, սևութիւն մը՝ ամեն սրտի մեջ... ալ ամեն բան լմնցավ Հայաստանի համար, ալ կմարի բոլորովին Հայաստանի հուսո ասաղին արյուններանգ լույսը... Բագրատունյան անտերունջ վիճակին մեջ Տուղրիլի պես ճիվաղ մը Հայաստանն անխնա ոռնակոխ ընելէ վերջը իր սուրը կժառանգե իր եղբայրը Ալփասլան, որ Հայաստանի հոգին կլափե... Թաթո՛ւլ, քա՛ջդ իմ Թաթուլ, քեզ ալ Տուղրիլի անգութ սուրը լափեց... Պատերազմի արյունոտ դաշտին վրա, հեռու ինձնե, ինծի մնաս բարյավ ըսելեդ վերջը, այն տխուր մնաս բարյավը կյանքն ալ ինծի կրկնեց, դեռ առագաստդ չի մտած՝ գերեզման իջար, և այն հարսանեկան քողին տեղ, որ մեր գլուխները պիտի միացներ, սգավոր քող մը ձգեցիր ինձ. դոնե գերեզմանի քար մ'ալ չթողուցիր, որուն վրա գայի երբեմն լալու... Հայաստան, այս արյունային ժխորին մեջ միմիայն հիմարը ազատ է ժպտելու (Ապրսամ դռանը մեջ կերևի):

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆ և ԱՊՐՍԱՄ

ԱՊՐՍԱՄ.— Նա և այն որ քաջ մ'է. ո՞վ իշխանուհի:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դո՞ւ ես, զորապետ...

ԱՊՐՍԱՄ.— Մի խորշիր Ջարմուհի, զորապետ մը՝ որ քու նշանածիդ հետ միևնույն պատերազմի դաշտին վրա կռվեցավ

և միևնույն պարսկական վերքն առավ, և եթե Թաթուլ մեռավ, ինքը դեռ ողջ է և կսիրե։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Թաթուլը մեռած չէ ինձ համար։

ՍՊՐՍԱՄ.— Պարսիկները զինքը գերի բռնած չպահննեցի՞ն միթե։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Նա դեռ ողջ է ինծի համար։

ՍՊՐՍԱՄ.— Ո՞ւր է ուրեմն։

ՋԱՐՄՈՒՀԻ.— (սիրտը ցցնելով) Հոս է, կանգուն հսկայի մը պես, անմահ ճառագայթի մը պես։

ՍՊՐՍԱՄ.— Ջարմուհի, կցավիմ որ կյանքիդ արժեքը չես գիտեր. ի զուր սերդ սև երազներով կմարես և գեղեցկությանդ վարդերը, որ հսկաներու նայվածքն անգամ խոնարհեցնելու կարող են, դառն արցունքներով կխամրես... գեղեցիկ ես, Ջարմուհի, սիրվե քաջ մը, սիրե զինվոր մը, որ իր սուրեն առաջ կսիրե քեզ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ես սիրեցի և դեռ կսիրեմ, զորապետ... մի՛ ջանար մեր սիրո դրախտին թովիչ օձը ըլլալ, դու՝ որ քու քաջագործություններովդ հարգելի ես ինձ, մի՛ ջանար քու սիրովդ ատելի ըլլալ... ես երկնքի այն ջահալից խորանին առջև ուխտեցի Թաթուլը սիրել, մեռա՛վ... կհարգեմ իր հիշատակը, ինչպես կհարգե քաջ մը իր հաղթական սրույն բեկորը. երբ հիշեմ՝ դառն է իր մահը, երբ լամ՝ քաղցր է իր հիշատակը. զորապետ, մի խռովեր սև ամպի մը պես կնոջ մը երազը, ես առի մնաս բարյավ սերեն, առի մնաս բարյավ աշխարհեն, և մտա այն մենաստանը, ուր հիշատակները կփափսան... ես ա՛լ միայն հիշատակի մը և հայրենիքի մը համար կապրիմ։

ՍՊՐՍԱՄ.— Կուզե՞ս որ անիծեմ այն արևը, որ երկնքին մեջտեղ շողաց... Ջարմուհի, լսե՛ զինվորի մը, որ սուր մը և սիրտ մ՚ունի... սուրս գոհ է, վասն զի իր տենչը կատարված է, կշտացած է թշնամյաց արյամբը, իսկ սիրտս դատարկ է, դու պիտի լեցնես զայն քու սիրովդ... դու կըսես ինձ, թե գնա ուրիշ մը գրկե, մինչդեռ ձիս քեզի կքաշես և կկաշկանդես ոսկի շղթաներով։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Թո՛ղ զիս... զորապետ։

ՍՊՐՍԱՄ.— Կսիրեմ զքեզ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Մի կրկներ իմ ականջիս այդ աղետալի բառը, որ

դժոխոց բոցին նման կայրե զիս... եթե դեռ սրտիս խորը հուզես, սիրո տեղ ատելություն պիտի գտնես։

ԱՊՐՍԱՄ.— Անգո՜ւթ...

ՋԱՐՄՈՒՀԻ.— Սերը չէ, որ քու սիրտդ կլափե, այլ դժոխային բոց մը. դու սիրելե ավելի կուզես քու զինակցիդ սերը և հիշատակը սրբապղծել։

ԱՊՐՍԱՄ.— Ջարմուհի՜...

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հեռացի՛ր ինձնե, եթե չես ուզեր ատվիլ անկե, զոր սիրել կկարծես։

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, պարսկի մը դաշույնեն ավելի սուր են և կխոցեն սիրտս քու խոսքերդ, Ջարմուհի՜։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հարգե զինակիցդ։

ԱՊՐՍԱՄ.— Ո՜հ, չեմ կրնար այն բոցին դիմանալ, որ իմ ներսս կլափե, եթե ատելության տիպարն ալ ըլլաս, դարձյալ պիտի սիրեմ զքեզ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Զգուշացիր, զորապետ։

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, մի՛ բարկանար, վասն զի ավելի գեղեցիկ և հրապուրիչ կըլլաս... այն աչերուդ բոցերը, որ զիս նախատելու համար դուրս կցայտեն, սրտիս բոցերուն հետ կխառնվին և ավելի ահավոր կընեն հոս վառող հրդեհը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Տե՛ս, զորապետ ամենքը մեր քաղաքը պաշարող պարսկաց հետ քաջաբար կպատերազմին, իսկ դու՝ որ քաղաքին զորաց հրամանատարը պիտի ըլլաս...

ԱՊՐՍԱՄ.— Դադրեցո՛ւր նախ սրտիս պատերազմը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Վերջապես կհրահրես կուրծքիս տակ ատելության հուրը։

ԱՊՐՍԱՄ.— Այդչափ համառ մի՛ ըլլար, Ջարմուհի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դնա նախ պարտքդ կատարե... մինչդեռ մեր Անի քաղաքը Ալփասլանի զորքերով պաշարված՝ օր օրի վտանգն իրեն կսպառնա, մինչդեռ ամեն մարդ քաղաքին փրկությանը համար ճիգ կթափե, մանուկը պաշարող բանակին քար կնետե, քահանան կաղոթե, ծերը կհսկե, կինն իր ամուսինը կամ եղբայրը կքաջալերե, դու հանդուգն քայլ մը կնետես այն սեմեն ներս՝ ուր մենակյաց վշտահար և քողարկյալ կին մը կտքնի և...

ԱՊՐՍԱՄ.— (ընդմիջելով) Ա՛լ բավական է։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դնա պարտքդ կատարելու, մի՛ թողուր որ սուրդ ժանգոտի և սրտիդ մեջ սպրդի դժոխային բոց մը. դնա հայրենիքդ պաշտպանելու, ջանա որ հաղթական դափնիներով պսակյալ ճակատդ դժոխոց անդնդային սեմին չխոնարհի, նայե երկինքը՝ ուր աստղը կփայլի, անբիծ ըրե սիրտդ այն աստղին պես. քույր մ'է որ քեզի կխոսի... օ'ն, դո՛ւրս եկ այս սեմեն, ուր սգո քողի մը տակ կհեծե վշտահար կին մը, որու սրտի մեջ հայրենյաց հույսն անգամ կմարի, և դու աղետալի սիրո մը հետքը կփնտռես ընդունայն և կջանաս գիս վատ մը ընել, սիրադրուժ մը...

ԱՊՐՍԱՄ.— Ա՛հ, ո՛չ, Զարմուհի... այլ ո՞վ պիտի մարե սրտիս այս հուրը, որ միշտ կլափե զիս։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Արցունքս, զոր ջերմաջերմ կթափեմ դեռ իմ նշանածիս անհետ գերեզմանին վրա։

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, այդ չէ կարող։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Խիղճ չունիս ուրեմն։

ԱՊՐՍԱՄ.— (ոտքն իյնալով) Միայն սեր կզգամ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ապրսա՜մ։

ԱՊՐՍԱՄ.— Զարմուհի՜։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Մեկը կուգա։

ԱՊՐՍԱՄ.— (ոտք ելնելով) Ո՞վ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հայրս։

ԱՊՐՍԱՄ.— Վերջին խոսք մը ուրեմն... (Զարմուհի սպառնական նայվածք մը կուղղե) Մնաս բարյա՜վ (կմեկնի)։

ՋԱՐՄՈՒՀԻ.— (միևնակ) Կուզե որ առեմ զինքը։

Տեսիլ Գ

ՋԱՐՄՈՒՀԻ և ԲԱԳԱՐԱՏ

ԲԱԳԱՐԱՏ.— Աստվա՜ծ իմ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ինչո՞ւ խռոված ես, հայր իմ, ի՞նչ կա, միթե քաղաքին վտանգի մե՞ջ է... խոսե՛...

ԲԱԳԱՐԱՏ.— Զարմուհի, Աղկան իշխանը որ միշտ ձեռնտվություններ կըներ մեզ, մագաղաթի մը վրա անունց խորհուրդները գրելով՝ գաղտնի մեր պարսպեն ներս կնետեր, հիմա ալ նույնպես կհայտնե թե պարսիկները ահագին բաբան մը բերած են, որ 50—60 լիտր ծանրութեամբ քար

կնետեն եղեր, և մեր պարիսպներն անով պիտի քարկոծեն... և այն բաբանը չվնասվելու համար բամբակի հակերով պատսպարած են։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Միթե ասոր հետևանքը շատ ծանր կրնա՞ ըլլալ...

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ կրսես, աղջիկս... երևակայե անգամ մը, վաթսուն լիտր ծանրությամբ քար մը...եթե պարսպին[1]) զարնե...

ՋԱՐՄՈՒՀԻ.— Մի հուսահատիր, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Եվ ի՞նչ հույս կրնամ նշմարել... բոլոր քաղաքին մեջ քարող կարդացուցի և իմացուցի թե՝ ով որ հաջողի այն բաբանն այրել, դինքը մեծամեծ շնորհքներով պիտի վարձատրեմ, և եթե ինքը պարսից կատաղության ալ զոհ ըլլա, բաբանը մոխիր դարձնելե վերջը, իր բոլոր ընտանիքը երջանիկ վիճակի մը պիտի հասցնեմ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Աղեկ խորհեր ես, հայր իմ, անշուշտ կգտնվի քաջ մեկը, որ այդ ձեռնարկը գլուխ հանե։

ԲԱԳԱՐԱՏ.— Տեսնենք... եթե այս գործին մեջ ալ հաջողինք, ա՛լ քաղաքին դիմադրության վրա չեմ կասկածիր, մինչդեռ պարսիկներն ալ մեծ կորուստ ընելուն համար շատ հավանական է, որ քաղաքին առմանը վրա բոլորովին հուսահատած մեկնին... բայց եթե այսպիսի գործ մը ստանձնող քաջասիրտ մեկը չգտնվի, խիստ աղետալի պիտի ըլլա մեր վիճակը. մտածե մեկ մը, որ երբ անգութ պարսիկն իր սև ոտքը քաղաքին սեմին վրա դնե, Անի՝ Բագրատունյաց այս գոռոզ, հաղթական և փառավոր մայրաքաղաքը, որ այնշափ քաջաց որբան հանդիսացած է, հայոց աղգին վերջին տկար մնացորդին ահագին գերեզմանը պիտի ըլլա... մոխրակույտ մը... Աստվա՜ծ իմ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Մի՛ հուսահատիր, հա՛յր իմ, դեռ չէ մարած հայրենասիրության վսեմ կայծը հարվածյալ հայոց սրտերուն մեջ, թեպետ բոլոր Հայաստանի հողին վրա հայոց արյամբը չկարմրած ափ մը անբիծ հող չմնաց, բայց դեռ հայոց խավարամած սրտին մեկ անկյունը նվիրական և անբիծ խորշ մը կա, ուր կհրահրի հայրենյաց հուրը։

ԲԱԳԱՐԱՏ.— Իսկ մատնչությո՞ւնը... այդ չե՞ս ըսեր... եթե Վեհատ Սարգիսի պես փառամոլ և ուրացող ճիվաղ մը չըլլար, հի-

1) Պարսկին։

մա Անի զվարթ էր, թագուհի էր, Բագրատունի թագավոր մը կար իր թափուր գահին վրա, Գագիկ՝ որ հիմա օտարության և պանդխտության մեջ կհալի ու կմաշի... մերկացուցին Հայաստանը իր թագեն և փառքերեն, և արդ սգալի ու անշուք դագաղ մը կպատրաստեն անոր համար։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Իրավունք ունիս, հա՛յր իմ... ա՜հ, երանի թե ես ալ փոխանակ տկար և վախկոտ կին մը ըլլալու՝ հողի վրա պառկող և սուրին կրթնող զինվոր մը ըլլայի, և թուրս լոկ ընկեր առած խոյանայի արծվո մը պես պատերազմի դաշտը, թափեի թշնամյաց սև կառափներ, ազատությո՜ւն պոռայի և զարնեի, իսկ երբ սուրս խորտակեր, անոր բեկորին վրա իննկած՝ տայի շունչս հայրենյաց խոցյալ սրտին վրա։ Ավա՜ղ, երբ զինվորի մը գոնե բախտակիցը պիտի ըլլայի, բախտը խլեց զայն ինձնե, թող չտվավ, որ գոնե ինքը պատերազմի դաշտեն դարձած աաենը՝ ճակտին քրտինքը սրբեի և վերքը կապեի։

ԲԱԳԱՐԱՏ.— Թաթո՜ւր։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Այո՛ (կուլա)։

ԲԱԳԱՐԱՏ.— Մի՛ լար, Զարմո՛ւհի, հանցանք է հայրենյաց նահատակի մը վրա լալը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Գոնե իր վերջին մնաս բարովը լսեի իր բերնեն, համբուրեի իր վերքը, սրտիս վրա տար իր վերջին շունչը փոխանակ անարգ թշնամյաց դեմ ոռնալուխ ըլլալու, գոնե գերեզման մը ունենար, որ արցունքովս թրջեի։

ԲԱԳԱՐԱՏ.— Մի՛ լար անոր վրա, մինչդեռ հայրենիքը ժպտեցավ. միմիայն հարգե իր հիշատակը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Միշտ պիտի հարգեմ, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Ա՛ղջիկս, գոցենք Թաթուլի փառավոր գերեզմանը և չխռովենք իր դյուցազնական քունը և մեր արդի անորոշ կացությանը վրա խորհինք, ապագային ես պիտի ըլլամ պատասխանատու Անիի վերականգնմանը կամ կործանմանը, մեր պարսպին զարնող այն ահագին քարը խոր վերք մը պիտի բանա սրտիս մեջ... արդեն այս տարաճայնությունը մեծ հուզմունք պատճառած է քաղաքին մեջ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հուսա՛, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Դյուրին է հուսալ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Անշուշտ հնարք մը կգտնվի... ինչպես որ պարսից այնչափ հանդուգն ջանքերն ի դերև հանող հնարքներ եղան։

ԲԱԳԱՐԱՏ.— Շատ անգամ այն պարսիկ իշխանն էր ընողը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Անգամ մ'ալ Աստված կօգնե։

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և Տ. ՎԱՀՐԱՄ

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Այո՛, Աստվա՛ծ։*

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ ըրիր, տեր հայր։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ կընե ծեր քահանա մը, ժողովուրդը խրատխոսել և աղոթել։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ վիճակի մեջ է ժողովուրդը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հուսահատ վիճակի մը մեջ էր, բայց ես քաջալերեցի զիրենք իմ տկար ձայնովս երկինք ցուցնելով և ամենակալին բարութիւնը հեղհեղելով, որ իր բարկութիւնը մեր վրա չթափե. ի՞նչ հանդուգն փափաք, կուզեք որ Աստված կապե հայուն վերքը, որ հայը հայուն կուտա։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Այնպես է։

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրեմն կհուսահատի՞ս մեր կացութեանը վրա։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Բնա՛վ. հույսը գերեզմանին դռանը մեջ անգամ կշողա... հույսը Աստծո ժպիտն է... կգթա Աստված, երբ երկնքի համապատկերը կտեսնե մարդուս վրա, որ արցունքներով շողացող պայծառ աչոք իրեն կնայի հուսալից. վա՛յ մեզի, որ երբ մեր քաղքին մեջ մատնիչ մը կշնչե և կխոկա անդունդը նայող սև ժայռի մը պես։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ ընելու է ուրեմն։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Պետք է հզորի մը պես ջանալ և խրախուսել տկարը... ասով կրնանք թշնամյաց հանդուգն ջանքերուն դիմադրել. ա՛յս է մեր ընելիքը, եթե դեռ թշնամին հաղթանակե, Աստուծո կամքն է այն, գուցե ալ շատ շնչեց և փառավորեցավ երկրիս երեսը հայը, և գերագույն կամքը կուզե որ սորա հսկա և փառավոր անունը թաղվի իր երկրին հոյակապ շենքերուն փլատակին ներքև, ինչպես ուրիշ ազգեր և երկիրներ փշրեցան այն աստվածային կամաց անդիմադրելի փոթորկին առջև։

ԲԱԳԱՐԱՏ.— Ա՜հ, սոսկալի է այդ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ ահագին անդուդ մը պետք է հայը թաղելու համար։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Աստուծո ափ մը հողը կբավե, Ջարմուհի՛։

ԲԱԳԱՐԱՏ.— Հայը դեռ շատ կանգուն կկենար, եթե երակացը մեջ շրջան չառներ իր հայկական արյանը խառնված այն թույնը, որ չեմ գիտեր ո՛ւսկից ժառանգած է... իր ներքին վերքերը Հայաստանը օրհասական ըրին և ո՛չ թե թշնամյաց արտաքին հարվածները. կզարմանամ թե ինչպե՞ս Հայաստան դեռ կշնչե կանգուն և դողդողջուն. և իր փետռեկտյալ ճակտին վրա դեռ անջինջ կկրե ազգության դրոշմը... Հայաստանի փլատակաց մեջեն միշտ հայու գլուխներ կփթթին հետզհետե։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ազատության արմատ ձգած ծաղիկներն են անոնք, այն ազատությունը որ Հայկ իր նետովը հնչեցուց ու տարածեց և փառամոլ ուրացողք հանդգնեցան զայն իրենց սրտին մեջ խեղդել։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Անե՞ծք անոնց։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Դժոխք իրենց հետ կխոսի, անոնք՝ որ երկրի վրա երկաթե շղթա անցուցին ուրիշին, իրենք բոցեղեն շղթա կժառանգեն հոն՝ ուր արդարությունը կորոտա իր ամենեն ահեղ ձայնովը։

ԲԱԳԱՐԱՏ.— Միայն այն վտառերը իջիվ թե իյնային Աստուծո շանթեն՝ փոխանակ հայրենիքն ալ թավալելու։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հայաստան սնուց զանոնք։

ՋԱՐՄՈՒՀԻ.— (պատուհանեն նայելով) Հա՛յր իմ, քաղաքին մեջ ժխորը հետզհետե կբարձրանա, և ժողովուրդը ալեկոծյալ ծովու պես կտատանի։

ԲԱԳԱՐԱՏ.— Արդյոք պիտի ներկայանա՞ ինձ քաջ մը խոստանալու համար թե ինքը պատրաստ է այն ահագին բաբանը այրելու ձեռնարկել։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Մանազկերտցիք ալ Մանազկերտի առջև պարսից մեկ ահագին բաբանը այրեցին հնարքով մը Տուղրիլի արշավանց ժամանակ. բայց չեմ հուսար՝ որ պարսիկք այս գործը դյուրությամբ հաջողցնել տան մեզի։

ԲԱԳԱՐԱՏ.— Եթե ձեռնարկողը մահը աչքը առնե, զորքերն իրենց

վրանը, քաշված ժամուն՝ կրնա դեռ պարսիկներն իր վրա չհարձակած այն ահագին բաբանը հրո ճարակ ընել և գուցե ձեռքերնուն ալ փախչիլ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Չկա՞ արդյոք այդպիսի քաջասիրտ և հայրենասեր մեկը։

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ և ԼԵՎՈՆ

ԼԵՎՈՆ.— Վեհապն իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ կխնդրես, ո՛վ պատանի։

ԼԵՎՈՆ.— Դու քաղաքացվոց մեջ քարող հանեցիր գտնելու համար մեկը, որ հանդգնի ի սեր հայրենյաց՝ Պարսից մեր քաղաքին դիմաց կանգնած և մեծ վտանգ սպառնացող այն ահագին բաբանն այրել։

ԲԱԳԱՐԱՏ.— Այո՛, և ձեռնարկողին մեծամեծ շնորհքներ խոստացա, և եթե ինքը մեռնի՝ իր ընտանյաց։

ԼԵՎՈՆ.— Ես շնորհքներ չեմ ուզեր, և ոչ ալ ընտանիք ունեմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Դո՞ւ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Աստված իմ։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Քաջասիրտ տղա։

ԼԵՎՈՆ.— Այո՛, ես որ որբ եմ, ո՛չ հայր, ո՛չ մայր և ո՛չ եղբայր ունիմ, այլ միայն թշվառ հայրենիք մը, ահա այն է հայրս, մայրս ու եղբայրս. հայրենիք մը ունիմ միայն, որ կսիրեմ և զայն սիրելու համար կզգամ, որ պետք է մեռնիլ, մեռնիլ, խառնել իմ երակացս արյունը այն դյուցազանց թափած արյան հեղեղներուն, որք իրենց աշխարհին քշեցին տարին գերության ահագին չղթաները և անդունդը թափեցին։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Եկո՛ւր գրկեմ զքեզ սրտիս վրա, ո՛վ նորատի դյուցազն։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հայաստանի հիշատա՞կը։

ԲԱԳԱՐԱՏ.— Անիի հաղթական բուրգը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Պիտի կրնա՞ս հաջողիլ։

ԼԵՎՈՆ.— Եթե Հայաստան դեռ պիտի ապրի։

ԲԱԳԱՐԱՏ.— Կապրի Հայաստան, եթե քեզի պես քաջեր ըլլան։

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Երանի՛ քեզի, որ այդ նորատի հասակիդ մեջ հայրենյաց փրկարար մը պիտի հանդիսանաս։*

ՋԱՐՄՈՒՀԻ.— *Ա՜հ, հայրենասիրությունն ի՞նչ գեղեցիկ ճառագայթ մ'է վեհ և անմեղ ճակտի մը վրա (աճագին բոմբյուն մը կլսվի խորեն) Աստվա՜ծ իմ։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Ահա առաջին հարվածը։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Սի՛րտ առ, քաջասիրտ տղա։*

ՀՆՎՈՆ.— *Բանի մը պետք չունիմ... օրհնությունդ, զինվորդ Աստուծո։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Օրհնյա՛լ ըլլաս, զավակս* (ձեռքերը գլխուն կդնե)։

ԲԱԳԱՐԱՏ.— *Պատրաստ ըլլանք* (Տ. Վահրամի) *դու գնա եկեղեցի, տեր Հայր, աղոթելու, ես ալ երթամ քաղաքացիքը քաջալերելու* (Ջարմուհիին) *իսկ դո՞ւ։*

ՋԱՐՄՈՒՀԻ.— *Հայրենակցաց վերքերը կապելու* (ամենքը կմեկնին.— Պատկերը կփոխվի)։

ՊԱՏԿԵՐ Բ

Անիի պարսպաց առջև դաշտակ մը. տեսարանին խորը բաբաքեր.— պարսպին վրա խոց մը կերևի։

ՏԵՍԻԼ Ջ

ԱԼՓԱՍԼԱՆ, ՈՐՏԼՄԵՋ և ՋՈՐՔ

ԱԼՓԱՍԼԱՆ.— *Ահա մեր առաջին հարվածը պարսպին վրա ահագին վերք մը բացավ, թող տեսնեն Անիցիք, և իրենց փրկությանը վրա հուսահատած անձնատուր ըլլան, առանց պարսկաց հաղթական ճակատը քրտնելու։*

ՈՐՏԼՄԵՋ.— *Այսչափը բավական է զիրենք ահաբեկելու, արքադ վեհափառ... քիչ մը ետքը պատդամավոր մը կը փութա հաշտության պայմաններ առաջարկել։*

ԱԼՓԱՍԼԱՆ.— *Բայց ես երբեք չպիտի դթամ իրենց վրա, այսչափ առեն իմ զորությանս ընդունայն դիմադրելնուն համար, ես այսչափ ժամանակի մեջ հարյուր քաղաք կապտած, քանդած և ջարդած էի... Մանազկերտի և Պարսկաց վրեժը պիտի առնեմ բոլոր Հայաստան ավերակ դարձնելով, այս-*

պես ընդունեցի Պարսկաց թագը իմ դյուցազն Տուղրիլ եղբորմես. իր ցուրտ գերեզմանին և արևին վրա այս ահավոր ուխտը կրկնեցի, չնչել Հայաստանը։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Եվ պիտի հաջողիս, տե՛ր արքա։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Կերդնում ահավոր սրույս վրա։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Քու մեկ հրամանդ կբավե՝ Հայաստանի հայերը սարսելու։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Թող Հայաստանի ավերակները կրկնեն սոսկմամբ առյուծ Ալփասլանի անունը, ուր նա որոտաց. այս է այն հիշատակը, որ հոս պիտի թողում և հայկական կմախք մը իմ շքեղապանծ գահիս պատվանդան։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Տե՛ր արքա, քեզ երախտապարտ պիտի ըլլա Պարսկաստանի ապագան։

ԱԼՓԱՍԼԱՆ.— (զորաց) Դուք ալ գացեք, քաջեր, ձեր վրաններուն մեջ հանգչելու, և պատրաստ եղեք քիչ առեննն այս գոռոզ քաղաքը կործանելու և կողոպտելու... (զորքերը կմեկնին) քաջդ Որտելմեզ, մենք ալ երթանք հանդչելու, այս հարվածը բավական է (կմեկնի)։

Տեսիլ Է

ԱՂԿԱՆ (առաջին)

Ահա Անիի պարսպին վրա խոր վերք մը, վերջապես պիտի տապալի նա։ Ալփասլան կկատղի՝ կարծելով որ իր բոլոր հնարքները քաղաքացվոց նախատեսությամբը կիճանան, չգիտեր՝ որ իր բանակին մեջ մատնիչ մը կա, որ իր բոլոր խորհուրդները գաղտագողի քաղաքացվոց կհաղորդե... Ա՜հ, Զարմուհի, գեղանի աղջիկ, դու ես որ զիս այս մատնությունները գործադրելու կդրդես... անիծյալ ըլլա այն օրը, որ քեզ տեսա այդ պարսպին վրա և սիրեցի. ա՜հ, կսիրեմ ու կամոթհարիմ, կմատնեմ և կկատղիմ. անիծյա՛լ սեր... Պարսիկ մը հայուհի մը սիրե և անոր սիրուն իր հայրենիքը մատնե՜... բայց սերն ամեն բանի կհաղթե, պետք է տեսնել դինքը (կմեկնի)։

(Պարսպին վրա ճեռաբրիր գլուխներ կերևին)։

ՆԵՐՍԵՆ.— Պատերա՛զմ, պատերա՛զմ։

Տեսիլ Ը

Լեվոն

(Միևնակ կերևի, ձեռքը նիզակ մը, որուն ծայրը մագաղաթ մը կշարժի)։

Լեվոն.— *Պատգամավո՜ր, պատգամավո՜ր* (բաբանին կուզե մոտենալ)։

Պարսիկք.— (դրսեն) *Բաբանը պիտի այրե, բաբանը.* (մեծ աղմուկ)։

Հայեր.— (պարսպին վրայեն) *Փախի՛ր, պարսիկները կհասնին։*

Լեվոն.— (որ դյուրավառ նեղուկ մը բաբանին վրա թափած էր, բաբանը կսկսի բռնկիլ, Լևոն կուզե փախչիլ, պարսիկները ամեն կողմե զինքը կպաշարեն) *Պարսկաց ձեռք չեմ իյնար* (կդառնա շուտով և հանկարծ բաբանին բոցին մեջ կնետվի և աչերը երկինք հառելով կաղաղակե) *Կեցցե՜ հայրենիք* (Պարսիկները որ զինքը պաշարած էին, ապշած և կայծակնահար կմնան.— վարագույրը կիջնե)։

(Վերջ Բ. արարվածին)

ԱՐԱՐՎԱԾ Գ

Տեսարանն է՝ Բագարատա ապարանին մեջ կամարակապ և այուձազարդ սրահ մը. պատեն կախված գենիեր և զրահներ.—տեսարանը մութ է:

ՏԵՍԻԼ Ա.

ԲԱԳԱՐԱՏ և Տ. ՎԱՀՐԱՄ

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Ի՞նչ կմտածես, իշխան:*

ԲԱԳԱՐԱՏ.— *Բաբանը և միանգամայն ինքզինքն այրող հայրենասեր պատանվույն վրա կենտրոնացած է ուշս... ա՜հ, որչափ սրտաշարժ և վսեմ էր այն վայրկյանը, երբ նա «Հայրենի՜ք» գոչելով բոցին մեջ նետվեցավ:*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Հիրավի, զարմանալի էր իր արիասրտությունը. պիղծ պարսից ձեռք չիյնալու համար ինքզինքը կրակը նետեց, և. դինքը շրջապատող պարսից այն կատաղած խումբը շանթահար մնաց, երբ այն հայրենասիրական վսեմ տեսարանը տեսավ. Ալփասլան Անին պաշարելեն ի վեր է, որ շատ հանդուգն քաջագործություններ տեսավ Անիցվոց կողմանե:*

ԲԱԳԱՐԱՏ.— *Եվ դեռ մինչև հիմա Անին իր ճանկերուն տակ առնելե հուսահատած չմեկնիր, և մինչև ե՞րբ սրտատանջ վիճակի մը մեջ պիտի տատանինք:*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Ինչո՞ւ սրտատանջ ըլլա մեր վիճակը. երբ մեր հույսը ցամքեցնող բաբան մը կար, այն ալ մոխիր դարձավ քաջի մը կրակովը:*

ԲԱԳԱՐԱՏ.— *Եվ մինչև դեռ նորանոր կատաղի և հանդուգն փորձերու չի՞ պիտի ձեռնարկեն:*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Թող այդպես ըլլա. մենք ինչվան հիմա ի՛նչ որ ըրինք, ասկեց ետքն ալ նույնը կընենք դարձյալ, արիութիյուն և միութիյուն. դարձյալ կկրկնեմ, եթե մեր քաղաքին մեջ մատնիչ մը չխոկար, կրնայինք խորտակել այսպես Ալփասլանի երկաթե կամքը։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Այս անգամ պարսիկին է կարգը. նա կընե մատնութիյունը։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Ազկան իշխանը։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Կզարմանամ այդ իշխանին մեր վրա ցցուցած համակրական ցույցերուն և անձնվիրութիյանց վրա. ես այնպես կկարծեմ, թե գաղտնիք մը կա ծածկված իր գործոցը տակ... կամ գուցե բան մը կակնկալե մեզնե։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Ի՞նչ ակնկալութիյուն կրնա ունենալ, եթե ճշմարիտ պարսիկ մ'է, քանի որ պարսկի մը երջանկութիյունը իր խողխողած հայոց թվույն քանակութենեն կախում ունի, ես այնպես կկարծեմ, թե այս իշխանը պարզապես կգթա մեր դառն կացութիյանը վրա, նա գուցե Պարսկաստանի անապատներուն մեջ գոհար մ'է։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Գրեթե նա եղավ Անիի ազատարարը։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Ճշմարիտ է։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Եթե դեռ պարսիկք բաբանին այրելուն վրա կատաղած ուրիշ ձեռնարկի մը խորհուրդ ընեն, մեր բարեսիրտ իշխանը սովորականին պես գաղտնի կերպով անշուշտ կիմացնե մեզի։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Այլ դեռ ի՞նչ մնաց գործադրելու պարսից համար, ի՛նչ որ կուզեն թող ընեն. բավական է որ մենք միաբան և արթուն՝ հարվածը ձեռքերնիս՝ հսկենք այն վիշապին գըլխուն վրա... Ո՛վ երկինք, մենք կաղոթենք և կը զարնենք, այս է մեր զորութիյունը, դու ալ օգնե, որ հայութիյան վերջին արձանն ալ չտապալի թշնամյաց առջև։*

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ և ՊԱՀՆՈՐԴ

ՊԱՀՆՈՐԴ.— *Վեհազն տեր, այս մագաղաթը գտանք դարձյալ Անիի պարսպաց ներսը։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Ազկան իշխանը գրած է անշուշտ* (կառնե)... *տես-*

Նենք (կարդալով) «Որտեղմեզ զորապետը զորաց գլուխն անցած Անիի արևելյան պարսպացը տակ խրամատ կփորենն»։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ա՜հ նենգավորներ։

ԲԱԳԱՐԱՏ.— Պետք է ճանկեր[1]) և քարեր պատրաստել՝ զորքերը քարկոծելու և զորապետը որսալու համար։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Բայց պետք չէ դանդաղիլ, ի՛շխան, պետք է շուտով գործի սկսիլ, որովհետև վտանգը կսպառնա վայրկեներ վայրկյան։

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրեմն երթանք։

Տեսիլ Գ

ԱՊՐՍԱՄ (առանձին ներս կմտնե)

Վերջապես չեմ կրնար սանձել սրտիս այս փրփրերախ դժոխքը. պիտի տեսնեմ զինքը, պիտի իյնամ իր ոտքը, պիտի նետեմ սուրս իր առջին ըսելով՝ «առ սուրս, տուր սերդ». և եթե դեռ մերժե իմ սերս, սոսկալի պիտի ըլլամ իմ սրտիս դժոխքին նման... կսիրեմ ես, ինչպես կսիրե վագրն իր արյունաթաթավ որսը. կսիրեմ, ինչպես կսիրե պարսիկն իր արևը. ինքը կզայրանա ինձ դեմ, երբ կըսպառնա, աստղի մը նման շողշողուն կըլլա ինձ համար. երբ կտժգունի՝ ճառագայթ, երբ կշառագնի՝ բոց մը... սակայն դարձյալ կդողամ իրմե, ինչպես ոճրագործն աստղե մը... ա՜հ, ոտքի ձայն մը կա... ինքն է կարծեմ...

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆ և ՋԱՐՄՈՒՀԻ

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դու հո՞ս, զորապետ։

ԱՊՐՍԱՄ.— Քեզ տեսնել ուզեցի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ բանի համար։

ԱՊՐՍԱՄ.— Վասն զի քեզնե հեռու դառն և խավար է ինձ կյանքը. Ջարմուհի, քու ժպիտդ միայն քաղցր և լուսավոր պիտի ընե զայն։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Զորա՛պետ։

---

[1]) A—գանկեր։

ԱՊՐՍԱՄ.— Ինձ դեմ մի զայրանար, Զարմուհի, այլ անիծե այն ձեռքը, որ այս կրակը սիրտս ձգեց։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ձեզ այնչափ հանդուգն չէի կարծեր։

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, ի՞նչ ընեմ, եթե սերը զիս այսչափ հանդուգն կընե և վրաս կծիծաղի դժոխային ծիծաղով մը։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Գնա, ա՛լ առելի ես ինձ։

ԱՊՐՍԱՄ.— Զարմուհի՜։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ա՛նգութ, ի՞նչ կուզես այն կնոջմեն, որ երազ մը ունի լոկ, տխուր վերջալույս մը... հեռացի՛ր ինձմե։

ԱՊՐՍԱՄ.— Առանց քու թևերուդ մեջ սարսռալու... անկարելի է այդ, ա՛յն ատեն սիրտս քեզնե կբաժնվի, երբ գլուխս մարմնես զատվի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Դեռ կհանդգնի՞ս։

ԱՊՐՍԱՄ.— Պիտի սիրեմ զքեզ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Բայց ես զքեզ կատեմ։

ԱՊՐՍԱՄ.— Դու ատե՛, ես սիրեմ, տեսնենք ո՞վ պիտի հաղթանակե (կուզե մոտենալ աննոր)։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Հեռո՜ւ վատ մարդերե։

ԱՊՐՍԱՄ.— Մի՛ դրգռեր զիս, Զարմուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ամո՞թ քեզի... ա՛լ արատեցիր հաղթական սուրդ... թաթխեցիր զայն վատության տիղմին մեջ, ալ վատ պիտի հրատարակեմ քեզ քաջաց մեջ. պիտի ըսեմ թե Ապրսամ զինվոր չէ, այլ ոճրագործ մը, որ կանանց սրտերուն հետ կպատերազմի... զորապե՛տ, հոս է Թաթուլի սովերը՝ մեր երկուքին մեջ արձանացած, դեռ պիտի հանդգնի՞ս։

ԱՊՐՍԱՄ.— Ո՛չ թե մեռյալի մը սովերը մեր մեջտեղ, այլ եթե դժոխք մ'ալ ըլլա, պիտի անցնիմ քեզ դրկելու համար իմ բոցավառ սրտիս վրա. (կուզե վրան հարձակիլ)։

ԶԱՐՄՈՒՀԻ.— (հանկարծ կեցտվի, և պատին վրայեն կախված սուր մը կհափշտակե. Ապրսամ կանգ կառնե) Մոտեցի՛ր եթե կրնաս... ա՜հ տակո՛ր կկարծեիր զիս քու հանդուգն վատությանդ դեմ... կկարծես թե հայուհի մը չը՛ կրնար սուր շարժել... տե՛ս... պատերազմի դաշտին վրա ճակատ առ ճակատ մենամարտած թշնամվույդ կնմանիմ, կին մը՝ ոչ միայն սուր, այլ տապար ալ կգործածե իր պատիվը պաշտպանելու և չարբապղծելու համար անոր հիշատակը,

զոր կսիրեմ... հեռացի՛ր հալածական կնոջ մը ատելության առջևեն։

ԱՊՐՍԱՄ.— Պիտի զղջաս, Զարմուհի, վաղը հալածական քայլս դեպի դժոխք պիտի ուղղվի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Դու որ զինվոր մ'էիր և սուրովդ չկրցար խոնարհեցնել կնոջ մը ճակատը, ալ ուրիշ զենք չունիս որ դարձածես. վա՛տ ես, չեմ ուրանար այդ, բայց ես պատվո համար կռվող հայուհի մ'եմ, հայուհի մը, որ առագաստին մեջ կդողդողա, բայց անտի դուրս հսկայի մը պես հանդուգն է։

ԱՊՐՍԱՄ.— Դողա՛ վրեժխնդրութենես, Զարմուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Վա՛տ։

ԱՊՐՍԱՄ.— Պիտի տեսնես (սպառնալից կմեկնի)։

Տեսիլ Ե

ԶԱՐՄՈՒՀԻ (առանձին)

Ա՜հ, Թաթո՜ւլ, սրտիս հատորը, ինչո՞ւ ձիս որբ ու միայնակ թողուցիր, տե՛ս, քու զինակիցներդ անգամ կհանդգնին մեր սգավոր և թափուր առագաստը մտնել... մոռցան զքեզ ամենքը, միայն քու Զարմուհիդ չմոռցավ, որ իր սրտին խորը քու մշտնջենավոր մահարձանդ կանգնեց... կթքնես մահարձանիդ ամբարիշտ և վատ զինակիցներեդ մեկը. եթե հավիտենականության շղթան կտրեր, կիջնեիր շանթի մը պես այն անօրենին դլխուն և ջախջախեիր, այլ ավա՜ղ, անգութ է հավիտենականության շղթան... լռեցե՛ք, հաղթության փողեր և աղոթքի զանգակներ, երբ ես իմ Թաթուլիս վրա կուլամ։

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆ և ԲԱԳԱՐԱՏ

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրախ լուր մը, Զարմուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ լուր, հայր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Պարսից Որտեսմեզ սպարապետը գերի բռնվեցավ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչպես, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Անշուշտ զարմանալի կթվի քեզ։

զոր կսիրե... հեռացի՛ր հալածական կնոջ մը աեւելության առջեւեն։

ԱՊՐՍԱՄ.— Պիտի զղջաս, Զարմուհի, վասնզի հալածական քայլս դեպի դժոխք պիտի ուղղվի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Դու որ զինվոր մ'էիր և սուրովդ չկրցար խոնարհեցնել կնոջ մը ճակատը, ալ ուրիշ զենք չունիս որ դարձածես. վա՛տ ես, չեմ ուրանար այդ, բայց ես պատվո համար կռվող հայուհի մ'եմ, հայուհի մը, որ առագաստին մեջ կդողդղա, բայց անտի դուրս հսկայի մը պես հանդուգն է։

ԱՊՐՍԱՄ.— Դողա՛ վրեժխնդրութենես, Զարմուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Վա՛տ։

ԱՊՐՍԱՄ.— Պիտի տեսնես (սպառնալից կմեկնի)։

Տեսիլ Ե

ԶԱՐՄՈՒՀԻ (առանձին)

Ա՜հ, Թաթո՜ւլ, սրտիս հատորը, ինչո՞ւ զիս որբ ու միայնակ թողուցիր, տե՛ս, քու զինակիցներդ անգամ կհանդգնին մեր սգավոր և թափուր առագաստը մտնել... մոռցան զքեզ ամենքը, միայն քու Զարմուհիդ չմոռցավ, որ իր սրտին խորը քու մշտնջենավոր մահարձանդ կանգնեց... կթքնեմ մահարձանիդ ամբարիշտ և վատ զինակիցներեդ մեկը. եթե հավիտենականության շղթան կտրեր, կիջնեիր շանթի մը պես այն անօրենին գլխուն և ջախջախեիր, այլ ավա՜ղ, անգութ է հավիտենականության շղթան... լռեցե՛ք, հաղթության փողեր և աղոթքի զանգակներ, երբ ես իմ Թաթուլիս վրա կուլամ։

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆ և ԲԱԳԱՐԱՏ

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրախ լուր մը, Զարմուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ լուր, հայր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Պարսից Որտեսմեզ սպարապետը գերի բռնվեցավ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչպես, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Անշուշտ զարմանալի կթվի քեզ։

ԳՈՒՐԳԵՆ.— Մինչդեռ մեր նոր հաջողութեանց գոհութեանը համար եկեղեցւոյ զանգակները կհնչեն, մենք ալ հոս գավաթներ բաղխենք Հայաստանի կենաց։

ԲԱԲԳԵՆ.— Ճշմարիտ է, ա՛լ բավական դողացինք պարսից առջև։

ԳՈՒՐԳԵՆ.— Թող մեր խնճոյից ձայները մինչև Ալփասլանի ականջը հասնի։

ԲԱԳԱՐԱՏ.— Կկատղի նա։

ԲԱԲԳԵՆ.— Վագրի մը պես։

ԳՈՒՐԳԵՆ.— Կկրճտեն ակռաները, կերկնցնեն ճիրանը, բայց ահագին պատեր և երկաթե կամք մը կգտնեն՝ փոխանակ հայուն օձիքը գտնելու։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ահա հայանի կերևի, ո՛վ վեհազն իշխաններ, որ Ալփասլանի նման անապատի առյուծի մը զորութեանը այսչափ դեմ դնելնուս և զայն մինչև անգամ կորուստներով հուսահատեցնելնուս միակ պատճառը մեր մեջ տիրած միութիւնն է եղեր, և այն հայրենասիրութիւնը՝ որ ամեն զգացմանց վրա կհաղթանակե... ա՜հ, շատ սքանչելի կտեսնեմ հայուն արիութիւնը, կպնդեմ թե աշխարհի վրա հայրենասիրութեան կրակով հրահրած պայծառ ճակատ մը ավելի գեղեցկութիւն չկա... և իր վիրաց արյան հոսումը մեկ ձեռքովը բռնող և մյուս ձեռքովը թշնամին զարնող զինվորին ճգնաժամեն ավելի վսեմ տեսարան մը չկա։

ԳՈՒՐԳԵՆ.— Իշխանուհին շատ գեղեցիկ խոսեցավ։

ԲԱԲԳԵՆ.— Արդյոք դեռ որչա՞փ պիտի կատղի Ալփասլան իր զորապետին գերի բռնվելուն վրա։

ԳՈՒՐԳԵՆ.— Մանավանդ որ գրեթե բանակին հրամանատարութիւն ընողը այն էր, շատ քաջ զորապետ մ'է այն... Գագիկ Աբասյան՝ Կարուց թագավորին հրամանատարութեանը տակ Տուղրիլի արշավանաց դեմ պատերազմած ատենները բանակին մեջ զորապետ էր նա (Բաբգենի), այնպես չէ՞ իշխան։

ԲԱԲԳԵՆ.— Այո՛, երեկվան պես կհիշեմ այն պատերազմը։

ԲԱԳԱՐԱՏ.— Մեր քաղաքացիքը աղեկ որս մը որսացին իրենց ճանկերովը՝ ի շնորհս Աղկան իշխանին, որ սովորականին պես մագաղաթով մը պարսից դիշերային դավը մեզ իմացուց գաղտնի կերպով։

ԲԱՐԳԵՆ.— *Կզարմանամ պարսիկ իշխանի մը հայոց ցցուցած այս տարօրինակ անձնվիրութեանը վրա։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Ես այնպես կգուշակեմ, որ այդ անձնվիրութեան տակ տարօրինակ գաղտնիք մը ըլլալու է։*

ԲԱՐԳԵՆ.— *Այնպես ըլլալու է, եթե ոչ անկարելի է, որ պարսիկ մը հայոց վրա այսչափ խնամք և հոգ ունենա։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Բայց սեղանը պարապ մնաց։*

ԲԱՐԳԵՆ.— *Ուրեմն խմենք։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Եթե կհաճիք, մեր հին Գողթան բանաստեղծներուն մեկ երգը նախ նվագենք, վասն զի երաժշտութենե շատ կախորժիմ ես։*

ԱՄԵՆՔԸ.— *Երգենք։*

ԵՐԳ ԽՆՃՈՒՅԻՑ

Խմենք գինին, աւուռ գինին, կենաց բաժակ,
Ֆաջաց բաժին դրավ երկինք, համենք հաւակ՝
Տխուր դիմաց վարդ կը սրակե կարմիր գինին,
Աչաց ծիծաղ, ծրտանց ոգի տա բոցագին։

Խմենք գինին, աւուռ գինին, կենաց բաժակ,
Ֆաջաց բաժին դրավ երկինք, համենք հաւակ.
Գինին ոգի, սեր կարծուրծե մաւած սրտին,
Մենք զայն խմենք, և բող վերեն հրեշակք ժպտին։

ԳՈՒՐԳԵՆ.— *Կարծեմ ա՛լ խմելուն կարգը եկավ, իշխաններ, եթե կուզեք, ես լեցնեմ ձեր գավաթները.* (կսկսի բոլոր գավաթները լեցնել) *ամենքնուդ ալ միակերպ, ո՛չ մեկուն շատ և ոչ մյուսին քիչ. Ակոռիի գինին է այս, որ բոլոր Ասիո մեջ իր կրակոտ համբավը տարածած է։*

ԱՄԵՆՔԸ.— *Խմենք* (ամենքը գավաթնին իրար զարնելով կխմեն) *Հայաստանի կենացը* (սույն միջոցին զինվորներ Որտելմեզ զորապետը կբերեն շղթայակապ)։

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ և ՈՐՏԵԼՄԵԶ

ԲԱԳԱՐԱՏ.— *Քակեցե՛ք զորապետին շղթաները. որչափ որ պարսիկները մեր արյունը խմելու և մեր փառքը մարելու ան-*

հագ տենչ մը կզգան, հայերը դարձյալ իրենց պարսիկ գերվույն շղթաներն անգամ կքակեն, և սուր կրող զորապետը կպատվեն։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Պետք չէ ինձ այդ պատիվը, իմս են այս շղթաները, կընդունիմ. մինչդեռ անհուն ցավ մ՝ է ինձ հայու մը օղակ կրել պարանոցս, դուք ավելի դառնացնել կուզեք իմ ճակատագիրս, դուք, հայոց գծուծ իշխաններ, լիաբերան շնորհ առատաձեռնելով ինձ։

ԱՄԵՆՔԸ.— (զայրացած) Նախատի՞նք։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Ձեռքերնիդ սուրերնուդ կտանիք գոռոզաբար, մինչդեռ շղթայակապ կտեսնեք դիս ձեր առջև... դուք հոս ձեր կարճ թուրերովը, թզուկնե՛ր, դատավոր կկարծեք ինքզինքնիդ արի հսկայի մը, որուն խոժոռեցավ սև ճակատագիրը։

ԲԱԳԱՐԱՏ.— Հսկա մը այդպես չխոսիր, հսկա մը չնախատեր իրեն շղթաները քակող՝ և սուրը պատվողը... այնչափ նենգության և ըրկանաց համակրությամբ և պատվով համապատասխանող հայը դեռ կհանդգնի՞ս նախատել, ժանտ պարսիկ, մինչդեռ հայը իր դարավոր վրեժները ծածկել կուզե անհիշաչարությամբ, դու դեռ կհրահրես զայն... պետք է որ ամոթահարեիր այնչափ նենգավոր արարքներու դեմ հայոց ցցուցած վեհանձնությունը տեսնելով։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Վեհանձնությո՞ւն. ի՞նչ վեհանձնություն կրնա ընել իր մոխրակույտ ավերակներն հայրենիք անվանող լալկան ու անզոր ժողովուրդ մը Սասանյան սպարապետի մը, որ իր եռևեռն ահեղ վրեժ մը կթողու, վրեժ մը, որ երբեք չպիտի հագենա և չպիտի մարի հայոց արյամբը։

ԳՈՒՐԳԵՆ.— Նախ Հայաստան համայն հայության վրեժը լուծե, ետքը Պարսկաստան պարսիկ զորապետի մը վրեժը։

ԲԱԳԱՐԱՏ.— Այդչափ հանդուգն նախատինքներդ, որոնք վատություններ կբուրեն, կընային զքեզ հայու մը վրեժխնդիր սրույն մատնել, բայց հայը վատություն կսեպե իր շղթայակապ գերին զարնել։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Եթե այդչափ ցավ կպատճառեր քեզ հայկական լուծը, ինչո՞ւ ուրեմն վիզդ անցնել տվիր, հսկադ Սասանյան։

ՈՐՏԵԼՄԵՋ.— (զայրացած) Ա՜հ, անգութ ճակատագիր։

Տեսիլ Թ

ՆՈՒՅՆՔ և Տ. ՎԱՀՐԱՄ

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ է այս, իշխաններ, մինչդեռ քահանան կաղոթե, զինվորը պե՞տք է թուլնա զվարճության սեղանի մը վրա, այնպե՞ս պետք է ընդունիլ երկնից շնորհաց հաջողությունը... քաշվեցեք այդ սեղաններն, ուր Սադայելը կծիծաղի... (կամաց կամաց սեղաններն կ'քաշվին և Տ. Վահրամի բոլորտիքը շրջանակ մը կկազմեն)։

ԳՈՒՐԳԵՆ.— Հայաստանի կենացը կ'քամեինք մեր բաժակները, տե՛ր հայր։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հայաստանի վերականգնումը դինվո գավաթին մեջ չէ՛, իշխան, Հայաստան մեր միությամբը և երկաթե կամքով կվերականգնի... զվարճության և ուրախության ժամ չէ՛ մեզի համար այս ժամը, այլ գոհություն տալու ժամ է Արարչին, որ մեր հայրենասիրական ջանքերը կպսակե... պետք չէ որ թուլանանք, մինչդեռ թշնամին կհսկե մեր դռանը մեջ։

ԲԱԲԳԵՆ.— Միշտ նույնն եմք պարսից դեմ, տե՛ր հայր։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Միշտ նույնն են նաև պարսիկները մեզի դեմ, վատ, նենգավոր և խորամանկ։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Ի՞նչ ըրավ քեզ պարսիկը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ինչ ըրա՞վ, ինչ որ ըրավ մինչև այս ալևոր հասակս՝ ե՛ս գիտեմ, և անկեց առաջ ինչ որ ըրավ, Մասյաց ալևոր սարերը գիտեն. հայն իր վեհ դյուցազներուն որի՞ն վրեժն առավ։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Եվ դեռ չե՞ս մտածեր թե ի՞նչ հայկական զոհեր պիտի մորթվին իմ գերեզմանիս վրա վրեժս քավելու համար։

Տեսիլ Ժ

ՆՈՒՅՆՔ և ՊԱՀՆՈՐԴ ՄԸ

ՊԱՀՆՈՐԴ.— Վեհա՛զն տեր, Աղկան՝ պարսիկ իշխանը կուգե քեզ տեսնել։

ԲԱԳԱՐԱՏ.— Հայոց բարերարը... Թող գա (պահնորդը կմեկնի)։

ՈՐՏԵԼՄԵՋ.— (մեկուսի) Ի՞նչ կլսեմ։

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Ի՞նչ կնշանակէ արդյոք իր գալուստը։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Արդյոք մեծ վտա՞նգ մը կա, որ կուգա անձամբ իմացնելու մեզի։*

ՈՐՏԵԼՄԵՋ.— *(մեկուսի) մատնիչ մ'է եղեր նա։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Ահա ինքը* (Աղկան իշխանը կերևի, որ Որտելմեզ ճոճ շղթայակապ տեսնելով՝ շանթահար և շփոթած կմնա, Որտելմեզ իր չարագուշակ նայվածքը աճոր վրա կիառե)։

Տեսիլ ԺԹ.

ՆՈՒՅՆՔ և ԱՂԿԱՆ

ԱՂԿԱՆ.— (մեկուսի) *Որտելմե՞զ։*

ՈՐՏԵԼՄԵՋ.— *Ա՜հ, վատ մատնիչ... մատնություններ ընելէ վերջը կհանդգնիս դեռ հայոց դիրկն իյնալ. այդպե՞ս սորվեցուց քեզ հայրենիքդ, այդպե՞ս սորվեցար հայերն ատել և Պարսկաստան սիրել... դողա՛ այն արևեն, որ գլխուդ վրա կշողա ահեղ վրեժխնդրության շանթի մը պես... նա՛յ այն անդունդը, ուր պարսկաց անեծքներ կմռնչեն. քեզ կանիծե հայրենիքդ, վա՛տ արանց, ես կկարծեի թե աշխարհի վրա միայն հայը կրնամ ատել, այլ անկե ատելի էակ մ'ալ կա եղեր, պարսիկ մը, որ իր հայրենիքը կմատնե։*

ԱՂԿԱՆ.— (որ նուաճատ և գլուխը կախած՝ վշտագին մտիկ կրներ, դեպ ի Որտելմեզ կառաջանա և ոտքն իյնալով) *Գթությո՜ւն... ներե՜ թշվառիս, ո՜վ վեհազն քաջ։*

ՈՐՏԵԼՄԵՋ.— *Ներե՜լ... միթե ես կրնա՞մ ներել. անիծել խնդրե ինձնե, անիծե՜լ։*

ԱՂԿԱՆ.— *Ուրեմն ի՛նձ ալ կիյնա անիծել զայն, որ իր աղդած սիրովը և գեղեցկությամբը սիրտս մթագնեց... զքեզ Զարմուհի... սիրեցի զքեզ, անիծյալ ըլլաս* (կմեկնի նուաճատ, ամենքը շվարյալ կմնան)։

ՈՐՏԵԼՄԵՋ.— *Ավելի՜ վատ, կսիրե հայուհի մը* (հանկարծ դրսեն դղրդյուն մը կլսվի)։

ԲԱԳԱՐԱՏ.— *Ի՞նչ է այս* (ամենքը միջնադռան կմոտենան)։

ԳՈՒՐԳԵՆ.— *Աղկան իշխանն է իյնողը։*

ԲԱՐԳԵՆ.— Ինքզինքը զարկեր է։
ՈՐՏԵԼՄԵՋ.— Չթողուց որ երկինք զարնեին։

Տեսիլ ԺՌ

ՆՈԻՅՆՔ և ՊԱՀՆՈՐԴ

ՊԱՀՆՈՐԴ.— Վեհազն տյարք, Ապրսամ զորապետն իր հրամանատարության տակ գտնված զորաց բազմությանը հետ թըշնամյաց կողմն անցավ։
ԱՄԵՆՔԸ.— (սարսափած) Ա՜հ։
ՋԱՐՄՈՒՀԻ.— Վա՜տը։
Տ. ՎԱՀՐԱՄ.— Ո՜վ երկինք։
ՈՐՏԵԼՄԵՋ.— Խնդացեք, հայե՛ր։
ԲԱԳԱՐԱՏ.— (զորաց) Զորապետին գլուխը կտրելով պարսից բանակը նետեցեք։
ՈՐՏԵԼՄԵՋ.— Եվ թող իմ վրաս փլչի Անի։
ԲԱԳԱՐԱՏ.— Ողջ են դեռ հայերը։
Տ. ՎԱՀՐԱՄ.— Արդա՜ր են երկինք (վարագույրը կիջնե)։

(Վերջ Գ. Արարվածին)

ՍՐԱՀՎԱԾ Դ

Տեսարանն է Բագարատ իշխանի պարարանը, սգապատ սրահ մը:

Տեսիլ Ա.

ԲԱԳԱՐԱՏ և ՋԱՐՄՈՒՀԻ

(Վարագույրը բացված ատեն նստած են մտազբաղ, հեռուեն կոչնակահարություններ և աղոթքներ կլսվին):

Աղոթք

Ո՛վ տեր, լսե մեր աղոթից տխուր ձայն,
Որ հուսահատ ասո՛ւ հեզ մնաճիմ ապաստան,
Զհոմ տուր մեզի, և բոդ կանգնի մեր նահատ,
Եկեղեցիմ, սաղմոսք ըլլան բոդ ազատ:

Տուր, Տեր կանգնել մեզ դրոշակ փառավոր,
Հավերակուսս մեր հայրենյաց սգավոր
Հայնժամ կենոմ հառնե ի վեր Հայաստան,
Հայնժամ ծաղկին արբոց պատակ բաշխության:

ԲԱԳԱՐԱՏ.— Ա՜հ, ինչ սոսկալի հարված էր այս:
ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ պիտի ընենք, հա՛յր իմ:
ԲԱԳԱՐԱՏ.— Չեմ գիտեր, հուսահատությունն արդեն քաղաքին ամեն կողմը տիրած է, և հիմակվընե կսկսին իրենց կորուստները լալ, ամեն մարդ:
ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ պիտի ըլլա մեր վիճակը:
ԲԱԳԱՐԱՏ.— Ամեն բան լմնցավ Անիի համար, այս ալ Հայաս-

տանի մյուս հոյակապ քաղաքաց նման, որք ավերակ դարձան, անոնց ճակատագիրը կկրե։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Միշտ սև մատնություն։

ԲԱԳԱՐԱՏ.— Տեսնենք այն վատը՝ Ապրսամ զորապետը, որ իր հայրենիքը դավեց, պիտի դառնե՞ իր վարձքն ու հանգիստը, ո՛չ երբեք. նույնիսկ իր խիղճը պիտի խռովե միշտ զինքը և հալածե արյունարբու հրեշի մը պես, ինչվան որ հոգեսպառ դիրեղման իջնե, ուր կծավալին արդեն դժոխոց բոցերն իր հոգին լափելու համար...

ՋԱՐՄՈՒՀԻ.— Մի հուսահատիր, հա՛յր իմ, կպատերազմինք դեռ Թշնամյաց դեմ մինչև մեր արյան վերջին կաթիլը։

ԲԱԳԱՐԱՏ.— Անկարելի է այդ, Ջարմուհի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ինչո՞ւ, հայր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Մենք ա՛լ չենք կրնար պարսից ահեղ զորությանը դեմ դնել, մինչդեռ Ապրսամ սպարապետը զորաց մեծ մասըն իրեն կողմը որսալով Թշնամյաց կողմն անցած է, այնպես համոզելով զիրենք՝ թե Անի երկար աաեն չէ կարող պարսից զորությանը դիմադրել, և փոխանակ պարսից ահեղ սրույն ճարակ ըլլալու, անոնց կողմն անցնելով կրնան դոնե կյանքերնին ազատել։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Բայց, դարձյալ պետք է քաջալերել զինվորները, որ պարսպին վրա կենալով ի դերև հանեն Թշնամվույն ջանքերը։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ կըսես, Ջարմուհի, բոլոր քաղաքային պարիսպները պահպորդելու չափ զինվոր չմնաց. քաղաքին մեջ մինակ խառնիճաղանճ բազմություն մը մնաց, ծերոց, կանանց և տղոց, որոնք ավելի ժողովրդական հուսահատությունը կզրգռեն։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ ընելու է ուրեմն։

ԲԱԳԱՐԱՏ.— Բոլոր իշխանները քիչ մը ետքը հոս պիտի ժողովին և քաղաքին բռնելիք ընթացքին վրա համաձայն որոշում մը պիտի տրվի... տեսնենք ի՞նչ պիտի ըլլա որոշումնիս։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ինչ որոշում ալ ըլլա՝ խեղճ ժողովուրդն ուրիշ փրկություն չունի, բայց եթե պարսկին սուրը կամ շղթայն... ընտրել երկուքին մեկը. ո՞րն ընտրե, երկուքն ալ սոսկալի են. երկուքն ալ հայության ջնջում կսպառնան,

մեկը կենաց դահիճ, իսկ մյուսն իրավանց դահիճ... ա՜հ, մեր վիճակին վրա մտածելն անգամ սոսկումով կլեցնի և կսառեցնե զիս... միայն Անիի պարիսպները կան կանգուն ընդդեմ թշնամյաց դիմաց, և այն պարիսպներուն ետև հայուն տկար կուրծը կա, ալևոր ծերունիներ, հերարձակ մայրեր, ողբագին տղաքներ, վերջապես այնպիսի անձեր, որք միայն աղերսել գիտեն թշնամվույն։

ԲԱԳԱՐԱՏ.— Գերեզմաննիս փորենք, ա՛ղջիկս։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ո՛չ, հայր իմ, ես միտքս դրի չմեռնիլ, մինչև որ պարսիկ մը արյունաթաթավ ոտքերուս տակ չփռվի։

ԲԱԳԱՐԱՏ.— Ջես կրնար զարնել, Ջարմուհի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ինչո՞ւ, հայր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Դու չես տեսեր պարսկի մը արյունոռուշտ աչքը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Եվ դու ալ չես կարդացեր, հա՛յր իմ, կնոջ մը սիրտը և չես կրնար կարդալ. պիտի տեսնես, հա՛յր իմ, թե ինչպե՛ս սուր պիտի շարժեմ։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ, ԳՈՒՐԳԵՆ, ԲԱԲԳԵՆ և ԻՇԽԱՆՔ

ԳՈՒՐԳԵՆ.— Ի՞նչ պիտի ընենք, իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Պետք է որ համաձայն մտածենք մեր ընելիքին վրա։

ԲԱԲԳԵՆ.— Անիի վիճակը շատ խղճալի է։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Պետք է դարման մը գտնել անոր։

ԳՈՒՐԳԵՆ.— Շատ ուշ մնաց դարմանը, որովհետև պարսից կրկնապատկյալ զորությունը կծանրանա մեր վրա, անկարելի է դեմ դնել, վասն զի այսուհետև ալ պարսից խորհուրդները մեզ իմացնող մը չըլլալե զատ՝ մեր զինվորներեն շատերը թշնամյաց կողմն անցած են։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն պատերազմինք մինչև մեր վերջին շունչը, վասն զի եթե անձնատուր ըլլանք, դարձյալ պարսից անխնա սրույն ճարակ պիտի ըլլանք... այո՛, պետք է պատերազմիլ, և մեռնիլ, բայց դյուցազնաբար։

ԲԱԲԳԵՆ.— Ո՜վ իշխանուհի, մեր դիմադրությունն արդյունք մը չունենալե զատ՝ պարսից կատաղությունը պիտի գրգռե մեր վրա։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն ուրիշ ի՞նչ միջոց կրնանք ունենալ։

ԴՈՒՐԳԵՆ.— Պետք է գոնե մեր կյանքն ազատելու հնարք մը գտնել... և մեր ժողովուրդը բոլորովին անտերունչ և անգլուխ չթողուլ ապագային... ի՞նչ կըսես, իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Կընդունիմ այդ գաղափարը... բայց հնա՞րքը։

ԴՈՒՐԳԵՆ.— Քաղաքին միջնաբերդը քաշվինք, ասկե ուրիշ ազատության միջոց չկա մեզի համար։

ԲԱԲԳԵՆ.— Բայց ժողովո՞ւրդը... հուսահատ քաղաքացինե՞րը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ո՞վ պիտի խրախուսե այն խեղճերը, որոնց սիրտն արդեն դառնությամբ լի է։

ԲԱԲԳԵՆ.— Եթե դեռ ժողովուրդը մտածենք, որուն կորուստն անհրաժեշտ է, մենք մեր ազատությունը պիտի կորսընցնենք... ժողովրդին ազատությունը մեր դյուցազնությանը կարոտ չէ, այլ պիտի խոնարհի նա անողորմ ճակատագրի մը առջև։

ԲԱԲԳԵՆ.— Ճշմարիտ է։

ԴՈՒՐԳԵՆ.— Բոլոր իշխաններն այսպես կուզեն։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ ընենք, ա՛ղջիկս։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դու գիտես, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Միթե անխոհեմությո՞ւն մ'է մեր ըրածը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Քանի որ բոլոր իշխաններուն կամքն այդ է, և եթե դու անոնց խորհրդոցը չհամաձայնիս, անմիաբան պիտի ըլլաս, ընդունե ուրեմն իրենց կարծիքը։

ԲԱԲԳԵՆ.— Իսկ դո՞ւ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ես ալ կընդունիմ, վասն զի մինակ կարող չեմ բան մը ընել, և մանավանդ դառն ճշմարտությունը կտեսնեմ։

ԴՈՒՐԳԵՆ.— Ուրեմն համաձայնեցանք մեր կարծյաց մեջ։

ԲԱԲԳԵՆ.— Այս է մեր փրկության միակ միջոցը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ա՜հ, երանի թե ասով կարենայինք ծառայություն մը ընել հայրենյաց։

ԴՈՒՐԳԵՆ.— Ապրինք, որպեսզի հայրենյաց վրեժն առնենք։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն երանի ձեզ, որ վրեժ առնելու համար կուզեք ապրիլ։

ԴՈՒՐԳԵՆ.— Կերդնում Անիի հազար ու մեկ եկեղեցիներու վրա։

ԲԱԳԱՐԱՏ.— Իսկ դո՞ւք, իշխաններ։

ԱՄԵՆՔԸ.— Կերդնանք։

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրեմն սրբազան է մեր խորհուրդը։

ԳՈՒՐԳԵՆ.— Միշնաբե՛րդը, ի՛շխանք։

ԲԱԲԳԵՆ.— Երթա՞նք։

ԲԱԳԱՐԱՏ.— Օ՜ն, Զարմուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Երթա՞նք, հա՛յր իմ (կմեկնին.—տեսարանը վայրկյան մը պարապ կմնա)։

Տեսիլ Գ.

Տ. ՎԱՀՐԱՄ և ՊԱՀՆՈՐԴ ՄԸ

Տ. ՎԱՀՐԱՄ.— (պահնորդին) Իշխանները հոս հավաքվեր են խորհրդակցելու համար, ո՞ւր են։

ՊԱՀՆՈՐԴ.— Ամենքն ալ միշնաբերդը քաշվեցան, տեր հայր (կմեկնի)։

Տ. ՎԱՀՐԱՄ.— (մինակ) Միշնաբերդը քաշվեր են, անտերունջ թողլով խեղճ ժողովուրդը, այդչափ իշխան ի՞նչպես միաբաններ են առանց երկպառակության հանելու, վասն զի դյուցազնական գործի մը համար չեն միացած. թող չլսեն թե անմիաբան է հայը, կմիաբանի, երբ գործը վտանգյուն կըտեսնե... միշնաբերդը կքաշվին առանց ժողովուրդը մտածելու այն մեծ և հսկա իշխանները... վտանգը... առանց հուսահատ քաղաքացիները խրախուսելու... ահա հարվածը միշտ ժողովրդին դլխուն կիջնե. բայց ժողովուրդը դեռ հայր մը և զորապետ մը ունի, քահանան... ինչվան հիմա աղոթեցի, արդ զորապետի մը պես դարձյալ կքաջալերեմ ժողովուրդը (կմեկնի.—Պատկերը կփոխվի)։

ՊԱՏԿԵՐ Դ.

Ալփասլանի բանակը.— Պարիսպ

Տեսիլ Դ.

ԱԼՓԱՍԼԱՆ և ԱՊՐԱՀԱՄ

ԱՊՐԱՀԱՄ.— Վեհափա՛ռ թագավոր, Անի ա՛լ անկարող է այսուհետև քու ահեղ զորությանդ դիմադրել, վասն զի ես զրկեցի զինքը իր բոլոր քաջերեն։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ուրեմն կրնանք անվտանգ հարձակիլ։

ԱՊՐՍԱՄ.— Այո՛, վեհափառ տեր, եթե Անի մինչև հիմա զոռոզ ճակատ մը կբարձրացներ քեզի դեմ, պատճառն այն էր, որ քու բանակիդ իշխան մը քու բոլոր խորհուրդներդ գաղտագողի կհաղորդեր քաղաքացվոց։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ո՞վ է այդ վատը։

ԱՊՐՍԱՄ.— Աղկան իշխանը։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Աղկան... որ բոլորովին անհետացած է բանակեն։

ԱՊՐՍԱՄ.— Գուցե հայոց կողմն անցած է։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ա՜հ, այդպիսի դավադրություն մը կըլլա՜ր, և ես Անեցվոց նախատեսությունը և քաջագործությունները կկարծեի. ես բոլորովին հուսահատած էի Անին առնելե. ա՜հ, եթե այն վատը Անիի մեջ կենդանի գտնեմ, չի՛ պիտի չախջախեմ։

ԱՊՐՍԱՄ.— Ուրեմն ալ սփոփե հուսահատությունդ, վեհափառ տեր. առաջին հարձակման պիտի տեսնես, որ սրտոտ զինվորի մը գլուխը չպիտի երևի Անիի պարսպացը վրա. գլուխս ազատեցի քեզ ապաստանելով, վեհափառ տեր, օգնե նաև որ վրեժս ալ առնեմ. Անիի բոլոր հայերուն գլուխը քեզի, գլուխ մը կա, ա՛յն միայն ինծի թող... տուր հրամանդ և հարձակինք փոթորկի նման։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Վա՜յ Անիի. այս վայրկենես նա իմ աշխարհակալ ձեռքիս մեջ ափ մը փոշի է իր հազար ու մեկ եկեղեցիներովը, պալատներովն ու շենքերովը. լսեցին անունս և չդողացին, ուրեմն թող տեսնեն վրեժս։

ԱՊՐՍԱՄ.— Սկսի՞նք հարձակումը, վեհափառ տեր։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Այո՛, զորապետ, գնա բոլոր բանակին մեջ հնչեցուր իմ հրամանս։

ԱՊՐՍԱՄ.— Կհնազանդիմ, արքա (կմեկնի)։

Տեսիլ Ե

ԱԼՓԱՍԼԱՆ (առանձին)

Ահա վատ մ՛ալ, որ իր հայրենիքը կմատնե, մեկ անձի մը վրեժը բոլոր հայրենակիցներեն կառնե... Թշնամիներեն ավելի՝ մատնիչները կործանեցին Հայաստանը... արդ ինք

իր հարվածներով կիյնա. Հայաստան անձնասպան մ'է, ո՛չ ոք իր վրա կարգահատի, ո՛չ ոք կօգնե իրեն... ա՜հ, եթե մեկ մը Անին ալ ճանկերուս մեջ առնեմ, ավելի մեծափարթամ և զորավոր պիտի ըլլամ... և այն մատնիչին գերեզման մը պիտի տամ Անիի ավերակաց մեջ...

Տեսիլ Զ

ԱԼՓԱՍԼԱՆ, ԱՊՐՍԱՄ և ՋՈՐՔ ՊԱՐՍԻՑ

ԱՊՐՍԱՄ.— Բոլոր բանակը պատրաստ է քու հրամանդ կատարելու։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Զորապե՛տ, դու անգամ մը քու զորքերովդ Անիի պարսպին վրա հարձակելու փորձ մը ըրե, և տեսնենք թե անեցիք դիմադրելու ջանք պիտի ընե՞ն դարձյալ (սույն միջոցին Անիեն ողբոց և լալագին աղաղակաց աղմուկ մը կլսվի) ի՞նչ է այս։

ԱՊՐՍԱՄ.— Կլսե՞ս, վեհափառ թագավոր, Անիի մեջ հուսահատությունը տիրեր է։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ուրեմն հարձակինք (վարագույրը կիջնե):

(Վերջ Դ. Արարվածին)

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ե

Տեսարանն է ավերակ վայր մը.— Ասդին անդին փռված դիակներ, որոնք կնևան և կգալարին.—Ջնեմեր ցիրուցան:

Տեսիլ Ա

ԿՈՒՅՐ ՇԵՐՈՒՆԻՆ (մանկիկ մը գրկած)

Ա՜հ, ո՞ւր փախչիմ, ամեն կողմեն պարսկաց մռնչյուններ կլսվին, որոնք հայու արյամբ հագենալ կուզեն... կորսընցուցի որդիս, հարսս, մեռա՞ն, ո՞ղջ են, չգիտեմ, մինակ թոռս մնաց ինձ, զոր կուզեմ զինուց շառաչյուններուն մեջեն փախցնել... կույրի՞ն մնացեր է խեղճ թոռն ազատել, մինչդեռ հսկաներու ձեռքեն զենքերը կհափշտակվին. չեմ գիտեր թե այս ճամբան ո՞ւր կտանի զիս, գուցե պարսկաց ոտքը... ես ինքնին կերթամ ըսելու «խեղդեցեք զիս և այս մանկիկն ալ գետինը զարկեք». Աստվա՜ծ իմ, Աստվա՜ծ իմ, պիտի մատնեն զիս բնության այս մարած կանթեղները... (վիրավորյալ մը շնչասպառ ծերունիին ոտվ կիյնա սարսափած) *Գթությո՜ւն, գթությո՜ւն:*

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՅԱԼ ՄԸ

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *(Ինկած տեղը գալարելով) Ջավա՜կս...*

ՇԵՐՈՒՆԻՆ.— (զարմացած) *Այս ձայնը... թշնամվո մը ձայնին չը նմանիր, սիրելվո մը ձայնն է այս* (դառնալով, բարձր) *ո՞վ ես դու:*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— (գլուխը վեր առնելով և ծերունին դիտելով) Հա՜յր իմ...

ՇԵՐՈՒՆԻՆ.— Ա՜հ, որդիս է կարծեմ... Բակո՛ւր...

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ես եմ։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Ո՞ւր ես։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ձայնիս մոտեցիր։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Վիրավորյա՞լ ես։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Այո։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Ձավա՜կս... (մոտենալով)։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ի՞նչ է այդ գրկածդ։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Ձավակդ է։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Բաբի՜կս։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Այո՛։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Տուր ինձ, որպեսզի խոցյալ սրտիս վրա գրկեմ անգամ մը, հայր իմ (կառնե)։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Արդյոք ծա՞նր է վերքդ, Բակուր։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Մահացու է, հայր իմ, սրտիս վրա։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Աստվա՜ծ իմ։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Բայց դեռ կրնամ քանի մը վայրկյան ապրիլ, քանի որ Բաբիկս գիրկս է... իսկ Աշխենս ի՞նչ եղավ, հայր իմ. ո՞ւր է ինքը, իմ սիրելի ամուսինս։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Ձեմ գիտեր. ես այս մանկիկին հետ եկեղեցին էի և կաղոթեի, երբ իմացա, որ պարսիկներն Անիի վրա կհարձակին... դարձա տուն՝ ձեզ գտնելու... և երբ հոն հասա, թաղն ավերակ և ամայի գտա... ձայն մ'անգամ չլսեցի. չտեսա, մեկը, որուն հարցում մընեի. միշտ վիրավորյալներու հանդիպեցա, որոնք կհեծեծեին և պապակած՝ ջուր կաղաղակեին։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ուրեմն անգութ պարսից սրույն ճարակ եղավ նազելի Աշխենս, առանց անգամ մ'իր մանկիկը սրտին վրա սեղմելու. բայց լավ է որ դերի չըլլա և մեռնի։

ՇԵՐՈՒՆԻ.— Ա՜հ, այսպես պիտի տեսնեինք մեր գոռոզ Անին, իր հազար ու մեկ օծյալ գլուխներն այսպե՞ս պիտի փշրեին. հոյակապ պալատներն ու փառավոր շենքերն առ հասարակ Թաղվեցան արյան հեղեղներու մեջ... չբացվի՜ն աչքերս և չտեսնեմ իր ողորմելի ավերակները։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ա՜հ, հայր իմ, կզգամ որ պիտի մեռնիմ. ազատե գոնե զավակս և, իմ տեղս վրեժխնդրություն սորվեցուր իրեն, միշտ պատցուր զինքն ավերակաց մեջ, և անոնց ամեն մեկ բեկորին սոսկալի պատմությունն ըրե իրեն... եթե Աշխենս ալ գտնես, իմ վերջին մնաս բարովս հաղորդե իրեն, թող աղեկ խնամե մեր զավակը... իր սիրտը պարսկական առելությամբ վառե... քաղաքին պարիսպներուն մոտ ենք, հայր իմ, ազատե զավակս... փախի՜ր...

ՇԵՐՈՒՆԻՆ.— Իսկ դո՞ւ, Բակուր...

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ես հիմա պիտի մեռնիմ, հայր իմ։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Ա՜հ, ինչպե՞ս զքեզ վիրավոր թողում մինակ։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ձիս մի՛ մտածեր, հանգիստ եմ, հայրենյաց համար կմեռնիմ... երջանիկ եմ։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Ջավա՛կս։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Փախիր, հայր, հիմա պարսիկները կհասնին։

ՇԵՐՈՒՆԻՆ.— Մնաս բարյավ։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Երթաս բարյավ, հայր իմ (ետևեն նայելով և պոռալով), փախի՛ր, հայր իմ, ետևեդ խումբ մը պատաղի պարսիկ կուգան... Ա՜հ, հասան հորս քով... Բաբիկս ձեռքեն կհափշտակեն... օդին մեջ հանեցին... գետինը պիտի զարնեն... կեցեք... ա՜հ, (ձիչ մը կարձակե և կմեռնի)։

Տեսիլ Գ.

ՏԵՐ ՎԱՀՐԱՄ

(Հետը կիներ, ծերեր, բանաձաներ և ուրիշ զինյալ մարդիկ) Ա՜հ, ամեն տեղ ավերակը ծածկեր է, ամեն տեղ հայու արյուն կքալե... Աստուծո փոթորկալից շունչը անցավ Անիի վրայեն, ինչպես անցավ Բաբելոնի, Նինվեի, և ուրիշ դառը քաղաքաց վրայեն։ Անի՝ Հայաստանի քաղաքաց թագուհին, որուն խորխոտ պարսպացը տակ աշխարհակալ թշնամյաց սրտեր արյունեցան, ի գետին կխոնարհեն իր մոխրալից գլուխը, որպեսզի անարդ պարսիկն անցնի անոր վրայեն, կոխկռտելով հայության դրոշմը. ա՜հ, այսշա՜փ պիտի խոնարհի եղեր Հայաստան... այսշափ սև՜ է եղեր հայության ճակատագիրը... այսշափ անտերունչ պիտի մնա

եղեր Հայաստան... (իրենները ցուցնելով) ահա քահանաներ, որ սուր շարժել գիտեն, ահա կիներ, որ պատերազմիլ կուզեն... ահա ծերեր, որ զարնել կուզեն... դուք, հայութեան մնացորդներ, դուք կռվեցեք հայրենյաց փառացը համար, մինչդեռ իշխանները՝ միջնաբերդը կապաստանին... ձեր զավակներուն, եղբայրներուն, հայրերուն, մայրերուն և ամուսիններուն համար կռվեցեք... զինվոր չկա, զինվոր եղիք. հայ չկա, հա՛յ եղիք... հրամանատար չունինք, ահա ես զորապետ. ձեր ճակտին վսեմ պայծառութիւնը բավական է թշնամին դողացնելու։

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և ԱՊՐՍԱՄ

ԱՊՐՍԱՄ.— (առանց զանոնք տեսնելու) *Դեռ չկրցի գտնել զինքը, միջնաբերդն է եղեր։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Ջո՞վ։*

ԱՊՐՍԱՄ.— (մեկուսի) *Տեր Վահրամ։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Դեռ զո՞վ կխնդրես քու դժոխային սրտիդ զոհ, վատ արանց, դեռ չկշտացա՞ր եղբարցդ արյամբը, որոնք քու սրբազան հայրենյացդ ավերակները ողողեցին... չորս կողմդ նայե, չե՞ս սոսկար... չե՞ն քստմնիր մազերդ այս ողորմելի տեսարանները դիտելով. մինչ քու մարմարյա կուրծքիդ տակ փոխանակ սրտի՝ դժո՞խքը կվառի... չե՞ս լսեր եղբարցդ աղիողորմ աղաղակները, տուր ասոնց իրենց ամուսինները, զավակները, եղբայրները, հայրերը, մայրերն ու հայրենիքը, և ապա դեռ զարկ։*

ԱՄԵՆՔԸ.— *Տո՛ւր մեզ։*

ԱՊՐՍԱՄ.— *Պարսկեն ուզեցեք։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Դուն տվիր պարսկին, անօրե՛ն, դու քու հայրենյացդ դռներն անոր բացիր, քու սրտիդ դժոխային բոցերուն մատնեցիր հայրենիքդ... հավիտյան անեծք պիտի լսես այն դարերեն, որոնք Անիի ավերակացը վրայեն պիտի անցնին լալով... արյուն քալե սրտեդ՝ Հայաստանի ավերակացը պես. անիծյալ ըլլաս հայութեան ճակատագրին պես։*

ՀԱՄԵՆՔԸ.— (սուրերնին բարձրացնելով) *Մա՛հ մատնչին։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— Կեցեք, այն՝ որ զարնել կուզեք, հայ անունը կկրե. դուք մի՛ զարնեք, վասն զի ձեր սուրերեն ավելի ահեղ և արդար՝ Աստուծո ձեռքը կա անոր վրա, դուք մի ըլլաք իր դահիճը, թող իր խիղճը ըլլա իր դահիճը, թողե՛ք զինքը, մի՛ պղծեք իր արյամբ ձեր անբիծ սուրերը...

ԱՄԵՆՔԸ.— Տուր մեզ մեր հայրենիքը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Երկնքեն խնդրեցեք, և ոչ թե այս վատեն, որ միայն մատնել գիտե... թողեք զինքը։

ԱՊՐՍԱՄ.— Ա՛լ բավական է։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Գնա՛, վատ, և թող գունդագունդ անեծքներ քեզ հալածեն... կորի՛ր...

ԱՊՐՍԱՄ.— (մեկուսի) Միջնաբերդը... (կմեկնի. հանկարծ ավերակ մը փլչելու աղմուկը կլսվի դրսեն)։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Տեսեք, իր գործած ավերակն իր վրա փլավ և թաղեց զինքը։

Տեսիլ Ե

Տ. ՎԱՀՐԱՄ (իրենցերով), *ԱԼՓԱՍԼԱՆ* (զորքով)

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ո՞վ են այս քահանաները, ծերերը և կիները, որոնք սուր կկրեն և իմ արյունաբույր շուքես չեն փախչիր... ո՞վ են սոսնք։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Քու թշնամիներդ։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Իմ թշնամինե՛րս... իմ թշնամիներս հսկաներ կըրնան ըլլալ... ձգեցեք սուրերնիդ և խոնարհեցուցեք գլուխնիդ պարսկական լուծին, եթե չեք ուզեր մեռնիլ։

ԱՄԵՆՔԸ.— Ո՛չ երբեք։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ի՞նչ կխնդրեք, ուրեմն։

ԱՄԵՆՔԸ.— Ազատությո՛ւն հայրենյաց։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ի՞նչ իրավամբ ինձնե կխնդրեք այն ազատությունը, զոր դուք ծախեցիք ինծի. քանի՞ տեսակ հայ կա, մեկը կուտա, մյուսը ետ կուզե. Թշվառներ, մոռցեք այսուհետև հայրենիք, ազատություն և իրավունք, վասն զի պարսկին օզակն անցավ ձեր վիզը, քանի որ հայը չկրցավ տեր ըլլալ, պետք է որ գերի ըլլա։

(Հայերը գլխիկոր ետ կդառնան.—Վարագույրը կիջնե)։

(Վերջ Ե. Արարվածին)

ՎԵՐՋԱԲԱՆ

Տեսարանն է գիշեր.—Լուսին.—Ավերակ վսյր մը, խորը հրդեհ:

ՄՈՒՍԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՑՈՑ (Շղթայակապ)

Մայր մ'ուներ ես միայն,
Ան ալ գնաց գիրկ մահվան,
Անմխիթար թողուց գիս՝
Դեռեզմանաց պահապան,

Հայրենիք մը ուներ
Ճնս ասուծո սիրելի,
Այն ալ իր ճոխ փառերեն
Զգեց ինձ սև շղթա մի:

Ես որ չսռի ձեռս սուր,
Ի՞նչու[1] կրնեմ այս անուր,
Պարսիկ, հակի այս շրթան,
Չիս մորթս հնս հողին տուր:

Ամեն դիեն սև խաւժան
Կը կոխոտե Հայաստան,
Հայր կը հևան վիրավոր,
Պալաս և հյուղ կը մրխան:

Չը կա հուժկու հայ գինվոր,
Չի կոտրեցավ սուրն անոր,
Չիք աղօթող հանանա,
Եվ չիք տանար փառավոր:

Սուգ է պատեր ամեն վայր
Աստղերն անգամ չեն իսկ վառ,
Այն Հայաստանն ալ չըկա,
Այլ գեռեզմանիք ու խավար:

Շղթա կապած իմ վզին,
Գերի վաբեն ցավագին,
Կուզեն պատել տալ ինձի
Օտար մարդ, հող ու երկին:

---

1) *Տպված էր «ինչ», չափը պահանջում է «ինչի»:*

Ամեռակնեռն ես կուզեմ
Հայաստանիս տարադեմ,
Ու նոն լամ իմս հայրենիք,
Մինչ ողջունեմ մահվան սեմ:

Ո՜հ, անոնք ա՛և քող ըլլան,
Ես կը սիրեմ հավիտյան,
Ջի երբ իմ մայրըս մեռավ,
Ըսավ. «Սիրե՛ զՀայաստանն»:

Պիտի սիրեմ զանի ես՝
Ցնեցին ծունչ իմ սրտես,
Մինչ որ ժպտի Հայաստան՝
Հանդեպ շիրմիս բոցակեզ:

Քող հայր ուսնին միաբան
Ինձ պես սիրել Հայաստան,
Հեռ իմ աչաց ցողեն ցող,
Երբ զայն ավեր կը տեսնեն:

Թո՛ւև է անկյալ Հայաստան,
Պիտի կանգնի նուսկ նապայն,
Երբ որ հայեր միասիրտ
Գոչեն «Կեցցե Հայաստան»,

Սեվ Հողեր Կամ Հեռին Գիշեր Արարատյան

Ողբերգություն երգախառն չերիս արարս և ի մի վերջաբան

ԱՆՁԻՆՔ ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ, Ինքնակալ թաթարաց.
ՆՈՐԱՅՐ, Իշխան Սեբաստիո.
ՆԱԶԵՆԻԿ, Նորայրի դուստրը.
ԵՐԱՆՅԱԿ, Վաչեի կինը.
ՎԱՐԴԱՆՈՒՇ, Վաղենակի աղջիկը.
ՎԱՂԵՆԱԿ, Նորայրի փեսան՝ զորապետ հայոց.
ՎԱՉԵ, Զորապետ ուրացող.
ՋԱՐՄԱՋԱՆ, Զորագլուխ թաթարաց.
ՎԱՀՐԱՄ, Նազենիկի խնամակալը.
ՆԵՐՍԵՀ, Վաչեի հայրը.
ՀԱՅ ՋԻՆՎՈՐ ՄԸ.
ԹԱԹԱՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՄԸ.

Զորապետք, Բիւկնապահք, զինվորք, ժողովուրդ, դեվք և այլ

ԱՆՁԻՆՔ ՎԵՐՋԱԲԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՈՒՅՍ
ՍԵՐ
ԱՆՄԻԻԹՅՈՒՆ
ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐՎԱԾ Ա.

ԱՐՇԱՎԱՆՔ

Աւրշալոյս.—Նորայրի ապարանքին մէջ, փառաւոր սենեակ մը.—Խորը դուռ, երկու կողմը պատուհան.—Աջ կողմի խորը սենեակ մը ուր Նազենիկ կ'ննայ.

Տեսիլ Ա.

ՆԱԶԵՆԻԿ (միենակ. ննացած)

Վաղենա՞կ... (իբրև մեկը կգրկե և արթնցնելով հանկարծ կտխրի) Դարձյա՞լ, երազ... կծագիս, արշալոյս, և զիս մխիթարելու կուգաս, այլ ի զուր, ես քու տեսքիդ վրա զմայլած՝ չեմ մխիթարվիր, վասն զի Վաղենակիս ժպիտը քու ծագումդ ավելի քաղցր էր... Ի՞նչ սիրտիանք կրնան ազդել ինձ այս աստեղազարդ և կապուտակ երկինքը, մինչդեռ իր կապույտ աչքերն այս աստղերեն ավելի շողշողուն էին, իր դեմքը նորեկ գարուն մը ավելի գեղեցիկ էր... վերջապես անհուն դրախտ մ'էր իր սիրտը, և ես հոն զվարթ թիթեռնիկ մ'էի. իսկ հիմա արտասվալից վհի մը փոխակերպվեցայ և ես հոն հեծկլտող ստվերի մը... Վաղենակ, ե՞րբ պիտի դաս զիս գրկելու... այլ ի՞նչ հույս ունիմ ես... կհասկնամ, մահվան ցուրտ ձեռքն զքեզ հավիտյան բաժնեց ինձնե... բախտը մեր երկուքին մեջ գերեզման մը դրավ... Ի՞նչ թշվառություն, դանդաղ տարիներ արցունք սիրելով անցան և դեռ չեմ տեսեր ես զքեզ, ես որ վայրկյան մը չէի ուզեր հեռանալ քեզնե... (երեսը ձեռաց մեջ առած կուլա):

Տեսիլ Ը

ՆԱԶԵՆԻԿ և ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ.— Նազենիկ, դարձյալ կուլաս, մինթե նորե՞ն երազիդ մեջ տեսար զինքը...

ՆԱԶԵՆԻԿ.— Այո՛, և առջինեն ավելի քաղցր էր յուր նայվածքը... ա՜հ, ինչո՞ւ ես ալ իրեն հետ չվազեցի պատերազմի դաշտը, ես ալ դյուցազնուհվո մը պես ամուսնույս գրկացը մեջ հայրենյացս կձոնեի արյունս, և չէի հեծեր այսպես դերեզմանեն խռռված ստվերի մը նման...

ՎԱՀՐԱՄ.— Իսկ Վարդանուշ, այն անմեղ դստրի՞կը։

ՆԱԶԵՆԻԿ.— Արդեն ո՛ր կողմ որ դառնաս, երկինք արցունք սրփոած է հոն. ուրեմն, ո՜վ մահ, եկո՛ւր քու սառ ձեռքերովդ դոցե այս աչքերը և թող աներևութանա առջևես այս նախանձոտ աշխարհը, ուր սիրո քաղցրությունը դեռ չճաշակած, սիրո դառնությունը կխմեմ։ Վաղենակ, փշալից է եղեր այն պսակը, զոր սերը ժպտելով մեր գլխուն բոլորեց և իր հեշտ ամպերովը զանոնք մեր աչքեն ծածկեց... երանի՜ թե այն գիշերը յորում առաջին համբույրներն զգացին մեր շրթունքը՝ զգային նաև մահվան դալուկը, երկուքնիս գրկախառն իջնեինք այն սև գերեզմանը... Վահրա՛մ, եթե հիմա զավակ չունենայի, հազար դերեզման ունեցած էի...

ՎԱՀՐԱՄ.— Մի՛ հուսահատիր այդպես, Նազենիկ, անշուշտ կգթա երկինք անմեղին վրա... հուսա՛, միանգամայն ինքզինքդ զուարթ ցցո՛ւր, վասն զի կուզե՞ս տեսնել անմեղ աղջկանդ արցունքը։

ՆԱԶԵՆԻԿ.— Ինչո՞ւ։

ՎԱՀՐԱՄ.— Երբ հիմա անկողնես ելա, հեծկլտալու ձայն մ՚առի, քովս դարձա և տեսա որ Վարդանուշ կուլար... հարցուցի թե ինչո՞ւ կուլա, ինքն ալ վերջապես պատասխանեց— վասն զի մայրիկս միշտ կուլա։

ՆԱԶԵՆԻԿ.— Ի՞նչպես չարտասվե զավակ մը, որուն աչացը վրա իր մորը համբուրին հետ մեկտեղ արցունք կաթեց... ուրեմն, Վա՛հրամ, ե՞րբ պիտի գթա երկինք մեր վրա, մինչդեռ անմեղ մ՚անգամ կվշտացնես... մի՛, մի՛ դոցեր սիրոս

պատիր հույսերով, դիտեմ գերեզմանին սև պատվարները բաժնեցին ինձնե ամուսինս, ես որ այնչափ կպաշտեի այն գողտրիկ սիրտը... անարգ թշնամյաց ոտիցը կոխան եղավ... Հայաստան դյուցազն մը կորսնցուց և Նազենիկ պահապան հրեշտակ մը, որուն հաղթական ճակատը ցուրտ և արյունոտ մարմարյա դափնիներով պսակեց մահն անշուշտ։

ՎԱՀՐԱՄ.— Բայց դու ընդհակառակը հրճվելու ես, Նազենիկ, որ քու ամուսինդ անհուն հայեր փրկեց իր մահվամբը, որոնց արյունը պիտի ծծեր թշնամվույն անխնա սուրը... Թող մեռնի ամուսինդ և ապրի Հայաստան, վասն զի կգտնես հետո ամուսինդ երկնից մեջ, իսկ Հայաստանը երբեք չես գտներ... դու չես դիտեր թե այս դողդոջուն բազուկը որչափ թշնամվույն արյամբը կարմրեցավ... երկու որդի ունեի, երկուքն ալ պատերազմին մեջ ինկան մեռան, իսկ ես հրճվեցա որ հայրենյաց ազատության համար մեռան... Եթե հայրդ զքեզ իմ խնամակալությանս հանձնած չըլլար, ես հիմա գուցե դիտապաստ ինկած էի դաշտին վրա և կատաղի վագեր նման թշնամվույն արյունը կխմեի. չդիտես դու ի՞նչ զվարճություն է այն... կողրամ զքեզ, Նազենիկ, որ հայրենյաց հուրը չես զգար դու... չտեսա՞ր մեթե հայրդ, որ հոգիեն ավելի կսիրեր զքեզ, հայրենյաց սիրույն համար թողուց հոս և ինքը ալացավ պատերազմի և ազատության դաշտը յուր ճերմակ մորուքն արյամբ ներկելու... և արժանացավ իսկ նահատակության լուսեղեն թագին. Նազենիկ, աշխարհիս վրա երջանկություննն աշնան պարզ երկնքին կնմանի, զոր զմայլած դիտելու ատենդ հանկարծ թուխ ամպերով կծածկվի։

ՆԱԶԵՆԻԿ.— Ո՛հ, մի արթնցներ մտացս մեջ հորս մահվան տրտուր հիշատակն ալ. դարձյալ կըսեմ, պետք է մեռնիլ, վասն զի միայն մահը, այն սառած և տխուր հրեշտակը կրնա վշտահարս մխիթարել՝ հավիտենական տխուր հանգըստարան մը, գերեզման մը շնորհելով, որուն ցուրտ դրանը առջև կդողդոջեն զգալի հիշատակներ... Վահրամ, երբ կտեսնեմ որ վարդը կժպտի, կուզեմ վարդ մը ըլլալ, ժպտիլ վայրկյան մը և թառամիլ... (ի ծուռ և ձեռքն եր-

կին վերցուցած) *Հա՛յր իմ, դու դռնե խորհուրդ մ՚աղրե Թշվառ աղջկանդ։*

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և ՎԱՐԴԱՆՈՒՇ

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (մորը գիրկը վազելով) *Մայրի՛կ... դարձյալ կուլաս...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ո՛չ, աղջիկս...* (զայն սրտին վրա կսեղմե)։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Ի զո՞ւր կջանաս խաբել, ահա կտեսնեմ այդ արցունքները, որոնք տաք տաք սրտիս վրա կկաթին... ինչո՞ւ համար կուլաս, ըսե՝ որ ես ալ արցունքս քուկինիդ հետ խառնեմ, սիրուն մայրիկս։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Խեղճ զավակ, դառն կորստյան մը տխուր հիշատակ, քեզի համար կուլամ, վասն զի Թշվառ ես։*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Այո՛, Թշվառ եմ, վասն զի աչքս բանալես, մայրս ճանչնալես ի վեր միշտ զինքը տրտում տեսա. դո՛ւնե անգամ մը չժպտեցար ինձ, անգո՛ւթ մայր։*

ՎԱՀՐԱՄ.— (մեկուսի) *Տարաբախտ տղա՛։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Եկո՛ւր գիրկս, մի՛ սրդողիր, զավակս, այսուհետև միշտ պիտի ժպտիմ քեզի, Թեպետ և սրտես արյուն ալ պոռթկա։*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Պիտի ժպտիս ինծի՞... մա՛յր իմ. վահրա՛մ, կտեսնե՞ս, ժպիտ խոստացավ մայրս... ուրեմն այսուհետև միշտ երջանիկ պիտի ըլլամ։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Եվ ալ անգութ չպիտի կոչես մայրդ, այնպես չէ՞։*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Երբե՞ք... ներե՛ ինծի, մա՛յր իմ, վասն զի խիստ վշտացած էի. երեկ իրիկուն, երբ պարտեզը կշրջագայեի, տեսա երիներանգ թիթեռնիկ մը որ ծաղկե ծաղիկ կթռչտեր զուարթաբար... աչքերս լեցվեցան... ինկա մարգագետնին վրա և սկսա դառնագին լալ, ըսելով ինքնիրենս—ես որ մայր ունիմ, Թշվառ եմ, և պանդուխտ թիթեռնիկն անգամ ինձնե ավելի երջանիկ է... Վերջապես ելա և նախանձով վառված՝ արյուն-քրտինք թափելով հաջողեցա զանի բռնել և սպանել... խեղճ թիթեռնիկ... հետո որչափ սիրտս կտոր-*

կատր եղավ... միթե ոճրագործութի՞ւն էր ըրածս, մա՛յր իմ։

ՆԱԶԵՆԻԿ.— Ո՛չ, դու հանցանք չունիս, աղջիկս... հանդարտե՛... ալ այսուհետև իմ միակ մտածմունքս դու պիտի ըլլաս։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Բայց ի՞նչ ձայն է այս, մտի՛կ ըրե՛, մա՛յր իմ... (դուրսեն ետևյալ տխուր երգը կլսվի)։

ՈՂԲԵՐԳ

Երկինք, ցողե աչացըս լույս...
Գնր նրբույլ մը յաչս եղկելույս,
Ու ի խավար օրերս հարբուն
Սիրտն ի սուգ, վիշտ ինծ անհուն...

Ո՞վ հագեցիդ իմ Նազենիկ,
Ո՞վ իմ աբև, իմ հույս բաղցրիկ,
Քայլատոլոր ըջիմ ի գո՜ւր...
Քեզ կծածկե դամբան տխուր։

Չկա ինձի երբեմ նույս լույս,
Դու ես ափոփանիմ իմ ցավերուս,
Ո՞վ դու դամբան, լըռի՜կ դաժբան,
Շերտուցիս գրեզ միշտ կը կարդան։

ՆԱԶԵՆԻԿ.— Ո՜հ, այս ձայնը տխուր տպավորություն մը ազդեց ինձ... ո՞վ է այդ երգողը, վա՛հրամ։

ՎԱՀՐԱՄ.— (պատուհանեն նայելով) Ցնցոտիներ հագած կույր զինվոր մ' է (վարդանուշ կերթա պատուհանեն նայելու)։

ՆԱԶԵՆԻԿ.— Վահրա՛մ, գնա՛, կաղաչեմ, հո՛ս բեր այդ զինվորը, գուցե նույն պատերազմեն դարձած ըլլա և լուր մը տա մեզ ամուսնույս վրայոք. (Վահրամ կմեկնի) Ո՛հ, արդյոք պիտի կարենա՞մ հաջող լուր մը առնել Վաղենակես, եթե ոչ հուսո այն նշույլը որ զիս կմխիթարեր, պիտի խաւարի մահվան սովերին տակ... անողո՞ք բախտ, մինչև ե՞րբ սիրտս հուսահատության թույն կոհակաց խաղալիկ պիտի մատնես...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (մորը վազելով) Մա՛յր իմ, Վահրամ կույր զինվորին թևեն բռնած հոս կբերե... ահա եկան...

ՆՈՒՅՆՔ, ՎԱՂԵՆԱԿ, ՎԱՀՐԱՄ (բևեռ բռնած կբերե, որն որ կբռտ և դեղնած է)։

ՎԱՂԵՆԱԿ.— *Ինչո՞ւ դիս հոս բերիք... միթե դիս բանտարկե՞լ կուզեք, որպեսզի փողոցներուն մեջ այսպես աստանդական թշվառություն չնվագեմ ողբաձայն... ա՜հ, ազատ թողեք դիս, թողեք որ ողբամ ես իմ վիճակս, վասն զի իմ միակ մխիթարանքս իմ ձայնիս արձագանքն է, ինծի այնպես կթվի թե սիրելիքս ինձ կպատասխանեն։*

ՎԱՀՐԱՄ.— *Ապահով եղիր, խեղճ զինվոր, զքեզ արդիլող չկա, ազատ ես երթալու... բայց ներե հանդուգն հարցմանս... ինչո՞ւ այսպես փողոցները կթափառիս ողբագին... միթե ընտանիք չունի՞ս...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Ո՛չ, արդեն երիտասարդությանս առեն որը մնացած էի, եղբը ամուսին մ'ունեցա... որուն վրա միայն դրեր էի կենացս հույսը, բայց երբ այսպես պատերազմեն կուրացած կգառնայի, գուժեցին ինձ որ կինս լուր առնելով թե ես պատերազմի առեն մեռած էի, նա ալ ինքզինքը թունավորեր էր. ալ այնուհետև դերեզման փնտռեցի ինչպես ծարավյալն աղբյուրը... կշնչեմ... բայց մեռած եմ։*

ՎԱՀՐԱՄ.— *Բայց ո՞ր պատերազմին համար կըսես...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Ասկեց 5—6 տարի առաջ Սեբաստիո մերձակաները Հաղարացվոց դեմ եղած սոսկալի պատերազմը։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Քա՛ջ զինվոր, ահա ատոր համար բերինք քեզ հոս... գիտցիր որ հոս ալ քեզ նման թշվառ կին մը կա իր ամուսինը կորսնցուցած, որ սույն միջոցին քեզնե ուժ և հույս կակնկալե։*

ՎԱՂԵՆԱԿ.— *Թշվա՜ռ մը... ո՜հ, կսիրեմ ես զայն... Բայց ես ի՞նչպես կրնամ ուրիշ մը մխիթարել, մինչդեռ ես իսկ կարոտ եմ... եթե կարենամ մխիթարել զայն, այդ ինձ համար անհնման սփոփանք պիտի ըլլա... ա՜հ, ատրօրինակ բարիք մ'է թշվառության անողոք ճիրաններեն մեկն ազատելը։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ուրեմն անշուշտ կճանչնաս Վաղենակ զորապետը, որ հիշյալ պատերազմին հայ զորաց աջ գնդին հրամանատարություն կրներ։*

ՎԱՂԵՆԱԿ.— (տատամսելով) Այո՛...

ՆԱԶԵՆԻԿ.— Դիտե՞ս արդյոք, մեռա՞վ նա պատերազմին մեջ թե կենդանի է դեռ։

ՎԱՂԵՆԱԿ.— Կենդանի է (ապշած)։

ՆԱԶԵՆԻԿ.— Կենդանի՞... և ո՞ւր է հիմա... գիտե՞ս...

ՎԱՂԵՆԱԿ.— (եռանդյամբ և շփոթած) Բայց... չեմ հասկնար։

ՆԱԶԵՆԻԿ.— Ամուսինս կենդանի՞... իմ մոտս... բայց ո՞ւր է...։

ՎԱՂԵՆԱԿ— (թոթովելով) Հոս եմ... Նազենիկ...

ՆԱԶԵՆԻԿ.— Վազենա՞կ... (կգրկվին)։

ՎԱՀՐԱՄ.— Վերջապես գթացի՛ր... երկինք...

ՎԱՂԵՆԱԿ.— Ճշմարի՞տ որ կգրկեմ զքեզ, նազենիդ իմ Նազենիկ... եթե ոչ երկուքնիս ալ խաբուսիկ երազով մը կսփոփվինք։

ՆԱԶԵՆԻԿ.— Ո՛չ, ո՛չ... բայց ո՞ւր են անուշ աչքերդ... ի՞նչ դալկահար դեմք... ի՞նչ դողդոջուն ծունգեր... ո՞ւր է նայվածքդ։

ՎԱՂԵՆԱԿ.— Հայրենիք մը ազատելու քիչ է այս կուրությունը, հինգ վեց տարվան հալումաշը... և սիրելվո մը միայն տեսքեն զրկվիլը։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Մա՛յր իմ, ո՞վ է այդ աղքատ մարդը որ կգրկես։

ՆԱԶԵՆԻԿ.— Եկո՛ւր դու ալ գրկե... հայրիկդ է... աղջիկս։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Այն ի՞նչ գծուծ մարդ է, ես կվախնամ գրկելու։

ՎԱՂԵՆԱԿ.— Ջավա՛կ մը... աղջիկ մը... ո՛հ, եկո՛ւր գիրկս, Բըշվառ հայրդ եմ ես... (զայն կգրկե) երկինք, լո՛ւյս, լո՛ւյս խավար աչքերուս, տեսնեմ մեկ մը ամուսինս և զավակս վայրկյան մը միայն և Թող դարձյալ խավարին... զավակս զոր դեռ չեմ տեսած...

ՆԱԶԵՆԻԿ.— Մխիթարվե, ամուսինս, բավական է որ Հայաստան կույր չըլլա դյուցազնի մը համար... աչքերը գիրար տեսնելե ավելի գեղեցիկ են, երբ սրտերը իրարու մոտ բաբախեն. արդեն խամրած են սիրո ազդու նայվածքները և սրտերը կսիրեն։

ՎԱՂԵՆԱԿ.— Դժբախտ զավա՛կս... յուր կենացը գվարթ արշալույսին սկսավ Թշվառության բաժակը քամել, և իր հորը աչացը հետ իր կենացը պայծառ օրերն ալ խավարեցան... Նազենիկ, ինչո՞ւ ծնար այս զավակը, մինչդեռ իր հայրը

անոր քաղցրիկ դեմքը հավիտյան չտեսնելու պիտի դատապարտվեր... մինչդեռ հայրական սերն անոր սիրուն աչացը մեջ պիտի չկարդար... անիծյալ է եղեր այն օրը, Նազենիկ, յորում ես քով գրկեդ բաժնվեցա... անիծյալ է եղեր այն հաղթությունը որով հրճվեցավ Հայաստան։ Նազենիկ, երբ հաղթանակով պատերազմեն կդառնայի, նույն ատեն երբ դնդես բաժնված էի քանի մը անձանց հետ, խումբ մը կատաղի Հադարացվոց հանդիպեցա, որոնք հանկարծ վրանիս հարձակեցան և ընկերներս սպաննելով, զիս ալ խողխողել ուզեցին, բայց զորագլուխնին հրամայեց որ միայն աչքերս կուրացնելով թողուն զիս... մինչև հիմա հինգ վեց տարի է այսպես վշտահար ու թափառական շըրջեցա, մուրացի, միշտ դոչելով, երկինք, լո՜ւյս, լո՜ւյս խավար աչքերուս.... այլ ի զուր... ահռելի գույժ մը առի թե մեռած էիր...

ՎԱՀՐԱՄ.— *Սոսկալի ճակատագի՜ր* (մեկուսի)։

ՎԱՂԵՆԱԿ.— *Խավարն ինձ գերեզման մը կթվեր և ես հոն ողջ ստվեր մ'էի, սերը սիրտս կրծող իժ մ'էր և կյանքն անողոք դահիճ մը. հույսը ինծի նոր կյանք մ'էր, մահը՝ ինծի համար հրեշտակ մը և անցուցած դեղեցիկ օրերս երազ կթուեին ինձ... բայց վերջապես փարատեցավ այն երազը... Նազենիկ, դարձյալ գիրկս՝ համբույր կձոնե դեղնած ճակատիս, իսկ անգութ երկինք դեռ լուսո նշույլ մը չցողեր խավար աչքերուս։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Կաղաչեմ, Վաղենակ... ալ բավական է...*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (*Ձայրը գրկելով*) *Ա՛լ սիրով կգրկեմ զքեզ, հա՛յր իմ, վասն զի դու ալ ինծի պես թշվառ ես եղեր և կուլաս։*

ՎԱՂԵՆԱԿ.— *Թշվառ եմ կըսես, աղջիկս... բայց ինչո՞ւ...*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Վասն զի միշտ կուլար մայրս... Բայց հիմա երջանիկ եմ, վասն զի թե մայրիկս ժպտիլ խոստացավ և թե հայրիկ մը ունեցա։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Վարդանուշ, ահա այդ հորդ համար էր որ կուլայի անդադար։*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Ուրեմն ալ երջանիկ պիտի ըլլանք, վասն զի հայրս ալ դտանք։*

ՎԱՂԵՆԱԿ.— *Իսկ հայրդ ի՞նչպես երջանիկ ըլլա, մինչդեռ աչքերը*

կորսնցուցեր չտեսներ քու քաղցրիկ դեմքդ, այլ միայն հալիտենական խավարի մը խորերեն կլսե քու անուշ ձայնդ՝ քու մրմնջած—հայրիկ—բառդ...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (զայն գրկելով) *Խեղճ հայրիկ...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Ա՛յս է գիտությունդ, ո՛վ երկինք։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Բայց հանդարտե, սիրելի ամուսինս, քու կնոջդ և զավակիդ գգվանքները պիտի մոռցնեն քու վշտալից անցյալդ... քու աղջկանդ սերը տենչացած լույսեդ քաղցր պիտի թվի քեզ. հիշե՛ մեր անցուցած սիրո օրերը, դարձյալ նույնն ենք մենք, միայն թե դու չես տեսներ զմեզ, քեզ այնպես թող թվի որ մեր գիրկը կնիրհես։*

ՎԱՂԵՆԱԿ.— *Նիրհե՛լ... բայց վերջապես չե՞ս ուզեր արթննալ, երբեք չե՞ս կարոտնար սիրելվույդ դեմքը... երանի քեզ որ չես գիտեր իմ թշվառությունս... չգիտես թե ի՞նչ է կույր մը որ կսիրե։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ո՜հ, մի՛ հուսահատեցներ զիս, Վաղենակ... ուրեմն դու զիս չես սիրեր որ այսպես անօգուտ կհամարես իմ սիրալիր համբույրներս։*

ՎԱՂԵՆԱԿ.— *Ո՛չ, ո՛չ, կսիրեմ և պիտի սիրեմ զքեզ հավիտյան, Նազենիկ... ալ չպիտի վշտանամ... ալ զվարթ պիտի ըլլամ, ո՜հ, բա՛ց թևերդ և գրկացդ մեջ հանգչեցնեմ քիչ մը վշտակոծ ճակատս... եկու և դու զավակս ալ...* (կգրկվին)։

տեսիլ ե

ՆՈՒՅՆՔ և ՆՈՐԱՅՐ

ՆՈՐԱՅՐ.— (ծունր դնելով) *Օրհնյալ ըլլա երկինք, որ երկաթե բանտերեն և շղթաներեն ազատեց ծերունիս և դարձուց իմ անձկալի հայրենիքս, իմ քաղցր ընտանիքիս գիրկը։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ո՛վ երկինք, ո՛վ է արդյոք այս ծերունին...*

ՎԱՂԵՆԱԿ.— (մոտենալով) *Աստուա՛ծ իմ... Նորայր ֆշխանը... հայրդ է, Նազենիկ։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Հա՛յրս...* (գիրկը նետվելով) *Հա՛յր իմ... ի՛նչ ուրախություն մեկ վարկյանի մը մեջ... բայց երազ չըլլա տեսածս... վասն զի քու մահդ գուժեցին։*

ՆՈՐԱՅՐ.— *Ո՛չ, ո՛չ սիրեցյալ դուստրս, երկինք դարձյալ չուզեց իմ մահս և քո գիրկդ դարձուց զիս... դեռ պիտի ապրինք։*

ՎԱՂԵՆԱԿ.— Ի՞նչ պատահեցավ... (բարձր) Նազենի՞կ...

ՆՈՐԱՅՐ.— Դուստր իմ, ո՞վ է այդ կույր զինվորը։

ՆԱԶԵՆԻԿ.— Ջե՛ս ճանչնար... ամուսինս է, հայր իմ։

ՆՈՐԱՅՐ.— Ո՞վ երկինք, (գրկելով) Վաղենա՛կ... դեռ կզարնեք բազուկդ, որուն կրծնեցավ հայրը, ո՞վ արի դյուցազն, դեռ կզգամ բազուկը սրտիս վրա, որ թշնամյաց գլխուն անհուն հարվածներ թոթափեց։

ՎԱՂԵՆԱԿ.— Ո՜հ, դո՞ւ ես, դյուցազն հայր, ես ալ կհամբուրեմ այն բազուկը, որն որ ծերության մեջ չդողդոջեց սրույա տակ... բայց չեմ տեսներ։

ՆՈՐԱՅՐ.— Ալևոր Հայաստանի օրհնությունը լսե։

ՆԱԶԵՆԻԿ.— Ի՞նչ տարօրինակ դեպք, հայր իմ, երկուքնիդ մեկ օր հեռացաք հոսկե և երկուքնիդ մեկտեղ դարձյալ եկաք վերկս...

ՆՈՐԱՅՐ.— Նազենիկ, ո՞վ է այս մանկիկը։

ՆԱԶԵՆԻԿ.— Աղջիկս է...

ՆՈՐԱՅՐ.— Աղջի՞կդ... եկո՞ւր զքեզ ալ գրկեմ թշվառ զավակդու որ մանկությանդ առեն վշտահար մայր մը ունեցար. անմեղ հրեշտակ, դու որ վիշտ քաշելու համար երկինքը թողուցիր աշխարհ եկար... դու որ արտասվաթուրմ վարդ մը փթթեցար աշխարհիս վրա... երկինք սև ամպերով իր ճառագայթները քեզնե ծածկեց։ Վաղենակ, ահա քու աչերուդ լույսը, ահա քու դադաղիդ վարդը... Ալ թող արյունոտ դափնիները, և այս գեղեցիկ ձիթենիին շուքին տակ հանդըստացիր, բավական լույս ու արև թափեցիր հայկական ազատության փշոտ ճամբուն վրա. ուրեմն հրճվինք, որ հայրենյաց համար վշտացանք։

ՆԱԶԵՆԻԿ.— Եվ դու, հա՛յր իմ, ինչվան հիմա դու ո՞ւր էիր։

ՆՈՐԱՅՐ.— Վեց տարի ես ալ Եգիպտացվոց տերության բանտերուն խորերը ծանր շղթաներու տակ հեծեցի անոք և անմխիթար, բայց բանտապահիս և իմ մեջ այնպիսի սիրտ բարեկամություն մը հառաջ եկավ և այնչափ սիրելի եղա իրեն որ ինքզինքը մահվան վտանգի մեջ ձգելով ազատեց զիս... երբ այն բանտերեն դուրս ելա, կարծեցի թե նոր աշխարհ մը մտա, երբ հայրենյացս հողերը կոխեցի, Հայաստանիս հովը հայրենասիրության նոր ոգի մը ներշնչեց

ինծի, ես որ բանտերու խորերը գերեզմանին սև եղերքները դողդողդող ծերունի մ'էի, ահեղ առյուծ մը դարձա... բայց երբեք չէի հուսար որ ընտանիքս այսպիսի փոփոխ և երջանիկ վիճակի մեջ գտնեմ, միայն թե Հայաստանի վերջին հառաչները սիրտս կբեկբեկեն, երբ մարին Հայոց որոտացող շանթերը։

ՎԱՂԵՆԱԿ.— *Նորա՛յր, մի հուսար որ հայուն աստղը տեսնես, այլ բոլոր Հայաստան թշվառ պիտի թավալի կորստյան վիհը, ինչպես որ կործանեցավ իր գահը... երկինք ալ բարկացյալ աչոք կնայի Հայաստանի. այն անխիղճ եգիպտացիները, թաթարները, հադարացիները, ամենքն ալ երկնավրեժ հրեշներ են, որոնք անխնա Հայաստանը կհարվածեն... օ՜ն, ակնարկ մը ձգե հայրենյացդ վրա և կարծես գերեզմաններե և ավերակներե զատ ուրիշ շենք մը չպիտի գտնես... մարիկ ըրե և պիտի տեսնես որ Հայոց աշխարհին գիշերային լռությունն անգամ միշտ ողբաձայն հեծեծանքներե կընդհատի. ինչո՞ւ տապալի Հայաստան, վասն զի Հայոց մեջ մատնիչներ կան, ինչպես որ մեր պատերազմին մեջ ալ գտնվեցան... այսպես մատնությամբ հայերը զիւրար կենազրավ ընկել եմքը, եթե միայն հայ մը մնա, այն ալ ինքզինքը պիտի մատնե, որպես զի հայ եմ ըսելով աշխարհի առջև պարծենա... հայերն ի քուն են, իսկ մատնիչներն՝ արթուն...*

ՆՈՐԱՅՐ.— *Քիչ առենեն գուցե Սեբաստացիք գույժ պիտի առնեն որ Թշնամիք աշխարհավեր բանակավ Սեբաստիո վրա կթափին։*

ԶԱՅՆ ՄԸ.— *Քաղաքացիք, արի՛ք, զենք առեք։*

ԱՄԵՆՔԸ.— (սարսափած) *Ա՜հ...* (լռություն)։

ՎԱՂԵՆԱԿ.— *Կյսե՞ս, Նորայր։*

ԶԱՅՆ ՄԸ.— *Սեբաստացի՛ք, արի՛ք, զենք առեք։*

ՆՈՐԱՅՐ.— *Վահրամ, գնա, շուտ հոս բեր այդ մարդը.* (Վահրամ կմեկնի) *քաջալերությո՜ւն... դեռ այս դողդողջուն բազուկը կարող է սուր շարժել և Թշնամյաց գլուխները թափել... դեռ ողջ է Հայաստան, դեռ ողջ է հայրենասիրության ոգին։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ո՛վ երկինք, գթա՛ մեր վրա...*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Մա՛յր իմ, ես ալ կվախնամ։
ՎԱՂԵՆԱԿ.— Եկո՛ւր դիրկս, զավակս... մի՛ վախնար։
ՆՈՐԱՅՐ.— Քաջալերություն, դուստր իմ, ողբալու ժամանակ չէ։

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆՔ, ՎԱՀՐԱՄ, ՋԻՆՎՈՐ ՄԸ

ՋԻՆՎՈՐ.— (մեկուսի) Նորայր իշխանը կենդանի և Սեբաստիո մեջ... (զարմացած)։
ՆՈՐԱՅՐ.— Խոսե՛, մինչև նոր թշնամի՞ք կարշավեն Սեբաստիո վրա։
ՋԻՆՎՈՐ.— Այո՛, վեհա՛ղն տեր, Լանկրիմուր Թաթարստանի բրնաւորը՝ Հայաստանը գրեթե հիմնահատակ ընելե հետո՝ ահ ամպերու բանակով հոս կուգանա սուրբ Թևերով։
ՆԱԶԵՆԻԿ.— Ո՜հ, մինչև շատ մո՞տ են մեզ, ասովա՞ծ իմ...
ՋԻՆՎՈՐ.— Ո՛չ, վաղ առավոտյան դեմ հազիվ հոս կհասնին։
ՆՈՐԱՅՐ.— Ուրեմն թող քաղքին բոլոր դռները փակվին, ազնվականք և ռամիկք ամենքն ալ զենք առնեն... իմաց տուր Սեբաստացվոց թե Նորայր իր գերության շղթաներեն ազատելով իր հայրենիքը դարձեր է, իմաց տուր նաև բոլոր զորապետաց և զորաց, որ շուտով հիմա Նորայրի սպարանքը դան ժողովվին... թող ամեն եկեղեցյաց զանգակները հնչվին՝ այս գույժը բոլոր քաղքին մեջ շուտով տարածանելու համար... օ՜ն, ուրեմն տված պատվերներս փութով թող կատարվին, քա՛ջ Հայկազն։
ՋԻՆՎՈՐ.— Անհոգ եղիր, վեհա՛ղն տեր, ջանք և կյանք հայրենյացս նվիրելու պատրաստ եմ ես։

Տեսիլ Է

ՆՈՒՅՆՔ (բացի զինվորներեն)

ՆՈՐԱՅՐ.— Արի՛ զինվոր, երանի թե ամեն հայ քեզի պես զգար, այն ատեն Լանկրիմուր սարսափելով կնայեր Հայաստանի դափնեզարդ սարերուն և կասկար իր խրոխտ քայլը Հայաստանի հողին վրա դնել, ուր եթե մատնիչներ իրենց մոր կաթը չխմեին, ուր եթե վատեր և ազգատյացներ նախնի փառաց հիշատակաց քանդակներն իրենց նախատա-

կան քայլերուն տակ չջնջեին, ուր երեք Հայերը ձեռք ձեռքի միաբան մեռնինք գոչեին... ա՜հ, ե՜րբ պիտի ջնջվի աշխարհիս վրայեն թագը, փառքը և միայն եղբայրությունը իր մանիշակներովը մարդոց ճակատը պիտի պճնե փոխանակ դափնիի. բայց դու, Հայաստա՜ն, դու միշտ փուշեր պիտի տեսնես...

ՆԱՋԵՆԻԿ.— Ե՞րբ խաղաղություն պիտի գտնենք մենք այս աշխարհիս վրա, հա՛յր իմ:

ՎԱՂԵՆԱԿ.— Նազենիկ, չէ՞ երբեք հանգիստ հայուն համար, մինչդեռ անմիաբան է և օտար է իր սրտին հայրենասիրության բառը, ինչպես գուրն օտար է երկաթե թուրին:

ՆՈՐԱՅՐ.— Իսկ հետո շատ պիտի ղջա, ճակատը կոծելով շատ պիտի վայե հայը, բայց ինքզինքն անհատակ անդունդի մը գահավեժ բերանը պիտի գտնե, ուսկից անկարելի է ազատիլ... խիստ վերջը պիտի սթափի հայը և պիտի ըսե թե ես ազգ մ'եմ. բայց պիտի տեսնե, որ ձեռքերը ամուր շղթաներով կաշկանդված են, մինչդեռ բախտը յուր առջև կթռչտի... (դրսեն ոտնաձայն մը կլսվի):

ՆԱՋԵՆԻԿ.— Այս ի՞նչ ոտնաձայներ են... Աստվա՜ծ իմ:

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Պաշտպանե՛ զիս, մա՛յր իմ..

ՆՈՐԱՅՐ.— (խոռեն ձայնով) Բան չկա... զորապետներս և զինվորներս են որ հոս կուգան... քաջալերվե՛ք, սի՛րտ իմ... երկի՛նք, զորացո՛ւր դողդոջ թևերս:

Տեսիլ Ը.

ՆՈՒՅՆՔ, ՎԱՋԵ, ԶՈՐԱՊԵՏՔ, ԶԻՆՎՈՐՔ

ՆՈՐԱՅՐ.— Կեցցի՛ք, ա՛րք հայկազունք, որ հայրենիքը պաշտպանելու համար փութով եկաք հոս ժողովվելու... օ՛ն անդր, ժամանակ չկորնցունենք և զենքով ու սիրով վառված հառաջ խաղանք, զի ահա վրեժխնդրության ժամը հնչեց... երեք չհայտա մեր երակացը մեջ դյուցազն Հայկա արյունը, երեք եռանդ ի սիրտ և սուր ի ձեռին չպաշտպանենք հայրենիքնիս, վա՛յ մեզի, կորստյան տխուր ժամն ալ պիտի հնչե, ուրեմն հաղթենք և մեռնինք և թող մեր զավակները դափնիներ սփռեն մեր գերեզմաններուն վրա, թող մեկ մեկ հաղթության կամարներ ըլլան մեր շիրիմները և թող մեր

արյունը խաղաղություն սիրե մեր զավակաց ընտանյացը վրա... մեռնինք կըսեմ ամենքնիս ալ երբեք անձնատուր չըլլանք այն անգութ և վատազգի մարդոց։ Եվ Թող Լանկթիմուր մեր ցուրտ դիակացը վրայեն անցնի ամոթահար... կերդնո՞ւք ամենքնիդ ալ մինչև վերջին շունչերնիդ պատերազմին դաշտին վրա սպառելու և մինչև ձեր արյան վերջին կաթիլը հայրենյաց ծոցը ցողելու...

ԱՄԵՆՔԸ.— *Կերդնումք...*

ՆԱՋԵՆԻԿ.— *Պետք է երդնուլ, եղբարք, և ի՞նչպես մեր կյանքը հայրենյաց չձոնենք, ի՞նչպես արյուննիս անոր չպարտինք, մինչդեռ հայրենիքը իր զրկացը մեջ ծնավ և սնույց մեզ. մեր նուրբքերն անոր պարիսպ պիտի ըլլան և մինչև որ դիտապաստ չգլորինք, մեր սուրերն իրենց պատյանը չպիտի դառնան... վատ է այն որ ավելի կյանքը կսիրե քան թե պզդը։*

ՎԱՂԵՆԱԿ.— *Երանի ձեզ, հայե՛ր, որ դեռ կվառի սրտերնուդ խորերը հայրենասիրության կայծը... ա՜հ, իմ արյունս ալ կեռա... սուր մ'ալ ինծի տվեք, և Թող վեհերոտ երիտասարդները տեսնեն ալևորը և կույրը պատերազմի արյունաշաղախ դաշտին վրա և ամոթահար ըլլան։*

ՆՈՐԱՅՐ.— *Հապ օ՞ն, մերկացուցեք սուրերնիդ, հրաժեշտ տվեք աշխարհի, օ՞ն անդր, Սեբաստիո պարսպաց վրա, հաղթությունը մեզ կսպասե... դողա՛ Լանկթիմուր, հայերը ձեռք ձեռքի տվին...*

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Վրե՜ժ կը գոռաս ջիրմաց խորեն
Գոռ դյուցազնց սվերմն աներ,
Վրեժ կը մրմռաս արդ տխուրեն
Մեր ներ եղբարց արյան ներեղ.
Մասյաց ժեռուս սարն բոցավեժ
Մեր սրտերուն խոր ժայրե վրեժ ..
Օ՜ն, անվեհեր վանենք զրկանք,
Որ Հայաստան առնե նոր կեանք.
Իյուր սուր նուր, մահ
Զազդեն մեզ ահ...
Արդ բաջալանջ՝
Նետվինք հառաջ,

Սուր մեր հագուդ,
Վաս և անգութ՝
Թող բռնամվույն
Եմն աչյուն...:

ՆՈՐԱՅՐ

Կայծակնահար թող կոբնչիս
Որ կը մատնեն հայրենիքին:

(Վերջ Ա. Արարվածին)

ԱՐԱՐՎԱԾ Ը

ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ

Տեսիլ Ա.

Առշալույս.— Դաշտակ մը.— Ծորը Սեբաստիո պարիսպները կերևին.— Ջինվորներ ասդին անդին ճնացած են.— Ջենիներ, դրոշակներ ցիրուցան տարածված:

ՎԱՋԵ և ՋՈՐԱԿԱՆՔ (ճնացած)

Մի՛ ծագիր, արշալույս, Թող դիշերն իր Թուխ Թևերովը երկնից երեսը սքողե... Թող դիշերն իր խավար ծոցին մեջ ծածկե մատնությունս... մատնություն մը որ իմ սրտիս երջանկություն պիտի բղխե... ա՜հ, ինչո՞ւ կույր զկուրայն գլորիմ դերեզմանը, մինչդեռ կենացս գարունը ժպտելով վարդե պսակներ կբոլորե ճակտիս, ինչո՞ւ զանոնք մահվան ցուրտ ոտիցը տակ նետեմ... ի՜նչ հիմարություն, հայրենասիրություն բռված անիմաստ բառի մը զոհել աշխարհիս փառքն ու հաճույքը և բանդագուշանաց ծնունդ հանդերձյալ երջանկություն մը վայելելու հուսով չարաչար սատակել... հիմար չեմ ես, դեռ խելքս գլուխս է... ահա Սեբաստիո պարիսպները կատատանին և պիտի տապալին վերջապես, ես ալ փոխանակ անոր ավերակացը տակ ջախջախելու, քանի որ Թշնամին կյանքս շնորհելեն զատ վարձք ալ կխոստանա ինձ, ուրեմն անոր գիրկը կդիմեմ և զայն կգտնեմ ինձ ապաստանարան... Թող վայե և ողբա հայրենիք, հայրենիք՝ որ բոլոր տիեզերաց աղետիցը պատճառ է... Հիմա հարկ է որ զորքերս համոզեմ... բայց ապահով եմ որ անոնք ալ ինձ պիտի հետևին, վասն զի հայ են և ես

իրենց հայրենասիրությունը փորձեցի արդեն... Բայց երբ չհամոզվին ամենքը մեկտեղ և ալեկոծի դունդա, «ես զձեզ փորձեցի» ըսելով մինակ թշնամվույն կողմը կանցնիմ... բայց շուտ ընեմ, վասնզի հիմա արևը կծագի... (փողը կը-ճնշեցնե)։

ՋՈՐԱԿԱՆՔ.— (ճանկարծ ցատկելով) Ի՞նչ կա, զորապետ, ի՞նչ կա...

ՎԱՋԵ.— Ահա արշալույսը կսկսի ծագիլ և քիչ մը հաքը Սեբաստիո պարիսպները սարսել. դուք քնացաք, բայց ես անքուն ձեր վրա հսկեցի, դիշերվան աղջամուղջը խորհուրդներ հըղացավ մտացս մեջ... ես որ այսչափ առեն սոսկալի պատերազմներե խրոխտ ճակատով վերադարձա, կհետևի՞ք ինծի։

ԱՄԵՆՔԸ.— Միշտ քեզի հետ ենք, զորապետ։

ՎԱՋԵ.— Ուրեմն ձեզի հարցում մը ունիմ այսօր... մեռնի՞լ կուզեք, թե վաղը ապրիլ... պատասխա՛ն տվեք։

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— Մեռնի՛լ ի սեր հայրենյաց...

ՋՈՐԱԿԱՆՔ.— Այո՛, մեռնի՛լ ի սեր հայրենյաց...

ՎԱՋԵ.— Իրավունք ունիք, պետք է մեռնիլ... բայց այն առեն երբ մեր արյամբը հայրենյաց ազատությունը կարենանք դնել... իսկ պետք է որ մեռնիմք կուրորեն, երբ մեր հայրենիքը չկրնալ ազատելեն զատ՝ հայ և հոգի ըլլալե դադրինք... որովհետև տեսաք և լսեցիք որ Լանկրիմուր, այն աշխարհավեր ճիվաղը, ինչպես Պարսկաստանը, Ասորեստանը և մեր խեղճ Հայաստանը յուր խրոխտ գարշապարացը տակ ջախջախեց... ուրեմն մենք ի՞նչպես կրնանք դեմ դնել, մենք որ Սեբաստիա մ՚ենք, մենք որ այս մեծամեծ տերությանց քով հյուլե մը կհամարվինք։

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— Կսխալիս, քա՛ջ զորապետ, հայրենասեր հայու մը դիմաց տասը կատաղի թաթար քիչ են... վասնզի անոնք արյան մեջ հողդողդ փառք մը կփնտռեն, իսկ մենք՝ սեր... կրնաս հիշել Մամիկոնյան Վահանը և ուրիշ դյուցազներ։

ՎԱՋԵ.— Այս մարդը վտանգավոր է, պետք է հայրենյացը զոհել... (բարձր) Ասիկա անխելք է... արդեն ես դիշերն ի բուն՝ անքուն խորհեցա, քաջ զորականք, և թշնամյաց

կողմ անցնելով մեր կյանքը ապահովելն զատ ուրիշ լավ միջոց չգտա. Լանկիմուր այնպիսի կառավար մ'է, որուն դժոխային սուրեն կիյնան հայրենասիրություն և քաջություն։

ՋՈՐԱԿԱՆՔ.— *Արդեն մենք ալ քեզի հետ ենք, զորապետ։*

ՋԻՆՎՈՐ ՄՐ.— *Ի՞նչ կընենք, ընկե՛րք. հայրենիք մատնե՞լ...*

ՎԱՋԵ.— *Ով որ քաջ է և իմաստուն, թող ի՛նձ հետևի...* (*Բանի մը բայլ կառնե և մյուսներն ալ ետևեն*)։

ՋԻՆՎՈՐ ՄՐ.— *Ուրեմն ես ալ կերթամ ձեր մատնությունը Նորայր իշխանին իմաց տալու։*

ՎԱՋԵ.— *Զորականք, թո՛ղ մեռնի այդ ժպիրհ մատնիչը։*

ՋՈՐԱԿԱՆՔ.— (*սուր ի ձեռին վրան նետձակելով և ներս մղելով*) *Մեռի՛ր, մեռի՛ր։*

ՋԻՆՎՈՐՐ.— (*ներսեն*) *Ազգուրաց հրեշներ...* (*կովելով*) *ա՜հ... կմեռնի*)։

ՎԱՋԵ.— *Ի՞նչ ըրիք, աղեկ մը սպաննեցի՞ք...*

ՋՈՐԱԿԱՆՔ.— (*գալով*) *Այո՛, զորապետ...*

ՎԱՋԵ.— *Կեցցե՛ք, քաջ զորականք, դուք որ գիտցաք ձեր կենաց արժեքը՝ երջանիկ պիտի ըլլաք... օ՜ն, խոհեմություն և քաջություն...* (*երթալով*) *երթանք քաղքին դռները բշնամյաց առջև բանալու և բշնամյաց ու կենաց դիրկը նետվելու։*

Տեսիլ Ը

ՎԱՂԵՆԱԿ (*միևնակ՝ մյուս կողմեն գալով*)

Երանի՜ քեզ, Սեբաստիա, որ դեռ Լանկիմուրի երկաթներուն տակ չինկար... երանի՜ կըսեմ որ քու հողերուդ վրա մատնիչ չես անուցեր... ո՜հ, իցիվ թե վայրկյան մը միայն բացվեին հանկարծ այս սև սև աչքերս և տեսնեի անդուլ թափարաց արյամբը կարմրած դաշտերդ... երբ հաղթություն քառը քու խրոխտ պարսպացդ վրա որոտա... ա՜հ, երկի՛նք, դո՛ւ զորացուր թշվառ հայուն բազուկը և մեղմացուր անդուլ թշնամվույն սիրտը... դթությո՜ւն, դթությո՜ւն. մի՞թե չպատեցան կայծակներդ զորս անդադար տարաբախտ Հայաստանի ալևոր ճակտին թոթափեցիր... ա՜հ, եթե Լանկիմուր իր արյունոտ ոտքերը Սեբաստիո հո-

դուն վրա դնե, Սեբաստիա Հայաստանի սև գերեզմանը պիտի ըլլա... ո՛վ երկինք, եթե Հայաստանի համար վերջին կայծակ մը պատրաստեր ես, զի՛ս զարկ, զի՛ս... Հայե՛ր, դիս ալ ձեր բանակին մեջ առեք, ես ալ սիրտ ու սուր ունիմ, կուզեմ մեռնիլ և արյունս Հայաստանի երակացը տալ (սուսերամերկ վազելու կըլլա):

Տեսիլ Դ

ՎԱՂԵՆԱԿ և ՆԱԶԵՆԻԿ

ՆԱԶԵՆԻԿ.— (ճաճկարծ դիմավորելով և գրկելով) *Ո՜հ, մեռնի՛լ կըսես, Վաղենակ...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Նազենիկ... դու իմ գիրկս ես դարձյալ...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Այո՛, միշտ քու գիրկդ և ալ չի պիտի զատվիմ... ես ալ քեզի հետ պիտի մեռնիմ, քու քաղցր գրկացդ մեջ պիտի տամ վերջին շունչս...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Դու մեռնիս, Նազենիկ, այսպես գեղեցիկ և երիտասարդ... վա՛յ քեզ, գողտրիկ շուշան, քու գարնանդ մեջ խորշակ մը եղավ քեզի Վաղենակ, քու արևդ ծածկող սև ամպ մը եղավ իր սերը... այնպես չէ՞, Նազենիկ... ո՜հ, կարծեմ կուլաս... վասնզի ջերմ կաթիլներ կզգամ սրտիս վրա:*

ՆԱԶԵՆԻԿ.— *Այո՛, կուլամ, Վաղենակ, մեր ցավալի վիճակին վրա կուլամ... կողքամ հայը որ երբեք չի վայելեր ընտանեկան սեր և խաղաղություն... մինչդեռ այս ժամուս վարդենյաց մեջ մեկու մը գիրկը կժպտի, հետևյալ ժամուն սգալի նոճիի տակ նստած՝ տխուր կորստյան մը վրա կուլա... փոթորիկ մը զարձավ Հայաստան... մեկ կողմեն անողորմ թշնամին իր սուրը և մյուս կողմեն անհագ սովը իր սև թևերը տարածած՝ միշտ մահ կսպառնան հայոց... մա՜հ... մա՜հ... և բարերար ձայն մը չգոչեր—«ա՛լ բավական է».— Վաղենա՛կ, սիրելի՛ս, մենք ևս հոս բանտի մը մեջ ենք. քիչ առենեն պիտի գան արյունառուշտ դահիճներ և մեզ խողխողելով՝ մեր դիակներովը հաղթության կոթողներ պիտի կառուցանեն և մեր արյամբը հաղթություն պիտի գրեն Սեբաստիո մթին փլատակացը վրա...*

ՎԱՂԵՆԱԿ.— Ա՜հ, սոսկալի է այդ... և այն ատեն նախատալից պիտի ըլլան ամուսնույդ ոսկորները, երեք սուր ի ձեռին չմեռնի... Նազենիկ, երբ այս գիշեր անկողնույս մեջ անքուն՝ հայրենիքս, քեզ և զավակս կմտածեի, հանկարծ ըսպառնալից ձայն մը որոտաց ականջիս...—Արի՛, դո՛ւ ալ զենք առ և կռվե, ինչպես որ քու եղբարդ կկռվին.—հանկարծ սարսափահար ցատկեցի, մոռցա հորդ և քու պաղատանդ և զավակիս ողբը, դուրս նետվեցա խնկույն և իզուր խավարին մեջ թշնամի փնտռեցի այն ձայնին զոհելու համար:

ՆԱԶԵՆԻԿ.— Եվ չմտածեցի՞ր անգամ մը, որ երբ ամուսինդ և զավակդ զքեզ չգտնեն իրենց քով, ի՞նչ սոսկալի ժամ մը պիտի ըլլա այն...

ՎԱՂԵՆԱԿ.— Նազենիկ, դու որ այնչափ սիրելի ես ինծի, քու ձայնեդ ավելի ազդու էր այն ձայնը... կարծես թե մորիկ մ'էր որ զիս հառաջ մղեց:

ՆԱԶԵՆԻԿ.— Վաղենակ, ահա արևն իր վարդե ճառագայթները կսփռե հորիզոնին վրա. հիմա Վարդանուշ արթնցած՝ հայրն ու մայրը կփնտռե, երթա՛նք, գուն ունեցիր այն անմեղին վրա...

ՎԱՂԵՆԱԿ.— Երկի՛նք, դու ալ նույնպես գուն ունեցիր Հայաստանին վրա... (կմեկնին... հեռուեն պատերազմի փողեր կլսվին):

Տեսիլ Դ.

ՆՈՐԱՅՐ, ՋԻՆՎՈՐՔ

ՆՈՐԱՅՐ.— Ահա, պատերազմի պատրաստության փողերը կհընչեն.. վա՜յ անոնց՝ որոց սրտին հրճվանք չազդեր այս փողերուն ձայնը... ուրախացե՛ք, քա՛ջ զորականք, պիտի տեսնեք որ քիչ ատենեն Լանկթիմուր Սեբաստիո խրոխտ պարապացը տակեն ամոթահար պիտի անցնի... պիտի հիանա բոլոր Ասիա թե ի՛նչպես Սեբաստիա Լանկթիմուրի սպառնացայտ նայվածքին դեմ չդողաց.—միությամբ և քաջությամբ—միությունը, միությունն է ազգի մը զենքն ու կյանքը... Հայե՛ր, երկնեց երեսը հույս չինտռենք, մեր հույսը Քող ըլլա մեր սիրտը և մեր սուրը... ե՛լ, ե՛լ, Արև,

այսօր դու հորիզոնը իջած ատենդ՝ կա՛մ Հայաստան քեզի հետ մեկտեղ գերեզման պիտի իջնա և կամ յուր աստղը գիշերային առաջին աստղին հետ պիտի շողշողա, բայց ես տարակույս չունիմ, որ վերջինը պիտի ըլլա, այո՛, Հայաստանի աստղը պիտի փայլի, մինչդեռ ամեն հայ միաբան զենք առեր է և զենքն իր ձեռացը մեջ չդողար... այո՛, պիտի հաղթանակե Սեբաստիա... ո՛վ սեբաստուհիք, դաժնյա պսակներ պատրաստեցեք ձեր զինվորական եղբարցը։

Տեսիլ Ը.

ՆՈՒՅՆՔ և ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Դո՞ւ ես, Նորայր, Սեբաստիո իշխանը...

ՆՈՐԱՅՐ.— Այո՛... քաջդ պատգամավոր։

ՊԱՏԳԱՄ.— Լանկրիմուր տիեզերակալ՝ Արքան թաթարաց՝ որ բոլոր Ասիան նվաճեց, տեսնելով սեբաստացվոց անօգուտ ընդդիմակալությունը, կերդնու յերկինս, որ եթե Սեբաստիա անձնատուր ըլլա, երբեք սուր չպիտի շողացնե հայոց գլխուն վրա։

ՆՈՐԱՅՐ.— Իսկ եթե անձնատուր չըլլա՞։

ՊԱՏԳԱՄ.— Թե բոլոր բնակիչները անխնա սրո ճարակ պիտի մատնե և թե Սեբաստիան հիմնահատակ պիտի կործանե...

ՆՈՐԱՅՐ.— Ուրեմն եթե այդչափ վեհանձն է Լանկրիմուր, թող զենքով հաղթանակե, փոխանակ սուտ երդումներով աչք շլացնելու. Սեբաստիո համար նախամեծար է պարտյալ մեռնիլ, քան թե անձնատուր...

ՊԱՏԳԱՄ.— Մտածե՛ Նորայր, հետին զղջումն անօգուտ է... դարձո՛ւր աչքդ Հայաստանի ավերակացը վրա, Սեբաստիացեն ավելի ամրապարիսպ քաղաքաց բնակիչներն ալ այդպես ըսին, բայց իրենք ալ իրենց քաղաքաց փլատակացը տակ թաղվեցան անշշունջ...

ՆՈՐԱՅՐ.— Ո՛չ, ո՛չ, Լանկրիմուր չկործանեց այն քաղաքները, այլ Լանկրիմուրեն զորավոր ոգի մը— անմիությունը —որ Հայաստանի արևը մարեց... ո՛վ պատգամավոր, մի՛ կարծեր որ հայերը քաջ չեն. եթե հայերը իրենց քաջությանը չափ միություն ալ ունենային, Լանկրիմուրը չպիտի

համարձակեր իրենց երկրին մէջ ոտք կոխելու անգամ և այն երկիրն ավերել մոաբերելու։

ՊԱՏԳԱՄ.— *Ի՛շխան, հիմա հայութիւնը ողբալու ժամանակ չէ, այլ ազատելու. գիտցի՛ր որ գոռող անպատուութեան մը կզոհես Սեբաստիա մէջ ապաստանած հայութեան մեկ մասը... մտածե՛... դու ծերունի մ'ես և մեկ ոտքդ արդեն գերեզման իջած է, իսկ անդին անթիվ հայեր կան, զորս դու անխոհեմութեամբ կորստյան վճիռ մը եղրը կթողուս։*

ՆՈՐԱՅՐ.— *Ո՛վ պատգամավոր, այնչափ տգետ չէ Նորայր, որ իր աղգը մատնե, վատահելով Լանկթիմուրի մը երդմանը, որ ո՛չ խիղճ ունի և ո՛չ ալ դութ... գնա՛ ըսե՛ ինքնակալիդ, որ Սեբաստիա պատրաստ է իր ծարավը հագեցնելու... եթե այդչափ հզոր է ինքը, ի՞նչ փոռք կակնկալե Սեբաստիան կործանելով։*

ՊԱՏԳԱՄ.— *Հարկ է որ տկարը խոնարհի հզորին։*

ՆՈՐԱՅՐ.— *Եվ վատ է այն, որ սուր ունի և ինքզինքը չպաշտպաններ փոռասերի մը անիրավ պահանջմանց դեմ, չմեռնիր ազնարգ գերի ըլլալու համար։*

ՊԱՏԳԱՄ.— *Բայց գիտցի՛ր որ եթե աշխարհակալ Լանկթիմուր իր ոտքերը Սեբաստիա հողույն վրա դնե, քար քարի վրա չպիտի թողու։*

ՆՈՐԱՅՐ.— *Այլ ավերակները սևի տեղ կարմիրով կներկվին։*

ՊԱՏԳԱՄ.— *Հայկական շունչ մ'անգամ չի պիտի թողու։*

ՆՈՐԱՅՐ.— *Իսկ հայոց դիակները չեն կարմրիր։*

ՊԱՏԳԱՄ.— *Քանի որ մեռնիլ կփափագիք, ապերա՛խտ հայեր, ուրեմն մահվան պատրաստվեցեք... քիչ առենեն պիտի տեսնեք, որ հաղթականն Լանկթիմուր Սեբաստիա կործանյալ պարսպացը վրայեն իր վրեժխնդիր սուրը տարածած մահ կսպառնա...*

ՆՈՐԱՅՐ.— *Ո՛վ պատգամավոր, գիտցիր որ սեբաստացիք երբեք անձնատուր չեն ըլլար, եթե մեկ անձ մ'ալ մնա... կմեռնին, վատ չապրելու համար։*

ՋՈՐԱԿԱՆՔ.— *Այո՛, պատերազմ... կեցցե՛ Հայաստան։*

ՊԱՏԳԱՄ.— *Մի՛ խրոխտաք այդպես, սեբաստացիք, քիչ առենեն պիտի վայելեք* (սպառնալից կիեռանա)։

ՆՈՐԱՅՐ.— *Կտեսնե՞ք, քա՛ջ հայեր, որ Պարսկաստան և Ասորես-*

տան նվաճող սոսկալի բանակը ձեր մահատարափ նետերեն զարհուրած՝ դեսպան կղրկե որ անձնատուր ըլլաք... քաջալերվեցե՛ք, հայե՛ր, եթե հաղթենք, Սեբաստիա Հայաստանի երկրորդ խանձարուրքը պիտի ըլլա, և Հայաստան դարձյալ իր կիսակործան ավերակացը մեջեն աներկյուղ իր գոռոզ գլուխը պիտի բարձրացնե... ուրեմն կեցցե՜ն Հայք և կեցցե՜ Հայաստան...

ՋՈՐԱԿԱՆՔ.— Կեցցե՜ն Հայք և կեցցե՜ Հայաստան... (հանկարծ աղմուկ մը կելնե):

ՆՈՐԱՅՐ.— Ի՞նչ ձայներ են ասոնք... (ժողովուրդը սարսափած խոռեն կվազե) Ի՞նչ պատահեցավ... ինչո՞ւ սարսափահար կփախչիք:

ԺՈՂՈՎՈՒՐԴ.— Մատնությո՜ւն... մանտնությո՜ւն... Լանկթիմուրը Սեբաստիան կոխեց:

ՆՈՐԱՅՐ.— Սոսկալի հարված... (դողդոջուն ճվաղելու կըլլա, բայց հանկարծ կսթափի) Օ՜ն անդր... քա՛ջ զորականք դեռ սուրերնիս չէ փշրած ձեռքերնուս մեջ... հապ օ՜ն, մեռցնենք և մեռնինք դարձյալ գոչելով, կեցցե՜ Հայաստան...

ՋՈՐԱԿԱՆՔ.— Կեցցե՜ Հայաստան... (սուսերամերկ կսլաքանչ):

ՋԱՅՆԵՐ.— (դրսեն) Կեցցե՜ Լանկթիմուր:

ՏԵՍԻԼ Զ

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ, ՋԻՆՎՈՐՔ, ՀԵՏՈ ՋՈՐԱԿԱՆՔ

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քաջ զորականք, ահա ձեզի արյան ասպարեզ մը... կատաղի վագրերու նման հառաջ նետվեցեք, ահա նոր գլուխներ ձեր սուրերուն կսպասեն. երբեք մի՛ գթաք, զարկե՛ք, մի՛շտ զարկեք. ձեր այսօրվան զբոսանքը թող այս ըլլա. եթե հոգնելով ծարավիք, ծարավնիդ հագեցնելու համար զոհերնուդ արյունը խմեցեք... ինչվան երեկո ձեզի ժամանակ կուտամ. եթե երեկոյին հայ մը տեսնեմ, վա՜յ ձեզի... եթե գտնեմ ձեր մեջեն մեկը՝ որուն սրեն արյուն չկաթեր, վա՜յ անոր... հապ օ՜ն յասպարեզ, կրակ, կայ-

ծակ, վա՛յ և մահ թափեցնեք հայոց գլխուն... (զորքերը սուսերամերկ կվազեն):

ՋԱՐՄԱՋԱՆ ԵՎ ՋՈՐՔ.—(դռսեն) Կեցցե՛ Լանկթիմուր, կործանի՛ Հայաստան (տեսարանը կուգան):

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Կեցցե՛, արիդ զորավար թաթարաց, դու որ միշտ ինքնակալիդ կամակատար դտնվեցար, դու որ քու քաջութիւններովդ Լանկթիմուրի ճակտին փառաց դափնիներն ավելցուցիր:

ՋԱՐՄԱՋԱՆ.— Քա՛ջդ ինքնակալ, երբ քաջութիւն գործեց Զարմազան, տիեզերասաստ Լանկթիմուրի անվամբը գործեց, անոր նվիրած սրովը թշնամին դողացուց և անոր ճաճանչավոր արևուն մեկ ճառագայթովը ինքը կյանքը վայելեց... երանի կուտամ ձեզ, թաթարք, որ Լանկթիմուրի նման թագավոր մը ունեցաք, որ իրեն և ձեր անունը բոլոր աշխարհաց սրտերուն խորերը սոսկումով տպավորեց, որ իրենց և ձեր զորութիւնը մեծամեծ աշխարհաց փլատակացը վրա արյան հեղեղներով հիշատակեց, զորս ժամանակին երկաթյա ձեռքերը չի պիտի կարենան ջնջել. ահա, աստեղազարդ երկինք անգամ նախանձելով ձեր ինքնակալին կրած թագին վրա, կտգա, որուն շողշողուն ակունքն իր հաղթահարած ազգերուն աստղերն են, զոր ետքը հափշտակեց քաջութիւնդ:

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քա՛ջդ Զարմազան, կլսե՞ս այս ողբաձայն հեծեծանքները, այս ալ Հայաստանի վերջին հառաչանքն է, և դարձյալ Լանկթիմուրի տիեզերակալ ձեռքն է, որ անոր արևը կծածկե:

ՋԱՐՄԱՋԱՆ.— Ո՛վ խեղճ սեբաստացիք, ինչո՞ւ այդպես ողբերով երկնից կամարը կթնդացնեք, դուք որ քիչ մը հառաջ կխրոխտայիք Լանկթիմուրի մը դեմ... դուք որ պարսպաց ետևեն նախատինք կթափեիք... ո՛վ կատաղություննս, Լանկթիմուրը նախատե՞լ...

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Արյո՛ւն... արյուն թող թափվի և Լանկթիմուրի ու բոլոր թաթարաց վրեժխնդրության ոգին թող արյամբ հագենա. տեսնեն թե միայն վայրկյան մը կրնա՞ն Լանկթիմուրի դեմ խրոխտալ, գիտնան թե քանի որ Լանկթիմուր աշխարհի վրա կշնչե, բոլոր թագավորաց գահերուն մեկ

ոտքն անդունդի մը վրա կնայի... մի՛ պարծենաք ձեր փառքին վրա, ով թագավորք, վասնզի քանի որ ողջ եմ ես, այդ գահը ձեր դագաղը պիտի ըլլա. մի՛ խրոխտաք, վասնզի պիտի տեսնեք որ ձեր աստղ կարծած բախտը աստղ մ'է եղեր որ պիտի սահի, խավարի... ինչպես որ շատերուն հանդիսատես եղա և հրճվեցա... ողբա և դու ալ, Սեբաստիա, որ իմ սիրտս խայտա... լաց որ իմ սիրտս զովանա... վասնզի քու կարողութենեդ վեր հանդգնեցար... քաջդ Ջարմազան, ի՞նչ կընես հայոց ուրացյալ դունդը...

ՋԱՐՄԱԶԱՆ.— Քաղքին դռներուն հսկողություն կընեմ, քա՛ջդ ինքնակալ։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քեզի կպատվիրեմ որ երբեք չվստահիս այն մարդոց, վասն զի այն որ իր բնիկ ազգը կմատնե, անշուշտ օտար ազգ մ'ալ կմատնե... թող բոլորն ալ ջարդվին և դու գնա մինակ իրենց զորապետը շղթայակապ հոս բեր... կրկին պատվիրե զորաց որ հաջողին առանց վերք մը տալու Սեբաստիո իշխանը ձերբակալ ընելով ինծի բերել...

ՋԱՐՄԱԶԱՆ.— Կհնազանդիմ, վեհափա՛ռ տեր։

Տեսիլ Է

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ (մինակ), ԹԻԿՆԱՊԱՀՔ

Ահա կսկսին դիակաց բլուրներ ձևանալ և արյան գետեր մռնչմամբ սահիլ... Լանկթիմուր, ա՛լ բավական արյուն թափեցիր, բոլոր աշխարհ արյան ջրհեղեղ մը դարձավ... բայց դեռ սրտիս խորը այնպիսի կրակ մը կվառի, կբորբոքի, զոր այսշափ արյուն չկրցան մարել... փառասիրությունը—«քալե՛, դեռ քալե» կմրմռա ականջիս և ոտքերուս տակ արյունաներկ ծաղիկներ, թագեր սփռելով, կցուցնեն ինծի աշխարհիս ծայրը ոսկեզեն լերան մը գագաթը տիեզերակալ գահ մը, և սիրտս թևավորյալ արյան ծովերու վրայեն սահելով կուզե թռչել հոն, հոն՝ ուր դեռ չէ կոխած մահկանացուի ոտքը... և այն ատեն երկինք և երկիր պիտի հիանան, երբ Լանկթիմուր իր ձեռքը այն գահուն վրա դնե... իր կյանքը այն ատեն փառաց արև մը

պիտի ըլլա և իր դափնեզարդ ճակատը միայն մահվան առջև պիտի խոնարհի... անիծյալ գերեզման, որ դեղեցիկ երազի մը արթնութեան նման թագակիրը կսառեցնես... մի՛ մոռնար ինծի, ո՛վ մահ, մինչև որ ես այս փառաց կատարը բարձրանամ և այն ատեն իմ անհուն զոհերուս արյամբը կշտացիր։

Տեսիլ Ը

ՆՈԻՅՆՔ, ՎԱՉԵ, ՋԱՐՄԱՋԱՆ

ՎԱՉԵ.— Ո՛վ մեծդ ինքնակալ, այս երկաթե շղթաներն են ուրեմն իմ վարձքս, ասո՞նք են իմ դափնիներս։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ի՞նչ ըսել կուզես, զորապետ, կկարծես թե առակաց ավելի վարձքի մը արժանի ըլլա մատնիչ մը, կկարծե՞ս թե այնչափ անմիտ ըլլա Լանկթիմուր, որ մատնիչ մը վարձատրե... ո՛չ, ո՛չ Լանկթիմուր երբեք վատաբար և անիրավ չդործեր։

ՎԱՉԵ.— Եվ ինչո՞ւ վարձք խոստանալով, իր երդմանը դեմ գործեց։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ո՛չ... բնավ Լանկթիմուր իր ըրած երդումն ալ չդրժեր... այո՛, քիչ վարձք խոստացա, այլ ավելի արժան համարեցի երկաթե շղթաներով վարձատրել մատնութիւնդ, ապահով ըլլալով որ բոլոր աշխարհ այս դատապարտութեան իրավունք պիտի տա։

ՋԱՐՄԱՋԱՆ.— Այո՛ և մինչև անդամ մահու արժանի է այն, որ իր շահուն իր եղբայրքը կմատնե վատաբար։

ՎԱՉԵ.— Այդպես չէ՛, քաջ զորապետ, լավ դիտեի որ մեծն Լանկթիմուր պիտի կործաներ Սեբաստիան, ես ալ փոխանակ զուր տեղը իր սրույն ճարակ ըլլալու, նախամեծար համարեցի փութացնել կործանումն և ասով ազատել կյանքս։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ուրեմն, վա՛յ քեզի, որ կյանքդ հայրենիքեդ ավելի կսիրես... ի՞նչ ես դու աշխարհիս վրա. հրեշ մը, որուն սրտին խորերը մարեր է հայրենասիրության կայծը... նախատինք քեզի որ սուր կկրես ձեռքիդ մեջ և չես ուզեր զայն ի սեր հայրենյաց շարժել... ուրեմն ի՞նչպես հանդիսատ պիտի ըլլայիր դու, երբ վարձատրեի զքեզ, մինչ-

դեռ բոլորիդդ բյուրավոր արենակցացդ դիակները դիզվեր են... ի՞նչպես քու կյանքդ չի պիտի խռովեր եղբարցդ հեծեծանքներեն և առ քեզ ուղղած անեծքներեն, մինչդեռ դու անոնց կորուստը պատճառեցիր վատաբար.— ա՜հ, այսչափ ազգեր նվաճեցի ես և չտեսա հայեն ուրիշ ազգ մը, որուն մեջ գտնվին ուրացող մատնիչներ... դուք շուտ կկործանիք հայեր, մինչդեռ այսպես անմխիթար եք։

ՎԱՉԵ.— Ո՜վ մեծդ ինքնակալ, եթե մատնեցի հայրենիքս, քու վառքդ ավելցուցի, քու վրեժխնդրությունդ հագեցուցի... Ուրեմն ինչպե՞ս արժան կհամարիս նախատանոք վարձատրել զիս, ես որ քու հաղթությունդ հայրենյացս փրկութենեն ավելի նախամեծար համարեցի... վա՜յ քեզ, Վաչե, որ ինչ որ ալ գործես բախտը խոժոռ կնայի քեզ։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ո՜վ ուրացող, երբեք Լանկթիմուրեն հատուցում մի՛ հուսար, թեպետ և քաջն Զարմապանի ըսածին պես մահվան կդատապարտեր քեզ իրավունքը, սակայն ես կներեմ քեզի... կշնորհեմ կյանքդ, վասնզի վրեժխնդրությանցս գործիքը եղար դուն։

ՎԱՉԵ.— Ո՜հ, գոնե հրաման ըրեք, որ այս շղթաները քակվին։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Երբե՛ք... այդպես շղթայակապ թափառե գործած ավերակներուդ վրա, քանի որ եղբարցդ դիակները շղթաներուդ շառաչյունը լսեն, նախատինք կարդան քեզ իրենց դերեզմաններուն խորերեն... թափառե՛ եղբարցդ արյամբը կարմրած դաշտերուն վրա, մինչև որ գտնես քու գերեզմանդ ալ... մի՛ ըսեք, ազգե՛ր, թե անիրավ է Լանկթիմուր, այո՛, անգութ է, բայց կճանչնա իրավունք (կմեկնի.— **մյուսներն ալ եւեւեն**)։

Տեսիլ Ը

ՎԱՉԵ (առանձին)

Ի՞նչ ըրի ես... ահա այս շղթաներն են եղեր մատնությանս վարձքը և կամ հավիտենական նախատինքս... եթե որ փառաց դափնիներ կերևակայեի, Լանկթիմուր նախատանաց փուշերով սպակեց ճակատս... ո՜հ, ո՜ւր փախչիմ հայրենյացս արյունլվա ծոցեն... ուր որ ալ երթամ, կայծակք գլխուս վերև, անդունդք՝ ոտիցս ներքև և դիմացս՝

միշտ Հայաստանի սպառնալից նայվածքը... դադրեցե՛ք, աղեկտուր ձայնե՛ր, ո՜հ, մինչե՞ զի՞ս կանիծեք, զիս, հայրենյաց դահիճս... կարծես թե Սեբաստիո պարիսպները վրաս պիտի փլին՝ անխնա ջախջախելու համար զիս... ա՜հ, ո՛վ պիտի քակե այս շղթաները, որ ազատ փախչիմ...— ո՛չ ոք—ամենքն ալ կնախատեն զիս... ուրեմն քնավ չի պիտի քակվին այս շղթաները, մինչև որ գլուխս չջախջախեն... ո՛վ անիծյալ գիշեր, ինչո՞ւ սրտիս խորն արհավիրք չթափեցիր, երբ մթությանդ տակ կխորհեի այս վատ մատնությունը... ա՜հ, անե՛ծք... վրե՛ժ... կմռնչեն ականջիս, երկինք և երկիր, և դժոխք ծափ զարնելով զիս ծաղր կընեն... խնդա՛, ո՛վ սանդարամետ, որ վաչեն քու ծուղակդ գլորեցիր... խնդա՛ որ քու հաղթությանդ սուրն ըրիր զիս։

Տեսիլ Ժ.

ՎԱՉԵ և ՆԵՐՍԵՀ

ՆԵՐՍԵՀ.— (դրսեն) *Օգնությո՜ւն... օգնությո՜ւն...*

ՎԱՉԵ.— (սարսափած) *Ո՛վ երկինք... ի՞նչ կլսեմ... հորս ձայնն է, կարծեմ կխողխողեն զինքը...*

ՆԵՐՍԵՀ.— (դրսեն) *Ա՜հ...* (վիրավորյալ տեսարանը կուգա) *սիրտս... զարնվեցա առանց զարնելու...*

ՎԱՉԵ.— *Այո՛, հայրս է... ո՜հ, արյունը սրտեն կվազե... ո՛ւր փախչիմ, բացվեցե՛ք, անդունդք, և զիս ձեր խորությանը և խավարին մեջ ծածկեցեք...*

ՆԵՐՍԵՀ.— (զայն տեսնելով զարմացմամբ) *Ի՞նչ կտեսնեմ... Վաչե հոս, շղթայակապ... մինչե արդար երկի՞նք շղթայեր են զինքը... ո՜հ, հեռացի՛ր, ինչո՞ւ կուգաս վերջին վայրկյանս խռովելու, անօրեն զավակ...*

ՎԱՉԵ.— *Ա՜հ, կսարսափեցնես, հա՛յր իմ, այդպես ակնապիշ մի՛ նայիր աչացս մեջ... ծածկե՛, ծածկե՛ արյունահոս վերքդ։*

ՆԵՐՍԵՀ.— *Ա՛ռ, ալևոր հորդ արյունն ալ առ և կշտացիր, վատ մատնիչ։*

ՎԱՉԵ.— *Ո՜հ, գթությո՜ւն, հայր իմ, գթությո՜ւն...*

ՆԵՐՍԵՀ.— Ո՛չ, ո՛չ, քեզի համար չկա գթություն, այլ...
ՎԱՋԵ.— (ի ծուռ պաղատանոք) Հա՛յր իմ...
ՆԵՐՍԵՀ.— Անե՛ծք... անե՛ծք... (թավալգլոր կիյնա և կմեռնի):
ՎԱՋԵ.— (սարսափած) Մե՜հ... (վարագույրը կիջնե):

(Վերջ Բ. արարվածին)

ԱՐԱՐՎԱԾ Գ.

ՍԵՎ ՀՈՂԵՐ

Սև Հողեր դաշտը.— Ասդին անդին ցրված դիակներ.— Արևը դեռ նոր ճոխիզոնեն վեր կբարձրանա.

Տեսիլ Ա.

ԲՐԱՆՅԱԿ.— (վարագույրը բացված ատեն առանձին, հերարձակ, զավկին դիական ֆով ծնրադրած կուլա, հետո կելնե):

Գնա՛ց արտասվաթոր թևերով սև գիշերը, և ահա արևը զարհուրած կսկսի իր լույսը հայոց արյունլվա ավերակացը վրա սփռել... ամեն տեղ սպապատ լռութիւն մը կտիրե և միայն մերթ ընդ մերթ խղդուկ հառաչանքներ սև նոճինեբուն մեջեն սահելով այս լռութիւնը կվրդովեն... կնիրհե ահա Հայաստան շնչասպառ փլատակաց տակ և հուսահատ կարտասվե... (առ դիակն) խե՞ղճ որդյակ, եթե դու ալ կենդանի եղած ըլլայիր, քու կյանքդ միայն հայրենյացդ աղեկտուր վիճակին վրա սոսկալով պիտի մաշեր... դու ալ ամոթահար պիտի զարհուրեիր, երբ տեսնեիր որ համայն հայերը կանիծեն քու հայրդ, հայրդ՝ որ Հայաստանի գերեզմանը փորեց, հայրդ՝ որ զքեզ այսպես սառած սև հողերու վրա տարածեց... երկինք այնպես վճռեր է որ դեռ մորդ մեկ ժպիտ մը չցցուցած՝ անիծյալ հայրդ այսպես զքեզ գերեզման գլորե... ուրեմն դու ալ անիծե այն որ հայրդ և միանգամայն դահիճդ եղավ։

ԵՐԱՆՅԱԿ և ՎԱՋԵ

ՎԱՋԵ.— (ցնորած գալով) Ո՜հ, դարձյալ այս սև հողերը... Թո՛ղ զիս, թո՛ղ զիս, անողոք ստվեր, թո՛ղ որ վայրկյան մը աղատ ըլլամ սպառնալից նայվածքեդ, թող որ քիչ մը հանդչիմ... այլ դու մոխիկ չես ըներ, արյունոտ ճերմակ մազերդ ճակտիդ վրա ցցած զիս խողխողել կսպառնաս... ո՜հ, մի՛ սրսկեր ճակտիս վերքերեդ հոսող արյունը... ա՜հ, կսարսափիմ ես քեղնե... (զարհուրած վազելու ատեն երանյակի կղիպչի սարսափած) Երանյակ... զավակս... ա՜հ... (ձեռքերովը աչքերը կծածկե)։

ԵՐԱՆՅԱԿ.— (նույնպես սարսափած ոտի ելնելով) Վաչե՜... հեռացիր ասկե, դահի՛ճ, մի՛ վրդովեր թշվառ մոր մը խըղճալի օրհասը... մի՛ մոտենար զավկիդ դիակին քով, որուն դալկահար շրթանց վրա անեծք կփայլատակեն։

ՎԱՋԵ.— Դարձյա՛լ անեծք... անշունչ դիակներն անգամ կանիծեն զիս... ո՜հ, զավակս... դու գոնե մի՛ անիծեր հայրդ, դու գոնե դթա՛ իր վրա, վասն զի որշափ մեղապարտ ըլլա, դարձյալ քու հայրդ է։

ԵՐԱՆՅԱԿ.— Սոսկա զքեզ հայր կոչելու, մատնի՜չ... փախիր հայրենյացդ արյունահոս ծոցեն... ահա Հայաստանի հառաչանքները՝ երկնից երեսը թանձրացած այս սև ամպերը կայծակներ կսպառնան արյունոտ ճակտիդ... երբ շղթաներդ կշառաչեն, դժոխք ծափ զարնելով կխայտան և երախաբաց երկնից մեկ ակնարկին կսպասեն, որ իսկույն լափեն զքեզ... փախի՛ր...

ՎԱՋԵ.— Ո՜ւր փախչիմ... աղատ չեմ ես, մորկե մղված սև ամպ մ'եմ, հոն կառաջնորդեն զիս քայլերս, ուր որ կմղե Հայաստանի վրեժխնդիր ստվերը, եթե անդունդներու հատակն ալ գահավիժիմ, դարձյալ ետևես պիտի գա և անեծք պիտի գոռա ականջիս... ո՜հ, ո՜ւր ապաստանիմ... անմեղ զավկի մը գիրկն ունեի մինակ ապաստանարան, նա ալ դալկահար տարածվեր է... եթե կենդանի ըլլար, անշուշտ նա ալ նախատանոք զիս իր գրկեն ետ պիտի մղեր, նա ալ

զիս իրեն հայր չպիտի ընդուներ... վասն զի հայրենադրուժ մ'եմ ես։

ԵՐԱՆՅԱԿ.— Վաչե՛, երբեք աշխարհի վրա ապաստանարան մի՛ փնտռեր, ուր որ ալ երթաս միշտ աչացդ առջևեն պիտի սահին եղբարցդ թափած արյան հեղեղները, միայն դժոխք զքեզ կընդունի, ուր հավիտենական տառապանք կսպասեն քեզ, փոխանակ այն մատնությանդ, որով ողբաց Հայաստան, որով նվաղեցավ բոլորովին կարմիր Հայաստանի հուսո լուսասպառ աստղը... ծնո՜ւնդ դժոխոց, չմտածեցի՞ր անգամ մը թե ի՛նչ կդործես... միտքդ չբերի՞ր մեկ մը Վասակն ու Մերուժանը, որոնց մեկուն ճակատը փոխանակ թագի՝ որդերով պսակեցավ և մյուսին ճակատը՝ հրաշեկ շամփուրով... եղուկ ինծի որ անօրենի մը... մատնիչի մը կին ըլլալու բախտը, և նախատինքն ունեցա...

ՎԱՉԵ.— Երանյակ... ա՛լ հերիք նախատես զիս... եթե կտեսնես որ ձեռքերս շղթայակապ են, գիտցիր որ այս շղթաներն ալ դեռ կրնան զայրույթս և վրեժս հագեցնել. եթե գիտնամ որ երկինք վրաս պիտի փլին, դարձյալ կհարվածեմ զքեզ, մինչև որ քեզ ալ հոգեսպառ այս Սև հողերուն վրա տարածեմ... ալ չեմ սոսկար մարդասպանութենե, քանի որ դժոխոց դատապարտյալ թշվառական մ'եմ արդեն... դողա՛, դողա՛ ինձնե, Հայաստանի ժանտախտն եմ ես, Հայոց աշխարհին խորշակն եմ ես և դեռ կրնամ կենաց ծաղիկներ խամրեցնել... Երանյակ, արդեն ես տիվ և գիշեր անքուն կտանջվիմ և դու որ իմ կինս ես, զիս մխիթարելու տեղ ամենեն ավելի դու կնախատես զիս։

ԵՐԱՆՅԱԿ.— Այո՛, ամենեն ավելի ես պետք է որ նախատեմ և անիծեմ զքեզ, վասն զի տիվ և գիշեր ավերակաց մեջ հեծող բու մը ըրիր զիս... Թափե վերջին սպառնալիքդ ալ իմ վրաս և զավկիս հետ զիս ալ խողխողե. օ՜ն, իմ արյունս ալ խմե եթե այսչափ արյուն չկրցան քու դժոխային սիրտդ զովացնել... բայց դողա երկնից, ժանտա՛խտ Հայաստանի, վասնզի օր մը պիտի ելնես գերեզմանեդ և ոճրագործութենդ հաշիվը պիտի տաս Ամենակալին գահույքին առջև... այն գաբրիելյան փողին գոչյունը այս ար-

յան հեղեղներուն մռնչյունն ավելի սոսկալի պիտի ըլ-
լա... նախատի՛նք և անեծք քեզի...

ՎԱՉԸ.— Երանյակ... կզայրացնես զիս, պիտի լռե՞ս, ապա-
թե ոչ...

ԵՐԱՆՅԱԿ.— Չէ՛, չե՛մ վախնար քու սպառնալիքեդ և կկրկնեմ
դարձյալ—նախատի՛նք և անեծք քեզի:

ՎԱՉԸ.— Ա՜հ, ալ չեմ կրնար կնոջ մը նախատանացն հանդուր-
ժել (շղթաներով կճոջը վրա կհարձակի կատաղաբար.—
հանկարծ երկնքեն կայծակ մը սրաճալով վրան թավալ-
գլոր կզգետնե զայն) երկնային վրեժխնդրությո՜ւն...

ԵՐԱՆՅԱԿ.— (սարսափած) Աստվա՜ծ իմ... չըլլա որ երկինք զիս
ալ կայծակնահար ընեն մատնիչի մը կինն ըլլալուս...
փախչի՜մ... (դողով կհեռանա. պատկերը փոխվելով
դժոխք կներկայանա.—ուսկից սև ոգիներ կելլենե և վա-
չեի դիակը ի դժոխս կքաշկռտեն.—պատկերը դարձյալ
կիջնե):

Տեսիլ Դ

ՎԱՂԵՆԱԿ (վիրավոր)

Հայաստա՜ն... քա՛ղցր հայրենիք... իմ արյունս ալ ըն-
դունե քու անձկալի գիրկդ... որչափ սիրելի է ինձ այս
մահը, երբ կզգամ, որ հայրենյացս հողերը կծծեն արյունս
և դարձյալ հայրենյացս հողերը պիտի ծածկեն ոսկերքս...
արդյոք գերեզմանիս խորերը պիտի թափանցե՞ երբեք հու-
սալից ձայն մը—ցնծացե՛ք, տխուր ոսկերք Վաղենակա,
Հայոց ազատության արշալույսը ծագեցավ... արդյոք
դարձյալ պիտի վերականգնի՞ս, Հայաստան, եթե ոչ մահա-
բեր է վերքդ... սոսկալի կասկած... հայե՜ր, օ՜ն, օգնու-
թյան հասեք, չըլլա որ օրհասական ըլլա Հայաստան.—այլ
հայ մը չը՛ պատասխաներ ձայնիս... ամեն տեղ դիակ և
ավերակ. անեծք և վայ այն վատին որ հայրենիքը մատ-
նեց: Եվ դո՜ւք, լերի՛նք Հայաստանյայց, արձագանք տվեք
այս ձայնին և թող լսեն այն վատերը, որոնք իրենց եղ-
բարցն արտասվոքն ու արյամբը օտարներեն երջանկու-
թյուն գնել կհանդգնին... ինչո՜ւ ծնար այդպիսի որդիներ,

Հայաստա՛ն, որոնք սուրերնին ապերախտությամբ քեզի դեմ դարձուցին փոխանակ զքեզ պաշտելու և պաշտպանելու... ա՜հ, ծնկերս կսկսին կթոտիլ, քիչ մը հանդչիմ հոս... երկինք, միշտ նայվածքդ Հայաստանի վրա թող ըլլա... (կնստի.— ճեռուեն ճեռևյալ երգը կլսվի, զոր Նազենիկ կերգե):

ՈՂԲԵՐԳ

Դժնյաց գիշեր ան ցյալ ու լույս առուն
Ծագեց կարմիր Հայաստանի սարերուն...
Դարձյալ միևնակ զուրկ սիրելյացս գրկերեն,
Հեծող բուեր միայն ինծի ընկեր են:

Ո՜, դու, անգո՜ւթ Սև ճողեր,
Սիրելիս ծոցդ ես բաղեր:

Չեփյուռներեն երջանիկ մի խնդրեմ լուր...
Այլ անոնք ալ սահին հովես տխուր, լուռ,
Մաղկուհի բոսմեր և լռեր է ալ սոխակ,
Մահն կնոտի, մահն... Հայաստան ավերա՜կ:

Ո՜ դու, անգութ Սև ճողեր,
Սիրելիս ծոցդ ես բաղեր:

Երկինք, գթա՛ յիս, տա՛ր գիս ի ծոց սիրելյաց,
Եվ կամ ցցուր իրենց դամբանն սպագդյաց,
Եվ բող հոն, հոն, ցամքին արցունքս ու արյուն
Ո՜հ հոն վերջ տամ կենացս սև օրերուն:

Ցցո՛ւր, անգութ Սև ճողեր,
Իմ սիրելյացս դամբաններ:

ՆԱԶԵՆԻԿ.— Ի՜նչ քաղցր ձայն... Աստված իմ, պիտի ճանչնամ ես այս ձայնը... այս ձայնը քաղցրիկ հիշատակները կզարթուցանե սրտիս մեջ... Նազենիկիս ձայնն է... այո՛, անոր ձայնն է... (ճանկարծ ոտքի կելնե դողդոջուն) *Նազենիկ... եկուր... հոս է վաղենակ... հոս...*

ՏԵՍԻԼ Դ

ՎԱՂԵՆԱԿ, ՆԱԶԵՆԻԿ

ՆԱԶԵՆԻԿ.— *Երկինք, մինչև ե՞րբ պիտի թափառիմ այսպես միայնակ ու արտասվալից, կամ սիրելյացս և կամ մահվան ցուրտ գիրկը մղեցեք զիս։*

ՎԱՂԵՆԱԿ.— *Նազենիկ... Նազենիկ...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Աստվա՜ծ իմ... ի՞նչ ձայն է այս, ո՞վ կգոչե զիս...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Նազենիկ, եկուր... հոս է Վաղենակ...*

ՆԱԶԵՆԻԿ.— *(զայն տեսնելով և դեպի անոր վազելով) Վաղենա՜կ...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Նազենիկ... դո՞ւ ես... դարձյալ գրկացս մեջ կգտնեմ զքեզ, ես որ հուսահատ գերեզմանին սև եղերքները կթափառեի, ես որ զքեզ մեռած կկարծեի... ո՜հ, գրկե՛ զիս և կարոտնիս առնենք, վասն զի քիչ ատենեն դիակ մը պիտի գտնես թևերուդ մեջ... վասն զի քիչ ատենեն շրթանցս ցրտությունը պիտի զգան շրթունքդ... պիտի բաժնվինք իրարմե...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Պիտի բաժնվի՞նք, ի՞նչ կըսես, Վաղենա՜կ... ա՜հ... Աստվա՜ծ իմ, այս ի՞նչ արյուն է որ սրտեդ կհոսի... անգո՜ւթ, կհեռանաս կփախչիս գրկես... ա՜յս է մեր սերը... անդադար հառաչանքներ ու արցունքներ խամրեցուցին մեր կենաց և սիրո գարնան վարդերը... արդյոք մեր միության օրեն ի վեր քանի՞ ժամ հանգիստ իրարու գիրկ ժպտեցանք։*

ՎԱՂԵՆԱԿ.— *Եվ ահա այն զվարթ ժամերն ալ սոսկալի տարիներով փոխանակեցան... այս է եղեր մեր ճակատագիրը...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Անիծյալ ճակատագիր...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Նազենիկ, ո՞ւր է վարդանուշը։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ա՜հ...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Ինչո՞ւ այդպես աղեկտուր հառաչեցիր... խոսե, կսարսափեցնես զիս...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ավա՜ղ... թշվառ ենք միշտ...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Աղջի՜կս... աղջի՜կս... ըսե մի՞թե այն ալ մեռավ...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Չգիտեմ, բայց եթե թշնամվույն ձեռքն ինկավ... ո՜հ, արդյոք արյունակաթ սուրը տեսած ատեն ի՞նչպես—«մայ-*

րիկ, մայրիկ»— աղաղակեց... հարցուր Հայաստանի անգութ երկնքին և տե՛ս թե անոր մահվանն ալ հանդիսատես եղա՞վ։

ՎԱՂԵՆԱԿ.— (ցնորելով) Բայց ահա աղջիկս է, որ ավերակաց մեջ արտասվելով կթափառի... Վարդանուշ, եկուր թշվառ հայրդ եմ ես... ձայնս լսեց... ժպտալով հոս կվազե... գիրկս ինկավ, ո՜հ, երջանիկ վայրկյան... հիմա կտեսնեմ զքեզ, որչափ սիրուն ես եղեր, Վարդանուշ, արշալույսն անգամ քեզնե գեղեցիկ չէ... շուշանն անգամ քեզնե գողտրիկ չէ... զավա՜կս, քու ժպիտդ և համբույրդ կյանքեն ավելի քաղցր կթվին ինծի։

ՆԱԶԵՆԻԿ.— Վաղենակ... սիրտս կտոր կտոր կըլնես։

ՎԱՂԵՆԱԿ.— (սթափելով) Ո՞վ է գիրկս... Նազենիկ դո՞ւ ես... ինչո՞ւ կուլաս...

ՆԱԶԵՆԻԿ.— Կթողո՞ւս զիս...

ՎԱՂԵՆԱԿ.— Թողում զքեզ, անկարելի է, որ ղույդ մը աղավնիները իրարմե բաժնվին...

ՆԱԶԵՆԻԿ.— Բայց եթե անգութ որսորդը անոնցմե մեկը զարնե... միթե մյուսը կրնա՞ ապրիլ։

ՎԱՂԵՆԱԿ.— Մեռնիլ կըսես, Նազենիկ... միթե չգիտե՞ս որ անիծյալ է անձնասպանը։

ՆԱԶԵՆԻԿ.— Վաղենա՜կ... իրը ավերակներու մեջ բու մը կուզես թողուլ զիս միայնակ և տխուր...

ՎԱՂԵՆԱԿ.— Ո՜հ, որչա՜փ կսիրես զիս Նազենիկ, ուրեմն վերցուր զիս գերեզմանին եղերքեն և քու գիրկդ առ... ապրիլ կուզեմ ես քեզի հետ մեկտեղ... բայց մխիթարվինք, Նազենիկ, եթե Տերը մեզի երկրի վրա այսչափ ցավ քաշել տավավ... եթե մեր սիրո զվարճագեղ հովիտն արցունքով լեցուց... անշուշտ մեզ համար հավիտենական երկինք մը պատրաստած է, ուր մշտնջենավորապես պիտի ժպտինք, հո՛ն պիտի գտնենք նաև մեր սիրելի Վարդանուշը...

ՆԱԶԵՆԻԿ.— Մա՜հ, մա՜հ, սիրելի են ինձ քու ճիրաններդ. այս ժամուս ես ալ մեռնիլ կուզեմ... ի՞նչ կըլլաս, Վաղենակ, շրթունքդ կկապուտնան...

ՎԱՂԵՆԱԿ.— Եվ դեռ բոլորովին չսառած, համբույր մը, երկրորդ և վերջին համբույր մը...

ՆԱԶԵՆԻԿ.— *Ո՞ւր կերթաս...*

ՎԱՂԵՆԱԿ.— *(երկինք ցուցնելով) Վարդանուշ զիս կկանչե... երթամ...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ես ալ...* (դաշույնը աճոր մեջքեն կառնե):

ՎԱՂԵՆԱԿ.— *Ա՜հ, ի՞նչ կընես, Նազենիկ...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Մեկտեղ երթանք...* (ինքզինքը զարնելու կըլլա):

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (դրսեն) *Մայրի՛կ... մայրի՛կ...*

ՆԱԶԵՆԻԿ.— (դաշույնը ձեռքեն ձգելով) *Ա՜հ... աղջիկս...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Վարդանո՜ւշ...*

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՎԱՐԴԱՆՈՒՇ

ՆԱԶԵՆԻԿ.— *(խորը վազելով) Հոս եմ, Վարդանուշ:*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Մա՛յր իմ... մա՛յր իմ...* (գիրկը կիյնա) *Իսկ ո՞ւր է հայրս, մխթե...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Եկուր գիրկս, Վարդանուշ...*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Ո՜հ, ի՜նչ ցավալի վիճակի մեջ կտեսնեմ զքեզ, հա՛յր իմ...* (գիրկը կիյնա լալով):

ՎԱՂԵՆԱԿ.— *Լա՛ց, լա՛ց, Վարդանուշ...*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Բայց այս որչափ լացի, ալ ցամքեցավ արցունքս և արյուն կհոսի աչքերես... ալ լալով աշացս լույսն անդամ նվաղեցավ:*

ՎԱՂԵՆԱԿ.— *Խեղճ աղջիկ... բայց դու ի՞նչպես ազատեցար այն բյուրավոր սրերեն:*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Վահրամ ազատեց զիս և ավազ որ ինքն ալ վիրավորվելով մեռավ զիս օրհնելով...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Մեռա՜վ... խե՛ղճ Վահրամ...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Եվ դեռ ցավ քաշելու համար երկինք շնորհեր են քու կյանքդ:*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Հայր իմ, ինչո՞ւ դեմքդ կսառի... ինչո՞ւ ձայնդ կմարի:*

ՆԱԶԵՆԻԿ.— *Վաղենա՜կ...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Ահա մահը սառած ձեռքերը կուրծքիս վրա կդնե... մնաք... բարյավ...* (զառանցելով) *ո՞վ է այս տխուր ծերունին որ դեմս արձանացեր է... ձեռքերը շղթայակապ...*

գլուխը փշապսակ... սիրտը վիրաւից... և իր դեմքին խորշոմներուն մէջեն արտասուաց հեղեղներ կթաւալին... ծոմեր չոքեց... թևերը բացաւ... գիս իր գիրկը կկանչե... Հայաստանս է... ո՜հ, Հայաստանս է... (ետևվելով կիյնա կմեռնի)։

ԵՐԿՈՒՔԸ.— (սոսկմամբ) *Ա՜հ...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Մեռա՞վ...*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Ուրեմն ի՞նչ ընենք, մայր իմ...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Մենք ալ մեռնինք...* (գայլ կգրկե)։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Այս ի՞նչ ոտքի ձայներ են... թաթարներն, մա՛յր իմ, փախչինք...*

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆՔ, ՆՈՐԱՅՐ (շղթայակապ), *ԶԱՐՄԱԶԱՆ, ԶՈՐՔ*

ՆԱԶԵՆԻԿ.— (հայրը տեսնելով) *Ո՜հ, հայրս է...* (աճուր վազելով) *հա՛յր իմ, ո՞ւր կտանին զքեզ...* (կուզե գրկախառնել, բայց զորերը հրելով բող չեն տար)։

ՆՈՐԱՅՐ.— *Նազենիկ... ա՜հ, թողե՛ք, անգո՛ւթ դահիճներ, որ վայրկյան մը գոնե գրկեմ աղջիկս... պիտի մեռնիմ...*

ԶԱՐՄԱԶԱՆ.— *Այո՛, պիտի գրկես... բայց յուր ցուրտ դիակը...* (սուրը հաշելով) *ի ծոմեր, իշխանուհի, Լանկթիմուրի հրամանը մահ է... հայկյան շունչը պիտի սպառի։*

Տեսիլ Է

ՆՈՒՅՆՔ, ԼԱՆԿԹԻՄՈՒՐ և ԹԻԿՆԱՊԱՀՔ

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Կեցի՛ր...*

ԱՄԲՆՔԸ.— *Լանկթիմո՞ւր...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Իմս թող ըլլա այդ գեղանի հայուհին... թող ապրի...*

ՆԱԶԵՆԻԿ.— (ետ գիրկը իյնալով) *Հա՜յր իմ...*

ՆՈՐԱՅՐ.— *Ո՛չ... թող իմ գիրկս մեռնի...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Ո՛վ նազելի հայուհիդ, տիեզերակալ ա՜յր մը կուզես՝ եթե դաժանապարտյալ հայր մը։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Հայրս...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Կերդնում որ շնորհեցի յուր կյանքը... իմս եղիր*

ՋԱՐՄԱԶԱՆ.— Սեբաստիո իշխանն է...

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Սեբաստիո իշխա՞նը... (առ Ջարմազան) զորապետ, երդում ըրի։

ՆԱԶԵՆԻԿ.— Իրեն հետ կմեռնիմ։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Իսկ հա՛յրդ կուզես՝ թե հայրենիքդ։

ՆԱԶԵՆԻԿ.— Հայրենիքս...

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քաջ հայուհի, քեզի թող ըլլա հայրդ ալ, հայրենիքդ ալ... քակե հորդ շղթաները, իշխանդ Սեբաստիո, խոսք մը զքեզ ազատեց... Հայուհի մը սիրտս շարժեց...

ՆՈՐԱՅՐ.— (գրկելով) Աղջի՛կս... (Նազենիկ շղթաները կ'քակե)։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Զորականք, ալ թող դադրին հարվածները... հեռանանք Հայաստանեն... հայ աղջիկ, մի՛ անիծեր Լանկթիմուրը, որ հայրենիքդ հարվածեց, հիշե՛ միշտ զինքը որ դթաց քեզի... մնաս բարյավ (կմեկնին թաթարները)։

ՆՈՐԱՅՐ.— Եվ ես, դերեզմաններու և փլատակա՛ց պիտի տիրեմ։

ՆԱԶԵՆԻԿ.— Կբավե որ շղթա չունինք, հա՛յր իմ, ազատ ենք...

ՆՈՐԱՅՐ.— Ալ չմնաց հայ մը...

ՆԱԶԵՆԻԿ.— Մենք հայ ենք։

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

ՎԵՐՋԱՒՈՒՆԴ

Գիշեր.—Լուսին.— Ամբոխ վայր մէջ.— Սպիտակ անդիմակներ.—Հայաստան շղթայակապ և փշեպսակ գլուխը կուրծքին ծռած հուսահատ նստած է.—Թշվառութիւնը մեկ ձեռքը սև դրոշը մը, մյուս ձեռքը տապար մը Հայաստանի գլխուն վերև կանգնած է.—Դահ:

ՏԵՍԻԼ Ա.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԹՇՎԱՌՈՒԹԻՒՆ

ԹՇՎԱՌՈՒԹԻՒՆ.— Վերջապես թշվառութեան սև դրոշը քու վրադ ալ ծածանեցաւ, Հայաստա՛ն, ուրեմն այսուհետև դիր գլուխդ փոխանակ թագիդ այս փշյա պսակը, և շքեղ ծիրանվույդ տեղ՝ այսպես ցնցոտիներ հագիր... օ՛ն, արթնցիր և լաց, թշվառութիւնը քու չորս կողմդ արցունք և սուգ, անեծք և մահ սփռեց և ոտքերուդ տակ սև սև դեռեզմաններ փորեց.. ե՛լ, կանգնե՛, չորս կողմդ նայե՛ և ալ չի պիտի տեսնես գեղազվարճ դաշտերդ, այլ արյան համատարած ծով մը, որուն մեջ կլողան կիսաշունչ դիակներ, չմնաց ծաղիկ մը՝ որ արցունքով չթրջի, չմնաց ալիք մը՝ որ արյամբ չպղտորի.. .անդամ մ՛ալ դարձուր աչքդ յերկինս. տե՛ս, աստղդ յուղասպառ կանթեղի նման կպլըպլա և մոտ է խաւարելու... ա՛յո, ահա կխաւարի Հայաստանի պերճ բախտը:

ՀԱՅԱՍՏԱՆ.— (հուսահատ ցատկելով) Ալ հեռացի՛ր քովես, անգո՛ւթ ոգիդ թշվառութեան, դու խեղճ Հայաստանը շղթայակապ գտար և կծաղրես... ա՛հ, շանթեր թոթափին այն հայհոյուն գլխուն, որոնք իրենց հայրենիքը շղթայեցին այս-

պես, և թշվառությունը եկավ իր սև դրոշը կանգնեց գլխուս վերև և փուշերով պսակեց ալևոր ճակատս... ա՛լ բավական է, ճիվաղդ անողորմ, ալ բավական Հայաստանի արյունը թափեցիր... ե՞րբ պիտի փշրի այդ անխնա տապարը...

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Քու կուրծքիդ վրա միայն պիտի փշրի... մի նախատեր զիս, երկնից արդարադատ բազուկն եմ ես... ուր որ չկա լույս և ոգի, հոն է թշվառությունը... ինչո՞ւ կործանեցավ Արարատյան գահը.—վասն զի հայը տգետ էր, վասն զի Հայաստան մարած սրտերու մենաստան մ՛էր. վասն զի իր վերջին թագավորը կրոնամոլ, անարգ և օտար էր. լեռները ողբացին, գետերն արտասվեցին, մինչդեռ Լևոն Ջ Կապան բերդին մեջ ապաստանած էր, բայց վերջապես ինքն ալ շղթա կրեց, փոխանակ պատերազմի դաշտին վրա իյնալու... խեղճ հայեր, իրենց ընկղմելիք անդունդը ձեռքնին կփորեն և երբ անդունդին եզերը ըլլալնին կզգան, կսկսին օգնություն աղաղակել, բայց իզուր... խեղճ հայ, որ ընդ երկար կլռես... վերջապես կորոտա և իր հանած կայծակեն նախ ինքը կսարսափիս:

ՀԱՅԱՍՏԱՆ.— Լռե՛... ամոթահար պիտի կորնչի Հայաստան և ոչ ոք պիտի գթա իրեն և պիտի օգնե, վասնզի թշնամին ու դահիճը իր զավակն է... ո՞ւր եք Հայկ, Արամ, Արտաշես, Տրդատ, Տիգրան, քաջ դյուցազունք, ահեղ առյուծք Արարատյան, ելե՛ք ձեր դարավոր շիրիմներեն, տեսե՛ք ցնցոտիներ հագեր է, շղթայակապ է Հայաստան... Արթնցեք մեկ մը և պիտի տեսնեք որ ձեր շիրիմներն անգամ ձեր թոռանցն արյամբը կարմրած են... ուրեմն, դուք ալ ձեր դամբանաց խորերեն անեծք մռնչացեք մատնիչ հայերուն, դուք ալ վայ և եղում կարդացեք թշվառ Հայաստանի...

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Իզուր կավաղես, Հայաստան, գիտցիր որ այդ արտասվաց հեղեղներն անկարող են որդվույդ ճակտին դատակնիքը ջնջելու, և այդ հառաչանաց մրրիկները չեն զորեր քու աստղդ ծածկող ամպերը փարատելու. այսուհետև հոս միայն սև նոճիներ պիտի պատեն... երբ աչքերդ երկինք վերցնես, ամպամած պիտի տեսնես զայն. երբ զանոնք ի գետին խոնարհես, փշապատ պիտի դանես

զայն. վշտահար պիտի թափառիս փլատակաց մեջ, պիտի չգտնես կոթող մը՝ որուն վրա կարդաս հիշատակդ, պիտի չգտնես ծաղիկ մը, որուն վրա կարդաս երջանկութիւնդ, վերջապես պիտի չգտնես հայ մը, որուն նայվածքին մեջ կարդաս հուշդ... պիտի հեծես միշտ մինչև որ քու խոր դերեզմանդ փորեմ... քու որդիդ պիտի մղեն տգիտաբար քեզ հոն՝ կարծելով թե դահ է այն, և օտարք փուշեր պիտի սփռեն դամբանիդ վրա, մինչդայն նախնյաց ստվերներն արցունքով պիտի թանան այն փուշերը: Ահա բացի քու առջիդ ապագային մութ վարագույրը:

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Ա՜հ... սոսկալի վճիռ... լսեցեք ուրեմն, հայեր և զարհուրեցեք... ո՜վ երկինք, չպիտի ջնջես ճակտես այս անեծքը... մինչև սպառեցա՞ն կայծակներդ, երբ կարդը զանոնք մատնչաց ճակտին թոթափելուն եկավ... ի՞նչ ըլսեմ... Հայաստան պիտի ջնջվի... հեռացի՛ր, դուժկան ոգի... ողբեր հյուսեցեք, հայ օրիորդներ, արցունք թափեցեք, երիտասարդներ, և դուք ալ, ծերեր, ձեր դերեզմանը փորեցեք... Հայաստան պիտի ջնջվի... խնդացեք, պարսիկք և հույնք, եգիպտացիք և թաթարք... և դու ալ երկնադրաց իդ Մասիս, դու ալ ամպերու մեջեն որոտագոչ ձայնե՛ «Հայաստան պիտի ջնջվի...» (հանկարծ կարմիր լույս մը կծագի) ի՞նչ լույս է այս... արդյոք Հայաստանի բա՞խտն է որ ծագեցավ:*

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ և ՍԵՐ

ԱՐՔ.— *Այո՛, Հայաստան պիտի ջնջվի...*

ՀԱՅԱՍՏԱՆ.— (սարսափած) *Ո՜հ, մահվան հրեշտա՞կն է այս:*

ՍԵՐ.— *Ո՛չ, զքեզ ողբալու կուգամ, Հայաստան... չե՞ս ճանչեր զիս...*

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Այո՛ կճանչեմ քեզ, հրեշտակդ խաղաղության:*

ՍԵՐ.— *Ո՞վ է այդ ճիվաղը որ գլխուդ վերև կանգներ է՝ մեկ ձեռքը տապար մը, մյուս ձեռքը սև դրոշ մը բռնած... անշուշտ կճանչես նաև զայն... կտեսնե՞ս որ քայլերուն տակ արցունք կսփռե և սիրտ պես ծաղկունք չի սփռեր... կտեսնե՞ս որ ուր չկա սեր, հոն չկա խաղաղություն. վա՜յ*

ձեզ, հայեր, որ ձեր նախնի փառաց կոթողները դուք ձեռքնիդ կործանեցիք և ձեր արյամբը զովացուցիք Սանդարամետի սև ճակատը... թող ուրեմն հագենա Թշվառության տապարը...

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Այո՛... վասն զի երբեմն Թշվառութենեն կծնանի վերականգնումն... բայց թող գիտնա Հայաստան, որ երբեք Թշվառության տապարը չը հագենար. միշտ կհարվածե, մինչև որ ձայն մը գոչե, ալ բավական է։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Եվ ե՞րբ պիտի լսվի այդ ձայնը։

ՍԵՐ.— Երբ հայը սիրե իր եղբայրը։

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Առանց այն ձայնին, եթե բոլոր աշխարհ աղերսարկու ծունր դնե առջիս, դարձյալ կհարվածեմ... միշտ կհարվածեմ։

ՍԵՐ.— Կլսե՞ս, Հայաստան, ճանչցի՛ր դահիճդ, ճանչցի՛ր հրեշտակդ. երբեմն սիրո ժպիտն էր Հայաստանի արևը... իսկ հիմա, քու ապերախտ զավակներդ աւեցին և զարկին սերը... ինկավ նա և ինկավ Հայաստան. արտասվելով անցավ Հայաստանեն Սերը և ուր որ հոսեցին յուր արցունքը, հոն փուշեր բուսան... թող հաղթանակե ուրեմն Անմիությունը, թող հաղթության կոթողներ, շիրիմներ և սգալի նոճիներ կանգնե... և Թշվառության տապարը թող անխնա հարվածե Հայաստանը. թող փուշերով պսակվի իր կնճռոտ ճակատը, ինչպես որ նա փոխանակեց սիրո նվիրած ձիթենիները։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՛լ բավական է. անեծք մը միայն մնաց, այն ալ գերեզմանիս վրա կարդա. ես որ քեզնե սփոփանք կակընկալեի, դու նախ կդատապարտես զիս... բայց ո՛չ, իրավունք ունիս, վասնզի ես արցունք քամեցի քու արև աչերուդ։

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Հայաստա՛ն, մինչե Թշվառությունն անգութ գտնելով՝ Սերե՞ն կակնկալես գութ, գիտցիր որ Սերն ինկավ քու գահեդ և միայն Անմիությունն ու Թշվառությունն են անոր իշխողները... չե՞ս տեսներ որ հույսը սարսափով կնայի Արարատյան սառնապատ սարերուն... մինչև անգամ Ասքանազյան քաջերուն ոսկերքը գերեզմաններուն մեջ կքատմին, կդողան լերինք, կողբան ալիք, կուլան ծաղիկք,

կհեծեն գերիւղաք, կհնչեն ահա կոչնակաց մահաշշուկ զանշյունները. դեռ կհուսա՞ս, Հայաստան, ամեն տեղ օրհասականաց հեծեծանքներ կլսվին... Ամեն տեղ մահ սփռեց Անմիությունը, մինչև անգամ գերեզմանաց հանգիստը խռովեց, և դու դեռ կհուսա՞ս, խեղճ Հայաստան (որոտմունք և կայծակ):

ՀԱՅԱՍՏԱՆ.— (սոսկմամբ) Ա՜հ... հուր և կործանում:

Տեսիլ Գ.

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ.— (խռոխտապանծ գահն ելնելով) *Ողբացե՛ք, հայեր, ձեր ողբերն իմ հաղթությանս դրվատինքն են, և օ՛ն, արտասվաթորմ ծաղիկներե հաղթական պսակներ հյուսեցեք Անմիության խրոխտ ճակտին... հաղթության կրկնեցեք ողբաձայն, ձորք և լերինք Արարատյան, Անմիությունն եմ ես, սեր գոչող ձայնը թող մարի, սեր հընչող քնարը թող փշրի, սեր տածող սիրտը թող խորտակի... Անմիությունն եմ ես... սարսեցեք անունես, շիրի՛մք դյուցազանց... դողա և սոսկա ինձնե դու ալ, Հայաստա՛ն, վասնզի ալ իմ գերիս ես... և դու ալ, Սեր, պարտությանդ վրա ամոթահար՝ հեռացիր Հայաստանեն, թող որ ես ալ տիրեմ Հայաստանի... խեղճ հայեր, չգիտեի՛ք մինթե որ իմ գահս է գերեզման և թագավորական գավազանս է սուր, և հիմա ղղջալով կհեծեք:*

ՍԵՐ.— *Ոգի՛դ անմիության, այո՛, հաղթեցիր ինձ վատ մատնիչներու զենքերովը, որոնք եղբարց, որդվոց, ծնողաց և նաև իրենց գլուխը թշվառության տապարին մատուցին... ո՛վ ողբալի ժողովուրդ, արդյոք ե՞րբ պիտի արթննաս և պիտի գիտնաս, թե քու երջանկությունդ, կյանքդ, արևդ սերն է միայն:*

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Նախատինք... այս է ահա Հայաստանի ապագան... ո՛վ երկինք, դուք գոնե գթության կաթիլ մը ցողեցեք թշվառ ճակտիս վրա, դուք գոնե հուսո նշույլ մը սփռեցեք խավար հորիզոնիս վրա:*

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— *Դեռ կհուսա՞ս, Հայաստան:*

ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ.— Կմթագնի հորիզոնդ։

ՍԵՐ.— Մի՛ խրոխտար այդպես, Ոգիդ անմիութեան, անշուշտ դեռ չէ մարած բոլորովին սիրտ կայծը հայոց սրտերուն մէջ. պիտի գա անշուշտ ժամանակ մը, որ երբ տգիտութեան մռայլը խուսափի, Հայաստան իր թմրած գլուխը բարձրացնելով պիտի սթափի և սպառնալից նայվածքով մը ջրեղ դժոխոց ծոցը պիտի գլորե, և դարձյալ ես կգրկեմ ու գգվեմ այն ատեն տառապյալ հայերը, և իմ մաղերովս կպատեմ իրենց վերքերը։

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Սեր, կտեսնե՞ս այս տապարը. գիտցիր որ խիստ սոսկալի է այն, որ իր ձեռքը տապար և անմիութիւնն ունի...

ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ.— Եվ նաև անկարելի է մեռյալը գերեզմանին մէջ կենդանացնել... Սեր, ալ բավական է, հեռացիր Հայաստանեն ամոթահար, անցիր զարհուրած նույն արտասվալից դաշտերեն, կարդա Մասիսի ճակատը դրոշմված սա արենագիծ տառերը—Հայաստան պիտի ջնջվի—ել հետո անոր գագաթը և պիտի տեսնես որ սեր ու հաղթանակ նվագող մուսայից մատունքն իրենց սառած աչքերեն կաթած արցունքովը կհնչեն ոսկի քնարներուն թելերը, և դողդողն Մասիս իր դեմքը ամպերուն ետև ծածկած կհառաչե... հետո անցիր Հայաստանի կործանյալ պարիսպներեն... ակնարկ մը ձգե ետևդ, և պիտի տեսնես ավերակ, լուռ ու տխուր երկիր մը և նույնպես սև ու անարև երկինք մը և երկուքին մեջտեղը Անմիութեան ստվերը խրոխտապանծ կանգնած...

ՍԵՐ.— Սթափեցեք, թշվառ հայեր, զրկեցեք զիս և դարձյալ ես կվերականգնեմ ձեր ավերակ երկիրը... մնաս բարյավ. Հայաստան... (տխուր ու համրաձայն կդառնա առջի պես խավար)։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜հ, այս ի՜նչ մահաբույր խավար պատեց... հեռացար ինձնե քաղցրիկ Սեր, զիս մինակ թողուցիր այս ճիվաղներուն քով, որոնց ծոցեն մահ կբուրե և որոնց բերնեն դժոխք կժայթքե, դարձի՛ր, դարձի՛ր, տառապյալ Հայաստանի գիրկը... Հայե՛ր...

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Ա՛լ մի հուսար, Հայաստան։

ՀԱՅԱՍՏԱՆ.— (ձեռքերը գլխուն զարնելով) *Ավա՜ղ...*

ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.— *Լացեք, հրեշտակք երկնից... խնդացեք, հրեշք դժոխոց, և դուք ալ, երկինք և երկիր, միաձայն կրկնեցեք—Հայաստան պիտի ջնջվի... արցունք թափեցեք, Արարատյան սառնամանիք:*

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— *Հայաստան պիտի ջնջվի...* (սպառնալից կենդանաբար):

ՀԱՅԱՍՏԱՆ.— (ներքին հուսահատությամբ ծուռը իյնալով) *Անեծք, անեծք...* (խավարումն լուսնի.—աղմուկ.—սավերներ կամաց կամաց գերեզմաններեն կելլեն և հետևյալ երգը կերգեն տխուր ու միակերպ):

Տեսիլ Դ

ՀԱՅԱՍՏԱՆ և ՍՏՎԵՐՔ

ՈՂԲԵՐԳ ՍՏՎԵՐԱՑ

Մինչ Երբ գլուխդ պիտի ծեծես՝
Շղթայակապ այդպես ինծես,
Հեմ Հայաստան շիջելարև,
Ե՞րբ սոխակը սրգատերև
Նոճիներեն ուրախ տալով խուլս,
Պիտի երգե վարդ, արշալույս:
Եղուկ ինձի, ներ հայրենիդ,
Որ տարբելով ձեռ դափնիդ՝
Որդիդ անխիղճ գլխուդ վատուժ
Բոլոռեցին սև ցոն ու փուշ...
Ա՜հ, վրեժխնդիր ըաներ հայրիկ
Հայրենադրուժ հայոց ցակիճ:

(սավերները կսկսին կամաց կամաց իրենց գերեզմանը մտնել):

Տեսիլ Ե

ՀԱՅԱՍՏԱՆ և ՍՏՎԵՐՔ

Օ՛ն, գերեզմաննիդ մտեք, սավերք դյուցազանց... ձեր ողբերովը չեն քակվիր այս շղթաները, դուք ալ կաշկանդյալ եք հավիտենականության շղթաներով. հեռացեք. ձեր ողբերը միայն նախնի փառաց հիշատակներ կզարթուցանեն ավերակաց մեջեն... խավար է Հայաստանի ճակատագիրը... ա՜հ, երկինք, վերցուր դևսուս վրայեն վրեժխնդրու-

Թյանդ հրացայտ սուրը, որուն վրա հայելվո մը պես, ա՜հ, միշտ փշապատ գերեզմանս կնշմարեմ... ո՜հ, այդ սրովդ խորտակե այս շղթաները և քու բարկությանդ կայծակովը այրե՛ ճակտիս փուշերը... դեռ չպատռեցա՞վ վրեժխնդրությունդ... չտեսա՞ր միթե որչափ արյուն ծծեց այն Սև Հողերը, մինչև անգամ արևը զարհուրեցավ իր լույսը սփռելու... դեռ կգոռա ականջիս այն ահռելի ձայնը—Հայաստանը պիտի ջնջվի—դեռ աչացս առջև է Թշվառության արհեստաթ տապարը... (ծունր գալով) *ձայն տվեք, երկի՛նք, պիտի քակվի՞ն այս շղթաները, ձա՛յն տվեք, դեռ շա՞տ պիտի հեծե Հայաստան...*

Տեսիլ Ջ

ՀԱՅԱՍՏԱՆ և ՀՈՒՅՍ

ՀՈՒՅՍ.— Մի՛ հուսահատիր, Հայաստան... դեռ կրնան խորտակիլ այդ շղթաները... դեռ աստղ մը ունիս։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜հ... օրհնյալ ըլլան երկինք... բայց ո՞վ ես դու... ըլլա որ մահվան հրեշտակն ըլլաս...

ՀՈՒՅՍ.— Հույսն եմ ես, որ գերեզմանին ցուրտ դռանն առջև իսկ՝ թագին և դագաղին երեսին կժպտիմ։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Եվ ի՞նչ կբերես ինձ, թա՞գ թե դագաղ։

ՀՈՒՅՍ.— Թա՜գ... եթե հայը սիրե եղբայրը, Հայաստան պիտի վերականգնի... (Հայաստան ուրախության շարժում մը կընե) *Հայաստան չի պիտի վշտագնի, այլ պիտի ժպտի* (գլխուն փշյա պսակը կհետե)։ *Հայաստան գերի չէ, ալ ազատ պիտի ըլլա...* (շղթաները կխակե) *օտարությունը հայուն գլուխն հարվածող լախտն է, անմխիթարությունը Հայաստանի ժանտախտն է, սերն ու լույսը հայոց դրախտն է... և քիչ առենեն երկնից երեսը նոր աստղ մը պիտի ցոլա՝ այն ալ Հայաստանի բախտն է* (հանկարծ խաղցր լույս մը կծավալի)։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ողջ է Հայաստան... ծափ զարկեք, հայեր... (աճմիության գանիճ կործանումը)։

ՍԵՐ.— (երևալով) Ջե՜ռդ, Հայաստան։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ահավասիկ... (կգրկախառնին)։

ՀՈՒՅՍ.— Ուրեմն պիտի վերականգնի հայությունը։

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

Վ Ե Ր Ջ

ԱՐՏԱՇԵՍ Ա·

Թատերգություն

երգախառն ի հինգ արարս և ի մի պատկեր

ԱՆՁՆԱԿԱՆ ԹՎԱՏԵՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՇԵՍ Ա. Արքա Հայոց
ՏԻԳՐԱՆ Բ. Արքա Հայոց
ԿՐՅՈՒՍՈՍ, Արքա Լյուդացվոց
ՄԻՀՐԴԱՏ, Բդեաշխ Վրաց՝ փեսա Արտաշիսի
ՎՐՈՒՅՐ, Սպարապետ Հայոց
ՎԱՐԱԺ, Զինավարժ Տիգրանա
ԱՐՇԱՋ, Զինակիր Արտաշիսի
ԽՈՍՐՈՎ, Դեսպան Հայոց
ՎԱՀՐԱՄ ՎԱՀՈՒՆԻ, Քրմապետ Հայոց
ԿԱՄԱԴՐՈՍ, Մտերիմ Կրյուսոսի
ՊՅՈՒԹՈՍ, Քրմապետ Լյուդացվոց
ՈՐՄԶԴՈՒԽՏ, Սիրուհի Արտաշիսի

Թիկնապահք, զորապետք, զինվորք, պահապանք, պալատականք, դահիճք, քուրմք, նավաստիք։

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՊԱԼԱՏ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Կեցցեն հավերժ արիք Հայկյաց,
Ցոլան սուր, բազ, փառք ու հույսեր.
Osur ազիզ ափ ի բերաց
Թողուց դողդոջ ժանգոտ սուսեր,

Կեցցե՛ հաւերժ վեհն Արտաշես,
Osur ափանց նախանձ սուրսափ,
Կեցցե՛ Տիգրան Նոր բոցագես
Արհյուռ. լեռ, ձոր՝ զարնեն բոդ ծափ:

Տեսիլ Ա.

ԱՐՏԱՇԵՍ (ի գահ) *ՄԻՀՐԴԱՏ, ՎՐՈՒՅՐ, ԱՐՇԱՆՋ, ԽՈՍՐՈՎ, ՎԱՐԱԺ, ՔՐՄԱՊԵՏ, ՆԱԽԱՐԱՐՔ, ԹԻԿՆԱՊԱՀՔ.—ՏԻԳՐԱՆԸ*

Թագավորական հանդեսին կբերեն և կերգեն.

*ԱՐՏԱՇԵՍ.— Ժողովուրդք Հայաստանյայց, ահա ճանչեցէք այսու-հետև ձեր թագավորը. Արտաշես ծովերու, անապատներու և բոլոր տիեզերաց թագավոր կոչվելու կերթա, Թող իր փառքը ցոլա նաև Արևմտյան հորիզոնին վրա և ազգերու փառաց վերջալույսն հանդիսանա. Թագերու ներքև խրոխտ ճակատները դժգունին ու խոնարհին, լա՛ն փառք երազող բռնավորները. Ասիո խորերեն՝ Այրարատա դաշտեն մրրիկը կմռնչե.—Թագակիրներ արյան ծովերն և արտասվաց գե-տերե՝ անցնելով Թող գան շղթայակապ խոնարհին Արտա-

– շնսի առջև և դողդոջուն ձեռքով դափիններ բոլորեն իր ճակտին... կկարծե՞ք որ կերազե Արտաշես, ա՜հ, բավական երազեցի որբանիս մեջ, հորս գիրկը, զինուց աղմուկին մեջ, որսի ճերմակ երիվարիս վրա... մանկութեանս տաճն գահ մը կպակասեր, ահա այն գահին վրա կգտնեմ ինքզինքս և անոնք որ երազ էին, հիմա կապույտ քողի մը ետևեն ինձ կը ժպտին... ագռավը արծիվ չեղավ, այլ արծվի ձագին թևերուն փետուրները հղկվեցան, թռչելու ժամանակն է, կուզե՞ք որ թռչի...

ՄԻՀՐԴԱՏ.— Տեր արքա, քանի որ Արտաշես աշխարհի իշխե՝ նախարարներն ալ մեյ մեկ թագավորներ կհամարվին։

ԱՐՏԱՇԵՍ.— Կը հասկնամ, քաջ բդեշխ և Միհրդատ ալ Պոնտոսի իշխանը կըլլա։

ՄԻՀՐԴԱՏ.— Կընդունիմ, վեհափառ տեր, արքայական այդ մեծ շնորհքը, Պոնտոսի իշխանը ու Արտաշեսի հպատակն եմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Երդվիր որ Հայոց արքային միշտ հնազանդ և օգնական պիտի գտնվիս։

ՄԻՀՐԴԱՏ.— Կերդնում յերկինս, Աստվածոց և սրուքս վրա։

ԱՐՏԱՇԵՍ.— Երդվի՛ր և դուք, Ավագանիք Հայաստանյայց։

ԱՄԵՆՔ.— Կերդնումք։

ԱՐՏԱՇԵՍ.— Եվ դու որդյակ իմ թագավոր, երդվի՛ր որ պիտի սիրես ազգդ հոգվույդ չափ և պիտի նվիրես արյունդ իր փառացն ու աղատութեանը համար։

ՏԻԳՐԱՆ.— Կերդնում յերկինս և Աստվածոց, թագիս և սրուքս վրա, որ պիտի սիրեմ ազգս և թագս, և առանց հորս փառքեն նշան մը կորանցունելու՝ պիտի ջանամ ավելի փայլեցնել, իր արիութեան սովերը և իր փառաց արձադանքն ըլլալու պիտի ճգնիմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Ո՛վ քաջդ Վարաժ. դու, որ իմ որդիս քաջագործութեանց վարժեցուցիր, զքեզ չեմ ուզեր անվարձ թողուլ, արքունի որսապետ կկարգեմ, և կշնորհեմ քեզ Հրազդանի անննման ափունքը։

ՎԱՐԱԺ.— Երախտագետ սրտիվ կընդունիմ, վեհափառ Տեր։

ԱՐՏԱՇԵՍ.— Որդյակ իմ, ահա կթողում ես Հայաստանն իր փառացն համար, կթողում այս գեղեցիկ հայրենիքը, ուր թագավոր ծնա, և կերթամ օվկիանոսի կոհակաց հետ

մոնչելու՝ թագը մեկդի ձգելով՝ սաղավարտ կրելու, թագը սաղավարտեն ավելի ծանր է և դժվարակիր, դիտցիր որ այս լեռները, ժայռերը, ձորերը և գերեզմանները ձայն ունին թագավորի մը դեմ, որ անիրավություն կգործե, գահիդ ոտքերը պիտի ըլլան Հայրենիք և իրավունք, պատիվ և արիություն, ասոնցմե զուրկ տեղը անդունդ կա. նայե որ սուրդ չի ժանգոտի իր պատյանին մեջ, թագավոր և միանգամայն զինվոր եղիր, զարկ, մի զարնվիր, մեռիր, մի հաղթվիր, ջանա՝ որ թշնամիք հսկա Մասիսի կնճռոտ ճակտին չի թքնեն, այն պիտի մնա դարերով հայուն արձան և հիշատակ, այն պիտի ըլլա Հայկազն դյուցազանաց դամբաններուն վրա։ Գիտցիր որ Արտաշես երբ իմանա թե Տիգրան պատերազմի դաշտին վրա հաղթվեր է, սուրը պիտի փշրի իր փառաց և հույսերուն վրա։

ՏԻԳՐԱՆ.— Հայր իմ, աշխարհակալութենե դարձած ժամանակդ, թագավորներ կառչդ պիտի վարեն, թագավորներ՝ զորոնք Տիգրան գերի պիտի վարե, ես ալ Արտաշեսի նման չեմ երազեր։ Արևմուտքը քեզի, հայր իմ, Արևելքն ալ ինծի, ես ալ Արտաշեսի որդին, գրկվինք հայր և որդի, գրկվինք երկու գոռոզ աշխարհակալներ, մահ և կործանումն աշխարհի։

ԱՄԵՆՔ.— Կեցցեն Հայկազն Աշխարհակալք, կեցցե Ասքանազյան թագավորություն։

ԱՐՏԱՇԵՍ.— Կեցցես, որդյակ իմ, այո իմ որդիս, իմ արյունս ես, Արտաշես չգիտե պարտվիլ։ Տիգրան ալ պիտի հաղթե, Արևելք քովդ, Արևմուտք՝ իմս։

ՎՐՈՒՅՐ.— Ուրեմն թող բոլոր Նլլադա մոխիրի վրա նստի, իր Աստվածներն օգնության կանչե, զոհերու ճենճերով օդը մթագնեցնեն, լա իր բաղդը, դրոշներովը արցունք սրբե, ժանգոտ սուրը ժայռերու զարնե... Հեծե, Նլլադա, Արտաշես մութ բանակավ դեպի քեզ կքալե, այս սուրը կամ քու ավերակացդ և կամ իմ կուրծքիս վրա պիտի փշրի... Քաջդ աշխարհակալ, հրաման տուր սպարապետիդ որ զորքերը ժողվե, քալենք, քալենք դեպ ի նախանձոտ Նլլադան։

ԱՐՏԱՇԵՍ.— Կհրամայեմ, քաջդ Վրույր, օն պատրաստվե փութով, զարնենք Նլլադան։

ՎՐՈՒՅՐ.— Կհնազանդիմ, Վեհափառ Տեր (կը մեկնի)։

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ, բացի ՎՐՈՒՅՐԵՆ

ԱՐՏԱՇԵՍ.— Քաջդ դեսպան, վաղը արշալույսը չծագած ճամբա պիտի ելնես դեպ ի Լյուդիա, իմացուր Կրյուասոսի, որ Արտաշես անթիվ բանակով և նավերով դեպ ի իրեն երկիրը պիտի քալե, կամ անձնատուր ըլլա կամ հաղթվի, կամ գահը ընտրե և կամ մահը: Իսկ եթե չի պիջանիր խոնարհիլ Արտաշիսի, թող սուրը ամուր բռնե ձեռքին մեջ, որ հայոց՝ նետաձգությամբ արևը մթագնեցնող բանակը տեսած առենը դողդողչելով չիյնա. եթե չի խնայեր ազգին, թող կուրծ դնե:

ԽՈՍՐՈՎ.— Կհնազանդիմ, Տեր, արդեն Լյուդիա շատ փոքր է Արտաշիսի դեմ խրոխտալու համար:

ՔՐՄԱՊԵՏ.— Տեր արքա, ամեն բան կարգադրվեցավ, երթանք մեհյանը Աստվածոց փառաբանություն տալու և իրենց գութն ու օգնությունն հայցելու, Արտաշես չէ զորավորը, Աստվածներն են, երթանք, մեհյանին բեմին վրա սուրերը սրելու, երթանք, Աստվածոց մեծաց օրհնությունը վայելելու համար:

ԱՐՏԱՇԵՍ.— Այո, երթանք ամենքնիս ալ Աստվածոց երկրպագելու, որ մինչև հիմա Հայաստանը պաշտպանեցին և Հայկյան բանակը զորացուցին, անոնց զորեղ բազկացը տակ դեռ հավերժ պիտի մնան Հայք և Հայաստան (կմեկնին):

Տեսիլ Գ.

ԱՐՇԵՋ, ՈՐՄԶԴՈՒԽՏ (կերևա և մոխիկ կըճե ճետո)

ԱՐՇԵՋ.— Արտաշես աշխարհակալելու կերթա, Տիգրան թագավոր կըլլա և պաշտոնատարց շնորհքներ կբաշխվին, իսկ ես այսչափ առեն Արտաշեսի հետ կպատերազմեմ, աղջիկը սիրեցի, իր ամուսնությունը մերժեց և զայն վրացի Միհրդատին տավ, վերջապես ամենուն երկրներ շնորհեց և ինձ ափմը հող չի տավ որ խոնջյալ ճակատս հանգչեցնեմ. շատ անգամ կըսեմ. «Արշեզ, դու քաջ ես, և պետք է որ քովդ գտնվիս»: Այո, քաջ եմ, բայց վատ պիտի ըլլամ, եթե վրեժ չառնեմ, հեռու ու ոխը սիրտս կկրծեն, քինախնդիր

որբ մ'եմ... ահ, երանի թե դեղջուկ մ'ըլլայի և հայր ու մայր ունենայի, արտ մը պատերազմի դաշտի տեղ, ծառի մը շուք՝ մեծաշուք հաղթանակաց տեղ, խրճիթ մը՝ պալատի տեղ, փոքր ընտանիքի մը տեր ըլլայի՝ բյուրավոր զորաց հրամանատարության տեղ. դիս այս դժոխքը արդյոք ո՞ր անդունդը նետեց, որուն բոցերն են փառք, երազ, նախանձ և վրեժ։

ՈՐՄԶՈՒԽՏ.— (մեկուսի) Ես... որ Արտաշեսը սպանեմ։

ԱՐՇԵԶ.— Ա՜հ, ոչ թագավոր ըլլալ, այլ վրեժ առնել կուզեմ... (Ոռմզդուխտը տեսնելով) ուրվակա՞ն...

ՈՐՄԶՈՒԽՏ.— (հառաչանալով) Վրեժդ պիտի առնես։

ԱՐՇԵԶ.— (մեկուսի) Կին մը... մատնվեցա (բարձր) ո՞վ ես, դնչուհի, որ թագավորին պալատը մտնելու կհամարձակիս։

ՈՐՄԶՈՒԽՏ.— (աճոր ավելի մոտենալով) Մի անարգեր զիս... պիտի ճանչնաս...

ԱՐՇԵԶ.— Բայց ինչո՞ւ կմոտենաս ինծի... գնա, կորսվե։

ՈՐՄԶՈՒԽՏ.— Հանդեսեն առաջ եկած գաղտադողի՝ քեզ կսպասեի։

ԱՐՇԵԶ.— Ես քեզ չեմ ճանչնար... պահա...

ՈՐՄԶՈՒԽՏ.— (ընդմիջելով) Արշեզ...

ԱՐՇԵԶ.— (մեկուսի ապշած) Անունս ալ դիտե... (բարձր) Բայց, ո՞վ ես դու, ի՞նչ կուզես ինձմե։

ՈՐՄԶՈՒԽՏ.— Ես քեզի վրեժխնդրության սուրը կբերեմ։

ԱՐՇԵԶ.— Ի՞նչ վրեժխնդրության։

ՈՐՄԶՈՒԽՏ.— Վատ ես, եթե քիչ մը հառաջ ըրած ուխտդ մոռցար։

ԱՐՇԵԶ.— Բայց ես ի՞նչպես կրնամ արի Արտաշես մը վրեժ առնել, որուն չորս կողմը կհսկեն հսկաներ.— խուռն բանակ մը։

ՈՐՄԶՈՒԽՏ.— Եվ այն հսկաներեն մեկն ալ դու ես... կին մը քեզի յուր թևը կուտա... կը վստահի՞ս... տուր ձեռքդ։

ԱՐՇԵԶ.— Առանց զքեզ ճանչնալու չեմ կրնար ձեռքս տալ, դուցե այդ ձեռքը՝ որուն հետ պիտի միավորի իմս ալ, անիրավ և կաշառաբեկ սրտի մը սուրն եղած ըլլա։

ՈՐՄԶՈՒԽՏ.— Եթե մորդ անբիծ և վրեժխնդիր ձեռքն եղած ըլլար։

ԱՐՇԵՋ.— Մայր չունիմ ես։

ՈՐՄԶՈՒԻԽՏ.— Երթ ունենայիր, դինքը շատ կսիրեի՛ր։

ԱՐՇԵՋ.— Հոգիես ավելի, ես հիմա իրեն հետ դեղջկական կյանք մը կվարեի... ալ զզվեցա պատերազմիկ գերի ըլլալե. զարկ, որ թագավորդ պարծի, մեռիր, որ թագավորդ ապրի։

ՈՐՄԶՈՒԻԽՏ.— Եվ մորդ համար թագավորդ կզոհեիր։

ԱՐՇԵՋ.— Բայց ինչ հարաբերութիւն ունիս դուն թագավորին հետ, դուն գեղջկուհվո մը կնմանիս... Պալատը նոր կտեսնես։

ՈՐՄԶՈՒԻԽՏ.— Այս պալատը նոր կտեսնեմ, բայց Արտաշեսը առջես ծունր եկած պաղատալից տեսեր եմ... Ինչ, միթե դեռ գեղեցիկ չե՞մ, Արտաշես երբեմն գերիս էր, մի զարմանար, պիտի ճանչնաս զիս։

ԱՐՇԵՋ.— Ջեմ կարծեր որ հիմար եղած ըլլաս։

ՈՐՄԶՈՒԻԽՏ.— Ես ալ զքեզ քիչ մը հառաջ հիմար կարծեցի, վերժխնդիր մը հիմարի մը պես կխորհի ու կխոսի, բայց հիմարի մը պես ուժգին է հարվածը, զիս կծաղրես, բայց ես ալ զքեզ պիտի ծաղրեմ, երբ սուրը ձեռքիդ մեջ դողդոջես... Արտաշես իմ աղջիկը քեզմե խլեց և ուրիշ աղջիկ մ'ալ աշխարհքեն... երկուքնիս ալ վրեժխնդիր ենք... տուր ձեռքդ։

ԱՐՇԵՋ.— Ջեմ ճանչնար զքեզ։

ՈՐՄԶՈՒԻԽՏ.— Ուրեմն մտիկ ըրե... Արտաշես դեռ թագավոր չեղած օր մը որսի ելած ատենը դեղանի պարսիկ աղջիկ մը կտեսնե, որ իր տնակին առջև կաղոթեր. Արտաշես վայրկյան մը կկենա և զայն զմայլած կդիտե և աղջիկը տնակը փախած ատենը՝ մտրակելով ձին սրարշավ կանցնի կերթա. հետևյալ օրը միևնակ որսի ելած ատենը նույնպես աղջիկը տնակին առջև կգտնե և ձեռքի մատանին անոր կնետե. աղջիկն աղքատ՝ բայց չընդունիր. սակայն ամեն օր հաճախելով Արտաշես՝ աղջկան սիրտը կգրավե. աղջիկը վերջապես ալ անկե չի փախչիր, երկու շունչեր իրարու կմտածեն, երկու թևեր զիրար կգրկեն... Աղջիկը հոգվույն չափ սեր կուտա արքաորդվույն, բավական ժամանակ կանցնի այսպես, աղջկան ծնողքը անտեղյակ կըլլան այս անցքին, Արտաշես կխոստանա զայն իրեն թագուհի ընել, երբ թա-

գավոր ըլլա, բայց քիչ քիչ կսկսի իր տեսութիւնն ընդհատել և վերջապես դադրեցնել։ Թագավոր կըլլա, տարի կանցնի՝ չերևար, շատ օրեր խեղճ կինը Արտաշեսի ճամբուն վրա կսպասե, բայց ի զուր... դեռ կսիրե... օր մ'ալ Արտաշես որսի ելած ատենը, հեռուեն կին մը կուգա փութաքայլ, դժգույն ու հերարձակ, և գրկի տղան Արտաշեսի երիվարին առջև դնելով. «Առ այս տղան.—կաղաղակե— Արշեզ է անունը, քու զավակդ է, ասոր համար ծնողքես հեռու կթափառիմ, չունիմ հաց որ իրեն տամ... (Արշեզ զարմացական շարժումներ կընե) Արտաշես երեսը դարձուցած թիկնապահաց կհրամայե, որ տղան առնեն և կսկսի սրընթաց հեռանալ, կինը հուսահատ կիյնա. վայրկյան մը արտասվալից կաղոթե... ալ այնուհետև կատե, և վրեժխնդրության ասուպ մը կըլլա իր սիրտը։ Վերջապես կմեռնին հայրն ու մայրը, կգտնե առիթ, կդաշնակցի, և ահա այսօր կհասնի պալատ, կհարցնե Արշեզը, կգտնե իր վահանը, կճանչնա իր զավակը... այն կինը ես եմ, այն կինը քու մայրդ է...

ԱՐՇԵԶ.— Մա՜յրս (կգրկվին), բայց Արտաշես... իմ հայրս...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Բայց դու իրեն գերին... Տիգրանն է թագավորը, դու չես թագավոր... տուր ձեռքդ...

ԱՐՇԵԶ.— Ջեմ ուզեր թագավոր ըլլալ...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Դահիճ եղիր... մայր ունիս... տուր ձեռքդ...

ԱՐՇԵԶ.— Ահավասիկ։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Երդվիր...

ԱՐՇԵԶ.— Սրուբս վրա։

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

Ա.ՐԱՔՎԱԾ Բ

ՊԱԼԱՏ

Տեսիլ Ա

ԿՐՅՈՒՍՈՍ.— (միևնակ՝ զարհուրած տեսարան կուգա խոռվյալ ճայվածքով չորս կողմը կզննե, ետոո կիաճդարտի)։

Երա՜զ... այս իմ պալատս է... ես Կրյուսոսն՝ ու ողջ եմ դեռ... ահա կտեսնեմ արևուն նորատիպ ճառագայթները որ ինձ կյանք կալվետեն... ահա գահս, թագս, սուրս. ձեռք մը զանոնք չէ տապալեր, չէ փշրեր... երազ էր այն... սակայն որոտմունքը կայծակին հարվածը կը գուժե, այս երազը որոտմունքն էր, կայծակը պիտի ճայթի... ով դիք, մինե կատա՜կ կընեք ինձ հետ, եթե ոչ՝ բարկության կրակ պիտի ժայթքեք գահիս... և ո՜վ պիտի բազմի անոր մոխրին վրա... օտար մը՝ գոռոզն Արտաշես՝ իր փառաց հիշատակարաններուն մեջ անոր աճյունն ալ ամփոփելու և Կրյուսոսի արցունքն ու արյան կաթիլները թվելով հեշտանալու... Գթություն՜ն, ով դիք, Կրյուսոս մը ծունր կուգա, կհեծե... աչքերն արցունքով կփալփլին իր փառաց աստղերուն հետ... առեք կյանքս, բայց ոչ թագս, կուզեմ մեռնիլ քան թե գահես աստիճան մը խոնարհիլ... մինե՞ ձեր բարկությունը մարելու համար Կրյուսոսի արյո՜ւնը կուզեք, արյուն մը որ փառք կմռչե... իր կմախքը գերեզմանեն հոտը պիտի ողբա փառքն ու Լյուդիան... այո, Կրյուսոս չպիտի մեռնի... ինչո՜ւ կլռեք, սուվերք նախնյաց։

ՆՈՒՅՆ և ԿԱՄԱԴՐՈՍ

ԿԱՄ.— Տեր արքա։

ԿՐՅՈՒՍ.— Դո՞ւ ես, Կամադրոս։

ԿԱՄ.— Այդ ինչ այլայլյալ դեմք... ծունկերդ կդողդոջեն, տեր իմ։

ԿՐՅՈՒՍ.— Կյանքիս մեջ առաջին անգամ կդողամ, Կամադրոս։

ԿԱՄ.— Կրյուսոսն ես դու, տեր արքա, գլուխդ՝ թագ, մեջքդ՝ սուր, Կամադրոս՝ քովդ, Լյուդա՝ փառացդ ծափահար, ի՞նչ բանե կդողաս ուրեմն։

ԿՐՅՈՒՍ.— Աստվածներեն։

ԿԱՄ.— (զարմացած) Աստվածներեն։

ԿՐՅՈՒՍ.— Այո, մեր Աստվածները գուցե ինծի դեմ բարկացեր են և կուզեն գահս տապալել և գուցե բոլոր Լյուդիա համաջինջ կործանել։

ԿԱՄ.— Ով երկինք... ով աղետից...

ԿՐՅՈՒՍ.— Սոսկալի է այս... Կրյուսոս մ'ալ խաղալիք կըլլա... Թող ըլլա՝ Աստվածներ... ուրեմն Աստված մ'ըլլալ պետք է անարգել և աներկյուղ խրոխտալու համար։

ԿԱՄ.— Տեր արքա, հանդարտեա, գուցե Աստվածները փորձել կուզեն զքեզ։

ԿՐՅՈՒՍ.— Բայց խիստ սոսկալի է, երբ փառասեր սիրտ մը հուզե հզոր ձեռք մը... կկարծե՞ս որ փառասերը հանդիստ ըլլա երբեք... միշտ տղու մը պես արթուն կերազե նա, կհառաչե սրտատրոփի մը պես, ամեն րոպե անդունդե անդունդ կթավալի... աստղե աստղ կթռչի... միշտ աչացն առջև տեսիլք... գահը կշրջապատեն խումբ մը ճիվաղներ, կանայք ծիրանին կուզեն պատռել... վերջապես զինքը կպատեն ազմուկ, երկյուղ, երազ, ճաճանչ... փառքը՝ այն անհագ հրեշը միշտ աշխարհի ճախճախուտ անդունդները արյունաներկ ծաղիկներով կծածկե... փառասերին համար գեղեցիկ ասպարեզ մը... մեղկ ձեռքովը զայն հառաջ կմղե. քալե, քալե, մինչև որ ոտքդ սայթաքի. բայց զորութենն՝ մրրիկ մը բռնված ես՝ միշտ պիտի քալես... մինչդեռ երեկ գիշեր Արևելքը կերազեի, ահա այս գիշեր Արևելքեն գիշերավան մեջ սպառնացյալ նետի մը դռնչյունը կլսվի։

ԿԱՄ.— Բայց ի՞նչ պատահեցավ, տեր արքա, չեմ հասկնար, ո՞վ կդրդռե Աստվածոց շանթերը։

ԿՐՅՈՒՍ.— Չեմ գիտեր... գուցե Կրյուսոսի փառքը... բայց կզգամ որ ինձ հետ կատակ կընեն։

ԿԱՄ.— Բայց կաղաչեմ, տեր արքա, հանդարտե ու պատմե ինչ որ պատահեցավ, գիտես որ Կամադրոս իր կյանքը կուտա իր թագավորին և հայրենյաց մեկ կայծին համար... և եթե Աստվածները բարկացեր են, կերթամ սուրս և վիզս կնետեմ անոնց սեղանին վրա և կըսեմ՝ «Թող ապրին Կրյուսոսն ու Լյուդիան»։

ԿՐՅՈՒՍ.— Կեցիր, դու քաջ ես, Կամադրոս, և ես որ վատ չեմ՝ ինչո՞ւ պիտի դողամ... ահա սիրտս չզարներ, չեմ դողար, երեկվան գոռոզ Կրյուսոսն եմ... ահա պալատս, գահս և ահա Լյուդիա... ահա սուրս և ահա Աստվածները... (սուրը կֆաշե)։

ԿԱՄ.— Ի՞նչ կընես, տեր արքա... սուրդ կշողա... շանթեր...

ԿՐՅՈՒՍ.— Ա՜հ, մեղա՜... գթություն... (ծունր կիյնա հետո ոտքի կելնե բարկացած), բայց ի՞նչ ըրի... ծունր եկա...

ԿԱՄ.— (աներ առջև ծունր դնելով) Ներե, քու գերիդ եմ, տեր արքա, հանդարտե կաղաչեմ... պատմե ինչ որ պատահեցավ։

ԿՐՅՈՒՍ.— Մտիկ ըրե, այն Հայկազն Արտաշեսը, որուն գոռոզ հռչակը արդեն լսեցինք... սոսկալի երազ մը տեսա այս գիշեր...

ԿԱՄ.— Սակայն...

ԿՐՅՈՒՍ — Մտիկ ըրե... գիշեր էր, լուսինը Ալյուս գետին վճիտ ալյացը մեջ կշողար, ես այն ատեն գետեզրին վրա կշըրջապտեի, սիրտս ուրախությամբ զեղված մտիկ կընեի փառաց ներդաշնակավոր դրվատիքները որոնք սիրտս կօրորեին... անծանոթ կամ դիցուհյաց ձայներ էին... որոնց մեջեն երբեմն Կրյուսոս անունը մրմնջող հաղթական եղանակ մը կլսեի... սիրտս այն ձայներուն հետ կթրթռար... հանկարծ դաժնեզարդ քնար մը տեսա քովս, ուզեցի փառքս ինքնին ալ դրվատել և այնպիսի բուռն եռանդով մը կհնչեցներ, որ լարերը խորտակեցան, լռեցին այն անծանոթ մրմունջներն ալ և խոր լռություն մը տիրեց, ակա-

մա դողացի... դառն ծիծաղ մը այս լսութիւնը խանգարեց և զիս սարսռեցուց. դարձա այն կողմը, տեսա որ հաղթահասակ ռազմը գետին դիմացի եզերքը արձանացած՝ հեգնական ժպիտով մը զիս կդիտեր... վրաս ծիծաղողն այն էր... զայրույթես աչքերես բոց կցայտեին... «Ճանչցա՞ր զիս.—լսալ այն մարդը—ես Արտաշեսն եմ»... այս անունը լսելուս՝ սուրս քաշեցի... նա ալ ակնթարթի մէջ սուրը քաշեց՝ գետին սպդիւ կողմը ցատկեց... սուրերնիս շառաչեցին... բավական ժամանակ տևեց... ուժս սպառեցավ... հարվածն ընդուներ էի... հոգեսպառ գետը ինկա... նա հաղթականն նայվածք մը ձգեց վրաս... «Լյուդիա, դու իմս ես, ըսավ և սրացավ... հետո աղեկտուր հեծեծանքներ լսեցի... գետին մեջեն հյուծյալ աչքերով վերջը Սողոնը տեսա, որ զիս կողբար... աչքերս գոցեցի, հավիտենական կոհակ մը վրաս թավալեցավ... և զգացի որ գետին հոսանքը զիս քշեց տարավ...

ԿԱՄ.— Բայց մի հուսահատիր, տեր արքա... զոհ մատուցվին Աստվածոց։

ԿՐՅՈՒՍ.— Ո՜հ, բոլորովին միտքս կաշկանդվեր է... զիս ուշաբերեցիր, Կամադրոս... այո ողջակեզ... փոխանակ Լյուդիա զոհ ըլլալու, Աստվածները գթած են.. ո՞վ կա հոդ... պալատականք... (պալատական մը ներս կմտնե) գնա չուտ մեհյանը և ըսե քրմապետին, որ հիմա անթիվ ողջակեզ մատուցանեն Աստվածոց, իրենց հաշտութիւնը հայցելու համար և թող քարոզե համայն լյուդացվոց, որ ամենքն ողջակեզ մատուցանեն Աստվածոց բարկութեան զանթերը արդելելու.—(պալատականը կմեկնի)։

ԿԱՄ.— Բայց թող չես տար, տեր արքա, որ ես զոհ ըլլամ Կրյուսոսի համար, եթե իմ արյամբս Լյուդիո ազատութիւնը գնելուս հաճին դիք։

ԿՐՅՈՒՍ.— Դու զիս չպիտի թողուս... լսեցիր քիչ մը առաջ այն սոսկալի երազը։

ԿԱՄ.— Բայց ներե, տեր արքա, եթե երբեք ես Կրյուսոս մը ըլլալու վեհ ճակատագիրն ունենայի, չէի վախնար Արտաշեսի մը հոչակեն... Հարցուր մեկ մը թագավորներուն թե առանց սարսուռի կրնա՞ն քու անունդ արտասանել։

ԿՐՅՈՒՍ.— Հանդուգն խոսեցար, Կամադրոս... ես միայն Աստվածներեն դողացի։

ԿԱՄ.— Աստվածները պիտի հաշտվին, տեր արքա։

ԿՐՅՈՒՍ.— Ուրեմն Կրյուսոս ալ չդողաց, այլ երազեց... և երեք վայրկյան մը դողաց, անցելուչն հիշատակարանաց և ապագա փառաց վրա ուրախության սարսուռ մ'էր այն... հիմա դարձյալ Կրյուսոսն եմ... փառք կամ բոթ... երկուքեն ալ չեմ դողար։

ԿԱՄ.— Մեհյանը երթանք, տեր արքա։

ԿՐՅՈՒՍ.— Ոչ, հոս կաղոթենք... վայրկյան մը առաջ Աստվածոց դեմ զայրացա... պիտի զղջամ... աղոթեցեք ինձ հետ, սուրբք թագավորաց...

ԿԱՄ.— Ահա զոհերուն ճենճերը երկինք կբարձրանա, տեր արքա... ահա կլսվի քուրմերուն մեղեդին... անշուշտ շանթերու տեղ արփիք պիտի ցոլան։

ԿՐՅՈՒՍ.— Ուրեմն ծունր գանք... այսօր է, որ ծնրադրել սովրեցա...

ԿԱՄ.— Եվ հաշտության ավետյաց ձայնին սպասենք... (ծունր կուգան, ետեռուեն աղմուկով խառն աղօթքի ձայներ կլսվին, որ բավական կտևեն)։

ԿՐՅՈՒՍ.— Ձայները լռեցին... ճակատադիր մը կորոշվի... վճիռ մը կորոտա անշուշտ... ահ, ակամա սիրտս կտրուիճ... ահ ձայն մը... այս լռությունը սոսկալի է...

ԿԱՄ.— Տեր արքա...

ԿՐՅՈՒՍ.— Ձա՛յն մը...

ՁԱՅՆ ՄԸ.— Հաշտությո՛ւն... Հաշտությո՛ւն...

ԿՐՅՈՒՍ.— Ահ, դեղեցիկ բարբառ։

Տեսիլ Գ.

ՆՈՒՅՆՔ և ՔՐՄԱՊԵՏ

ՔՐՄ.— Արքա, Աստվածներն հաշտվեցան։

ԿԱՄ.— Օրհնյալ ըլլան դիք։

ԿՐՅՈՒՍ.— Օրհնյալ ըլլաս և դու, պատգամդ Աստվածոց... այսօր վերածնեցար Կրյուսոս, և առաջինեն ավելի ահեղ, երազի մեջ երազ մը տեսար, և այսուհետև կյանքեն վառք պիտի

քամե. կյանքին մեջ վայրկյան մը դողաց և այն վայրկենին փոխարեն աշխարհ պիտի դողացնե, քանի որ իրեն հետ հաշտ են Աստվածները։

ՔՐՄ.— Ուրեմն, արքա, պետք է որ միշտ արդարութեամբ և խոհեմութեամբ իշխես Լյուդիո, որպեսզի արդարադատ դիք երբեմն զայրանալով չխռովեն թագավորութիւնդ։ Գիտցիր որ այն ատեն Աստվածներեն զատ ոչ ոք կրնա դահիդ սարսել, երբ անոնց զորեղ բազուկները տարածելով շուք տան Լյուդական գահին, և իրենց գոհ ժպիտներուն ճաճանչովը ականակալ թագդ ցոլացնեն. լողան լյուդացիք փառաց հեղեղի մը մեջ, հիանա համայն տիեզերքը լյուդական դրախտին վրա... մեծ են Աստվածները և իրենց սիրելի ժողովրդյան փառաց՝ նախանձախնդիր, և Կրյուսոս ալ Աստվածոց ճետը։

ԿՐՅՈՒՍ.— Գեղեցիկ խոսեցար, Պյութոս, Կրյուսոս Աստվածոց արժանի ճետը պիտի ըլլա, անոնց փառացը պիտի զոհի սուր, կյանք և տիեզերք։

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ԽՈՍՐՈՎ

ԽՈՍՐ.— (մտնելով) Ողջույն ձեզ, արքա և ավագանիք լյուդացվոց։

ԿՐՅՈՒՍ.— Ո՞վ ես դու։

ԽՈՍՐ.— Արևելյան հրեշտակ մը։

ԿԱՄ.— Ոչ, Արևելյան սատանա մը, որ հանդգնաբար Կրյուսոսի պալատը կմտնե առանց երկրպագելու անոր վեհափառութեանը։

ԽՈՍՐ.— (առ Կրյուսոս) Արքա...

ԿՐՅՈՒՍ.— Կտեսնեմ որ շատ հանդուգն ես։

ԽՈՍՐ.— Ես ալ կըսեմ թե աշխարհակալն Արտաշես չհանդուրժեր երբեք իր դեսպանը օտար թագավորի մ'առջև խոնարհած տեսնել։

ԿԱՄ.— Արտաշե՞ս...

ԿՐՅՈՒՍ.— (մեկուսի) Նույն ինքն է...

ՔՐՄ.— Կպիտի քեզ, ով դեսպան, որ Արևելքեն կխլրտիս հոս

անխոհեմությամբ Կրյուսոսի դեմ դուցե պատերազմ հռչակելու, որուն հետ դեռ հիմա Աստվածները հաշտվեցան։

ԽՈՍՐ.— Լավ կընես, քրմապետ, եթե երթաս Աստվածոցդ օգնությունը հայցելու, որ սին հուսով մը դուռեպնդեն Կրյուսոս և իր բանակը։

ԿՐՅՈՒՍ.— Բավ է... բավ խրոխտացիր, հանդուգն, և հիմա ալ մեր Աստվածները կնախատես... հիմա հուր կպոռթկա գլխուդ։

ՔՐՄ.— Երկայնամիտ են դիք, տեր արքա։

ԿԱՄ.— (մեկուսի) Կրյուսոսի դողը սկսավ... երազը իրականության կկերպարանափոխի։

ԽՈՍՐ.— Ուրեմն վերջ տանք այս անօգուտ բարբաջանաց և լսեցեք աշխարհակալ Արտաշեսի հզոր պատգամը։

ԿՐՅՈՒՍ.— Կհրամայեմ քեզ, ով դեսպան, որ Այրարատյան բարձրերեն չորոտաս. դիմացդ որ կտեսնես՝ Կրյուսոսն է... դուցե համբերությունը սպառելով կրակ թափե գլխուդ։

ԽՈՍՐ.— Եվ դու, արքա, օվկիանոսի կոհակաց տակեն մի մռընչեր, դուրս հանե գլուխդ և տես մեկ մը քու հակառակորդդ... օն, վերջացննենք, պետք է որ հիմա զենք և թագ դանձ և երկիր Թափին Արտաշեսի լիազոր դեսպանին առջև... ո՞վ Կրյուսոս, եթե գոնե անշուք կյանքը կսիրես... խոնարհե... իսկ եթե կհամառիս մեռիք, մեռիք... ամենքնիդ ալ... թե որ կը խնայես ժողովրդյանդ անձնատուր և հպատակ ըրե զանոնք մեծին Արտաշեսի և անոր փառացը ծափահար։

ԿՐՅՈՒՍ.— Չեմ կրնար հանդուրժել... երկինք և երկիր...

ԿԱՄ.— Ով կատաղությանս...

ՔՐՄ.— Արդար դիք...

ԽՈՍՐ.— Օն, պատասխան մը... գահ կամ մահ...

ԿՐՅՈՒՍ.— Համբերությունս կսպառի... ժամանակ ունինք խորհելու համար...

ԽՈՍՐ.— Խորհեցեք... թագ կամ դագաղ։

ԿԱՄ.— Ինչ ծայրահեղ հանդգնություն։

ԿՐՅՈՒՍ.— Բայց հանուն թագավորիդ, հանուն Աստվածոցդ մեկնե որ առաձին խորհինք։

ԽՈՍՐ.— Լավ, խորհեցեք։

ԿՐՅՈՒՍ.— Պալատականք, սենյակ մը տարեք զինքը և պատվեցեք։

ՅՈՍՐ.— (Երթալով) Կրյուսոս, դարձյալ կըսեմ, ընտրե անշուք կյանքը։

ԿՐՅՈՒՍ.— Ալ բավական է (բարկության նշան մը կրնե.—դեսպաները կրմեկնի)։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ, բացի ՅՈՍՐՈՎԵՆ

ԿՐՅՈՒՍ.— Ախ, եթե Աստվածներեն պատկառանք չզգայի և իրմեն եաքը եկող Արտաշեսը չմտածեի, զինքը հիմա ջախջախած էի...

ԿԱՄ.— Բայց քաջալերվե, տեր արքա, մինչե վա՞տ են լյուդացիք։

ՔՐՄ.— Եվ մինչե արդարադատ չե՞ն դիք... Անշուշտ պիտի ջախջախեն մեր ոսոխին գլուխը, որ հանդգնաբար դիրենք և դիս և համայն Լյուդիան նախատեց։

ԿԱՄ.— Սուրի դեմ սուր, տեր արքա... մեկը կփշրի... մյուսը կհարվածե... կհաղթանակե պայծառ ճակատագիր մը... մինչև հիմա ուսկից դողացիր կամ հաղթվեցար, տեր իմ... փրփրադեզ կոհակ մ'էիր, անհուն հարվածներու դեմ որ առանց վիրավորվելու դարձյալ կմռնչե... ո՞վ կրնա օվկիանոսը կլլել... տեր արքա, գլուխդ վեր առ և տես փառազարդ ճակատագիրդ...

ԿՐՅՈՒՍ.— Ես անշուք կյա՞նքն ընտրեմ... երբեք... պիտի մաքառիմ... Արտաշեսի դեմ Կրյուսոս, փառքի դեմ հաղթանակ, սուրի դեմ սակր, զորությանց դեմ Աստվածք... Արտաշես չի՞ պիտի դողա։

ՔՐՄ.— Ցնծա, արքա... հիմա վայրկյան մը աչքերս գոցվեցան և Աստվածները պատգամ ազդեցին սրտիս... Այո, հաղթական ձայն մը մրմնջեց—«Կրյուսոս անցյալ ընդ Ալյուս գետ՝ քակեսցե զիշխանությունս»...— քաջալերություն, արքա, Աստվածոց ճետ մը կարելի՞ է որ պարտությամբ ամոթահարվի։

ԿՐՅՈՒՍ.— Օրհնյալ ըլլան դիք, որ միշտ կպաշտպանեն Լյուդիան... պիտի հաղթենք... դեռ Ալյուս գետեն անդին ալ...

Արտաշեսը կա... պիտի խորտակի անոր իշխանությունն ալ... վայրկյան մը առաջ ուրացա դիս և փառահեղ անցյալս... ապագային մեջ Արտաշեսի վերջին հառաչանքը կլսեմ... Այրարատյան առյուծը կտապալի։

ԿԱՄ.— Հիմա կճանչնամ Մեծն Կրյուսոսը...

ԿՐՅՈՒՍ.— Ջորականք, Բող գա, դեսպանը... (Խոսքով կերևա)։

Տեսիլ Ջ

ՆՈՒՅՆՔ և ԽՈՍՐՈՎ

ԽՈՍՐ.— Ի՞նչ ըրիր, տեր արքա, ես խոնարհ ճակատ մը տեսնել կուզեի և խրոխտ ու խոժոռ դեմք մը կտեսնեմ... ի՞նչ վճռեցիր, մեռնի՞լ, թե խոնարհիլ...

ԿՐՅՈՒՍ.— Հաղթել...

ԽՈՍՐ.— Կդթամ, Կրյուսոս, եթե սուրդ փշրի... Արտաշես չդթար։

ԿՐՅՈՒՍ.— Էհ, պատերազմը կսկսի... զգուշացիր։

ԽՈՍՐ.— Խնայի ժողովրդյանդ, արքա։

ԿԱՄ.— Ոչ, անոնք կսիրեն ոսոխին դեմ մեռնիլ։

ՔՐՄ.— Պաշտպան են Ասորվածները։

ԽՈՍՐ.— Ուրեմն մեռնիլ և Լյուդիան կորսնցունել կուզեք։

ԿՐՅՈՒՍ.— Այո, հաղթել և Լյուդիան հավերժացնել։

ԽՈՍՐ.— Դու չես ճանչնար Հայն ու Արտաշեսը։

ԿՐՅՈՒՍ.— Ալ բավական է, սուրս պատյանին մեջ կխայտա։

ԽՈՍՐ.— Ջղջա, Կրյուսոս, գուցե Արտաշես խիստ մոտ է... գուցե Առյուծը խիստ մոտեն կմռնչե։

ԿՐՅՈՒՍ.— Պատերազմը կսկսինք։

ԽՈՍՐ.— Ուրեմն մեռիք... (կմեկնի)։

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

ԱՐԱՐՉԱՅ Գ

ԲԱՆԱԿԵՏՂ

Տեսիլ Ա

ԱՐՏԱՇԵՍ (մինակ)

Վարագույրը բացվելուն Արտաշես կմրափե վրանին մեջ.—Զորքերը ցիրուցան տարածված կբնանան.— Արտաշես արթննալով դուրս կելնե:

Դեռ առավոտ չէ ծագեր... ահա լուսինը և աստղերը որ կփալփլին... ես չեմ կրնար ննջել, այնպիսի բոց մը կվառի կուրծքիս տակ, որուն կայծերն այս աստղերեն ավելի բյուրավոր են, կայծեր՝ որոնց յուրաքանչյուրը մեկ մեկ գահ աճյուն պիտի փոխեն... ո՜վ գիշեր հեշտ և տխուր, ամպ և երազ, փախիր... դու որ այս նեմեսատվեր անատառին խորը թագս, սուրս և սաղավարտս չես ցոլացներ, չես վառեր զիս ճաճանչներով, չունիս հաղթության ձայներ, զինուց շառաչներ, ծափեր և թագեր. կծածկես սև թևերուդ տակ Արտաշեսն ու յուր փառքը... գերեզմանական ստվեր մը ունի... այս հովը՝ ալին ու տերևն ալ թող մահվան մրմունջ մը ունենան... բայց ես չեմ ուզեր մեռնիլ ցուրտ քարի մը վրա, այլ փառաց հեղեղի մը մեջ խեղդվիլ. պիտի իյնամ շնչասպառ գահերու աճյունին վրա միայն և վերջին շունչս մառախուղ մը, փոթորիկ մը, սուգ մը, սարսուռ մը պիտի տարածե համայն աշխարհ... ես եմ Արտաշեսը, իշխանությանց ժանտախտը, բռնավորաց սարսափը, դյուցազանց նախանձը, Հայաստանի փառքը... դեռ չեմ մեռնիր, ճերմակ մորուքի մը տակ կուզեմ փառքս երիտա-

սարդ տեսնել (Ոտմզդուխտ կերևա որ կամաց կամաց Ար-տաշեսի կմոտենա):

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆ և ՈՐՄԶԴՈՒԽՏ

ՈՐՄԶ.— (մեկուսի) Ինքն է...

ԱՐՏ.— Գեղեցիկ է փառքը, միայնության մեջ երազ, բայց աղմուկի մեջ ճանանչ:

ՈՐՄԶ.— Կանցնի փառքը և կմախք մը կմնա... կսխալիս... ով թագավոր:

ԱՐՏ.— Ո՞վ ես դու:

ՈՐՄԶ.— Նախ կին մը... երիտասարդության, սեր, սովեր, հիշատակ և...

ԱՐՏ.— Չեմ հասկնար:

ՈՐՄԶ.— Մի խռովիր, մահվան հրեշտակ մը չեմ և եթե ըլլայի ալ, կգթայի քու վրադ...

ԱՐՏ.— Ուրեմն ի՞նչ կուզես ինձմե...

ՈՐՄԶ.— Վասնզի կուզեմ քեզ փառաց երազներու մեջ տեսնել միշտ:

ԱՐՏ.— Դու որ այդպես հանդուգն կխոսիս, կամ խելագար մ'ես և կամ չես գիտեր որու դեմ ըլլալդ:

ՈՐՄԶ.— Անշուշտ... վասնզի դուն ալ զիս չես ճանչնար:

ԱՐՏ.— Ես ոչ քեզի պես կնոջ մը հետ պատերազմ ըրած և ոչ ալ երբեք ճանչցած ունիմ... Ես Արտաշեսն եմ...

ՈՐՄԶ.— Երիտասարդության վրա խոսինք, Արտաշես, (Արտաշես կսարսռի) կտեսնես որ առջի պես գեղեցիկ չեմ... երբ բնության գեղեցիկ ավանդ մը խորշոմներու և ալեխառն մազերու տակ կնվաղի... սերը դեպ յանմեղություն և փառքը դեպ յարյունահեղություն կքալե... արյան մեջ ձայն մը կա, դու որ սիրույդ մեջ սխալեցար՝ փառքիդ մեջ պիտի տուժես... ճանչցա՞ր զիս հիմա...

ԱՐՏ.— (մեկուսի) կճանչնամ... (բարձրեն) երբեք...

ՈՐՄԶ.— Ա... չես ճանչնար:

ԱՐՏ.— Բայց պիտի ըսե՞ս վերջապես, ի՞նչ կուզես ինձմե:

ՈՐՄԶ.— Թագուհի ըլլալ կուզեմ:

ԱՐՏ.— Ա՜հ, բոլորովին հաստատեցիր թե խենթ ես։

ՈՐՄՋ.— Դարձյալ խենթ։

ԱՐՏ.— Միայն շղթա մը չեն կապեր պարանոցդ։

ՈՐՄՋ.— Կտեսնեմ որ թագը շղթայով փոխանակել կուզես։

ԱՐՏ.— Միշտ թա՜գ... թագը դատարկ ձեռքով չստացվիր, թագը հզոր սուրի ծայրն է, հիմար կին։

ՈՐՄՋ.— Երբեմն ալ համբույրի մը կամ լեզվի մը ծայրն էր... կտեսնեմ, որ սիրտդ լայն է, Արտաշես, պատիր խոստումով մը անբիծ լանջք մը պղծեցիր... ա՜հ, ես թագե մը ավելի գեղեցիկ էի։

ԱՐՏ.— Կզառանցես, կին դու։

ՈՐՄՋ.— Անունս տուր։

ԱՐՏ.— Բայց։

ՈՐՄՋ.— Որմզդուխտն եմ։

ԱՐՏ.— Ատանկ անուն մը չեմ հիշեր։

ՈՐՄՋ.— Սիրտդ ժայռ է, սար է, Արտաշես, ինչպես կկոխկռտես արմատեն թափած ծաղիկ մը։

ԱՐՏ.— Բայց բավական է, ալ գնա, գիշեր ատեն անհանգիստ մի ըներ զիս։ Ուրվականի մը պես պաղ ես։

ՈՐՄՋ.— Սակայն միտքդ բեր երիտասարդության որսերդ... կհիշե՞ս գյուղը, իմ տնակս, մեր հովանին ու ծաղկե հանաչ անկողինը, այն արցունքները զոր լանջքիս վրա կթափեիր և ես կհամբուի, բաժանումդ որ զիս սառեցուց, հանդիպումնիս վերջին անգամ որ Արշեզը քեզի տվի, կհիշե՞ս։

ԱՐՏ.— Բայց երբեք չեմ ճանչնար քեզ և բան մ'ալ չեմ հիշեր ըսի... Պիտի մեկնի՞ս։

ՈՐՄՋ.— Հպարտ ես, Արտաշես...

ԱՐՏ.— Նվ դու ալ համբերությունս կսպառես։

ՈՐՄՋ.— Թագավոր, դողա պարսկուհվո մը վրեժխնդրութենեն... կամ մեռցուր զիս և կամ մեռիր։

ԱՐՏ.— Եթե կնոջմե մը դողայի՝ Արտաշես չէի ըլլար, վատ կըլլայի, թագավոր չէի ըլլար՝ դահիճ կըլլայի... բայց ես իմ դահճուհվուցս կըսեմ «միշտ ազատ ես»...

ՈՐՄՋ.— Մի վստահիր... Արևը հորիզոն մը և կյանքը գերեզման մը, աստղը անկում մը և բախտը անիվ մը ունի... ծաղկին ծոցը արցունք, տերևին մեջ հառաչ, կոհակին մեջ մահ,

խոտի մը մեջ թույն և ափ մը հողին մեջ գանկ մը կամ թաց մը կա... մի վատահիր, կըսեմ, փառքիդ և զորությանդ վրա, երե առանձին գտնես ինքզինքդ՝ քու դռռոզ հրամանդ ու հռչակդ կսպառի վիհերու և լեռներու, անտառներու և դաշտերու անհունության մեջ և ձայներու արձագանքն իսկ զքեզ կծաղրե... ես ալ գեղեցիկ էի, և կխրոխտայի, գեղեցկությունս անցավ, կուզեմ տեսնել քո փառացդ վերջին ցոլմունքն ալ... Արտաշես, ծերութենես ավելի կատեմ զքեզ. շատ անգամ գեղեցիկ ծաղիկները թույն ունին... սըրտերը խունկի կնմանին որ չայրած՝ անուշ և հեշտ հոտ չեն բուրեր, հեռ, ոխ, վրեժ, ատոնք են որ սիրտս կվառեն, ատոնք սիրտ վերջին բոցերն են՝ կմարին, բայց աճյուն մը կթողուն... կնոջ արյունը կոհակ կոհակ կեռա, կնոջ դաշույնը կաթիլ կաթիլ արյուն կքամե... օձի մը պես կսողա... առյուծը կդողա։

ԱՐՏ.— *(սուրը ետեւելով) Ա՛ռ Արտաշեսի սուրը որ մեկ հարվածմը ունի, և տեսնեմ պարսիկ և վրեժխնդիր կնոջ մը հարվածը... Գիտես որ արծիվը օձեն վախ չունի, թեև թույնը կդերազանցե։*

ՈՐՄՋ.— *Ես առ սուրդ, ես դաշույն ունիմ, կինը մրուրյան մեջ կսպաննե որպեսզի օրհասական ոստիկին՝ միայն իր աչերուն փաղփյունը ցուցնե... կմարի կինյա... բայց հարվածը հաջողված է։*

ԱՐՇ.— *Ահա դիշեր, ահա խավար։*

ՈՐՄՋ.— *Քու աչերդ լույս ունին։*

ԱՐՏ.— *Ա՜հ, հանդարտ սիրտ կուզես հարվածել։*

ՈՐՄՋ.— *Կինը չհեշտանար թշնամվույն վերջին հեծեծանքներուվը... միայն անոր մարմինը սառած՝ աչքերը գոց՝ սիրտը դադրած և վրեժը մարած տեսնել կուզե... կնոջ մը սերը խիստ քաղցր է և ոխը խիստ դառն։*

ԱՐՏ.— *Ուրեմն զիս սպաննե՞լ, թե երազել կուզես։*

ՈՐՄՋ.— *Զքեզ սպաննեմ... խոցեմ այն սիրտը որ երբեմն իմ լանջքիս վրա կբաբախեր, ո՛չ, սիրո հիշատակը արցունք մը ունի, արցունք մը կինը կուժաթափե, կհաղթե... մի՛ խռովիր Արտաշես, ահա կբաժնվիմ քեզմե, փառք կսպասի քեզի, իսկ մահ՝ ինծի։*

ԱՐՏ.— Ճիշտ հիմար մ'է (բարձր) այն որ չվախնար կվախցնես։
ՈՐՄՋ.— Թագավորին և գեղջկուհվույն մեջ սուր մը, թագ մը կամ վիհ մը կա, տեր արքա, քիչ մը հառաջ վրեժխնդիր մ'էի, հիմա կին մ'եմ... Թագուհի չեմ, դարձյալ գեղջկուհի մ'եմ... մնաս բարյավ... (մեկնուսի) կտեսնվինք... գուցե քիչ մը հաքը... Արշեղ կամ ես... ես... (կը մեկնի)։

Տեսիլ Գ

ԱՐՏԱՇԵՍ (միևնակ)

Վայրկյան մը դողացի, կնոջ մը աչերուն փաղփյունը սոսկալի է...Որմզդուխտն է, կսիրեի դինքը... վեհանձնություն ունենալ կվիրավորի, երբ կին մը զարնեմ, տկար ոճ գողտր արարած մը... և ինչո՞ւ պիտի կասկածիմ, աղեկ գիտեմ որ խենթեցած է, սիրո հիմար մը. կխոսի, այլ ընդհորհիր... բայց դեռ առավոտ չըլլար և ես չեմ կրնար ննջել... Խոսրով դեռ չերևցավ... գուցե հիմա բանակը եկած ըլլա...(կմեկնի)։

Տեսիլ Դ

ԱՐՇԵՂ (միևնակ)

Ի՜նչ թշվառական մ'եմ ես, հայր չեղած դահիճ պիտի ըլլամ... բայց մայր ունիմ, պետք է որ երդումս գործադրեմ և երթամ մորս հետ գեղջկական կյանք մը վարելու, ինչ սուղ է այդ կյանքը... երեք օր պայմանաժամ տվավ. առտու ըլլալուն միջոցը պիտի լրանա... վատ մը պիտի ըլլամ... ահա վրանը, գլուխ մը որ մեկ հարվածիս կըսպասե... նա իմ հայրս չէ, այլ զույգ մը տատրակի որսորդ... թեպետև քույրս էր, սակայն դինքը կը սիրեի... Արտաշամա՜ն... մայրս չտեսա որ պայմանաժամը հապաղեի, բայց ստիպված եմ օր մը Արտաշեսի դժգույն գլուխը իրեն ներկայացնելու... Թող այս գիշեր ըլլա... (դեպի վրանը կմոտենա և մտիկ կընե) ձայն չկա, կը քնանա անշուշտ... կը դողամ... (ներս կմտնա, վայրկյան մը լուռ կդիտե) ահ, հոս չէ, հիմա արևը կծագի... (նվաղյալ բազմոցի մը վրա կիյնա) Արտաշամա՜... անգո՜ւթ մայր...

(գլուխը ձեռքերովը կծածկե և կընկողմանի. վայրկյան մը տեսարանը պարապ):

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆ և ՈՐՄԶՂՈՒԽԱՏ

ՈՐՄԶ.— Բոցեղէն մըրիկ մը զիս հոս կենտեւ միշտ... Արտաշեսի արյունը դաշույնս կքաշե, մեղք է Արշեզ. թող մարդասպան չըլլա, ո՞ւր է հիմա արդյոք... կխոկա... միթե վրա՞ն է թագավորը, կնիրհե՞... զիս ծաղրեց, խենթ կարծեց, անցյալը ուրացավ, նախատեց, վրեժ, արյուն... թող թավալի հույսերու պատրանքին կամ պատանքին մեջ... փառք և սեր իրարու ոսոխ հանդիսացան... վայրկյան մը գոց աչքերը ինձ համար բավական են... (վրանին կմոտենա և մտիկ կընե) քնո շնչառություն մը կլսեմ... վերջինը պիտի ըլլա... (զգուշությամբ ետս կսպրդի) ահա կքնանա... ինքն է, Արտաշես... հարված մը... (կը զարնե):

ԱՐՇ.— Ա՜հ... (կսթափի և խոժոռ մայրը կդիտե) անիծյալ (կմեռնի):

ՈՐՄԶ.— Արշեզ... (սարսափած կբարձրանա) Ջավակս... (կզրկե) մեռավ զիս անիծելով... վրեժխնդրությանս համար աղոթք մը չմրմնջեց... սոսկալի է այս... ահա վրեժխնդրության բոց մ'ալ... կպապակիմ, ծարավի եմ... կաթիլ մը արյուն ոսոխիս սրտեն... ոխերիմ բախտ, զավակիս արյունը շուղեցի... (ճակատը արբելով) չըլլա որ ճակտիս ցայտե... ջնջեմ որդեսպան ստունը... զինքը վրեժխնդրության համար անուշի, եթե ոչ կջնջեի սիրադրուժի մը հիշատակը... Բայց դեռ ես կյանք և վրեժ կշնչեմ... դեռ կրնամ սպանել Արտաշեսը:

ԱՐՏ.— (դրսեն) Ուրեմն չեն խոնարհիր...

ՈՐՄԶ.— Ինքն է... բախտ և խաւար, ինձ կրթնեցեք... (կմեկնի):

Տեսիլ Զ

ԱՐՏԱՇԵՍ, ԽՈՍՐՈՎ

ԽՈՍՐ.— Երթեք, տեր արքա, չկրցա վերջապես քու փառացդ ճաճանչներովը Կրյուսոսի աչքը շլացնել:

ԱՐՏ.— Լավ, լավ, արյուն կուզեն։

ԽՈՍՐ.— Սուրին շողյունեն չեն զգուշանար, տեր արքա, պետք է որ հարվածը զգան իրենց կուրծքերը... ժայռի մը վրայեն խաղաղ օվկիանոսը կդիտեն անտարբեր, պետք է որ հուզին կոհակները և այն ապաստանարանը ողողեն, մա՛ռ անխոհեմներուն...

ԱՐՏ.— Ահա արշալույսը կծագի, կժժգունին աստղերը՝ Կրյուսոսի պարտությունը նախազգալով, և լուսինը շառագունած արևմուտքը կխոնարհի գույժ տալու... ահա սոխակներն առաջուց Հայկյան հաղթությունը կնվագեն... հիմա Արևը կծագի... պիտի քալենք... (փողը կենչեցնե. զորքերը ճեռեն ցատկելով կպատրաստվին և տեսարանին վրա կուգան կշարվին։

Տեսիլ Է

ՆՈՒՅՆՔ, ՎՐՈՒՅՐ, ՋՈՐԱԿԱՆՔ և ԱՅԼՆ

ՎՐՈՒՅՐ.— Տեր արքա...

ԱՐՏ.— Կրյուսոս արյան մեջ կփնտռե հաղթությունը, Վրույր...

ՎՐՈՒՅՐ.— Ջհոնարհելու կհանդգնին... մի զարմանար, տեր իմ, Կրյուսոս սարսափելի գոռող մ'է։

ԱՐՏ.— Ես ալ գոռողները կչախչախեմ... օն անդր, զորականք, մերկացուցեք սուրերնիդ Կրյուսոսի կենացը, լարեցեք ձեր արևաքող նետերը Լյուդիո փառացը... օ՜ն, փառաց դարու մեջ կցոլաք. ճանչցուցեք աշխարհի թե հայ եք... Հսկա Մասիսի հսկա զավակներ, սարերեն բղխող հսկա կոհակներ... արձանացեք... արձանացեք սպառազեն... նեցուկ է մեզի բախտը, մեր թշնամյաց գլխուն կսպառնա լախտը... Հայ ընենք Արևմուտք, հայ ընենք տիեզերքը, հայ ընենք Հայաստանը... Հայ հաղթենք, հայ պարծինք, հայ սիրենք, հայ մեռնինք... մեր վրա կդարաձվին ահա Մասյաց շուքերը... Միթե ձեր աղիքներու մեջեն չեք զգար անհաղթելի զորություն մը, բուռն հարված և հաղթանակ։

ՎՐՈՒՅՐ.— Տեր արքա, հայուն պատերազմի մեջ ապառաժ սիրտը չհանդուրժեր այս ժամուս, և փառաց գագաթեն կուզե թավալիլ անհուն թշնամյաց գերեզմանի վեմ ըլլալու։

ՀՈՍՐ.— Հայուն սիրտը կփշրի, տեր արքա, բայց սուրը՝ երբեք։
ՋՈՐՔ.— Հաղթենք, հաղթենք։
ԱՐՏ.— Սուր և հարված, սիրտ և քաջություն... օ՜ն անդր հա-
ռա՛ջ... կորչումք Այրարատա...

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Ի փառագոռ փանդռանց ի օդինդ
Թուրգմյան գոռ գոռին ի բինդ
Սահռահարսափ տան արծակաւիք
Օձար ափուկիր, դոզդոջեն գանգ։

Ճանճանչի բուռ բոց, հոնչյուն նետից,
Աւհասմոզ փոշիի հետից
Բավ են ի մահ ոսոխաց վոս,
Տեղի տուէ հայ գընդին անճաղր։

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՉՆԵ)

Ա. ԲԱՐՎԱՆ Դ

ՄՈՎԵՔՐ

ՏԵՍԻԼ Ա.

ԿՐՅՈՒՍՈՍ, ԿԱՄԱԴՐՈՍ, Զորավարք, Զորականք, Նավաստիք.

ԵՐԳ ՄՈՎԱՅԻՆ

Ահա աւուն ոսկեվառսիկ
Կը փոզփոդե գալյոմ*) ծրփին,
Եղբայրմ հաղր հաչ. ինչո՞ւ սառսինմ
Մեր բռնամիմն ալ սիրտ ունին:

Մեր եռակներն ունին աչյուն,
Մեր սաւերը մահու հարված,
Մեզ համաք է փառմ, հաղրություն,
Թշնամին մեզ չկչել չանաց:

ԿԱՄ.— Տե՛ր արքա, ահա կսկսի երկինքը ամպոտիլ, հեռավոր հորիզոններեն ցոլմունք կտեսնվին, փոթորիկը պիտի պայթի, Պոսիդոն մեզի հետ է, օն, թշնամիները պիտի չանթահարե։

ԿՐՅՈՒՍ.— Կամադրոս, այս սև ամպերն Արտաշեսի բանակին ստվերն են և այս լուսաերն ու ձայները Արտաշեսի ծիծաղները... խնդացեք, ո՜, հայեր, քիչ մը հաքը պիտի լաք, Լյուդական ալիները ձեր արցունքը պիտի ծծեն և կարմիր կոհակներ պիտի թավալին Լյուդական եզերքուն վրա, հեծկլտալու... Արտաշես չզգար որ Կրյուսոս մը կա, Կրյուսոս մը որ Արևմուտքը դողացուց, Արևելյան փառասեր մ'ալ իր թագը փառաց զոհելու կուգա... երկու թագերու մեջ

*) «Ալիքները չուրջը»։

արև մը կա, մինչդեռ երկու սուրերու մեջ՝ ճաճանչ մը... կհաղթահարե այն որ սիրտ ու սուր ունի, կլսե՞ք. Լյուդացիք, Կրյուսոսի փառքը ձերն է, եթե յուր ճակատը դափնյա պսակով մը կպճնվի՝ հյուսողը դուք եք... իմ թագս և ձեր սուրը ահեղ զորությամբ մը իրարու միացած են, մեկը՝ պատկառ, մյուսը՝ սոսկում... զարնենք, հարվածենք մինչև որ ճակատագիր մը որոշվի... հույսը անվրեպ և աննկուն հարված ու հաղթանակ կենթադրե... Աստվածները մեզ հույս տվին, մեր վահանն այն է, մեր նախնիքը մեզ սուր տվին, մեր ուժն այն է. արյան վերջին կաթիլն անգամ թափել, մեր հաղթությունն այն է, եթե քայլ մը ետ երթանք, այն քայլ մը տեղը ձեր անձուկ գերեզմանն է, վայ անոր որ չսիրեր Հայրենիքն ու սուրը, վայ անոր՝ որուն սրուն վերա կցամքին արյան կայլակները, և վայ անոր որ առանց սպանելու կզարնվի, Լյուդացի չէ, վատ է այն։

ԿԱՄ.— Տեր արքա, ահա կոհակները կբարձրանան և դեռ Բրշնամյաց նավերը չեն երևար, անշուշտ Պոսիդոնի անդունդները լափեցին զանոնք։

ԿՐՅՈՒՍ.— Նայե սա կողմը, ծովուն վրա արծվի երամ մը կեռա, անոնք Արտաշեսի նավերն են, կքալեն դեպ ի մեզ երկաթի թևերով։

ԿԱՄ.— Բայց խիստ բազմաթիվ են, տեր իմ։

ԿՐՅՈՒՍ.— Արիություն, Կամադրոս, քիչ մը առաջ գիս կքաջալերեիր։

ԿԱՄ.— Սիրտս չզարներ, ով Կրյուսոս, սուրս կզարնե։

ԿՐՅՈՒՍ.— Պաշտպանենք գահս և Լյուդիան... չըլլա որ այս կատաղի կոհակները զմեզ ոչնչության օվկիանոսը թավալեն. պատմության էջերը չողբան Լյուդիան, այլ արցունքի տեղ մարգարիտներով դրվագվի Լյուդիո ճակատագիրը... Թող Արտաշես ալ վայրկյան մը վարանի իր ճակատագրին վրա... ահ, եթե մեկ մը մինակ գտնեի գինքը դիմացս՝ երազ չէր ըլլար՝ հաղթություն կըլլար, մեկ մը այս նավին բարձրեն տեսնեի իրեն կոհակաց մեջ սուզիլը՝ Արևելք իմս կըլլար... եկեք, եկեք երկու փոթորիկներ իրարու թող զարնվինք։

ԿԱՄ.— Ամպերուն հետ պատրաստ են Աստվածոց շանթերը, տեր

արքա, երբ երկու գունդերը իրարու դարնվին այն ատեն պիտի պոռթկան...

ԿՐՅՈՒՒ.— Ի՞նչ է սա որ կոհակե կոհակ կգլորի... հոն... Կամաքրոս։

ԿԱՄ.— Նավակ մը, դեպի այս կողմը կուգա կարծեմ։

ԿՐՅՈՒՒ.— Չըլլա որ մեր մարդիկներեն ըլլա։

ԿԱՄ.— Գուցե Արտաշեսի կողմեն պատգամավոր կուգա։

ԿՐՅՈՒՒ.— Բայց աղեկ դիտե մեջը նստողը... կին... այո՛, կին մ՚է, կարծեմ, այնպես չէ՞, Կամադրոս։

ԿԱՄ.— Այո՛, տե՛ր իմ... տես կոհակներու սոսկալի գոտի մը նավակին կողին կսպառնա։

ԿՐՅՈՒՒ.— Նայե՛, թևերը բացած մեր օգնությունը կաղերսե։

ԿԱՄ.— Ա՜հ... կոհակը ծածկեց նավակը... ամեն բան աներևույթ եղավ...

ԿՐՅՈՒՒ.— Տե՛ս, գլուխ մը կերևա ալիքներուն մեջ... նույն կինն է, դեպի հոս կհառաչանա լողալով։

ԿԱՄ.— Ի՞նչ արիություն, ո՜վ երկինք... քիչ քիչ կը մոտենա։

ՁԱՅՆ ՄԸ.— Օգնությո՜ւն, օգնությո՜ւն, ես Արտաշեսի թշնամին եմ։

ԿՐՅՈՒՒ.— Սակայն կին մ՚է, ի՞նչ կրնա ընել մեզ... ազատենք։

ԿԱՄ.— Բայց չըլլա որ կեղծ խոսքով մը ազատի։

ԿՐՅՈՒՒ.— Սակայն կին մ՚ է, ի՞նչ կրնա ընել մեզ... ազատենք։

ՁԱՅՆԸ.— Ազատեցե՛ք վրեժխնդիր կին մը... կխեղդվիմ...

ԿՐՅՈՒՒ.— Նավաստի՜ք, օ՜ն, ազատեցեք այդ կինը... (նավաստիները ծովը կնետվին և ինչ մը ետը Ոսմզդուխտը ազատելով նավը կբերեն)։

ԿԱՄ.— Շո՛ւտ ըրեք, խեղճ կնոջ բազուկները թուլցան։

ԿՐՅՈՒՒ.— Մրցեցեք այլակերպ ձուկեր։

ԿԱՄ.— Ահա կհասանին... բռնեցին... ազատեցավ, տե՛ր արքա։

ԿՐՅՈՒՒ.— Զարմանալի է այս, Կամադրոս։

ԿԱՄ.— Դավադրություն մը միայն կվախնամ, տե՛ր իմ։

ԿՐՅՈՒՒ.— Քիչ մը ետքը ճակատագիր մը կորոշվի, ի՞նչ դավ կըլլա, զորապետ... բայց ո՜վ է այս կինը... Արտաշեսի թշնամին... արդյոք Արևելյան թագուհի մ՚է։

ԿԱՄ.— Ես ալ ատոր վրա կզարմանայի, բայց բավական է որ Արտաշեսի թշնամին ըլլա։

ԿՐՅՈՒՍ.— Ա՜հ, եթե հաղթության գաղտնիք մը բերեր իր հետ։
ԿԱՄ.— Մեր սուրը, տե՛ր արքա, հաղթության գաղտնիքն է, մեր հարվածներն ալ՝ հաղթություն... Արտաշեսի նավերը...
ԿՐՅՈՒՍ.— Դեռ հոն են... բայց միշտ կմոտենան։
ԿԱՄ.— Ահա այն կինը, տե՛ր արքա։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՈՐՄԶԴՈՒՀՏ

ՈՐՄԶ.— (ծունր գալով) Ո՜վ թագավոր, ազատեցիր կին մը որ միայն վրեժխնդրության համար կշնչէ, ուրվական մը որ բոցավառ շունչ մը և կայծակի հարված մ'է, սիրտ մը որուն անցյալն է սեր և աղոթք, ներկան հեռ և վրեժ... դու փրկեցիր գերեզմանին բոցերեն վրեժխնդիր կին մը, կին մը, որ Արտաշեսի արյան վտակին մեջ կուզե տեսնել անցելույն հիշատակները, և իր որդվույն պատկերը, իր վերջին արցունքը խառնել այն կարմիր ալիներուն զուգանալ և մեռնիլ... օրհնյա՜լ ըլլաս, ո՜վ թագավոր, ընդունե՛ քու հաղթության և փառաց դրոշակիդ տակ զինվորական կին մ'ալ... թե որ զինավարժության մեջ հարվածել չեմ սորված, սիրտ մեջ սորված եմ հարվածել... կուրծս՝ ասպար, թևս՝ սուր... կընդունի՞ս։
ԿՐՅՈՒՍ.— Ո՜վ անծանոթ կին, դու Արտաշեսի արյունը միայն տեսնել կուզես, ուրեմն, պիտի տեսնես...
ՈՐՄԶ.— Բայց ո՛չ... ես ալ կուզեմ հարվածել...
ԿՐՅՈՒՍ.— Իր դիակը կրնաս հարվածել։
ՈՐՄԶ.— Վատ չեմ ես, արքա, կուզեմ որ հարվածը արյունոտ ըլլա։
ԿՐՅՈՒՍ.— Արյանը մեջ թաթխե սուրդ։
ՈՐՄԶ.— Բայց կուզեմ որ հարվածին տակ վշտագին ձայն մը ըլլա։
ԿՐՅՈՒՍ.— Ուրեմն պատերազմիլ և սպաննե՞լ կուզես։
ՈՐՄԶ.— Այո՛, վրեժ առնել... սուր մը տուր ինձ։
ԿՐՅՈՒՍ.— Առ սուրս (կուտա)։
ՈՐՄԶ.— Օրհնյա՜լ ըլլաս։
ԿԱՄ.— Տե՛ր արքա...
ԿՐՅՈՒՍ.— (առ Կամադրոս) Բայց այս տարօրինակ կին մ'է...

Կամադրոս, գուցե Արեսի մեկ հրեշտակն ըլլա այս մարդկային գծուծ կերպարանոք ծպտյալ... սոսկալի գաղտնիք մը կփալփլի այս կնոջ նայվածքին մեջ։

ԿԱՄ.— *Քիչ մը եաքը Արես հաղթութեան մեջ կգոլա... տե՛ր իմ։*

ՈՐՄՋ.— *Ո՛վ թագավոր, տե՛ս, այս սրույս հարվածին մեջ փայլ մը կա և այն փայլին մեջ թագ մը ու այն թագին տակ դժգույն ճակատ մի պիտի ըլլա... թագը՝ քեզի, դիակը՝ ինծի... կզարմանաս կնոջ այս հարվածին վրա, սակայն կին մը եղիր, սիրե և ատե, սիրո մեջ կյանքդ և ատելութեան մեջ թագդ կուտաս... Արտաշե՛ս, եկո՛ւր, աշխարհակալի մը սուրը ձեռքս և բազուկներ ունիմ բոլորտիքս, սուր և բազուկ որոնք արևներ ծածկեցին և մթագնեցին։*

ԿՐՅՈՒՍ.— *Բայց ո՞վ ես, կին դու։*

ՈՐՄՋ.— *Քու զինվորականդ որ ընդունեցիր։*

ԿՐՅՈՒՍ.— *Այլ անկե առաջ։*

ՈՐՄՋ.— *Արտաշեսի թշնամին։*

ԿՐՅՈՒՍ.— *Արտաշեսի թշնամին չեղած դեռ։*

ՈՐՄՋ.— *Մի հարցներ... մի մտներ, ո՛վ թագավոր, գեղեցիկ անցելյուս թարշամ ծաղկանցը մեջ, որոնց ծոցը դեռ սքողված են սիրո և աղոթքի առաջին և վերջին արցունքները... վրեժխնդրութեան հաղթութեան՝ սուրի և մահվան վրա խոսե... տեսեք, կմոտենա Արտաշես... սակայն չդողաք... պիտի հաղթեք, անոնք ալ սիրա, դուք ալ սիրա, անոնք ալ սուր՝ դուք ալ սուր, անոնք ալ թագ՝ դուք ալ թագ, անոնք ալ մահ՝ դուք ալ մահ, և երկուքնիդ ալ միանգամայն երկինք ունիք, բայց Կրյուսոս իր անհուն բանակին մեջ ավելի զինվոր մ'ունի...*

ԿԱՄ.— *Կին դու, եթե երկնից աստղերը և այս կոհակներն ալ զինվին մեզի դեմ, Կրյուսոս և իր բանակը դարձյալ զենք և զրահ կգոլացնեն անոնց դեմ... Արյո՞ւն փառաց համար, ինչվան հիմա շատ ազգեր զինվեցան մեր դիմաց, բայց իրենց դիակներն ու սուրերը խրեցան լյուդական եզերքներուն վրա առանց իրենց եաևեն հեծեծանք մը ձգելու։*

ԿՐՅՈՒՍ.— *Պատասխան տվեք, երկինք և երկիր, Արտաշես մեռնելո՞ւ կուգա։*

ՈՐՄՋ.— Իր դահիճը պատրաստ է սուր ի ձեռին։

ԿԱՄ.— Իր գերեզմանը ամեհի կոհակ մը։

ԿՐՅՈՒՍ.— Ձայն ավեք, Աստվածներ, Արտաշես հաղթելո՞ւ կուգա։

ԿԱՄ.— Արդեն հաղթության պատգամ որոտացին Աստվածները, տեր։

ԿՐՅՈՒՍ.— Ճշմարիտ է, Կամադրոս... օ՛ն, կմոտենա թշնամին, միշտ կքալե դեպ ի մեզ, շողան սուրերը, չդեղնին ճակատները, չդողդոջե՛ն թևերը... զորականք, հարված և հաղթանակ... վախը ձեր վատ դահիճն է, ի բաց վանեցեք սրտի ծալքերեն... հույսը ձեր երկրորդ կյանքն է... կպարզեն ահա թշնամիք իրենց դրոշակները, պարզենք մենք ալ մեր ճակատն ու սրտերը։

ՈՐՄՋ.— Չինվորական կինը չդողար, իսկ դո՞ւք, արի՛ կյուդացիք։

ԿԱՄ.— Երբե՞ք։

ԿՐՅՈՒՍ.— Տեսե՞ք... հոն թշնամին, հոս մենք. երկու դնդի միջ՝ երկու ազգաց փառազարդ սովերները կմենամարտին, գերեզման և անմահություն... չտապալի անմահությունը... ով որ կսիրե զայն Թող մեռնի Հայրենյաց բաբախուն ծոցը... կյուդացիք, այսօր չհաղթվինք հայեն, վաղը մեռնինք։

ՈՐՄՋ.— Արտաշեսի գերեզմանին առկայծյալ ջահերուն հետ թավալիլ... կսիրեմ...

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅՈՑ

(Նախ ճեռվեն կլսվի և կշարունակվի միչև որ տեսարանը մտնեն)։

Հայկաձ արի հըսկայր, արիր,
Հելլենական կուլաձ ալիր,
Նո՛ա նվաց գրծուած բանակ
Մեզ կավետեն փառք հաղրանակ։

Մեդ թող առնկան բե մեր հայ եմք.
Ազատ Մասյաց ֆաջ հսկա եմք.
Թող ծածանի փառաց դրոշակ,
Խաենք, համենք, արյան բաժակ։

ՆՈՒՅՆՔ, ԱՐՏԱՇԵՍ, ՎՐՈՒՅՐ, ԽՈՍՐՈՎ, ՋՈՐԱՊԵՏՔ, ՋԻՆՎՈՐՔ ԵՎ ԱՅԼՆ (Սույն երգը երգելով նավերով տեսարանը կմոռնեն.—պատերազմի սկսելու նշաններ կըլլան,—երգը ինչվան վարագույրը գոցվելուն կշարունակվի.—որոտմունք, կայծակ և խավար)։

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

ՍՐԱՐՎԱԾ Ե

ՊԱԼԱՏ

Տեսիլ Ա.

ԱՐՏԱՇԵՍ, ՎՐՈՒՅՐ, ԽՈՍՐՈՎ, ԹԻԿՆԱՊԱՀՔ, ՅՈՐՔ

(տեսարան կը մտնեն)

ԱՐՏ.— *Վերջապես Լյուդիո փառաց վերջալույսն ալ գեղազարդեց Հայկական թագը և արևմուտքեն հուսո աստղեր բարեվեցին Արտաշեսի հսկա քայլերը, խորտակեցան բանակները՝ ինչպես կատաղի կոհակներ որ սեպացյալ ժայռի մը ստորոտը փշրելով տխուր մրմունջ մը կթողուն իրենց ետևվեն... Լյուդիա վերջին հառաչանք մը ուներ՝ թնդաց նա դերեզմանաց և ամայի պալատներու կամարներուն տակ... զարհուրեցա՞ք և դուք, սուվերք թագավորաց Լյուդիո, որ հոդ սպառազեն քանդակված արձանացեր եք... կործանեցեք՝ եթե ամոթ կզգաք, լացեք՝ եթե արցունք ունիք, հեծեցեք՝ եթե շունչ ունիք... դեռ երեկ թագավորներ ձեր սուվերին տակեն կանցնեին պատկառանոք, այսօր խրոխտ ճակատ մը կխնդա ձեր վրա, և ձեր հիշատակը ձեր կոթողներուն ավերակին և գահերուն աճյունին ներքև կթաղե... բայց ինչո՞ւ կուշանա Կրյուսոս ալ շղթայակապ իր նախնյաց սուվերներուն առջև ծնրադրելու դահճին տապարին տակ։*

ԽՈՍՐ.— *Տե՛ր արքա, Կրյուսոս խնդրեց որ զինքը մեհյանը տանին վայրկյան մը աղոթելու կամ գուցե իր անցելույն վրա արտասվելու համար... այն թևերը որ վարժված են գեղե-*

ցիկ և վսեմ առարկաներ գրկելու, հիմա երկաթե շղթաներ կկրեն, այն գլուխը որ միայն փառաց ու ծաղկանց մեջ կհանգչէր, քիչ ատենեն անարդ երկաթի մը հարվածը պիտի զգա, վերջապես այն որ կյանք ու մահ կհրամայեր արդ ստրուկ պիտի մեռնի... միթե չողբա՞, տեր արքա, միթե չարտասվե՞ս:

ԱՐՏ.— Թող լա... փառաց մեջ նշույլ և արցունք միանգամայն կշողշողան... ես փառասեր չեմ, այլ փառասերները կջախջախեմ... այս սուրը թագերե փառք չքամեր, այլ Հայաստանի ազատ ապագան կքաղե... քաջդ Վրույր, այս հաղթությունը քայլ մ'էր դեպի տիեզերք. Հայաստանի պիտի դարձնեմ բոլոր աշխարհ:

ՎՐՈՒՅՐ.— Եվ Հայաստան ալ իր փառքը քու քայլերուդ և գերեզմանիդ մեջ պիտի ամփոփե, ո՛վ թագավորաց վեհագույնը... Հայաստան իր անտառներուն մեջ չունի քու հաղթությանդ հավասարելու չափ դափնի, Հայաստանի երկինքը չունի քու փառդ վարձատրելու չափ աստղ, այլ Արտաշես՝ փառաց մեջ և փառք՝ Արտաշեսի մեջ:

ԱՐՏ.— Արշեղր հիշեցուցիր ինձ, Վրույր, նա ալ այսպես կխոսեր հաղթությենե վերջը... բայց կզարմանամ թե ի՞նչպես հանկարծ աներևույթ եղավ իմ քաջ զինակիրս:

ՎՐՈՒՅՐ.— Վեհափառ տե՛ր, այն դիշերը որ անտառի մեջ բանակնիս իջևանած էր, զինքը արյան լճակի մը մեջ անշընչացած գտանք Արքունի վրանիդ մեջ, քովն ալ արյունոտ դաշույն մը:

ԱՐՏ.— Ո՛վ երկինք...

ՎՐՈՒՅՐ.— Եվ գաղտուկ փոսի մը մեջ թաղեցինք զինքը, զգուշանալով թագավորիդ իմաց տալու որ կրնար շատ ցավ զգալ:

ԱՐՏ.— Ճշմարի՞տ կըսեք:

ՎՐՈՒՅՐ.— Անշուշտ, տեր իմ:

ԱՐՏ.— (մեկուսի) Դեռ կսիրեր Արտաշաման... (բարձր) Ուրեմն չորցավ Արտաշեսի ճակտին մեկ դափնին, վերջապես կորսնցուցի այն սուրը որ պատերազմի դաշտին վրա անխոնջ կուրծս կպաշտպաներ... խեղճ Արշեղ... (մեկուսի)

զավա՛կս... (բարձր) Արդ բոլոր Լյուդիա հուսամ խաղաղեցավ, այնպես չէ՞, քաջդ Վրույր։

ՎՐՈՒՅՐ.— Այո՛, տե՛ր իմ, գրեթե դիակ և գերի, ողբ և արյուն, սուրի բեկորներ և փլատակ, միայն ասոնք մնացին Լյուդիո երկնքին տակ։

ՆՈՍՐ.— Եվ միանգամայն սարսուռ ու դատապարտյալ թագավոր մը։

ԱՐՏ.— Ա՜հ, ինչո՞ւ կփախչիս Հորիզոնին տակ, Արև, ինչո՞ւ կատնիս նախանձոտ ճառագայթներդ, կեցիր քիչ մ՚ալ և թագավորի մը դիակին վրա վերջին ճանաճչ մը՝ վերջին նայվածք մը ձգե, դեռ վայրկյան մ՚ալ կրակ դառնան ճակտիս դափնիները քու կարմիր ճաճանչիդ տակ և օրհասական Կրյուսոսի քինախնդիր նայվածքը այրեն... կեցիր դեռ, ուրիշ տիեզերք մը հանդիսատես չի պիտի ըլլա այսպիսի փառավոր հաղթության և գլխատման... Կրյուսոս դեռ չերևար...

ՆՈՍՐ.— Ոտքի ձայներ կլսվին, արքա՛ քաջ։

ՎՐՈՒՅՐ.— Ահա կբերեն, տե՛ր արքա։

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ, ԿՐՅՈՒՍՈՍ, ՈՐՄԶԴՈՒԽՏ՝ գերիք շղթայակապ։

ԱՐՏ.— (մեկուսի) Որմզդո՞ւխտ...

ՈՐՄԶ.— (մեկուսի) Կզարմանա... կամ չէ տեսեր կամ մեռած կկարծեր։

ԱՐՏ.— Հառաջ եկու, ո՛վ Կրյուսոս, նախնյացդ սովերները արյանդ հեղեղը տեսնել կուզեն, անոնք կատեն զքեզ և կողբան Լյուդիո բախտը... չես համարձակիր նայիլ, քու դասկոտ նայվածքդ կհաղթվի անոնց քարե նայվածքեն, Լյուդիո հառաչանքը գերեզմանի քարե մը ավելի ծանր և որոտընդոստ թավալեցավ կթող ծնկացդ վրա... շղթայիդ շառաչյունը արթնցուց նախնյացդ կմախքները հավիտենական փոսերեն, որոնք հետկլտան փլատակաց խորշերը... մրրիկներ կվանեն Լյուդիո հողեն գահուիդ աճյունը... վերջապես Լյուդիո դամբաններն ու որորցները կատեն զքեզ և պիտի ատեն հիշատակդ... սակայն սիրտ առ,

Կրյուսոս, մի դողար մահվանե, ժպտե գոռոզաբար, ինչպես երբեմն գահիդ վրա... այլ ո՛չ... միթե գա՞հ է վատին համար գերեզմանը։

ԿՐՅՈՒՍ.— *Շղթա կրողը վատ չըլլար, Արտաշես, գուցե գահին վրայեն զայն ծաղրողը... մի՛, մի՛ խրոխտար, ո՛վ թագավոր, այդ գահն ալ դագաղ կըլլա երբ մթութեան նենգութեան կամ հաղթութեան մեջ բազուկներ չորս ոտքերովը կրեն զայն օդին մեջ... մինակ ես չէ, այլ այդ սիրտն ալ կուլա՝ այսպիսի անակնկալ հարված մը երբ զգա, հարված մը՝ որ ինքնակալը վայրկեանի մը մեջ թագե, փառքե և կյանքե կը զրկե։*

ՈՐՄԶ.— (Ցած առ Կրյուսոս) *Սի՛րտ առ, ո՛վ թագավոր, քենե եղբը վրեժ մ՚ունիս, դեռ չմեռած դիս առանց շղթայի պիտի տեսնես։*

ԱՐՏ.— *Եվ դու կմոռնաս որ ես Արտաշես եմ։*

ԿՐՅՈՒՍ.— *Ես ալ Կրյուսոս էի... Ձեռքս մական ունեի երբեմն, արդ շղթա կկրեմ։*

ԱՐՏ.— *Այլ ես իմ թշնամիս արթուն, զորավոր և սուր ի ձեռին հաղթեցի։*

ԿՐՅՈՒՍ.— *Սակայն գուցե քենե տկար մը օր մը զքեզ անշշուկ գահիդ գամն փոքր դաշույնով մը՝ գողտր ձեռքով մը...*

ՈՐՄԶ.— (Մեկուսի) *Այն անծանոթ դահիճը ես պիտի ըլլամ...*

ԱՐՏ.— *Վատ է այն։*

ԿՐՅՈՒՍ.— *Սակայն կսպաննե, մութի մեջ, դեմքը չես տեսներ։*

ԱՐՏ.— *Ով Կրյուսոս, գեղեցիկ երազներով օրհասդ ամոքե՞լ կուզես, կտեսնե՞ս դահիճը (կցուցնե) պատրաստ եղիր...*

ԿՐՅՈՒՍ.— *Գթութի՛ւն, ով թագավոր, շնորհե՛ կյանքս։*

ՈՐՄԶ.— (Ցած առ Կրյուսոս) *Սիրտ առ... դեռ թագավոր ես։*

ԱՐՏ.— *Ի՞նչ պիտի ընես կյանքը... հո՞ւյս մը կնշմարես։*

ԿՐՅՈՒՍ.— *Սակայն... չեմ ուզեր... կտեսնե՞ք ով իմ հարցս ուրվականները, կլսե՞ք... ինչո՞ւ լուռ և անշարժ արձանացեր եք. ձեր նայվածքները կարծես թե կենդանի են, իսկ ձեր սուրերը չեն փայլատակեր, գոնե ընկեք, կործանեցեք հափշտակչին գլուխը ջախջախելու... Ձեր սովերին տակ դահիճ մը կպահեք որ այս նվիրական պալատը Լյուդիո վերջին թագավորին արյամբ պիտի ողողե և Լյուդիո հետին*

շունչը այս կամարներուն և ձեր շուքին տակ հեկեկալով պիտի սպառի, ելե՛ք, զե՛նք առեք, սավե՛րք դյուցազանց, վրե՛ժ ժայթքեցեք անոր դափնեզարդ գլխուն որ հաղթական քայլերով ձեր դամբանները կկոխկռտե... կրակ թափեցեք երե նայվածք ունիք, մահ սփռեցեք երե շունչ ունիք, ձայն տվեք երե ձայն ունիք... ո՛վ դիք, ո՞ւր են ձեր կայծակները... ա՜հ, մեկը սուր մը, հույս մը չբերեր ինձ... ուրեմն Աստվածք և սավերք, անիծյա՜լ ըլլաք։

ԱՐՏ.— Դեռ սպասե՞ դահիճը. ո՞վ Կրյուսոս... ահա արևը անեռևվութացավ արդեն, վաղը իր առաջին ճառագայթը գերեզմանիդ վրա պիտի ցողե... կդողա՞ս մահվանե։

ԿՐՅՈՒՍ.— Արդեն այս շղթաները և այդ ծիծաղները մահեն ավելի սոսկալի են... Թույլ տուր օրհասականին, Արտաշես, որ խոսի... կմտածեմ թե դեռ ո՞վ մնաց աստելու և անիծելու համար... ի՞նչ ընեմ... պիտի մեռնիմ... պիտի մեռնիմ գերեզմանիս վրա արյունոտ սև շղթա մը, փոխանակ ծաղկանց և ջահերու... ա՜հ, կզգամ որ մեկը միայն մնաց օրհնելու համար, Աստվածները անշուշտ անոր անմեղ արյան վրեժը լուծեցին... զքեզ Սողո՞ն, Սողո՞ն, դեղեցիկ խոսեցար...

ՎՐՈՒՅՐ.— Տե՛ր իմ, նոր Աստված մը կկանչե։

ԱՐՏ.— Ո՞վ է այդ Սողոնը, Կրյուսոս...

ԿՐՅՈՒՍ.— Ո՞վ Արտաշես, այս վայրկենիս միայն Սողոնը և դահիճը կսիրեմ։

ԱՐՏ.— Քեզի կհարցնեմ, Կրյուսոս, թե ո՞վ է այդ Սողոնը որ կօրհնես։

ԿՐՅՈՒՍ.— Գոռոզներու թշնամին, Արտաշես։

ԱՐՏ.— Խոսե՛։

ԿՐՅՈՒՍ.— Ես ալ երբեմն այդ գահին վրա էի, շղթայակապ թագավորներ, հաղթությյան ճոխությյուն, փառք և գեղեցկությյուն կպատեին զիս, կը ցոլայի լուսնո մը պես անթիվ աստղերու մեջ... օր մը Սողոնը կանչեցի և ըսի իրեն. «Սողոն, ինձմե ավելի երջանիկ մարդ կա՞ աշխարհի վրա, նա ալ պատասխանեց. «Ո՞վ թագավոր, մարդուս երջանկությյունը անհիմն է»... կրակ կտրեցա այս կարծր պատասխանին վրա և իր մահը որոտացի... մեռավ նա...

գերեզմանը անհետացավ, բայց իր վրեժը վառ մնաց ճակատիս վրա Աստվածային շանթի մը պես, փառաց հեղեղը ինձ անոպա ժայռերու վրա նետեց... ժայռերը սիրտ չունին... Արտաշես, ո՞ւր է դահիճդ։

ԱՐՏ.— Չի պիտի մեռնիս։

ԿՐՅՈՒՍ.— Մի՛ ծաղրեր ինձ անգթաբար, Արտաշե՛ս, կուզեմ մեկ հարվածով մը մեռնիլ... այդ կատակներդ դուլ սուրերու հարվածներ են։

ԱՐՏ.— Կազատեմ զքեզ մահվան ճանկերեն, ուակից շատ կդողաս։

ԿՐՅՈՒՍ.— Ալ բավական է... ո՞ւր է դահիճդ...

ԱՐՏ.— Դեռ չի պիտի մեռնիս։

ԿՐՅՈՒՍ.— Բայց ո՞ւր է դահիճդ։

ՈՐՄՋ.— (ցած առ Կրյուսոս) Դեռ ապրե...

ԱՐՏ.— Ջորականք, զինքը ստորերկրյա բանտ մը տարեք, նույնպես այս բոլոր գերիներն ալ ուրիշ բանտեր։

ՈՐՄՋ.— (նույնպես) Քեզ գահդ կտանին... Գնա... (ամենքն ալ կտանին)։

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ, ԲԱՑԻ ԿՐՅՈՒՍՈՍԷՆ

ՈՐՄՋ.— (չուզելով մյուսներուն հետ բանտ երթալ) Ո՛վ թագավոր...

ԱՐՏ.— Քակեցեք այդ կնոջ շղթաները և ազատ թողեք, նախատինք է մեզի կնոջմե մը վրեժ առնել որուն հարվածը վարդ մ'անգամ չկրնար փթթեցնել (շղթաները կբակեն)։

ՈՐՄՋ.— (մեկուսի) Դեռ կտեսնվինք Արտաշես... (կերթա.— տեսարանին վրա կսկսի ֆիշ-ֆիշ մուրը կոխել)։

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ, ԲԱՑԻ ՈՐՄՋՂՈՒԽՏԷՆ

ԱՐՏ.— Օ՜ն ուրեմն, դո՛ւք ալ, հաղթական զինակիցք իմ, գացեք հանգչելու դափնյա անկողնոց վրա զոր հաղթությունը ձեզ համար հարդարեց. ահա եկավ գիշերը իր անհուն աստղերով ձեր հաղթական ճակատներուն գեղեցիկ հովանի մը

ըլլալու... գիշերները երկնքին երեսեն թռչող ու ինկնող աստղերը՝ ազգերու բախտերն են որ Հայաստանի գոգը կթափվին... Արշալույսին առաջին ճառագայթներուն դարձյալ կքալենք, հաղթական քայլ մ'ալ դեպի տիեզերք...

ՎՐՈՒՅՐ.— Տե՛ր արքա, գիշերները դարերք կթվին։

ԱՐՏ.— Լյուդիո հետին հեծկլտանքները զմեզ կօրորեն։

ՀՈՍՐ.— Սակայն, տե՛ր արքա, սուրերը չեն ուզեր իրենց պատյանին մեջ նիրհել։

ԱՐՏ.— Ճշմարիտ է, ոազմիկին սուրն ալ սրտին հետ կբաբախ... այսու ամենայնիվ հանգիստն ալ փառաց սովերն է... փոթորիկեն ետքը, կտիրե լռիկ հանդարտություն... մինչե՞ք կրնար նիրհել արյան հեղեղներու քով... ահա միայն այս գիշեր ձեզի կթողում բանակին հսկողությունը, քաջքդ իմ... այս գիշեր Արտաշես պիտի ննջե փառաց մրմունջներու մեջ... լավ հսկեցեք բանակը, զգուշ կեցիք, դեռ երկինքը ամպոտ է... (կմեկնին ամենքն ալ,—պալատականք սենյակին աջտանակները և կաթեղեները կվառեն.— երկու պահնորդ կկանգնին սենյակին միջնական դռանը բով)։

Տեսիլ Ե

ԱՐՏԱՇԵՍ ՄԻՆԱԿ

Պահնորդք, աղխեցեք դռները, և գացեք դուք ալ հանգչելու... (պահնորդք դուռը կաղխեն և կերթան) *Սողոնի խոսքը և Կրյուսոսի անկումը դրեթե զարհուրեցուցին զիս... գիշերվան խավարին մեջ կկերդոնանան մրցքերը, աշխարհային սոսկումները... գիշերն իր լռության մեջ կարծես թե ձայն մ'ունի, որ կհծծե. «կանցնի մարդը, կանհետի վարդը շուքի մը պես... կանցնի փառքը, կմարի գերեզմանի կանթեղի մը պես... կսահի, կանհետանա արյան հեղեղներուն հետ... կնվաղին օր մը մարդկային փայլերը. կնսեմանա գեղեցկությունը վշտին մեջ, փառքը՝ պարտության մեջ, ճոխությունը՝ բախտին մեջ...» ինչո՞ւ կծանրանաս սրտիս վրա, ո՛վ գիշեր, ունայնության պատանքով, նախանձու կայծերով, անցավորության կո-*

հակներով, եղերդութեան հծծանքով և գերեզմանական սուլերով... դու դահիճ մը՝ միայնութիւնը տապար առած կուգես դողացնել, կուգես որ հառաչ մը թռի Արտաշեսի շրթներեն... այլ դեռ գլխուն վրա կցոլան Լյուդիո փառաց ջահերը և անոնց ճաճանչովը կտեսնեմ որ լոկ սուլեր մը, հառաչ մը, երազ մ'ես, և ճառագայթ մը քու դահճիդ... այդ աստեղազարդ երկինքը՝ Արտաշեսի տիեզերակալ ծիրանին պիտի ըլլա... ոտքերուս տակ դեռ շնչասպառ դիակներ կհեծկլտան... թող որ դափնյա շուքին տակ հանգչի Արտաշես (բիկնաբոռի մը վրա կբազմի) աչքերս կգոցվին... ի՜նչ քաղցր ես քո՛ւն, հաղթական պատերազմներով խոնջյալ ճակատի մը համար... (աչքը կգոցե.— տեսարանը վայրկյան մը պարապ կմնա):

Տեսիլ Ա

ՆՈՒՅՆ և ՈՐՄԶԴՈՒԽՏ

ՈՐՄԶ.— (Գաղտնի դուռ մը բանալով) *Կրյուսոս աղեկ ցուցուց... ճիշտ իր սենյակը հանեց այս գաղտնի դուռը...* (զգուշությամբ ետևաչ կուգա) *հոն է, կքնանա... կտապլտկի փառահեղ երազներու մեջ... չգիտե թե օձ մը մթության մեջ զինքը կմտածե և օր մը պարանոցը պիտի փաթթվի, դուն այս վայրկենիս, մինչդեռ առյուծը կննջե կխորդա... Արտաշես պիտի մեռնի, ես թագուհի պիտի ըլլամ, և իր գերեզմանը պիտի ընեմ առագաստս և գահս... Արտաշես արծիվ էր, այս վայրկենիս թևեր չունի... մեկ հարվածի մը ներքև սուլեր մ'է անշշունչ և պիտի անհետանա գիշերվան մութին մեջ... չեմ երազեր, Արտաշես գրեթե դիակ մ'է... հոս է գահս անոր վերջին շունչին մեջ, գոց աչքերուն, հանգարտ սրտին և այս դաշույնին վրա... հոս է թագս Արտաշեսի արյան վառ ալյացը մեջ... կինը մթության մեջ կսպաննե...* (նրագները մեկիկ մեկիկ և յուրահանչյուրին կանգ առնելով զգուշությամբ կմարե.— վերարկուին տակեն լապտեր մը կհանե, կամաց կամաց Արտաշեսի կմոտենա, լապտերը նորեն կպահե... կզարնե

սրտին և բանի մը բայլ ետ կերթա կատաղի նայվածքով)։

ԱՐՏ.— *Ա՜հ...* (դողդոջուն ոտքի ելնելով) *ո՞վ էր այն...*

ՈՐՄՋ.— (լապտերն իր դեմքին բռնելով) *Տե՛ս...*

ԱՐՏ.— *Որմզդո՜վատ... միշտ դո՜ւն...* (կիյնա)։

ՈՐՄՋ.— *Կին մը որուն հարվածը ո՛չ թե վարդ, այլ վարդագույն արյուն կփթթեցնե։*

ԱՐՏ.— (մարած ձայնով) *Օգնությո՜ւն...*

ՈՐՄՋ.— *Տեսե՛ք... Արտաշես մը կնոջ մը դիմաց օգնություն կկանչե։*

ԱՐՏ.— *Վա՜տ...*

ՈՐՄՋ.— *Ի՞նչ կըսես, Արտաշես... թագուհի պիտի ըլլա՞մ։*

ԱՐՏ.— *Դեռ ոչ...* (ձեռքը սուրին տարած կուզե ելնել. նորեն կիյնա)։

ՈՐՄՋ.— *Արտաշես... սիրո հիշատակներուն պես կանցնին կսահին այս կարմիր ալիներն ալ... վրեժխնդրությանս բոցերը մարեցան, բայց ատելությունը դեռ սիրտս կլափե... Հայությունը պիտի ջնջեմ, Արտաշես...*

ԱՐՏ.— *Արտաշեսի պես դյուրավ չմեռնիր նա...*

ՈՐՄՋ.— *Արդեն հիմա երկու բանակներն իրարու թշնամի ձևացուցի մթության մեջ և գիրար անխնա կջարդեն, պիտի երթամ հիմա Կրյուսոսի բանտը պիտի քակեմ շղթաները... պիտի գինվինք... թագուհի պիտի ըլլամ, Արտաշես։*

ԱՐՏ.— *Ա՜հ... անե՛ծք, կայծակ...*

ՈՐՄՋ.— *Օն, մեռիր որ վայրկյան մը առաջ թագուհի ըլլամ, ալ հերիք գալարիս ոտքերուս տակ... լավ բաց բերանդ... շուտ, տուր հոգիդ, և տեսնեմ փառաց ջահերով պիտի թռչի՞ս։*

ԱՐՏ.— (նուսաճատութենեն և ցավեն նվաղյալ կիյնա) *Վատ դահիճ...*

ՈՐՄՋ.— *Մեռա՜վ... ձայնը մարեցա՜վ... աչքերը փակեցան... վրեժս առի... հագա կարմիր ծիրանին... թագ մը մնաց... հոն է... թագուհի պիտի ըլլամ* (դեպի մյուս գաղտնի դուռը կերթա և կաներևութանա)։

ԱՐՏ.— (աչքերը բանալով զայն կդիտե) *Խաբվեցա... բայց ես ալ կմեռնիմ... ո՛վ անողոք դիշեր... վերջապես հետին հա-*

դաչս, փառքս, սուրս կթավալես գերեզմանին աննշան հա-
տակը... օգնութ՛յո՛ւն...

ՎՐՈՒՅՐ.— (դրսեն) *Տե՛ր արքա, տե՛ր արքա...* (դռները ճարվածելով կխոռտակեն և ներս կմտնեն):

Տեսիլ Ի

ԱՐՏԱՇԵՍ, ՎՐՈՒՅՐ, ԽՈՍՐՈՎ, ԶՈՐԱԿԱՆՔ

ՎՐՈՒՅՐ.— *Տե՛ր արքա, բանակը զիրար կջարդե... հասի՛ր...*

ԽՈՍՐ.— *Բայց ո՞ւր է թագավորը...* (փնտռած աչքերը դիակին կդիպչի) *ա՜հ... հոս բերիք ջահերը...*

ԱՄԵՆՔՐ.— (տեսնելով) *Թագավո՛րը...*

ԱՐՏ.— *Կին մը... այս գաղտնի դուռը... Կրյուսոսի բանտը... շուտ վրեժս... Հայաստանը ազատեցիք... «Ավա՜ղ փառացս անցավորի»:*

ԱՄԵՆՔՐ.— *Մեռա՜վ...*

ՎՐՈՒՅՐ.— *Օ՜ն, այս գաղտնի դռնեն* (ամենքը կմտնեն վարագույր):

ՊԱՏԵՐ

ԲԱՆՏ

ՏԵՍԻԼ Ը

ԿՐՅՈՒՍ.— (Միևնակ շղթաներով գետինը կապված է, ձեղունեն կախված կանթեղ մը կպլպլա):

*Այս իմ պալատս է... բանտս է... ճակտիս դափիններն են այս շղթաներն որ երկաթի փոխակերպելով կաշկանդած են զիս գերեզմանին սև ու սեպ ժեռափանցը... նայվածք մը հոն... և ահա այն է գերեզմանս... ա՜հ, հիմա կհասկնամ թե ի՞նչ է դատապարտյալ մը, որուն վճիռը տալն վաղը և հաճույք կազդեր ինձ... արդյոք ի՞նչ ալևոր մազեր, սիրտ հառաչներ, թագեր, արտասվաց գետեր, աղիք, ճապաղիք, կմախք և անեծք սփռված են և կհեծեն այս սև կամարներուն տակ... չեմ սոսկար գազաններեն որչափ այս խավարեն, ուր զոհերուս ուրվականներն իրենց պատանքները գետնի վրա շրջելով կշրջին միշտ, սուր չունին, նայվածք ու անեծք ունին... ո՞վ պիտի աղատե զիս այս ողջերու գերեզմանեն... այն կինը քիչ մը առաջ երևցավ ինձ առանց շղթայի, այս վանդակապատ պատուհանեն. «սիրտ ՝ատ—ըսավ—թագավոր պիտի ըլլաս»... Արտաշեսը պիտի սպաննեմ, կըսեր, և պալատին գաղտնի ճամբաներուն վրա տեղեկություններ առավ ինձմե... ա՜հ, մեկ մը դուրս նետվեի, տեսնեի Էյուֆրտ երկինքը... նախ սուրս Աստվածոց դեմ դարձնեի, հետո տիեզերաց վրա... ա՜հ, գաղտնի դուռը կբացվի կարծեմ... (Ոտզդուխտ կերևա) *ինքն է...*

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆ և ՈՐՄԶԴՈՒԽՏ

ՈՐՄԶ.— Այո, ես եմ... միշտ ես թագավորին ու դատապարտյալին մեջ... միշտ ես վրեժի և փառաց մեջ... (շղթաները կխակե):

ԿՐՅՈՒՍ.— Ո՞վ երկինք... բայց ի՞նչ կընես... ի՞նչ ըրիր, կին դու...

ՈՐՄԶ.— Ազատ ես... լուռ և քալե:

ԿՐՅՈՒՍ.— Բայց խոսե:

ՈՐՄԶ.— Բայց երթանք:

ԿՐՅՈՒՍ.— Գուցե եթե հոսկե դուրս ելնեմ վատ՝ և եթե երկրորդ անգամ հոս մտնեմ կրկին մահ պիտի ըլլա... խոսե...

ՈՐՄԶ.— Արտաշեսի զորքերը խիստ բազմաթիվ ըլլալուն երկու զորանոց փոխադրված էին... նախ մեկ զորանոցը գացի և պոռացի «Բշնամիք կուգան» անոնք որոտընդոստ և սուր ի ձեռին դուրս նետվեցան... իսկույն մյուս զորանոցը վազեցի և գոչեցի «Բշնամիք եկան» և զանոնք մյուս գնդին վրա առաջնորդեցի որ բարկացայտ հառաջ կխաղար... երկու գնդեր իրար զարնվեցան ինչպես երկու մրրիկ, լսեցի սուրերուն շաչյունները... անոնք մեր թագավորությանը համար արյուն կթափեին փոփոխակի... հասա Արտաշեսի քով՝ զինքը քնո մեջ խողխողեցի... մեռավ աչացս առջև ... հոս եկա զքեզ թագավոր ընելու... քալե:

ԿՐՅՈՒՍ.— Ո՞վ դիք. այս մշտնջենավոր աղջամուղջին մեջ փառաց դռներ կրանաք... ազատենք գահս...

ՈՐՄԶ.— Օ՛ն, դարձյալ այս գաղտնի դռնեն Արտաշեսի սենյակը կելլենք և մյուս գաղտնի դռնեն պալատեն դուրս... պալատեն դուրս՝ դուն թագավոր, ես ալ թագուհի (երթալու կըլլան):

Տեսիլ Ժ

ՆՈՒՅՆՔ, ՎՐՈՒՅՐ, ԽՈՍՐՈՎ, ԶՈՐՔ

ՎՐՈՒՅՐ.— (գաղտնի դռան մեջ երևնալով) Այստեղ պալատ չէ, բանտ է, գերեզմանդ է, Բշվառական:

ՈՐՄՋ.— Ա՜հ...

ԿՐՅՈՒՍ.— Մատնվեցա՜նք...

ՎՐՈՒՅՐ.— Կկարծե՞ք որ այս դռանը մեջ ահավոր և վրեժխնդիր սուր մը ձեր դիմաց չարձանանա։

ՈՐՄՋ.— (առ Կրյուսոս) Վատ արանց, առանց շղթայի արդեն չը կրցար քալել։

ՎՐՈՒՅՐ.— Զորականք, կապեցեք երկուքն ալ, մեկը վատ, մյուսը արքայասպան։

ԿՐՅՈՒՍ.— (զորաց սպառնալով) Դողացե՛ք, դեռ Կրյուսոսն եմ։

ՎՐՈՒՅՐ.— Հոս սորուկ ես և հոսկե դուրս դիակ... զորականք շղթայեցե՛ք (զօրերը երկուքն ալ կկապեն)։

ՈՐՄՋ.— Բայց ի՞նչ կխնդրեք ինձմե։

ՎՐՈՒՅՐ.— Սրյո՜ւն... Արտաշես հյուծյալ աչքերով քեզ լրտեսեր է։

ՈՐՄՋ.— (մեկուսի) Ուրեմն դեռ մեռած չէ եղեր... (բարձր) Մե-ռա՛վ Արտաշես...

ՎՐՈՒՅՐ.— Այո՛, ես եմ վրեժխնդիրը։

ՈՐՄՋ.— Մեռա՜վ... ուրեմն ի՛նչ հոգ եթե սպաննեք զիս... խոր-տակեցի հայուն հաղթական քայլը, մարեցի հայուն փա-ռաց ջահը... ես էի որ քիչ մը առաջ հայերը ի գեն և ի մահ դրդեցի։

ՎՐՈՒՅՐ.— Դո՜ւն... թշվառական։

ՈՐՄՋ.— Ես հոս կմեռնիմ... բայց հայությունն ալ դուրսը ինձի հետ կմեռնի։

ՎՐՈՒՅՐ.— Դեռ ողջ է հայը և անդին Հայաստան մ'ունի։

ՈՐՄՋ.— Հոգ չէ եթե թագուհի չեղա, թագավորի մը դահիճը եղա (ծուռ կշռի վրայ զայն զարնելու ատենը)։

ԿՐՅՈՒՍ.— Ջիս ալ...

(ՎԱՐԱԳՈՒՅՐ)

ԹԱՏՐՈՆ ԿԱՄ ԹՇՎԱՌՆԵՐ

Թատրերգություն ի հինգ արարս և չինն պատկերս

Ա. ՌՈՒՋՈՒԿԱՆ

Մեկ հաճի տարե ի վիր հղացած երկոցս մեջ սույն ժամանակակից բատերախաղը ահա կը համարձակիմ ի լույս ընծայել իբր առաջին պտուղ իմ ճգանցս՝ զոր կուզեմ նվիրել ազգիս: Սույն հրատարակումս ինձ համար ճոր է. ուստի զողզողալով կիջնեմ յասպարեզ առաջնորդող ՚աստիճաններեր, ներողամիտ ժպտումներ ակնկալելով: Արդարև բատերգությունը դժվարին արհեստ մ՚ըլլայր ամեն ոք կը խոստովանի, ես ալ արդեն խիստ բարձր գտած եմ զայն իմ փաճարի կարողության և մանավանդ հասակին հով. սակայն զայս ալ պետք է խոստովանիլ թե դժվարին գործ մը առանց հաճդուզն ձեռաց օժանդակության չկրնար դյուրավ կատարիլ, և թե երկ մը բանաղատության բովին չանցած չկրնար գրավիլ:

Թատերախաղիս նյութը քեպեան ճշմարիտ դեպքեր կը պարունակե. սակայն այսուամենայնիվ, ինչպես որ հեղինակ մը կոտիպվի ընել, պահանջված հավելադրություններ չեն գլացված:

Զայս երկասիրելով՝ իմ մասնավոր դիտումն է իմ անձնասությամբ օրինակ ըլլալ ուրիշ բատերագրաց՝ որ ավելի արդի ընտանեկան անցքերը պարունակող բառոյայից բատերախաղեր հորինելու աշխատին, որով ավելի օգուտ կրնան ընծայել հայ հասարակության:

Որչափ որ կարելի է սույն բատերախաղիս լեզուն բատերական կամ պարզ ըրի:

Իմ այս բատերախաղը տեսարանի վրա հանդիսացնելե առաջ տպագրության տալուս վրա գույն զարմանաճ ոմանք. սակայն այս մասին այնպիսի պատճառներ կան, զորս լուսաբանելու համար հատուկ ժամանակի կսպասեմ,

Անհրաժեշտ եմ որ փութամ չպիտի պսակեն սույն հանդուգն և միանգամայն դողդող հայլափոխս, և այն ակամա թերությանց նկատմամբ, որ նահատակված են երկասիրության մեջ՝ ներողամտություն և հետևաբար հաջողություն գտնելով, պիտի փութամ՝ հուսալից՝ նորանոր հերթության ձեռնարկել և այս գրականս արհեստը ևս աւս կատարելագործելու աշխատիլ:

ՀԵՂԻՆԱԿՆ

ԱՆՁՆԵՐ

ՄՈՒՐԱՏՈՖ. Սնանկացյալ վաճառական, Թուխմա անվանյալ
ՎԱՐԴՈՒՀԻ. Դուստր Մուրատոֆի
ԵԴՎԱՐԴ. Որդեգիր
ԳԵՈՐԳ. Դրամանենգ՝ Նահապետոֆ անվանյալ
ՄԱԿԱՐ. Սպասաւոր, մատակարար Նահապետոֆի
ՊՈՂՅԱՆՅ. Տնօրեն թատրոնի
ՎԱՀԱԳՆՅԱՆ. Դերասանապետ
ՃԻՈՐՃԻ.
ՍԱԼՈՄՈՆ.
ՋԻՋԻԼ. Դերասանուհի
Ա. ԴԵՐԱՍԱՆ.
Բ. ԴԵՐԱՍԱՆ.
Ս. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.
Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.
ԹԱՏՐՈՆԻ սպասավոր մը
Դերասան, Դերասանուհիք, Ժողովուրդ.

ԱՐԱՐՎԱԾ Ա.

Թովմայի տնակն.—Վարագույրը բացված ժամանակ Նվվարդ ճողե կաճերեղով լուսավորված գրասեղանի մը վրա գրելու զբաղած է.—Գրքեր և թուղթեր ցիրուցան.—Մուրը կոխած է.— Փոթորիկ.— Մերթ ընդ մերթ փայլակը կը լուսավորե սենյակը:

ՏԵՍԻԼ Ա.

ՆՎՎԱՐԴ.— (առանձին գրելու զբաղած՝ հանկարծ պատուհանը կը բացվի, զոր գոցելու կերթա) *Ի՜նչ սարսափելի քամի... փոթորիկ եղած ժամանակ հազիվ հազ այս տնակին մեջ եղած խոսակցություններն կը լսվին... մարդուս գլուխը և երևակայությունը կը շփոթե... կարծես թե դուրսը բանակներն իրար կզարնեն... այս աղմուկին մեջ դժվար է երևակայությունը ամփոփել կամ հանդարտ գրել կամ բան մը հասկնալու չափ կարդալ...* (նորեն գրասեղանին վով կը նստի և գրիչը թղթի մը վրա բռնած կմտածե). *պատուհանին ուժգնակի բացվելեն և հանած աղմուկեն երևակայություններս ցնդեցան... միտքս բան մը չգար...* (գրիչը վար կը դնե): *Վերջապես չի պիտի կարենամ սա տեսարանը ուղածիս պես լավ գրել. աղքատ երիտասարդ մը հարուստ տիկնոջ մը սիրահարելով, սերը անոր հայտնելն է... գրածս է թատերգություն մը...* (ոտքի կելլե) *երբ Ռուահո մեջ վարժարանեն ելնելես վերջը անգամ մը հորս հետ թատրոն գացի, շատ ախորժեցա անկե, սեր մը տվի անոր և մինչև կերթայի, շատ անգամ ալ մինակ...* (խորհրդյամբ), *բայց երբ Մուրատոֆ Թովմա եղավ և դղյակնիս՝ տնակ... անկե ի վեր է որ թատերական երևակայությանց*

մեջ ընկղմած՝ թատերգություն գրելու կզբաղիմ... առաջին անգամն է որ սիրահարական թատերգություն մը ահա կը գրեմ... դեռ չկրցի ավարտել, գրածս միշտ հետզհետե կը սրբագրեմ, մաքուրը կառնեմ և դարձյալ կը սրբագրեմ, և դեռ գրածես գոհ չեմ... բայց երբ Վարդուհին կը կարդամ, շատ կախարժի, կը հավնի, կզմայլի, դիս փոքրիկ բանաստեղծ կը կոչե Վարդուհի (կը ցնցվի, մտազբաղ կարձանանա, ետեւո հառաչով մը կուզե մտիքը փարատել): *Բայց տեսնեմ սա տեսարանը կրնա՞մ ավարտել...* գրասեղանին վրա կը նստի և գրիչը ձեռք կառնե):

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆ և ՎԱՐԴՈՒՀԻ

ՎԱՐԴՈՒՀԻ.— (Կը մոտենա անոր. միևչդեռ նա մտազբաղ՝ տետրակին վրա հառած է. մեկուսի) *Միշտ կը գրե։*

ԵԴՎԱՐԴ.— (գրելու ատեն արտաբերելով) *Կը սիրեմ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ընդմիջելով) *Ջո՞վ...*

ԵԴՎԱՐԴ.— (շփոթած ոտքի ելնելով) *Քո՛ւյր իմ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կարծեմ գրութեանդ արդիւք եղա։*

ԵԴՎԱՐԴ.— *Ընդհակառակն, ժամ մ՚էր որ կը մտածեի և չէի կրնար գրել... բայց դու քիչ մ՚առաջ հոս մոտեցած էիր, այնպես չէ՞։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Այո։*

ԵԴՎԱՐԴ.— *Ուրեմն քու ներկայութեանդ և շնչառութեանդ է եղեր, որ զոնե այս բառը գրելու խանդը ներշնչեց ինձ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Երկու ամիս առաջ սկսած թատերգութի՞ւնդ է գրածդ։*

ԵԴՎԱՐԴ.— *Այո... դեռ չը կրցի ավարտել։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կը տեսնեմ որ առանձին գրելե շատ կախարժիս... ուրեմն եթե ես մեկնիմ՝ գեշ չըլլար...* (կուզե հեռանալ):

ԵԴՎԱՐԴ.— (եռանդով) *Քո՛ւյր իմ...* (ձեռքեն բռնելով) *քու ներկայութեանդ պակսած վայրկյաններուն է որ գրելով զբաղվիլ կուզեմ, և այն տեսութեան վայրկյաններուս մեջ ինչ որ ներշնչես ինձ՝ գրի առնել կը փութամ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ժպտելով) *Ի՞նչ ըսել կուզես։*

ԵԴՎԱՐԴ.— Նստե՛, քիչ մ՚ալ խոսակցինք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (աթոռ մը առնելով և իրվը նստելով) Խոսակցինք, եղբայր իմ...

ԵԴՎԱՐԴ.— Ահա այդպես (ճիպոտիմամբ աճուր երեսը կը ճայի)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ինչո՞ւ այդպես երեսս կը նայիս։

ԵԴՎԱՐԴ.— (ձեռքը սեղմելով) Քո՛ւյր իմ... որշափ գեղեցիկ ես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ջիս կը ծաղրես։

ԵԴՎԱՐԴ.— (ճեղաճալով) Կը կարծե՞ս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ջեմ գիտեր... երեք չորս ամիս է որ հայելին նայած չունիմ... արդարև երբ Ռուսիո մեջ էինք... կը հասկընա՞ս... այն ատեն ինքզինքս փոքր ինչ վայելուչ կը կարծեի։

ԵԴՎԱՐԴ.— Կը հասկնամ, քո՛ւյր իմ... արդարև հոս հայելի չըլլալեն զատ մեր հյուղին պատուհանի ապակիներն անգամ փոշոտ ու անթափանց են... ատոր վրա չը մտածենք... շարժող տերևին անգամ Ամենակալին շունչը կըդպի կըսեն... բայց փոխենք խոսակցությունիս... ի՞նչ կըսեի հիմա... այո, կըսեի թե շատ գեղեցիկ ես...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ջիս կը նեղացունես, Եդվարդ։

ԵԴՎԱՐԴ.— Բայց, քույր իմ, մտիկ ըրե... քու գեղեցկությանդ բնական և ճշգրիտ ապացույց մը պիտի տամ, թող հայելին խաբե քեզ... դու գեղեցիկ ըլլալով քեզ պատող ճառագայթ մը չե՞ս զգար։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ջայդ կզգա, բայց ուրիշ մը... սիրահար է այն։

ԵԴՎԱՐԴ.— Ո՛չ... սիրահարը պատողը ոչ թե ճառագայթ է, այլ բոց... կը հասկնա՞ս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Արդարև շատ գիտուն ես։

ԵԴՎԱՐԴ.— Այդ հասկցունել չեմ ուզեր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուրեմն ի՞նչ է միտքդ։

ԵԴՎԱՐԴ.— (զմայլումը շարունակելով) Որշափ ինքզինքս երջանիկ պիտի համարեի, եթե Ռաֆայել մը ըլլայի և քու պատկերդ գծագրեի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եղբա՛յր իմ, կը տեսնեմ որ շատ ագահ ես... Համարթինի քնարն ունիս և դեռ կուզես Ռաֆայելի վրձինն ալ ունենալ (ժպտելով), կըսեմ թե շատ ագահ ես, փոքրիկ բանաստեղծս։

ԵԴՎԱՐԴ.— Ձիս կը ծաղրես, քո՛ւյր իմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Քիչ մը առաջ դու ալ զիս կը ծաղրեիր։

ԵԴՎԱՐԴ.— (տրտմած) Այսպե՞ս կը փոխանակես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (գիրկը նետվելով) Ների՛ր, Եդվարդս... ուրեմն կընդունիմ քու գաղափարդ, այլ լոկ քեզի համար գեղեցիկ ըլլալու պայմանով։

ԵԴՎԱՐԴ.— Բայց...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եվ դուն ալ բանաստեղծ մ'ըլլալդ կընդունի՞ս։

ԵԴՎԱՐԴ.— Այո, լոկ քեզ երգելու նվիրված ըլլալու պայմանով։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Թող այնպես ըլլա... ուրեմն հաշտվեցանք, սիրելի Եդվարդս։

ԵԴՎԱՐԴ.— Այո, քույր իմ, ո՜հ, շա՜տ գեղեցիկ ես... Վարդուհի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ետքը՞։

ԵԴՎԱՐԴ.— Պահապան հրեշտակ ես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Վերջապե՞ս։

ԵԴՎԱՐԴ.— Կը սիրեմ զքեզ Վա՛րդուհի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Գիտեմ... քրոջդ պես։

ԵԴՎԱՐԴ.— (կատմրելով և տխրությամբ) Դուցե...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ապշած) Դուցե։ (լռություն) Ուրեմն դու միտք մ'ունես... լուռ կը կենաս... կը ծածկես դեմքդ. դու ինձնե՞ն բաժնվիլ կուզես թողլով այս տնակը, զայն պարածածկով թշվառությենեն ազատելու համար... դուցե...

ԵԴՎԱՐԴ.— (եռանդով) Վարդուհի՛, չես հասկցեր միտքս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուրեմն ի՞նչ կուզես որ հասկնամ, եղբա՛յր իմ։

ԵԴՎԱՐԴ.— Կաղաչեմ, զիս եղբայրդ մի՛ կոչեր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Տե՛ր աստված... բայց ահա կապացուցանես ենթադրություններս... զքեզ եղբայր չկոչեմ... միթե մանկությենե ի վեր քեզ հետ մեծցած ու ապրած չե՞նք, երբ դուն որբ մ'ըլլալով հայրս զքեզ որդեգրեր էր... միթե եղբոր պես միշտ զիրար սիրած չե՞նք. աստվա՜ծ իմ... հիմա միտքս կարթննա, այնչափ միամիտ եմ եղեր որ ժամանակ մը ի վեր զիս տեսած առենդ քնավ չէի կասկածեր՝ հանկարծ զգացած թեթև սարսուռներեդ և շփոթություններեդ...

ԵԴՎԱՐԴ.— (եռանդով) Ուրեմն ճշմարի՞տ ես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բնավ չէի դուշակեր որ օր մը պիտի փոխվիս և... (կը փղձկի)։

ԵԴՎԱՐԴ.— Կուլա՞ս, Վարդուհի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Անգո՛ւթ, միթե լալու իրավունք չունի՞մ, երբ կը զատվիս ինձնից...

ԵԴՎԱՐԴ.— Վարդուհի, չե՞ս հասկնար միտքս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (արտասուքը սրբելով) Բայց ո՛չ, իրավունք չունիմ քեզ բռնադատելու, անշուշտ անհնարին ցավ կզգաս Մուրատոֆի ապարանքեն Թովմայի անշուք տնակը փոխադրվելով, ուր քաղցը և ցուրտը կը տիրապետեն... գիտեմ, շատ անգամ զրած աաենդ մատներդ կը մսին ու կընդարմանան... շատ անգամ ալ կանթեղին յուղը հատնելով կը մարի և աշխատութիւնդ կը զրկվիս, որ քեզի համար շատ կարևոր ու թանկագին է... գիտեմ, Եդվարդ, ասոնք սաստիկ ցավ կը պատճառեն քեզ...

ԵԴՎԱՐԴ.— (արտասվալից) Վարդուհի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Գիտեմ, Եդվարդ, կը սիրես զիս, բայց այդ ցավերն ալ կրել՝ քեզ համար դառն և անհնարին է։

ԵԴՎԱՐԴ.— Իսկ դո՞ւ, քա՞ղցը և հե՞ք արարած։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ջիս մի մտածեր... ես կը համբերեմ...

ԵԴՎԱՐԴ.— Անհնար է որ ես բաժնվիմ քեզնե, Վարդո՞ւհի, բայց...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ընդմիջելով) Քաշածներդ...

ԵԴՎԱՐԴ.— Մտիկ ըրե, Վարդուհի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հիմա կը հասկնամ ատեպ ինձ գեղեցիկ ես ըսելուդ իմաստը. ըսել կուզեիր թե գեղեցիկ ես, բայց աղքատ... անոր համար...

ԵԴՎԱՐԴ.— Վարդո՛ւհի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Տես, առաջ քույր կը կոչեիր զիս և հիմա ատեպ անունս կուտաս։

ԵԴՎԱՐԴ.— Հրեշտա՛կս... (ձեռքը աչքերուն կը տանի և արցունքով կը բաճա)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Շիտակ խոսե, Եդվարդ, ե՞րբ պիտի երթաս։

ԵԴՎԱՐԴ.— Ո՞ւր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուր որ միտքդ դրած ես։

ԵԴՎԱՐԴ.— Ա՜հ, իմ հոգի՛ս... մինչև քեզնեն բաժնվելն վերջը գերեզմանեն ուրիշ տեղ մը ունի՞մ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դերեզմա՞ն։

ԵԴՎԱՐԴ.— Սոսկացի՛ր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Շա՜տ մութ կը խոսիս, Եդվարդ։

ԵԴՎԱՐԴ.— Լավ... Վարդուհի, Լամարթինի սիրավեպ Ռաֆայելը կարդացեր ես, այնպես չէ՞։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո...

ԵԴՎԱՐԴ.— Անշուշտ ինքդինքդ Հուլիայի տեղ երևակայեցիր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո... վասնզի սրտիս համապատկերը կը տեսնեի։

ԵԴՎԱՐԴ.— Եվ Ռաֆայելի տեղ զո՞վ երևակայեցիր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Նույնիսկ Ռաֆայելը, համանման Ռաֆայել մը։

ԵԴՎԱՐԴ.— (աչերը խոնարհելով) Հիրավի՞, ես Ռաֆայելի չափ գեղեցիկ չեմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (շփոթված) Դո՞ւ։

ԵԴՎԱՐԴ.— (աճոր ձեռքը սրտին տանելով և իր սիրաբորբոք նայվածքը աճոր աչացը մեջ հառելով) Վարդուհի՜...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (հանկարծ ցնցվելով և փղձկելով) Եդվա՜րդ... (գիրկը կիյնա, լուրյուն)։

ԵԴՎԱՐԴ.— Վարդո՛ւհի, բնուրյունը շատ զորավոր է... առաջները քեզ քրոջ մը պես անտարբեր կը սիրեի, մինչև անգամ զեղեցկուրյունդ չէի նշմարած... եսքը սրտիս մեջ վառած խունկ մը ծխեցավ... սիրտս լեցավ զեղվելու չափ, աչքերս հեշտ արցունքներ սկսեցին ցայտել... անհանգիստ էի... սրտիս վրա բեռ մը կար, քեզ տեսնելու կը շփոթեի, կը կարմրեի, սիրտս կը բաբախեր... զգացի որ կը սիրեի... զգացի որ եթե այս հեշտ հուրը սրտիս ծալքերուն մեջ թաղեի, մոխիր պիտի դառնայի, շունչս պիտի հատներ, պիտի նվազեի... ա՜հ, կը սիրեի... կզգայի որ դու ալ իմ քույրս չէիր, այլ ավելի գերբնական էակ մը... եթե հրեշտակ մը ըսեմ, բայց չզգար նա... և դու ալ բան մը չէիր զուշակեր, բան մը չէիր զգար...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց դու երբեք այնպես նայած չէիր աչերուս խորը, ինչպես որ քիչ մը առաջ նայեցար... և ես երբ արտասվալից բիբերուդ մեջ հառեցի աչքս, կայծ մը ցայտեց անկե սրտիս խորը... ո՜հ, ի՞նչ եղա... չեմ գիտեր,

այլ կզգամ որ Հուլիան եմ և դու իմ Ռաֆայելս... Ո՜հ, ի՞նչ կզգամ... Ի՞նչ կըլլամ... սիրտս կ'ելլէ, բայց երջանիկ եմ...

ԵԴՎԱՐԴ.— Ինձ նման։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց այս խուցը շատ հեղձուցիչ է, Եդվարդ։

ԵԴՎԱՐԴ.— Եթե կուզես, քիչ մը դուրս ելլենք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Փոթորիկը անցա՞վ։

ԵԴՎԱՐԴ.— Այո... ալ հովը չը. մռնչեր և ահա երկնից երեսը... աստղերը կը փողփողեն։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուրեմն քիչ մը շրջագայինք տնակին բոլորտիքը... քիչ մը օդ շնչենք... վասնզի դու ալ գրեթե հոգնած ես... այնպես չէ՞ Եդվարդ (Եդվարդ հավանական նշան կընե) տես, որչա՜փ գեղեցիկ է երկինքը (կը մեկնին)։

Տեսիլ Դ

ԹՈՎՄԱ և ՍԱԼՈՄՈՆ

ՍԱԼՈՄՈՆ.— (ետը ետս մտնելով) Վերջապես պիտի տա՞ս ստակները։

ԹՈՎՄԱ.— Հիմա ժամանակ չունիմ տալու։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց, պարո՛ն, այդ պատճառաբանության վերջը ե՞րբ պիտի գա... չորս ամիս է որ տունս կը նստիս 100-ական ղրուշեն կընես 400 ղրուշ, և դեռ 50 ղրուշ թերհաշիվ առած չեմ... այս ճամբան չելներ։

ԹՈՎՄԱ.— Բայց չե՞ս տեսներ, պարո՛ն, ես աղքատ եմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Այդ իմ փո՞ւթս է, եթե կուզես, միլիոնատեր եղիր, միայն թե իմ տանս ամսականը անթերի վճարե...

ԹՈՎՄԱ.— (մեկուսի) Երբեմն էի միլիոնատեր...

ՍԱԼՈՄՈՆ.— Վերջապես, ի՞նչ պիտի ընենք... ոստիկանության դիմենք. տունես ել կըսեմ, այդ ալ չես ըներ։

ԹՈՎՄԱ.— Բայց ո՞ւր երթամ, պարո՛ն, այսպես աղքատ։

ՍԱԼՈՄՈՆ.— Ուր կուզես գնա, ա՛յդ ալ ինձ պիտի հարցնես, եթե կուզես սատանային ծակը գնա։

ԹՈՎՄԱ.— Դեռ քանի մ'օր ալ համբերե, բարեսիրտ պարո՛ն, կաղաչեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Վե՞րջը։

ԹՈՎՄԱ.— Անշուշտ Աստված կուտա օր մը։

ՍԱԼՈՄՈՆ.— Հը՛... Աստված կուտա, Աստված իր տալիք տեղը չը՞ դիտեր. եթե տալու միտք ունենա, ինծի կուտա որ աշխատութենես հոգիս բերանս կուգա, և ո՛չ թե քեզի՝ որ ոչ արհեստ ունիս և ոչ ալ կաշխատիս՝ պատճառելով թե տկար և հիվանդոտ ես... Բայց ես մեր սուրբ Մովսեսի լուսեղեն եղջյուրներուն վրա կերդնում որ բողկե մը վար չես մնար։

ԹՈՎՄԱ.— Վերջապե՞ս, պարո՛ն...

ՍԱԼՈՄՈՆ.— Ստակներս։

ԹՈՎՄԱ.— Քեզի ըսի որ քանի մ՚օր ալ սպասես։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց մինչև չորս ամսե ի վեր ճանչցած մարդս դու չես։

ԹՈՎՄԱ.— Վերջապես ի՞նչ ըսել կուզես։

ՍԱԼՈՄՈՆ.— Հասկցա... ոստիկանութիւնը կը լմնցնե այս գործը...

ԹՈՎՄԱ.— Բայց, պարոն։

ՍԱԼՈՄՈՆ.— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ... այո... ոստիկանութիւնը...

ԹՈՎՄԱ.— Ուրեմն ինչ որ կուզես ըրե...

ՍԱԼՈՄՈՆ.— Օ՜, ոստիկանութենե՞ն ալ չես պատկառիր։

ԹՈՎՄԱ.— Քանի մը օր բանտը պիտի պառկիմ... ավելի՞ն։

ՍԱԼՈՄՈՆ.— Իրավունք ունիս, ոստիկանութիւնը տեսնելով որ աղքատ ես, քանի մը օր բանտը պիտի դնե քեզ՝ իբրև պատիժ կամ հատուցում պարտքիդ. այնուհետև պիտի արձակե և մեր 400 դրուշը մեջ պիտի խաղա ոստիկանական ծախքերու հետ... Պարո՛ն, աշխատե սա պարտքդ վճարելու, մեղք է ինձ ալ, քեզ ալ, դու պատիվդ պիտի կորանցունես, ես ալ ստակս... դիտե՞ս, պարո՛ն, հոս ժամանակով 500 դրուշ ծախք ըրած եմ այս տունը շինութեանը համար որ յուր դիրքովը ու շենքովը հավանոցե վար չը մնար. 500 դրուշը շատ մեծ բան էր այն ժամանակվան և նույնպես հիմա՝ քեզ համար... վարձվոր պակաս չէ այս հավանոցին համար, որ թեպետ անմարդի տեղ մ՚է, բայց և այնպես անտառներ, ձորեր և պարտեզներ կը շրջապատեն զայն, արևելքն ու արևմուտքը միշտ աշխոյժ առջև... գուցե ամանկանն ալ իր արժեքեն շատ պակաս է, բայց ինչոր է, բան

մ՛է ըրինք... պարո՛ն, վերջին անգամ կըսեմ, եթե չես կրնար վճարել, կարասիներդ դուրս պիտի հանես... մարդու պես տեսնվինք... իմ անխելքութեանս որ երբ հովանոցը վարձելու համար ինձ ներկայացար, ազնվականի պես հադուստդ մաքուր ըլլալուն՝ աչքս շլացավ և իսկույն հովանոցս քեզ հանձնեցի... աղեկ միտքս եկավ, պարո՛ն, ի՞նչ ըրիր այն հագուստներն, որ առնվազն 500 ղրուշ կարժեին։

ԹՈՎՄԱ.— Ծախեցի։

ՍԱԼՈՄՈՆ.— Եվ ստակնե՞րը...

ԹՈՎՄԱ.— Հաց առի ընտանեացս։

ՍԱԼՈՄՈՆ.— Առանց պարտքդ մտածելու, անիրա՛վ... և ո՞վ գիտե, ի՞նչպես տեր եղեր էիր այն հագուստին, և ինչպես որ գուշակել կուտաս, անշուշտ հանդերձավաճառը քնացած աեղը գնեցիր։

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն։

ՍԱԼՈՄՈՆ.— Վերջապես մեր գործին նայինք... ե՞րբ պիտի տաս դրամը... պատասխան տուր։

ԹՈՎՄԱ.— Չգիտեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Չգիտե՞ս... միթե կատա՞կ կընես ինձ հետ...

ԹՈՎՄԱ.— Թող զիս կընեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Թողում զքեզ, բայց ստակ պետք է ինծի... (զննելով) Այս աթոռները խարխուլ... սա գրասեղանը որդնկեր ու փտած... (շուրս կողմը զննելով) Բայց նոր ու մեծագին կարասի մ՛ալ չունիս, որ թերհաշվի տեղ տաս... պարոն, ստակ պետք է ինծի... ստա՞կ... (բալթոն զննելով) հը՛, գոնե սա տուր իբրև թերհաշիվ, որ գոնե աո առավելն ֆրանք մը կարժե... այո, այո, այդ տուր։

ԹՈՎՄԱ.— (սպառնալից) Պարո՛ն, եթե չես ուզեր որ ձեռքես կրակ թափի գլխուդ, թող զիս...

ՍԱԼՈՄԱՆ.— (վախնալով) Սպառնալի՛ք... կրա՞կ... ա՜հ վերջապես մարդասպան ըլլալդ ալ կը հայտնես... անօրեն մարդ, ստակներս կը կլլես և կը հալեցնես, հիմա ալ կսպառնաս ինձ մարդասպանի մը կերպարանքով։

ԹՈՎՄԱ.— (նահդարտութեամբ) Պարո՛ն, կաղաչեմ, դեռ քանի մը օր ալ սպասե։

ՍԱԼՈՄՈՆ.— Հիմա ալ տեսար որ քու սպառնալիքդ չեմ վախնար, հը՞, հը՞, կեղծավորությամբ և խոնարհությամբ կուզես ճամբել զիս... ո՛չ, ո՛չ, կա՛մ ստակս կուտաս կամ բանտ կերթաս։ Այո՛, այո՛, աղեկ մխաքս եկավ, թող ստակները փճանան, դու բանտ երթալեդ ետքը կրնամ կարասիներդ փողոցը նետել և ձեռքեդ աղաթիլ. այո՛, այնպես, ոստիկանության ձեռքը իյնաս, քեզ հարցաքննելով ի՛նչ տեսակ մարդ ըլլալդ կը դիտնան և ասով ոստիկանության ծառայություն մ'ըրած կըլլամ...

ԹՈՎՄԱ.— Կաղաչեմ, պարո՛ն, այդ բանը մի՛ գործադրեք։

ՍԱԼՈՄՈՆ.— Տե՛ս, ի՛նչպես շփոթեցավ, և կը քծնի... շիտակ ըսե, թիարանին շղթա՞յն կոտրեցիր և փախար թե բանտին պատուհանին երկաթե վանդակը... վերջապես եղեռնագործ մը կերևիս (երթալու կըլլա)։

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն։

ՍԱԼՈՄՈՆ.— (դառնալով) Ի՛նչ է... պիտի տա՞ս ստակները։

ԹՈՎՄԱ.— Հիմա չեմ կրնար...

ՍԱԼՈՄՈՆ.— Ուրեմն պետք է որ առնելիքս զոհեմ արժանավոր կերպով քեզ պատժել տալու համար (նորեն երթալու կըլլա)։

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, կը խոստանամ... վաղը դուրս կը հանեմ կարասիները։

ՍԱԼՈՄՈՆ.— Հապա ստակնե՞րը։

ԹՈՎՄԱ.— Դու չըսի՞ր որ դոնե տունես դուրս ելի։

ՍԱԼՈՄՈՆ.— Առա՞նց ստակները տալու... այդ ալ չըլլար։

ԹՈՎՄԱ.— (աղերսաձոճ) Շնո՛րհ... պարո՛ն... կը վճարեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Վճարե ուրեմն... տեսնեմ։

ԹՈՎՄԱ.— Բայց ըսի քեզի թե հիմա չեմ կրնար... քանի մ'օրեն

ՍԱԼՈՄՈՆ.— Ո՛չ, ո՛չ, չըլլար, պետք է որ մխաքս դրածս ընես (երթալու կըլլա)։

ՏԵՍԻԼ Դ

ՆՈՒՅՆՔ և ՄԱԿԱՐ

ՄԱԿԱՐ.— Հրեա՛, ի՞նչ կուզես այս մարդեն։

ՍԱԼՈՄՈՆ.— Տանս վարձքը, պարո՛ն, չորս ամիս է բնակ թեր հաշիվ անգամ առած չեմ։

ՄԱԿԱՐ.— Ես խոսք կուտամ որ այս մարդը քանի մ'օրեն պահանջդ ամբողջ կը վճարե... ինքը բարեսիրտ և պատուավոր մեկն է և քու բոլոր ենթագրություններդ...

ՍԱԼՈՄՈՆ.— Ներեցեք, պարո'ն, չէի գիտեր...

ՄԱԿԱՐ.— Ուրեմն բանդ պես...

ՍԱԼՈՄՈՆ.— Շատ աղեկ, պարո'ն (մեկուսի) Նահապետովի մատպարարն է, հոգ չէ, հերիք է որ փոքր ինչ այս մարդը ճանչե կամ անոր երաշխավորելու պես բան մը ընե... (բարձր՝ Մակարի) Ահա կերթամ, պարո'ն... (կերթա)։

Տեսիլ Ե

ԹՈՎՄԱ և ՄԱԿԱՐ

ԹՈՎՄԱ.— (որ ապշած և մտածմանց մեջ ընկղմած էր. գլուխը վեր առնելով և Մակարին մոտենալով) Պարո'ն, թեպետ չեմ ճանչեր զձեզ, այլ չի պիտի մոռնամ ձեր ըրած բարեբարութիւնը...

ՄԱԿԱՐ.— Պարո'ն, ես կը նեղանամ, երբ պարտք մը բարերարության վերածելով ինձնե շնորհակալ ըլլաք... դուք հայ եք, նույնպես ես ալ հայ, մինչև կրնա՞յ ան տարբեր ըլլալ չմիջամտել գծուծ հրեի մը նախատանացը ենթակա ըլլալնիդ տեսնելով՝ առանց ազգայնության կրակը գրգռելուս

ԹՈՎՄԱ.— Պարո'ն, ներեցեք, եթե համարձակիմ հարցնել ձեզ թե ի՞նչ շարժառիթով իմ տունս գալու պատիվն կընեք ինձ...

ՄԱԿԱՐ.— Ա՛, այդ այնպիսի խնդիր մ'է որ ձեր գլխուն այդ տաք միջոցին չուժվիր... նախ և առաջ ներեցեք որ հարցնեմ թե ի՞նչ է ձեր անունը։

ԹՈՎՄԱ.— (շփոթած) Թովմա։

ՄԱԿԱՐ.— Ուրեմ, պարո'ն Թովմա, եթե կը հաճիք, նստինք։

ԹՈՎՄԱ.— Շատ աղեկ, պարո'ն, (աթոռ մը կը բերե Մակարին որ նստի) զգուշացեք, պարո'ն, նստելու առեննիդ, աթոռը խարխուլ է...

ՄԱԿԱՐ.— Հոգ չէ, պարո'ն Թովմա (կը նստի). բայց դուք ինչո՞ւ ոտքի վրա կեցաք, աթոռ մ'առ դուք առեք և նստեցեք։

ԹՈՎՄԱ.— Շնորհակալ եմ, պարո'ն (աթոռ մը կառնե)։

ՄԱԿԱՐ.— Օ՜, ես չեմ ախորժիր այդպիսի չափազանց քաղաքավարական ձևերեն, երեխ կը ներեք։

ԹՈՎՄԱ.— Ինչպես որ կը փափաքիք, պարո՛ն (կը ճստի)։

ՄԱԿԱՐ.— Անունդիդ Թովմա էր, այնպես չէ՞։

ԹՈՎՄԱ.— Այո՛, պարոն...

ՄԱԿԱՐ.— Կարծեմ որ դուք Թովմա առաքյալին չափ դժվարահավատ չեք...

ԹՈՎՄԱ.— Հավատացեք, պարո՛ն, որ...

ՄԱԿԱՐ.— (ընդմիջելով) Կատակ մ՚էր ըրածս... պարո՛ն, ձեր վիճակին վրա շատ կը ցավիմ։

ԹՈՎՄԱ.— Այդ ձեր բարեսրտությունն է։

ՄԱԿԱՐ.— Իմ՝ այսպես տարաժամ քու տունդ գալուս վրա զգացած հետաքրքրությունդ հագեցնելու համար՝ պետք է քեզ իմացնեմ թե քու ցավալի վիճակիդ դարման մը գտնելու համար եկած եմ։

ԹՈՎՄԱ.— Շնորհակալ եմ, պարո՛ն։

ՄԱԿԱՐ.— Դուն չես ճանչեր զիս, բայց ես զքեզ կը ճանչեմ...

ԹՈՎՄԱ.— (շփոթած) Զի՞ս...

ՄԱԿԱՐ.— Այո... ես շատ անգամ մութը կոխած ժամանակ քեզ նստած տեսած եմ Ֆստըք փողոցին պարտեզին պատին տակ, ուստի շուկայի անցորդները կը վերադառնան։

ԹՈՎՄԱ.— Սխալ տեսած ըլլալու եք, պարոն...

ՄԱԿԱՐ.— Գիտեմ, պարո՛ն, կամաչես մուրացկանի վիճակիդ վրա, զոր ընդունելու հարկադրած են քեզ կենաց ստիպողական բերմունքները... գաղտնիք մ՚է այդ ինձ համար, որուն խորը չեմ ուզեր թափանցել՝ վախնալով որ սիրտդ անհուն եւ դառն հիշատակներով կը լեցնեմ։

ԹՈՎՄԱ.— Այո՛, պարոն, այն մարդը ես եմ...

ՄԱԿԱՐ.— Իմացա որ դու ընտանիք ալ ունիս եղեր։

ԹՈՎՄԱ.— Այո՛ աղջիկ մը և որդեգիր մը։

ՄԱԿԱՐ.— Աղջիկդ շատ գեղեցիկ է եղեր։

ԹՈՎՄԱ.— (շփոթվելով) Բավական։

ՄԱԿԱՐ.— Ինչ որ է... առաջին վարդը 50 կլորիկ ու կարմրուկ ոսկի արժելու չափ գեղեցիկ։

ԹՈՎՄԱ.— (ապշած) Ի՞նչ ըսել կուզեք, պարոն։

ՄԱԿԱՐ.— Նախախայրիքը։

ԹՈՎՄԱ.— Չեմ հասկնար, պարո՛ն։
ՄԱԿԱՐ.— Պարոն Թովմա աղջիկդ կը սիրե՞։
ԹԱՎՄԱ.— Կը հարցնե՞ս։
ՄԱԿԱՐ.— Հարուստ ըլլալ կուզե՞ս։
ԹՈՎՄԱ.— Հարո՞ւստ... մուրին մեջ չմուրալու չափ։
ՄԱԿԱՐ.— Կուզե՞ս որ աղջիկդ քու մուրացած չոր հացդ չուտե և դուն ալ մուրալու համար վերարկուովդ երեսդ չծածկես մուրին մեջ։
ԹՈՎՄԱ.— Ա՜հ, պարոն, սրտիս խորեն կը խոսիք։
ՄԱԿԱՐ.— Շատ կը ցավիմ, որ այսչափ ատեն անգիտաբար կը տառապիք։
ԹՈՎՄԱ.— Եվ ի՞նչ կրնամ ընել, քանի որ...
ՄԱԿԱՐ.— (ընդմիջելով) Քանի որ ձեռքիդ տակ գանձ մ՚ունիս...
ԹՈՎՄԱ.— Չեմ հասկնար միտքերնիդ, պարոն։
ՄԱԿԱՐ.— Պարոն Թովմա աղջիկդ հարուստ է։
ԹՈՎՄԱ.— (ծպտելով) Կաղաչեմ, ազնիվ պարոն, կատակը մեկդի։
ՄԱԿԱՐ.— Պարոն, Թովմա առաքյալ մի ըլլար գլխուս։
ԹՈՎՄԱ.— Բայց դուք դարձվածավոր կը խոսիք, պարոն։
ՄԱԿԱՐ.— Ուրեմն պարզապես եղելությունը հասկցնեմ քեզի... վերին աստիճանի ազնվական մը այս օրերս աղջիկդ տեսեր է...
ԹՈՎՄԱ.— Ո՞ւր տեղ։
ՄԱԿԱՐ.— Չեմ գիտեր, գուցե այս տնակին քովի ճամբեն ձիով անցած ատենը... վերջապես ձեր աղջկան գեղեցկությունը իր սիրտը գրավեր է... պարզապես ըսենք, սիրահարեր է... ես այն ազնվական անձին մատակարարն ըլլալով, քեզ տեսնելու և այս գործին վրա խոսելու պաշտոնն ինծի հանձնված է։
ԹՈՎՄԱ.— Ուրեմն այդ ազնվական անձը կը զիջանի իմ աղջիկս իրեն կին առնելուս։
ՄԱԿԱՐ.— Ա՜խ, ոչ, շատ բարձրերը ելար... միտքս լավ չես հասկցեր...
ԹՈՎՄԱ.— Ուրեմն հառաջ տարեք խոսքերնիդ։
ՄԱԿԱՐ.— Միթե հնա՞ր է որ վերին աստիճանի ազնվական մը խոնարհի մուրացկանի մը աղջիկ իրեն բացարձակ կին

առնել. այս ըսելով միտքս քեզ նախատել չէր, բայց ասանկ անտեղի ամուսնության անտեղի ըրույցներ և ենթադրություններ կը հաջորդեն, որ կրնան նորին աղնվության հարգն ու վարկը կոտրել։

ԹՈՎՄԱ.— Այո, շատ սխալ հասկցեր եմ։

ՄԱԿԱՐ.— Բայց դարձյալ տերս ձեր աղջկան սիրահարած է, և իր սերը պսակելու համար պետք է որ հարսանիքը գաղտնաբար տեղի ունենա, կարելի եղածին չափ անշուք։

ԹՈՎՄԱ.— Այո՛, պարոն։

ՄԱԿԱՐ.— Բայց դարձյալ ասի պատիվ մ'է քեզի, վասնզի աղջիկդ ալ թշվառության չը կրնալով տոկալ և իր գեղեցկությունն ալ հայելիին մեջ ստեպ տեսնելով, վերջապես աղջիկդ լկտի և հասարակաց եղած... տերս կուզե իր անմինդ ճակտին նախախայրի վարդը ծախու առնել... 50 ոսկիի... ի՞նչ կըսես։

ԹՈՎՄԱ.— (զառանցելով) 50 ոսկի՞...

ՄԱԿԱՐ.— Մտածե... 50 փայլուն ոսկի։

ԹՈՎՄԱ.— Բայց ո՞վ է ձեր տերը, պարոն, կրնա՞մ գիտնալ։

ՄԱԿԱՐ.— Չես ճանչեր... Ռուսիացի վաճառական մ'է։

ԹՈՎՄԱ.— (շփոթված) Ռուսիացի՞...

ՄԱԿԱՐ.— Ի՞նչ կա... կը ճանչե՞ս...

ԹՈՎՄԱ.— Անունն ի՞նչ է արդյոք։

ՄԱԿԱՐ.— Նահապետոֆ։

ԹՈՎՄԱ.— (մտազբաղ) Նահապետոֆ... ոչ, չեմ ճանչեր (մեկուսի), այս անունով ոչ ծանոթ ունիմ և ոչ ալ պարտատեր։

ՄԱԿԱՐ.— Ուրեմն մեր նակարկուբյանը նայինք... մի վախնար, այս անցքը գաղտնիք պիտի ըլլա քու և աղջկանդ, իմ և տիրոջս մեջ... աղջիկդ դարձյալ աղջիկ է... 50 ոսկի ալ քացեն շահ, նաև չմոռնամ ըսելու որ տերս՝ ի սեր աղջկանդ՝ այս գումարը գրեթե նպաստ կուտա և ոչ հատուցում... 50 ծիծաղկոտ ոսկի... կընդունի՞ս...,

ԹՈՎՄԱ.— (միշտ մտազբաղ) Կընդունիմ։

ՄԱԿԱՐ.— Մաքսատունեն վաճառք փախցուցածի չափ եղար, պարո՛ն Թովմա... հուսամ թե աղջիկդ ալ բնավ սրտնջալու առիթ չի պիտի ունենա... ե՞րբ պատրաստ ես։

ԹՈՎՄԱ.— Երբ որ ձեր տերը գալու հաճի։

ՄԱԿԱՐ.— Ուրեմն գիշեր բարի։

ԹՈՎՄԱ.— (առաճձին կերթա աթոռի մը վրա կնստի, մտազբաղ ձեռը ճակատին դրած).

Ա՛լ մուրացկան չեմ, ալ չպիտի ամաչեմ, ալ մուքին, անձրևին ու ձյունին տակ, առանց երկնքի աստղերուն նայիլ համարձակելու՝ ալ գլուխս չը պիտի կախեմ կուրծքիս վրա որ երեսս չը տեսնեն՝ ալ դողդոջ թևերս երկնցուցած առենս անցորդ մանկտիք ափիս մեջ նենգյալ դրամ չը պիտի նետեն և զիս խարեն ու ծաղրեն, ալ վեր պիտի բռնեմ ճակատս, ուր խորշոմն ու խոկմունքը ծանրացան... Այս իրիկուն անձրևին ամենքը շտապով կերթային և չէին տեսներ գիշերվան մուքին մեջ անկյուն մը կծկող թշվառ մարդը՝ որ տեղատարափին, քոնին տակ անշարժ ու գրեթե անզգա ստվերի պես՝ պաղ քարի մը վրա նստած՝ անցորդներուն բարեմաղթություններ կը մրմնջեր, մարդ մը, որ անծանոթ անցորդներու ոտնաձայնը կը հաշվե, կարծես իր հույսը մարդոց ոտքին տակ կը փնտռե... չտեսան այն մարդը որ խեղճ ընտանիքի մը հաց տանելու համար հոն կը տքներ, մեկը չտեսավ խավարին մեջ այն սև ամպը որ կշնչեր... որուն ներքև ալ կանձրևեր... չտեսան ու անցան... ոտնաձայները դադրեցան... անձրևեն թրջած մարդիկն իրենց տունը դարձան և ճարճատուն վառարանի մը բոլորտիքը կը չորնային ու կը տաքնային... անդին մուքին մեջի մարդը նոր ոտքի կելներ, բայց ծանր, վասն զի իր ոտքերը թրջած, թմրած, ու ընդարմացած էին... առաջին անգամ գլուխը վեր, երկինք վերցուց, լացավ տղու մը պես այն անձրևոտ գիշերվան հետ... ծանր ծանր տուն դարձավ առանց հացի... այն անձն ես եմ... այն անձը վաճառականն Մուրատոֆն է, որ մուրացկան Թովմա անունով առանց հացի և անոթի տուն կը դառնա այժմ, ա՜հ, աղջկանս դահիճը կըլլամ, ալ մուրացկան չեմ ըլլար... ի՞նչ պիտի ընեն խեղճը այսպես գեղեցիկ ու թշվառ մնալով. մեկը կին չառներ զինքը, վասն զի հայրը մուրացկան է... վերջապես իր ճակատագիրը հոն կանգ կառնե, ինչ որ ես վճռեցի քիչ մը առաջ... այո, Թող անպատիվ ըլլա, բայց ոչ անոթի... վասն

զի անոթի մարդը, աղքատ մարդն արդեն անպատիվ է... ի՞նչ աշխարհ, ի՞նչ մարդկութիւն, որ ցնցոտիով ծածկված սրտին ազնուութիւնը կը մարեն... այո՛, անպատիվ կըլլամ, բայց ոչ անոթի։

Տեսիլ Է

ԹՈՎՄԱ., ՎԱՐԴՈՒՀԻ, ԵՂՎԱՐԴ (ձեռքը գիրք մը կը բըղբատե և կը կարդա)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ճորը կը մոտենա, որ աթոռի մը վրա իջնած է մտազբաղ) *եկե՞ր ես, հա՛յր իմ... այդ որչա՞փ թրջեր ես։*

ԹՈՎՄԱ.— *Այո, բավական... քիչ մը առաջ տեղացող անձրևին տակ կեցողն ի՞նչ պիտի ըլլա։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց ի՞նչ հարկ կար անձրևին տակ կենալու։*

ԹՈՎՄԱ.— *Որովհետև մեկուն կսպասեի։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ո՞ր անսիրտն այդպես անձրևին տակ սպասցնել տվավ քեզ։*

ԹՈՎՄԱ.— *Իմ բաած մարդ չէ, հոգի չունի, այլ հոգի կուտա, անունն է հաց... վաղվան բաժին իննկած հացերնիս չկրցի բերել։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Հոգ մի ըներ, հայր իմ, անշուշտ կուտա։*

ԹՈՎՄԱ.— (ընդմիջելով) *Ո՞վ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Աստվա՞ծ։*

ԹՈՎՄԱ.— (ակռաները կրճտելով) *Աստվա՞ծ...* (հանդարտությամբ) *Այո՛, Աստված...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կրակարաննիս ամայի է, եթե ոչ հագուստներդ կըչորցնեինք։*

ԹՈՎՄԱ.— *Հոգ չէ, Վարդուհի... ես գոհ եմ որ փոթորկին ժամանակ պատին տակ նստած ատենս կայծակը չը զարկավ ղիս։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ինչո՞ւ նստար պատին տակ, անոր համար թրջեր ես։*

ԹՈՎՄԱ.— *Կը մուրայի։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Աստվա՞ծ իմ։*

ԵՂՎԱՐԴ.— *Ի՞նչ կը լսեմ* (գիրքը գոցելով գրասեղանին վրա կը նետե ու ճորը կը մոտենա)։

ԹՈՎՄԱ.— *Այո՛, կը մուրայի՛... ոչ թե լոկ այս գիշեր... այլ ամեն*

գիշեր՝ երբ մութը կոխելուն դուրս կելնեի. դուք չէիք մտածեր անգամ մը թե մեր հայրը ի՞նչպես կը բերե այս հացը և թե ո՞վ կուտա զայն։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Աստվա՜ծ։

ԹՈՎՄԱ.— (ակռաները կրճտելով) Աստվա՜ծ... (հանդարտությամբ) Այո՛, Աստված... և ի՞նչպես չը մուրայի, մինչդեռ անակնկալ դիպվածով մը պարտուց ահագին գումարով սնանկացած՝ Ռուսիայեն հոս փախչելու ստիպվեցա՝ գրպանս մեկ քանի մանեթ միայն ունենալով. արհեստի մը տեղյակ չըլլալով, չէի կրնար օրապահիկս ճարել հոս, վասնզի չէի կրնար մեկուն քով ծառայության մտնել կամ պարապորդ և անարհեստ մարդու մը բաժին ինկած նվաստ աշխատության մը պարապիլ, վասնզի երբեմն Մուրատոֆ մ՚էի, քանի որ դու կար կարելու վարժ չէիր և Եղվարդ միշտ գրելու զբաղած էր, քանի որ թշվառությունն ու անոթությունը մեզ կսպառնար՝ ի՞նչ կրնայի ընել... միտքս դրի մուրացկան մ՚ըլլալ, վերարկուովս երեսս ծածկած՝ իրիկուններն մութ ատեն ափս բանալ այնպիսի մարդոց՝ որոնց եթե անունս տայի, ըսեի թե Մուրատոֆն եմ, ապշած ու զարհուրած ետ ետ կը քաշվեին առանց դրամ մը տալու՝ որուն կարոտ էի... լռեցի միշտ, դեմքս ծածկեցի և ձեզ բան մը չհայտնեցի՝ մտածելով որ դուցե մուրացված հաց է ըսելով չէիք ուտեր. բայց հիմա ամեն բան կը հայտնեմ, վասնզի ալ չպիտի մուրամ... (փոփոխակի աճոնց երեսը կը նայի). բայց երկուքեդ և ոչ մեկը չըսեր թե ի՞նչ պիտի ընեք, ի՞նչպես հաց պիտի գտնենք։

ԵՂՎԱՐԴ.— Մենք անոթի չենք, հայր իմ։

ԹՈՎՄԱ.— Հիմա... բայց վա՜ղը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Աստված կուտա։

ԹՈՎՄԱ.— (ակռաները կրճտելով) Աստվա՜ծ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինչո՞ւ կը հուսահատիս, հայր իմ։

ԹՈՎՄԱ.— Եղվա՛րդ, Մուրատոֆի ապարանը կը վայելեր կարդալ, գրել, նվագել և զբոսնել... բայց Թովմայի հյուղը առանք չընդունիր. եթե չես ուզեր յուղոտ օձիքով, մաշած ու պատռած հագուստ հագնիլ, ոսկեզօծ թշվառ մը, ինծի պես մուրացկան մ՚ըլլալ, սա տարբերությամբ, որ եթե ես

պղնձէ թաս մը ունիմ, դու քնար մը պիտի ունենաս... վերջապես երբ չես ուզեր բացարձակ մուրացկան մ'ըլլալ, կրակը նետե այդ մրոտած թուղթերը, որոց վրա ընդունայն քիրտն ու լույս կը թափես... տաղերդութեանց մէջ սիրուհույդ առջև խոստմունքներ, անձնուրացութիւններ կը շարես, բայց երբ ամուսին ըլլաս՝ չոր հաց անգամ չես կրնար տանիլ անոր... հրաժարե այդ քաղցը բայց խաբուսիկ երևակայութիւններեն և երազներեն, հրաժարե այդ թովիչ փառքեն, ջախջախե այդ մուրացկանութեան նպաստող քնարը։

ԵԴՎԱՐԴ.— Բայց օր մը անշուշտ անոր հարգը կը ճանչցվի։

ԹՈՎՄԱ.— Այո՛, գուցե անունդ ոսկեզօծ պիտի հիշատակվի խեղճ ու անշուք մեռնելե վերջ, հորանջող քահանաներ՝ դերեզմանոցին ճամբուն վրա գտնված փոսի մը մէջ քեզ նետելե եռքը, երեսակս ու ժժգոհ մեռելաթաղներ՝ քանի մը թիւ ցուրտ հող վրադ թափելե և տարիներ դերեզմանիդ հողակույտը հարթ և անհայտ ընելե վերջը։ Մա՛րդն է ապրողը թե փտած ոսկորը, սի՛րան է զգացողը թե դերեզմանը... կը հասկնա՞ս... գնա, գործավոր եղիր՝ բայց երբեք մի՛ փափագիր հայ մատենագիր ըլլալ։ Ահա իմաց կուտամ քեզ, վաղվընե գնա ատակ վաստակելու գործ գտիր, և երե իրիկունը ձեռքդ հաց մը և մոմ մը չտեսնեմ, տունս չպիտի ընդունիմ քեզ։

ԵԴՎԱՐԴ.— Բայց վարդուհին մինակ կը մնա հոս։

ԹՈՎՄԱ.— Ես հոս եմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ, հա՛յր իմ, նա ոչ գոք կը ճանչե հոս և ոչ ալ արհեստի մը տեղյակ է. ի՞նչպես կրնա գործ գտնել և ատակ շահիլ։

ԹՈՎՄԱ.— Թող հարուստին մեկուն աղերսագիր մը տա և անոր քով ծառայութեան մտնե։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այսպես ուսումնական և հանճարեղ պատանի մը ծառա կամ սպասավոր ըլլա։

ԹՈՎՄԱ.— Եթե չուզեր վերջը մուրացկան մը ըլլալ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց, հա՛յր իմ, ես կար կարել կսկսիմ և եղվարդի տեղ ատակ կը շահիմ, ասով կրնանք ապրիլ։

ԹՈՎՄԱ.— Խեղճ աղջիկ, կկարծես որ ատով կրնա՞նք ապաթիլ...

քիչ մ'առաջ մեր տան տերը՝ Սալոմոն օձիքս բռնեց և ըսավ որ եթե քանի մը օրեն չվճարեմ չորս ամսվան վարձքը, կարասիներս փողոցը պիտի նետե ու ոստիկանության պիտի մատնե զիս. մտածեցեք եթե ոստիկանության հանձնվիմ...

ԵԴՎԱՐԴ.— (սարսափած) Աստվա՜ծ իմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՜յր իմ։

ԹՈՎՄԱ.— Հիմա ամեն բան հայտնեցի ձեզ, ինչ որ կուզեք ըրեք (մտաճույզ աթոռի մը վրա կիյնա)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եդվա՜րդ։

ԵԴՎԱՐԴ.— Վարդուհի՜ (կը գրկվին)։

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

ՍՐԱՀԱՆԳ Բ

Տեսարանն է թատերաբեմ.—Թատրոնի սպասավոր մը թատերաբեմը կավլե.—Տեսարանին խորը՝ ձևացյալ դուռներ, պատուհաններ, առձաններ և այլն:

Տեսիլ Ա.

Բ. ԴԵՐԱՍԱՆ (ներս) Ա. ԴԵՐԱՍԱՆ

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (ցրտեն դողալով, մերթ ձեռքերը և մերթ աչքերը շփելով կը մտնե):

Գեշ աշեն, տը տը, տը,
Անշահ բան, տը, տը, տը,
Գեշ աշեն,
Իրավ չատ
Անպիտան. և այլն:

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (մտնելով՝ նույնպես)

Դեռ մանուկ էի,
Ծնողքս ինձ ըսին, և այլն:

(ընկերը տեսնելով) *Բարի լույս, ժա՛դ, ի՞նչպես երեկ դիշերվան փոթորկահույզ անձրևը խափանեց վիքթոր Հյուկոյի այն ընտիր խաղը:*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Թշվառակա՜ն, կարծես՝ թե թատրոնին ձեղունին մեջ ահագին և խոշոր մուկերու երամ մը հեղեղի պես կերթևեկեր:*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (խնդալով) *Հապա հանդիսատեսներու աղմո՞ւկը:*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Այո, փոթորիկը բռնեց անոր տեղը... ամայի նստարանները և օթյակները ըսել կուզես... եթե դերասաններու թափթփուքներ, թատրոնի սպասավորներ և ազատ

մուտք ունեցող քանի մը պարոններ ասդին անդին կծկած չըլլային սատրինջի քարերու պես, թատերասրահը մարդու շուք անգամ չպիտի տեսնվեր... մոռացա ըսելու որ վերնատունը քանի մը սուլող պարոններ կը գտնվեին։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Հապա անցյալ շաբաթ դիշերվան ներկայացո՞ւմը, քանի որ երկինքը պայծառ էր և խաղն ալ փառավոր ազգային ողբերգություն մը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Գուցե թատերազդի ցրիչը շատապի գալով ազդեբուն տպչալ երեսը փակցուցած է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց ազգ. մ՚ալ Մ.*) լրագրին ղրկվեցավ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ա՜հ, Գրաշարապետը շարված թատերազդը անուշադրությամբ տեղավորած միջոցին, վասնզի իրեն ձրի մուտք չկար՝ մոռած մատներեն սահելով դետինը ինկեր և ցրվեր է... գրաշարապետը փույթ չէ ըրեր զանոնք նորեն ժողվելու, և անոր տեղ պատրաստ ազդ մը տեղավորեր է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Կատակը մեկդի, ես այնպես կը կարծեմ թե հասարակությունը ձանձրացած է դերասանին կոկորդը պատռող և թատերատեսներու գլուխը ուռեցնող ազգային դյուցազներգական խաղերեն, և երթ ընտանեկան անցքերու վրա հորինված ժամանակակից նորանոր թատերախաղեր ներկայացվին, հուսամ թե ժողովուրդը շատ կախորժի անոնցմե և իր քաջալերությունը չի զլանար։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Երթ բերանփոխ ըլլա, դեշ չըլլար ըսել կուզես։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ոչ, իմ կարծիքս այն է, որ ներկայացումները գրեթե բոլորովին ժամանակակից ըլլալու են, վասն զի հայ հասարակությունը հիմա առաջինը չէ, արթնցավ... և այն զառանցական խաղերով գոհ չըլլար՝ որոնց իմաստը մեր արդիականության հետ կապակցություն չունի գրեթե։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այո, այն խաղերու նորությունն անցավ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Նաև այն դյուցազնական խաղերուն բոլորն ալ միակերպ են գրեթե, որ ժողովուրդը կը ձանձրացնեն հարկավ. ասով ըսել չեմ ուզեր թե այն խաղերը բոլորովին չներկայացվին, այլ ըսել կուզեմ թե ժամանակակից խաղերն անոնցմե նախամեծար համարվին, քան որ ունկընդիր թատերատեսն ալ վերջիններեն ավելի բան մը

*) Ակնարկում է անշուշտ Յուրյուճյանի «Մասիս» օրաթերթը։

կղզա կամ կը շահի, վասնզի ինքն ալ տեսարանին վրա եկնող անձի մը հակապատկերը կը դառնա իր վրա, և հեղինակին ճաշակին կամ հմտութեանը շնորհիվ քիչ կամ շատ օգուտ կը քաղե անկե։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մանավանդ արդի կատակերգութիւնները։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Թատերգութիւն կամ կատակերգութիւն, երկուքն ալ եթե ժամանակակից անցքերու վրա հորինվին, ժողովրդին համար շատ օգտավետ են. ժողովրդին օգտակար եղածը թատրոնին ալ ըսել է, վասնզի գիրար կը սնուցանեն։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Կեցցես, ժա՛ն, լրագրի մը խմբագրի պես դատողութիւն ունիս։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց վերջապես ըսածներս իրավացի չե՞ն։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Օ՜հ, իմ նպաստիս՝ անձրևատ, ձյունոտ և ցուրտ դիշերվան վրա կերդնում որ բոլոր ըսածներդ իրավացի են։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Պետք է որ մենք հասարակութենե քաղված այս դիտողութիւնները մեր տնօրենին հաղորդենք, որպեսզի ժողովրդյան ճաշակին համեմատ վարվելով ոչ իրեն վնաս ըլլա և ոչ ալ մեզ... Ես ազգային խաղի մը ներկայացման դիշերը դեր չունենալով դետնասրահը կը դառնվեի, վարագույրը դոցված աեեն առջևի նստարանին վրա դտնվող ուսումնական և հարգի երևույթ ունեցող երկու պարոններու խոսակցութենեն քաղեցի այս դիտողութեանս աղբյուրը և եաքը մտածեցի որ շատ իրավունք ունեին, իրենց քննադատութեյան հեղինակի դրչին և հանճարին վրա չէր, այլ ցավ կը հայտնեին թե թատերագիրք ընդհանրապես անօգուտ նյութերու վրա կը հոդնեին և թե դերասանական արվեստն ասանկով չէր զարգանար։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այդ մարդիկը շատ լավ դիտողություն ըրեր են։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Վասնզի այն խաղերուն մեջ ունակություն կամ արհեստ ալ չմտներ որ դերասանը կարենա փայլեցնել իր հանճարը։

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ և ՋԻՋԻԿ (խիստ վերջը՝ սպասավոր մը)

ՋԻՋԻԿ.— Բարի լույս ձեզ, ժա՛ն, ժա՛ք։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Բարի լույս, Ռուսո։

Ա. ԴՐԱՍԱՆ.— (խնդալով) Հա՛, հա՛, հա՛, շատ խեղկատակ ես, ժաք։

ՋԻՋԻԿ.— Ինչո՞ւ խնդացիք, ժա՛ն, ի՞նչ ըսել է Ռուսո։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ժան, ժաք Ռուսո՝ գաղղիացի փիլիսոփայի մ՚անուն է. մեր ժաքը անոր փիլիսոփայությունը շատ կարդացած ըլլալուն և իր բերանն ալ միշտ ժան ժաք Ռուսո հեղեղելուն համար՝ երբ դու մեր անունը տալով՝ ժան ժաք ըսիր, ինքն ալ՝ բերանը վարժված ըլլալով՝ պակասը լեցնելու համար, Ռուսո կոչեց քեզ, բայց միտքը ուրիշ բան էր. Ռուսո շիկահեր ըսել է և այս անունը քեզ տալով կատակախառն նախատինքով մը ոգեղություն մը քեզ հատկացնել էր միտքը, ինչպես մազերդ մետաքսի պես փայլուն և սև են, օրիորդ Ջիջիլ։

ՋԻՋԻԿ.— (գլուխը երերցնելով) Խեղկատակ պարոնս։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց դուն ալ զինքն Մոլիեր կոչե իր գեղեցիկ կատակաբանության համար, որ շատ կը վայլե։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ա՜հ, փառք մ՚է ինձ այդ, որովհետև Մոլիեր Գաղղիացվոց առաջին կատակերգակ բանաստեղծն է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Եթե բառարանը նայիս, Մոլիեր ցեխի ալ նշանակություն ունի։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Վա՛յ... այդ չէի դիտեր։

ՋԻՋԻԿ.— (խնդալով) Շնորհակալ եմ քու ազնիվ կատակաբանությենդ, պարոն Մոլիեր։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (խոնարհությամբ) Ներում կը խնդրեմ ուրեմն... ժան՝ որ ողբերգակ դերասան մը ճանչցված է, ինձնե ավելի լավ կապեց այս կատակը. ներում կը խնդրեմ, օրիորդ Ջիջիլ... հաղթվեցա...։

ՋԻՋԻԿ.— (զոռոզությամբ) Կը ներեմ, պարոն ժաք։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (ձեռքը շփելով) Բայց բավական ցուրտ կընե օդը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ձմեռը կանուխ արթնցավ, ձեռքերնիս ծակ ըրպանիս խորհելու ստիպվելով՝ հազար ու մեկ դառն մտածումներ մտաց մեջ դիզելու համար... բայց կեցցեն կատակաբանությունները։

ՋԻՋԻԿ.— Իրավունք ունիս ժա՛ք։ (Սույն միջոցին սպասավոր մը խոշոր կանցնի, վառարան մը ձեռքը)։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (զայն տեսնելով) Օհո՜, Միքե, ո՞ւր կը տանիս այդ վառարանը։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Պարոն տնօրենին սենյակը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մեզի տուր (կուզ առնել)։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Բայց, պարոն...

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Տուր կըսեմ (կառնե). ուրիշ վառարան մը տար իրեն (սպասավորը շփոթած կը մեկնի). Պարոն տնօրենը շատ գոհ կըլլա եթե առանց վառարանի սենյակի մեջ ինքը մտի և մենք վառարանով մը ձայներնիս կարենք քան թե մեր առևտուր մնացած ամսականները պահանջելու համար գլուխը ուռեցնենք (վառարաւը կը բերե, որուն բոլորտիքը շարվելով երեքը կը տաքնան)։

ՋԻՋԻԿ.— Այդ մասին իրավունք չունիս պարոն տնօրենին դեմ բողոքելու, վասնզի Թատրոնն արդեն հաստատ չունի դեռ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բարեսիրտ Ջիչիկ իրավունք ունի։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Եվ մեթե ես իրեն դեմ բողոքած ունի՞մ... կատակ մ'էր ըրածս։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ահա լավ վառարան մը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Փափուկ ձեռքերդ կապուտցեր են ցրտեն, տաքցո՛ւր, օրիորդ Ջիչիկ։

ՋԻՋԻԿ.— Իրավունք ունիս... շատ մսեր եմ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մեր քնասեր ընկերներն դեռ ցուրտ անկողիններուն մեջ կը խռհան։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Աղքատ և որբ ըլլալն այսպես է ահա, օրիորդ Ջիչիկ։

ՋԻՋԻԿ.— (տխրելով և ճառաչելով) Կաղաչեմ, պարոն Ժան, անցեկույն վարագույրը մի բանար։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Եթե այնպես է, ներե ուրեմն, բարեսիրտ Ջիչիկ։

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ՎԱՀԱԳՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— (ականքը տեսար մը՝ մռնելով) Բարի լույս ձեզ... այսօր շատ ցուրտ կընե (վառարանեն կը տաքնա)։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (ժամացույցը նայելով) Ժամը ճիշտ յոթն է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Եվ դեռ մեկը չկա Թատերաբեմին վրա։

ՋԻՋԻԿ.— Այսօր փորձ չունի՞նք։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Քանի մը դերասաններ ռուիպողական գործերու համար հրաման առին, ուստի այսօր չպիտի կրնանք փորձ ընել։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ուրեմն հոս մարմար կտրելու տեղ մըն ալ կենյակը քաշվինք, որ բավական կոկիկ է և այս վառարանով կըրնանք տաքնալ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Այո, աղեկ ըսիր... (Վահագնյանի) դուք ալ կուգա՞ք։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Ոչ, ես սա խաղը պիտի կարդամ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Նո՞ր հեղինակություն մ'է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Այո։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ազգայի՞ն։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Այո։

ՋԻՋԻԿ.— Ողբերգությո՞ւն։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Անշուշտ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ե՞րբ պիտի ներկայացվի։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Գուցե երկու շաբաթեն։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Երթանք։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այո (երթալու կըլլա)։

ՋԻՋԻԿ.— Վառարա՞նը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ա՜հ, քիչ մնաց որ կը մոռնայի (վառարանը կառնե, երեքը կը մեկնին)։

Տեսիլ Դ

ՎԱՀԱԳՆՅԱՆ և ԵԴՎԱՐԴ

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— (Եդվարդին՝ որ գուլիսի մեջ կերևի) Ո՞վ կուզես, պարո՛ն։

ԵԴՎԱՐԴ.— Ներեցեք, պարոն, արդյոք կրնա՞մ տեսնել պարոն տնօրենը։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Ի՞նչ պիտի ընես։

ԵԴՎԱՐԴ.— Առանձին խոսիլ կուզեի իրեն հետ։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Այդ սանդուխեն վեր ել և առաջին սենյակը նայե... բայց կեցիր, ինքն ալ ահա կուգա։

ԵԴՎԱՐԴ.— Շնորհակալ եմ, պարո՛ն։

Տեսիլ Ե

ՊՈՂՅԱՆՑ, ԵԴՎԱՐԴ, ՎԱՀԱԳՆՅԱՆ

(որ աթոռի մը վրա նստած՝ ձեռքի տետրը կարդալու կըզբաղի)։

ԵԴՎԱՐԴ.— Պարոն տնօրէն, պատիվ ունիմ ձեզ ներկայանալու։

ՊՈՂՅԱՆՑ.— Կրնաս խոսիլ։

ԵԴՎԱՐԴ.— Արդյոք կարելի՞ է որ դիս ձեր խմբին մէջ ընդունելու բարութիւնը շնորհեք ինձ։

ՊՈՂՅԱՆՑ.— Դերասա՞ն ըլլալ կուզես։

ԵԴՎԱՐԴ.— Այո, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Անշուշտ դերասանի մը հարկաւոր եղած ընդունակութիւնն ու միջոցը ունիս։

ԵԴՎԱՐԴ.— Ըստ բաւականին, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Կրնա՞ս խոսք տալ։

ԵԴՎԱՐԴ.— Եթէ կհաճիք, փորձեցեք, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Շատ լաւ։

ԵԴՎԱՐԴ.— Ընդունելու համար պայման մը ունի՞ք առաջարկելիք։

ՊՈՂՅԱՆՑ.— Սա կա որ նորեկ դերասանի մը քառասուն ֆրանկէն աւելի ամսական չեմ կրնար վճարել։

ԵԴՎԱՐԴ.— Շատ մեծ բարութիւն մ՚է ըրածնիդ, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուրեմն կընդունի՞ս այս պայմանը։

ԵԴՎԱՐԴ.— Եվ շնորհակալութեամբ, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուստի ես ալ այս պայմանով խումբիս մէջ իբրև դերասան կընդունիմ քեզ այսօրվընէ... հուսամ թէ գոհ ես։

ԵԴՎԱՐԴ.— Ոչ թէ գոհ, այլ երջանիկ, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Անշուշտ որևէ անտեղութիւն մը չեմ տեսեր մինչև վերջը։

ԵԴՎԱՐԴ.— Կը հուսամ, պարո՛ն, և կը փափաքիմ որ այդպես ըլլա։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուրեմն, այսպես...

ԵԴՎԱՐԴ.— Պարոն...

ՊՈՂՅԱՆՑ.— Եթէ խոսելիք մ՚ունիս, զրուցե։

ԵԴՎԱՐԴ.— (գրպանեն տետր մը հանելով) Արդյոք կրնա՞մ ձեզ ներկայացնել։

ՊՈՂՅԱՆՑ.— Ի՞նչ է այդ։

ԵԴՎԱՐԴ.— Ռուսերենե թարգմանված թատերախաղ մ'է։
ՊՈՂՅԱՆՑ.— Տեսնեմ (կառնե և կը զննե) ընտի՛ր խաղ է։
ԵԴՎԱՐԴ.— Երե կարդալու հաճիք, պիտի տեսնեք։
ՊՈՂՅԱՆՑ.— Աղեկ։
ԵԴՎԱՐԴ.— Պետք ունի՞ք։
ՊՈՂՅԱՆՑ.— Ի՞նչ կը պահանջես։
ԵԴՎԱՐԴ.— Հինգ ֆրանք։
ՊՈՂՅԱՆՑ.— Հինգ ֆրա՞նք... շա՛տ լավ։
ԵԴՎԱՐԴ.— Պարոն...
ՊՈՂՅԱՆՑ.— Սառ՞կը կուզես։
ԵԴՎԱՐԴ.— Շատ բարեհիրտ եք, պարո՛ն։
ՊՈՂՅԱՆՑ.— (Վահագնյանի մոտենալով՝ որ միշտ կը կարդա) Ի՞նչ է կարդացածդ։
ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Անցյալ օր կարդալու համար ինձ տված ազգային խաղերնիդ է։
ՊՈՂՅԱՆՑ.— Ի՞նչպես է։
ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Բանաստեղծություն։
ՊՈՂՅԱՆՑ.— Երե կուզեք, սենյակս երթանք և միասեղ կարդանք։
ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Շատ լավ... (ցած՝ առ Պողյանց՝ Եդվարդը ակնարկելով) նորեկը*) դերասա՞ն է։
ՊՈՂՅԱՆՑ.— (ցած) Այո, ի՞նչպես կը գտնես։
ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Շա՛տ փափուկ... Լավ սիրահար կըլլա... անդին աշխարհը գացող մեր սիրահարին տեղը կը բռնե և կամ զայն կը դերազանցե։
ՊՈՂՅԱՆՑ.— Ես ալ այնպես կը հուսամ... (բարձր) երթանք ուրեմն։ (Եդվարդի) Ինչպես որ ըսի, պարոն, (Եդվարդ գլուխը և շնորհակալության շարժում մը կընե)։

Տեսիլ Զ

ԵԴՎԱՐԴ (մինակ)

Հինգ ֆրա՞նք... Որչա՛փ հարուստ եմ... պիտի երթամ վարդուհիս տեսնելու... բայց դուռը, անգո՛ւթ հայր, բայց դուռը ձեռքի հինգ ֆրանքիս, ես որ վարդուհիս տեսնելու համար արյունս անգամ կուտամ, դու ստակ կուզես... սիրո

*) Տպված է նոռեկ. ուղղելի նոռեկը։

մուտք... բայց ոչ, զքեզ նախատելու իրավունք չունիմ, վասնզի քու մուրացած հացդ կերա... բայց անոթի կը մընայի եթե վարդուհի քովս ըլլար, իր շունչը ինծի կյանք կուտար... ո՜հ, եթե հոս եկած չըլլայի, այս դիշեր՝ առանց ատակի և անոթի՝ փողոցին սալահատակին վրա պիտի պառկեի, եթե սուվերս տեսնեին, գինով՝ և եթե դեմքս տեսնեին, սրիկա մը պիտի կարծեին, ու բանտ պիտի տանեին զիս... աղքատությո՜ւն, ո՞վ կը զրկե զքեզ, ես չեմ կարծեր որ երկնից հեղինակությունն ես, այլ դժոխաց մեկ կատակը... ա՜հ, սոսկալի է աղքատ ըլլալ և սիրել, երբ սիրուհիդ՝ զոր քու շնչովդ կուզես պատսպարել, մերկ է և անոթի... բայց ես հի՜նգ ֆրանք ունիմ, վարդուհիս քիչ մը հաց և բոդին մը կառնեմ և վաղը երկու երեք ժամ թև ի թև կը շրջագայինք մեր տնակին ձորը... ամառգիսուն՝ թռշակովս ալ մեր տնակին քառասուն ֆրանք պարտքը կուտամ... երջանիկ կըլլանք... բա՜ց դուռը, հա՛յր, հի՜նգ ֆրանք ունիմ... հի՜նգ ֆրանք... (կը մեկնի. պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Ա.

Թովմայի տնակը. պատուհանը՝ արևուն մարը մտնելնէ կը ցոյա:

Տեսիլ Ա.

ԹՈՎՄԱ և ՎԱՐԴՈՒՀԻ

ԹՈՎՄԱ.— Ահա արևը մարը կը մտնե... կուզե՞ս որ վաղը անոթութենեն ընկճյալ և կիրտ՝ իզուր իր ճառագայթներուն կծկինք քիչ մը կյանք և հոգի առնելու համար... կուզե՞ս որ վաղ իրիկվան մարը մտնող արևին հետ մենք ալ անոթութենեն մարինք... Վարդուհի՛, մենք արդեն այս տնակին մեջ աղքատության մեջ, անոթության մեջ անպատիվ ենք... Աստված չկամիր որ անձնասպան ըլլանք, բայց՝ մինչդեռ ես մուրացկանությունը կատեմ և դուն ալ մուրացված հաց չես ուտեր... հաց չունինք... ի՞նչ ընենք, Վարդուհի՛, հա՛ բո՛ւստ ըլլանք և վրե՛ժ առնենք:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուակի՞ց:

ԹՈՎՄԱ.— Չեմ գիտեր, բայց կզգամ որ սիրտս ատելության հնոցի պես կը բռնկի... վրե՛ժ առնել կուզեմ, այլ չեմ գիտեր, ուակի՞ց... երբ Ռուսիո ապարանքս կը հիշեմ, ուր ինչվան առավոտ ջահերը կը վառեին, ուր մինչև առավոտ ծիծաղները արձագանք կուտային, երբ հոն բազմախորհրդական ակռաներս տեսնելով միայն կը հագենայի և երբ հոս ցամաք հացի անհագ քաղցը կզգամ, երբ կը մտածեմ թե բոլոր անցելույն փառքերը զիս լքին և սովերի պես անցան, անոթութենեն ավելի հարատության ծարավ մը կզգամ, ա՜հ, մեռնի՛լ, բայց հարուստ մեռնիլ կուզեմ... այո, Թով-

մայի գծուծ անունը կուզեմ թոթվել և զմուրատոֆ վերա-
կանգնել... կուզեմ որ մուրացկանի աղջիկ չը կոչվիս դու,
այլ Մուրատոֆի աղջիկը... Վարդուհի՛, հարստությունը ա-
մոթապարտ կարմրությունը կը ծածկե, իսկ աղքատությունը
անբիծ ճակատը կը նսեմացնե... Վարդուհի, հարո՛ստ ըլ-
լանք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հապա խեղճ եղվա՞րդը, որ վռնտեցիր։

ԹՈՎՄԱ.— Աղեկ ըսիր, այն ալ անշուշտ քովերնիս կառնենք և
երջանիկ կըլլանք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց կը վախնամ ես անկե։

ԹՈՎՄԱ.— Ինչո՞ւ կը դեղնիս... կը սիրե՞ս զինքը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Անկե կը վախնամ միայն։

ԹՈՎՄԱ.— Բայց այդ գաղտնիք մը պիտի ըլլա։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՜հ, ո՛չ, կը վախնամ։

ԹՈՎՄԱ.— Ուրե՞մն...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Չեմ կրնար։

ԹՈՎՄԱ.— Բայց մտածե... անոթությունը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կը համբերեմ...

ԹՈՎՄԱ.— Իսկ ես չեմ կրնար համբերել... արյունս ցամքելով
անոթի մեռնելու տեղ արյուն թափելով կուզեմ մեռնի՛լ...
(հուսահատությամբ բաճ մը կը փնտռե)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (հայրը բռնելով) Հա՛յր իմ... ի՞նչ կընես...։

ԹՈՎՄԱ.— Թո՛ղ զիս... անոթի՜ մեռնիմ... մինչև ես մանո՞ւկ եմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կեցիր, հա՛յր իմ, ալ քուկդ եմ... (Թովմա կը
ցնցվի) քու աղջիկդ եմ; ինչ որ կուզես այն ըրե, միայն թե
դու մի մեռնիր... միայն թե մի լքանկեր հետս անպատիվ
աղջիկդ, դարձյալ քու անմեղ աղջկանդ պես նայե ինծի։

ԹՈՎՄԱ.— (փղձկալով) Վարդուհի՜... (աչքունքը կընդմիջե զինքը)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եթե մայրս կենդանի ըլլար, զիս կպաշտպաներ։

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, զա՛րկ զիս, և այդպես մի խոսիր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ներե, հա՛յր իմ... եթե փոքր ինչ վախկոտ եմ։

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, եթե այդպես պիտի մեղադրվիր զիս, ինչո՞ւ
քիչ մը առաջ ինդ չսվիր որ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ոչ, հա՛յր իմ, ներումն կը խնդրեմ, հանդարտե։

ԹՈՎՄԱ.— Աղջի՛կս, չես գիտեր թե անոթությունը որչափ սոս-
կալի է...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Գիտեմ, հա՛յր իմ... (ճառաչելով) Եղվա՞րդ...
ԹՈՎՄԱ.— Այդ անունը մի տար։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինչո՞ւ, հա՛յր իմ։
ԹՈՎՄԱ.— Վասնզի քաջութիւնդ կը նվաղի։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ընդհակառակն, հա՛յր իմ, հիմա կզդամ որ զինքը պիտի ազատեմ փողոցներու մեջ անպաշտպան, հիվանդ և անօթի մեռնելե... արդյոք խեղճ Ռաֆայելս ի՞նչ կընե այս վայրկենիս։
ԹՈՎՄԱ.— Կաղաչեմ, Վարդուհի՛, փարատե այդ մտածմունքը, վասնզի դու լալով սիրտս թունդ կը հանես.... գիտեմ, անիրավություն ըրի Եղվարդը ճամբելով, բայց ի՞նչ կրնայի ընել, երբ ոստիկանության պիտի մատնվեի թե իր և թե քու վիճակդ գեշ պիտի ըլլար, մտածեցի որ օր առաջ գործ մը գտնելով կրնար զբեղ և զինքը խնամել, բայց հիմա որ հարուստ պիտի ըլլանք...
ՎԱՐԴՈՒՀԻ.— (ընդմիջելով) Կը հասկնամ, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Վարդուհի շատ պիտի ատե՞ս զիս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ընդհակառակը գոհ պիտի ըլլամ... վասնզի դու և Եղվարդ անօթութենեն և աղքատութենեն պիտի ազատիք...
ԹՈՎՄԱ.— Մանավանդ մուրալե...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Տես, հա՛յր իմ, ալ գոհ եմ և կը ժպտիմ... (կջանա ժպտիլ)։
ԹՈՎՄԱ.— Վարդուհի՞... աղջի՞կս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— (կարմրելով, աչերը խոնարհելով և գրեթե թոթովելով) Հա՛յր իմ, արդյոք այն մարդը երիտասա՞րդ է։
ԹՈՎՄԱ.— Ինչո՞ւ կը հարցնես։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ չըլլա որ անհաճո դեմք մ'ունենա, կը վախնամ, կը սոսկամ որ քաջութիւնս կը պակսի... գիտես որ վախկոտ եմ։
ԹՈՎՄԱ.— (ուսաճատությամբ...) Սոսկալի բան է այս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Մի՛ բարկանար, հա՛յր իմ, սիրտս ամուր կբռնեմ... ալ ամեն բանի պատրաստ եմ, եթե ճիվաղ մ'ալ ըլլա, պի, տի գրկեմ, որպեսզի դուք երջանիկ ըլլաք... գո՞հ ես, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Վարդուհի, ալ բավական է... ինձ մի հարցներ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Կուզե՞ս որ սենյակս քաշվիմ։

ԹՈՎՄԱ.— Դու գիտես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու հոս պիտի ըլլաս, այնպես չէ՞։

ԹՈՎՄԱ.— Այո։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կաղաչեմ, եթե նվվարդ առանց հացի դա այս իրի-կուն, մի վռնտեր։

ԹՈՎՄԱ.— Անտարակույս... (մեկուսի) բայց եթե նահապետոփ հո՞ս ըլլա...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Սենյակս կերթամ, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Բայց մի՛թե...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դեռ ըսելիք մ՚ունի՞ս, հա՛յր իմ։

ԹՈՎՄԱ.— Աղդոք առանձին լալու համա՞ր սենյակդ քաշվիլ կուզես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՛չ, հա՛յր իմ... այլ կվռատովանիմ որ մինակ ըլլալ կուզեմ... դու անփույթ եղիր... (մեկուսի) ո՞վ պիտի օդնե ինծի, հրեշտա՞կը թե սատանան (Վարդուհի կը մեկնի, Թովմա արտուի մը վրա կիյնա մտազբաղ)։

Տեսիլ Ե

ԹՈՎՄԱ և ՄԱԿԱՐ

ՄԱԿԱՐ.— (ձեռքը մախաղ մը՝ մտնելով, մեկուսի) *Խիստ լավ խելք մը մտածեցի, 50 հատ հրաշագործ ոսկի այս մարդուն հանձնելու տեղ, տիրոջս սնոտուկին տակ մնացած նենգյալ դրամներեն 50 ոսկի գտա և պիտի տամ...* (Մախաղը կը բանա և բսակ մը կը հանե)։ *Ահա նենգյալ ոսկիները, որ զուտ և բուն ոսկի ըլլալու համար կեղծ ըլլալեն ուրիշ պակասություն չունին... խեղճ մարդը քար պիտի կտրի, երբ նենգյալ ըլլալն իմանա, ոսոխականության մասին չպիտի կրնա բողոքել, վասնզի ոսոխականությունը պիտի հարցնեն անշուշտ թե սույն կեղծ դրամներուն փոխարեն ի՞նչ տված է. պատասխանը ամոթահարություն է... և այս մարդն շատ խղճահար ըլլալե զատ՝ միանգամայն վախ մ՚ալ կունենա որ դրամանենգ չամբաստանվի... եթե դա բոզոքելու տիրոջս, այն ատեն բան մը կընենք...* (Թովմայի մոտենալով և ականջ ուսին զարնելով) պարո՛ն Թովմա...

ԹՈՎՄԱ.— (շփոթված՝ ոտքի ելնելով) Դուք հո՞ս... պարո՛ն...

ՄԱԿԱՐ.— *Տերս հոս է... պատրա՞ստ ես։*

ԹՈՎՄԱ.— *Իմացուցեք իրեն որ կրնա ներս մտնել...* (Նաիապետոֆ ելեւս կը մտնե. մեկուսի) *Չեմ ճանչեր այս մարդը։*

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— *Ո՞ւր է ինքը։*

ԹՈՎՄԱ.— *Հոս, իր սենյակն է, պարո՛ն։*

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— *Կրնա՞մ տեսնել։*

ԹՈՎՄԱ.— *Անտարակույս, պարո՛ն...* (Նաիապետոֆ կակնարկե Մակարի)։

ՄԱԿԱՐ.— (*Բաակը տալով*) *50 ոսկի է, պարո՛ն Թովմա։*

ԹՈՎՄԱ.— *Շնորհակալ եմ։*

ՄԱԿԱՐ.— *Տե՛ր իմ...* (Նաիապետոֆ երթալու ելրամայական ձևան կընե Մակարի, որ խոնարհելով կը մեկնի. Նաիապետոֆ սենյակը կը մտնե)։

Տեսիլ Գ

ԹՈՎՄԱ և ԵԴՎԱՐԴ

ԵԴՎԱՐԴ.— (*ներս մտնելով*) *Հա՛յր իմ...*

ԹՈՎՄԱ.— *Դո՞ւն հոս...*

ԵԴՎԱՐԴ.— *Ներե, հա՛յր իմ, եթե համարձակեցա ներս մտնելու, վասնզի 5 ֆրանք վաստկեցա... ահա քեզի կը հանձնեմ...*

ԹՈՎՄԱ.— *Շա՛տ ուշ հասար... վասնզի ես արդեն շատ ունիմ...* (*Բաակը ափին մեջ բորվելով*) *ոսկի են սոնք, ոսկի՞...*

ԵԴՎԱՐԴ.— *Ուրեմն հարուստ ենք... և ալ չի պիտի վռնտես զիս... վարդուհիին քով պիտի կենա՞մ ալ... բայց ո՞ւր է վարդուհին։*

ԹՈՎՄԱ.— *Չես կրնար տեսնել զինքը։*

ԵԴՎԱՐԴ.— *Ինչո՞ւ, հա՛յր իմ, մի՞թե իր սենյակը չէ՞* (*կուզե երթալ*)։

ԹՈՎՄԱ.— (*առաջքն առնելով*) *Հոս չէ։*

ԵԴՎԱՐԴ.— *Մի բարկանար, հա՛յր իմ... կսպասեմ որ գա... բայց միթե իրավունք չունի՞մ զինքը փնտռելու, ես՝ որ ամբողջ օր մը զինքը չտեսած անցուցի և...*

ԹՈՎՄԱ.— *Դարձյալ պետք չէ որ տեսնես զինքը։*

ԵԴՎԱՐԴ.— *Ի՞նչ կրսես, հա՛յր իմ... չեմ հասկնար... բայց...*

ԹՈՎՄԱ.— *Եվ կը հրամայեմ որ հիմա՛ դուրս ելնես։*

ԵԴՎԱՐԴ.— *Չես կը վռնտե՞ս դարձյալ։*

ԹՈՎՄԱ.— *Այնպես պետք է...* (*բարկացած՝ ելրամայական ձևան կընե. Եդվարդ սարսափած կը մեկնի*)։

ԱՐԱՐՎԱԾ Գ

Թովմայի տնակին մեջ սենյակ մը:

Տեսիլ Ա

ԹՈՎՄԱ (առանձին, որ հուսահատ և մտանույզ ներս կը մտնե): *Վատությո՜ւն... սոսկալի վատությո՜ւն... այն դրամներն կեղծ են եղեր, ա՜հ, չարաչար խաբեցին զիս... ի՞նչպես պիտի նայիմ աղջկանս երեսը... որ ձեռքս անբիծ ճակտին դրի, արդարացուցի զինքն, ներեցի իր անպատվությանը, բայց չմտածեցի որ իմ գլխուս վերև ալ ուրիշ ձեռք մը կա, անողոք և արդար ձեռք մը՝ որ զիս անիծեց... ավա՜ղ, թեթև բեռ մ'ունեի, մուրացկանի տոպրակ մը, և տըրտունջացի. իսկ հիմա սրտիս վրա երկաթե ձեռք մը կա, որ միշտ կճնշե... աղջկանս անմեղ սրտին վրա դեռևզմանաքար մը թավալեցի. աղջիկ մը վարդի պես շուտ կթոռմի... մեռա՜վ աղջիկս և ես ալ իրավունք չունիմ իր վրա լալու, վասնզի դահիճն գլխատյալին վրա չի լար... ո՜հ, այս միայն կը պակսեր կործանյալ Մուրատոֆին... Հարո՜ստ մարդիկ, ի՞նչ կուզեք աղքատներեն... անոնք ալ պատիվ ունին... ներեցեք միայն եթե դրամն կը շլանան, վասնզի աշխարհի վրա կարոտ են և շատ անգամ անոթի՜... իսկ եթե այն դրամն ալ կեղծ ըլլա... սոսկալի՜ բան է... սոսկալի՜... ի՞նչպես չընդունեի, երբ այն սպասաւոր սատանան բավական հարստություն կը խոստանար ինձ, մինչդեռ ես մուրացկան՝ պարտապան՝ անոթի էի և կուզեի վերականգնիլ... մեռնեի՜... ոչ... վասնզի կուզեի վրեժ առնել աշխարհեն... բայց աշխարհ ինձնե վրեժ առավ... ա՜հ, ի՞նչ ընեմ... մատնեմ այն վա՜տը... բայց ի՞նչպես... եթե արդարության առեներն դիմեմ, պիտի ըսեն թե ի՞նչ տվիր այն

նենգյալ դրամներուն փոխարեն... ի՞նչ պատասխան տամ... ի՞նչ ընեմ... ոչինչ··· թշվա՛ռ մ'ըլլամ և անիծե՛մ···
(աթոռի մը վրա կիյնա հուսահատ):

Տեսիլ Ը

ԹՈՎՄԱ և ՍԱԼՈՄՈՆ

ՍԱԼՈՄՈՆ.— Տեսնենք, եղբա՛յր Թովմա, անշուշտ մեր ստակները պատրաստեցիր, վասնզի Նահապետոֆի մատակարարին հոս գալը քեզի շատ նպաստավոր կերևեր, մանավանդ որ ինքը հաստատեց թե քանի մը օրեն պիտի տաս ստակս:

ԹՈՎՄԱ.— վա՛տ մ'է այն մարդը:

ՍԱԼՈՄՈՆ.— Ինչո՞ւ:

ԹՈՎՄԱ.— Ահա այսչափ:

ՍԱԼՈՄՈՆ.— Կաղաչեմ, եղբա՛յր Թովմա, այդպիսի վարպետ ձևերով մի ջանար օր օրի ձգելու պարտքդ... հավատա որ այս օրերս շատ պետք ունիմ դրամի:

ԹՈՎՄԱ.— Ես ալ:

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց դու բավական ստակ առած ըլլալու ես:

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ բանի համար:

ՍԱԼՈՄՈՆ.— Ես գրեթե բավական կը դուշակեմ:

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ է դուշակածդ:

ՍԱԼՈՄՈՆ.— Աղջիկդ գեղեցիկ է:

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ ըսել կուզես:

ՍԱԼՈՄՈՆ.— Նահապետոֆ զայն տեսած ըլլալու է:

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ կրնա ըլլալ ատկե:

ՍԱԼՈՄՈՆ.— Շատ բան կրնա ըլլալ:

ԹՈՎՄԱ.— Զգուշացիր, պարո՛ն... եթե մեկ մ'ալ այդպիսի խոսք մը հանես բերնեդ, կը ջախջախեմ քեզ:

ՍԱԼՈՄՈՆ.— Մի բարկանար, եղբա՛յր Թովմա, իրավունք ունիս... այդ իմ խառնվելիք գործը չէ, ես միայն ինծի տրված ստակն առնելու պարտական եմ, ինծի չը վայլեր հասկընալ թե այն ստակը ի՞նչպես վաստկված է:

ԹՈՎՄԱ.— Հրեա, ի՞նչ ըսի քեզի:

ՍԱԼՈՄՈՆ.— Ա՛, իրավունք ունիս... բայց դու ալ գործը մի երկարեր, ստակներս տուր որ բերանս գոցեմ, գործիս երթամ... օ՛ն, տեսնեմ սա երկու ամբողջ ոսկին որ իմ բոլոր առնելիքս է... եթե կուզես լավ խելք մը բաներցնել, քանի

մ'ամսվան սահմն ալ կանխիկ տուր որ ետքը չունեցած ժամանակդ դժվարութիւն չը կրես։

ԹՈՎՄԱ.— (մեկուսի) Ոչ... այս մարդը ինծի պես ախմար չէ, վերջը գեշ կըլլա։

ՍԱԼՈՄՈՆ.— Քեզի կըսեմ, եղբա՛յր Թովմա... չե՞ս լսեր։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ կըսես։

ՍԱԼՈՄՈՆ.— Կըսեմ որ եթե հիմա տաս, վերջը դժվարութիւն չըլլար։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ պիտի տամ։

ՍԱԼՈՄՈՆ.— Ետքեն գալիք քանի մը ամսվա վարձքը. (Թովմա դառնութեամբ կը ծիծաղի), ի՞նչ կը խնդաս... դե՞շ խելք է այս...

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, պարապ տեղը կը ցամքեցնես բերանդ։

ՍԱԼՈՄՈՆ.— Եթե չես ընդունիր իմ առաջարկութիւնս, որ շատ նպաստաւոր է քեզի, դու դիտես... առ այժմ սա առնելիքս տուր որ երթամ... ժամանակը կանցնի... պիտի երթամ։

ԹՈՎՄԱ.— Կրնաս երթալ։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց կառակը մեկդի, եղբա՛յր Թովմա։

ԹՈՎՄԱ.— Կառա՛կ... կառակին աղեկը ինծի ըրին։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց վերջապե՞ս։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ ըսել կուզես։

ՍԱԼՈՄՈՆ.— Տեր աստվա՛ծ... քու ականջդ թմբո՞ւկ զարնելու է որ խմանաս... քեզի ըսի թե գործ ունիմ, օրը կը տարա՛ժամի...

ԹՈՎՄԱ.— Ես ի՞նչ ընեմ... աղատ ես երթալու։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց դիս կը կառղեցնես։

ԹՈՎՄԱ.— Որչափ որ կառղիս, ինծի չափ չես կրնար կառղիլ։

ՍԱԼՈՄՈՆ.— Եվ այս կառակերդութեան վե՞րջը։

ԹՈՎՄԱ.— Ողբերգութեան չդառնալու համար կրնաս դուրս ելնել։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց ի՞նչ է քու միտքդ։

ԹՈՎՄԱ.— Ես ոչ միտք ունիմ և ոչ ալ դրամ մը...

ՍԱԼՈՄՈՆ.— Սուտ կը խոսիս, վասնզի աղեկ գիտեմ որ...

ԹՈՎՄԱ.— (ընդմիջելով) Հոե... չեմ կրնար մտիկ ընել քեզ։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց վերջապես ի՞նչ պիտի ընենք քեզի հետ։

ԹՈՎՄԱ.— Ինչ որ կուզես, այն ըրե...

ՍԱԼՈՄՈՆ.— Կուզե՞ս որ ամեն տեղ տարաճայնեմ աղջկանդ...

ԹՈՎՄԱ.— (կոտիճերով վրան վազելով) Երե կուզես որ գլուխդ ջախջախեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— (սարսափելով) Ա՜հ... օգնու...

ԹՈՎՄԱ.— Լռե՛։

ՍԱԼՈՄՈՆ.— Ներե, պարո՛ն...

ԹՈՎՄԱ.— Դուրս պիտի ելնե՞ս։

ՍԱԼՈՄՈՆ.— Այո, պարո՛ն, կելնեմ...

ԹՈՎՄԱ.— Օ՜ն, ուրեմն, կռնակդ տեսնեմ...

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց ի՞նչ իրավունք ունիս իմ տունես վռնտելու զիս...

ԹՈՎՄԱ.— (վրան ճարճակվելով) Դեռ կեցեր կը խոսի՞ս...

ՍԱԼՈՄՈՆ.— Կերթայի, պարո՛ն...

ԹՈՎՄԱ.— Գնա ուրեմն...

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց մեծ անիրավություն...

ԹՈՎՄԱ.— Գծո՛ւծ հրեա... (վրան կը վազե և հրեաև սարսափած կը փախչի). աղջկանս սենյակը ոտքի ձայն մը կա, ինքն է... արթնցեր է... ի՞նչպես երեսը պիտի նայիմ և պատասխան պիտի տամ... բոլոր ջիղերովս կը ցնցվիմ... սիրտս կը նվազի... ա՜հ, ո՞վ պիտի վերցնե ամոթեն աղջկանը առջև խոնարհած՝ տարաբախտ հոր մը ճակատը...

Տեսիլ Դ

ԹՈՎՄԱ և ՎԱՐԴՈՒՀԻ

ԹՈՎՄԱ.— (մեկուսի) Ինքն է...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բարի լույս, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— (աղջկան առջև ի ծուռ՝ և երեսը ծածկելով) Աղջի՜կս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ կըլլաս, հա՛յր իմ... ոտք ել... (կը ջանա ոտք հանել)։

ԹՈՎՄԱ.— Ոչ, ոչ, ինչվան որ չը ներես, չպիտի ոտքի ելնեմ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ կա քեզի ներելու, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Վասնզի շատ թշվառ ըրի քեզ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բնավ, հա՛յր իմ, ես երջանիկ եմ քանի որ դու և եղբայրս այլևս չպիտի մուրաք փողոցները... մինչև ալ հարուստ չե՞նք...

ԹՈՎՄԱ.— Ա՜հ, եթե դիտնայիր, վարդուհի՛։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ կա, հա՛յր իմ։
ԹՈՎՄԱ.— Նախ ներե ինձ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց մի՞թե ես աղջիկդ չե՞մ։
ԹՈՎՄԱ.— Բայց դու անմեղ ես, իսկ ես ոճրագործ եմ... դու կրնաս ներել ինձ, բայց ես չեմ կրնար օրհնել քեզ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Քու ըրածդ բնաւ ոճիր չէ, հա՛յր իմ... ի՞նչ կրնաս ինք ընել առանց սատակի և առանց հացի։
ԹՈՎՄԱ.— Այնպես չէ՞։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ոաք, ել, հա՛յր իմ, մոռնանք անցյալը... և ապագային մեր ապահով բարօրութիւնը վայելենք։
ԹՈՎՄԱ.— Եթե դիտնայի՛ր, խե՜ղճ աղջիկ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ պատահեցաւ, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Եթե ներես, կը խոսիմ։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՛չ միայն ներել, այլ, եթե դժոխոց բոցերուն մէջ ալ ըլլաս, քեզ կը փարիմ անբաժան, հա՛յր իմ... (աւոր փարելով ոտք կը հաներ)։
ԹՈՎՄԱ.— Աղջի՜կս... հրեշտա՜կս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ ունիս, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Որչա՜փ դեղներ ես, վարդուհի՛... որչափ լացեր ես...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Վարդուհի՛, եթե քու տեղդ ըլլայի, այսպիսի հոր մը չը ներելե զատ՝ դահիճե մ'ավելի սոսկալով կը խորշեի անկե... վասնզի ցած դահիճին զարկածն իր արյունը չէ...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Մի կոչեր զիս հայր... կը մեղանչես, անմե՛ղ աղջիկ... փախիր, սոսկա ինձնե, անիծե զիս... ես քու հայրդ չեմ, մի մոտենար... Մի՞թե չե՞ն սատե, չե՞ն զարներ, չե՞ն ջախջախեր հայր մը, որ իր աղջկան պատիվը կը ծախե նենգյալ դրամներով...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ կըսես, հա՛յր իմ...
ԹՈՎՄԱ.— Ճշմարիտը... խաբեցին զիս...
ՎԱՐԴՈՒՀԻ.— Խե՜ղճ հայրս...
ԹՈՎՄԱ.— Ի՞նչ, զի՞ս կը մեղքնաս։
ՎԱՐԴՈՒՀԻ.— Վասնզի դու ինձնե ավելի թշվառ ես... ես քանի

մը գաղտնի արցունք թաւիելով անցուցի այն ճգնաժամը... իսկ դու...

ԹՈՎՄԱ.— Ասավա՞ծ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց մի՞թե այն ատեն չը պիտի ստիպվեինք առնթուրենն նվաղիլ։

ԹՈՎՄԱ.— Իսկ հիմա՞։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ճշմարիտ է...

ԹՈՎՄԱ.— Բայց ես դարձեալ կը մուրամ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (գետինը դրամ մը տեսնելով և առնելով) Ի՞նչ է այս, հա՛յր իմ, տես, հինգ ֆրանքանոց մը։

ԹՈՎՄԱ.— (ճիչ մը արձակելով) Ա՜հ... այո, եղվարդը բերավ երեկ իրիկուն... քեզ տեսնել ուզեց...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եվ դու ճամբեցիր զինքը, այնպես չէ՞...

ԹՈՎՄԱ.— Ըսելով թե ինքը հոս չէ... գիտես որ ստիպված էի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո... հա՛յր իմ... արդյոք ի՞նչ եղավ խեղճը, հիմա որչափ հուսահատված է, և մեկ մ՚ալ մեր տանը սեմը ոտք չը պիտի կոխե, վասնզի երկրորդ անգամ վռնտեցիր զինքը։

ԹՈՎՄԱ.— Անհոգ եղիր, վարդուհի՛, ես զինքը կը գտնեմ, կը բերեմ և մուրալով առաջվան պես կապրինք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բարեսի՛րտ հայրս...

ԹՈՎՄԱ.— Ջավակնե՛րս, սիրեցեք զիրար և ինծի համար աղոթեցեք այսուհետև։

Տ Ե Ս Ի Լ Դ

ՆՈՒՅՆՔ, ՍԱԼՈՄՈՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒՉ ՄԸ, ՈՍՏԻԿԱՆՔ

ՍԱԼՈՄՈՆ.— Պարոն ոստիկան, բռնել տվեք այս մարդը...

ԹՈՎՄԱ.— Հրեա՞ն է։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ասավա՞ծ իմ։

ՈՍՏԻԿԱՆ.— Պարո՛ն, հանուն արդարության ատենին կը ձերբակալեմ քեզ, դատախազդ այս հրեան է։

ՍԱԼՈՄՈՆ.— Ինքը կը ճանչե զիս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Աղջի՛կս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Սա հինգ ֆրանքնոցը տա՞նք, հա՛յր իմ, գուցե...

ԹՈՎՄԱ.— (ցած) Այդ չը բավեր, աղջիկս, զայն քովդ պահե, եթե ոչ՝ անոթի կը մնաս հոս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Իրավունք ունիս... ա՜հ, ի՜նչ դժբախտություն էր այս...

ՍԱԼՈՄՈՆ.— Օ՜ն, շուտ, պարոն տեսուչը քեզ կսպասե...

ԹՈՎՄԱ.— (առ ոստիկանն) Քանի մը վայրկենի համար ներողամիտ եղեք, պարո՛ն... (ցած՝ առ աղջիկն) գոնե սա վերարկուս քեզ ձգեմ որ հին գնող հրեայի մը ծախես, երբ հինգ ֆրանքնոցը հատնի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Ո՛չ, ո՛չ, հա՛ր իմ, բանտը ցուրտ է, կը մսիս... Անփույթ եղիր, Աստված բոլորովին երեսի չը ձգեր զմեզ...

ԹՈՎՄԱ.— (նույնպես) Աղջիկս, ինքզինքդ աղեկ խնամե... չհիվանդանաս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինքզինքս Աստուծո կը հանձնեմ։

ԹՈՎՄԱ.— Եթե Աստված մը կա, թող լսե քեզի։

ՍԱԼՈՄՈՆ.— Երկար ըրիր, եղբա՛յր Թովմա։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Անգո՛ւթ հրեա...

ԹՈՎՄԱ.— Վաղը գուցե քեզ ալ վռնտե տունեն... և այն ատեն... (Վարդուհի մատովը երկինքը կը ցուցնե), Աղջի՛կս...

ՈՍՏԻԿԱՆ.— Օ՜ն, առջևս ինկիր, պարո՛ն, շատ սպասեցինք...

ԹՈՎՄԱ.— Ներեցեք, պարո՛ն... մնաս բարով, աղջի՛կս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՛յր իմ... (գրկընդխառն կը մեկնին)։

Տեսիլ Ե

ՎԱՐԴՈՒՀԻ (միևնակ)

Մնա՛ք բարյավ, դուք՝ պերճության, գեղեցկության, անմեղության և սիրո օրեր... մնա՛ք բարյավ, խարխուլ աթոռներ, ուր Եդվարդի և հորս հետ կը նստեինք քով քովի. մնա՛ս բարյավ, ախուր սեմ, ուրկե անցավ Եդվարդս արցունք կաթեցնելով և հայրս՝ վշտահար ճակատով. մնա՛ք բարյավ, գծուծ օթևան, որ իմ ամոթահար ճակատս տեսար... մնա՛ս բարյավ Եդվա՛րդ, Եդվա՛րդ... կը մեկնի. պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Ը

Տնօրենին սենյակը. խորը դռնակ մը:

ՏԵՍԻԼ Ա

ՊՈՂՅԱՆՑ և ՎԱՀԱԳՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Իմացա որ այսօր նոր դերասանուհի մը պիտի գա:*

ՊՈՂՅԱՆՑ.— *Այո, նամակավ մը իմացուցած էր ինձ թե արդյոք կրնա՞ խումբին մեջ իբր դերասանուհի ընդունվիլ. ես ալ պատասխանեցի որ եթե հաճի, կրնա ինծի ներկայանալ և խոսիլ:*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Եթե ընդունելու պայմաններն հաջողին, շատ աղեկ պիտի ըլլա, վասնզի հեղինակին մեկը ելեր չորս դերասանուհի պարունակող խաղ մը հեղինակեր է...*

ՊՈՂՅԱՆՑ.— *Խաղն ի՞նչպես է:*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Ժամանակակից, բավական դարձվածքներով և բարոյական դասերով համեմված:*

ՊՈՂՅԱՆՑ.— *Անունն ի՞նչ է:*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Պարոնանակութիւնը հայտնելես վերջն այդպես հետաքրքրութեամբ անունը հարցնելդ ի՞նչ պիտի ըլլա:*

ՊՈՂՅԱՆՑ.— *Գործը անունին վրա է:*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Անունը խորհրդավոր անուն մ'է. «Գաղտնիք մուրացկանին»:*

ՊՈՂՅԱՆՑ.— *Ա՜հ, ըսել է որ այդ խաղը չը կրնար ներկայացվիլ:*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Ինչո՞ւ:*

ՊՈՂՅԱՆՑ.— *Միթե կարելի՞ է որ այդ խաղին անունը փոխելով մեր մեծ դյուցազներեն մեկուն ծանոթ անունը դրվի առաժամանակյա կերպով:*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Ոչ. այն խաղը ծանոթ դյուցազնաց հետ բնավ հարաբերություն չունի։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուրեմն, ինչպես որ ըսի, չեմ կրնար ներկայացնել, վասնզի անանկ խաղերու շնորհիվ կրած վնասներս մտածելով՝ գլուխս ուռեցավ... մեր հասարակությունը թատրազդերուն վրա խոշոր, փառավոր և ահավոր անուններ կը փնտռե, և անունն կը գուշակե խաղին լավ կամ գեշ ըլլալը. երբ մեր հեղինակներեն մեկը խելք ունենա՝ «Կործանումն աշխարհի» կամ «Վերջին դատաստան» անունով խաղ մը կը գրե, ես ալ ադդին վրա՝ «արտաքո կարգի փառավոր ներկայացում» մը կը գրեմ, թատրոնը լեցավ գնաց։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Իրավունք ունիս։

ՊՈՂՅԱՆՑ.— Խոսիլն ավելորդ է, քանի որ շատ փորձերով հաստատված է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Բայց հայ հասարակության արդի հառաջընթացությանը նայելով ժամանակակից խաղերն ավելի հաճո և օգտակար պետք է համարվին իրեն։

ՊՈՂՅԱՆՑ.— Բայց ի՞նչպես կրնա գիտցվիլ այդ, քանի որ լրագիրներու միջոցավ թատրոնին հոգի կամ լավ վիճակին վրա խոսող չկա, և երբ թատերասեր անձե մը այդ նյութին վրա գրված հոդված մը լրագրի մը ղրկվի, լրագրին գրասենյակին մեկ անկյունը մնալով կը փոշոտի, լրագրապետին ընթացքն ալ չը դատաքննվիր, վասնզի մեր հասարակության մեջ թատրոնի և գրական նյութերու վրա գրված հոդվածներ կարդացող չկա. ամենքն ալ քաղաքագետ են եղեր. խելքերնին ու մտածումնին տվեր են այն քաղաքագետներու, ճիվաղներու մեքենայությանց, որոնք քանի մը կանգուն հոգի համար արյան հեղեղներ թափել կուտան և անոթի ընտանիքներ կը կազմեն... վերջապես ձմեռ գիշերները մեր հայ փոխ-քաղաքագետներն իրենց ակումբները թողլով թատրո՞ն պիտի դան կամ թատրո՞նը պիտի մտածեն... թատերաբեմը հոգին անդունդը կը նետե, կը թաղե և բարին կը վսեմացնե, կանմահացնե. թատրոնի ընծայած սիրո, եղբայրության, անձնվիրության, ընկերա-

կանության և խղճի օրինակը տեսնելե ավելի՝ հայը կը զվարճանա պատերազմի սոսկալի պատկեր մը նկատելով...

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Բայց այդ տրամախոհությունները գրագիտաց վերապահենք և մենք գործին վրա խորհինք... մենք որ դերասան ենք, որչափ հեռու են մեզմե այդ տրամախոսությունները, մենք որ թութակ ճանչցված ենք, եթե ակնոցավոր պարոն մը լսե, կը ծիծաղի մեր վրա։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Իրավունք ունիս... ի՞նչ բանի վրա կը խոսակցեինք։*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Նորեկ դերասանուհվույն վրա։*

ՊՈՂՅԱՆՑ.— *Այո... տեսնենք, իր փափաքած արհեստին ընդունակ պիտի դտնե՞նք զինքը։*

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ, ՎԱՐԴՈՒՀԻ, Ա. ԴԵՐԱՍԱՆ, Բ. ԴԵՐԱՍԱՆ, ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՔ, ԴԵՐԱՍԱՆՔ

ՎԱՐԴՈՒՀԻ.— (դերասանի մը) *Արդյոք կրնա՞մ տեսնել պարոն տնօրենը։*

ՊՈՂՅԱՆՑ.—(տեսնելով) *Ա՛, կարծեմ ինքն է...* (Վաճագնյանի հետ վարդուհիի կը մոտենան և անկյունը կեցած՝ ցած կը խոսակցին. նույնպես Ա. և Բ. դերասանք և Զիշիլ ասդին կեցած, ցած կը խոսակցին)։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Տես, Զիշիլ, նոր դերասանուհի մը... կը նախանձի՞ս...*

ԶԻՇԻԼ.— *Աստված չընե, ինձ համար ավելի աղեկ. բեռնավորված դերերես բավական կը բեթևնամ...*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Ճշմարիտն ըսելով՝ մուրացիկ կնոջ մը դեր կատարելու շատ հարմար պիտի գա, վասնզի լալկան աչեր ունի։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Շատ կը սխալիք, ժաք, լավ սիրուհի մը կըլլա, այնպես չէ՞, Զիշիլ։*

ԶԻՇԻԼ.— *Գուցե։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Ոչ, հակառակորդի դեր աղեկ պիտի հարմարի իրեն, վասնզի աչքերը խոշոր են։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Բայց գեղեցիկ։*

ԶԻՇԻԼ.— *Սակայն դեղնած և նիհար է։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Աղքատության մեջ տառապելուն նշան է այն։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Գրավ կը դնեմ որ լավ հակառակորդ մը կըլլա։

ՋԻՋԻԿ.— Կարծեմ իմ անձնականիս նկատմամբ է այդ խոսքը, ժա՛ք, որ միշտ կը կրկնես։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ամենևին, Ջիչիլ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Իր վեհանձն շարժվածքն է որ այդպես կարծել կուտա քեզ, ժա՛ք, բայց իր անուշ նայվածքն ուր թողունք որ բնավ հակառակորդի չը հարմարիր։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց միթե սիրահար մը խաբելու պետք չըլլա՞ր։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Աւտր համար օձի նայվածք պետք է։

ՋԻՋԻԿ.— Վերջապես փորձն ամեն բան կը հայտնե։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ջիչիլ իրավունք ունի։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ես ալ իրավունք կուտամ այն խոսքին։

ՋԻՋԻԿ.— Ուրեմն դադրեցուցեք ընդունայն վիճաբանությունները։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մոլիերի դէմքն վրա կերդնում, որ նորեկ դերասանուհվույն վրա եղած խոսակցությունը շատ կը նեղացնե Ջիչիլը։

ՋԻՋԻԿ.— Լռե, փողոցի մոլիեր։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Մեր ցայտող մոլիերը լռեց։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այս ալ քու դյուտդ է, ժա՛ն։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ահա ձեռքը մաս մը կուտան, ըսել է որ ընդունվեր է։

ՋԻՋԻԿ.— Ի՞նչ դեր է արդյոք։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Եթե ժանի դիտողությանը հավատք ընծայենք, գուցե Լուիզիա Մելլերի դերն է, զոր մոտերս պիտի ներկայացնենք։

ՋԻՋԻԿ.— Լուիզա Մելլերի՞։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Տե՛ս, ինչպե՛ս կնախանձիս։

ՋԻՋԻԿ.— Շատ կը սիրեմ ես այն դերը։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ֆերդինանտի դերն ալ արդեն նորեկ դերասան, Եդվարդի տվին։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Եդվարդ շատ պիտի հաջողի սիրահարության մեջ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Առանց հակառակորդի դու մնացիր, ժա՛ք։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Իմ հակառակորդս և սիրահարս գինին է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Պարոն դերասաններ, թատերաբեմը երթանք,

փորձը պիտի սկսինք (ամենքը կը մեկնին, Վարդուհի մինակ կը մնա՝ ձեռքը բղխի ծորար մը)։

Տեսիլ Գ

ՎԱՐԴՈՒՀԻ և ԵԴՎԱՐԴ

ԵԴՎԱՐԴ.— (դռնեն երևնալով, մեկուսի, միշտ Վարդուհի կրնայակը աներ դարձուցած ձեռքի դերն ալ կանցնէ) *Նորեկ դերասանուհի՞ մը... ո՞վ է արդյոք...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (դառնալով, եդվարդ տեսնելով և ճիչ մը արձակելով) *Ա՜հ...*

ԵԴՎԱՐԴ.— (զարմացած) *Վարդուհի՞...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (գիրկը իյնալով) *Եդվա՜րդ...*

ԵԴՎԱՐԴ.— *Բայց ինչո՞ւ եկար հոս, Վարդուհի՛։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Վասնզի մինակ մնացի։*

ԵԴՎԱՐԴ.— *Սակայն հա՛յրդ, որ զիս վռնտեց։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Հրեան բանտ դնել տվավ զինքը։*

ԵԴՎԱՐԴ.— *Բա՜նտ... խե՜ղճ Վարդուհիս, որչա՜փ հալեր ու դեղներ ես։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եթե հարցնե՞ս...*

ԵԴՎԱՐԴ.— *Կուզա՞ս... Վարդուհի՛... ի՞նչ ունիս։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Շա՜տ բաներ։*

ԵԴՎԱՐԴ.— *Պիտի պատմե՞ս։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եթե զիս չատես։*

ԵԴՎԱՐԴ.— *Ի՞նչ ըսել կուզես...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եդվարդ, ալ անմեղ Յուլիան չեմ ես...*

ԵԴՎԱՐԴ.— *Ինչո՞ւ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Լևկյալ Ֆանթինեն եմ։*

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

ԱՐԱՐՎԱԾ Դ

Եղվարդի հագվելու սենյակը. մեջը՝ դռնակ մը:

ՏԵՍԻԼ Ա

ԵԴՎԱՐԴ և ՎԱՐԴՈՒՀԻ

ԵԴՎԱՐԴ.— Այսպես ուրեմն, Վարդուհի՛:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ ընեի, Եդվա՛րդ. հայրս անօթութենեն չի մեռնելու համար ինքզինքը պիտի զարներ, երե ամօթահար հակատս իրեն առջև չը խոնարհեի և չըսեի. «Հա՛յր իմ, ալ քովդ եմ». մանավանդ որ ասով կը կարծեի քե քեզ ալ փողոցներու մեջ անպաշտպան և անօթի մնալե կազատեի, վասնզի չէի գիտեր որ պաշտպանութիւն դառած էիր... տես, Եդվա՛րդ, առանց առաջուց ներում խնդրելու քեզնե՝ ահա ամեն բան պատմեցի քեզի:

ԵԴՎԱՐԴ.— Անկարելի է որ չը ներեմ քեզի և չը սիրեմ, վշտահար հրեշտա՛կ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ, հիմա ես ալ որչա՛փ կը սիրեմ զքեզ, Եդվա՛րդ... այլ ամօթահա՛ր...

ԵԴՎԱՐԴ.— Մի ըսեր այդ խոսքը, Վարդուհի՛:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Երկու պարտք ունեի. նախ՝ հայրս բանտեն ազատել...

ԵԴՎԱՐԴ.— Այսօր բանտեն պիտի ելնե և հոս գա, վասնզի իր պարտքը վճարեցինք մեր վաստակովը:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Երկրորդ՝ վերջին անգամ քեզ տեսնել և հետո...

ԵԴՎԱՐԴ.— Հետո՞:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ես գիտեմ ընելիքս:

ԵԴՎԱՐԴ.— Ի՞նչ պիտի ընես:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու Բաստերախաղ մը գրեցիր, որ մեր պատմութիւնն է և այս գիշեր պիտի ներկայացնենք:

ԵԴՎԱՐԴ.— Այո, բայց անի մինչև վերջը մեր ճշգրիտ պատմու-

Թյունը չէ. անոր վերջը վիպասանական է. մեր պատմութ-
Թյունը մինչև մեր թատրոն մտնելը և դերասան ըլլալը կը
հագնի. իսկ վերջին արարվածը բոլորովին մտացածին է։

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Լավ ուրեմն, ես ալ կուզեմ թատերախաղը ճիշտ*
այնպես վերջացնել...

ԵԴՎԱՐԴ.— *Ի՞նչ, թո՞ւյն խմել։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Թույնն ալ պատրաստած եմ... պարզ բաղադրու-*
Թյուն մը, զոր վիպասանուԹյան մեջ սորվեցար։

ԵԴՎԱՐԴ.— *Ի՞նչ կըսես, Վարդուհի՛։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ապրի՛լ, ա՜հ, Եդվա՛րդ, չե՞մ կրնար... քանի որ*
թատերախաղին վերջին խոսքերն արտասանեմ... Թույնի
տեղ ջո՞ւր խմեմ և մա՜հ կեղծեմ... ո՛չ... ո՛չ... չե՛մ կըր-
նար...

ԵԴՎԱՐԴ.— *Բայց անկարելի է այդ, Վարդուհի...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եթե զիս կը սիրես, Եդվա՛րդ, օգնե ինծի այս գե-*
րագույն ճգնաժամին։

ԵԴՎԱՐԴ.— *Անգութ, չե՞ս մտածեր զիս։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Դու անպատիվ չես և...*

ԵԴՎԱՐԴ.— (*ընդմիջելով*) *Վարդուհի՛...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ա՜հ, որչափ Թշվառ եմ... Թո՛ղ որ երջանիկ ըլլամ...*

ԵԴՎԱՐԴ.— *Անգո՜ւթ, չես սիրեր զիս ուրեմն...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Մի վիրավորեր զիս, Եդվա՛րդ, գոնե դու միայն այս*
աշխարհիս մեջ զիս սիրած և չվիրավորած եղիր։

ԵԴՎԱՐԴ.— *Մտածե Թե ի՞նչ անողորմ հարված մը կուտաս ինձ...*
դու մեռնի՞ս... Վարդուհի, դո՞ւ, իմ պահա՛պան հրեշտակս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց ի՞նչ ընեմ, Եդվա՛րդ, կզգամ որ քիչ ժամա-*
նակեն մա՛յր պիտի ըլլամ... նախատալից մայր մը...
ի՞նչ ընեմ...

ԵԴՎԱՐԴ.— *Ա՜հ, սոսկալի է այդ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Այսչափ ատեն շատ վիշտ կրեցի և համբերեցի.*
բայց չեմ կրնար մայրական ցավոց հանդուրժել... ա՜հ,
տկար եմ, կին եմ... մանավանդ որ կը վախնամ... կը
վախնա՞մ ամոթահարութենե... կը սիրիմ զքեզ. Եդվա՛րդ,
նման այն փուշին, որ վարդին կուշտը կը սիրե...

ԵԴՎԱՐԴ.— *Դու ինձ համար էակ չես, Վարդուհի՛, այլ ճառագայԹ*
մը սրտիս խավարին մեջ... զեփյուռ մը՝ ցավագին ճակտիս,

Թել մը՝ իմ քնարիս... Մուրատոֆի ապարանքին մեջ մանուկ էինք և կը խաղայինք ճոխութեանց մեջ... հյուղի մը մեջ ղիրար սիրեցինք, պլպլուն կանթեղի մը լուսովն խոսեցանք, ցուրտ քամին փչած ատեն իրարու շնչովը տաքցանք... վերջապես անոթութիւնն իրարմէ բաժնեց մեզ... Թշվառութիւնը միացուց... դարձյալ որբ ու լքյալ ենք... գրկենք ուրեմն այն աննշան ու անհիշատակ հողակույտը... որուն վրա քահանա անգամ գուցե չը մրմռայ և մենք առանց ձայնի իջնենք այն մութ և խոնավ փոսը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ի՜նչ, դո՞ւ ալ մեռնիլ կուզես։*

ԵԴՎԱՐԴ.— *Մեր պատմութեան մեջ Եդվարդ ալ թույն կը խմե... Թույնը երկուքիս կը բավե, այնպես չէ՞ Վարդուհի՛... ապրելու համար հացը խնայողութեամբ կուտեինք, բայց մեռնելու համար պետք չէ որ թույնը խնայողութեամբ խմենք...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եդվա՛րդ, կին ճշմարիտը իմանալ կուզես, ես երկուքիս համար պատրաստեցի թույնը, վասնզի առանց քեզի մեռնելու համար քաջասրտութիւնս կը պակսի... բայց դարձյալ չէի կրնար համարձակիլ քեզ թույն առաջարկել, մտածելով որ գուցե դու չէիր ուզեր մեռնիլ, և հերիք կը սեպեիր քանի մ՚արցունք թափել իմ աննշան դագաղիս և հողակույտիս վրա... բայց կզգամ հիմա որ մեր սրտերն երկնային ճառագայթով մը միացած են անբաժան։*

ԵԴՎԱՐԴ.— *Որչա՜փ դժվար է աշխարհի վրա համազգաց սիրուհի գտնել, սիրվիլ անկե և մեռնիլ իրարու գիրկ՝ դարձյալ զիրար սիրելով, ապրի՞լ է այս՝ աշխարհային ժխորի մեջ, սիրե՞լ է այս. ո՛չ... ապրիլն այն է, սիրելն այն է, մահվան դալուկն զգեցած՝ երկու զվարթագեմ դիակ գիրկընդխառն կիջնեն այն լռիկ փոսը... եթե երջանկութիւնը չեն զգար, Թշվառութիւն, զրկանք, անոթութիւն ալ չե՞ն զգար...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ո՜հ, որչա՜փ քաղցր է բանաստեղծ մը սիրել և հետը մեռնիլ...*

ԵԴՎԱՐԴ.— *Դո՛ւ բանաստեղծ ըրիր զիս, Վարդուհի՛... դու մատրամակեցիր ինձ այն նեկտարը, որ սեր և բանաստեղծու-*

թյուն կը ներշնչէ... այն նեկտարը քու նայվածքիդ և սըրտեդ կը բղխեր...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եվ հիմա թույն կը մատուակեմ։

ԵԴՎԱՐԴ.— Կընդունիմ, վարդուհի՛, վասնզի այդ թույնն ալ Աստված և անմահութիւն ներշնչող նեկտարն է... (ձեռքը կը համբուրե)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եդվա՛րդ...

ԵԴՎԱՐԴ.— Վաղդուհի՛... (կը գրկախառնին, բանի մը վայրկեան լուռ և արտասվալից...)

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ոտքի ձայն մը կը մոտենա... Եդվա՛րդ...

ԵԴՎԱՐԴ.— Գուցե հայրդ է, արցունքդ սրբե... մեր գաղտնիքը չիմացվի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո, առանձին մեռնինք (արցունքը սրբելով)։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ԹՈՎՄԱ

ԹՈՎՄԱ.— (դուռը բանալով և ներս մտնելով աջոցց կը մոտենա և փոփոխակի կգրկե զաւոնիմ) Ջավակնե՛րս... վերջապես բանտեն ալ ազատեցիք զիս... ա՜հ, երբեք երես ունենալու չէի ձեր դեմն ելնելու... բայց ի՞նչ ընեմ, զավակ եք և ես ալ թշվառ և ժանտ հայր մը գտնված եմ... ես որ կենացս մեջ խիստ քիչ անգամ լացեր եմ, այս վայրկենիս լալու անզուսպ փափաք մ'ունիմ (կուլա, ներվեն ճնչակի մը ձայն կը լսվի) ի՞նչ ձայն է այս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Պատրաստութեան նշան է, հա՛յր իմ։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ պատրաստութեան։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Վարագույրը բացվելու մոտ է... հա՛յր իմ... պետք է որ բաժնվինք։

ԹՈՎՄԱ.— Բայց շատ քիչ տեսնվեցանք... ես շատ ներումներ պիտի խնդրեի ձեզնե։

ԵԴՎԱՐԴ.— Այսուհետև շատ կը տեսնվինք, հա՛յր իմ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու հիմա գետնասրահը գնա և Եդվարդի հեղինակած թատերախաղին հանդիսատես եղիր։

ԹՈՎՄԱ.— Արդյոք որչա՞փ զերազանց պիտի ձնացնեք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Պիտի տեսնես, հա՛յր իմ... (դռնակեն կը մեկնի. պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Գ.

Տեսարանն է թատրոնին ներքնակողմը.— Օբյակներ և նրատարաններ լցված են հանդիսատեսաց բազմությամբ մը.— Վարագույրը դեռ բացված չէ:

ՏԵՍԻԼ Ա.

ԹՈՎՄԱ (մինչև վերջը մտազբաղ) Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ, Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ (թատերատեսներ. ապին ցած կը խոսակցին):

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Վերջապես հինգերորդ արարվածին վարագույրը պիտի բացվի, տեսնենք խաղը ի՞նչպես պիտի վերջավորի:

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մինչև հիմա թե խաղին կապակցությունքը լավ էին և թե այն երկու ամոլներն սքանչելի կերպով կատարեցին իրենց դերը:

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Բնավ չը հուսացվիր որ մի քանի ամսո դերասաններ եղած ըլլան:

Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Կերևի թե սիրահարյալ են իրարու:

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Թող ըլլան, բայց միթե առանց դերասան ըլլալու՝ երկու սիրահարյալներն կրնա՞ն այս հրապուրիչ տեսարանն ընծայել... դյուրին բան չէ դերասան ըլլալ. թատրոնին բախտը դերասանին ձեռքն է. պետք է որ դերասանը գոնե լուռ բանտատեղծ մ'ըլլա, որուն լեզվին տակ հոգին խոսի, պետք է որ գլխուչն մեջ բոց և սրտին մեջ ավյուն ունենա. դերասան մը իր ընդունակությամբը կրնա հեղինակության մը հարակից փայլ մը տալ, նույնպես կրնա իր ապիկարությամբը նսեմացնել այն փայլը:

*Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Ձեր ըրած դիտողությունքը շատ ճշգրիտ են. բայց խիստ քիչեր այդ մասին դիտակցություն ունին. շատեր զբոսնելու համար թատրոն կուգան և ոչ թե ներկա-

յացված խաղին ոգևույն թափանցելու. նույնիսկ եթե արհեստի և գաղափարի թերություններ կան թատերախաղին մեջ, անոնց բոլորովին աչք կը գոցեն։ Եվրոպացիք գիտեն թատրոնին հարգը. թատրոններն անցյալ դարերուն հեղափոխությանց վառարաններ հանդիսացան, թատրոններն իրրև ժողովրդյան կրթարաններ կը նկատվին՝ կըսեն. բայց ես կըսեմ թե անոր մարմինը կազմող բոլոր երակներուն կեղրոններն են. անոր հեղափոխությունն հարդարող հրաբուխներ են. անհնար է, որ մարդ Շեքսփիրի, Շիլլերի, Հյուգոյի և Տյումայի թատերգությունը կարդացած ժամանակը չաքանչանա. կպաշտեմ ես այդ հանճարները, ժողովրդոց այն շանթեռանդն ու կարմիր զավակները։

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Յավալի է որ մենք զրկված ենք այսպիսի հոյակապ հեղինակներե։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Երբ քաջալերությունը կը պակսի, ամեն բան կը պակսի. եթե արարչագործության աքանչելիքը զԱստված չը քաջալերեին իրենց վսեմ արդյամբը, թերևս Աստված չէր կարողանար իր հսկայական գործն առաջ տանիլ։ Քաջալերությո՜ւն, մի՛շտ քաջալերություն վսեմ գործերու...—(Թատերասերբ վարագույրը բանալ տալու համար խոսն ծափահարություն մը կսկսին) Տե՛ս, ահա մեր տված քաջալերությունը, հոր ծափահարություն մը (դարձյալ ծափահարություն)։

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Այդ ծափահարությունն ալ կրնա դիտողություն վերցնել, վասնզի շատ անգամ կը տեսնեմ որ անտեղի ծափահարություններ ալ կըլլան, որոնք կրնան իրենց ծայրահեղությամբն ամեն բան շփոթել, և երբեմն ալ իրենց անտեղի թերությամբը՝ բռնկած դերասան մը քար կտրեցնել (ծափահարություն)։

Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.— Կարծեմ թե վարագույրը պիտի բացվի, վասնզի հուշարարը իր տեղն անցավ։

Տեսիլ Ե

(Վարագույրը կը բացվի և աճա ևկարչական վայր մը կերևի լերան մը ծոցը, ծառերով և ծաղիկներով զարդարված. առվակ մը կը սահի, կերբա տեսարանին դեպի խորը)։

ՆՈՒՅՆՔ, ԵԴՎԱՐԴ և ՎԱՐԴՈՒՀԻ (ձևացյալ բառեր տեսարանին վրա.—Տեսարանին մինչև վերջն անընդհատ ծափահարություն):

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հեռո՞ւ մեզմե այդ տունները, այդ շենքերը... հեռո՞ւ մեզմե այդ ամպերն անգամ... միմիայն այս ծառերուն տերևները թող պարածածկեն մեզ, միայն սա գիշյուռը թող մոտենա և միայն սա առվակը նայի մեզ... ա՜հ, սա տերևները, գիշյուռն և առվակն իրենց շշունջներովն բավական կրնան ազոթել մեր հոգևույն փրկության համար:

ԵԴՎԱՐԴ.— Եվ դու կը կարծես որ մեր հոգիները փրկելի՞ հոգիներ են, Վարդուհի՛... պետք է մեռնինք... այո, մեռնինք, վասնզի աշխարհս անհուն սև ամպ մ'է որ մեր սիրտ արևը կը պարփակե զայն խեղդելու չափ... անկարելի է սիրել հոս... սերը ծաղի մ'է որ միայն երկնքին մեջ կը գտնվի, և մենք հոս միմիայն անոր բոպրոմը կրնանք զգալ... ա՜հ, տեսանենք ի՞նչ է այն սերը, որուն լոկ յավերը կզգանք հոս միանգամայն:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Պիտի տեսնենք, Եդվա՛րդ, պիտի թողունք այս աշխարհը, յորում*) մարդիկ իրարու հավասար եղբայր չեն, յորում միայն տկար արարածներն ամոթ՝ խիղճ ու յավ ունին. անգութ է այս աշխարհիս վերատեսուչը, քաղաքականությունն ըսել կուզեմ որ չը ներեր անոթիին կտոր մը հաց գողնալ՝ հարկավ ունեցողե մը, չը ներեր խեղճ աղջկան մը որ իր սիրույն մեջ խաբված է անոթի չմնալու համար, կամ ստիպված է իր երկնային լոմայն ապօրինավորապես ծախսել... սիրելի մը և ալևոր հայր մը անոթի չը ձգելու համար (սույն միջոցին Թովմա ընդառաջին վրա կը սարսռի):

ԵԴՎԱՐԴ.— Կաղաչեմ, Վարդուհի՛, այդ յավերը հոգվույդ մեջ մի խորասուզեր, հիմա պիտի փշրեն զանոնք երկնքի ալիներն մեր հոգիներն կոծելով... հանդարտ ըլլանք, թողունք որ մեր օրհասին մեջ մեր հոգիները երկրի բուրումը վայելեն... դեռ ժամանակ կա թույնը ներգործելու... նատինք սա առվակին քով, սա աթոռաձև ժայռին վրա, և առվա-

*) «Որի մեջ»:

կին հայելվույն մեջ մեր գալկութիւնը դիտենք... (դեպի ժայռը կերթան իրարու կրծնած, Վարդուհի ետեւէն կը դողդոջէ) կը դողդոջե՞ս, Վարդուհի՛։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Անշուշտ թույնի ներգործութիւնն է որ կզգամ։

ԵԴՎԱՐԴ.— Ուրեմն ինչո՞ւ չը փութար ինձ ալ ներգործելու այդ թույնը, անկարելի է որ վայրկյան մը իրարմէ անջատյալ մնանք... ա՜հ, կը հասկնամ՝ քեզ շուտ ներգործելուն պատճառը... ապա՛հ, դու ինձմէ առաջ և քու բաժինդ ավելի խմեցիր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Վասնզի քեզմէ ավելի ծարավի էի մահվա՛ն։

ԵԴՎԱՐԴ.— Ի՞նչ կզգաս, Վարդուհի՛։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Երակներուս մեջ թմրեցուցիչ հյութ մը կը հոսի... ա՜հ, որչափ թեթև և երջանիկ կըլլա եղեր դողդոջ էակ մը։

ԵԴՎԱՐԴ.— (ինքզինքը զննելով, հանկարծ) Վարդուհի, ես ալ բան մը կզգամ, ա՜հ, միատեղ պիտի մեռնինք... (կընդգրկե զՎարդուհի)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կուրծքդ ավելի մոտեցուր կուրծքիս, Եդվարդ, թող մեր սրտից տրոփյուններն իրարու խառնված աղոթք մ'ըլլան առ Բարձրյալն... վասնզի սրտերը շուրթներեն ավելի մաքուր կըլլան։

ԵԴՎԱՐԴ.— Այո... (Վարդուհին դիտելով) ա՜հ, որչափ գեղեցկացեր ես, Վարդուհի՛, մինչև հիմա այսչափ ճառագայթալից տեսած չէի զքեզ... միթե երկնքի առաջին ալինե՞րն են այդ ճառագայթները, ուր կը բարձրանան մեր հոգիները...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եվ միթե Աստուծո աթոռին նայելու համար ադամանդյա աչե՞ր պետք են... այն ահավոր փառաց ցոլմունքին չդլանալու և չփշրվելու համար... (դողդոջուն՝ Եդվարդի վրա կընկնի)։

ԵԴՎԱՐԴ.— Ի՞նչ կըլլաս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կայրի՞մ։

ԵԴՎԱՐԴ.— Երկնքի բոց, իջար վերջապես...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինձ փարե...

ԵԴՎԱՐԴ.— Այո, իրարո՛ւ մեջ այրինք...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (մթագնած աչքերը հորիզոնին վրա հառելով) Տես, որչա՜փ սև է եղեր աշխարհը, կը տեսնե՞ս, Եդվա՛րդ...

ԵԴՎԱՐԴ.— (նույնպես) *Այո, ես ալ նույնպես սև կը տեսնեմ։ Վարդուհի՛... Բայց մեր դերեզմանը չըլա՞...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ա՜հ, ի՞նչ կըլլամ... մնա՜ս բարով, Եդվա՛րդ...*

ԵԴՎԱՐԴ.— *Կեցիր... ես ալ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Միասեղ...*

ԵԴՎԱՐԴ.— *Երթա՜նք բարով...* (իրարու փարած կառնանանան. վարագույրը կիջնե)։

ՀԱՆԴԻՍԱՏԵՍՔ.— (Անընդհատ և ուժգին ծափահարելով) *Ի՜ սե՜ս... ի սե՜ս... ի սե՜ս...* (սույն աղմուկը մեկ բանի վայրկյան կը տևե)։

Տեսիլ Գ.

ՀԱՆԴԻՍԱՏԵՍՔ և ՊՈՂՅԱՆՅ

ՊՈՂՅԱՆՅ (վարագուրիկը բանալով շփոթած և այլագունած) *Մեծարգո հանդիսականք...*

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (խոսքն ընդմիջելով և ծափահարելով անառարերուքյամբ) *Ի սե՜ս... ի սե՜ս...*

ՊՈՂՅԱՆՅ.— (նույնպես) *Բայց...*

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (նույնպես) *Ի սե՜ս... ի սե՜ս...* (Պողյանց վարագուրիկեն ներս կը մտնե և հանդիսատեսաց աղմուկին և ծափահարության միջոցին՝ վարագույրը նորեն կը բացվի՜ և միևնույն տեղը եղվարդ և վարդուհի դիակնացած կերևին)։

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (սարսափած) *Մեռա՜ծ...*

ԹՈՎՄԱ.— (կայծակնահար) *Ջավակնե՜բս...*

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

ԱՐԱՐՎԱԾ Ե

Նաիապետոֆի տանը մեջ ծաւրագին կարասիներով զարդարված սենյակ մը:

Տեսիլ Ա.

ՆԱՀԱՊԵՏՈՖ և ՄԱԿԱՐ

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Այո, քեզի խոսք տված եմ որ երեք բոլորովին իմ վստահությունս և համակրությունս գրավես, օր մը իմ հետաքրքրական պատմությունս քեզի պատմեմ:

ՄԱԿԱՐ.— Եվ կը հուսամ որ...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Գոհ եմ քու ծառայասիրենեդ, փոքրիկ սպասաուղս... (Մակար բարկությամբ ուսերը կը թոթվե) ի՞նչ կըլլաս:

ՄԱԿԱՐ.— Վերջապես չկրցա հասկցնել որ իմ անունս Մակար է...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Էհ, մի բարկանար...

ՄԱԿԱՐ.— Եվ պաշտոնս ալ ձեր քով մատակարար...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ուրեմն, Մակար մատակարար... մտիկ ըրե որ պատմությունս սկսիմ...

ՄԱԿԱՐ.— Ունկնդիր եմ, տեր իմ...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ասկից 28 տարիի չափ առաջ, գիշեր մը Բերայի հրապարակն աղջիկ մ'առանձին, կը պտտեր: Երթևեկող բազմության մեջեն ռուսական զգեստ հագած վայելչադեմ երիտասարդ մը այն մենաշրջիկ օրիորդին մոտենալով՝ լուսնկային, քաղաքավարական և անուշ կերպիվ մը կըսե. «Օրիորդ, ինչո՞ւ մենակ եք, կը հաճի՞ք թևակցելու պատիվը տալ ինձ». աղջիկը, որ մտաղբաղ էր, հանկարծ եր-

կու արցունք կը ծագին աչերուն մեջ... վասնզի որք, մինակ և աղքատ էր բոլորովին երկրի վրա... և վայելուչ երիտասարդ մը, թեպետ անծանոթ, բայց համակրութիւն ցույց կուտար իրեն, ուստի երիտասարդին խնդիրը չէր մերժեր։

ՄԱԿԱՐ.— Վայելուչ ըլլալուն համար... եթե ես այդպիսի առաջարկութիւն մ'ընեմ, իսկույն լավ ապտակ մը կուտեմ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Մտի՛կ ըրե. ուրիշ դիշերներ ալ այս երկու անձինքը կը տեսնվին Բերայի հրապարակը, բայց երկձի, բայց կառքով, և այն օրիորդը բավական վայելուչ հագված, և երեսը կարմրորակ քող մը ձգած է, դուցե չը ճանչցվելու համար... երիտասարդը Ռուսիացի երևելի վաճառականի մը որդի է և Մուրատոֆ կը կոչվի... ճամբորդելու և պտտելու համար Պոլիս կուգա և այն աղջկան կը հանդիպի, որ իր հրապուրվով անոր սիրտը կը գրավե... քանի մ'ամիս շքեղ տան մը մեջ ճոխութեամբ կը կենակցին. վերջապես անպատկ սիրո ձանձրութեան ժամերը գալով, Մուրատոֆ Ռուսիա կը վերադառնա... աղջիկն իզուր կուլա և կաղերսե, դեռ կը սիրե... երկու ամիսեն զավակ մը կը ծնի, պիս, անունս Գևորգ կը դնեն։

ՄԱԿԱՐ.— Ուրեմն այն աղջիկը քու մայրդ է։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Այո, կար կարելով պիս և ինքզինքը խնայութեամբ կը սնուցաներ... երբ մանուկ էի, խաղալիք չունենալով մորս գուլպա հյուսած առեն կծիկովը կը խաղայի, երբ խելահաս եղա՝ բազմոցի տեղ տախտակամած ծին վրա փռած Հին գորգի մը վրա կը նստեի, երբ կուտեի ցամաք հացը... վերջապես երիտասարդ եղա դրեթե՝ մայրս պիս աշկերտ տվավ դրացի երկաթագործի մը քով. մինչև իրիկուն կռանովը սալը ծեծելով կրակին դեմ հոգիս բերանս կուգար և ուժս կսպառեր, վասնզի ցամաք հացով և ցուրտով սնած էր... ավուրշնք 60 փարա կառնեի... վերջապես մայրս, որ քանի մը ամիսե ի վեր հաղնեն կը հալեր, մեռավ... մորս կուրծքին վրայեն մատանի մը գտա, զոր երբեք մատը դնելը տեսած չէի, վրան «Մ» նշանագիր մը կար, որ անշուշտ իր սիրահար Մուրատոֆի տվածը պիտի ըլլար... մայրս շատ սիրելուս՝ այս մատա-

նին, որ ահա մատս է, միշտ հիշատակ՝ պահեցի և երբեք ծախել չը մտաբերեցի՝ աղքատութեանս մեջ անգամ։

ՄԱԿԱՐ.— Եվ դեռ կը պահես։

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Միշտ... մորս մահվան և իմ թշվառ վիճակիս վրա վշտահար՝ գիշեր մը, չգիտեմ ի՛նչ դիտավորութեամբ, այլ գրեթե սրտատանջութեյուն փարատելու համար՝ ծովեզերքները կը թափառեի՝ լուսնկային, ինքզինքս ամայի տեղվանք գտա... այն ամայութեյան մեջ կռանի՝ սալին զարնելու ձայներ և ուրիշ աղմուկներ կը լսեի, չորս դիս նայեցա և շենք մը չտեսա. կենդանյաց որջ կամ քարայրի պես տեղ մը կանցնեի, կռանին ձայները մոտեցան... այն քարայրեն ներս նայեցա, բավական մութ էր, բայց քիչ մը ետքը լուսի աղոտ հետք մը նըշմարեցի... հետաքրքրութեյուն ավելցավ, քարե բնական սանդուխ մը կար, ուսկից քիչ մը վար իջնել և բան մը հասկնալ ուզեցի առանց տեսնվելու, բայց ոտքս սահելով՝ հանկարծ ինքզինքս բավական ընդարձակ գետնափորի մը հատակը գտա...

ՄԱԿԱՐ.— Ի՛նչ աներկյուղութեյուն...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Կռանին ձայները դադրած էին, ապշած չորս դիս և երկու մարդոց կը նայեի՝ որոնք շվարած փոփոխակի իրարու երես նայելով զիս կը դիտեին. կերևի որ հագած գործավորի շապիկս իրենց վստահութեյունը գրավեց և չը կասկածեցան ինձնե այնչափ, որչափ որ պիտի կասկածեին դրամանենգներ. մեկը քայլ մը առաջ գալով հարցուց ինձ տաճկերեն լեզուն թոթովելով. «Ո՞վ ես դուս». ես ալ պատասխանեցի որ ինձնե թող չը կասկածին, վասնզի հասկցա թե ինչ տեսակ տեղ մը կը գտնվեի, և պատմութեյուս ու հոն իյնալս իրենց համառոտիվ անցա... անոնք իմ վրաս գութ ցուցուցին և իրենց ընկեր ըլլալով իրենց հետ աշխատիլ առաջարկեցին ինձ, ես ալ ընդունեցի ստիպմամբ...

ՄԱԿԱՐ.— Վասնզի վախնալով որ իրենց գաղտնիքը կը տարածես, անշուշտ հոնկե ողջ դուրս չէին հաներ քեզ...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Տարի մը այն ամայի տեղը բնակելով և գիշեր-

ներն աշխատելով՝ բավական ստակ դիզեցինք և հարուստ եղանք, զանազան քաղաքներու մեջ մեզի ընկեր գտնվող դրամախույզներուն շնորհիվ. վերջապես մեր մեջ որոշեցինք որ ալ այն սոսկալի գետնափորին ելնելով արևուն դիմաց հանգիստ ապրինք... ընկերներս ուրիշ երկրներ գաղթեցին, ես ալ Ռուսիա գացի. ասկից երեք ամիս առաջ, հոն հայրս մեռաք եկավ, և երբ Մուրատոֆը փնտռեցի, ըսին՝ թե նա անանկանալով ամսի մը չափ կար որ աներևութացեր էր և ուր երթալը չէր գիտցվեր... վերջապես հոն ռուսական հարուստներ հագնելով Պոլիս դարձա, դարձյալ իբրև ռուսիացի վաճառական... ալ քեզ հանդիպելուս և իմ մատակարարս ընելուս պատմությունը դու գիտես... կը հուսամ որ գոհ ես:

ՄԱԿԱՐ.— Բոլորով սրտիվ, տե՛ր իմ, և կը հուսամ որ դուք ալ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Եվ մինչև իմ գոհությունս և վստահությունս հայտնելու համար չէ՞ որ այս պատմությունը քեզ ըրի, որ ինձ համար մեծ գաղտնիք մ'է:

ՄԱԿԱՐ.— Տե՛ր իմ, միշտ վստահ եղիր իմ վրաս:

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ և ՍՊԱՍԱՎՈՐ ՄԸ

ՍՊԱՍԱՎՈՐ.— Տե՛ր իմ, մեկը եկեր ձեզ տեսնել կուզե:

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ջե՞ս ճանչեր զինքը:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Ոչ, տե՛ր իմ:

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ի՞նչպես մարդ է:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Արհեստավորի հագուստով երիտասարդ մ'է:

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Անունը չը զրուցե՞ց:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Ճիորճի:

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ճիորճի՞... ներս մտցուր զինքը. (սպասավորը կը խոնարհի և կը մեկնի) իմ դրամանենգ ընկերներես մեկը ըլլալու է... բայց ի՞նչ կը նշանակե արհեստավորի կերպարանքը... տեսնենք... (Ճիորճի՝ դռանը մեջ Մակարի հանդիպելով կակնարկե և Նահապետոֆ նշան կընե որ դուրս ելնե):

Տեսիլ Գ

ՆԱՀԱՊԵՏՈՑ և ՃԻՈՐՃԻ

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ի՞նչ կա, Ճիորճի, ի՞նչ վիճակի մեջ կը գտնեմ զքեզ։

ՃԻՈՐՃԻ.— Բան չկա, Գեորգ... ը՜... պարո՛ն Նահապետոց։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց ի՞նչ կուզես որ գուշակեմ։

ՃԻՈՐՃԻ.— Ի՞նչ պիտի գուշակես... սնանկացա...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ի՞նչ կըսես։

ՃԻՈՐՃԻ.— Էհ, ի՞նչ ընեմ, քեզի պես հարստութեան հարգը չը գիտցա կամ մականունիս վրա տը մը օֆ մը ռվիչ մը չավելցուցի... այլ փարիզուհիներու հետ վատնեցի բոլոր ոսկիներս, որ այնչափ սրտատանջութեամբ և աշխատութեամբ ձեռք բերի այն մութ գետնափորին մեջ։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ուրեմն Գազղիայեն կամ Փարիզեն կուգաս։

ՃԻՈՐՃԻ.— Այո, վերջին դրամներս մսխած գիշերը՝ գինովութենե ջնջ հագիվ մատծեցի շոգենավի ծախքը պահել Պոլիս դառնալու համար, կը մտածեի որ գոնե քեզ հարուստ գտնելով կրնայի քիչ մը ստակ առնել... քու տվածդ փրկանք մը պիտի սեպվի, վասնզի մեր գետնափորը ինկած գիշերդ կռանով մը գլուխդ ջախջախելու տեղ մարդասիրութեամբ զքեզ ընկեր ըրի։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ուրեմն ո՞րչափ կը պահանջես։

ՃԻՈՐՃԻ.— Հազար ոսկի։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ա՜հ, շատ է։

ՃԻՈՐՃԻ.— Բոլոր հարստութիւնդ ոստիկանութեան հանձնելու և թիարանը տարիներով փտեու տեղ, քու մարդասեր ընկերիդ հազար ոսկի տալ շա՞տ է։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց միթե դու ալ իմ ընկերս չե՞ս... ինչպես կը մտանես...

ՃԻՈՐՃԻ.— Ինծի համար քեզի չափ հոգ չէ... սոսկալի բան է, երբ Նահապետոց մը դրամանենգ կամ թիապարտ հրատարակվի... իսկ ես միշտ Ճիորճի եղա... միանգամայն այս վիճակիս մեջ մնալու տեղ ինծի ավելի ազեկ է բանտը

պատրաստ հաց ուտել, և բանտը իմ զվարճութենես հեռու գտնվելուս պատճառ մ'ընել։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Երե ստակները տամ՝ ի՞նչ պիտի ընես։

ՃԻՈՐՃԻ.— Փարիզ պիտի երթամ։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Դարձյա՞լ...

ՃԻՈՐՃԻ.— Ա՜հ, Գեո՛րգ, չես գիտեր Փարիզը և փարիզուհիները։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց եաքը՞։

ՃԻՈՐՃԻ.— Ի՛նչ կուզե թող ըլլա... դու չես գիտեր Փարիզը, իր գեղեցկությամբ աշխարհի թագուհին է և իր գեղեցիկներովը երկրային դրախտ. հոն միշտ զվարճություն, ճոխություն, գեղեցկություն և երջանկություն կը թագավորեն... վերջապես, ի՞նչպես բացատրեմ, ամեն բան առատ... մտածի մեկ մը, Փարիզի գերեզմանոցներուն մեռելաթաղին թին անգամ հողով լի է, և մեռելին վրա խնայողությամբ հող չեն նետեր։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ա՜հ, խեղճ։

ՃԻՈՐՃԻ.— Վերջապես Փարիզի գերեզմանոցները կուզեմ թաղվիլ։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ճիորճի՛, հարուստ եղիր և տես։

ՃԻՈՐՃԻ.— Հարուստ ըլլա՞մ, քեզի պես տուգա՞նք տալու համար, ինչպես որ դու հիմա ինծի կուտաս։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Անզգա՞մ։

ՃԻՈՐՃԻ.— Օ՜ն, համրե հազար ոսկին, գուցե այսօր ճամբա պիտի ելնեմ... վայրկյանե վայրկյան երթալու խոսք տվի սիրուհուս... և օրեր անցան։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— (թուղթ մը տալով) Առ։

ՃԻՈՐՃԻ.— Արժեթո՞ւղթ է։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Այո։

ՃԻՈՐՃԻ.— (զննելով) Հազար ոսկինոց... շնորհակալ եմ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Երե մեկ մ'ալ ինծի դիմես...

ՃԻՈՐՃԻ.— Տեսնե՞նք...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Դուն գիտես։

ՃԻՈՐՃԻ.— Մնաս բարով, Գեո՛րգ... տեսնեմ այսօր ճամբա ելնող Մարսիլիո շոգենավին կրնա՞մ հասնիլ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Փարիզի խեղճ...

ՃԻՈՐՃԻ.— Մնաս բարով... (կը մեկնի)։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— (միճակ) Ո՞ւակից դիմացս ելավ այս սատանան։

Տեսիլ Դ

ՆԱՀԱՊԵՏՈՑ և ՍՊԱՍԱՎՈՐ ՄԸ

ՍՊԱՍԱՎՈՐ.— Տե՛ր իմ, Թովմա անուն մեկը եկեր ձեզ տեսնել կուզե։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Թովմա՞... Թող գա (սպասավորը կը խոնարհի և կը մեկնի) հին ու մոռցված մարդիկներ կը հաճախեն տունս... մեկը զիս կողոպտեց, տեսնենք այս ի՞նչ պաշտոնով կուգա... փոթորիկ մը կա իմ գլխուս վրա։

Տեսիլ Ե

ՆԱՀԱՊԵՏՈՑ և ԹՈՎՄԱ

ԹՈՎՄԱ.— Ա՜հ, պարո՛ն, ի՞նչ վատութիւն էր որ ըրիք. բոլոր ընտանիքս թշուառ ըրիք... աղջիկս մեռաւ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ես ի՞նչ ընեմ... եթե աղջիկդ մեռեր է։

ԹՈՎՄԱ.— Դու ի՞նչ ընես, դու ես պատճառը... որ աղջիկս իր եղբայրագրին հետ թույն խմեց ու մեռաւ։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց մխթե քու հաճոյութեամբ չեղա՞վ ամեն բան։

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, մխթե փոխարեն նենգյալ դրա՞մ խոստացար ինձ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Նենգյալ դրա՞մ... ի՞նչ կըսես...

ԹՈՎՄԱ.— Ահա վատութիւն մ'ալ, որ կուրանաս և զարմանալ կը ձևացնես։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց բան մը չեմ հասկնար քու խոսքերեդ։

ԹՈՎՄԱ.— Միթե դու չտվի՞ր նենգյալ դրամը սպասատողին որ ինձ հանձնե և զիս խաբե... վատաբար։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ճշմարի՞տ կըսես...

ԹՈՎՄԱ.— Ա՜հ, այդ ձևերով մա՛րդ կուզես ճաթեցնել...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— (կաճչելով) Մակա՛ր... Մակա՛ր...

ՍՊԱՍԱՎՈՐ.— (ներս մտնելով) Դուրս ելավ, տե՛ր իմ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ո՞ւր գնաց։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Չեմ գիտեր։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Գնա, շուտ զինքը գտիր։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Շատ աղեկ, տե՛ր իմ... (խոնարհելով կը մեկնի)։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Պարո՛ն, կերդնում այս մատանվույս վրա, որ աշ-

խարհի մեջ ինձ համար ամենեն նվիրական բանն է, կերդնում որ բան մը չեմ դիտեր...

ԹՈՎՄԱ.— (մատանին տեսնելով՝ զարմացած՝ մեկուսի) *Այս մատանին...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Բայց, պարո՛ն, այն նենգյալ դրամներն ի՞նչ ըրիր...*

ԹՈՎՄԱ.— (որ աչքը մատանվույն հառած, առանց զայն մոիկ ընելու) *Այս մատանին որու՞նն է, պարո՛ն...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Իմս է...*

ԹՈՎՄԱ.— *Վրայի նշանագիրը «Մ» է, այնպես չէ՞...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Այո... բայց ի՞նչ կա որ...*

ԹՈՎՄԱ— *Ո՛վ տվավ ձեզ զայն...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Բայց ինձ մոիկ ըրե, այն նենգյալ...*

ԹՈՎՄԱ.— (ընդմիջելով) *Կաղաչեմ, պարո՛ն, ուսկից առիք այս մատանին... տերը կը ճանչնա՞ք...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Մորս հիշատակն է...*

ԹՈՎՄԱ.— (զարմացած) *Մո՞րդ։*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Բայց բան մը չեմ հասկնար։*

ԹՈՎՄԱ.— *Աստվա՜ծ իմ... Աստվա՜ծ իմ...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Ի՞նչ կըլլաս, պարոն Թովմա...*

ԹՈՎՄԱ.— *Քեզի համար Թովմա չէ իմ անունս։*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Ի՞նչ ըսել կուզես։*

ԹՈՎՄԱ.— *Կյանքիս թշվառ մասին անունը Թովմա է. իսկ բուն անունս...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Անո՞ւնդ։*

ԹՈՎՄԱ.— *Մուրատոֆ։*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Իմ հա՜յրս... և վարդուհի՞ն...*

ԹՈՎՄԱ.— *Քու քույրդ էր...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Աստվա՜ծ իմ... մեռա՜վ...*

ԹՈՎՄԱ.— *Ես եղա իրմ դահիճը... և դարձյալ պիտի ըլլամ։*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Բայց, հա՜յր իմ, ի՞նչ ըրիր այն կեղծ դրամները։*

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆՔ և ՄԱԿԱՐ

ՄԱԿԱՐ.— (զԹովմա տեսնելով սարսափած մեկուսի) *Այս մարդը՞...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Անիծյա՛լ սպասաւոր, այս մարդուն նեղդյալ դրամ տվեր ես...*

ՄԱԿԱՐ.— (վախեն տատամսելով) *Բայց... տե՛ր իմ...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Օ՛ն, կորիր աչացս առջևեն. տանս սեմեն ներս մեկ մ՚ալ ոտք չը պիտի կոխես...*

ՍՊԱՍԱՎՈՐ.— (շփոթած մնելով) *Տե՛ր իմ... ոստիկանները տունը կը պաշարեն...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— (սարսափած) *Ի՞նչ կը նշանակե ասիկա...*

ԹՈՎՄԱ.— (որ մինչև ետիմա մտաճույզ էր) *Ձախող վրեժ մ՚առի... աղջկանս մահվան վրա բոլորովին կատղած՝ ամեն բան ոստիկանութեյան իմացուցի... քեզ մատնեցի..., զավակս...*

ՄԱԿԱՐ.— (մեկուսի) *Իր հա՛յրը...*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Անե՛ծք...* (Մակարը կուգե փախչիլ) *Կեցի՛ր, անօրենն սպասաւոր, այս բոլոր աղետից պատճառը դու ես,* (ատրճանակ մը կուղղե անոր և կզարնե)։

ՄԱԿԱՐ.— (թավալգլոր ընկնելով) *Կորսվեցա՛...*

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

1871, Հունվար 3

ՎԱՐԴ ԵՎ ՇՈՒՇԱՆ
ԿԱՄ
ՀՈՎԻՎՔ ՄԱՍՅԱՑ

Թատերգություն երգախառն ի չորս արարս

ԱՆՁԻՆՔ

ՊԱՐԵՏ. Ագարակապետ
ՎԱՐԴ. Որդին
ՇՈՒՇԱՆ. Պարետի որդեգրուհին
ՄԱՐԻԱՄ. Մուրացիկ կին
ՍՈՒՐՄԱԿ.— Ավազակ
ՏԻՐԱՆ. Բարեկամը
ԳՈՒՐԳԵՆ. Երկրագործ
ԳԵՂԱՄ. Սուրմակի որդին
ՀՈՎԻՎ ՄԸ

ԱՐԱՐՎԱԾ Ա.

Գիշեր է.— Դաշտավայր մը.— Խոր լուսնով լուսավորված անտառ մը.— Տեսարանին աջ կողմեն առվակ մը կը սահի, ձախ կողմը փոս մը կա:

ՏԵՍԻԼ Ա.

ՍՈՒՐՄԱԿ (առանձին)

Ահա գեղեցիկ գիշեր մը, որ ոճրագործին համար զմայլելի և հեշտ վայրկյան մ'է, որ երազի պես կանցնի, իր խիղճը միայն կը ննջե, ինքը կը կարծե թե այս գեղեցիկ գիշերը միայն անմեղին հանգիստն է. երկնից սիրուն թագուհին անգամ հայրասպան եղեռնագործին դատավոր մը կը թվի. իսկ անմեղին համար սիրո Աստվածուհի մը... ո՛ր բռնար մանկությո՜ւն, վաղանցուկ վերջալույս մ'էիր, որ սահեցար և կենացս հորիզոնը մթագնեցիր... մանկությանս առեն կյանքը և մահը, երկուքն ալ լուսաթև հրշետակներ էին, երկուքն ալ կը ժպտեին ինծի, երբ երիտասարդությունը հասավ, մահը սոսկալի կերպարանք մ'առավ, մահն առեցի և կյանքը սիրեցի... աղետալի սեր մը ծնավ սրտիս մեջ՝ սև պատվար մը խղճիս առջև... երևակայությունս կը տանջե զիս երբեմն, կը տեսնեմ ոտիցս տակ անմեղ կին մը, գունատ և խոժոռ դեմք մը, և կը լսեմ երբեմն անեծք մրմնջող ձայն մը... ի՞նչ է եղեր ուրեմն հեշտությունը, զեփյուռ մը որ հրատապ սիրտ մը զովացնելով և իր հետքին վրա արցունք սփռելով կը սահի, որուն զովությունը մանրերկրորդ մը կը տևե... բայց որչափ ալ

տևե դարձյալ այն զեփյուռին կը տենչանք... ուրեմն կը սիրեմ ես և քոզ սիրվիմ... ոտնաձայն մը կա... անշուշտ ճամբորդ մ'է... քաջալերությո՜ւն։

Տեսիլ Ը

ՍՈՒՐՄԱԿ և ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ.— (աջ կողմեն գալով) *Ո՜հ, այո՛, դառն է այս սերը։*

ՍՈՒՐՄԱԿ.— (դաշույն ի ձեռին մոտենալով) *Քսակդ կամ կյանքդ։*

ԳԵՂԱՄ.— *Ի՜նչ քսակ կը խնդրես ինձնե, խեղճ ավազակ... ես միայն վշտահար սիրտ մ'ունիմ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ես անանկ խոսքերու ականջ չեմ կախեր, քսակդ կամ կյանքդ...*

ԳԵՂԱՄ.— *Ուրեմն մեռցո՜ւր զիս... բայց դիտցիր որ բան մը չունիմ... եթե որբ, խղճալի ու թափառական երիտասարդի մը արյան ծարավի ես, խողխողե զիս, և իմ արյունվա դիակս տարածե անոր առջևը զոր ես կը սիրեմ ի բոլոր սրտե։*

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) *Ես'ղճ տղա, իր խոսքերը սիրտս կը շարժեն, չեմ համարձակիր ձեռք վերցնել իր վրա, կարծես թե աներևույթ ձեռք մը կը բռնե զիս։*

ԳԵՂԱՄ.— *Ի՜նչ վճռեցիր, ո՜վ ավազակ...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Գնա, կը պթամ քեզի...*

ԳԵՂԱՄ.— *Կը պթա՞ս ո՜հ, շնորհակալ եմ, վասնզի դեռ հուսո փոքրիկ նշույլ մ'ունիմ խավար երկնքիս երեսը՝ որ ամպե այսուհի մը պես զիս լեռնե լեռ կառաջնորդե. ա՜հ, Աստուծո սիրույն համար ըլլա, եթե Մարիամ անուն հերարձակ կին մի տեսնես որ որդի մը կը փնտռե Գեղամ անվամբ, ըսե իրեն թե իր որդին թշվառ է և քիչ առենեն պիտի մեռնի անիծելով միշտ յուր հայրը, ինչպես որ ինքը պատվիրած էր...*

ՍՈՒՐՄԱԿ.— (սարսափած) *Ո՜վ երկինք, որդիս է... քիչ մնաց որ որդույս արյունն ալ պիտի թափեի (բարձր) գնա, գնա, խեղճ տղա, բայց մի անիծեր քու հայրդ... (մեկուսի) քու հայրդ ալ թշվառ է, բայց անիծապարտ։*

ԳԵՂԱՄ.— *Շուշա՛ն, Շուշա՛ն, քեզի համար է որ մեռնիլ կուզեմ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Շուշա՞ն ըսի՛ր։*

ԳԵՂԱՄ.— *Այն հովվուհվույն քաղցր անունն է, զոր ես կը սիրեմ։*

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Որդիս իմ հակառակորդս (բարձր), ա՜հ, հեռացիր շուտ այս տեղեն, վասնզի կրնա ըլլալ որ վտանգ մը պատահի քեզի (Դեղամ տխրությամբ կը ճեռաճա) Ո՜հ, ի՞նչ եմ ես աշխարհիս վրա, անիծից նպատակ մը, ամենքը դիս կանիծեն... բայց դարձյալ սիրտս չի դողար ոճիրներ նյութելու... ոտքի ձայն մը կա... ուրիշ ճամբորդ մ'է անշուշտ, այս անգամ պահվըտիմ։

ՏԵՍԻԼ Գ

ՍՈՒՐՄԱԿ (պահվըտած) և ՏԻՐԱՆ

ՏԻՐԱՆ.— (ձախ կողմեն կերևի, չորս դին կը զննե և Սուրմակը չի տեսներ) Դեռ չէ եկեր, պիտի մատնեմ զինքը... ատենե մը ի վեր է որ իր հորը վահրամ նախարարին սպաննիչը կը փնտռեն, չը գիտեն թե իր հարազատ որդին է, թագավորը մեծ գումար մը կը խոստանա զայն մատնողին... ո՞վ չուզեր պատրաստ ատակ ճեռք բերել։

ՍՈՒՐՄԱԿ.— Երդմնազանց վատ, ճշմարիտ բարեկամ կը կարծեի զքեզ։

ՏԻՐԱՆ.— Ինքն է... (մեկուսի սարսափած) մատնվեցա...

ՍՈՒՐՄԱԿ.— Տիրա՛ն, ատակի համար քու վաղեմի բարեկամդ մատնել... միտդ բեր հազար ու մեկ եկեղեցիներուն վրա ըրած երդումդ, դու ալ իմ ոճրիս գործակից ես, մանավանդ որ դու դրդեցիր զիս... եթե կուզես ինձի հետ բանտարկիլ կամ մեռնիլ, մատնե զիս։

ՏԻՐԱՆ.— (երգիծանորեն) Հիրավի ճշմարիտ բարեկամ մ'ես եղեր, ես այս առթիվ կուզեի փորձել զքեզ, տեսնենք թե ոչինչ խոսքի մը համար բարեկամիդ կենացը կը դավե՞ս... այս բանը գիտնալու համար հետաքրքիր եմ։

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Մատնվեցա՛ր, անմիտ, (բարձր) բարեկա՜մ, դու ինքդ ես իմ թշվառությյան պատճառը... եթե դու չլայիր, Տիրան, ես հիմա Հանգիստ քուն կը քնանայի, դու զիս ոճրագործ ըրիր քու հանգստությյանդ համար... մինչև անգամ ավազակություն ընելու ստիպեցիր զիս, ուսկից շահ մ'ալ չկա, և վերջապես իմ կյանքս քովինիդ հետ զուգակշիռ ըրիր... հիմա երկինք գլխուս վերև դահիճ կը

Թվի ինձ, և ամեն քայլափոխիս կը կարծեմ որ դժոխք բացվելով ինձ պիտի լափեն... ծաղիկն անգամ ինծի համար թունավոր է... նենգավո՛ր, քու դրդմամբ սպաննեցի հայրս, և անկե ժառանգած հարստութիւններս քեզի հետ կեր ու խոսմի և մոլութեանց տուի. ապերա՛խտ Տիրան, ես քեզի համար օրհնութեան տեղ հորս անեծքն ընդունեցի... ուստի թշուառ եմ և թշուառ պիտի ըլլամ, վասնզի ապերախտի մը համար հայրասպանութիւն ըրի... երբեմն նախարարի մը, զավակ էի, իսկ հիմա ավազակ:

ՏԻՐԱՆ.— Զգե սա ոչինչ խոսքերը, քաջասիրտ եղիր, տղայամիտ մի ըլլար, գիտցիր որ աշխարհս ոճրագործին ու անմեղին համար նույնն է. երջանկութիւն ամենուն սրտին ալ կը տեղա, ինչպես փշոտ ու ծաղկավետ հովիտ մը, զոր առհասարակ կը թանա առավոտյան ցողը, և արևը իր լուսովը զայն կը կենդանացնե... գիշերը կը թառամի, առավոտուն կը թարմանա, մարդուս կյանքն ալ այսպես է, այսօր թշուառ է, վաղը երջանիկ... վերջապես կյանքը գետի մը կը նմանի որ երբեմն ծաղիկներու և երբեմն ալ ժայռերու մեջեն կը սահի, հիմա մեր գործին նայինք, ի՞նչ էր մեր ժամադրութեան նպատակը:

ՍՈՒՐՄԱԿ.— Պարետի որդեգրուհին՝ Շուշանը հիմա պիտի առեվանգենք: Պարետի որդին զայն կը սիրե և սովորաբար լուսին եղած գիշերները շրջագայելու կելնեն, ձեռնարկութիւննիս քիչ մը դժվար է, բայց ես մինչև անգամ մահը աչքս առեր եմ... մեկ մը Շուշանը թևերուս մեջ գտնեմ:

ՏԻՐԱՆ.— Անհոգ եղիր, հուսամ որ վտանգ մը չի պատահիր, առանց ձայնի կը լմնա գործը, արդեն դուն ալ իմ ճարտարութեանս տեղյակ ես... քաջալերութի՛ւն, ես եկած ատենս մարգերուն մեջ շրջագայութիւն կընեին և բավական հեռու էին իրենց բնակարանեն:

ՍՈՒՐՄԱԿ.— Երջանի՛կ լուր, վերջապես ձեռացս մեջն ես, Շուշա՛ն, այն արհամարհոտ նայվածքդ ժպիտի փոխեմ, և իմ սրտիս հետ քաքախել պիտի տամ բռնութեամբ քու սիրտդ ալ:

ՏԻՐԱՆ.— Կեցի՛ր... ինծի հատուցում պիտի հանե՞ս...

ՍՈՒՐՄԱԿ.— Անշուշտ (մեկուսի) քու հատուցումդ մահն է այս գիշեր, եթե հաջողի։

ՏԻՐԱՆ.— Երթանք ուրեմն... երկչոտություն չուզեր, անվախ սիրտ, ճարտար հարված...

ՍՈՒՐՄԱԿ.— Երթանք անմիջապես... սպանությունը քեզի, հսկողությունը ինծի, կեցցես Տիրան, եթե հաջողիս...

ՏԻՐԱՆ.— Կը տարակուսի՞ս (մեկուսի), կասկածը փարատեցինք... (բարձր) օ՜ն, այս կողմեն, զգուշություն, գուցե դիմացինիս ալ կելլեն... սա լուսինն ալ ի՞նչ աղեկ մեր գործին կուգա, եթե ճշմարտությունը փնտռես, ինքն ալ մեղսակից է, եթե ըրածնիս կրնա մեղք համարվիլ։

ՍՈՒՐՄԱԿ.— (Երթալով, մեկուսի) անմիտը կը կարծե թե մատնության խոսքը իբրև ոչինչ անհետացավ, թող այնպես կարծե. (ձախ կողմեն կը հեռանա.—Տեսարանը պարապ կը մնա պահ մը)։

Տեսիլ Դ

ՎԱՐԴ և ՇՈՒՇԱՆ (ձեռք ձեռքի աջ կողմեն կը մտնեն)

ՎԱՐԴ.— Հոգնեցար, սիրելի Շուշանս... եթե կուզես, սա առվակին քով նստինք քիչ մը։

ՇՈՒՇԱՆ.— Քանի որ քու հետդ եմ, սիրելի Վարդս, դիտես որ երբեք չեմ հոգնիր։

ՎԱՐԴ.— Շուշա՛ն, երբ առաջին անգամ սերը փափկիկ մատներովը կուրծքս բաղխեց, ես միայն այն ատեն կերևակայեի գիրկ մը և քնքուշ թևեր... կըսեի ինքնիրենս... ե՛րբ պիտի գա այն երջանիկ վայրկյանը յորում*) սիրուհվո մի հեշտ ձայնը պիտի մրմնջե ինծի, «գրկե զիս, Վա՛րդ» և ահա քու գիրկդ եմ, Շուշան, երջանիկ է այն ծաղիկը որ քու շրթնացդ վրա կը թառամի, երջանիկ է այն հողմիկը, որ քու ճակատդ կը շոյե, երջանիկ է այն ճառագայթը որ քու մազերուդ մեջ կը նվաղի, և ամենեն ավելի երջանիկ է այն որ զքեզ կը սիրե ի բոլոր սրտե։

ՇՈՒՇԱՆ.— Ա՜հ, հիրավի, ի՞նչ քաղցր է սերը, Վարդ, սերը կենաց զարունն է, որ մեր սրտին մեջ կփթթի և համ-

*) «Երբ»։

բույրը անոր զեփյուռն է, որ մեր սիրաբորբոք սրտերը կը զովացնէ... տես, Վա՛րդ, բոլոր բնութիւնը սիրով կը խայտա... լուսինը սեր կը ցողէ, ծաղիկը սեր կը բուրէ, հողմիկը սեր կը շնչէ, թռչունը սեր կը գեղգեղէ, տերևը սեր կը սոսափէ, առվակը սեր կը մրմնջէ, ո՜հ, ամեն ինչ սե՛ր... սե՛ր...

ՎԱՐԴ.— Շուշա՛ն, որչա՛փ քաղցր ես, քու սրտիդ ծալքերը շուշանա թերթերուն պես անբիծ են, քո նայվածքդ արշալուսույն առաջին ճառագայթին նման քաղցր է. քու շունչդ առավոտյան զեփյուռին չափ հեշտալի է... ո՜հ, եթե դուն չըլլայիր, փուշերով ծածկված վարդի կոկոն մը պիտի ըլլայի ես և դեռ չի բացված պիտի թառամէի։

ՇՈՒՇԱՆ.— Գիտցավ Արարիչը որ մենք առանց իրարու չի պիտի կարենայինք ապրիլ, ուստի իրարու դիրկ նետեց զմեզ, և հիմա սեր կը շնչենք միատեղ, այնպես չէ՞, Վարդ, միշտ պիտի սիրենք զիրար, ինչպես որ ծաղիկն ու զեփյուռը միշտ զիրար կը սիրեն... ո՜հ, տես ի՞նչպես ուժգին կը բաբախե սիրտս. կարծես թե կուրծքս ծակելով քու սրտիդ քով թռչիլ կուզե, մոտեցիր ինձ, սիրելիդ իմ Վարդ, միշտ գրկե զիս... տես, լուսինը ի՞նչպես կը ժպտի մեզի, կարծես թե նա ալ աստեղազարդ կամարեն մեր գիրկը թռչիլ կուզե, նա ալ զմեզ կը սիրե, մեր վրա կը հսկե, մենք ո՞ւր երթանք, ինքն ալ մեզի կը հետևի... ո՜վ լուսնակ, միայն կենդանի եղած աստեղիս չպիտի լուսավորես զմեզ, այլ երբ մեռնինք՝ մեր շիրիմներուն վրա ալ պիտի ծագիս... (առ Վարդն) և այն աստեղ սիրտ տեղ արցունք պիտի ցողե մեր շիրիմներուն վրա... քանի որ մեր երջանկութեան աստեղ կը ժպտի, անշուշտ մեր մահվան աստեղն ալ պիտի տխրի, խե՛ղճ լուսին, իր գերեզմանը թուխ ամպ մ'է միայն։

ՎԱՐԴ.— Մի այդ խոսքերը, Շուշան, ինչո՞ւ մեռնինք. ավելի աղեկ չէ՞ որ միշտ այսպես զիրար սիրելով հավիտյան երջանիկ ըլլանք... միթե չը գիտե՞ս թե որչափ քաղցր ես դու ինձ համար... դու իմ կյանքս ես, վասնզի այն ժպիտը որ դու առաջին անգամ ինձ ուղղեցիր, կենաց արշալույսն եղավ այն։

ՇՈՒՇԱՆ.— Եվ այն բաբախուն սիրտը զոր դու իմ լանջքիս մոտեցուցիր, սիրո քնար մ'է այն որ սրտիս խորը նորափթիթ սերը արթնցուց... զի ես ալ դեռ զքեզ չճանչցած՝ չգիտեի թե ի՞նչ է կյանքը... ծնողքես զրկվելես հետո՝ իրենց ձգած դույզն ժառանգությամբը կապրեի և կը կարծեի որ ալ Շլաւո եմ հավիտյան... բայց խաբվեր եմ, քու առաջին նայվածքդ սիրտս պատած տխրության քողը փարատեց... դեռ ես զքեզ չի ճանչցած՝ բոլոր օրը հովիտներու և անտառներու մեջ կանցունեի տխուր ժամերս, և անհամբեր երկոյան կսպասեի... և երբ վերջալույսը կոսկեզօծեր հորիզոնը՝ սիրտս կը զվարթանար, վասնզի կը կարծեի որ կյանքս այն վերջալույսին հետ պիտի վերջանար... բայց երբ արշալույսը նորեն կը ծագեր, կանիծեի ես զայն... ներ ինձ, սիրեցյա՛լդ իմ. դեռ չէի ճանչցած զքեզ այն աւեն, դեռ չէի զգացած քու քաղցրիկ սերդ... բայց հիմա կը հասկնամ թե անխելք եմ եղեր այն աւեն:

ՎԱՐԴ.— Եվ ի՞նչ կը կարծես, Շուշա՛ն, եթե ուրիշներն ալ մեզի պես սիրեն զիրար, այն աւեն ծաղկունք անգամ նախանձելով չպիտի՞ թառամեին, և այն աւեն ի՞նչ բան պիտի ըլլար Շուշանա սիրո նվեր, թռչուններուը նախանձելով չպիտի երգեին, և ո՞վ պիտի արթնցներ զքեզ արշալույսին ճառագայթներուն հետ՝ մեր համբույրներն իրարու տալու համար, ի՞նչ քաղցր է այն վայրկյանը:

ՇՈՒՇԱՆ.— Կարծեմ գիշերը բավական տարաժամեցավ, կամաց կամաց մեր բնակարանը երթանք, Վա՛րդ, և առտուն կանուխ ելնելով ոչխարներնիս առած՝ Մասյաց արոտներն կելնենք, այնպես չէ՞, Վա՛րդ:

ՎԱՐԴ.— Շատ ադեկ, Շուշա՛ն, բայց այն ի՞նչ ձայն է, մոիկ ըրե... (ետևվեն հետևյալ երգը կը լսվի):

ՈՂԲԵՐԳ

Ո՛վ դու գիշեր, գիշեր լոիկ լուսավառ,
Ու կը ծնուրեես ինձ ժամանակ, իմ բժշատ
Կյանքիս վրա արցունք բափել վշտահար,
Միայն զրեզ գտա ցավույս սփիրար:

Ով դուք, երկինք, երկիրք գրած, գոռություն,
Տվեք գոնե այս իմ ձրքանց դողդոջուն,

Ղնեծմ կարդալ աճոր, որ զիս արտասվաց
Մատնեց խաբեց դերևացույց հույսս կենաց:

Թշվառ եմ ես բշվառությանս վերջ չկա,
Ուրեմն աճենմ թափին գլխուն[1]) Սուրմակա
Եվ ինձ հիմիս որ եղա վտ սիրադուժ,
Երկի՜նք, գթա ու արցունքներս բեր դու հուշ:

ՇՈՒՇԱՆ.— *Ի՞նչ ողորմագին ձայն է այս... ո՞վ է արդյոք...*

ՎԱՐԴ.— *Անշուշտ թշվառ կին մ'է, ո՞վ գիտե, ի՞նչ աղետքի հանդիպեր է:*

ՇՈՒՇԱՆ.— *Կուլա՞ս, վա՛րդ... բայց ինչո՞ւ, ըսե, կաղաչեմ:*

ՎԱՐԴ.— *Այն ձայնը... այս ձայնը սրտիս խորը թնդաց, չգիտեմ... ակամա արցունք հոսեցին աչքերներես:*

ՇՈՒՇԱՆ.— *Ա՜հ, խե՜ղճ կին, արդյոք ի՞նչ է իր վիշտը, միթե դարման կրնա՞նք տալ իրեն, վա՛րդ:*

ՎԱՐԴ.— *Գուցե... ի՞նչ ծանր է արդյոք իր վիշտը, զոր այսպես ողբալով թեթևացնել կուզե, կերևի որ մեկը չունի որուն իր ցավը հայտնե, և սոխակներ է գիշերային լռության հայտնել իր գաղտնիքը և սփոսանք գտնել... Թշվա՞ռ կին:*

ՇՈՒՇԱՆ.— *Ի՞նչ գորովալից սիրտ մը ունիս, վա՛րդ, ի՞նչ շուտով արտասվեցին անուշ աչերդ... (ձեռքն աճոր սրտին դնելով) ո՞րչափ ալ ուժգին կը բաբախե սիրտդ... հանդարտե, սիրելի՛դ իմ, անշուշտ կրնանք մեր ձեռքեն եկած ձեռնտվությամբը մխիթարել զինքը, դեպի այն կողմը երթանք...*

ՎԱՐԴ.— *Կեցիր... ահա համր ոտնաձայն մը կը լսվի... կերևի որ ինքն է...սպասենք:*

ՇՈՒՇԱՆ.— *Բայց կաղաչեմ, հանդարտե:*

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՄԱՐԻԱՄ

ՄԱՐԻԱՄ.— (ձախ կողմեն մտնելով) *Իզո՜ւր կաղաղակեմ... ձայնս լսող չկա, Աստված անգամ երես դարձուցեր է ինձմե... Թշվառ եմ ես, խելացնոր մը որ ուր երթալը չգիտեր և իր ոտից ներքև գերեզման կը փնտռե միշտ... մա՜հ... մա՜հ, ինչո՞ւ կը դանդաղիս... ալ հույս չունիմ ես... Թշվառու-*

1) *Բնագրում.* Գըլուխ.

Թյանս չկա վերջ... Սուրմա՛կ, անիծյա՛լ ըլլաս դու հա-վիտյան և թող իմ անեծքս միշտ քու կյանքդ խռովե։

ՇՈՒՇԱՆ.— *Ի՞նչ ունիս, կին դու, ի՞նչ աղետք պատահեցավ քեզ... միթե դո՞ւ էիր հիմա ողորմագին երգողը...*

ՄԱՐԻԱՄ.— *Բայց ո՞վ ես դու, սիրուն աղջիկ, գիշեր ատեն ի՞նչ բան ունիս հոս։*

ՇՈՒՇԱՆ.— *Ես այս գյուղեն որը հովվուհի մ'եմ, բարի երկրագործի մը որդեգիրը, այս երիտասարդին հետ հոս շրջագայելու ելած ենք... զիրար կը սիրենք։*

ՄԱՐԻԱՄ.— *Զիրար կսիրե՞ք... ուրեմն երջանիկ եղիք, և թողեք որ ես թշվառուհյուս ողբամ առանձին, դուք չգիտեք թե ի՞նչ է թշվառուհյունը։*

ՎԱՐԴ.— *Քաջալերվե, թշվառ կին, պատմե մեզ աղետքդ և պիտի տեսնես որ մեր ձեռքեն եկած օգնուհյունը չպիտի պլանանք քեզ։*

ՇՈՒՇԱՆ.— *Գիտցիր որ ես ալ քեզ նման թշվառ էի... խեղճ ու մինակ մնացած աշխարհիս վրա՝ երբ այս աղնիվ երիտասարդը զիս իր տունը ընդունեց և իր սիրով երջանիկ ըրավ զիս։*

ՄԱՐԻԱՄ.— *Եվ եթե պատմեմ իմ աղետքս, պիտի տեսնեք թե ասոր պատճառը սերն է։*

ԱՄԵՆՔԸ.— *Սե՞րը...*

ՎԱՐԴ.— *Միթե սերը թշվառուհյան պատճառ կրնա՞ ըլլալ։*

ՇՈՒՇԱՆ.— *Բայց ըսե, ի՞նչպես սիրեցիր և թշվառացար։*

ՎԱՐԴ.— *Այո, ըսե, կաղաչենք։*

ՄԱՐԻԱՄ.— *Եթե պատմեմ, չպիտի անարգեք զիս։*

ԱՄԵՆՔԸ.— *Ոչ, երբե՛ք։*

ՄԱՐԻԱՄ.— *Ասկե 19 տարի առաջ այս գյուղիս մեջ երկրագործի մը հետ ամուսնացա, երկուքնիս ալ փոխադարձաբար զիրար կը սիրեինք... ժամանակ մը վերջը միածին կայտառ զավակ մը ունեցանք, և բավական ատեն երջանիկ ապրեցանք... օր մը... ո՛վ օր աղետալի... հովիտ մը մեջ ժուռ կուգայի... երեկոյան հեշտալի ժամերն էին... արևը մարը մտնելու վրա էր... սիրուս սիրո հեղեղի մը մեջ կը ծփար, քանի մը վայրկյաններ ալ անցան և արևն անհետացավ... ոսկեփայլ լուսինն հորիզոնեն վեր կը բարձրանար.*

ընտանեցաց միութեան ժամը մոտեցեր էր... բնակարանիս ճամբան բռնեցի դեռևին ծաղիկ ժողովելով... երջանի՜կ օրեր... հանկարծ ձայն մը առի, որ իմ անունս կուտար... դողացի... դեպի ձայնին եկած կողմը դարձա, և մեկը չտեսա... սիրտս ուժգին թոնդ առավ. ևս դարձյալ ճամբաս շարունակել սկսա. նորեն լսեցի ձայնը. դարձա և տեսա երիտասարդ մը, որ քիչ մը անդին ծունը եկած գիս կը կանչեր...

ՇՈՒՇԱՆ.— Եվ ո՞վ էր այդ անձը...

ՄԱՐԻԱՄ.— Ճանչցա զինքը, ճանչցա այն, որուն սերս խոստացեր էի, երբ աղջիկ էի... սարսուռ մը եկավ վրաս և չկրցա ճամբաս շարունակել... սերը բռնեց գիս... ակամա քանի մը քայլ ուղղեցի իրեն... վայրկենի մը բազկաց մեջ տեսա զինքը... սե՜ր աղետաբեր... վերջապես բաժնվեցանք իրարմե... քանի մը օր անցան, փափաքած ժամը հասավ և իրեն հետ այս լեռներուն մեջ փախանք... ահ, հոն գիտցա արցունք թափել և վշտանալ. անառակ եղեռնագործ մը զավակ մը ունեցա Գեղամ անուն, և զայն առած այն ոճրագործեն հեռացա. զավկիս հետ միատեղ բավական ատեն ապրեցանք... ամիս մը կա որ զավակս ալ կորսնցուցի, այնուհետև ոչխարներս, որով կը անանեինք, անկե ի վեր է թշվառ կյանք մը կանցնեմ, մինչև անգամ մուրալու ստիպվեցա՝ գյուղե գյուղ, անտառե անտառ լեռնե լեռ թափառական շրջելով... շատ զղջացի ըրածիս վրա, այլ ի զո՜ւր... ա՜հ, քանի որ ստիպեցիք գիս որ դադտնիքս ըսեմ, ահա ըսի, հանցավոր եմ, ներեցեք ինձ։

ՎԱՐԴ.— Կը ներենք քեզի, խե՜ղճ կին։

ՇՈՒՇԱՆ.— Եվ կը պաղատինք Աստուծո որ ինքն ալ ներե։

ՎԱՐԴ.— Բայց ո՞վ է քու առջի ամուսինդ, անշուշտ կը ճանչնանք զինքը, եթե այս գյուղը կը բնակի։

ՄԱՐԻԱՄ.— Պարետ երկրագործն է. հիմա եթե զինքը տեսնեմ, չեմ ճանչեր, վասնզի զինքը թողելես ի վեր 17 տարի է։

ՎԱՐԴ.— Պարետ երկրագործն ըսիր... ո՞վ երկինք...

ՇՈՒՇԱՆ.— Որդի ունի՞...

ՄԱՐԻԱՄ.— Բայց ինչո՞ւ խռովեցաք... այո, Վարդ անուն որդի մ՚ունի... զավա՜կս...

ՎԱՐԴ.— Տե՛ր Աստված, ի՞նչ կը լսեմ... ուրեմն մայրս ես դու, զոր մանկութեանս առեն կորսնցուցի։

ՄԱՐԻԱՄ.— Քու մայրդ... ա՜հ...

ՎԱՐԴ.— Այո, մայրի՛կ, Վարդն եմ ես, քու որդիդ և դեռ կը սիրեմ զքեզ։

ՄԱՐԻԱՄ.— Եվ ներեցիր քու մորդ, այնպես չէ՞ (զիրար կը գրկեն)։

ՇՈՒՇԱՆ.— Ինչ անակնկալ դիպված։

ՎԱՐԴ.— Ալ երջանիկ ես, մա՛յր իմ, վասնզի քու որդիդ գիրկդ է։

ՄԱՐԻԱՄ.— Այո, երջանիկ եմ... որդյակ իմ...

ՎԱՐԴ.— Թե որ զքեզ հորս քովը տանիմ, ալ չի պիտի վշտանաս, այնպես չէ՞...

ՄԱՐԻԱՄ.— Հո՜րդ... ա՜հ, ոչ, ոչ, արժանի չեմ ես իր քաղցր սիրույն և հարգանացը... և գուցե հիմա նա կատե զիս, և եթե երթամ, կը վռնտե զիս։

ՎԱՐԴ.— Կը սխալիս, մա՛յր իմ, ինքը դեռ կը սիրե քեզ, ինքը չը գիտեր քու պատմութիւնդ, այլ անհետացած կը կարծեր քեզ, հիմա եթե զքեզ իրեն տանիմ, ինքը պիտի բանա իր գիրկը։

ՄԱՐԻԱՄ.— Իսկ եթե գաղտնիքս իմանա, պիտի...

ՎԱՐԴ.— Ներե քեզի... Շուշա՛ն, դու ալ գրկե մայրս... քանի մը օրեն, մա՛յր իմ, դու ալ մեր հարսանյաց ներկա պիտի ըլլաս, դու ալ պիտի օրհնես մեր երջանիկ միութիւնը...

ՋԱՅՆ ՄՂ.— (ճեռվեն) Օգնութի՜ւն... օգնութի՜ւն...

ՎԱՐԴ.— Ո՜հ. տղու մը ձայնն է... երթամ, տեսնեմ, ի՛նչ կա (կերթա)։

ՄԱՐԻԱՄ.— Կեցիր... կեցիր... վտանգ մը չըլլա (ճետևեն կերթա)։

ՇՈՒՇԱՆ.— Ի՜նչ խոսք էր որ Վարդի բերնեն թռավ... հարսանի՜ք, ո՜հ, քիչ առեն Վարդ իմ ամուսինս պիտի ըլլա... քիչ առեն ամուսինս պիտի կոչեմ զինքը... ի՜նչ երջանիկ միութիւն...

Տեսիլ Ջ

ՇՈՒՇԱՆ և ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ.— (տխուր ֆալելով և Շուշանա մոտենալով) Շուշա՜ն է... (ծունր կուգա)։

ՇՈՒՇԱՆ.— Երիտասարդ մը դիմացս ի՛նչ ըսե, ի՛նչ կը խնդրես ինձմե (ոտք կը ճաճե)։

ԳԵՂԱՄ.— Նայվա՛ծք մը... ժպի՛տ մը... բա՛ռ մը...

ՇՈՒՇԱՆ.— Չեմ հասկնար ըսածդ, բացատրե՛ միտքդ։

ԳԵՂԱՄ.— Եթե ըսեմ, լեզուս առաջ չերթա՛ր... ո՛հ, կը սիրեմ զքե՛զ, Շուշա՛ն։

ՇՈՒՇԱՆ.— Եկո՛ւր վա՛րդ։

ԳԵՂԱՄ.— Ո՛հ, լռե, լռե, կաղաչեմ, դթա՛ ինծի...

ՇՈՒՇԱՆ.— Բայց կը զարհուրեցնեն զիս քու խոսքերդ, կը հասկնամ որ...

ԳԵՂԱՄ.— Ո՛չ, մարիկ ըրե... ոտքերուդ տակ սիրտ մը կը կոխկըռտես, և այն սիրտը ամեն մեկ քայլափոխիդ մեկ մեկ կաթիլ արյուն կը հեղու... սիրտ մը ունիմ, քեզ կը նվիրեմ, և դու զայն կարհամարհես... ուրեմն ծակե՛ այս սիրտը որ ամեն մեկ վայրկյան քեզի համար կը բաբախե, և ավրե դաշույնով մը այն անունը, զոր սերը իր կրակե գրիչովը սրտիս խորքը գրեց։ Թող թառամին այս շրթունքները, որոնք ամեն վայրկյան քու անունդ կը մրմնջեն... եթե անարժան եմ քու սիրույդ... դեռ «չեմ սիրեր» ըսած՝ խողխողե զիս... կաղաչեմ... ո՛հ, անգութ ես եղեր, Շուշան, ես կարծեցի որ պիտի գթաս վրաս... բայց խաբվեր եմ... բառ մը, այո կամ ոչ. պիտի սիրե՞ս զիս... դու կուլա՞ս... ուրեմն հավատա՞մ որ կը սիրես դու զիս... ո՛հ, ինձ դարձուր նայվածքդ, խոսե, սիրտս մի հատցներ։

ՇՈՒՇԱՆ.— (մեկուսի) Այո, կուլամ, խեղճ երիտասարդ, վասնզի գիտեմ թե ի՛նչ է սիրելը և չը սիրվիլը։

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ կը մտածես, պիտի սիրես զիս, այնպես չէ՞... ո՛հ, ուրեմն գրկե՛ զիս, և երջանիկ ըլլանք, դիրկս հանգչած՝ հնչե՛ սրտիս քու սիրո խոսքերդ և հուսահատությունս փարատե, ինչպես որ սոխակն անտառին խորը՝ առավոտյան երգով բնության վրա տիրած՝ դիշերային արհավիրքը կը փարատե...

ՇՈՒՇԱՆ.— Չեմ կրնար սիրել զքե՛զ... խե՛ղճ պատանի, ես յերկինս*) ուխտեցի միայն վարդս սիրել, և ի՞նչպես դրժեմ ուխտ մը. ոչ, ոչ, չեմ կրնար թողուլ իմ սիրելի վարդս

*) «Երկնքի վրա».

օտարականի մը համար, որ կրնա ուրիշ մը սիրել... երբ իմ վարդս...

ԳԵՂԱՄ.— Ուրեմն մա՞հս վճռեցիր... ո՜հ, գիտցիր որ ալ այսուհետև չկա ինձ համար երջանկութիւն, հանգիստ կյանք, և սեր։ Կյանքը ինծի վիշտ պիտի ըլլա, սերն՝ ինծի դահիճ, քու հիշատակդ մինչև գերեզման պիտի հալածէ զիս, և «Շուշա՜ն, Շուշա՜ն» հառաչած ատենս՝ փուշեր պիտի փթթին սրտիս վրա, և ամեն մեկ հառաչանքիս՝ մեկ մեկ ոտք՝ գերեզմանիս հատակը պիտի իջնեմ... վերջապես ցավոք ծնա և ցավոք պիտի մեռնիմ... խանձարուրես մինչև գերեզմանս փշալից ճամբա մը պիտի ունենամ... ուրեմն ուզեցիր որ ասանկով մեռնի նա, որ զքեզ հոգիեն ավելի կը սիրե... կուզե՞ս որ մեռնիմ Շուշան ես, Շուշա՜ն։

ՇՈՒՇԱՆ.— Ջե՛մ կրնար սիրել զքեզ (Ծովեն կը ճեռանա)։

Տեսիլ Է

ՆՈՒՅՆՔ և ՎԱՐԴ

ՎԱՐԴ.— (մտնելով) Երթանք, Շուշա՛ն... մայրս հոն մեզի կսպասե։

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ էր այն օգնութեան ձայնը...

ՎԱՐԴ.— Տղա մը լճին եզերք զվարճացած ատեն՝ դիպվածով մեջն ինկեր է։

ՇՈՒՇԱՆ.— Ազատեցի՞ր զինքը։

ՎԱՐԴ.— Այո... և իր մոտակա բնակարանը տարի։

ՇՈՒՇԱՆ.— Ո՜հ, Վա՛րդ, պահապան հրեշտակ մ'ես դու... (Կերթան առջևեն)։

ԳԵՂԱՄ.— Ո՜հ (հուսահատ ճեռանալով)։

Տեսիլ Ը

ՍՈՒՐՄԱԿ և ՏԻՐԱՆ (ձախ կողմեն կուգան)։

ՍՈՒՐՄԱԿ.— Որչա՞փ պատցուցիր զիս և դեռ չի գտանք... միթե խաբեցի՞ր զիս։

ՏԻՐԱՆ.— Ինչո՞ւ պիտի խաբեմ... թշվառականները եկած ատենս կը շրջագայեին։ Այս բարկութեանս ատեն երբե գտնեմ, այն-

պիսի հարված մը պիտի տամ ինծի դեմ դնողին որ երկու կտոր պիտի ըլլա։

ՍՈՒՐՄԱԿ.— Լուռ, պոռոտախո՛ս, զանոնք դանելու է հիմա, վաղընդի կես դիշերվան մոտ է... դուցե բնակարաննին դարձած ըլլան։

ՏԻՐԱՆ.— Ուրեմն վաղ դիշերվան ձգենք մեր ձեռնարկությունը, վաղ դիշեր անպատճառ կը կատարենք և ալ կը հաջողի։

ՍՈՒՐՄԱԿ.— Մինչև մինչև վաղը մտատանջության և կարոտանաց դա՞ր մ՚ալ սիրտի անցնեմ ես. ո՛չ, ո՛չ, չեմ կրնար այս սիրույն դիմանալ, միթե չգիտե՞ս թե ի՞նչպես կայրի սիրտս...

ՏԻՐԱՆ.— Ուրեմն մեկ մը երթամ տանը կողմերը դիտեմ, դուռ հոս եկեիր. եթե օգնության հարկ ըլլա, ես նշան կընեմ և իսկույն հասիր։

ՍՈՒՐՄԱԿ.— Ուրեմն գնա, Տիրա՛ն, պարապ չը դառնաս (Տիրան աջ կողմեն կը ճեռանա)։

Տեսիլ Ը

ՍՈՒՐՄԱԿ (առանձին)

ՍՈՒՐՄԱԿ.— Մոլեգի՛ն կիրք, դեռ չը՞ պիտի մարիս. քու դժոխային բոցերդ դեռ պիտի լափե՞ն սիրտս. այս քանի՞ անգամ է որ անողորմ ձեռքս անմեղներու արտասուքը և մինչև անդամ հոր մը արյունը թափեց քու բոցերուդ վրա և դեռ չմարեցար. սի՛րտ իմ, միթե լսեցի՞ր քիչ մը առաջ անոր ձայնը որուն ողբական եղանակը դու սովրեցուցիր. նա միայն անմեղություն և սեր գիտեր, դու անոր սովրեցուցիր թե ի՞նչ է վիշտը, ի՞նչ է ոճիրը... դեռ իր ձայնը սրտիս խորերը կը մրմնջե, դեռ իր տեսքը հոդիս կը խռովե, և դեռ իր անեծքը սարսուռ կազդե ինձ, արեգական լուսին մեջ երկյուղով կը պտտիմ, վախնալով որ չըլլա թե արտասվաթոր և հերարձակ կույսեր ելնեն դիմացս և ինս վագրերու նման հոշոտեն... դիշերն ինծի համար թանձր քող մը ըրած եմ ոճիրներս ծածկելու համար... արշալույսին քաղցր ծագումը, որ անմեղներու զվարթություն կը ցողե, ընդհակառակը ինս կը զարհուրեցնե, կը փախչիմ ես անոր տեսքեն անտառներու խորերը և իմ ոճիրներուս վրա կը խորհիմ... ոտքի ձայն մը կա... մեկը կը վազե

(աջ կողմը նայելով), *Տիրանն է... հաջողեր է... Շուշանն է իր գրկացը մեջ* (մեկուսի) *քաջալերութի՛ւն... մի դողար, բազուկնե՛ր, պետք է որ Տիրան մեռնի, և այս փոսը անոր գերեզմանն ըլլա, ուսկից անկարելի ըլլա ելնել... որպեսզի իմ գաղտնիքս գիտցող չըլլա և բախտիս ալ ընկեր չունենամ։*

Տեսիլ Ե

ՍՈՒՐՄԱԿ, ՏԻՐԱՆ, ՇՈՒՇԱՆ (մարած)

ՍՈՒՐՄԱԿ.— *Կեցցե՛ս, Տիրան... քաջ ես եղեր...*

ՏԻՐԱՆ.— (Շուշանը գիրկը) *Շունչս կտրեցավ... հոգնեցա...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մարա՞ծ է։*

ՏԻՐԱՆ.— *Այո։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ի՞նչպես հաջողեցար։*

ՏԻՐԱՆ.— *Երբ ասկե բավական հեռացա, տեսա որ առջևես կերթային. աղեկ մը վերարկուիս մեջ պլլվեցա չճանչցվելու համար. քիչ մը մոտեցա և տեսա որ Մարիամ, կինդ, հետերնին կը խոսակցեր։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մարիա՞մ, կի՞նս... ի՞նչ կը խոսակցեին...* (սոսկալով)։

ՏԻՐԱՆ.— *Ականջ դրի... խկույն վարդի վրա հարձակեցա և դաշույնի հարվածով մը գետին տարածեցի զայն։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մահացո՞ւ էր հարվածը։*

ՏԻՐԱՆ.— *Ոչ... բայց խորունկ... հետո Շուշանը գիրկս առած երբ կուգայի, տեսա որ ձեռք մը զիս բռներ, «որդի՞ս» կաղաղակեր... դարձա և տեսա որ Մարիամն էր, ուժգին կից մը տվի և զայն շնչասպառ գետին փռեցի, որով առանց արգելքի հասա հոս... օ՜ն, ուրեմն ի՞նչ պիտի ընենք... շուտ, վտանգ մը չի պատահի։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Գիրկս տուր* (Շուշանը մեկ թևին վրա առնելը և դաշույնով մը Տիրանը զարնելը մեկ կրնե). *դու մեռիր որ ես աղեկ մը խորհիմ ընելիքս։*

ՏԻՐԱՆ.— *Ա՜հ. ապերախտ... նենգավոր...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մատնե զիս հիմա... հանդարտե սիրտ իմ, ալ մատնիչ չկա, հանգիստ կյանք վայլե։*

ՏԻՐԱՆ.— Այս մարդը իր հայրը, վահրամ նախարարը, սպան-
նեց...

ՍՈՒՐՄԱԿ.— Ա՜խ ղէ Տիրան, միայն գիշերային լռութիւնը կը լսե
քեզի...

ՏԻՐԱՆ.— Ո՛չ... Ասուածծ մը կը լսե... (կը մեռնի: Սուրմակ՝
Շուշաճը գիրկը՝ երթալու կըլլա):

ՄԱՐԻԱՄ.— (դրսեն) Ա՜հ... ո՞վ զարկաւ զաւակս...

ՍՈՒՐՄԱԿ.— Ո՜վ երկինք, ինքն է... մի կթոտիք, ծունկե՛ր, հառաջ
գացեք... և դու, վա՛տ սիրտ, ինչո՞ւ կը զարհուրիս կնոջմե
մը, որ այսչափ եղեռն գործելե չզարհուրեցաւ... հանդար-
տե...

ՏԵՍԻԼ Ժ.Ս.

ՆՈՒՅՆՔ և ՄԱՐԻԱՄ

ՄԱՐԻԱՄ.— (ներս ծածկ գալով) Մարդասպա՛ն, ի՞նչ ըրիր զա-
ւակս:

ՍՈՒՐՄԱԿ.— Մարիա՜մ, բաւական է, թող դիս, խոչընդոտ մի
ըլլար ինձ, ապա թէ ոչ կսպանեմ զքեզ ալ:

ՄԱՐԻԱՄ.— Այս ձա՜յնը... այս ձայնը պիտի ճանչնամ ես... ո՞վ
ես դու...

ՍՈՒՐՄԱԿ.— Մի՛ հարցներ անունս... քու հիշատակդ բաւական
հալածեց զիս, դիշեր ցերեկ ձայնդ ականջս չդադրեցաւ,
ալ բաւական անիծեցիր զիս...

ՄԱՐԻԱՄ.— (ծովը երթալով և դիտելով) Սուրմա՛կ... (ճիչ մը
արձակելով) Ա՜հ... մարդասպա՜ն, դարձյա՛լ դու ես...
անիծյա՛լ ըլլաս հաւիտյան... (հուսահատ ծունր կիջնե,
Սուրմակ Շուշաճը գրկը առած կը հեռանա):

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

ԱՐԱՐՎԱԾ Բ

Արշալույս.— Պարետա տանը պարտեզը.— Քարէ աթոռակներ.— Աջ կողմը Պարետա տունը:

Տեսիլ Ա

ՊԱՐԵՏ և ԳՈՒՐԳԵՆ (տեսարանը մտնելով)

ՊԱՐԵՏ.— Ի՞նչ է խնդիրդդ, խոսե, ծերունի՛դ Գուրգեն, գիտես որ երբեք քու խնդիրներդ մերժած չեմ...

ԳՈՒՐԳԵՆ.— Գիտե՞ս որչափ քաղցր է զավակ մը...

ՊԱՐԵՏ.— Անտարակույս, զավակ մը հոր մը կյանքն է...

ԳՈՒՐԳԵՆ.— Եվ զավակի մը արցո՞ւնքը...

ՊԱՐԵՏ.— Կարծես թե հոր մը մահվան փոսը կը փորե, ինչպես որ ինձ ալ պատահեցավ... որդիս այն գիշերվընե իվեր, յորում*) դուն ճամբուն վրա վիրավորյալ տեսնելով հոս բերիր, այն գիշերվընե ի վեր միշտ կարտասվե իր սիրուհվույն Շուշանին համար, զոր որբ ճանչելով մանկութենե ի վեր իմ տունս կը պահեի, շիտակ ըսելով՝ ես ալ կուլամ այն անմեղ աղջկանը կորստյանը վրա, զոր զավակի պես կը սիրեի, և քանի մը շաբաթե ետքը զինքը իմ որդույս հետ ամուսնացնելու միտք ունեի.... բայց, ավա՛ղ...

ԳՈՒՐԳԵՆ.— Քանի որ գիտես թե որչա՛փ դառն է այս վիշտը, ուրեմն մաիկ ըրե... երեկ դաշտեն տնակս դարձա, աղջիկս զիս տեսնելուն պես դիրկս նետվեցավ, ես չի նշմարեցի բնավ թե իր այտերը արտասվաթոր էին. քիչ առենեն սրտիս վրա թացություն մը զգացի. վեր առի աղջկանս գլուխը և տեսա որ հուշիկ մնջիկ կարտասվեր... ի՞նչ ունիս, դուստր

*) «Որեզ, ուր»:

իմ, ըսի սոսկմամբ... իսկ նա, Թշվառ եմ, հայրի՛կ, պատասխանեց։ Այս խոսքը դիս խռովեց, կուրծքիս վրա սեղմեցի յուր անուշիկ դեմքը և, խոսե, ի՞նչ ունիս, հարցուցի... ինքը—կը սիրեմ— բառը արտասանեց և արտասուքն իր խոսքը ընդմիջեցին... վերջապես իր բերնեն առի թե քու որդիդ, Վարդը, կը սիրե եղեր։

ՊԱՐԵՏ.— Իմ որդի՞ս...

ԳՈՒՐԳԵՆ.— Այո, և եթե չկրնամ իրեն ամուսինն ըլլալ, հայրիկ միշտ Թշվա՞ռ պիտի ըլլամ, ըսավ նա... ո՜հ, աշխատեցա զինքը համոզելու, բայց չի կրցա, իր դիտավորութենեն շրջել. ինչ ընելիքս չեմ գիտեր, միայն կը մտածեմ որ եթե իմ դուստրը Թշվառ ըլլա, ի՞նչ պիտի ընեմ ես... բոլոր հույսս քու վրադ է, ո՜վ առաքինիդ Պարետ, դու միայն կրնաս աղջիկս իրեն սպառնացող Թշվառութենեն ազատել, Թող ես մեռնիմ և աղջիկս երջանիկ ըլլա... ես միայն իմ աղջկանս համար կապրիմ, աղջկանս ժպիտներուն մեջ է իմ կյանքս... այս մազերը, որ մեկ մեկ վշտով ճերմկցեր են՝ փեսիկով իրեն ոտիցը տակ կը սփռեմ, եթե սասանկով յուր երջանկությունը ստանալս գիտնամ, ես ամեն վայրկյան մտատանջության մեջ եմ որ չըլլա թե ժժդույն շրթունքներս աղջկանս շիրմին ցրտությունն զգան։

ՊԱՐԵՏ.— Մխիթարվե, ծերունի՛դ Գուրգեն, մի հուսահատիր այդպես. անշուշտ երկինք ալևոր հոր մը վրա կը գթան և չեն Թողուր որ նա իր անմեղ աղջկան արտասուքը տեսնե... տես, ես ի՞նչպես կը համբերեմ իմ միակ որդվույս սըրտաճմլիկ հառաչանացը, որ իր հայրը Թողած՝ դիշեր ցերեկ առանձնության մեջ արտասուք կը թափե... ա՜հ, անիծյալ ըլլա այն, որ իմ զավակս այսպես Թշվառ ըրավ. ահա մեր երկուքին վիճակն ալ միևնույնն է...հիմա ես որդվույս կառաջարկեմ քու աղջկանդ սերը. եթե ընդունի, թե դու երջանիկ կըլլաս և թե ես...

ԳՈՒՐԳԵՆ.— Ո՜հ, օրհնյալ ըլլաս, առաքինիդ Պարետ, որչա՜փ բարեսիրտ ես... հիմա ժամանակն անցած է. ես դաշտ կերթամ, իրիկունը կը տեսնվինք... մնաս բարյավ։ (Ձախ կողմեն կը ճեռանա)։

ՊԱՐԵՏ.— Երթաս բարյա՜վ (խորեն կը ճեռանա)։

Տեսիլ Բ

ՎԱՐԴ (առանձին)

Երբ արշալույսը կը ծագի, կը կարծեմ որ Շուշանը գիրկս է... և կը խաբվիմ միշտ... անձկանոք և հուսով՝ առավոտյան սիրո սուրհանդակ զեփյուռին կսպասեմ որ գուցե Շուշանես ողջույն մը կամ համբույր մը բերե ինձ. իսկ նա լռիկ մնջիկ կը սահի և իր հետքին վրա կարծես թե սուգ կը ծավալե. ուրեմն մեռա՞վ Շուշան, պատասխան տվեք, անտառք և հովիտք, թոռմեցա՞վ այն քնքույշ ծաղիկը... դու կը լռեք և պատասխան չեք տար... ա՜հ, հասկցա, անիծյա՛լ ըլլա այն գիշերը... նորածին լուսին մը բոլորեցավ, ի զո՞ւր սիրտս հույսով կը խայտա դեռ... գուցե ինքը, երկինքն է հիմա, ինձ կսպասե որ երթամ գրկեմ զինքը. երթամ համբուրել այն շրթունքը, որոնք հավիտենական սեր մրմնջեցին... չեմ կրնար դիմանալ այս կարոտյան. կենացս օրերը, սրտիս խոցերը վիշտ տպավորելով կանցնին. առավոտյան ցողի կաթիլները մեկ մեկ արտասուք են աչացս, և ծաղկունք՝ մեկ մեկ տխուր հիշատակներ... սիրուհվո մը հիշատակը միշտ կը տանջե զիս... միայն շիրիմը պիտի կարենա սիրտս վշտերն արգելուլ (դադշույնը կը հանե). ուստի Թո՛ղ այս դաշույնը ծակե սիրտս, ալ Թո՛ղ մեռնիմ ես... (ինքզինքը զարնելու կըլլա, Պարետ վրա կը հասնի և կը բռնե):

Տեսիլ Գ

ՎԱՐԴ և ՊԱՐԵՏ

ՊԱՐԵՏ.— Կեցիր, ի՞նչ կընես, որդյա՛կ, կը մոռնա՞ս քու խղճալի հայրդ, չե՞ս գիտեր ի՞նչ կընես իրեն...

ՎԱՐԴ.— Ա՜հ, Թող որ մեռնիմ ես, հա՛յր իմ, Թող որ երթամ իմ անձկալիս գրկեմ:

ՊԱՐԵՏ.— Ուրեմն քու ալևոր հորմե՞դ ավելի կսիրես զինքը:

ՎԱՐԴ.— Ո՛չ, հա՛յր իմ, բայց առանց իրեն չպիտի կարենամ ապրիլ ես:

ՊԱՐԵՏ.— Եվ դու մեռնիս և երջանիկ ըլլաս. ի՞նչ ընե հայրդ այն

ատեն մինակ՝ աշխարհիս վրա, զո՞վ իրը սիրուհիք՝ յուր գրկացը մեջ սեղմե. միայն զքեզ ունի, դու ես իր միակ զավակը. այն ատեն որո՞ւն գրկացը մեջ հանդչեցնե իր ա-լևոր ճակատը... համբերե, որդյա՛կ իմ, գուցե դեռ կապրի Շուշան, թերևս օր մը զա զքեզ գտնելու.... և եթե զքեզ մեռած գտնե, այն ալ թշվառ կըլլա. համբերե, անշուշտ երկինք օր մը կը լսեն մեր աղաչանացը... բայց, որդյա՛կ իմ, եթե կը սիրես քու հայրդ, չնչե սրտեդ Շուշանա հիշատակը և պիտի տեսնես որ դու և ուրիշներն ալ երջանիկ պիտի ըլլան։

ՎԱՐԴ.— *Ի՞նչպես...*

ՊԱՐԵՏ.— *Գուրգենա աղջիկը զքեզ կը սիրե և դիշեր ցերեկ քեզի համար կարտասվե եղեր, դու գիտես թե ինչ դեղեցիկ և պարկեշտ աղջկե մ'է։*

ՎԱՐԴ.— *Կը ցնորի՞ս, հա՛յր իմ, ե՞ս չնչեմ սրտես Շուշանա հիշատակը և ուրիշ մը սիրեմ... և այն ատեն հովիտներն ու անտառներն լեզու պիտի ելնեն և «սիրադրուժ» աղաղակելով նախատանաց փուշեր պիտի սփռեն ոտիցս ներքև... այն լուսինն, որ մեր սիրույն վկան եղավ, ամպերու ետև պահվատած, ատելություն պիտի սնուցանե ինծի դեմ... ո՜հ, ոչ չեմ կրնար մոռնալ զինքը և իր սերը... ինչո՞ւ արգիլեցիր զիս մեռնելե, հա՛յր իմ, այս վայրկենին գուցե մեր հոգիները զիրար կը գտնեին, գուցե Շուշանա դիրկն էի ես հիմա...*

ՊԱՐԵՏ.— *Եվ քու հա՞յրդ... և այն ատեն քու ալևոր հորդ վըշտահար սիրտը գերեզմանիդ ցրտասարսուռ քարին վրա սառիլ սկսեր էր... ո՜հ, հիմա կը հասկնամ որ զիս չես սիրեր եղեր, Վարդ։*

ՎԱՐԴ.— *Ա՜հ, ոչ, կը սիրեմ զքեզ, հա՛յր իմ, ուզե արյունս՝ կյանքս կուտամ, բայց մի ուզեր սիտս՝ թող որ այս սիրտը Շուշանա սիրույն համար հալի և մաշի... չեմ կրնար ուրիշ մը սիրել... Շուշանա տխուր ձայնը ականջես չի դադրիր, միշտ սիրե զիս—կը մրմնջե... չեմ կրնար, եթե Շուշան կենդանի է, թշվառության բաժակը մատուցանել անոր, իսկ եթե մեռած է, զինքը իր գերեզմանին մեջ խռովել... եթե ուրիշ մը գիրկն ըլլամ, իր հառաչանքներն ականջիս*

քովեն պիտի սլանան, քնույս աաեն իր արտասուքը ականջիս քով պիտի մրմնջեն... Իր արտասվաց ամեն մեկ կաթիլը մեկ մեկ խղճի խայթ պիտի ըլլա սրտիս... Շուշանա շրթունքներեն, ուսկից միայն համբույր կը բղխեր, այն աաեն անեծք պիտի թոթափին... իր աչացը մեջ, ուր միայն ժպիտ կը խայտային, այն աաեն աահլության շանթեր պիտի փայլատակին... ո՜հ, ի՞նչպես ուրիշ մը սիրեմ, հա՛յր իմ։

ՊԱՐՏՏ.— Երե ուրիշ մը չես սիրեր, ուրեմն դադրե ալ հառաչելե, որպեսզի քու հայրդ ալ դադրի վշտանալե. չեմ բռնադատեր զքեզ, որդյա՛կ իմ, որ ուրիշ մը սիրես, այլ կը փափաքիմ որ ալ հուսահատ ու տխուր չտեսնեմ զքեզ... եթե արտասվաց կաթիլ մը շողշողե աչացդ մեջ, եթե խեղդուկ հառաչանք մը թռչի շրթունքներեդ այսուհետև, գիտցիր որ քու ծերունի հայրդ ալ պիտի սկսի դերեզմանին աստիճանները չափել...

ՎԱՐԴ.— (արտասվալից) Ո՜հ, անկարելի է, հա՛յր իմ... եթե այդպես է, ուրեմն կը թողում ես այս տնակը և լեռնե լեռ կը թափառիմ, որպեսզի դու իմ հուսահատությունս չտեսնես... կը հեծեմ միայնակ դերեզմանոցներու խորերը, ինչվան որ արտասուքս և հառաչանքս դադրին... և սև հողեր ծածկեն իմ գլուխս։

ՊԱՐՏՏ.— Ո՜հ, չէ, որդյակ իմ, իմ գիրկս եղիր, իմ գիրկս հեծե, ես ալ քեզի հետ պիտի հեծեմ... դու արտասվոդդ թրջե այս ալևոր ճակատը և ես ալ իմ արտասվախառն համբույրներովս ծածկեմ քու քաղցր դեմքդդ... ո՜հ, մի զատվիր իմ գրկես, ա՜հ, երբե՛ք, երբե՛ք, զավակս...

ՎԱՐԴ.— Չէ, չէ, հա՛յր իմ... դադրե՜ս ես միշտ քու քովդ պիտի ըլլամ...

ՊԱՐՏՏ.— Օրհնյա՛լ ըլլաս, իմ սիրուն զավակս... բայց խոստացիր որ ես քու քովդ չեղած ժամանակդ ալ չի պիտի լաս։

ՎԱՐԴ—. Կը խոստանամ, հա՛յր իմ, ապահով եղիր...

ՊԱՐՏՏ.— Շատ եղիկ, որդյա՛կ իմ, այդպես քու հայրդ ալ երջանիկ կրնես (տանը դռնեն ներս կը մտնե). խե՜ղճ Գուրգեն...

Տեսիլ Դ

ՎԱՐԴ (առանձին)

Ես՞ղճ հայրիկ... որչա՜փ վշտացուցի զինքը... Շուշա՛ն, տես քու սիրույդ համար հորս ցամքած աչերին արցունք հոսեցուցի... ո՜հ, գիտեմ որ դու հորմես քաղցր ես ինծի, երբ հուշիկ մնջիկ գիրկս կննջես... երբ—կը սիրեմ զքեզ— խոսքը միշտ ականջիս կը կրկնես... շա՜տ քաղցր ես դու, ո՜հ... շա՜տ քաղցր... (ձեռոք երեսը ծածկած աթոռակի մը վրա կը նստի հուսահատ):

Տեսիլ Ե

ՎԱՐԴ (Սուրմակ աղխատի զգեստով ձախ կողմեն կը մտնե)

ՍՈՒՐՄԱԿ.— *Տեսնենք քիչ մ'ալ այս արհեստը ձեռք առնենք, ավազակությունը դժվար է և վտանգավոր, իսկ այս արհեստը դյուրին և անվտանգ... Թեպետ և Շուշան կը սիրե զիս, բայց դարձյալ ոսկիին չեմ կրնար բաժնվիլ... քանի մը ժամանակե ի վեր է որ վրաս տարօրինակ ադահություն մը տիրած է* (Վարդը տեսնելով), *կարծեմ Վարդն է սա... որչա՜փ թշվառ է... օ՜ն, պաշտոննիս կատրենք. Վարդ բավական հարուստ է... հիմա լալ ձևացնելու և ցավալի դիպված մը հորինելու է, այն ատեն ոչ թե միայն դիմացինս յարտասուս*) *կը շարժեմ, այլ քսակն ալ կը պարպեմ, ահա երջանիկ արհեստ մը, որով մարդ սուակի տեր կըլլա առանց չարաչար հոդնելու...* (կը մոտենա):

ՎԱՐԴ.— *Ինչո՞ւ համար եկեր ես հոս, բարի մարդ, ի՞նչ կը խնդրես...:*

ՍՈՒՐՄԱԿ.— (լալ կեղծելով) *Եթե զիս աղեկ մը դիտես, կը հասկընաս հոս գալուս պատճառը...*

ՎԱՐԴ.— *Կարծեմ աղքատ ես և ողորմություն խնդրելու եկած ես...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Տես, ողորմած մարդը, ինչպես կը հասկնա թշվառի*

---

*) «Արցունքի».

մը վիճակը... սիրելի՛ որդյակ, երեք փոքրիկ տղաքներ ունիմ՝ առանց մոր, երկու երեք օր կա որ դժբախտութեամբ աչք թևս կոտրեցավ, և աշխատութեամբ անունդ հայթայթելու անկարող եմ, երկու օր կա որ ես անօթի, տղաքս ւնօթի՝ թշվառութեան մեջ կը տառապինք... փոքրիկ խեղճերը բոլորաիքս ժողվված «Հայրի՛կ, անօթի ենք» ըսելով կուլան կողբան... ո՞ր հոր սիրտ կը դիմանա ասանկ ողորմելի տեսարանի մը... քանի մը անգամ հուսահատութենես ինքզինքս սպաննել ուզեցի, բայց տղայոցս ապագա վիճակը նախատեսելով՝ ետ կեցա դիտավորութենես և սկսա տունե տուն ողորմութիւն խնդրել. շատերն վռնտեցին դիս, հազիվ քիչ մը ստակ ժողվեցի, և ան ալ տուն տարած ատենս ավազակները կողոպտեցին... ա՜հ, գոնե դուն, դթած զավակ, հանուն սիրելվույդ ըլլա, մեկ ողորմութիւն մը շնորհե և ազատե թշվառ ընտանիք մը:

ՎԱՐԴ.— Խե՛ղճ մարդ, առ սա քսակը և գնա շուտ տղաքդ խնամե... սա քսակը, որ քեզ կուտամ, իմ բոլոր հարստութիւնս է (Քսակ մը կուտա):

ՍՈՒՐՄԱԿ.— (առնելով) Շնորհակալ եմ աղնի՛վ զավակ... Աստված զքեզ սիրելյացդ դրկեն չի բաժնե... մնաս բարյալի (Գացած ատեն), Խե՛ղճ Վարդ, իր սիրուհին հաւիշտակելես դատ քսակն ալ առի. գործերնիս աղեկ սկսավ... տեսնենք... (Երթալու ատեն Մարիամ դիմացը կելնե, Սուրմակ զայն տեսնելով կանգապարե և Մարիամ սոսկման ճիչ մը արձակելով կը նվաղի):

Տեսիլ Զ

ՎԱՐԴ և ՄԱՐԻԱՄ

ՎԱՐԴ.— Ի՞նչ եղավ այս կինը, պիտի ճանչեմ ես զինքը... Մա՜յրս, այո, մա՜յրս է... ի՞նչ խորհրդավոր տեսարան... այս մարդը ո՞վ էր արդյոք (զայն գրկելով) մա՜յր իմ... մա՜յր իմ... ի՞նչ եղար հանկարծ... խելքդ գլուխդ բեր, խոսե...

ՄԱՐԻԱՄ.— (Սթափելով և զայն դիտելով) Աստվա՛ծ իմ... ո՞վ կը տեսնեմ...

ՎԱՐԴ.— Մի վարանիր, մա՛յր իմ, քու որդի Վարդն է գրկացդ մեջ։

ՄԱՐԻԱՄ.— Կը խաբես զիս, միթե չմեռա՞վ Վարդ այն սև գիշերը։

ՎԱՐԴ.— Ո՛չ, ո՛չ ազատեցավ Վարդ այն նենդավորին տված հարվածեն... բայց իսկի՞վ թե այն գիշերը մեռներ... այլ ըսե, մա՛յր իմ, ով էր այն աղբատը... ինչո՞ւ իր տեսքը խռովեց զքեզ։

ՄԱՐԻԱՄ.— (մեկուսի) Ահ՝ ղե՛ռ տղա, յուր հակառակորդը չի ճանչեր... (բարձր) մարդադեմ հրեշ մ՛է նա, որ այս ողորմելի կերպարանոք...

ՎԱՐԴ.— Հրե՞շ մը... ճշմարի՞տ կըսես...

ՄԱՐԻԱՄ.— Ինչո՞ւ համար եկած էր հոս...

ՎԱՐԴ.— Եկավ, «խղճալի եմ» ըսելով քսակս առավ գնաց։

ՄԱՐԻԱՄ.— Անօրե՛ն... միթե չի վախցա՞ր այս տեղն ալ ոտք կոխելու, ուր անեծք կապած են քեզի... ա՜հ, այն անմեղնեբուն անեծքը չփշրեցի՞ն քու գլուխդ, երբ զիրենք իրենց սիրելյաց գրկեն հափշտակեցիր. գերեզմանն անգամ կը գարշի քեզնե... մեկ ոտքդ քանի մը անմեղներու դիակաց վրա կեցած է և մյուս ոտքդ դժոխոց բերանը կը նայի, և դեռ՝ առանց սարսափելու երկնից շանթերեն, ըրած ոճիրներուդ վրա կյանք կը շնչես, անղդա՜մ...

ՎԱՐԴ.— Քու խոսքերդ սոսկումն կազդեն ինձ, մա՛յր իմ... ի՞նչ ըսել կուզես, չեմ հասկնար...

ՄԱՐԻԱՄ.— Ըսել կուզեմ որ ես ալ քիչ առեներն այն անօրենին ոտից պատվանդան եղող դիակներեն մեկն պիտի ըլլամ... անօրեն մ՛է նա, նա է որ քու մայրդ գրկեդ հափշտակեց, նա է որ քու սիրուհիդ գրկեդ հափշտակեց...

ՎԱՐԴ.— Ա՜հ, Շուշանս հափշտակե՞ց... (ձախեն վազելով)։

ՄԱՐԻԱՄ.— Կեցի՛ր, կեցի՛ր... ո՜հ, գնաց (ինքզինքին գալով) արդյոք ատուգիվ որդի՞ս էր որ տեսա, եթե ոչ՝ գերեզմանեն փախած անհանգիստ ստվեր մը, որ սիրուհին կը փնտռե։

ՊԱՐԵՏ և ՄԱՐԻԱՄ

ՄԱՐԻԱՄ.— Վա՜րդ, չըլլա՜ որ սպաննե զինքը, ի՞նչ ըրի ես...
ՊԱՐԵՏ.— Ջավա՜կս սպաննե... ի՞նչ կըսես, կին դու...
ՄԱՐԻԱՄ.— Ջավակս մարդասպանի մը դիրկը կը վազե, ազատենք։
ՊԱՐԵՏ.— Ի՞նչ պատահեցավ տե՛ր Աստված, բայց ո՞վ ես դու...
ՄԱՐԻԱՄ.— (արտասվալից) Իր մայրը...
ՊԱՐԵՏ.— (զարմացած) Մարիա՞մ...

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

ԱՐԱՐՎԱԾ Գ

Մաղկազարդ ճովիտ մը.—Աջ կողմը բլուր մը.—Ետևը լեռ-ներ, որոնց սառոռաը ժայռերուն վրայեն ջրվեժ մը կը սահի:

Տեսիլ Ա.

ՎԱՐԴ (առաջին)

Մինչև ցե՞րբ իմ հայրենի տնակս թողած պիտի թափառիմ շնչասպառ քեղի համար, Շուշա՛ն, զքեզ հափշտակող ավազակին ետևեն, պիտի գտնեմ զքեզ... ո՜հ, երեք յերկինս) թռար, ցուցուր անգամ մը գոնե քու լուսատիպ դեմքդ ամպերուն ետևեն... տեսնեմ և մեռնիմ, գամ և զքեզ գտնեմ... ա՜հ, սե՜ր, սե՜ր, երանի թե ոչ քու քաղցրությունդ և ոչ ալ քու վիշտերդ զգայի, այլ ի՞նչ կըսեմ ես... սիրեցի Շուշանը և սիրո համար են համբույր, ժպիտ, հառաչանք և արտասուք... բայց երբ միտքս կուգան այն օրերն, երբ մենք Շուշանա հետ իրարու գիրկ՝ իրարու շնչով կապրեինք, հիմակվան՝ իրմե հեռու անցուցած վայրկյաններս մեկ մեկ փոթորկալից գիշերներ են առանց արշալուսի... ո՜վ հրեշտակդ գթության, Թուր երկնից կամաըրեն և այս արտասուքս քու թևոցդ վրա ժողվելով Ամենակալին տար, ըսե իրեն թե վայրկյան մը չեմ մոռցած զինքը...*

Տեսիլ Բ.

ՎԱՐԴ և ԳԵՂԱՄ (նիհար, դեղնած և կթոտ կերևի)

(Գեղամը տեսնելով, որ հուսահատ և համրաթայլ կուգա) *Ահա, հուսահատ երիտասարդ մ'ալ... կարծես թե*

*) «Դեպի երկինք».

Նա ալ ինձ նման սիրուհին կորսնցուցած է... նա ալ ինձ նման թշվառ է... և հառաչելով ուրվական մը դարձեր է։

ԳԵՂԱՄ.— *Քիչ մ'ալ թողդիս, ո՛վ անողորմ հիշատակ, ալ բավական դերի եղավ քեզ սիրտս... բայց դու ինծ մտիկ չես ըներ... դու զիս չպիտի թողուս ինչվան որ աչերս չմթագնին... ո՛վ սեր, մինչև ե՞րբ օձի պես սրտիս արյունը պիտի ծծես... ի՞րբ պիտի հագենաս... Շուշա՛ն, երանի՞ թե աչքերս զքեզ տեսած չըլլային բնավ...*

ՎԱՐԴ.— (մեկուսի) *Շուշա՛ն... ո՛վ երկինք... ի՞նչ անուն էր որ լսեցի օտարականի մը բերնեն (անոր մոտենալով). այն աղջիկը որուն անունը թռավ հիմա շրթունքներեդ, կը ճանչե՞ս... տեսա՞ր զինքը, խոսե, շուտ խոսե...*

ԳԵՂԱՄ.— *Այն աղջիկը... ա՜հ... կը սիրեմ ես զայն։*

ՎԱՐԴ.— *Կը սիրե՞ս... իսկ ի՞նքը։*

ԳԵՂԱՄ.— *Մերժեց իմ սերս...*

ՎԱՐԴ.— *Ո՜հ... բայց ո՞ւր և ե՞րբ տեսար զինքը...*

ԳԵՂԱՄ.— *Ամիսե մը ավելի է որ գիշեր մը անտառի մը եզերքը տեսա զինքը, հոն հայտնեցի իմ սերս և նա մերժեց, ուրիշ մը կը սիրեր, վա՜րդը... միշտ վարդ կը թռեր իր բերնեն։*

ՎԱՐԴ.— *Ո՜հ, Շուշա՛ն, ես գիտեի որ դու համենայն սրտե կը սիրես զիս...*

ԳԵՂԱՄ.— *Ի՞նչ... զքեզ կը սիրե՞ միշտ... ուրեմն վա՜րդն ես դու... բայց ո՞ւր է զինքը ա՜հ, շնորհք ըրե, գոնե վերջին անգամ մը տեսնեմ իր դեմքը, թեպետ նա զիս չի սիրեր... ո՜հ, վերջին անգամ գեթ... կը տեսնես որ ալ պիտի մեռնիմ...*

ՎԱՐԴ.— *Եվ դու ալ իմ արցունքներս կը տեսնե՞ս։*

ԳԵՂԱՄ.— *Ա՜հ... մեռա՞վ...*

ՎԱՐԴ.— *Ոչ, հափշտակեցին։*

ԳԵՂԱՄ.— *Հափշտակեցի՞ն։*

ՎԱՐԴ.— *Հիմա ես ալ կուզեմ տեսնել իր դեմքը, գոնե վայրկյան մը. այլ չկա՞։*

ԳԵՂԱՄ.— *Ուրեմն առանց զինքը անգամ մ'ալ տեսնելու, պիտի մեռնիմ։*

ՎԱՐԴ.— *Եվ պիտի անիծե՞ս իմ Շուշանս, որ քու սերդ մերժեց...*

ԳԵՂԱՄ.— *Ո՜հ, ո՛չ, զինքն օրհնելով պիտի մեռնիմ... վասնզի դեռ*

կը սիրեմ զինքը... պիտի անիծեմ այն օրը՝ յորում) զինքը տեսա հովտի մը մեջ, որ առվակի մը եզերքը հանգչած կը դիտեր թե ի՞նքը ավելի անբիծ էր թե[1]) առվակը...*

ՎԱՐԴ.— Ո՜հ, Շուշա՛ն... և մի՞թե առվակեն ավելի անբիծ չէ՞ր...

ԳԵՂԱՄ.— Այո... վերջին հարված մը կը պակսեր... պիտի մեռնի՛մ... (բլրին եռևեն կաներևութացա):

Տեսիլ Գ

ՎԱՐԴ (առանձին)

Քանի՜ արտասուանց վրա կը ծանրանա... երեք օր է, որ աչքս չեմ գոցած... ո՜հ, հոս քիչ մը նիրհեմ... գուցե երազիս մեջ տեսնեմ Շուշանն և կարոտս առնեմ... Շուշա՛ն, մի մոռնար զիս բնավ... (ծառին կրթնած ննջանալու կըլլա, իսկույն հետևյալ երգը կը լսվի՝ զոր մոախոն և ապշած մաիկ կըննե):

ՍԻՐԵՐԳ

Ա՜հ, արծալույս հաղցրածավալ,
Ծողե յերկիր ցող և նըշույլ,
Տես աճատուին ճսեմասվեր
Լըսվին բրուչնոց հաղցր երգեր:

Ահի, զարիր, դու, Վարդ փուբով,
Ցաճատաս, հովիտս**, Արարատյաց,
Ծե, սիրտ ի սիրտ և բև ի բև
Մինչ երեկո առցուք մեք մաճ,

Համբույր հազար հողմույն բեդդեմ,
Եվ աճդաճոր ոգել բզաեր
Ի շուրբն ի սիրտ և ի հոգի
Ուխտել բզաեր հավերժական:

*) «ձերբ».
**) Անտառներում և հովիտներում».
1) Բնագրում՝ եթե:

Այս ե՞րգը... այս ձա՞յնը... պիտի հիշեմ ես, կը դողա՞մ... սիրտս կը տրոփե... այո, Շուշանա ձայնն է... բայց ո՞ւր եմ ես... երկի՞նքն եմ եթե ոչ երկրի վրա... այո, այո, այն երգն է, զոր արշալուսին անկողնույս քով նստած կերգեր նա... երկի՞նք և երկիր, պատասխան տվեք ինձ, ո՞ւր է Շուշանս... ուսկի՞ց եկավ յուր ձայնը... Շուշա՛ն, հոս եմ հոս... իսկ դու ո՞ւր ես, գրկեմ զքեզ... սեղմեմ ձեռքդ սրտիս վրա (ձախ կողմեն շտապով կը մեկնի):

Տեսիլ Դ

ՊԱՐԵՏ և ՄԱՐԻԱՄ (աջ կողմեն կուգան)

ՊԱՐԵՏ.— Ա՜հ, որչա՜փ հոգնեցա... այս որչա՜փ քալեցինք, ե՞րբ պիտի գտնենք գինքը... արդյոք վարդ թողո՞ւց զմեզ, իմ սիրելի որդյակս որ իմ միակ հույսս և իմ ծերության նեցուկն էր...

ՄԱՐԻԱՄ.— Համբերե՛, սիրելի՛ ամուսինս...

ՊԱՐԵՏ.— Համբերե՞մ... այո, համբերեմ... բայց այս քանի օր է որ իր հայրենի տնակը թողուց, հեռացավ և իր ալևոր հայրը հուսահատության մեջ ձգեց... որդվույս այս բաժանումը կենացս փոթորիկն էր, որ պայթեցավ և կարծեմ միայն մահվան առջև պիտի խաղաղի... այս խոսքը միշտ պիտի կրկնեմ. որդի մը հորը մահվան վրա քանի մը արցունք կը թափե, իսկ հայր մը իր որդվույն կենացը ամեն մեկ վայրկյանին մեն մի արցունք կը նվիրե... ո՜հ, չգիտեն որդիք հոր արժեքը... վա՛րդ, վա՛րդ, որչափ ապերախտ գտնվեցար քու ծերունի հորդ, որ ամեն մեկ վայրկյան քու երջանկությանդ համար կը մտատանջեր, և դու սիրուհվո մը համար մոռցար գինքը...

ՄԱՐԻԱՄ.— Սիրելի՛ ամուսինս, դու չգիտե՞ս թե սերը որչափ ազդեցություն ունի տասն և յոթ տարեկան երիտասարդի մը սրտին վրա, յորում*) դեռ նոր կը փթթին սիրո առաջին ծաղիկները, և որուն առջև շատ անգամ կը նվազի հայրական սերը, այսու ամենայնիվ հոր մը կաթիլ մը արտասուքը կարող է մարել այն սերը... համբերե, անշուշտ կգըտ-

*) «Ուր, որտեղ».

նենք զինքը, և տնակնիս կդառնանք խաղաղ կյանք մը վա-
րելու համար. (մեկուսի) իսկ իմ որդիս Գեղամս... առանց
անոր՝ ես չպիտի կարենամ երջանիկ ըլլալ։

ՊԱՐՆՏ.— Այո, համբերեմ... բայց եթե չդաննենք երբեք զինքը,
ի՞նչ պիտի ընեմ ես... ո՜հ, արդյոք հուսահատութենեն ինք-
զինք սպաննե՞ց... սոսկալի կասկած... արդյոք ո՞ր գետը
քշեց տարավ իր ցուրտ դիակը, ո՞ր վայրն արդյոք իր
արյամբը կարմրեցավ. վա՜րդ, վա՜րդ, արդյոք մահվան
շոնչը խամրեցո՞ւց զքեզ, ինչպես ձմրան հողմը վարդը կը
խամրեցնե... ո՜հ, մեկը չի դար ծերունի հոր մը ավետելու
թե՝ «Քու որդիդ կենդանի է և պիտի դառնա զինքը...» կար-
ծես թե բնությունը հուշիկ մնջիկ իմ որդույս վրա կը
սգա... (ձախ կողմեն նայելով) ի՞նչ կը տեսնես... ահա
մեկը անտառին խորը կը թափառի... արդյոք վա՞րդս է...
ո՜հ, ի՞նչ ուրախություն, եթե ինքն ըլլա (կերթա)։

ՄԱՐԻԱՄ.— Գնա՛, գնա՛, կարելի է որ ինքն ըլլա։

Տեսիլ Ե

ՄԱՐԻԱՄ (առաձնին)

Բայց իմ Գեղամս ո՞վ պիտի դարձնե իմ գիրկս... թեպետ
ինքն ուխտազանցության մը կամ ոճիրի մը հիշա-
տակն է, սակայն կը սիրեմ զինքը, երկու զավակներս ալ
կորսուած. մին գտնելով՝ գուցե մյուսին հիշատակը մոռնա-
յի... բայց գիրկս երկուքն ալ զուրկ է... խե՜ղճ ամուսինս,
Որչա՜փ թշվառ է... արդյոք հիրավի վա՞րդն էր տեսածը
(ձախեն կերթա)։

Տեսիլ Զ

ԳԵՂԱՄ (աչքերովը մեկը փնտռելով)

Դացեր է... պիտի մեռնիմ... ահա մահը ճիրաններն
բացած՝ կսպասե որ երթամ գրկեմ զինքը... այս ծաղկանց
տակ թող թաղվին հույսս և սերս... ի՞նչ եղա ես, ողբա-
ձայն թել մը դարձա... աներևույթ ձեռք մը գերեզման մը
կը ցուցնե ինձ անդադար, զոր սերն իր արյունվա մատիւ-

ներով ոտքերուս տակ փորեց. հո՞ն պիտի իջնեմ ես, Շուշա՜ն, վասնզի չափազանց սիրեցի զքեզ... գերեզմա՛ն, թող հատակդ խոր ըլլա, որեզի գիշերվան լռության մեջ աշխարհիս երեսեն սլացող սիրո խոսքերուն և համբույրներուն մրմունջը չըլլա որ գերեզմանիս թափանցե և իմ վշտահար սուվերս իր խոր քունեն արթնցնելով՝ աչքերեն արցունքի սառած կաթիլներ հոսեցնե... ո՜վ սեր, դահի՛ճ երիտասարդաց, դու սրեցիր տապարդ... մնաք բարյա՜վ, անտառք և հովիտք և ամենայն զբոսավայրք մանկությանս... մնաս բարյա՜վ, մա՛յր իմ, այսուհետև ինձի համար թափած արցունքներդ գերեզմանիս վրա ժողվե... կարողություն չմնաց վրաս, ոտքերս կը դեղևին (բիւր ինչ կը տկարանա և վերջապես կիյնա) ա՜հ, Շուշա՜ն... մա՜յր իմ...

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆ և ՄԱՐԻԱՄ (մտնելով)

ՄԱՐԻԱՄ.— *Ի՞նչ ձայն է որ լսեցի... մեկը մայր իմ կաղաղակեր* (կը տեսնե Գեղամը, հովը կը մոռնա, աղեկ մը կը դիտե և ետ մը կարձակե) *ո՜հ, Գեղա՜մ։*

ԳԵՂԱՄ.— *Մա՜յր իմ... դո՞ւ ես...*

ՄԱՐԻԱՄ.— *Ել, ել, մայրդ գրկե, զավակս...*

ԳԵՂԱՄ.— *Ո՜հ, չեմ կրնար։*

ՄԱՐԻԱՄ.— *Ի՞նչ նիհար և դալկահար դեմք... ի՞նչ կիոտ ծոմակեր... բայց ի՞նչ եղար, զավա՜կս։*

ԳԵՂԱՄ.— *Սիրեցի աղջիկ մը և նա մերժեց սերս։*

ՄԱՐԻԱՄ.— *Դարձյալ սեր...*

ԳԵՂԱՄ.— *Ես ալ ինքզինքս լեռները նետեցի, շունչ մը չէի ուզեր շնչել... իզո՜ւր ուզեցի զինքը մոռնալ, քեզ մոռցա, մա՜յր իմ, զինքը չկրցա մոռնալ... իր հիշատակը դահճի մը պես կը հալածեր զիս... սրտես գունդագունդ հառաչանքներ հանել կուտար, զիս ուժե կը ձգեր... մայր իմ... այնպես որ հիմա մորս վերջին մնաս բարով մը ըսելու անգամ կաց րողություն չի մնաց վրաս։*

ՄԱՐԻԱՄ.— *Որդյա՛կ իմ, պիտի գրկվիմ քենե, չպիտի կարենամ*

խորտակել այն դռները, որոնք ձիս քեզնե պիտի բաժնեն... որոնք որդի մը արտասվալից մոր մը գրկեն պիտի զատեն։

ԳԵՂԱՄ.— Մի այդպես թրջեր արտասվոդ այրած սիրտս, մա՛յր իմ, որոնք սրտիս կրակը փոխանակ մարելու, ավելի կը բորբոքեն... դոնե թող որ կենացս վերջին վայրկյաններուս քու մայրական ծոցդ թափեմ արցունքներուս վերջին մնացորդը, որոնք չեն նմանիր մանկութեանս առեն ամեն թափած արտասվացս, որք մարգարտի պես կը սահեին այտերուս վրայեն... իսկ այս կաթիլ, կաթիլ վազածը սրտիս արյունն է, որ աչքերես դուրս կը ժայթքե, վասնզի ալ արցունքս ցամքեցավ։

ՄԱՐԻԱՄ.— Ո՜հ, ա՛յս է կյանք ըսվածը... ա՛յս է զավակ ունենալը... մայր մը զավակ մը ունենալու համար պետք է որ անհուն սիրտ մը ունենա... ա՜հ, որդյակ իմ, արև մ'էիր դու երկնքին երեսը, և եթե դու աներևութանաս կենացդ հորիզոնեն, սև գիշեր մը պիտի պատե ձիս...

ԳԵՂԱՄ.— Ուրեմն ինչո՞ւ ծնար ձիս, եթե դուն և ես այսպես թշվառ պիտի ըլլայինք։

ՄԱՐԻԱՄ.— Կը տեսնես որ սերը կապաննե քեզ։

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, սերն առաջին անգամ ինծի սիրուն հրեշտակ մը երևցավ, ես ալ յուր զմայլելի տեսքեն հրապուրված՝ գրկեցի զինքը... բայց հետո տեսա որ ալ նույն հրապույրը չուներ... տեսա որ սերը դահիճ մ'է եղեր որ տապարի ձեռին ձիս կը հալածեր կատաղաբար... Վերջապես հասավ ինձ... հարվածեց, հարվածեց և ձիս գետին տարածեց... բայց, օրհնյալ ըլլա երկինք, խեղճ երիտասարդ մը յուր սիրեցյալ մոր տեսութենեն չզրկեց... ուրեմն վերջին անգամ մ'ալ սրտիդ վրա գրկե ձիս, մա՛յր իմ։

ՄԱՐԻԱՄ.— Ա՜հ, կը թողո՞ւս մայրդ, որդյա՜կ իմ...

ԳԵՂԱՄ.— Աչքերս կը մթագնին... մահվան սուլերը դիմացս կեցած ինձ կսպասեն... մնա՜ս բարյավ, մա՛յր իմ... (կը մեռնի)։

ՄԱՐԻԱՄ.— Օգնությո՜ւն, օգնությո՜ւն, զավակս կը մեռնի... ա՜հ, մեռավ... դիակնացա՜վ... ա՜հ, ալ կենդանի չէ իմ Գեղամս... իմ կյանքս ալ նոր դերեզմանին վրա արտասվելով պիտի սահի։

Տեսիլ Ը

ՄԱՐԻԱՄ և ՊԱՐԵՏ

ՊԱՐԵՏ.— (հուսահատ երևալով) *Ի զո՜ւր... ինքը չէր...*
ՄԱՐԻԱՄ.— (Պարետը տեսնելով) *Ա՜հ...*
ՊԱՐԵՏ.— *Ո՞վ է այդ... վարդը չէ՞...* (մոտենալով)։
ՄԱՐԻԱՄ.— *Ջավա՜հս է...*

(ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԿԻՋՆԵ)

ԱՐԱՐՎԱԾՔ Դ

կամարակապ մութ fարայր մը.—խորը խոռոչ մը.— կամարե մը կախված կանթեղ մը կը պլպլա:

ՏԵՍԻԼ Ա.

ՍՈՒՐՄԱԿ (նստարանի մը վրա կը մրափե). *ՇՈՒՇԱՆ* (խոռոչին մեջ կը fնանա)

ՍՈՒՐՄԱԿ.— (խռոված կարթնանա, չորս կողմը կը նայի, խոռոչը կը դիտե և կնանդարտի) *Դեռ ազատ և երջանիկ եմ, դեռ Շուշան ձեռքս է... ա՜հ, ի՞նչ սոսկալի երազ էր որ տեսա... սիրտս զարհուրած՝ դեռ կը բաբախե, դեռ բոլորովին դողդողմեջ եմ, ինչո՞ւ համար հանդարտ չեմ կրնար սիրել... անդո՛ւթ երկինք, ինչո՞ւ համար հանդիստս խլեցիք սրտես... դիշերներն՝ մեկ մեկ սևազգեստ դահիճներ են, որ գիխուս վերևեն կանցնին առանց զիս սպաննելու, սպառնալիքնայվածք մը միայն ուղղելով ինձ, որոց մեջ՝ հայելվո պես անցելույն հիշատակները կը նշմարեմ... ցերեկներն ալ հանդիստ չեմ, վասնզի ալեւոր հորս ստվերն՝ իր պաղ ձեռքը կուրծքիս վրա դրած ահիրտս կը ճնշե... միշտ այն սոսկալի դիշերն միտքն կուգա, այն սև դիշերը՝ յորում*) դողդոջելով անկողնես ելա, զարհուրած չորս կողմս նայեցա, հետո երկինք վերցուցի աչքերս և տեսա որ լուսինը խոժոռադեմ գիս կը դիտեր... արձանի մը պես պաղած մնացի, հառաչեցի և վարանեցա, միտքս բերի սիրուհիս և քաջալերվեցա, վասնզի կըհուսայի հետն ազատ ապրիլ և ձեռացս մեջեն ոսկվո հեղհղներ թափել... հորս սենեկին դռան սեմին վրա հասած էի... ներս մտա... անկողնույն քով ծունր

*) «ըրբ».

եկա... խղդուկ հառաչանք մը ալացավ սրտես... պաղ քըր-տինք մը հոսեց մարմնես... ամեն բան լմնցեր էր... խեղ-դամահ ըրի հայր մը, որ իմ ամօթալի գործերուս խոչըն-դոտ կըլլար... դեռ իր վերջին նայվածքը աչացս առջեն է։

ՇՈՒՇԱՆ.— (բանդագուշելով) *Որչա՞փ կը սիրեմ զքեզ...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Այս անուշ ձայնն առածիս պես կը զվարթանամ... երբ Շուշանա գիրկն եմ, ամեն բան կը հանդարտի... քանի մը անգամ բռնադատեցի զինքը, բայց երբ օգնությո՜ւն պո-ռաց, եւս կեցա դիտավորութենես, վախնալով որ չըլլա թե հորս ուրվականը գերեզմանեն դուրս ելնե անոր օգնելու համար... բայց վերջապես... օր մը այսպես քնո մեջ էր... մարած էր... վայրենի փափաքս լցավ... այնուհետև առեց զիս և արտասվեց... բայց հիմա զիս կը սիրե և վրաս կը գուրգուրա... որչա՞փ ալ սիրուն է... կարծես թե հրեշտակ մ'է որ սիրո համար երկինքը թողլով՝ աշխարհք եկած է։*

ՇՈՒՇԱՆ.— (նույնպես) *Ե՜ս սիրեմ Սուրմակը, այն անօրենը, եր-բե՛ք... կատեմ ես զայն, սիրել կը կեղծեմ, որպեսզի վրաս վստահելով այս խավարչտին քարայրեն հանե զիս...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Թշվառակա՜ն, մատնվեցա՜ր... ուրեմն քու ժպիտ-ներդ խաբեպատիր են... այդ խոստովանությունը շատ սուղ նստավ քեզի...*

ՇՈՒՇԱՆ.— (կարճենա, կը տխրի, ետոտ սթափելով Սուրմակի կը մոտենա) *Դեռ դիշե՞ր է, Սուրմակ... բայց կարծեմ արշա-լույսը կը ծագի, վասնզի թռչուններուն ձայնն է որ հեռուեն կառնում, դու ըսիր որ այսօր պիտի տեսնեմ արեգական ծագումը, չորմե*) բավական տեսեր ի վեր գուրկ եմ... որչափ բարեսիրտ ես, Սուրմակ, և որչափ կը սիրեմ զքեզ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Թող զիս, նենգավո՛ր շողոքորթ, դու կը խաբես զիս, կը հասկնամ. այդ աչացդ մեջ փայլող ժպիտներն տես-լությանդ շանթերն են, ապերա՜խա, ես կը սիրեմ զքեզ, և դու այդ սերն արհամարհանաց ժպիտներով կը շողոքոր-թես...*

ՇՈՒՇԱՆ.— *Ի՞նչ կըսես, Սուրմա՛կ, կը ցնորի՞ս թե կատակ կընես... (մեկուսի) Աստվա՜ծ իմ... չեմ հասկնար, ի՞նչ եղած է ար-դյոք...*

---

*) «Որէց».

ՍՈՒՐՄԱԿ.— Ո՛չ, ո՛չ, ըսածս դիտեմ և կը լսեմ այդ հառաչանքներն, որոնք լռության մեջ կը սահին, կը տեսնեմ ես այդ արցունքները, որոնք խավարի մեջ կը հոսին, վերջապես սրտիդ հուզմունքները՝ դեղնած դեմքիդ վրա հայելվո մը պես կը տեսնեմ... ուրեմն մի հուսար որ այսուհետև քու կեղծ սիրովդ պատրես զիս։

ՇՈՒՇԱՆ.— Կը մեղանչես դու, Սուրմա՛կ, կը մեղանչես իմ սիրո վրա այսպես կասկածելով. դիտե՞ս որ այդ խոսքերը սիրտս նեսոի պես կը խոցեն...

ՍՈՒՐՄԱԿ.— Եթե այդպես է, երդվիր որ ճշմարիտ սիրով կը սիրես զիս... դու ո՞ւր կը կենաս... այս խոսքը քեզ սոսկում կը պատճառե, ուրեմն դեռ շնչե այս խավարը, արտասվոդ թրջե այս քարերը և հառաչանքներովդ թնդացուր այս կամարները... ոչ ոք պիտի լսե քեզ և պիտի գթա. միայն Սուրմակ կա հոս...

ՇՈՒՇԱՆ.— Ա՜հ, չարաշար կը տանջես զիս... Սուրմա՛կ, ո՛վ իշխանություն տվավ քեզի մատաղ սիրտ մը այսպես խոցելու... ո՜հ, մինչդեռ նոր սկսած էի սիրո պարտեզին ծաղկունք քաղել և անոնցմով փունջ կապել, դու այն փունջը հափշտակեցիր իմ ձեռքես և անոր փոխարեն փշո փունջ մը դրիր ձեռացս մեջ... մինչդեռ նոր սկսած էի կապուտագեղ և աստեղազարդ կամարի մը տակ սիրել և ժպտիլ, դու վիհ մը բացիր առջևս և զիս հոն քաշկռտեցիր, և հիմա խավարամած կամարի մը տակ կը հեծեմ... այո, կատեմ զքեզ, Սուրմա՛կ... թող այս խավար լռության մեջ լռիկ մնչիկ սահին արտասուքս, թող մեկը չի գթա իմ վրաս։

ՍՈՒՐՄԱԿ.— Մի այդ խոսքերը, Շուշա՛ն, սիրե զիս և երջանիկ եղիր, գիտցիր որ երբ սիրո անկեղծ ժպիտ մը ծագի այտերուդ վրա, այս խավարչտին քարայրն ալ պիտի լուսավորվի, այն ժպիտն արև մը պիտի ըլլա ինծի և քեզի համար... երբ զիս սիրես, այս քարայրը դրախտ մը պիտի ըլլա... երբ ժպտիս, այս սև կամարները պիտի ոսկեզօծին... երբ աչքեդ ուրախության կայլակներ հոսին, յուրաքանչյուրն իբրև ծաղիկ պիտի փթթի հոս, իսկ երբ շրթունքներդ համբույր տան, անոնց մրմունջն իբրև քնարի քաղցրաձայն

նվագներ պիտի զբոսցնեն զմեզ. ուրեմն ասկե ավելի ի՞նչ բանի կը փափաքիս...

ՇՈՒՇԱՆ.— Բանի մը միայն, զոր պետք չէ գիտնաս դու...

ՍՈՒՐՄԱԿ.— Բայց երբ դու ճշմարտիվ սիրես զիս, ես ոչ թե իր դերեզմանն այլ զինք իսկ կը ցուցնեմ քեզի...

ՇՈՒՇԱՆ.— Վարդս կենդանի ըլլա... ոչ, անկարելի է այդ, մինչեւ դու չսպաննեցի՛ր զինքը... անդուր, միշտ կը տանջես զիս, միշտ սրտիս խորը թաղված տխուր հիշատակները կարթընացնես... դու կը խաբես զիս, կենդանի է կըսես, որպեսզի զքեզ յուր սպանիչը չի կարծեմ...

ՍՈՒՐՄԱԿ.— Կերդնում, որ եթե զիս սիրես, պիտի տեսնես զինքը...

ՇՈՒՇԱՆ.— Ոչ, չեմ հավատար քու երդմանդ... եթե իսկ զինքը տեսնեմ, պիտի ըսեմ թե՝ խաբեպատիր երազ մ'է կամ յուր սուվերն է (հուսահատ՝ դեմքը ձեռոք ծածկելով կերթա, կը նստի):

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Պետք է որ մինակ թողում զինքը, որպեսզի հուսահատության և երկյուղի մեջ դարձյալ գրկե զիս. ես երթամ քիչ մը ուտելիք բերելու:

Տեսիլ Ը

ՇՈՒՇԱՆ (առանձին)

Գացե՛ր է... դարձյալ առանձին մնացի խավարի և լռության մեջ... շատ աշխատեցա այս սոսկալի տեղեն փախչելու, այլ չկրցա ելք մը գտնել... իզո՞ւր ասդին անդին գացի, գլուխս միշտ կամարներու զարկի, բայց հուսահատութենես, վախես ետ կեցա... ա՜հ, որչա՛փ թշվառ եմ, եթե գիտնայիր, վա՛րդ, որ կաթիլ կաթիլ արտասուք կը հոսին սիրո քնարիս թելերուն վրայեն, որ երբեմն զվարթ եղանակներ կը նվագեր. քանի որ այս խավարին մեջ եմ, հուսո նշույլ մը չեմ նշմարեր. ուրեմն ինչո՞ւ ապրիմ ես. մահն արագաթռիչ թևեր պիտի տա ինձ և անոնցմով յերկինս*) պիտի սլանամ... հոն պիտի վինտռեմ Վարդս և պիտի գտնեմ զինքը դրախտին մեջ, որ ծաղկանց վրա

*) «Դեպի երկինք».

հանգչած՝ ինձ համար կարտասվե, պիտի սրբեմ յուր արցունքը և հավիտյան պիտի սիրենք զիրար, վասնզի հոն թշնամի չկա... պիտի հեռանամ այս դժոխային բնակարաններն, արհամարհելով այս քարերը, որոնք իմ արցունքս ծծեցին, արհամարհելով այս կամարներն, որոնք՝ հուսահատ հառաչելու առենս՝ իրենց տված արձագանգովը կարծես թե վրաս կը խնդային... (ոտքը դաշույնի մը գալով) ի՞նչ է այս (առնելով) ո՜հ, ահա գործիքս ալ գտա. հեռացեք մտքես, երջանկութեյան հիշատակներ, հեռացե՛ք աչացս առջևեն, բնութեյան հրաշալեաց տավերներ, ի զո՞ւր կը հրապուրեք զիս, երկիրս փշոտ վարդ մ'է, իսկ երկինքը անփուշ վարդ... ոտքի ձայն մը կա... ինքն է... ո՜հ, չտեսնեմ մեկ մ'ալ իր դժոխային դեմքը (դաշույնով ինքզինքը կը զարնե):

Տեսիլ Գ

ՎԱՐԴ և ՇՈՒՇԱՆ

ՎԱՐԴ.— (խարխափյալ գալով) Այս խավարը և լռութիյունը սոսկալի է... Շուշա՛ն... Շուշա՛ն... ո՞ւր ես...

ՇՈՒՇԱՆ.— Աստվա՜ծ իմ... այս ձայնը... կը ցնորի՞մ... կերազե՞մ արդյոք...

ՎԱՐԴ.— Շուշա՛ն, ձայն տուր ինձ, վարդն եմ ես:

ՇՈՒՇԱՆ.— Երկի՞նք, պիտի խենթանա՞մ հիմա... բայց դարձյալ կը խաբվիմ, մեռած է նա...

ՎԱՐԴ.— Շուշա՛ն... (մոտենալով) Ո՞ւր ես... ո՜հ (կը գրկե):

ՇՈՒՇԱՆ.— (զայն դիտելով) Ո՜հ, ճշմարտիվ դո՞ւ ես իմ գիրկս:

ՎԱՐԴ.— Միթե չե՞ս ճանչեր զիս... մոռցա՞ր զիս... Շուշա՛ն...

ՇՈՒՇԱՆ.— Ո՛չ, ո՛չ, մոռցա երկինից և վարդին գույնը. այլ քու դեմդ չեմ մոռցած... բայց այս խաբեպատիր երազ մ'էր, վասնզի վարդ սպանվեցավ:

ՎԱՐԴ.— Հանդարտե, Շուշա՛ն, դեռ ես կյանք կը շնչեմ. ազատեցա Սուրմակա հարվածեն... բայց երթանք, Շուշա՛ն, հեռանանք այս սոսկալի տեղեն:

ՇՈՒՇԱՆ.— Բայց ի՞նչպես մտար հոս... ի՞նչպես գիտցար թե ես հոս էի...

ՎԱՐԴ.— Քանի մը օր առաջ երբ արտասվահառաչ այս անմատչելի լեռները կը թափառեի, հանկարծ երգի մը ձայն առի, և նայեցա որ այն ձայնը քուկդ էր, խեղճի պես ասդին անդին վազեցի և իզուր փնտռեցի. սրտիս ցավը կրկնապատկեցավ. վերջապես Նախախնամության օգնությամբ այս քարայրին բերանը գտա երեկ. ականջ դրի, լսեցի խորոմնկեն Սուրմակա և քու ձայնդ, ուրախությամբ՝ քարայրես հետու՝ մացառներու մեջ պահվտեցա՝ սպասելով որ Սուրմակա քարայրեն ելած առեն՝ ներս մտնեմ, բայց չելավ... դիշերը հոն անցուցի, արշալուսուն կանուխ ելա և աչալուրջ հսկեցի, տեսա որ Սուրմակ դուրս կելներ, ուզեցի վրան հարձակիլ. բայց նշմարելով որ զինյալ էր, չհամարձակեցա, վախնալով որ երկրորդ անգամուն գուցե սպանվեի և զքեզ չկարենայի աղատել. ուստի թող տվի որ բավական հեռանա, շատ դժվարությամբ հոս մտա և ահա քու քովդ եմ... բայց ինչո՞ւ չես աճապարեր, երթա՛նք, բայց այս ի՞նչ խոհավություն է... այս ի՞նչ դաշույն է... (սոսկմաճ ճիչ մը կարձակե) Աստվա՜ծ իմ... կը զարհուրեցնես զիս, Շուշա՛ն... հեծկլտանք, ո՜հ, լսե, ի՞նչ կա, ի՞նչ եղար... կը խեղդանամ... կը սարսափիմ... ա՜հ, արյուն կը վազե սրտեդ... ի՞նչ ըրիր, Շուշան, օգնությո՜ւն, օգնությո՜ւն...ւ

ՇՈՒՇԱՆ.— Ամեն ճիշդ ընդունա՜յն է, Վա՛րդ, հարվածը սրտիս վրա է...

ՎԱՐԴ.— Ա՜հ, գոնե այդ դաշույնը տուր որ ես ալ քեզի հետ մեռնիմ...

ՇՈՒՇԱՆ.— Ոչ, ոչ, դու պիտի ապրի՛ս...

ՎԱՐԴ.— Եվ ինչո՞ւ համար...

ՇՈՒՇԱՆ.— Վրեժ լուծելու համա՜ր...

ՎԱՐԴ.— Մինչև Սուրմակ... այդ հրեշը...

ՇՈՒՇԱՆ.— Նենգությամբ հափշտակեց ինձնե գանձ մը, զոր միշտ քեզի կը պարտեի...

ՎԱՐԴ.— Ի՞նչ կը խոսիս, Շուշա՛ն, մինչև զիս ողջ ողջ գերեզմա՞ն դնել կուզես... այդ խոսքը մահվանե ավելի սարսափեցույց... սառեցույց զիս...

ՇՈՒՇԱՆ.— Եվ ահա ասոր համար մեռնիլ ուզեցի, վասնզի գիտեի որ քու սիրույդ արժանի չպիտի ըլլայի, գիտեի որ զիս այս-

պես պիտի նախատես... բայց ևրև դիտնայիր, վա՛րդ, որ շատ ցավ քաշեցի քեզնե հեռու. առանց արևու նշույլ մը տեսնելու, առանց անուշիկ զեփյուռ մը շնչելու... ուրեմն կատե՞ս պիս, վա՛րդ, չե՞ս պիտար... չե՞ս ներեր ինձ...

ՎԱՐԴ.— Ոչ, ոչ, չեմ կրնար ատել զքեզ, Շուշա՛ն. այլ միայն կանիծեմ այն անձն, որ զքեզ և պիս թշվառ ըրավ... ա՜հ, եթե դու մեռնիս, ի՞նչ պիտի ընեմ ես մինակ աշխարհիս վրա... ես ալ կուզեմ մեռնիլ...

ՇՈՒՇԱՆ.— Չէ, չէ, վա՛րդ, դու ինչվան մահդ լերանց վրա մենավոր պիտի ապրիս քու և իմ հոգվույս համար... որպեսզի յերկինս*) երկուքս ալ երջանիկ ըլլանք հավիտյան... բնավ մի լար ինծի համար... այլ դիտցիր որ երբ յերկինս թըռչինք, երկնքի հրեշտակք իրենց փափկիկ թևերովը պիտի սրբեն մեր արցունքը, հոն միշտ պիտի ժպտինք և պիտի հարցնենք իրարու թե ի՞նչ է արտասուքը... ծաղկանց մեջ պիտի ննջենք հանդիստ, զի հոն չիկա մեկն որ մեր մեջ սուր նետե։

ՎԱՐԴ.— Բայց կենացս օրերն առանց քեզի իբրև մեն մի արցունք պիտի ժահին. դու յերկինս երջանիկ պիտի ըլլաս. իսկ ես երկրի վրա թշվա՜ռ... միշտ թշվա՜ռ։

ՇՈՒՇԱՆ.— Ես պիտի աղոթեմ հանապազ Ամենակալին աթոռին առջև ծունր դրած որ զքեզ շուտով իմ գիրկս դարձնե, միշտ պիտի երազիդ մեջ գամ զքեզ մխիթարելու, և դրախտին ծաղիկներովը արցունքդ սրբելով՝ այն արտասվաթորմ փունջն Ամենակալին պիտի ներկայացնեմ...

ՎԱՐԴ.— Բայց այդ քաղցրիկ երազդդ արթնութիյունը խիստ դառն պիտի ըլլա ինձ. ուրեմն ես ալ միշտ ննջեմ որ անդադար զքեզ երազեմ...

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչպես պիտի զատվիմ քենե, վար՛դ, ահավասիկ կենացս հետին վայրկյանը կը մոտենա. այս արյունոտ և բաբախուն սիրտը վերջին անգամ սեղմե կուրծքիդ վրա, վանդի քիչ առենեն պիտի սառի նա, մոտեցուր ճակատդ շրթանցս, որոնք քիչ առենեն պիտի թառամին... վերջին համբույր մը, սիրելի վարդս. վայրկյան մը անգամ դիս մտքեդ մի հաներ, եթե ոչ այն վայրկյանեն ինձ համար

---

1) «երկնքում».

տխրության դիշեր մը պիտի ըլլա. միշտ քու գիրկդ երեք վակայե դիս, շրթունք շրթունքի, աչք աչքի, ինչպես երբեմն կը ննջեինք միատեղ... մի թողուր զիս... Վա՛րդ, դեռ գրկե զիս... մնա՜ս բարյավ... (կը մեռնի):

ՎԱՐԴ.— *Ա՜հ... մեռա՞ր, Շուշա՛ն... վերջապե՞ս թառամեցար, ո՜վ սիրուն ծաղիկ... աչքերդ գոցեցիր հավիտյան... ո՜հ, վերջին անգամ մ'ալ տեսնեմ դեմքդ քու սևորակ աչքերուդ մեջ... ի զո՜ւր կաղաղակեմ. այսուհետև չկա այն նազելի Շուշանն. այլ անզգա և ցուրտ դիակ մը, որուն շրթնաց համբույրները մահը ջնջեց պաղ ձեռոք... կը հոտահատեցնես զիս, դիակդ Շուշանա... սիրտս ալ չզգար այն արիությունն, որով քիչ մը առաջ սիրտս կը խայտար... կարծես թե մահվանս ցուրտ ստվերն իմ վրաս ալ կը տարածվի... ոտքերս ձայն կա, ո՜վ են արդյոք...*

ՀՈՎԻԿ.— (դրսեն) *Այո, այս քարայրն է, իրեն հոս մտնելը ես աչքովս տեսա... ես կը ճանչնամ Վարդը...*

ՎԱՐԴ.— *Ո՜վ կը փնտռե զիս...*

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ, ՊԱՐԵՏ. ՄԱՐԻԱՄ, ՀՈՎԻԿ ՄԸ (ջահով)

ՊԱՐԵՏ.— *Այս կողմը բռնե ջահը... այս կողմը։*

ՎԱՐԴ.— *Հա՛յր իմ...*

ՊԱՐԵՏ.— *Ի՞նչ... ձայն մը լսեցի՞ք...*

ՄԱՐԻԱՄ.— *Այո, այս կողմեն ձայն մը եկավ։*

ՎԱՐԴ.— *Ես եմ... հոս եմ... հա՛յր իմ... մա՛յր իմ...*

ՊԱՐԵՏ.— *Այո, որդվույս ձայնն է* (մոտենալով և գրկելով). *ո՜հ, վերջապե՞ս գտա զքեզ, սիրելի որդյակս։*

ՄԱՐԻԱՄ.— *Ի՞նչ բան ունիս այս խավարշտին բանտին մեջ, որդյա՛կ իմ։*

ՎԱՆՔ.— (դիակ ցուցնելով) *Տես՛ե։*

ԱՄԲՈՆՔԸ.— *Շուշան մեռա՜ծ...*

ՎԱՐԴ.— *Անոր վրա կարտասվեի...*

ՀՈՎԻԿ.— *Սա կողմը ոտնաձայն մը կա... մեկը կուգա։*

ՆՈՒՅՆՔ և ՍՈՒՐՄԱԿ (մտնելով)

ՍՈՒՐՄԱԿ.— *Մա՜հ և անե՜ծք... ո՞վ կա հոդ... ո՞վ կը հանդգնի իմ քարայրս ոտք կոխել...*

ՄԱՐԻԱՄ.— (մեկուսի) *Ինքն է։*

ՎԱՐԴ.— (ճառագ գալով) *Քու վրեժխնդիրներդ. այս դիակը արյուն կը խնգրե քեզնե, վատարա՛նց։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Շուշան մեռա՜ծ...* (դիակը տեսնելով) *վա՜յ քեզ. Թշվառակա՜ն* (դաշույն ի ձեռին Վարդին վրա ճարձակելու կըլլա, Մարիամ գետնեն դաշույնը կառնե և Սուրմակ կը զարնե)։

ՄԱՐԻԱՄ.— *Կեցի՛ր, անօրե՜ն...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Կոթսվեցա՜...* (ձեռքը կուրծքին կը տանի) *վերջապես վրեժդ առիր* (թավալգլոր կիյնա)։

ՎԱՐԴ.— *Մա՜յր իմ...*

ՊԱՐԵՏ.— *Ի՞նչ ըրիր...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Հանցավոր չէ ինքը... անիծյա՜լ եմ ես* (կը մեռնի)։

ՎԱՐԴ.— *Ո՜հ, ահա երկնից հրեշտակները ժպտալով հոս կը թռչին և պիտի տանին Շուշանս... ա՛ռ տարեք, ա՛ռ ալ...*

ՎԵՐՋ

(Վարագույրը կիջնե)։



ՆԱՄԱԿՆԵՐ

Շնորհափայլ հայր[1]

Սիրա իմ Քրիստոս ընդ առաջին տեսութիւն Ձեր և ճաշակէր զսիրաբուղխ բարեկամութեան զնախախաչրիս, միանգամայն զարմանայի ընդ ուսումնական և կրօնական բարեմասնութիւնս վերընձիւղեալս ի Ձեզ։

Յօրէ անտի յօդեցաւ սիրտ իմ յաւէժ ընդ Ձեզ ի հանդոյցս սիրոյ. այլ բաղդն ոխերիմ՝ վաղ վաղ արտասահման հալածեաց զիս յափունս հեռաւորս[2] *և ես ինձ երազել ևեթ ի կոհակս՝ փոփոզուն արտասուաց, և ոչ ևս ես ինձ թոյլ զդէմս Ձեր սիրական նշմարիլ միւս անգամ, այլ ի հովիկս տերևաշարժս միայն զհագագ Ձեր լսել։*

Արդ վերընծայեմ վէմ ի վէմ զբոյրս սրտիս առ ի խնդրել յերկնից մնալ Ձեզ հաստատուն ի Սուրբ աստիճանիդ Քրիստոսաւանդ վարդապետութեան, առ որ անձնայորդոր ըղձալիք հասանել։

Այլ աղեխարշ սիրտ իմ տոչորեցաւ, զի ոչ լուայ յառաջագոյն զկատարումն ձեռնադրութեան՝ յաւուրն գերերջանիկ, յորում լցան իղձք Ձեր և բազմաց իսկ, որ հիացմամբ զարմանային ընդ կրօնավայել բարոյս Ձեր։

Ո՜վ դժբաղդութեան... չեղէ արժանի յաստուածապայծառ սեղանի տեսանել՝ զՁեզ՝ վառ ի սէր Քրիստոսի մերոյ խաչելոյ,

---

[1]) Սուրբ նամակներն որ ուղղված են Տեր Ն. Ս. Արքեպիսկոպոս Նարպեյի, Մատթեոս Ս. Արքեպիսկոպոս Իզմիրլյանի, Հով՛. Եփ. Ջանֆեդայանի, Տիգրան Եփ. Ադամյանի, մեծ մասամբ յաշակերտութեան ի Ճեմարան վարժարանի ընդօրինակած և պահած էի խնամոր, զորս կորնչելու երկյուղեալ ոմի ի հրատարակութիւն «Արևելք» լրագրի 1889 մայիս 13 ամսոր և 1892 տարվո թերթից մէջ Բ. Ն. Ե.

[2]) Այսինքն հիւանդասատար և հեռիկ-փաշա, զի Դուբյան Պոլսեն դուրս ելած չէ։

(Այս և հաջորդ ծանոթութիւնները երկրորդ հրատարակութենից են)։

և լսել զուարթ Ձեր վասն նուիրելոյ Ազգիս դիսաչ Ձեր և զարիւն անպարտ։

Եւ արդ ի լուր դասատիրութեան աստիճանիդ Սրբութեան Ձերոյ, եկի ի խնդակցութիւն և ի սիրելի տեսութիւն միաւանդամ, առ որ տենչայի անդատին ի նախասկիզբն տեսութենն անտի մերմէ. այլ իբրև լուայ յեղակարծ զբացակայութիւն Ձեր, անդէն եղի ի մտի այսու դրով մաղթել յերկնից վասն Ձեր աւուրս բազումս ի պաշտամունս աստուածային, պահել զՁեզ սուրբս, անյողդողդս և քաջութիւնս վհհաշուք վառել զՁեզ յեկեղեցւոյ կամար լուսերանգ՝ զերթ Արուսեակ՝ ընդ հոյլս աստեղաց, փողփողել, ոչ ի խաւարին, այլ հուպ ի լուսափայլ նշոյլս արփւոյն. և հակիրճ ասել՝ պահպանել յաւէժ զՍրբութիւն Ձեր յայս տարաղաս բարեկամութեան, որով մխիթարիմ յաշխարհի հարուածս։

Հրճուեցայց յաւէժ, յորժամ տեսից զՁեզ, մինչև իմ հասեալ յաղեբեկ յաւիս, յԱթոռ Հայրապետական և զՀովուապետի գաւազան ի ձեռին[1])։

Մնամ միշտ անկեղծ և խոնարհ

Բարեկամ Ձեր
Գ. ԴՈՒՐՅԱՆ

1869 Մեպտ. 17
Օրթագիւղ

Բարեկամ,

Հոս ձյունը բավական եկավ, ծածկեց հյուղերն՝ որուն ներքնակողմն մտող թշվառն ըսավ. «Ահա մեզ ծածկելու համար Աստուծո ղրկած վերմակը», և դողաց։ Պատանքի մը պես ցուրտ էր այն։ Տաքցիր այն վառարանին քով և մի նախատեր զայն, թեև նժդեհ ալ ըլլա[2])։ Եթե չքավորության մեջ այդ նժդեհությունն ալ չըլլա, ո՞ւր կը մնա մեր ճակատագիրը, այն ճակատագիրը՝ որ զմեզ միացուց մանկության մեջ՝ այն ընկերական վառարանին շուրջը, որ դպրոց կըսվի։ Միշտ ճանձրալի է այժմյան աշխարհը՝ անոր համար որ ուղեղին մեջ ջահ մը չունի։ Աշխարհի քաղցրու-

---

1) Սույն նամակն տպագրել կարենալու համար՝ ինչ ինչ փոփոխությունները ըրած եմ առ հարկի։

2) Կակնարկե իր աղքատությունն, դի շատ անգամ կըսակ խակ չէր ունենար և ատն վարձակալին կըտկեն կը տաքնար։

և լսել զուարթ Ձեր վասն նուիրելոյ Ազգիս ղեկաչ Ձեր և զարիւն անպարտ։

Եւ արդ ի լուր դասատիրութեան աստիճանիդ Սրբութեան Ձերոյ, եկի ի խնդակցութիւն և ի սիրելի տեսութիւն միաւանդամ, առ որ տենչալի անդադարն ի նախասկիզբն տեսութենն անտի մերմէ. այլ իբրև լուայ յեղակարծ զբացակայութիւն Ձեր, անդէն եղի ի մտի այսու դրով մաղթել յերկնից վասն Ձեր աւուրս բազումս ի պաշտամունս աստուածային, պահել զՁեզ սուրբս, անյողդողդս և քաջութիւնս վեհաշուք վառել զՁեզ յեկեղեցւոյ կամար լուսերանգ՝ զերթ Արուսեակ՝ ընդ հոլլս աստեղաց, փողփողել, ոչ ի խաւարին, այլ հուպ ի լուսափայլ նշոյլս արփոյն. և հակիրճ ասել՝ պահպանել յաւէժ զՍրբութիւն Ձեր յայս տարաղաս բարեկամութեան, որով մխիթարիմ յաշխարհի հարուածս։

Հրճուեցայց յաւէժ, յորժամ տեսից զՁեզ, մինչև իմ հասեալ յաղերսեկ յալիս, յԱթոռ Հայրապետական և զՀովուապետի գաւազան ի ձեռին[1])։

Մնամ միշտ անկեղծ և խոնարհ

1869 Սեպտ. 17
Օրթագիւղ

Բարեկամ Ձեր
Գ. ԴՈՒՐՅԱՆ

Բարեկամ,

Հոս ձյունը բավական եկավ, ծածկեց հյուղերն՝ որուն ներքնակողմն մսող թշվառն ըսավ. «Ահա մեզ ծածկելու համար Աստուծո ղրկած վերմակը», և դողաց։ Պատանքի մը պես ցուրտ էր այն։ Տաքցիր այն վառարանին քով և մի նախատեր զայն, թեև նժդեհ ալ ըլլա[2])։ Եթե չքավորության մեջ այդ նժդեհությունն ալ չըլլա, ո՞ւր կը մնա մեր ճակատագիրը, այն ճակատագիրը՝ որ զմեզ միացուց մանկության մեջ՝ այն ընկերական վառարանին շուրջը, որ դպրոց կըսվի։ Միշտ ձանձրալի է այժմյան աշխարհը՝ անոր համար որ ուղեղին մեջ ջահ մը չունի։ Աշխարհի քաղցրու-

---

1) *Սուրն նամակին ապագրել կարենալու համար՝ ինչ ինչ փոփոխութիւններ ըրած եմ առ հարկի։*

2) *Կակնարկե իր աղքատութիւնն, զի շատ անգամ կրակ իսկ չէր ունենար և առն վարձակալին կրակեն կը տաքնար։*

Գերապատիվ տեր,

Այն հանճարի և եղբայրասիրության արտափայլումներն, ճակտի և սրտի ճառագայթներու այն շքեղ միացումը, որով կը սավառնիք, կը դրդեն զիս Ձեր Սրբազնության դիմել, Ձեզ յորոմ տնանկին՝ հաց և դիակին՝ կայծ տալու պատրաստ հոգի մը կը վառի, Աստուծո տաճարի բուրվառ մը, անդնդոց մեջ կանդուն լապտեր մ'է այն։

Գերապատիվ Տեր, Դուք Քրիստոսի ճառագայթը և միանդամայն հանճարի թևն ունիք, կույր մը չէ Ձեզ դիմողն որ աչերն բանաք. այլ մեկն, որ ճակտին վրա սև ամպ մը ունի. հյուղի մը հառաչն է այն, հոն ուր վառարանն ամայի է և սիրտը կը մխա, Հո՛ն, ուր կյանքը կը լռե և քնարը կը հեծկլտա։

Շատ անգամ հանճարի փոթորկին մեջ խարխուլ հյուղի մը տախտակը կը տարուբերի լոկ. երբ այն փոթորիկը կը դադրի, աղետալի վերջալուսի մը մեջ վայրի ծառե չոր տերև մը կխլնա. այն տախտակին՝ անհուշության փայտակույտը հարդարող ցուրտ մի մ'է, և այն տերևը՝ գույն համամատեղությենեն ինկող աստղի մը շուքը։

Ի՞նչ, ի՞նչ հանճարներ հյուղին այն քառասին սեմին վրա խամրեցան կամ մարեցան։ Հասարակաց գերեզմաններուն մեջ հոգակույտեր կան, որոնք հրաբուխներ պիտի ըլլային, բայց կայծը սրտի թանձր խավարի մեջ առանց երբեք հրահրելու թաղված է... հանճարը վհին մեջ դանկ մ'եղավ, առանց՝ մարդկության եթերին մեջ դիսավոր մը ըլլալու։

Ես այն սեմին վրա ժամանակ մը ի վեր կը դողամ կամ կը պլպլամ՝ առանց հանճար մը ըլլալու. այլ մարդկային հրաբուխին բոլորտիքը դեզերող արյունած աչք մը, որ անոր կայծերը կընդհշմարե՝ իր հոշոտած զոհին արյան կայլակները դիտող վագրի մը պես, ես կուզեմ այն հրաբուխեն, այն սիրտ հնոցեն, այն մարդկության արշալույսեն՝ գողգոթայեն ձգտիլ մինչև այն քառան, այն գոս արմատը, այն մարդկության վերջալուսի տըժգույն հորիզոնը, հյուղը։

Ա՛լ բավ հոգե կանթեղի մը հետ հսկեցի առանձին, ա՛լ բավ սրտիս կայծերովն աստղերուն հետ ընդհարեցա անձայն, ա՛լ բավ քրտանաց՝ ճակտիս վրա սառիլը զգացի. կը նետեմ ոտքս

ահա դուրս այն նահեմ սեմեն և նախ Ձեզ՝ սիրտ պաշտոնեիդ կը դիմեմ։

Ձեր Սրբազանությունը նշանավոր առիթով մը համակրական տեսակցության մը պատիվն ինձ տալե զատ՝ երջանկություն մ'ալ ներշնչած է, որ կը նմանի խղդուկ սրտի մը արձագանգ մը տալու, ասի խոստում[1]) մ'է, որուն քաղցր պահանջումը պատեհ առթի մը վերապահած էի. ահա առիթն ինձ կը ներկայի։

Ներեցե՛ք, Գերապատիվ Տեր, այն հրաբուխի սրտին, որ Ձեր վսեմ քնարին շուրջը կը դեգերի, և կը պատրաստվի Ձեր սրտին մեջ շաղ մը և շիթ մը թափել։

Ընդունեցե՛ք, կաղաչեմ, Գերապատիվ Հայր, իմ կանխահայտ և ամենախորին մեծարանացս հավաստին։

Պ. ԴՈՒՐՅԱՆ

1871 Հունվար 22
Յուսկյուսար

Սգավո՛ր,

Մի՛ թողուր այդ անհուն հառաչն. սրտի այս փոթորիկը թող դուրս ժայթքի։

Ա՜հ, կը սիրեի զինքն, կը սիրեինք. իր հիշատակին վառարանն եմ, իր կսկիծին օվկիանն եմ, իր սուգին վիհն եմ, իր գերեզմանն եմ, իր գերեզմանին վրա ծաղի՜կ սիտեմ մի!!! ո՛չ, ծաղիկն պաղ և անզգա է. հոգիես քամված արցունքը, տա՛ք, զայն կը թափեմ... ափերով կը թափե՜մ... աչերը կսկծի մեջ արցունքի օվկիաններ են, անոնք՝ որ հաճույքի մեջ աստղեր են։

Ձինքը պաղ հողով պատեցին. մենք իր հիշատակն տա՛ք հառաչներու մեջ պլլենք, պահենք, վառ պահենք, մի՛շտ պահենք։

Կանիծես աշխարհս, բարեկամ. արդեն ինքը անիծյալ է։ Աշխարհ կամ Աստուծո ձանձրույթի մեկ հառաչն ըլլալու է (Քառասը բնական առեն) կամ դժոխոց մեկ անհամ կատակը... ինչ և իցե, ի՛նչ որ կուզե թող ըլլա, բավական է որ կսկիծի մը դուռ է։

Իմ վիճակս կը հարցնես, բավական բարվոքած եմ. նամակը գրած օրերուս դեշ վիճակի մեջ էի. շատ ցավեցա որ զՁեզ խոռ-

---

1) Գեր. Նար-Պեյ Սրբազան իր հեղինակություններեն հրատարակելու խոստում տված էր Գ. Դուրյան զայդ կակնարկե։

վեցի. առայժմ Տոք. Քյաթիպյան դեռ կը խնամե, սակայն դե՜ռ...՜ ա՜հ, Թողե՛ք որ հոգեբուղխ հառաչով մը զԱստված դղրդեմ. անհունության մեջ եմ ընկեր, հարկ է որ լռեմ։

Բարեկամությանդ վրա դիր հույսդ, կըսես. ավելի պիս կսկծի մեջ կը մղես. ո՞ւր են իմ բարեկամներս... ինչո՞ւ հեռու ես...

Պետք է որ շուրթն առ շուրթն տեսնվինք... պիտի տեսնես որ հրդեհ եմ... ո՜հ, շատ բաներ ունիմ...

Ի տեսություն։

Գ. ԴՈՒՐՅԱՆ

1871 Հուլիս 5
Ցուսկյուտար

Սրտակից բարեկամ,

Ժամանակ մը ի վեր է որ քեզ նամակ մը գրեցի, որ անպատասխանի մնաց. չցավեցա յայդ*), հասկցա որ կամ պատասխանելու միջոց չես ունեցած կամ կարևորություն չես տված, թեպետ կրնայի ես այն առեն նամակ մը երկրորդել. սակայն ի՞նչ գրեի. ի՞նչ կրնա գրել ա՛յն, որուն սիրտը դատարկ է. պիտի մակաբերես արդ յուրովի թե քանի որ այժմ կը գրեմ, անշուշտ սիրտս լեցուն ըլլալու է... այո՛, ավելի է այն՝ սպալի հիշատակի մը արտասրուվ։

Ես գրեթե խաղաղ կը նիրհեի երբ Մայիս 21-ի սև գիշերը կը քրտներ, երբ հոգի մը սրտերու ու գերեզմանի միջտեղ կը կողկողեր։

Փաեցան նորա ոսկերքն հիմա, հարթ և անհայտ եղավ նորա հողակույտը։ Չէի հավատար թե պիտի մեռնի, մինչև այն ժամանակ, երբ իր վերջին նվաղյալ նայվածքներեն մին արձակած առեն, դեռ ինձ չհասած, երկուքիս միջտեղ ինկավ, մարեցա՛վ, մինչև ա՛յն առեն, երբ խղդուկ ձայնը՝ տխուր մեռաս բառովի մը մեջ կը մարեր... Ա՜հ, հիշատակներ կան, որոնք իրենց շարունակության մեջ միևնույն շանթերն են...։ Սրտիս ծալուցը մեջ միայն մեկ կորովի խորշ մը կրցի պահել՝ իր տխուր դամբանականը արտասանելու համար։

*) «Դրա վրա».

Ինչպես որ տեղ մը ըսած եմ, մարդկության վառարաններեն մեկուն՝ վարժարանի մը մեջ սև ճակատագիրը երկաթյա պսակով մը մեր գլուխներն իրարու մոտեցուց, սեղմեց, ի մի խմորեց զաղափարներն, և մեզ՝ մանուկ հանճարներս՝ դալկահար շանթերու փունջ մ'ըրավ. ահա այդ սև ճակատագրիս պլլված շանթերեն մին մարեցավ բոլորովին՝ տխուր վերջալույս մը պատկերելով իր սիրելյաց սրտին խոր։

Տխո՜ւր խոստովանություն...

Ես Վարդանի շարունակությունն ե՞մ։

Աղնիվ բարեկամ, ձմեռը քեզ կը գրեի թե կը մսիմ, արդ կը դողդոջեմ, բերնես արյուն կը հոսի, կը հյուծիմ, ճակտիս վրա կենաց շիկնոտ ժպիտը կը ժժգունի, անդուլ կերպով քնարս կը թոթվեմ անհուն «մնաս բարով»-ի մը համար անոնց, որոնք իրենց սրտին ծալքերը չբացին ինձ, այլ միայն դուրսեն ճաճանչեցին. նախ կնոջ... երեսակայության տիրուհվույն... երազի այն երփնեբանդ աստղին կամ ճաճանչոտ ծաղկին... ո՛չ... ավելի՜ն, շողերու և բույրերու թագուհվույն...։

Ա՜հ, ներա մեկ շողը երազ մը վառե, ներա մեկ բույրը սրտի մը մթին խորանը կը խնկարկե... մեռնի՜լ թարմ ու երազոտ, մեռնի՜լ առանց մարմարյա ճակատի վրա խորշոմ մը ձգելու, առանց շուրթեր համբույրով մը բորբոքելու, առանց հոգին ժպիտով մը հրդեհելու, մեռնի՜լ.՜.՜.՜ տխուր է այդ. սակա՜ն...

Շատ կը ցավիմ. անցյալներն պիտի կարենայիր հոս գալ. բայց դարձյալ սև ճակատագիրն արյունոտ ձեռքը կարկառեց մեզ և խառնակեց ամեն բան. չեմ գիտեր թե նորեն գալուդ համար և խառնակեց ամեն բան. չեմ գիտեր թե նորեն գալուդ համար մի՞թե մեզ պատրաստվա՞ծ է, եղբայրդ քանի մը օրե տեսած և հարցուցած չեմ։

Ա՜հ, կուզեմ հետդ տեսակցիլ. դարձյալ ես նույնն եմ, միայն թե քիչ մը գերեզմանի հակած և խոկմանցս գագաթնակետն հասած եմ։

Կը հուսամ որ ա՛լ քենե նամակ մը կընդունիմ կամ քիչ օրենկ հոս կը տեսնվինք։

Բարեկամդ
Գ. ԴՈՒՐՑԱՆ

1871 հուլիս 6
Յուսկյուտար

Եղբայր իմ,

Ներեցեք։

Իրավամբ զնե հռչակել կուզեի, այլ զգացումներս մութ և դրիչս տակաւ գտի նյութին վսեմության առջև... ա՜հ, միթե կարելի՞ է Օվսաննա մը հնծկլտալ։

Այս օրերս դարձյալ մշտնջենավոր վերքս շունչ առավ կուրծքիս տակ, երկնքի այդ սև աստղը. ձգե սա «նոճյաց տղուն» (այսինքն իմ), օձիքն, սա «դաշնակաց բուն» որ վսեմության առջև երբեմն կապշի, որուն սրտին անդունդը կալեծփի, շուրթերը քար կը կտրին, որ միշտ իր վերքին կը նայի, ինչպես փառասերն իր աստղին. ձգե՛ սա «մաերմաց դալկահարը»։

Հանցավոր եմ... այլ ո՛չ. վերքիս մոտեցիր, եղբա՛յր իմ, սա ահարկու անդունդին... սակայն սև ժայռը և երկնքի աստղերը հոն կրնան նայիլ լոկ։

Կը հուսամ որ մինչև այս տողերուն հասնելուդ ներեցիր, և իմ չկրցած հասկցուցածս դու հասկցար անշուշտ, վասնզի սրտի մը խավերը կրնա թափանցել՝ բանաստեղծի մը խոկմաց ոլորը։ Դեռ շատ կուզեի գրել. բայց թե ես անհուն եմ և թե եղբայրս նամակը ուշ ձեռքս հասցուց. բայց նա ալ այսպես ընդ ստիպված էր պարագայից բերմամբ։

Նամակիդ կսպասեմ։

Ի տեսության։

Եղբայրդ
Պ. ԴԻՒՐԱՆ

1871 Օգոստոս 13
Ցուսկյուտար

Թեև իմդ իմ,

Ահա՛ անհուն «մնաք բարով»-ի առաջին թելը կը զարնեմ։ Ջքեզ տեսնել ուզեցի, ուզել՝ ինձ համար ծարավիլ է, դողդոջ քայլերս կարգի դրի ձեր տունը գալու, զքեզ հարցուցի և հարցունելուս հետ՝ անմիջապես կոշիկներուդ տեղը նետեցի ակնարկս. մայրդ և դաստարկուհյունը տխուր պատասխան մը տվին ինձ.— Հոս չէ։— Եղբայրս, ըսի յուրովի, հոս չէ՞...։

Գիտեմ. կենաց դառն ներդաշնակությունը չներեց գալ տեսնել

անգամ մը եղբայրդ, դալկահար և դողդոջ հյուրը. սակայն այս ճակատագրին սևությանը ի՞նչ պետք է ըսել որ իմ տկար քայլերս չի վարձատրեց և ստիպեց զիս հողդողդ ոտնփոխներս ներդաշնակելով մեկնիլ տխուր ու ցաված։—Ո՞ւր.—Փնտռել խորշ մը, ուր արտասվաց բոցանուտ շիթերը կը քողարկվին մարդոց աչերեն։

Իմ վիճակս հուսահատական է, եղբայր իմ. սակայն ես հանդարտ եմ և հարկավ քիչ մը տխուր, թոշնեցավ ամեն մարդկային տենչ սրտիս մեջ, տենչ, աշխարհի այդ ոսկեզօծումը. ամեն հույսերս մոխիր դարձան, իրրև մեքենա կապրիմ զրկեր, իմացական հրահրումս կորսած, մտածումներս կարճ են և մութ։

Սակայն մի ցավիր, բարեկա՛մ, սապես համոզվե որ քու եղբայրդ գերեզմանի տեղ նոյան տապանը կը մտնե աշխարհի արյունահեղեղեն փրկվելու համար... ո՛չ, այս սև մտածումը չիշեր երբեք ծանր՝ հոգվույս վրա, որչափ արցունք մը աչացս մեջ։

Ո՜հ, որչա՛փ ինձ հաճոյական է քեզ առընթերակցելով դալկահար վերջալուսի մը փողփողումովն քանի մը ժամեր ծծել... սակայն դիտեմ, այս հիվանդությանս մեջ փոքր ինչ նողկալի եմ... ինձ նայողին ճակտին վրա՝ արդահատական ծալքերու պատկերումը կը տեսնեմ ես։

Սակայն դու, սրտահոդ բարեկամ, գիտեմ որ միշտ զիս ժպիտներուս, ցավերուս, առողջությանս և հիվանդությանս մեջ առհասարակ համահավասար, անհողդողդ սիրով կը սիրես, և երբ իմ վրա գուրգուրալով ներքինս կուգես խառնել... ես կոպտությամբ շատ անգամ քեզ կը հանդիմանեմ՝ մահվան սև մտածումը սնուցանող ախտավորի մը նման. հուսամ որ այդ կծու խոսքերը շրթունքես ինկած ատեն՝ նույնժամայն ներողության արժանացած են բոլորն ալ։

Երբեք մի՛ մտաբերեր որ ես հուսահատ եմ. բնա՛վ, բանաստեղծ մը մահվանե չսոսկար. այն ատեն իրավունք ունեի ցավելու, երբ ամենքն անմահ ըլլային, և ես միայն մահկանացու։

Այսպես համոզվե՛։

Ի քաղցր տեսության։

Գ. ՊՈՒՐԱՆ

1871 Սեպտ. 5
Ցուսկյուտար

Եղբայր իմ,

Շնորհակալ եմ որ միշտ կը հիշեք պիս. «Հուշը սիրտ քույրն է». կը ցավիք անշուշտ որ ես փոխադարձաբար չեմ խոսիր։ Ձեզ հիշեցուցած եմ արդեն որ ես վսեմին առջև կը պատանձիմ. պատասխանելու համար բավական կը համարիմ, երբ արտասր մը աչքիս եռանը կայրի, և շունչ մը շուրթերուս մեջ կը բեկբեկի, մանավանդ հիմա որ հոգվույս կենսաբույր ծաղիկը թոշնած է, և նորա տեղ վերք մը կը մխա ներսս. երկու տող բան չեմ կարող գրել. երևակայությանս մեջ ցուրտ մշուշ մը կա թանձրացած. վայր ինկան գլխուս աստղերն. սև ամպերն ծանրացած են։

Հիվանդություն և անբուժություն՝ դերեզմանի այդ երկու սոխինքն կը ծծեմ. հուսահատություն՝ դերեզմանի այդ սև կաթն կը խմեմ... ինձ համար չկա հույս. անդունդի մեջ շյուղի մը պլլված եմ, իմ փրկությունս է աստղի մը պլլվիլ, երե սև ճակատագիրս ճերմակ բիծ մը ունի։

Ազնիվ եղբայր, ո՞վ դրդեց քեզ այսպես գորովիլ իմ վրաս, ունկն դնել անդունդն հսկող անձի մը խոսքերու, և զվարթ թիթեռնիկ մը ըլլալով՝ սիրել նոճիի մը շուքը...։

Ազնիվ եղբայր, թիթեռնիկով մը նոճի մը սգավորութենե չդադրիր. այլ գուցե նորա ցուրտ շուքին ներդործության ներքև դողտր թիթեռն մը թոշնի...։

Ա՜հ, որչա՜փ մթագնած է երևակայությունս. ո՜հ, ո՜ւր եք, կրակք իմ, մարեցաք... մարեցաք, և ալ չպիտի վերադառնա՞ք, անցա՞վ Ձեր վրայեն ալ ա՜յն շունչն, որ աստղերն կարող է մարել... դեռ կուզեմ գրել. բայց կը տեսնեմ թե՝ այնչա՜փ ուժաթափ են այս խոսքերն, որքան դունաթափ է զանոնք ներշնչող հոգին... իմ մեն մի խոսքերս դուք Ձեր վառ երևակայությամբ մեկ մեկ գրքեր ըրեք, և գիս լավ պիտի կարդաք այն ատեն, լավ պիտի սուզիք յիս*)։

Եղբայր իմ, ներեցեք գրությանս աններդաշնակությանը, ի՞նչ ուղղություն կրնաս պահանջել ավրված դաշնակե կամ նվագարանե մը։

Ի՞նչ գրելս չեմ գիտեր։

---

*) «Իմ մեջ».

Կաղաչեմ, բա՛վ համարեցեք ջախջախյալ քնարի մը այսչափ հեծեծանքը։

Քանի որ ժամանակնիդ ներե, կաղաչեմ, ձեր սիրալիր գրութիւնքը մի ղլանաք, որոնք միշտ զիս պիտի հեղափոխեն ի վսեմն։

Դուք երկրագուհիներ ինձ տալ խոստացած էիք. եթե կարելի է, զանոնք շնորհելու փութացեք, վասնզի առանց կարդալու բան մը ունենալու, դռնեն դուրս չելնելու ստիպված ըլլալով, շատ կը նեղվիմ։

Ներա հետ ի՞նչ ունեցաք մինչև հիմա. կաղաչեմ, տեղեկութիւն. տեսնվինք։

1871 սեպտ. 6
Ցուսկիւտար

Եղբայրդ
Պ. ԴՈՒՐՅԱՆ

Եղբայր իմ,

Ձեր սիրալիր տողերուն փոխարեն աստղերու հեղեղ մը կուտամ սրտես...

Օրհնյա՛լ ըլլաք որ կուզեք Ձեր վսեմ կրակովը բռնկել սա նոճյաց՝ դալկահար որդեգիրը, որ միշտ իր սրտին մոխիրները կը դղվե. օրհնյա՛լ ըլլաք որ կուզեք սրտես դուրս հեղեղել բանձրացած սուգը։

Պիտի կարդամ միշտ ձեր տողերը, քաղցր արտասրներու փողփողումով և վեր պիտի առնեմ թաց բարձիս գամված դողդոջ գլուխս, կսկիծներուս մեջ վայրկյան մը հպարտ պիտի ըլլամ, կուրծիս հևքը վայրկյան մը պիտի դադրի՝ եղբոր մը վսեմ ոգին ծծելու, և իր անմահ անունը սրտիս խորերը կուլ տալու։

Ա՛հ, խիստ վսեմ կը շարժիք, եղբայր իմ, և կը ներեք միշտ վեհանձնությամբ մը՝ թաղված հոգվույս ցուրտ լռությանը. սակայն ի՞նչ ընեմ. սառույցե գոտի մը սիրտս շղթայած է... ո՛հ, Թող ձեր բրթուն հոգին խոսի միշտ, թեպետև տժգույն ճակտիս վրա այնպես կերևի որ ամեն բան կըմարի. սակայն կուրծիս տակ հեղաշրջումներ կեռա՞ն։

Խոսեցե՛ք, եղբայր իմ. խոզին առջև չեք թափեր ձեր մարգարիտներն. ձեր խոսքերը սառույցե ճակտիս եռև արևներ են... մի՛շտ խոսեցեք։

Կուզեի ներա պաշտպան հանդիսանալ, կուզեի այդ Թեր-Հսկա Արամը[1]) ճզմել, այլ ներեցեք, եղբայր իմ, գրիչս ձեռքիս մեջ կը դողա, ահա կը տեսնեք, տարտղնած վիճակի մեջ եմ: Ով արդեն այսչափ...[2]) իմ խոսիլ հարկ չէ:

Գաճաճին դրածին արժանիք տալ է. միակ դուք ալ դրեք, բավական է, արդեն ես այնպես կը կարծեմ որ այդ խծբծումը շատերուն քմծիծաղին արժանացած է. այսու ամենայնիվ կուզեմ գրիչ լզող գտնել այդ մասին մի քանի տող դրելու. ասկե զատ եթե բարեբախտաբար դրելու կարողություն ունենայի, ներա առենախոսությունը չկրնալ գտնելուս համար ես պիտի կենայի, վասնզի Արամի այդ թերաքննության մեջ ներա[3])... խոսվածքն... անանկ... նկատմամբ... մը խոսքերուն ակնարկություններ կային, որոնք կրնային Արամին անտեղություններ ընելուն... խծբծել: Շատ կուզեմ, որ այս մասին ներողամիտ լինիք, եղբայր իմ: Ներա համակրանաց նամակը կարդացի. շիտակը, աքանչացա այն վսեմ զգացումներուն արտահայտություններն տեսնելով, որոնք կուսական բերանե մը կելլեն և մեծերու հիշատակարանը կընկնին:

Այսպիսի վսեմ նյութերու առջև լռելը մեծ բան է ինձ համար, վսեմ է ինձ համար լոկ դողդոջել:

Ա՜հ, այսպես միշտ իմ վրա գուրգուրալով, կուզե՞ք որ միշտ շնորհակալ ըլլամ. ի՞նչ ըրի ձեզի, չեմ գիտեր, եղբայր իմ: Ա՜հ, գիտեմ, դալկահար և դողդոջ ըլլալուս համար դիս սիրեցիք... բանաստեղծական մը ըլլալուս համար բանաստեղծե մը գրավեցա՞, գիտե՞մ...

Եթե ճակտիս վրա վարդ ունենայի, կինները զիս պիտի սիրեին. ա՜հ, ավելի լա՛վ է որ դալուկն ունիմ, և բանաստեղծները զիս կը սիրեն:

Շաբաթշաբթի օր Ձեզ սպասեցի. տխուր վերջալույս մ'ունեցայ:

---

1) *Ազապյան սանեբեն Օր. Ա. Վարպետյան ճառ մը խոսած է Ցուսկյուտարու Ս Ծաչ վարժարանի պարգևաբաշխության առթիվ 1871-ին, զոր քննադատած է Ռեամ 1821 անուս. 21 և 1842 թիվ Մասիսին մեջ. Դուրյան պիտակ անվամբ այդ Ռեամը կակնարկե, (Տես «Ընդարձակ կենսագրություն» Պետրոս Դուրյանի. ի Բ. Էքսերգյանե'):*

2) *Այս բառերն անընթեռնելի են:*

3) *Այս մեկ քանի տողերն ալ անընթեռնելի են:*

Տեսնվիմք, եղբայր իմ, գոնե Զեզ հետ քանի մը զվարթ ժամեր ծծեմ։

Կը հուսամ որ քիչ տաղտկալի կըլլամ ձեզ տժգույն շրթանց թափթփուկներով։

Երեկվընե ի վեր վիճակս վատթարացավ. կաղաչեմ, մի՛ տրտմիք։

Ես տրտում ժամերուս աստղերուն կը հառիմ. Աստուծո այդ կրակներն ղիս փոքր ինչ կափոփեն։

Մնաք բարո՞վ։

1871 Սեպտ. 9
Ցուսկյուտար

Եղբայրդ
Գ. ՏՈՒՐՅԱՆ

Եղբայր իմ,

Ինե մեկ քանի թատերախաղերս կուզեք. բայց ես միայն նոցա ծրագիրներն ունիմ, որոնք անընթեռնլի ըլլալե զատ՝ թղթի կտորվանքներու վրա գրված են։ Մաքուր ըլլալով վարդ և Շուշան անուն սիրային թատրերգության խաղատետրն ունիմ քովս։ Ասի տասն և հինգ տարեկան հասակի սիրո և հանճարի հանդուգն փորձում մ'է. եթե կը հաճիք, սա Զեզի կրնամ ուղարկել. իսկ մյուս Ձեր մասնավոր խնդրվածներուն գալով, անոնցմե մեկ երկուքին համար կը խոստանամ որ վարդվյանը տեսնելով՝ քիչ մը միջոցի համար ուղեմ, եթե տալու հաճի, ուրախությամբ Զեզ կը հուղարկեմ. բայց նոքա ուր երթալնին չգիտցող փոթորիկներ են։

Եղբայր իմ, ի՞նչ պիտի ընեք զանոնք, Ձեր գրության ձևը ղիս հետաքրքրության մեջ ձգեց. պետք է որ առանց տեսնն անցղիս հետաքրքրությունս հագեցնեք. ինձ մի քանի զվարճալի նելու հետաքրքրությունս հագեցնեք. ինձ մի քանի զվարճալի վայրկյաններ պիտի հավելուք. ուրեմն պիտի աշխատիմ զանոնք Զեզ հուղարկելու չանալ։

Դուք բան մը ինձ կիմացնեք. ես կը դուշակեի ղայն արդեն. բայց դարձյալ լսած տեսնս սիրուն հրճվանք մը ունեցա. ըսի ինքնին. «Արդյոք պիտի վայելե՞մ այն օրն, ուր նոքա դլուխ

գլխի պիտի տան...» մեծ պիտի ըլլա ինձ համար այն օրն... հարկ է որ հարուցած խոշոր անհվներուդ յուղ քսվի։

(Արդյոք պիտի ապրի՞մ մինչև այն ժամանակ)։

Այն շնորհալի հանդեսին մեջ ես ալ շշուկ մը պիտի ունենամ, չեմ ուզեր զայս՝ երազներու կարգն անցել. մոտեցո՛ւր այդ օրն, եղբա՛յր իմ, կուզեմ Ձեր ըմպած երջանկության բաժակին կաթիլ մը գողնալ, որ կարող է սրտիս անհուն բաժակը լնուլ։ Ձեր ազամանդյա պսակին հետ իմ սիրտն ալ պիտի ճաճանչէ։ Ո՛ղ գա այդ փառազոծ օրն, եղբա՛յր իմ։

Դարձյալ սիրտս ցամքած է, չկարեմ զգացումներս ուզածիս պես դուրս տալ... ո՜հ, ցամա՛ք սիրտ, ե՞րբ պիտի թարմանաս, ե՞րբ առաջվան պես խնդումներ պիտի անձրևես։

Չտեսությունիս երկարեցավ, եղբայր իմ, Յուսկյուտարը մի մոռնար։

Նամակներուդ տողերը քիչ մը սավարացուր, միշտ գրե՛, եղբա՛յր իմ, եթե ես զվարթ և առողջ ըլլայի, միշտ պիտի գրեի։

Սիրտ անհունություն մը կը մաղթեմ...[1])։

1871 Սեպտ. 30
Յուսկյուտար

Եղբայրդ
Պ. ԴՈՒՐՅԱՆ

Քարեկամ,

Չեմ գիտեր թե ի՛նչ գրեմ... ո՜հ, դժվար է խոսիլ անհունի մը համար, անհունը շուրթեր չի կրնար ունենալ, անհունը ինքն իր մեջ կը թաղվի, ինքն իր մեջ կը փողփողի։

Ես ա՛լ առաջինը չեմ. (Ո՛ղ այս խոսքը քեզ չտխրեցնե). իմ հոգիս հառած է դալկահար և անհուն աշխարհի մը, զոր երկինք կը կոչեն... ո՜հ, բարեկամ, կուզեմ զգալ թե երկինք մը կա, վասնզի դժվար է ինձ հավատալ թե աշխարհ մը կա ինձ համար... և ի՛նչ աշխարհ...։

Ես ըսած եմ անգամ մը թե աշխարհ Աստուծո, այն Գերմարդկային Տիտանին ձանձրույթին մեկ հառաչն է. հառաչ մը, որ աշխարհաստեղծութենեն հառաջ քաոսային խառնակության մը

---

1) Սույն նամակն, ինչպես մի քանիները ալ, ուղղված է առ Ա. Լ. որուն ամուսնությունն կակնարկեն քանի մը տողերն։

վրա հառաջ եկավ... ազնտաբեր փոթորիկ Աստուծո մը սրտին, անհուն անապատի մը։

Դու կրսես վերջին նամակիդ մեջ. «Իբր թե չաստիս*) միայնակ, ո՛ւր ես, կը գոչես ինձ։ Այդ հարցումդ վիս տխրեցուց. միթե սրտիդ ծալուցը մե՞ջ անգամ չգտար վիս»։

Ա՜հ, միթե հիշատակ մը կը բավե՞, ամենասիրելիս մը կրակոտ հիշատակը միթե կը բավե՞ անոր համար, որ «մնաս բարով» ի տխուր թել մ'է դարձած, որ «դալկութեանց բուրաստանին» կորչեցուր. հանցա՞նք է միթե բարեկամ մը կարոտիլ, անոր հոգվույն ծարավին ըլլալ, անոր խոսիցն ու ժպիտներուն անոթին ըլլալ։ Ո՛չ, չբավեր ինձ հիշատակդ, դու ինքնին իսկ չբավես ինձ։

Ինչպես որ ես վարդանի՝ դու ալ իմ ցուրտ և անթարթ աչերս պիտի փակես... մի ցխրիր, բարեկամ... ես տխուր-զվարթ մ'եմ. ո՛չ, դողդոջ երջանիկ մ'եմ. մահվան դալուկը իմ ճակտիս վրա կը պլպլա իբրև մելամաղձոտ ժպիտ մը, որ վիս երկնքի հետ կը միավորե։

Երբ լսեցի թե գարնան հոս պիտի գաս, սիրտս անհուն ուրախութեամբ մը ղեղվեցավ... ինչո՞վ արդյոք ինձի ըրկած նամակովդ այդ լուրը չտվիր։

Գիտեմ որ սիրելի է քեզ կարդալ և հեղեղել ամենասիրելիս մը հիշատակը. ուստի վարդանի տաղերգութիւնը քեզ ղրկեցի։

Սա խոսքդ թե «Մեր անիծից ահավորութիւնը օր մը պիտի սարսռե հարկավ այն Գերագույն Անգութը, զոր Աստված կը կոչենք», քեզ ահավոր բանաստեղծ մը նկարեց իմ առջև։

Մնաս բարյա՜վ։

Ի տեսութի՜ւն։

Քուկդ

1871 Հոկտ. 11 Պ. ԴՈՒՐՅԱՆ

Յուսկյուտար

Սիրելի եղբայր իմ,

Այս վերջին սիրելի նամակիդ փոխարեն, յորում**) ճշմարիտ բարեկամական գորով մը կը հեծկլտար, ուզեցի սրտիս անո-

*) «Այս աշխարհում».

**) «Որի մեջ».

դունդներեն ասաղերու բույլեր դուրս հեղեղել, այլ, ավա՛ղ, այն անդունդներն բոլորովին ցամքած գտի։

Շնորհակալ եմ որ զիս կը մխիթարես, սակայն ես արդեն քսած եմ թե բնավ մահվանե վախ չունիմ, վասնզի տքնեցա ինքզինքս զզվեցնել աշխարհեն։ Եթե ցավ մը ունիմ, այն է թե զքեզ վերջին անգամ չպիտի կարենամ տեսնել, վասնզի յանկողնի*) եմ, ալ դուրս ելնելու կարողություն չի մնաց վրաս, սանդուխեն վար իջնելու համար պետք է որ հենարանին կրթնիմ, ալ բոլորովին հայտնի եղավ (թեպետ առաջին օրեն գիտեի և միշտ, մինչև անգամ բան մը չունեցած ատենս անդրդվելի պահեցի այն գաղափարս) թե ես երկնքի ճիվանդություն ունիմ։ Ափսո՛ս, շա՛տ հեռու կերևի ինձ փթթինազարդ գարունը, ձմրան ձյուներն իմ սիրած վայրերուս հետ՝ (ուր միատեղ շատ անգամ իրարու սիրտ կը ծծեինք), դիս ալ պատենավորել կսպառնան։

Եթե քու գալուստդ գարնան մնաց, շատ կը սոսկամ որ ոչ մահերմական ժպիտդ, ոչ ալ հետևաբար գարնան փթթումը պիտի տեսնեմ։

Ա՛լ բոլորովին մարմնույս հետ միտքս ալ տկարացավ, մարեցա՛ն խանդերս... ո՛չ, չեմ կրնար գրել, ցամաք են բոլոր գրածներս... կուզեի շատ բաներ գրել իմ այս նվաղյալ ժամերուս... ափսո՛ս, կուզեի իբրև հավերժական հիշատակ երկտող տաղ մը գրել քեզ, սակայն իմ մեկ լավ և փայլուն ժամուս կուզեմ գրել, չեմ ուզեր որ ցամաք լինի... իսկ եթե դժբախտաբար չկարենամ գրել, գրված համարե զայն իմ գերեզմանի հողերուն վրա։

Կաղաչեմ, եթե ժամանակ ունենաս, նամակներդ ստեպ և երկար ըրե. որչա՛փ սիրելի են ինձ անոնք։ Մնաս բարյա՛վ։ (Ջրլա՛ հավերժական...)։

Ի տեսություն։

(Գրած, ով Աստված)
Պ. ԴՈՒՐՅԱՆ

1871 Նոյեմ. 23
Յուսկյուտար

*) «Անկողնում».

Եղբայր իմ,

Ներեցեք ուշիկ պատասխանելուս, թեև դարձյալ մատներս գրչիս վրա կը դողդոջեն, սիրտս՝ զգացվելու տեղ կը մարի, և ես՝ նայելու տեղ կը փղձկիմ. բայց կուզեմ օրհասականի մը դյուցազնական ճիգ մ'ընել և երկու տող ալ գրել։

Եղբայր իմ, Ձեր վերջին նամակը զիս մխիթարել կուզե, և կըսեք. «Մեկզի ձգե սա ճիվաղդ եմ-ի գաղափարն մտքեդ և բոլորովին կը բուժիս»։

Ա՜խ, կուրծիս տակ հրաբուխ բռնկած է, կրակներ կեռան և կայրեն զիս. այս կրակը երկնքի կրակին նման է, որ չի մարիր և չպիտի մարի մինչև որ չապառե ամեն ինչ։

Այո, ա՛լ հիմա հավատացի թե կը ծյուրիմ եղեր. գիտեմ թե ալ շատ չպիտի ապրիմ։ Ա՜հ, եղբայր իմ, ահա երիտասարդ մը, որ եկած է աշխարհ՝ միայն իր մահն և թշվառությունը տեսնելու և զգալու համար։

Չգիտեմ ի՛նչ գրեմ, կզգամ շատ, բայց գրելու դժվարություն մը կա, կարծես թե գերեզմանին մեջեն կը խոսիմ, ալ մարը մտնելու վրա եղող ճառագայթ մ'եմ, քայքայում մ'եմ։ Գիտեմ, այս տողերս վերջինն են, և վերջին պիտի լինին... սակայն սա ցրված ուղեղս ի՞նչպես վրա բերեմ ու խոսիմ... բանաստեղծ չեմ, բայց բանաստեղծությունն կը սիրեմ... ես որ աշխարհի վրա միայն երգերը շատ սիրեցի, կուզեմ որ իմ վերջին շունչս ալ երգ մ'ըլլա։

Կարապն իր վերջին շունչին հետ իրեն է'ն ներդաշնակավոր ճիչը կարտասանե, կըսեն. թող ես ալ կարապին պես անցած ըլլամ աշխարհես։ Ձեր գրեր, վերջին ատենները, ինձ մեծ սփոփանք և ախորժ ակնարկներ։ Հազիվ տերևաց և ստվերաց տակ, հազիվ Յուակյուտարու գեղեցիկ և հովասուն դաշտաց և մարգաց մեջ՝ մեկ քանի զվարթ պտույտներ ըրինք, և ահա կրկին անկա, ա՛լ անշուշտ չի կանգնելու հուսահատությամբ. բայց դուք գրեցեք, եղբայր իմ, ձեր խոսքեր սպունգներ են, վիշտերս կը ծծեն։ Այո՛, գիտեմ, դուք բնավ տխրություն չեք սիրեր, և շատ անգամ տխրության գաղափարը ծնող կամ զարթուցանող առարկաներ չտեսնելու համար առանձին տեղեր կերթաք. բայց իմ տխրությունս կը սիրեք, դի բանաստեղծական է։ Ա՜հ, քանի՜ քաղցր է՝ կան ինձ սա խոսքեր. «Ավելի կը սիրեմ ձեր ճակատի մելամաղ-

ձիկ դալուկը քան թե դեղեցկի մը այտին վարդն կամ ճակտին ադամանդներն»։

Աշխարհի մեջ ապշեցա և ձեղի պես միայն ձայն մը ըլլալ սիրեցի, ձեղի պես երգելը սիրեցի։ Ո՛վ որ երդ չունի կամ երգել չգիտեր՝ զգալու ներդաշնակութեան, գեղեցկին և սիրունին իդեականը շոշափելու քաղցրութիւնը չունի։

Մարդուն նշանաբանը երգն է, էն առաջին ձայնը երգն է, բնութիւնն ամբողջ երգ մ'է։ Այո, եղբայր իմ, խիստ ընտիր խոսեր էիք օր մ'ինձ թե երգը ոչ այլ ինչ է բայց եթե... դաշնակավոր փունջ մը. այո, ես ալ կըսեմ.

«Երիտասարդ ըլլալ և երգել,
Ծեր ըլլալ և աղօթել»։
Այս է կեանքը։

Ա՜հ, գեղեցիկ կեանք մ'ալ կա, սերն է այդ. «Երգել, աղօթել և սիրել», ա՜հ, ինչ բանաստեղծական կեանք, ի՜նչ կատարեալ կեանք։ Դուք կերգեք, կը սիրեք ու կաղօթեք։ Աշխարհի մեջ հոգիներու ամենամեծ ախորժը սիրելն է. դուք զայս քան զամեն մարդիկ աշխարհի՝ ընտիր և վսեմ կերպով գիտեք, դուք կը սիրեք և կը սիրվիք. կը սիրեք անդր քան զգերեզմանն և կը սիրվիք անդր քան զհավիտեան։

Եղբայր իմ, քանիո՜ն սիրելի և տենչալի էր ինձ տեսնել ձեր սիրտ և ընչաւնաւ ի հանդեսն. եթե զայն երկրի վրա վայելելու անհուն քաղցրութիւնը չունենա՜մ...

Աստեղաց և հրեշտակաց՝ զեփյուռի շնչով նորա մեջ հծծելու երազն ու տենչը... ի՜նչ հուսահատորեն կը խոսիմ, ներեցե՛ք, ամեն ինչ պիտի խոստովանիմ ձեզ թե՝ խառնաշփոթ պիտի ունենամ։

Ա՜հ, քեզ հետ ես ալ կաղաչեմ ու կը փափագիմ որ Նախախնամութիւնը պահ մը հրաման տա որ մահն ու կեանքի զինադուլ ընեն... ի՜նչ սրտահույզ բոպեներ. այդ աջակցումը շանթի ու ծաղկի աջակցում մ'է։

Արևն ու տիեզերքն զույգ մը նոր երջանիկ պիտի տեսնեն. ձեր ճակատագիրն երջանկութիւն է։

Մարդիկ միայն ձեր վրա նախանձելու չափ պիտի զմայլին,

դուք անիրիծ եք և զուտ. ո՛վ որ ի ձեզ սև ու պղտոր կը տեսնէ, ինքն է սեւն ու պղտորն[1]։

Այս ցասումներն անշուշտ պիտի մոռցվին, զի գերեզմանեն անդին, բարեկամութենե անդին ամեն ինչ ներողություն է։ Նեբեմք ու ներվիմք, եղբայր. սոքա օրհասականի մը վերջին մըրմունջներն են. ամեն ինչ անկեղծությամբ պիտի ըսեմ, զի ա՛լ աշխարհես և խղճես կախում ու նկատում չունիմ։

Եղբա՛յր, ահա՛ ես կիջնեմ կամ մոտ եմ իջնելու այն սև հատակ անդունդին մեջ՝ որո անունը գերեզման կըսեն։ Արդյոք ի՞նչ պիտի ըսեն ինձ գերեզմանեն անդին. «Ահա՛ թշվառ երիտասարդ մը, որ աշխարհ եկավ և միայն իր մեռնելն զգաց ու մեռավ»։

Մեկ քանի պատառ թղթերու վրա արցունքոտ տողեր գրեր եմ. անշուշտ բարեկամքս զանոնք պիտի պատվեն և անոնց արև տեսցնեն։ Արդյոք Ջարդարյանի և Գավաֆյանի հետ խոսեցա՞ր վերջի հեղինակած դործուքս տպագրության համար։

Ուշս ցրված է, եղբա՛յր իմ, մահվան սպանդ մ'եմ, կերթամ առաջի կարչի, կը հավատամ Աստուծո, կը հավատամ այն հանդերձյալ Ապառնիին. ո՛վ որ կը հավատա, երջանիկ է։

Աշխարհի մեջ միայն անհավատն ապերջանիկ, հուսահատ և թշվառ է։ Թերևս բարեկամք կամ ընթերցողք զիս միստիքական կամ այլաբանական գտնեն տողերուս մեջ, արդեն ես ալ այլաբանություն մ'եմ, խորհուրդ մ'եմ։

Եղբա՛յր իմ, ինչո՞ւ չես գար. երբ մահճիս քով բարեկամներս կը տեսնեմ, կարծես հուսո և կենաց հրեշտակներ կը տեսնեմ։

Գիտեմ, քիչ առենեն պիտի մեռնիմ. արցունքի տեղ՝ դագաղիս վրա երկու խոսք, հառաչանքի տեղ՝ երկու շունչ աղոթք հոգվույս համար, և վշտի տեղ՝ երկու փունջ ծաղիկ գերեզմանիս վրա, ես ալ մեռած պիտի չըլլամ, միշտ դալար ու կենդանի պիտի մնամ։ Մի՛ տրտմիք, կաղաչեմ, սույն հուսահատ ու օրհասական տողերուս։

---

1) Քանի մը տողով ակնարկելէ հետո այն առենվան լրագրական վեհերուն, ուր ինքն ալ դեր մը ունեցած էր, և որք անձնականություններ վիրավորելու չափ հառաջ գացած էին, կը հարե.

Ա՛լ ուժ չի մնաց մատներուս վրա. կարծես թե ալ բոլորովին դալկացում մ'եմ։

Չեռքդ կը սեղմեմ գորովանք. ներա իմ հարգանաց հուսկ ողջույնս կուղղեմ. ծլիք ու ծաղկիք։

Ափսո՛ս. այո՛ ա՛հ, իմ սկիզբս, վա՛խ ինձ, վախճանս եղավ։ երջանիկ եք, և երջանիկ պիտի ըլլաք, և երբ երկինքն ալ երթամ, Աստուծո և հրեշտակաց առջև Ձեր երջանկությունը պիտի խնդրեմ։ Ձայելեցեք։

Մնաք բարյա՛վ։

Ո՛հ, կրկին կողջունեմ Ձեզ։

Բարեկամդ և եղբայրդ

Գ. ԴՈՒՐՅԱՆ

1871 դեկտ. 10
Յուսկյուտար

ԴԱՄՐԱՆԱՍՏ
Ի ՄԱՀ
ԷԱՐՊԱՏ ԼՈՒԹՖՅԱՆԻ

Սգակից հաճգիսակաճ,

Կաղաչեմ, կեցե՛ք, քիչ մ'ալ, գեռ մի՛ զատվիք այն սգալի պատգաղեն՝ որուն ժժգույն ճամբորդն լսեց հանդարտությամբ իր բարեկամաց հառաչանքը։ լսեցե՛ք և դուք ուրեմն իր կենաց վսեմ արձագանքը՝ զոր ինքը բարեկամի մը անկեղծ սիրտը փոխադրեց, լսեցեք իր մեծ հիշատակը հռչակող մաեմի մը տխուր ձայնը, որ կը հանդգնի թնդացնել գերեզմանի մը ահարկու կամարը։

Մեռա՛վ մեր սիրելի բարեկամը՝ վարդան Լութֆյան, մեռա՛վ երկրի վրա, գերեզմանաց անշունչ մարմարիոնեն ավելի, որ «կը քրանի» մեռա՛վ այն ծաղկեն ավելի, որ տարվե տարի «կը վեբաձնի», մեռա՛վ նա, յամքեցավ քաներորդ գարնանը մեջ։ Բայց

հիմա, լա՛նք, մենք մեծ սխալ մը կը գործենք, զոր միշտ կը կրկնեմ. ծնող մարդուն վրա լալու տեղ, մեռնող մարդուն վրա կուլամք, մինչդեռ նա վշտաբեկ անդունդի մը մեջ կը ծնի և երանության կատարը կը մեռնի։

Չըսենք թե տիեզերք Աստուծո մը ծաղրն է. երբե՛ք. տիեզերք հոգիներու բով մ'է։ **Վարդան Լուբֆյան** *անոնցմե էր, որոնք իրենց կենացը մեջ միշտ երկնից բուրումը կզգան, այն երջանիկներեն էր, որոնք մաքուր և կարճ կյանք մը կը շնչեն։ Այս զգածյալ բազմության մեջ շատ քիչեր կան որ անոր սիրտն ու հանճարը կը ճանչեն։ Հոս միայն մեկ ողբալիք կետ մը ունիմք. Վարդան գաղափարի բարեշրջում մը ըլլալու տրամադրյալ էր, և երբ լուսո գրիչը ձեռքը առավ, երբ ձեռքը թարմ ու հանճարեղ ճակտին տակ, մահը պաղ քրտամբ ողողեց զայն։ Ահա ա՛յս է ցավալին։*

Սակայն կուզե՞ք *որ իր հոգին այժմ չխռովի. իր կտակն ու իր հիշատակը ձեզ կը թողու, դուք՝ որ իր բարեկամներն եք, հառաջ տարեք իր սկսած գործը, եթե զինքը կը սիրեք։*

Այս սգալի հանդեսին մեջ բան մը զիս կը զարմացնե. ցավելով կը տեսնեմ որ մեռելաթաղներ բրիչ ի բրիչ անհամբեր կսպասեն որ սիրելվույն սև փոսն վայրկյան մը առաջ գոցեն։ Անոնք կը կարծեն թե այն մարդոցմե մեկն կը թաղեն, որոնց դերեզմանը անդունդ մ'է, որոնք իրենց հիշատակին վրա կը մեռնին։ ***Լսեք իրենց, դուք՝*** *որ Վարդանը կը ճանչեք, լսեք որ սա՝ այն մարդոցմեն չէ, ասի լուսո զինվոր մ'է և չի թաղվիր, որչափ ալ ցուրտ հող թափեն իր դիակին վրա. սա՝ տասնևինն-երորդ դարու լուսո ճառագայթներեն մին է։*

Մի՞թե կը թաղվի՞ ճառագայթը։

Մանավանդ ինչո՞ւ այս գերեզմանը, մինչդեռ իր բարեկամաց ջերմ սրտերն բաց են զինքն հյուրընկալելու։

Գոցվե՛, *դու սև գերեզման։*

Վարդան մերն է հավիտյան։

Պ. ԴՈՒՐՅԱՆ

1871 թ. մայիս 21

Յուսկյուտար

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

Ք ե ր թ ո ղ

Ահա հանգչի մարմին Պետրոս Դուրեան,
Ու խաղամեայ էջ ի գերեզման.
Երկաթագործի սա ծրնաւ որդի,
Բանաստեղծ բոհաւ ի կենաց ասդի.
Ի տարաժամու Յունվար հրսանի
Հազար ութ հարիւր հօթանասնեւկի.
Աւերն իւր էր դեռ առաւօտին,
Օրհասին սեաւ ամպ ըզնա ծածկեցին.
Մահ նորա բնաւից իւրոց սիրելեաց
Սուգ անմխիթար և կսկիծ էած,
Վըշտմբեր կենաց իւրոց սոսկ վրկայ
Կենայ մահարձանս աւասիկ աստ կա[1]։

Մնեալ 1852

---

[1]) *Սույն տապանագիրն գրած է կրտսեր գրագույն եղբայրն. Գեր. եղիշե Ծ. Վ. Դուրյան 1872 թվականին։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիշտք հայուն 7
Երգ մարտին Վարպանանց 9
Ի Դիմավորութեան Ամեն Հայրիկին 10
Հայրիկն Հայոց 12
Ի պատրիարքական ընտրութիւն Ամեն. Հայրիկին 14
Իղձք առ Հայաստան 17
Նոր սէր օրեր 19
Մանուկն առ խաչ 22
Իցի՛վ քեզ 23
Մանիշակ 25
Սիրեցի քեզ 26
Սիրել 28
Լճակ 30
Պէտք է մեռնի՛լ 32
Առ մայիս 34
Թրքուհին 35
Նե 37
Սիրեցեք զմիմեանս 38
Առ կույսն 40
Ներա հետ 41
Կույսն լքյալ 43
Նայվածք մը 45
Դրժել 47
Ջնե պաշտեմ 49
Սե՛վ, սե՛վ 51
Կոկոն—ծաղիկ կուսին 53
Հեծեծմունք 5
Հծծյունք . . . . .
Ջոնիկը . . . . .
Հուշք . . . . .
Տրտունջք . . . . .
Ջղջում (օր մը վերջը) . . . . .

Իմ մահը 65
Ինչ կըսեն 67
Իմ հանգիստը 68
Իմ ցավը 69
Աշնան գժգույն գիշեր մըն էր 70
Ահա սրանա օրն երջանիկ 72
Մնաս բարյավ 73
Կը սիրեմ զքեզ 75
Հայուհին 77
Ա 79

ԴՐԱՄԱ

Անկումն Արշակունի հարստութեյան 85
Ասպատակութիւնը Պարսկաց ի Հայս կամ ալերումն Անի մայրաքաղաքին Բագրատունեյաց 167
Սև հողեր կամ հետին գիշերը Արարատյան 216
Արտաշես Ա. 264
Վարդ և Շուշան 374
Նամակներ 417

Տեխ. խմբ. Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վ.Ց. 02931 պատ. 389. տիրաժ 4000, տպ. մամ. 27,5, հեղ. մամ. 27,
Ստորագրված է տպագրության VII|25

1852



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220027410

II
II 27410